

ՐԱՅՑԻՆ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ  
ՀՈՒՇԵՐՈՒՄ









АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМЕНИ М. АБЕГЯНА

РАФФИ  
В ВОСПОМИНАНИЯХ  
СОВРЕМЕННОКОВ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1986

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
 Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

✓

# ՐԱՖՖԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

A II  
 73621



Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Բնագիրը պատրաստեց, ստաջաբանը և ծանոթագրությունները գրեց  
Խ. Ե. ՍԱՄՎԵԼՅԱՆԸ


Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների դոկտոր  
Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ բանասիրական  
գիտությունների դոկտոր Խ. Մ. ԳՅՈՒՎՆԱԶԱՐՅԱՆԸ և բանասիրական  
գիտությունների թեկնածու Ա. Մ. ՎՍՏՐՍՆՅԱՆԸ

Բաֆֆին ժամանակակիցների հուշերում: [Ժո-  
Բ 359, լուվածու] Բնագիրը պատրաստեց և ծանոթագր.  
Խ. Ե. Սամվելյանը: Պատ. խմբ՝ Պ. Հ. Հակոբյան.  
— Եր: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986.— 358 էջ. 12 թ. նկ.:  
Վերնախորագր.՝ ՀՍՍՀ ԳԱ, Մ. Աբեղյանի  
անվ. գրակ. ին-տ.

Ժողովածուի մեջ ի մի են բերված ժամանակակիցների  
հուշերը մեծ գրողի մասին: Հուշերն ունեն ոչ միայն մա-  
նաչողական նշանակություն: Այստեղ ամբարված նյութերը  
պարունակում են բազմաթիվ փաստագրական տեղեկո-  
թյուններ, որոնք նոր լույս են տալիս Բաֆֆու գիտական  
կենսագրության, ստեղծագործությունների գրության ու  
պատմության ճարտ. անհայտ մնացած էջերի վրա:

Գիրքը նախատեսված է գրականության հարցերով  
հետաքրքրվող լայն շրջանի ընթերցողների համար:



*Puff*



## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅՆԵՐԸ ՐԱՖՖՈՒ ՄԱՍԻՆ

Մեծ է ու ատանձնակի Րաֆֆու գրաված տեղը հայ նոր գրականության պատմության մեջ:

Մեծ է, ոչ միայն ինքնին...

Մեծ է այն փոխհարաբերությունների մեջ, որ նա ուներ կազմի ու ժամանակաշրջանի, մարդկանց ու շրջապատի հետ: Րաֆֆու մեծությունը պայմանավորված էր նրա սպրած դարաշրջանի հարուստ իրադարձություններով:

Իրականությունը Րաֆֆու սպրած ժամանակաշրջանում հղի էր վերելք սպրող տրամադրություններով, որ և բանական էր դառնում հասարակական նոր ուժերի հանդես գալը: Հախտոն ոգևորությունների ու առաջադիմական գաղափարների արմատավորման մի շրջան էր դա, յի ազգային ու սոցիալական պայքարի հստակ թուվանդակությամբ: Վիպատան Րաֆֆին դարձավ այդ իրադարձությունների, աճող տրամադրությունների ու վերելք սպրող ուժերի գաղափարախոսն ու նրանց ձգտումների ճշմարիտ թարգմանը:

Եթե Րաֆֆին պայքար էր մղում մի կողմից ավատական հարաբերությունների դեմ՝ ճանապարհ հարթելով բուրժուական հարաբերությունների զարգացման համար, ապա մյուս կողմից՝ քննադատում ու մերկացնում էր այս նոր ուժերի ներքին էությունը: Րաֆֆին ո՛չ միայն նշավակում էր սոցիալական անհավասարությունը, պայքարի գաղափարախոսությամբ իմաստավորում էր հայրենասիրությունը, այլև քննադատության սեր ու գրական ճաշակ էր սրմատավորում ժողովրդի մեջ: Րաֆֆին նոր և անհասկառելի որակ հաղորդեց հայ վիպագրության ազգային ավանդներին, մշակեց ու հարստացրեց աշխարհաբար լեզուն: Նպատակելով գրականության ու մամուլի տարածմանը, նա միաժամանակ հղկեց ու ազնվացրեց մշակ մարդու գեղարվեստական մտածողությունն ու բարձրակարգ միաբեր:

Անփոխարինելի էր Րաֆֆու դերը և անդիմադրելի նրա արվեստի՝ ներգործության ուժը: Իր ստեղծագործություններով նա «անհանգիստ» դարձրեց «անշարժության մեջ նիքհող մարդկանց» և իր գաղափարների ետևից տարավ իր ունկնդիրներին: Գրականության միջոցով նա արթնացրեց ժողովրդի ազգային ինքնագիտակ-

ցությունը, ոգևորեց նրանց հախճախների օրինակով և ամրապնդեց ժողովրդի հավաքական միասնությունը. վստահությունն ներշնչելով սեփական ուժերի հանդեպ, Ռաֆֆին ընթացք տվեց նրանց ձգտումներին ու թևավորեց ճնշվածների պայքարը ճնշողների դեմ:

Ռաֆֆին այն հեղինակներից չէ, որոնց գործունեությանը անդրադարձնալիս հարկ է լինում նշել, թե նրա մեծությունը տակավին քաջահայտված չէ, թե նրա մասին թիչ է խոսվել... ընդհակառակը, հայ իրականության մեջ քչերը կան, որոնց մասին այնքան շատ է գրվել, որքան՝ Ռաֆֆու, և դա վերաբերում է ինչպես անցյալին, այնպես էլ մեր օրերին:

Նախասովետական շրջանում լույս են տեսել մի քանի գրքերույկներ, բազմաթիվ հոդվածներ ու համ հուշեր, որոնցում հիացման խոսք է ասվել նրա վեպերի նշանակության, թողած ազդեցության և կատարած դերի մասին: Դրանց մեջ կան այնպիսիները, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքը, սակայն եղածը ընդհանուր առմամբ հեռու է բավարար լինելուց:

Վիճակը բոլորովին տարբեր է, երբ խոսքը վերաբերում է մեր օրերին, առավելապես վերջին քսանամյակին, երբ երկու անգամ տասական հատորով տպագրվեցին նրա երկերը, երբ գրվեցին մեկից ավելի գրքեր ու բազմաթիվ հոդվածներ: Հրապարակի վրա եղածը ցույց տվեց, որ կատարված է մեծ ու շնորհակալ աշխատանք, բայց և վերստին հաստատվեց, որ ռաֆֆիագիտությունը տակավին շատ անելիքներ ունի:

Անհրաժեշտ է նշել, որ լույս տեսած գրքերում ու հոդվածներում ռաֆֆիագիտական միտքը ծավալվել է հատկապես գաղափարական ու գեղարվեստական սրժերափորման տեսակետից, ինչ վերաբերում է ռաֆֆիագիտության մյուս հարցերին, ապա դրանք ես են մնացել ո՛չ այնքան բանասերների անուշադրության, որքան ոչ ցանկալի հանգամանքների բերումով:

Հայտնի է, որ Ռաֆֆու արտակարգ բեղուն գրական գործունեությունը ընթացել է տարրաբերումներով հարուստ կյանքի միջով: Հայտնի է նաև, որ նրա կյանքի ու գործունեության, նրա ստեղծագործությունների «վավերական վկան»՝ հարուստ աբխազի, չկա, անհայտության մեջ է ձեռագրերի գոյությունը, և ռաֆֆիագիտությամբ զբաղվողների տրամադրության տակ եղել են նրա ձեռագրերի փշրանքները միայն: Այս պարագայում մասամբ հատկանալի է, թե ինչու ռաֆֆիագիտությունը կրել է միակողմանի զարգացում, և շատ ու շատ հարցեր մնացել են չպարզաբանված: Իրրև վերը ասվածի շարունակություն անհրաժեշտ է նշել, որ ռաֆֆիագիտության միակողմանի զարգացման գործում դեր է կատարել ոչ միայն փպսալսանի կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող մեզ

հաւած փաստաթղթերի սակաւությունը, այլև այն, որ եղածի մի մասն էլ մատնվել է անուշադրության:

Տակաւին, խորությամբ ուսումնասիրւած չեն նրա մանկության, ուսումնառության, ճանապարհորդություններին ու մանկավարժական գործունեությանը, ինչպէս նաև ողջ տեղծագործական կյանքին վերաբերող հարցերից շատերը, այն դեպքում, երբ մեծ գրողի անվան հետ կապւած յուրաքանչյուր «մանրութ» ալօտ ունի գիտական արժէք:

Քարդ եւ ու հակասական, երբեմն էլ անմեկնելի Րաֆֆու կյանքի ու ստեղծագործության հետ կապւած հարցերը, ու թեև սաւար չէ հուշերի սույն ժողովածուն, բայց բազմաբնույթ տեղեկություններով առատ են նրանում գտեղծւած նյութերը:

Հուշերը ընթերցողին հնարաւորություն են տալիս թափանցել Րաֆֆուն վերաբերող ամենաբազմապիսի խնդիրների մէջ, խորամտիւ լինել նրա անձնական կյանքին ու մարդկային հատկանիշներին, իսկ առանձին դեպքերում բանալի են դառնում նրա ստեղծագործությունների գրության պատմության, հոլացման շարժառիւթների մասին հոր տեղեկություններ ի հայտ բերելու հարցում: Այս իմաստով էլ հուշերի հրապարակումը կարող է մեծապէս նպաստել Րաֆֆիագիտության հարստացմանը: Բանասիրական բնույթի մոտեցում ջուգաբերելու, նրանցում ամբարված տեղեկությունները ստեղծագործորեն օգտագործելու դեպքում, սույն նյութերը կարող են զգալի չափով լցնել այն ճեղքը, որ առաջացել է Րաֆֆիագիտության մէջ հեղինակային արխիւի բացակայության հետևանքով:

Այս ամենով հանդերձ չպետք է շրջանցել մի կարևոր հանգամանք: Հայտնի է, որ հուշագրության մէջ իբրև ընդհանուր սկզբունք սուբյեկտիվ տարրը գերակշռում է, այստեղ ավելի ցայտուն են համակրանքներն ու հակակրանքները, իբրև վավերականության սղորշոր ավելի քիչ են հավաստի, քան ասենք՝ նամակը, օրագիրը կամ փաստաթուղթը, բայց հուշն էլ ունի իր յուրատեսակ առաւելությունը, հուշագիրը ավելի կենդանի է ներկայացնում պատմական անձնավորությանը, բացահայտում նրա ներքնաշխարհը, նրա բնավորության հատկանշական կողմերը:

Րաֆֆու անձնական կյանքը եղել է նրա գրական ու հասարակական գործունեության շարունակությունը, ուստի ամբողջական կարծիք կազմել նրա գրական ու հասարակական գործունեության մասին առանց նրա անձնական կյանքի հանգամանքներին ծանոթ լինելու, թերևս նույնքան թերի կլինի, որքան կարծիք կազմել նրա անձնական կյանքի մասին, առանց հետամուտ լինելու նրա գրական ու հասարակական գործունեությանը:

Ահա թե ինչու Օիրվանգադեի գրած հուշը, որ գերազանցապես նվիրված է Ռաֆֆու մարդկային հատկանիշների նկարագրին, նրա անձնական կյանքի հանգամանքներին, ռաֆֆիազիտության համար ունի բացառիկ կարևոր նշանակություն:

«Կյանքի բովից» աշխատության առաջին հրատարակության առաջաբանում Օիրվանգադեն կատարում է մի «պարտավորեցնող» հավաստիացում: «Իմ կարծիքով,— գրում է նա,—կյանքն ինքնբերական այնքան գեղեցիկ է, որ կարիք չկա նրան շարել և այնքան տգեղ, որ հնար չկա ավելի այլանդակելու:

Թող ուրեմն,—շարունակում է նա,—դեպքերն ու դեմքերն իրենք իրենց լեզվով խոսեն ընթերցողին: Թող ես լինեմ մի պարզ արձանագրող, մի կենդանի վկա—այսքանն էլ արդեն մեծ բան է, եթե, հարկավ, կարողանամ մնալ կյանքը անաչառ դիտողի կոչման բարձրության վրա»:

Թե ուրիշների նկատմամբ Օիրվանգադեն ինչպիսի վերաբերմունք է դրսևորել, մենք դրան չենք անդրադառնա, բայց որ Ռաֆֆու հարցում նա մնում է իր դավանած սկզբունքին հավատարիմ՝ կանգնում է «կյանքը անաչառ դիտողի» բարձրության վրա, փաստ է, և դրա առհավատչյան այն հուշերն են, որոնք այսօր ներկայացվում են ընթերցողի ուշադրությանը:

Օիրվանգադեն լավ է ուսումնասիրել Ռաֆֆու բնավորության գծերը և խորն է ճանաչել գրողի ու քաղաքացու նրա անհատական հատկանիշները: Եթե այս ամենի վրա ավելացնենք հուշագրողի բացառիկ շնորհքը, սակա պարզ կդառնա, որ Ռաֆֆու մասին նրա գրած հուշերը ունեն ճանաչողական մեծ նշանակություն:

Ժողովածվում ընդգրկված հեղինակներից միայն Օիրվանգադեն է, որ իր հուշերը գրել է թարմ տպավորությունների ներքո (մյուսները այդ արել են ավելի կամ պակաս ուշացումով), թերևս հենց այս պատճառով էլ նրա հուշերը ավելի անմիջական են: Օիրվանգադեն վերարտադրել է Ռաֆֆու ո՛չ միայն արտաքին նկարագրի բնորոշ կողմերը, այլև նրա բնավորության յուրօրինակ մանրամասները: Ի՞նչ ենք տեսնում հուշերում՝ ընդամենը մի քանի, ըստ էության, ժլատ բնութագրականներ, և ընթերցողի առաջ կանգնում է կենդանի Ռաֆֆին: «Սեղանի թուղ,—գրում է նա,—նստած էր մի մարդ, բավական մեծ գլխով, լայն, բարձր, կնճոռա և քունքերի մոտ դուրս ցցված ճակատով, թանձր ու սև ունքերով, խիտ բեղերով ու կարճիկ մորուքով, որ հագիվ նշմարվում էին մի քանի սպիտակ թելեր: Նրա դեմքի գույնը թուխ էր, արտահայտությունը առաջին անգամ տեսնողի համար անհյուրընկալ, շրթունքները սեղմված, աչքերը հիվանդոտ»: Օիրվանգադեն տպավորիչ մանրամասնություններով է նկարագրում Հայկունու կողմից Ռաֆֆու դեմ գրած

մասնությունների ստիթով վերջինիս հանդես բերած անհանգրստությունը. թղթավաճառ Հովհաննես Տեր-Սարգսյանի ու նրա միջև տեղի ունեցած միջադեպը. «Մեղու Հայաստանի» լրագրի կողմից սրած անվանարկումների պատճառով Րաֆֆու հանդես բերած վրդովմունքը և այլն: Նման պատկերները սքողված չեն Ծիրվանգաղեի հուշերում, ուստի և կարող է թվալ, թե դրանով հուշագիրը նսեմացնում է մեծ գրողի մարդկային նկարագիրը, մինչդեռ այդ բոլորը արվում են լիարժեք մարդը, մեծ վիպագրողի կենդանի կերպարը բազմակողմանիորեն ցույց տալու համար: Նկարագրելով միջադեպը, Ծիրվանգաղեն չի սահմանափակվում դրանով, նա ընդհանրացնում է փաստը, հոգեբանորեն մեկնաբանում գրողի կարծեցյալ թերությունը:

Ծիրվանգաղեն ո՛չ միայն բնութագրում է Րաֆֆուն ամենաբազմապիսի կողմերով, այլև ընթերցողին տրամադրում է մեծ քանակությամբ փաստեր ու տեղեկություններ, որոնք ունեն անգնահատելի արժեք Րաֆֆիագիտության համար կարևորություն ներկայացնող հարցերի լուսաբանման տեսակետից: Նա տեղեկություններ է հաղորդում «ԼՍՎԼԻԿԻ», «ԼՍաչագողի հիշատակարանի», «Սամվելի», «Խենթի» և մյուս ստեղծագործությունների գրության պատմության, շարժառիթների և ստեղծագործական հղացումների վերաբերյալ:

Ծիրվանգաղեի հուշերի կարևոր արժանիքներից մեկն էլ այն է, որ նա Րաֆֆու կյանքին ու գործունեությանը անդրադառնում է համակողմանի, նրա ստեղծագործական հղացումներն ու իրականացումները դիտում է նրան շրջապատող կյանքի, հասարակական-քաղաքական հանգամանքների առնչակցության մեջ: «Րաֆֆիի մեջ այս կամ այն վեպի գաղափարը,—գրում է նա,—ծնվում էր կյանքի մեջ տեղի ունեցող քիչ թե շատ խոշոր երևույթների ազդեցությամբ: Արևելյան պատերազմը և հայկական խնդիրը սուաջ բերեցին «Խենթը» և «Դավիթ քելը», տանկահայերի հալածանքը՝ «Զալալեդդին» և «Կայծերը», հայոց եկեղեցական դպրոցների վիճակը՝ «Սամվելը»: Նույնիսկ մամուլում վաճառական դասի մեջ ծագած վեճը ստիպեց նրան գրել «Մի՛նն այսպես, մյուսն այնպես» վեպը»:

Ժամանակակիցներից շատերն են գրել Րաֆֆու մասին, բայց նրանցից և ոչ մեկը այնպիսի խորությամբ չի բացահայտել Րաֆֆու ստեղծագործությունների արժեքը, այնպես դիպուկ չի բնութագրել Րաֆֆուն, ցույց տվել նրա մեծությունը, ինչպես այդ արել է Ծիրվանգաղեն: Րաֆֆին ըստ վերջինիս բնորոշման հանդիսանում է «Հայ ազգի վշտերի ու դառնությունների ամենատառանդուն թարգմանը և նրա նվիրական գաղափարների ամենատառանդավոր արտահայտիչը»: «Աբովյանը,—դիտել է տալիս Լեոն,—մե՛նակ էր իր ծով զգացմունքների հետ, իր ողբն ու հառաչանքները հորի-

Ճեղիս՝ նա գիտեր, որ դրսում ոչինչ չկա, ո՛չ գաղափար, ո՛չ քննարկող, իսկ Րաֆֆուն դրսում սպասում էր ոգևորությունը, սպասում էին հազարավոր սրտեր, որոնք որոնում էին օրվա հարցի լուծումը»։ Լեոյի միաբը խորաթափանց կերպով իմաստավորել ու զարգացրել է Շիրվանզադեն, այս փաստի մեջ նշմարելով Րաֆֆու «ահագին ժողովրդականության գաղտնիքը»։ Րաֆֆին, գրում է նա, «ինքը խնդիրներ չէր հորինում, այլ միշտ ձգտում էր հրապարակի վրա նոր զարգացած և մտքեր հուզող խնդիրներին լուծում տալ։ Նա ժողովրդի բարոյական և մտավոր հետաքրքրության ջերմաշափն էր և պատասխանում էր այն հարցերին, որ ծագում էին և շտարածվում նրա մեջ»։

Շիրվանզադեն իր հուշերում անդրադարձել է նաև վիպասանի՝ դեպի ժողովրդի նականազիրն ունեցած հարցերին, և կիսելով ժողովրդի միասնականության ու ընկերային ոգու բացակայության առիթով Րաֆֆու ունեցած մտահոգությունները, ավելացնում է. «Զգո՛ւմ էր արդյոք Րաֆֆին, որ ոչ մի մտավոր առաջնորդ հայի ընկերական հոգու զարգացմանը այնքան չի նպաստել, որքան ինքն իր գործը գրչով»։ Սա Րաֆֆու մեծության գնահատականն է, թերևս անողորակի, բայց շատ իմաստավորված։ Ամեն հեղինակ չէ, որ ժամանակակիցների կողմից արժանանում է նման գնահատականի։ Այս հարցում որոշակի դեր է կատարում Րաֆֆու մեծությունը, նրա գրաված տեղը ժողովրդի կյանքում ու գրականության մեջ, նրա ստեղծագործությունների ազդեցությունը ժողովրդի մտավոր, բարոյական ու քաղաքական դաստիարակության վրա։ Րաֆֆու մարդկային արժանիքները ցույց տալու համար Շիրվանզադեն Րաֆֆի ստեղծագործողի մեծությանը հակադրում է նրա բնավորությունը։ «Ես չեմ տեսել,—գրում է նա,—մի հայ հեղինակ, որ իսկապես այնքան համեստ լիներ, որքան Րաֆֆին, միևնույն ժամանակ չեմ կարող ցույց տալ մի հայ գրականական գործիչ, որ այնքան շատ խրափումը ունենար իր գործերով պարծենալու, որքան Րաֆֆին»։

Շիրվանզադեի բնորոշմամբ՝ Րաֆֆին ընդգծված անհատականություն է, ոչ միայն իր գաղափարներով ու ստեղծագործական ոճով, այլև իր բնավորությամբ ու խառնվածքով։ Որքան վեհ են ու բարձր Րաֆֆու դավանած գաղափարները իբրև ստեղծագործող, նույնքան վեհ են ու անաղարտ նրա մարդկային հատկանիշները։ Ահա՛ Շիրվանզադեի հուշերից արտաբերվող կերակացությունը։ Այլ կերպ չէր էլ կարող լինել. հուշերում օբյեկտիվությունը և նշմարտությունը տալքեր հասկացողություններ են։ Շիրվանզադեն նպատակ չի հետապնդել տեսնելու ամեն մի մանրուք։ Նա ուշադրությունը կենտրոնացնում է այն ամենին, ինչը Րաֆֆուն դարձնում է

բացատրիկ, ինչը նրան ստանձնացնում ու բարձրացնում է շրջապատից:

Ծիրվանգաղթի հուշերը, ինչպես տեսանք, ունեն ո՛չ այնքան փաստագրական, որքան ճանաչողական նշանակություն, մինչդեռ Ավթանդիլյանի հուշերի մեջ գերակշռողը փաստագրական կողմն է:

Բաֆֆու ստեղծագործությունների բանասիրական հետազոտությունը ակներև է դարձնում, որ նրա ապրած աստանդական կյանքը, վաճառական լինելը, ապա՝ սնանկանալը, Հախնազարյանների խանութում աշխատելը, Թալրիգում և Ագուլիսում պահպանողականների կողմից հալածվելը և այդ ամենի առիթով նրա ունեցած մտորումները, որոշակի դեր են կատարել մեծ վիպասանի ստեղծագործական կյանքում: Ահա՛ թե ինչու չի կարելի և չպետք է անտեսել գրողի անձնական կյանքի այս ու այն հանգամանքը նրա ստեղծագործական կյանքի ընդհանուր շղթայի մեջ: Այս առումով իմաստավորված է Ավթանդիլյանի մոտեցումը, որ ջանացել է չանտեսել մանր հոգևորի տակ կքած մեծ մարդու խոհերն ու ավայտանքները:

Բաֆֆու վաղ շրջանի մասին մեզ հասած տեղեկությունները սակավ են, երբեմն էլ հակասական: Տակավի՛ն հիմնավոր պարզված չեն նրա մանկության, պատանեկության, երիտասարդության ու սկզբնական կրթությանը վերաբերող հարցերից շատերը: Բավական է նշել, որ միայն ծննդյան թվականի վերաբերյալ կա երեք տարեթիվ, որոնք ավելի կամ պակաս հիմնավորվածությամբ տարիներ շարունակ գործածվում են կողք-կողքի, առանց վերջնական ճշգրտում ստանալու:

Թեև սկզբում նշեցինք, որ հուշը վավերականության նվազ աղբյուր է, այսուհանդերձ Ավթանդիլյանի հիշողությունների մեջ կան մանրամասն ու փաստատու տեղեկություններ Բաֆֆու մինչմշակյալ շրջանի գործունեության վերաբերյալ, որոնք արժեքավոր են միս և առաջ եզակի լինելու առումով: Այդ փաստերի մի զգալի մասը ըստ պատշաճի օգտագործվել է բաֆֆիագիտության կողմից, սակայն քիչ չեն մաս «չպելված շերտերը»: Ավթանդիլյանի հուշը միակ աղբյուրն է, որ տեղեկություններ է տալիս Բաֆֆու լուսավորական շրջանի գործունեության՝ Սալմաստում դպրոցներ բանալու, «հասարակական օգտակար հիմնարկներ» ստեղծելու վերաբերյալ: Բաֆֆին ցանկանում էր ներդաշնակ տեսնել այն կյանքը, որի մեջ ապրում էին իր հայրենակիցները, նա պահանջկոտ էր ու անհամբարձուր, հենց այս պատճառով էլ շրջապատը նրան ո՛չ միայն չէր քաղարարում, այլև չէր հանդուրժում, ուստի և բացվում է կրթված անհատի ու խաղար սմբոխի միջև ենթադրվող ճեղքը: Ավթանդիլյանը դիտել է տալիս, թե ինչպես երիտասարդ ու անփորձ Բաֆ-

Ֆին ամբոխի շահերը պաշտպանելու ճանապարհին բախվում է վաճառականության հետ ու ստիպված՝ հրաժարվում իր գեղեցիկ ծրագրերից:

Ավթանդիլյանի հուշերում չափազանց կարևոր տեղեկություններ կան Րաֆֆու ստեղծագործությունների ամենատարբեր, տալիսին չուսումնասիրված հարցերի վերաբերյալ: Թալիքի առաջնորդ Աբեյ եպիսկոպոս Մխիթարյանի կողմից 60-ական թվականների սկզբում «Կայծերը» կարդացված լինելու փաստի արձանագրման մեջ հետազոտողը կարող է հայտնաբերել «Կայծերի» նախնական տարբերակի ու վեպի գրության պատմությանը վերաբերող և Րաֆֆիագիտության հարստացման համար նոր մտքեր տվող էջեր: Հարանման տեղեկություններ կան նաև «Խաչագողի հիշատակարանի», «Խլվիկի» և «Բիրի Ծարաքանի» վերնագրով պատմվածքի և մյուս ստեղծագործությունների վերաբերյալ:

Րաֆֆիագիտության համար կարող են մեծ արժեք ներկայացնել հուշագրողի ու վիպասանի համատեղ ճանապարհորդությունների ընթացքում պատահած միջադեպերի գրառումները: Այս էջերի մեջ ընթերցողը կհանդիպի մարդկանց, անցքերի նկարագրության, որոնք իբրև նախադեպ գեղարվեստական մարմնավորում են ստացել Րաֆֆու վեպերում, որոնք նախատիպ են ծառայել գեղարվեստական ընդհանրացված կերպարներ կերտելիս:

Ի դեմս Հախվերան գյուղի տանուտերի, ընթերցողի մտապատկերում կենդանանում է Հասոյի կերպարը: Թեև զուգահեռ համեմատությունը շոշափելի արդյունք քիչ է տալիս, այնուամենայնիվ անհավանական չէ, որ Րաֆֆին «Կայծերի» «Աշխատանք և հող» գլուխը հղանալիս իբրև նախադեպ, իբրև ազդակ նկատի է ունեցել Հախվերան գյուղի տանուտերի հետ հանդիպման միջադեպը:

Րաֆֆու և Ավթանդիլյանի այցելությունն Ալի աղա Ծիկակին, Կաշկավիսի ձորակում, քրդական վրանի տակ նրանց հյուրընկալվելը, նվագածուներ հրավիրելը, Ալի աղայի որդու մասին հյուսված դյուցազնավեպի կատարումը, զոհված հերոսի հոր վրա այդ երգի թողած ներգործությունը, որսորդության առիթով եղած խորհրդածությունները պետք է համարել այն ստաղծը՝ կենսական փաստը, որի հիմքի վրա, իբրև գեղարվեստական մարմնավորում, «Կայծեր» վեպում ծնունդ է առել «Եգիպտիներ» խորագրով գլխում (նկարագրված դեպքերից շատերը: Ինչ վերաբերում է Փիրչատոշկան Ծաքի դաղ ժայռի վրա փորագրված ձիավորներին, ապա Ավթանդիլյանը ևս խոստովանում է, որ այս պատկերը տեղ է գտել «Կայծերի» ստալին հատորում (1- գլուխ): Ուշագրավ է այն փաստը, որ ճանապարհորդության ընթացքում, ինչպես վկայում է Ավ-

ջանդիլյանը, նույն միջադեպի մասին իր հուշատետրում գրառումներ է կատարել նաև Րաֆֆին:

Րաֆֆիագիտության համար, անշուշտ, օգտակար կլինի պարզել, թե ինչպիսի փոխհարաբերության մեջ է գտնվում Ավթանդիլյանի գրառած կենսական իրականությունը Րաֆֆու ստեղծած գեղարվեստական ճշմարտության հետ, թե ինչպես է բեկվել կենսական փաստը վիպասանի գեղարվեստական մոտաձողության մեջ, ինչպես է պատմական իրողությունը գեղարվեստական ստեղծագործություն դարձել:

Արոշ իմաստով Ավթանդիլյանի հուշերի շարունակությունը չկառք է համարել Սառա խանումի պատմածը: Համակողմանիորեն անդրադարձնալով Րաֆֆու գործունեությանը, նաև կենցաղային մանրամասներին, Ավթանդիլյանը շրջանցել է վիպասանի ամուսնության պատմությունը: Անշուշտ, ընթերցողի համար հետաքրքրություն ներկայացնող նորություն է՝ ծանոթանալ գրողի ամուսնությանը վերաբերող փաստերին: Սառա խանումի հուշերը արժեքավոր են հենց այս իմաստով...

Րաֆֆու մասին հուշեր գրողների զգալի մասը գրական բարձր ճաշակ ու կարողություն չունեցող մարդիկ են, և դեպքերի ընտրության հարցում հանդես բերած մոտեցումը բխում է ոչ այնքան նրանց վերաբերմունքից, որքան՝ ընկալման ու վերարտադրման հնարավորությունից: Այս կարգի վերապահումով պետք է մոտենալ Սառա խանումին, Իսկուհի Հակոբյանին, Վարդան Թումանյանին, Ավետիս Սարգսյանին և էլի մի երկուսին, բայց ոչ երբեք Արծրունու կամ Տիգրան Նազարյանին:

Հանձին Տիգրան Նազարյանի ցուցաբերած մոտեցման, Ծիրվանգալի գարգացրած տեսակետը գտնում է իր ո՛չ դրական հետևողին: Նազարյանը, իբրև հուշագրող, չի կարողանում մնալ «անաչառ դիտողի բարձրության վրա», որովհետև անբավականությունը որոշակի դեր է կատարում դեպի Րաֆֆին, առավել ևս դեպի Գ. Միրզյանը ունեցած վերաբերմունքի մեջ:

«Աղբյուրի» ու «Տարազի» խմբագիր Տիգրան Նազարյանը երկար ժամանակ ապրել ու գործել է Րաֆֆուն շրջապատող միջավայրում: Նրա գիտեցածի, տեսածի ու զգացածի անկողմնակալ վերարտադրումը կարող էր արգասավոր լինել Րաֆֆիագիտության հարըստացման համար, եթե նա չհավընտրեր անդրադառնալ միայն երկու մանրուքի՝ Րաֆֆու, Ծերենցի ու Գաբրյի միջև տեղի ունեցած անբավականության վրա: Ա. Մ.-յանի «Անցյալից մի հիշատակ» խորագրով հուշերը մասամբ պարզում են նրա վերաբերմունքի դրդապատճառները, եթե սրա վրա ավելացնենք նաև Րաֆֆու վեպերի հրատարակության սովորով Աննա Րաֆֆու հետ հե-

տագայում ունեցած դրամական հաշիվները, ապա միանգամայն հատկանալի կդառնա, թե ինչու Տիգրան Նազարյանը, իբրև հուշագրող, չի կարողացել կանգնած մնալ անաշատ դիտողի բարձրության վրա:

Ավելի պակաս միտումնավոր են և շատ ավելի սակավախոս Գ. Արծրունու հուշերը, եթե նկատի ունենանք այն մոտիկությունը, որ նրանք ունեցել են երկար ու ձիգ տարիների ընթացքում: Ինչպես հայտնի է Արծրունին Րաֆֆու մասին հուշեր գրելու հատուկ նպատակ չի ունեցել: Նրա այս «ակնարկը» վերցված է վիպասանի մահվան առիթով գրած հոդվածից: Բայց չէ՞ որ բարյացակամության դեպքում նա կարող էր տասնապատիկը անել: Եվ եթե ախտաւում ենք նրա չարածի համար, գնահատում ենք, որ Րաֆֆու մեջ տեսել է «ժամանակի պահանջը» ճիշտ ըմբռնելու և «վիպական ձևով» արտահայտելու կարողությունը, ապա կարող ենք նաև քննադատական խոսք ասել նրա հասցեին, որ միտումնավոր կերպով անգիտացել է «Սամվելի» արժեքը: «Մշակից» հեռանալու փաստի մեջ Արծրունին տեսնում է Րաֆֆու տաղանդի սպառումը: «Նա սկսեց զբաղվել այնպիսի գրական ձևերով,—գրում է Արծրունին,—որ ամենևին հատուկ չէր իր տաղանդին և որին, իմ կարծիքով, նա անպատրաստ էր, դա պատմական ռոմանն էր, որի մեջ այլևս առաջվա պես չէր փայլում Րաֆֆիի տաղանդը»: Արծրունին Րաֆֆու հաջողությունը ամբողջովին վերագրում է «Մշակին»՝ այն դեպքում, երբ իր իսկ խոստովանությամբ դեռևս «Հյուսիսսփայլում» հրատարակված նրա «Սղոթամարս վանք» աշխատության մեջ ճշմարել է «Րաֆֆիի գրական գործունեության ապագա ուղղությունը՝ նկարագրական ձևի կատարելիությունը, հասարակաց տեղեցիա և խիստ քննադատական ոգի»:

Գևորգ Չմշկյանի հուշերը թեև անձնական մոլորմով են զրված և իրենց մեջ պարունակում են փաստական անճշտություններ, բայց և այնպե՞ս հետաքրքրական են «Մշակի» հրատարակության առաջին շրջանում խմբավորվող ուժերի հավասարակշռումը ճիշտ մեկնաբանելու, Րաֆֆու հեղինակության բարձրացումը գնահատելու և խմբագրի վրա նրա ձեռք բերած ազդեցությունը պարզելու տեսակետից:

Փիլիպոս Վարդանյանի գրածը հուշ չէ, այլ մի «Առաջաբան», եթե կարելի է առաջաբան անվանել այն, ինչ բաղկացած է երեք տասնյակ տողից, սակայն արժեքավոր է, և հետաքրքրական տեղեկություններ է պարունակում «Սամվելի» գրության պատմության, վիպասանի կողմից սկզբնաղբյուրների ուսումնասիրման և հարակից թեմայով նոր վեպեր ստեղծելու մասին: «Սամվելը»,—գրում է նա,—դեռ շատ հաջորդներ կունենար: Րաֆֆին մտադիր էր, ի

միջի սցյուդ, մի քննարձակ պատմական վեպ գրել, որի նյութը լինելու էր քրիստոնեական ու հեթանոսական գաղափարների ընդհարումն ու պատերազմը Հայաստանում:

Երբ նա տաք-տաք խոսում էր այդ ապագա վեպի մասին, ես ապշած էի մնում նրա գորեղ երևակայության առջև, նա անշաղկապ աստեղերացնում յուր պատմած բաները, որ կարծես թե դրանք նկարված լինեին պատի վրա, յուր աչքերին տեսանելի պայծառ և որոշ գույներով: Եթե Փիլիպոս Վարդանյանի «հուշերը» նվիրված են «պատմական վեպեր» գրելու շարքին, ապա Մակար Չմշկյանի հուշերում տեղեկություններ կան «Ճանապարհորդություն Պարսկաստանի» ուղեգրության, Հ. Տեր-Գրիգորյանի հուշերում՝ «Խաչագողի հիշատակարան» վեպի, Ռ. Բերբերյանի հուշերում՝ «Աղթամարս վանքը» աշխատության, Ալեքսանդր Քաղանթարի հուշերում՝ «Սեկնյոր» վեպի ու հարակից հարցերի մասին:

Հուշերի գրքում բաժֆիագիտության վերաբերյալ ուղղակի տեղեկությունները շատ են ու բազմաբնույթ, մեր նպատակադրման շրջանակից դուրս է դրանց բոլորի մասին խոսել կամ արժեքավորել բոլորը: Անդրադառնալով հուշերին, աշխատել ենք ուշադրության կենտրոն բերել այն ամենը, ինչ ստվերի մեջ է մնացել, և ինչ-որ չափով անուշադրության է մատնվել ուսումնասիրողների կողմից:

Բաժֆու կյանքի և ստեղծագործության ամենատարբեր կողմերը լուսարանող ուղղակի տեղեկություններից բացի, հուշերում կան նաև «զուտ» փաստեր, որոնք կողմնակի տվյալների օժանդակությամբ կարող են դառնալ «խոսուն» և նախադրյալներ ստեղծել բաժֆիագիտության մեջ նոր եզրակացությունների համար, կարող են ամրապնդել տակավին չհիմնավորված ու թեական համարվող այս ու այն վարկածը, եթե մենք կարողանանք այդ տվյալները խելամուրեկ զուգակցել բաժֆիագիտությանը հայտնի փաստերի հետ: Այս առումով բավականին ուշագրավ տեղեկություններ են «թաքնված» Ռ. Բերբերյանի «Անանիա Սուրբանշանի պատմածը» խորագրով հուշերում:

Երկար ժամանակ անմեկնելի էր համարվում, թե ինչու՞ է Բաժֆին 1857 թվականին իր դեպի Արևմտյան Հայաստան կատարած ճանապարհորդությունը վերագրում 1858 թվականին\*, այն դեպքում, երբ մեզ հասած բոլոր փաստերը խոսում են 1857 թվականին ճամփորդած լինելու օգտին: Այս տարակուսանքը կարող է իր լու-

\* Այս փաստը հավաստվում է «Աղթամարս վանքը» ակնարկի ենթավերնագրում:

ծումը ստանալ, եթե քննական մոտեցում ցուցաբերենք Ա. Սուլ-թանշահի պատմածի հանդեպ:

Հուշագրողի այն հավաստիացումը, ըստ որի Րաֆֆին դիմել է Հովհաննես Քաթանյանին ու խնդրել է նրա աջակցությունը իր «Աղթամարա վանքը» խորագրով աշխատությունը «Հյուսիսափայլում» տպագրելու համար և այս առիթով Հ. Քաթանյանի այն խոստովանությունը, թե այդ «աշխատության ձեռագիրը մեկ տարուց ավել» մնացել է Նալբանդյանի ու Նազարյանի մոտ, և այն, որ նրանք Րաֆֆու աշխատության լեզուն «մասամբ ուղղել են, ավելի մոտեցրել «Հյուսիսափայլի» լեզվին» ո՛չ միայն հետաքրքիր է առհասարակ «Աղթամարա վանքը» աշխատության գրության պատմության տեսակետից, այլև որոշ իմաստով բանալի է դառնում պարզելու համար, թե ինչո՞ւ է Րաֆֆու 1857 թվականի նամակարկորությունը վերագրվել 1858 թվականին, շփոթ ստեղծելով այդ հարցում:

Նալբանդյանի ու Նազարյանի միջամտությունը Րաֆֆու աշխատության ձեռագրում հանգեցնում է նրան, որ «Աղթամարա վանքը» աշխատության մեջ վանականները տիրացու Հակոբի հետ լուսավորության հարցի շուրջը ունեցած բանավեճի ընթացքում քրննադատում են նաև «Հյուսիսափայլի» դավանած սկզբունքները ու նրա աշխատակիցների կողմից աշխարհաբար լեզվի պաշտպանությունը: «Մարդ չհասկնար,—ասում է հայր սուրբը,—թե ի՞նչ կգրուցեն այդ շատախոս տետրակները (խոսքը «Հյուսիսափայլի» ամսատետրակների մասին է—(Ս. Ս.) իրենց նոր օձի նման օլորուն լեզվովն: Սատանան ալ կարող չէ հասկնալ:... Ինչ այդպես կթեթեքիք ձեր լեզուն նորանոր բառերով: Ծո Նազարյանց, ի՞նչ ըսեսքնզի. դու միշտ Մոսկվայեն կբոռաս, թե աշխարհաբար պիտի գրել ու մտածել, որ ամեն մարդ հասկնա»\*:

Այս փաստը «Հյուսիսափայլի» հրատարակության պատմությանը ծանոթ ընթերցողին չի կարող զարմացնել: Նալբանդյանն ու Նազարյանը այլ առիթներով նույնպես դիմել են նման փորձերի: Նրանց համար կարևոր էր, որ «Հյուսիսափայլի» ծավալած պայքարը ժողովրդի մեջ մտքեր էր շարժում, կրքեր հրահրում, նրանց բարձրացրած հարցերը արձագանք էին գտնում Հայաստանի հեռավոր անկյուններում, թեկուզ որոշ քննադատական խոսք ասվեթ խմբագիրների ու նրանց կողմից դավանած սկզբունքների վերաբերյալ:

Եթե Նալբանդյանն ու Նազարյանը հարազատ մնալով պատմական իրողությանը աշխատության ենթավերնագրում գրեին, որ

\* Րաֆֆի «Երկերի ժողովածու» հ. 8, Ե. 1957, էջ 235:


Րաֆֆու ճանապարհորդությունը տեղի է ունեցել 1857 թվականին, սպա նրանք իրավունք չէին ունենաւ այդ աշխատության մէջ տեղ տալու ճանապարհորդությունից մեկ տարի հետո, 1858 թվականին Աղթամար կղզում տեղի ունեցած վերոհիշյալ խոսակցությանը: Մինչդեռ երբ կատարվում է ժամանակագրության խախտում, ճամփորդությունը վերագրվում է 1858 թվականին, սպա «Հյուսիսափայլի» ու հրատարակիչների դավանած սկզբունքների մասին Աղթամար կղզում վարվող խոսակցությունը եթե ո՛չ բոլոր կոյմերով, գէթ ժամանակագրական իմաստով դառնում է պատճառաբանված:

Րաֆֆիագիտության մէջ բաց մնացած հարցերից մեկն էլ պետք է համարել Րաֆֆու կողմից Արովյանի «Վերք Հայաստանի» վեպը ե՛րբ և ո՛ր կարդացած լինելու խնդրի շուրջը գոյություն ունեցող պատմությունը:

Րաֆֆու մահվանից անմիջապէս հետո «Արձագանք» շաբաթաթերթում հրապարակելով «Մի հիշողություն Րաֆֆիի կյանքից» վերնագրով հուշը և մէջ բերելով «Րաֆֆու բերանից լսած» խոսքերը՝ աշակերտ ժամանակ Մանգլիսում Արովյանի «Վերքը» կարդացած լինելու վերաբերյալ, Գարեգին Ենգիբարյանը «Արձագանքի» միջոցով հարցադրում է կատարում, թե ինչպե՞ս կարող էր Րաֆֆին աշակերտ ժամանակ (1852—1856 թթ.) Մանգլիսում Հովհաննէս Տեր-Հովսէփյանի տանը կարդացած լինել «Վերք Հայաստանի» վեպը այն դեպքում, երբ հայտնի է, որ «Վերքի» լույս տեսնելուց (1858) երկու տարի առաջ, 1856 թվականին Րաֆֆին կիսատ է թողել իր ուսումը և մեկնել է Պարսկաստան:

Բանի որ փաստերի միջոցով բացատրվում է «Վերք Հայաստանին» Րաֆֆու կողմից նաև ձեռագիր փճակում կարդացված լինելու հանգամանքը, սպա հուշագրողի հարցադրումը ինչպէս ժամանակին մնացել է անպատասխան, այնպէս էլ հետագայում մատնվել է անուշադրության: Ավելին, Րաֆֆու վաղ շրջանի գործունեության մասին տեղեկությունների սակավության հետևանքով Գարեգին Ենգիբարյանի հայտնած տարակուսանքը մինչև այժմ էլ մնացել է չպարզաբանված: Հարցադրումը որոշակի պատասխան է ստանում, երբ Ռ. Բերբերյանի հուշերի միջոցով հայտնի է դառնում, որ Պարսկաստան մեկնելուց հետո 1858 թվականի ամռանը Րաֆֆին մի կարճ ժամանակով եղել է Թիֆլիսում:

Գարեգին Ենգիբարյանը երկու միմյանց հակասող իրողությունը «չի կարողանում հաշտեցնել», որովհետև աշակերտ ժամանակ (1852—1856 թթ.) մի ամառ Մանգլիսում Հովհաննէս Տեր-Հովսէփյանի տանը Րաֆֆու սպրած լինելու իրողությունը մաւ նույնացնում է 1858 թ. ամռանը Րաֆֆու Մանգլիս կատարած այցելության հետ:



Քանն այն է, որ ռաֆֆիագիտությանը հայտնի չէր, իսկ հուշագրողը Րաֆֆու խոսքերից չի արտաբերում այն հավաստիացումը, որ նա 1858 թ. ամռանը եղել է Թիֆլիսում: Այս փաստի անտեսումը հուշագրողին հանգեցնում է երկու տարեթվերի միջև «անհամատեղելի իրողությունը» նշմարելու մտքին: Սակայն, երբ հայտնի է դառնում (տե՛ս Ռ. Բերբերյանի հուշը), որ Րաֆֆին «1858 թվականին եղել է Թիֆլիսում, երբ «Երազ» խորագրով բանաստեղծության գրության տեղի ու թվականի միջոցով (տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 26, 697) ամրապնդվում է 1858 թվականի ամռանը Րաֆֆու Թիֆլիսում գտնվելու փաստը, ապա հուշագրողի տարակուսանքը համարվում է վերացած և իրողության շարունակությունը ձեռք է բերում տրամաբանական զարգացում:

Գարեգին Ենգիբարյանի երկընտրանքն ու տարակուսանքը միանգամայն բացատրելի է: Հուշագրության մեջ միջադեպի բոլոր դրվագները չէ, որ ունենում են հավաստիության կապուն երաշխիք, հիշողության մեջ ավելի ամուր են մնում դեպքերի հիմնական ու ընդհանրացված կողմերը, քան ժամանակն ու մանրամասները:

Հոր առևտրական տան գործերի բերումով գալով Թիֆլիս, Րաֆֆին ոչ միայն հանդիպում է Հովհաննես Քաթանջանին այլև հետաձուտ է լինում գիմնազիայում իր ուսանողական իրավունքները վերսկանգնելու և կիսատ թողած ուսումը շարունակելու գործին (մեր կարծիքով՝ հենց այս փաստի անդրադարձն էլ առիթ է տվել հուշագրողին ասելու, որ Րաֆֆին «Վերք Հայաստանին» կարդացել է սշակերտ եղած ժամանակ): Ունենալով նման մտադրություն, Րաֆֆին անհրաժեշտաբար պետք է հանդիպեր ու խորհրդակցեր իրեն նախկինում ևս հովանավորած, այդ շրջանում գիմնազիայի նախապատրաստական բաժնի դաստիարակ Հովհաննես Տեր-Հովսեփյանի հետ: Քանի որ վերջինս ընտանիքով գտնվում էր ամառանոցում Րաֆֆին մեկնում է Մանգլիս, ուր և տեղի է ունենում այն, ինչ շարունակության մեջ վերապատմում է հուշագրողը: «...Ամառը,—պատմել է Րաֆֆին Գարեգին Ենգիբարյանին,—Տեր-Հովսեփյանը Մանգլիսից գալիս է քաղաք և վերադառնալիս բերում է հետը հայերեն գրքեր, ի միջի այլոց «Վերք Հայաստանին» և մտնելով Րաֆֆիի սենյակը ասում է. «Այ կարդա այս գիրքը» և մի քանի օր շարունակ խոսում է Հակոբի հետ «Հայրենասիրի ողբի» բովանդակության մասին»:

Եթե հավաստի ենք համարում «Մեղու Հայաստանի» լրագրի 1858 թ. 31-րդ համարում հրապարակված հաղորդագրությունը «Վերք Հայաստանի» վեպի լույս ընծայման վերաբերյալ, ապա պետք է ասենք, որ Րաֆֆու կողմից «Վերքը» կարդալու միջադեպը

Կարեգին Ենգիբարյանի հուշերում եղած մանրամասնություններով տեղի է ունեցել 1858 թ. օգոստոսի առաջին կեսին:

Հուշերի միջոցով, այդ, կարող են շտկվել ռաֆֆիագիտության համար կարևոր նշանակություն ունեցող հարցեր, բայց և միաժամանակ կարող են ծագել թյուրիմացություններ, որոնք արդեն քանի տասնամյակ է, ինչ մատուցվում են իբրև նշարտություններ: Գր. Արծրունու հուշը ո՛չ ճիշտ ընթերցելու հետևանքով առաջ է եկել այն թյուրիմացությունը, ըստ որի Րաֆֆու «Շանապարհորդություն Պարսկաստանի» ուղեգրական աշխատությունը նույնությամբ առնված է «Սալբի» վեպից և համոյիսանում է այդ վեպի մի մասը:

1908 թ. Րաֆֆու մահվան քսանամյակի առիթով վիպասանի սվագ որդին «Րաֆֆի» խորագիրը կրող հոդվածով հանդես է գալիս «Տարագ» շաբաթաթերթում: Անդրադառնալով Րաֆֆու 70-ական թվականների գործունեությանը և խոսելով «Շանապարհորդություն Պարսկաստանի» վերնագրով ուղեգրությունը «Մշակում» հրատարակելու շարժառիթների մասին, Արամ Րաֆֆին այն միտքն է հայտնում, որ այդ աշխատությունը «բառացի վերցված է «Սալբի» վեպից»:

Երբ Արամ Րաֆֆին «Տարագում» հրապարակում էր այս հոդվածը, «Սալբին» գտնվում էր ձեռագիր վիճակում: Վեպի ինչ լինելը հայտնի չէր հանրությանը, ուստի և սղալաղվող այս փաստի դեմ առարկողներ չեղան: Այժմ, երբ հրապարակի վրա է վեպի առաջին հատորը, նկատելի է ու փոքր-ինչ տարօրինակ է թվում, որ Արամ Րաֆֆին իր տեսակետը հիմնավորելու համար հենվում է ո՛չ թե իր տրամադրության տակ գտնվող հեղինակային ձեռագրերի վրա, այլ հիմք է ընդունում Արծրունու հուշը, ընդ որում, մասնատված ներկայացնելով խնդրո առարկա հատվածը: Այս տեսակետը հրապարակվելով «Տարագում» և չհանդիպելով առարկության, ծայր է տալիս վերոհիշյալ թյուրիմացությանը, որը շարունակվում է հսկ հետագայում ու արմատավորվում է մեր օրերի ռաֆֆիագիտության մեջ:

1911 թվականին «Սալբի» վեպի առաջաբանում Աննա Րաֆֆին անդրադառնալով Արծրունու կողմից Րաֆֆուն արված «Մշակին» աշխատակցելու հրավերին, ո՛չ միայն կրկնում է որդու սխալը, այլև ավելի է խորացնում այն:

Ըստ Աննա Րաֆֆու, Արծրունու առաջարկից հետո Րաֆֆին վերջինիս է ներկայացնում «Սալբի» վեպի ձեռագիրը՝ «Մշակում» հրապարակելու համար: «Արծրունին,—գրում է Աննա Րաֆֆին,—խոսելով այդ վեպի մասին ասում է. «Վեպի նկարագրական տեղերը անճանաչ էին», բայց և այնպես անհարմար նկատվեց այդ մեծ

վեպը ամբողջովին ամփոփել մի թերթի մեջ, որը շաբաթը մի անգամ էր միայն լույս տեսնում (ընդգծումը իմն է—Խ. Ս.): Ուստի,—ավելացնում է նա,—Արծրունին «Մշակի» սկզբնական համարից սկսած տպագրում է «Բաֆֆիի նամակները» վերցված «Սալբի» վեպից\*:

Անհա Բաֆֆու շաբաթականից այն տպավորությունն է ստացվում, որ Արծրունին հավանելով վեպը՝ ցանկանում է այն հրատարակել «Մշակում», բայց չկարողանալով այդ սովորաձևով վեպը «ամբողջովին ամփոփել» իր թերթի մեջ, որոշում է տպագրել միայն «Բաֆֆիի նամակները» վերցված «Սալբի» վեպից: Աս Անհա Բաֆֆու շաբաթականից հանված հետևությունն է, մինչդեռ, եթե հետևելու լինենք Արծրունու պատմածի ընթացքին, ապա դժվար չէ հասնողվել, որ Անհա Բաֆֆին աղավաղում է Արծրունու միտքը ու հուշերից հանում է տրամազծորեն՝ տարբեր եզրակացություն:

1871 թ. Սեկտեբրիմ Արծրունու տանը Բաֆֆին ծանոթանում է Գրիգոր Արծրունու հետ: Մասնակցելով նոր ստեղծվող «Մշակի» խմբագրական ժողովներին, Բաֆֆին Արծրունուն է ներկայացնում իր «Խլվիկի» անունով վեպը («Խլվիկը» և «Սալբին» միևնույն վեպի տարբեր անուններն են) լրագրում մաս առ մաս տպագրելու համար: «Ես,—գրում է Արծրունին,—բացարձակ հաշտեցի միտքս. վեպի նկարագրական տեղերը անհման էին, բայց ամբողջ վեպի հյուսվածքը ես չհավանեցի: Ես անհարմար գտա այդ վեպը մի լրագրի, այն էլ շաբաթը մի անգամ հրատարակվող լրագրի մեջ տպագրելու համար (ընդգծումը իմն է—Խ. Ս.): «Այնուհետև,—շարունակում է Արծրունին,—Մելիք-Հակոբյանը սկսեց ինձ հաճախել խմբագրական ժողովներից դուրս օրերին: Մեր խոսակցությունների ժամանակ ես աշխատում էի բացատրել նրան իմ ուղղությունը իմ պրոգրամը...

— Դուք աշխարհ տեսած մարդ եք, դուք ինքներդ պարսկաստանցի, բուն արևելցի եք, պտտել եք թուրքաց Հայաստանում, տվեք մեզ տեղեկություններ այդ երկրների մասին, տվեք մեզ հում նյութեր, անդադար ասում էի ես նրան, թողեք երևակայականը և հաղորդեցեք մեզ իրականը, այն ինչ որ կա, ինչ որ ինքներդ գիտեք, ինչ որ տեսել եք: Նկարագրեցեք կյանքը Պարսկաստանում, ինչպես նա կա...

\* Բաֆֆի, Սալբի, Վիեննա, 1911, էջ 10: «Ճանապարհորդություն Պարսկաստանի» աշխատությունը «Մշակում» հրապարակվել է իբրև նամականի «Պարոն Բաֆֆիի ուղևորությունից Պարսկաստանում» խոլագրով՝ Ալեքսանդր Բաֆֆի ստորագրությամբ:

Այդ մասնավոր խոսակցությունների ժամանակ,—ավարտում է իր միտքը Արծրունին,—մշակվեցավ «Պարսկաստանի նամակների պրոգրամը...»:

Ինչպես տեսնում ենք, Արծրունին թեև «Խլվիկի» նկարագրական տեղիքը համարում է «անմասն», բայց «վեպի ամբողջ հյուսվածքը» նա չի հավանում, և նկատի ունենալով շարաթաթերթի հնարավորությունները՝ մերժում է «Խլվիկի» տպագրությունը, միաժամանակ այս վեպի միջոցով ծանոթանալով գրողի ստեղծագործական կարողություններին, Արծրունին նրան է ներկայացնում նոր նյութի ու նոր ժանրի վերաբերյալ իր սուաջադրանքները: «Թողեք երևակայականը,—ասում է նա,—նկարագրեցեք կյանքը Պարսկաստանում, ինչպես նա կա...»: Այս մեջբերումից հասկանալի է դառնում, որ Բաֆֆին խմբագրին պետք է ներկայացնեք ոչ թե «Խլվիկը», այլ բոլորովին նոր գործ, որը պետք է խարսխված լինե՛ր հեղինակի իմացածի ու տեսածի վրա: Արծրունու սուաջարկը ջգտորում ու խրախուսում է Բաֆֆուն և այս մասնավոր խոսակցության ժամանակ էլ, ինչպես վկայում է Արծրունին, «մշակվում է «Պարսկաստանի նամակների» պրոգրամը»:

Անհու Բաֆֆին Արծրունու վերոհիշյալ պատմածը մասնատելով, արանքից դուրս է թողնում «Խլվիկը» մերժելու և «Պարսկաստանի նամակների» «պրոգրամը կազմելու» հատվածը, որի հեռուանքով էլ «Պարսկաստանի նամակները» կցորդվում է «Սալբի» վեպին:

Անկախ նրանից, թե ինչ է պատմում Գրիգոր Արծրունին և թե ինչպես և՛ մեկնաբանում նրա մտքերը, այս հարցի վերաբերյալ գոյություն ունի հեղինակային մի փաստարկ, որը աներկբայելի է դարձնում և ամենատրամադրական միջոցով հերքում է «Սալբի» վեպի և «Ծանապարհորդություն Պարսկաստանի» աշխատության միջև ենթադրյալ ուղղակի կապը:

«Փունջ» ժողովածուի սուաջին հատորի «ընթերցողին» ուղղված սուաջաբանում Բաֆֆին հրապարակում է այս մատենաշարի մնացած ինը հատորների պարունակության ցանկը: Այստեղ Բաֆֆու «Ուղևորություն Պարսկաստանի» աշխատությունը հեղինակի կողմից դիտված է իբրև սուանձին գործ և մտցված է հիմնդրորդ «Ծանապարհորդական հիշատակարան» վերնագրով հատորի մեջ, այն դեպքում, երբ «Սալբի» վեպի սուաջին, երկրորդ և երրորդ հատորները գետեղված են «Վիպասանություն» ընդհանուր խորագրի տակ և հատկացված է «Փունջի» վեցերորդ, յոթերորդ և ութերորդ հատորները: Ինքնին հասկանալի է, որ «Ծանապարհորդություն Պարսկաստանի» աշխատությունը «Սալբի» վեպից «բառից վերցված լինելու» դեպքում Բաֆֆին չէր կարող նույն աշխատություն-

նը և «Ծանապարհորդություն» և «Վիպասանություն» խորագրերը կրող հատորներում զետեղել, մանավանդ որ ժանրային առումով այս երկու բաժինները ընդգծված կերպով զանազանվում են միմյանցից: Եթե այս ամենի վրա ավելացնենք և այն, որ «Սալբի» վեպի առաջին հատորը ո՛չ իր բնույթով և ո՛չ էլ ժանրային առումով չի ներդաշնակվում ու կապվում «Ծանապարհորդություն Պարսկաստանի» աշխատության հետ, ապա պետք է պնդել, որ Աննա և Արամ Բաֆֆիները, ինչպես նաև մեր գրականագետներից ոմանք, այս հարցում գտնվում են թյուրիմացության մեջ, որ նրանք՝ զիտենալով, թե անգիտակցաբար, փառ են մեկնաբանում Արծրունու սաածը և որ «Ծանապարհորդություն Պարսկաստանի» ուղեգրական աշխատությունը ուղղակի իմաստով ո՛չ մի կապ չունի «Սալբի» վեպի հետ:

Այս ամենը գալիս են հաստատելու, որ թեև քիչ չի գրվել Բաֆֆու մասին, բայց դեռ շատ հարցեր կան, որոնք պետք է նոր մեկնաբանում, նոր բնույթ ու կերպարանք ստանան, և դեռ ինչքան փաստեր են պակասում, այդ բոլորը ասելու, շտկելու և տեղը դնելու համար:

Մեծ գրողը ամեն մի նոր դարաշրջանում նորից է հայտնագործվում եկող սերնդի կողմից, նոր ուսումնասիրողը միշտ էլ կարողանում է նշմարել ու բացահայտել այն, ինչ աննկատ էր մնացել նախորդի համար:

Բաֆֆին գտնվում է մեծերի շարքում, ուստի անհավանական չէ, որ հուշերի գիրքը օգնի թե ընթերցողներին և թե ուսումնասիրողներին, նորովի ընկալելու և մեկնաբանելու այն, ինչ աննկատ է մնացել նախորդների համար:

Խ. Սամվելյան.

ՀՈՒՇԵՐ



## ՐԱՖՖԻԻ ԿՅԱՆՔԻՑ

### I

Ձեւ հիշում ինչ օր էր, բայց գիտեմ, որ 1883 թվականի օգոստոս ամսի կեսին էր, երբ ես առաջին անգամ տեսա Րաֆֆիին: Ես նոր էի Թիֆլիս եկել և առաջին ջերմ փափագս էր տեսնել այն մարդուն, որ, իմ կարծիքով, հայ ազգի վշտերի ու դառնությունների ամենաեռանդուն թարգմանը և նրա նվիրական գաղափարների ամենատաղանդավոր արտահայտիչն էր: Նրա ոգևորիչ գրիչը ինձ վրա խոր տպավորություն էր գործել: Նրա անունը ինձ համար անգուգական էր: Այդ անունով ես շատ անգամ էի կոչել և թշնամացել վիպասանի գաղափարի հակառակորդների հետ:

Երեկո էր, երբ ես մի բարեկամի հետ մտա Րաֆֆիի մոտ: Այդ ժամանակ վիպասանը բնակվում էր Սոլոլակի թաղում, մի փոքրիկ հայ բուրժուայի տանը:

Անցնելով բավական ընդարձակ մի բակ, մենք փայտյա սանդուղքով բարձրացանք բակի խորքում գտնվող տան վերին հարկը: Առաջին բանը, որ այստեղ աչքի ընկավ, տրուպիկական ծառերը, ծաղիկները և բույսերն էին, որ մի փոքրիկ անտառ էին կազմում պատշգամբի մի ծալրից մյուսը: Ուղիղն անցնելով, մենք զգացինք վերին աստիճանի ախորժեղի մի բուրմունք, որ տարածել էր օդի մեջ բազմատեսակ ծաղիկների անուշ խառնուրդը: Բուսականությանը հարուստ արևելքում ծնված բանաստեղծն յուր բնակարանը

շրջապատել էր բնության գեղեցիկ և գույնզգույն ժառանգանով, որ մի առանձին հրապույր էր տալիս նրան արուս-քուստ:

Բնակարանը բաղկացած էր երկու ոչ այնքան մեծ սենյակներից, որոնք միմյանցից բաժանված էին փոքրիկ նախասենյակով: Մի քանի սևագույն աթոռներ, մի հատ ասիական թախտ՝ պարսկական գորգով ծածկված և բարձրով զարդարված, պատի առջև դրած մի պահարան գրքերով լի,— այս էր Րաֆֆի կաթինետի ամբողջ կահ-կարասին: Այնուհետև լուսամուտների հատակների վրա, անկյուններում, դուրսը և ներսը, ամեն տեղ ծաղկամաններ:

Սենյակում տիրում էր կիսախավար: Գրասեղանի վրա վառվող կանաչագույն լուսամփոփով ծածկված մի գույզ մոմերի լույսը տարածվել էր հաստակազմ գրքերի վրա, որոնց մեջ աչքի էին ընկնում հայկազյան բառարանի ահագին հատորները: Այդ սեղանի քով նստած էր մի մարդ, բավական մեծ գլխով, լայն, բարձր, կնճոռտ և քունքերի մոտ դուրս ցցված ճակատով, թանձր ու սև ունքերով, խիտ բեղերով ու կարճիկ մորուքով, ուր հագիլ նշմարվում էին մի քանի սպիտակ թելեր: Նրա դեմքի գույնը թուխ էր, արտահայտությունը առաջին անգամ տեսնողի համար անհյուրընկալ, շրթունքները սեղմված, աչքերը հիվանդոտ:

Դա էր այն մարդը, որի «Կայծերը» մի քանի ամիս էր՝ արդեն բոցավառել էր հայ երիտասարդության սրտերը, ամեն տեղ հուզմունք բարձրացնելով և ազնիվ զգացմունքներ շարժելով: Տեսնելով Րաֆֆին նստած, ինձ թվաց, որ նա բարձրահասակ է և հաղթանդամ: Բայց երբ նա ոտքի կանգնեց մեզ ընդունելու, երևաց միջին հասակից էլ քիչ ցածր, կարելի է ասել, մի փոքրահասակ մարդ:

Ինձ տիրեց մի տարօրինակ զգացում, գուցե նման բարեպաշտ մարդու երկյուղածությանը, երբ առաջին անգամ ոտ դրի այդ մարդու սենյակը: Ես պանսիոնի աշակերտուհի չէի, որ բանաստեղծություններով հափշտակված, նրանց հեղինակներին երևակայեի երկնային հրեշտակներ, օժոված թե

բարոյական և թե՛ արտաքին ամենագեղեցիկ հասկոյություններով: Բայց և այնպէս ես ոչ միայն Րաֆֆիի գաղափարների երկրպագուն էի, այլև սիրում և հարգում էի նրա անձնավորութունն իսկ, հեռւից հեռու, անտես, անծանոթ: Մինչդէռ, չսխալի թուրքներ, այդ անձնավորութեան մասին գալստներում շատ էլ նշատաւոր կարծիք չէր տիրում<sup>2</sup>: Սակայն, թվում էր ինձ, մի մարդ, որ այնքան ընդունակ է բարձր գաղափարների թարգման լինելու, մի մարդ, որ այնպիսի մաքուր զգացումներ է ներշնչում ժողովրդին, չի կարող լավ հոգի չունենալ: Գիտէի նույնպէս, որ սովորաբար միևնույն չափն են գործածում թե՛ հասարակ մահկանացուների և թե՛ բացառիկ անհատների բարոյական արժեքը որոշելիս: Ջգում էի, որ եթե Րաֆֆիի անձնականի մասին լավ կարծիք չի տիրում, մեղավորը ամբոխի շտապ եզրակացութունն է, մի կարճատես, կիսակիրթ ամբոխի, որ չէր կարող թափանցել յոր բարոյական և մտավոր առաջնորդների ներքին աշխարհը, հոգեբանորեն բացատրել նրանց կարծեցյալ թերութիւնները:

Րաֆֆին գրում էր, ուստի մեր այցելութունը շատ էլ հարմար ժամանակ չէր և պետք է անախտոժ լիներ նրա համար: Բայց մի դուրեկան ժպիտ լուսավորեց այդ՝ ըստ երևոյթին մոպս մարդու թախճալի դէմքը, երբ նա մեզ տեսավ: Յուր ցալազար աչքերը շփելով, նա սեղմեց մեր ձեռքը, հրսովիրեց նստել և իսկույն ծառային հրամայեց մեզ համար թել բերել:

Մեր խոսակցութունը սկզբում դանդաղ, հետո դարձաւ ամփոփ ու կենդանի և տևեց մինչև ուշ երեկո: Այդ ժամանակ էր, որ «Մեղու» լրագիրը իր աշխատակից Հայկունիի բերանով (Հովակիմ Գեղամյանց) արշավանք էր սկսել Րաֆֆիի դէմ<sup>3</sup>: Վիպասանի երկրպագուները վրդովւած էին այդ արշավանքով: Ես ինքս շատ անգամ անգուսպ կոխվներ էի ունեցել Բաքվում մեղվականների հետ, որոնց ասելութունը Րաֆֆիի դէմ այդ ժամանակ հասել էր յոր գագաթնակետին: Ինքը՝ վիպասանը, սաստիկ վշտացած էր Հայկու-

նիի հարձակումներից: Բնական էր, որ նրա խոսակցությունը պտտեր այն գրականական բանակովի շուրջը, որ տիրում էր այդ մասին «Մշակ» և «Մեղու» լրագիրների մեջ<sup>4</sup>:

Նա պարզում էր իր հակառակորդների արշավանքի բուն շարժառիթը, որ մինչև այդ ժամանակ ինձ համար շատ էլ պարզ չէր: Եվ ոքան նա շատ էր հարձակվում մեղվականների վրա, այնքան այդ մարդիկ ինձ համար անախորժ էին դառնում, թեև մյուս կողմից շատ էլ անխորժելի չէին վիպասանի միակողմանի դատողությունները և անձնական, կըրքոտ հարվածները:

— Եթե այդ մարդիկ,— ասում էր նա,— միայն կարճատես, հետադեմ և անմիտ լինեին, ես այդքան չէի վրդովվիլ: Բայց նրանք խորամանկ էլ են, ահա՛ ինչն է ատելի. նրանք ոչ մի տող առանց վատ նպատակի չեն գրում: Նրանք դեկլամարվում են եզվիտական ձգտումներով, թեև զուրկ են եզվիտների խելքից: Նրանք միջոցներ չեն խնայում, նրանց համար ամեն մի վատ միջոց ներելի է, միայն թե վնասեն ինձ: Ուշադրությամբ կարդացել եք այդ Հայկունիի հոդվածները:

— Այո՛, մասամբ:

— Եթե դուք այստեղի գործերին տեղյակ լինեիք, այդ հոդվածների մեջ կգտնեիք շատ ստոր ակնարկներ, այո՛, նույնիսկ մատնություն<sup>5</sup>:

Դուրս թափելով իր սրտի առաջին թույնը, Բաֆֆին հանգստացավ, և այնուհետև երևան եկավ մի հեզմասեր, նույնիսկ սրամիտ մարդ: Խոսակցության նյութը նույնն էր, բայց որպիսի՝ սառնությամբ էր նա ծաղրում իր հակառակորդներին: Մի կարճ համեմատություն, մի թեթև նկարագիր պատկերացնում էր այդ մարդկանց ամբողջ բարոյական աշխարհը: Եվ յուր սառն հեզությամբ Բաֆֆին ավելի էր ազդում ինձ վրա, քան կատաղի հարձակումներով:

— Ով ուզում է հայ գրականությանը ծառայել,— փոխեց նա դարձյալ յուր խոսելու տոնը լրջության,— պետք է առաջ սովորի դիմանալ սև նախանձի և ատելության հալածանք-





ներին: Ամեն մի հայ իրան առնվազն մի Նապոլեոն է համարում, և դուք չեք կարող ապացուցել, որ նա պետք է հասարակ զինվոր լինի: Պատմական անմիաբանությունը մեր լրագիրների համար թութակի երգ է դարձել, բայց ոչ ոք մեզանում այնքան նախանձոտ և չարհոգի չէ, որքան լրագրական գանձները: Ամենացավալին այն է, որ գիտությունն ու կրթությունն էլ չեն օգնում հալին: Քանի՜-քանի՜ համալսարանականներ կան, որոնց դավանած սկզբունքները պատիվ չէին բերիլ մեր հին խալիֆաներին անգամ: Պետք է հենց աշդախների դեմ կռիվ մղել, հենց նրանց մտրակել, եթե ոչ ագիտությունը իրեն արդարացնելու պատճառներ շատ ունե: Եվ մենք կկռվենք, գոնե ես վճռել եմ անդադար կռվել, թող ինչքան ուզում են հայհոյեն: Մի մարդ, որ հավատում է իր քարոզած գաղափարների անպայման սրբությանը, նրա համար դժվար չէ հալածվելը: Մեր կողմն է նոր սերնդի ակեղծ համակրությունը և ոգևորությունը, նրանց կողմն է հինը, քարացածը և նեխվածը: Թող որքան ուզում են կատաղեն, փրփրեն, ոչինչ չեն կարող անել ժամանակի պահանջների դեմ...

Զարմանալի հավատ և եռանդ էին զգացվում վիպասանի այդ խոսքերի մեջ: Այդ րուպեին նա իմ աչքերում երևում էր կյանքի դառը փորձերի քուրաչում ձուլված և կարծրացած մի մարտիկ, որին անկյարելի էր շեղել մի անգամ արդեն բռնած դիրքից: Ոչ մի բան այնքան չէր կարող խրախուսել մի երիտասարդի, որ յուր սրտում զգում էր գրականական ասուարեզը մտնելու անհաղթելի փափագ, ոչինչ, քան մի աշդախի մարդու խորին հավատով արտասանած այդ խոսքերը:

Ես դուրս եկա Րաֆֆիի բնակարանից ամենալավ տպավորության տակ: Թվում էր ինձ, որ այդ մարդու եռանդը, տոկունությունը, հավատը և ինքնավստահությունը կարող են ամենայերևաբանաբար մարդուն անգամ ոգևորություն ներշնչել:

## II

Այդ օրից մեր մեջ սկսեց ծանոթություն, որ քիչ ժամանակ անցած փոխվեց բարեկամության: Ես այցելում էի Րաֆֆին շաբաթը մի երկու անգամ, մեծ մասամբ կիրակի օրերը, երբ նա չէր զբաղվում, իսկ հաճախ հանդիպում էինք փողոցում:

Րաֆֆիի սովորական հյուրերը մի քանի երիտասարդներ էին, իսկ այցելում էին նրան շատերը: Գրեթե ամեն օր նրա մոտ լինում էին յոթ-ութ մարդ, մեծ մասամբ գավառացիներ, ուսանողներ, նույնիսկ հասարակ մշակներ: Նա ձանձրանում էր այն այցելուներից, որոնք գալիս էին լոկ հետաքրքրությունից դրոված և խլում էին նրա ժամերը: Գավառացիներից շատերը երբեմն չէին բավականանում ժամանակ խելով, այլև կատարյալ ասիական համարձակությամբ պահանջում էին, որ նա յուր գրքերից մի-մի օրինակ նվիրե, կանխապես, իհարկե, նրանց մականոխն գրելով «նվեր այսինչին. հեղինակից»: Այդ մարդիկ, որոնց մեջ կային և ունեորներ, ասում էին, որ գրքերը վերցնում էին իբրև հիշատակ «հայոց ազգի ամենատաջին վիպասանից», պարծեցալու համար, և կարծում էին, որ դրանով մեծ հաճույք են պատճառում հեղինակին:

Այցելուների թվում երբեմն ես պատահում էի մի գառամյալ ծերունու, որ տնքտնքալով ամեն կիրակի առավոտյան սանդուղքով բարձրանում էր վեր:

— Հակովբ, բարով,— ասում էր նա ընտանեբար ներս մտնելով և ընկղմվելով աթոռի, երբեմն էլ տանտիրոջ բազկաթոռի վրա:

Դա Հակովբ վարժապետ Բելախյանցն էր<sup>6</sup>, Րաֆֆիի մայրական ուսուցիչը: Նա գալիս էր «յուր Հակովբի առողջությունը հարցնելու»: Աշակերտ Հակովբը վարժապետ Հա-

կուլքին որդիական երախտագիտությամբ էր ընդունում, ամեն անգամ նրա ձեռքի ափի մեջ սեղմելով մի-մի թղթադրամ:..

Րաֆֆիի երկրպագուների մի խումբ աշխատում էր կատարել վիպասանի քսանոսիկգամյա հոբելյանը: Այս հանգամանքը մի նոր անհանգստություն էր պատճառել վիպասանի թշնամիներին, որոնք ամեն ջանք գործ էին դնում հոբելյանը խանգարելու: Նրանց ցանկությունը կատարվեց, թեև նրանցից անկախ պատճառներով...

Հոբելյանը խափանվեց<sup>7</sup>, բայց այն երկու-երեք հազար ոտքիները, որ հայ հասարակությունը սիրով և հոժարությամբ նվիրեց Րաֆֆիին, մնացին մշտական փուշ վիպասանի թշնամիների աչքում:

Սև նախանձը բորբոքվել էր մարդկանց սրտերում, և նրանք չգիտեին ինչ անեին Րաֆֆիին վնասելու ոչ միայն բարոյապես, այլև նյութապես:

Րաֆֆին հրապարակորեն հռչակվում էր մերթ «խաչագող», մերթ «գրականական փերեզակ»<sup>8</sup>, որ կարծես հայ հասարակության քսակի համար ստեղծվել էր իբրև մի երկնաշին պատիժ:

Այդ արշավանքը վիպասանի դեմ առ միշտ պետք է մնա մի անջնջելի արատ հայ մամուլի պատմության վրա: Մամուլի, որի զարգացմանը այնքան նպաստել էր Րաֆֆին, յուր տաղանդի ուժով նանսպարհ հարթելով նրա համար ժողովրդի խավերում:

— Լսե՛լ եք,— դարձա ես մի օր ծիծաղելով Րաֆֆիին,— ձեր թշնամիները պնդում են, թե դուք բանկում ոչ ավելի, ոչ պակաս քսան հազար ոտքի դրամագլուխ ունեք, բոլորը վատասկել եք գրականությամբ և ստացել եք հոբելյանի առիթով:

— Մի՞թե,— գոչեց նա ժպտալով,— ես շատ ուրախ եմ, բայց իմ թշնամիները չե՞ն ասում, թե չեկը ում մոտ է:

— Վրդովեցուցիչն այն է, որ մերոնցից ոմանք էլ հավատում են այդ ստասպելական ստին: Այսօր ես այդ մասին վեճ ունեի մեր ծանոթներից մեկի հետ:

— Իզուր,— շարունակեց Րաֆֆին ավելի զվարթ եղանակով,— չպիտի հերքել, ես ինքս այդ մասին լուրս եմ: Թող իմ թշնամիները հավատան, որ ես հարուստ եմ, դա նրանց ավելի կտանջի, քան եթե համոզված լինեին, որ ես աղքատ եմ այնպես, ինչպես այժմ: Այդ տեսակ մարդկանց ամենամեծ ցավ սրտոնատողը իրենց հակառակորդների նյութական ապահովությունն է: Բայց խոս իմ մոտիկ բարեկամները գիտեն իմ իսկական դրությունը, այդ ինձ համար բավական է:

Իսկ նրա իսկական դրության մասին մոտիկ բարեկամներին հետևյալն էր հայտնի: Նա ամուսնացած էր, ուներ երկու զավակ, որոնք իրենց մոր հետ բնակվում էին Պարսկաստանում: Ուներ երկու թե երեք չքավոր եղբայրներ, ծերունի մայր, որ յուր որդիներից ստանձին էր ապրում, ինը քույր՝, բոլորն էլ չքավոր և բոլորն էլ օգնության կարոտ: Ի՞նչ էր նրա ելլամուտը, որ կարողանար ոչ թե ազատ դրամագլուխ կազմել, այլ գոնե մի կերպ կառավարել այդ ահագին ընտանիքը:

«Մշակի» խմբագրությունից, ինչպես հետո մի օր ինձ ասաց Գրիգոր Արծրունին, նա ստանում էր տարեկան ութ հարյուր ուրբլի և ճաշում էր խմբագրի մոտ: Առանձին հատորներով լույս տեսած գրքերը այդ ժամանակ նրան տալիս էին տարեկան միջին թվով հազար երկու հարյուր ուրբլի: Այդ էր նրա ամբողջ հարստությունը: Բայց այն էլ հենց նույն օրերը կիսով չափ պակասել էր, երբ նա թյուրիմացություններ էր ունեցել Արծրունիի հետ, հեռացել էր նրանից և զրկվել ոռճիկից<sup>10</sup>:

Այդ բոլորի մեջ, որ Րաֆֆին մերթ ընդ մերթ պատմում էր յուր բարեկամներին, նյութական կարոտությունը այնպիսի խոշոր տեղ է բռնում, որ կամա-ակամա ամեն քայլում պետք է այդ խնդրին դիմել: Ես չեմ պատմի նրա անցյալը, վախճանալով, մի գուցե հիշողությունս ինձ մոլորեցնի: Առաջ

կրէրեմ միայն այն փաստերը, որոնք խոր են դրոշմվել իմ մտքի մեջ: Եթէ չեմ սխալվում, դեպքը պատահում է յոթամասնական թվականների սկզբներից, այսինքն այն ժամանակ, երբ Արծրունին վիպասանին դեռ չէր հրավիրել «Մշակի» մշտական աշխատակիցը լինելու<sup>11</sup>:

— Ես կենում էի Թիֆլիսի հետ ընկած թաղերից մեկում,— պատմում էր Րաֆֆին մի օր ճաշից հետո, երբ մենք գնում էինք ոտով Մուշտալիո գրոսնէլու,— մի աղքատ հայ ընտանիքի մոտ: Այդ ժամանակ ես պարապում էի մի այնպիսի եռանդով, որ միայն նոր սկսող հեղինակը կարող է ունենալ: Գիշեր-ցերեկ ես նստած էի սեղանիս քով: Բացի գրչից, ես մոռացել էի ամեն ինչ, ինչպես կարող է մոռանալ մի սիրահարված պատանի յուր նազելիի գրկում ամբողջ աշխարհը: Այնինչ ապրում էի օր-օրի վրա՝ մի օր քաղցած, մի օր կիսակուշտ: Տաք կերակուրը ինձ համար հազվագյուտ քան էր: Իմ սնունդն էր մեծ մասամբ մի կտոր հաց, մի քիչ պանիր, իմ սիրածը՝ ծխախոտ և թեյ: Առանց ծխելու ես պարապել չէի կարողանում, ինչպես այժմ էլ: Ծխում էի չորս հատը մի կուպեկանոց **պապիրոս**. **երբեմն էլ** սոլդաթի **մախորկա** և ծխում էի խնամքով ու ախորժակով: Չեմ հիշում, որ այդ ժամանակ մի հատ պապիրոս դեմ ձգած լինեմ առանց սվարտելու նրան մինչև **մունդշտուկ**: Իսկ եթէ լինում էին կիսատ պապիրոսներ, հավաքում էի սեղանիս գգրոցի մեջ և հետո ծխում: Գալով թեյին՝ դա սրդեն մի այնպիսի շքեղություն էր ինձ համար, որին շաբաթներով չէի արժանանում: Նրիտասարդական դառն, բայց երջանի՜վ օրեր: Այդ բոլոր գեղությունները ես կրում էի անտրտուն, ոչ ոքի չգանգատվելով և ոչ ոքի չհայտնելով իմ դրությունը...

— Մի անգամ ես պարապեցի մինչև ուշ գիշեր: Հանկարծ գլուխս պտտեց, աչքերս մթնեցին: Հիշեցի, որ ամբողջ օրը անոթի եմ եղել: Պտրեցի իմ սենյակի բոլոր անկյունները, իհարկե, ոչինչ չգտա, որովհետև երբեք ինձ մոտ սվելորդ հացի կտոր չէր լինում: Հսկառակի պես ծխախոտս էլ վերջացել էր: Պառկեցի անկողին, որ քնով մոռանամ իմ

քաղցր: Այստեղ իմացա, որ քունը թշնամի է դատարկ ստամոքսին: Ի՞նչ անեի, գրպանումս մի հատ նիկոլանակի մեծ երեքկուպեկանոց ունեի, գնացի փողոց մի բան գնելու: Երկմըտության մեջ էի, ի՞նչ գնեմ՝ ծխախոտ, առանց որի գլուխս պտուվում էր, թե՞ հաց, առանց որի քիչ էր մնում քաղցից ուշաթափվելի: Գիշերը շատ ուշ էր, խանութները վաղուց կողպված էին: Մոտեցա մի հացթուխի խանութի, զարկեցի դռներին: Հացթուխը շուտ եկավ անկողնում, երագում մոթմոթաց, կրկին զարկեցի, նա զարթնեց և սկսեց Վանի բարբառով ինձ հայհոյել: Բայց իմ խնդիրը մեղմացրեց նրան, դռների արանքից վերցնելով երեքկուպեկանոցս, մի ֆունտ հաց տվեց ինձ...

Այսպիսի օրեր էր քաշել Րաֆֆին: Հիշում եմ՝ այդ դեպքը նա պատմում էր ծիծաղելով, առանց որևէ անախորժություն արտահայտելու դեպի այդ օրերը:

Բայց ահա և մի ուրիշ դեպք, որ վիպասանը պատմում էր ինձ մի օր, հագիվհագ կարողանալով զսպել յուր հուզմունքը: Թշվառությունները հաճախ թշվառությունների հետևից են գալիս և երբեմն նրանք այնպես են բարդվում, որ մարդ ընկնում է անել դրության մեջ: Կամքի տեր մարդիկ մաքառում են ճակատագրի ամենազորեղ հարվածների դեմ, բայց պատերազմը անհետևանք չի մնում նրանց բնավորության վրա:

Նյութական ամենավերջին կարոտության մեջ, Րաֆֆին ճամակ ճամակի հետևից է ստանում Պարսկաստանից՝ մերթիր մորից, մերթ քույրերից և մերթ եղբայրներից: Ամեն կողմից դիմում են նրա օգնության այն ժամանակ, երբ ինքը օրերով անոթի էր մնում:

— Տեսնել ամենամոտիկ արյունակիցներիդ կարոտությունը, զգալ, որ պարտավոր ես նրանց օգնել և չկարողանաս օգնել — դա էր կատարյալ թշվառությունը: Բայց այդ բոլորը չէ: Ծակատագիրը այնպես է կարգադրում, որ իմ եղբայրներից մեկը Պարսկաստանից գա Թիֆլիս, ինձ վրա հույս դրած, այստեղ հիվանդանա քաղաքի մի անկյունում և

Կարճ ժամանակից հետո մեռնի<sup>12</sup>: Եվ մեռնի մի այնպիսի օր, երբ ես ոչինչ չունեի նրան թաղելու համար: Այսօրվա պես միտս է, որ ես երեք անգամ վճռեցի դիմել Գրիգոր Արծրունիի օգնությանը, երեք անգամ մոտեցա նրա դռներին և երեք անգամ էլ ետ դարձա: Խորին ինքնասիրությունը ինձ թույլ չէր տալիս իմ ցավը հայտնել նույնիսկ մի մարդու, որ առանց քացատրության կարող էր զգալ իմ դրությունը:

Վերջապես, չգիտեմ ինչպես, Րաֆֆին ճարում է երեք ռուբլի և գնում է մի դագաղ: Երեկոյան մութին նա իր եղբոր դիակը դնում է կտոք և մի քահանայի ու երկու մշակի հետ ճուռնում թաղելու:

### III

Րաֆֆիի թշնամիներին մեծ ուրախություն պատճառեցին Արծրունիի հետ 1884 թ. ունեցած թյուրիմացությունները: Այդ ժամանակ, քանի դեռ Արծրունին Թիֆլիսումն էր, և «Մշակը» կաղալով մի կերպ, շատ անգամ առանց խմբագրական հոդվածների, լույս էր տեսնում, Րաֆֆին մտածում էր անկախ մի գրականական ամսագիր հիմնել: Երբ Արծրունին գնաց արտասահման<sup>13</sup>, Րաֆֆին թողեց այդ միտքը և, ընկերանալով Ներսես Աբելյանի և Գաբրիել Միրզոյանի հետ, վճռեց «Մշակը» շարունակել: Գործը արդեն վերջացած էր, լրագիրը պայմանով հանձնված էր նրանց և այդ ամենին հայտնի էր:

Թշնամիները այստեղ ևս գլուխ բարձրացրին և սկսեցին հարվածել ո՛չ միայն Րաֆֆիին, այլև նրա ընկերակիցներին: Պարզ էր, որ Րաֆֆիի անունը նրանց աչքում դարձել էր մի սոսկալի ուրվական, որ գիշեր-ցերեկ հանգստություն չէր տալիս նրանց, միշտ վախի ու սարսափի մեջ պահելով պահպանողականների ամբողջ բանակը:

Հանգամանքները այս անգամ էլ կողմնակի ծառայություն արեցին թշնամիներին: Կառավարության կողմից «Մշակի» համար առաջարկված նոր խմբագիրը չհաստատվեց<sup>14</sup>: Այդ լրագրի գոյությունը ենթարկվեց նակատագրի հանույթին, մինչև որ Արծրունին վերադարձավ արտասահմանից և նորից յուր ձեռքն առավ նրա դելը:

Այդ ժամանակ Րաֆֆին մեջ կրկին միտք հղացավ մի անսագիր հրատարակելու: Սակայն շուտով նա այդ միտքը բոլորովին թողեց, սկսեց «Կայծերի» երկրորդ հատորի մասին մտածել: Մինևույն ժամանակ նրա գլխում հղացավ «Սամվելի» գաղափարը, որը ներշնչում էր նրան հալոց դպրոցների փակման խնդիրը: Նա ասում էր, թե պատմական անցյալի և ժամանակակից դեպքերի մեջ կա մի զարմանալի նմանություն:

— «Սամվելի» կարդացողը կմտածի և անշուշտ կգտնի այդ նմանությունը, այն ժամանակ իմ գաղափարը հասկանալի կլինի նրան: Ես պատմական վեպը պատմական փաստերի համար չեմ գրում, այլ ինձ գրավող ժամանակակից շարժման համար:

Անցան ամիսներ, և վիպասանը դեռ չէր սկսել գրել «Սամվելը»: Առայժմ նա ուսումնասիրում էր յուր ապագա վեպի գլխավոր հերոսին, կարդալով պատմական գրքեր: Նրա ուշ ու միտքը զբաղված էին այդ հերոսով: Նա շարունակ նրա մասին էր խոսում, հրճվում էր, ոգևորվում և պրնդում, թե «Սամվելը» պետք է լինի նրա *chef d'oeuvre*-ը: Մանավանդ լեզվի կողմից այդ վեպը, յուր ասելով, պետք է լիներ ամենակատարելագործվածը:

— Ես ցույց կտամ իմ լեզուն ձախ ու ծուռ քննադատող պարոններին, որ Րաֆֆին էլ գիտե գրաբար, գուցե ամենից լավ: Այդ մարդիկ չեն ուզում հասկանալ, որ ես իրենցից ավելի եմ հոգում լեզվի մաքրության մասին: Ինձ հայկաբան չեն համարում և կարծում են, որ հայկաբան լինելու համար անպատճառ պետք է փքուն ոճով գրել: Չեն հասկանում, որ ժամանակակից մատենագիրը, մանավանդ վիպասանը, չէ

կարող Մովսէս Խորենացիի բարբառը գործածել, թէն աշխարհաբարի վերածած:

Մեր գրականության մեջ իրենց հատուկտոր գրվածքներով սխոլաստիկները Ռաֆֆիի հեգնության և ծաղրի մշտական առարկան էին: Նա վրդովվում էր, երբ մեկն ասում էր, թէ այդ մարդիկ հայոց լեզվի պաշտպաններն են: Նա հարձակվում էր նույնպէս և այն մարդկանց վրա, որոնք, հաճումն հայկաբանության, հալածում են ամեն մի նորամոծություն հայոց կենդանի աշխարհաբարի մեջ:

— Այդ ողորմելիների համոզմունքով, կարծես հայոց լեզուն կարող է ժամանակակից ողորդությամբ զարգանալ բոլորովին բացառիկ կերպով: Կարծես նա չպիտի ենթարկվի սուսաշաղիմության այն անխուսափելի օրէնքներին, որոնց ենթարկվել են բոլոր ազգերի լեզուները: **Սամովարը** անպայման պետք է դարձնել ինքնատեղ, **սիգարը՝** գլանակ, **տեղեֆոնը՝** հեռախոս, **ֆոնոգրաֆը՝** ձայնախոս: Զգվում եմ այդ տեսակ պեղանոներից:

Նա աստելով ասում էր և այն գրագետներին, որոնք կարծում են, թէ որքան շատ գրաբար բառեր գործածեն, այնքան լավ է:

— Դրաբար բառեր գործածելը հեշտ է, բայց մարդ պետք է ճաշակ ունենա նրանց ընտրելու համար, պետք է երաժշտական լսողություն ունենա, որ ըմբռնի, ո՛ր բառը որտե՛ղ կարող է քաղցր հնչել և որտե՛ղ՝ անախորժ: Այս կողմից ինձ համար ասելի են մանավանդ մի քանի թարգմանիչներ: Անցյալ օրը ձեռքս վերցրի թերթելու մանկավարժ Փիլիպոս Վարդանյանցի<sup>15</sup> մի նոր թարգմանած գիրքը: Այդ մարդը աշխատասեր է, է՛հ, նա էլ ուզում է օգնած լինի հայոց գրականությանը: Իհարկէ, շատ շնորհակալ եմք: Բայց գիտե՞ք, նա ինձ ինչ է հիշեցնում.— գլուղից քաղաք տեղափոխված և շուտով հարստացած մի վաճառականի: Նրա կոշիկները եվրոպական են, արխալուղը՝ ասիական, իսկ գդակը՝ ոչ այս, ոչ այն: Նրա սևացած և կոշտ մատները զարդարված են ադամանդյա մատանիներով: Ինչպէս երևում է, ման-

կոյությունից հայերեն լեզուն նրա համար խորթ է եղել: Հետո սկսել է հայերեն սովորել և հանկարծ ընկել է գրաբարի աշխարհը և այժմ ինչ որ գրաբար բառեր գիտե, խցկում է ամեն տեղ: Երբ կարդում եմ նրա թարգմանությունները, ինձ թվում է, որ ասումներովս ավագ եմ ծամում: Երևակայեցեք այն բանաստեղծի դրությունը, որի երկերը ավագոտ լեզվով են թարգմանվում: Ինձ մեղադրում են, որ ես գրելիս ուներեմ եմ մտածում: Կարճատեսներ, մտածեցեք ինչ լեզվով կամենաք, միայն ձեր մտածածը նախ մի բանի նման լինի, հետո հասկանալի: Եթե իմ լեզվի մեջ երևում են ուներենի նման դարձվածներ, այդ չի նշանակում, որ ես նրանց ուղղակի ուներենից եմ թարգմանել, այլ որովհետև հայոց լեզուն ուրիշ ձև չունե այս կամ այն միտքը արտահայտելու, և միակ հայկականը իմ գործածածն է: Զարմանալին այն է, որ ոռոսաբանության մեջ ինձ մեղադրում են նույնիսկ այն մարդիկ, որ իրանք իմ քառորդի չափ հայերեն չգիտեն: Իրենք չեն ամաշում գերմանաբանությունը խառնելով ոռոսաբանության հետ, ստեղծել մի հավաքական, անճոռնի բարբառ, իսկ ինձ մեղադրում են հակահայկաբանության մեջ, ինձ, որ ծնվել եմ բուն ժողովրդի մեջ, սնվել եմ այնտեղ և մանուկ հասակիցս սկսած անգիր սովորել հինգերորդ դարի գրականությունը:

Առհասարակ Րաֆֆին այս միջոցներին լեզվի խնդրով շատ էր զբաղված և շարունակ այս մասին էր խոսում:

— Ահա հայ վիպասանի դրությունը,— ասում էր նա մի տեսակ դառնությամբ,— մի կողմից նա պետք է գաղափարի և ձևի մասին մտածի, մյուս կողմից մի աղքատ լեզու մշակելու համար գլուխ տրաքացնի: Լուսավորված ազգերի մեջ ամեն մի սուարկա յուր որոշ անունն ունի, իսկ մենք դեռ նոր ենք զբաղվում սուարկաների անուններ ստեղծելով: Ասում են՝ գրաբար գրքերում շատ սուարկաների անուններ կան: Մեր ժամանակակից կյանքը այնքան տարբերվում է պատմական կյանքից, որ գրեթե ոչինչ նմանություն չէ մնացել ո՛չ մեր կերակրների, ո՛չ մեր հագուստների և ո՛չ տան կան-կաքասիների մեջ: Ինչպե՞ս գրաբար անունները հարմարացնես

այժմյան առարկաներին: Մի դժոխային աշխատություն է մեզանում վեպ գրելը: Դեռ հրապարակախոսը կարող է մի երկու հարյուր բառով յուր գլուխը պահել, իսկ վիպասանը ինչ հող ածե գլխին, որ ստիպված է հազար ու մի բան նկարագրել: Երբ ես թարգմանում էի Զախեր-Մազոլիի «Կայենի կտակը», այնպիսի խոչընդոտների էի հանդիպում այս կամ այն առարկայի անունը հայերեն թարգմանելիս, որ կատաղում էի...

Բաֆֆին ոչ մի հաշ բանաստեղծի և վիպասանի լեզուն ու ոճը չէր հավանում: Այդ կողմից նրա քննադատությունը շատ անգամ ծայրահեղության էր հասնում: Կա դեմ էր Սունդուկյանցի և Պողոթյանցի գալստաբարբառներին, իսկ Պատկանյանի ոտանավորների մեջ չէր ներում գրաբարի և աշխարհաբարի խառնուրդը: Նույնիսկ «Մայր Արաքսի» լեզուն նրան պակասավոր էր թվում: Ծահագիգի լեզուն նա համարում էր աշխարհաբարի մանկական թոթովանք: Աղայանցի լեզվի պարզությունը և ճշտությունը ընդունում էր, բայց համարում էր հատակավորների համար թույլ և սղքատ: Այսքան խիստ էր նա դեպի ուրիշները:

#### IV

Բաֆֆիի մեջ այս կամ այն վեպի գաղափարը ծնվում էր կյանքի մեջ տեղի ունեցող քիչ թե շատ խոշոր երևույթների ազդեցությամբ: Արևելյան պատերազմը և հայկական իլլնդիորը առաջ բերեցին «Խենթը» և «Դավիթ-Բեկը», տանկահայերի՝ հալածանքը՝ «Զալալեդդիներ» և «Կայծերը», հայոց եկեղեցական դպրոցների վիճակը՝ «Սամվելը»: Նույնիսկ մամուլի մեջ վաճառական դասի մեջ ծագած վեճը ստիպեց նրան գրել «Մինն աչսպես, մյուսն աչնպես»: Այս վերջին վեպը թերի մնաց, չգիտեմ ինչպես էր, որ աղարտված դուրս եկավ հեղինակի մահից հետո<sup>16</sup>:

Ես չեմ ասում, որ Րաֆֆին անպատճառ առանձնակի երևույթի էր սպասում, որ մի վեպ գրի: Ո՛չ, այլ նա այն ժամանակ էր ավելի ջերմ փափագ զգում յոր գաղափարներով ապարեզ գալու, երբ հասարակության միտքը քնած չէր: Եթե հայկական խնդիրը վերջերում չմոռացվեր և հասարակությունը նախկին եռանդով ու ոգևորությամբ վերաբերվեր դեպի նա, «Կայծերի» երկրորդ հատորը այդքան չէր ուշանալ<sup>17</sup>: Առհասարակ հասարակության տրամադրությունը մեծ ներգործություն ունեւր Րաֆֆիի վրա: Նա այն վիպասաններից չէր, որոնք իրենց ներշնչումը ստանում են անմիջապես բնությունից և կյանքից, որոնք իրենք են խնդիրներ հարուցանում և աշխատում կամ լուծել, կամ արծարծել: Այդ տեսակ գրողները երբեմն իրենց ժամանակակից հասարակության մեջ ստանձին ժողովրդականություն չեն ստանում: — Ամբոխը մեծ մասամբ ընդունում է այն, ինչ որ ներկայում հետաքրքրում է նրան, ինչով զբաղված է նրա միտքը: Րաֆֆին ինքը խնդիրներ չէր հորինում, այլ միշտ ձգտում էր հրապարակի վրա նոր զարթնած և մտքեր հուզող խնդիրներից լուծում տալ: Նա ժողովրդի բարոյական և մտավոր հետաքրքրության ջերմաչափն էր և պատասխանում էր այն հարցերին, որ ծագում էին և տարածվում նրա մեջ: Ահա նրա սահագին ժողովրդականության գաղտնիքը:

Երբ ասպարեզ մտած մի միտք ոգևորում էր նրան, վեպի գաղափարը արդեն պատրաստ էր, և նա գրիչը ձեռն էր վերցնում: Եվ բավական էր, որ գաղափարը կար, մնացալը նրա համար երկրորդական էր: Նա վաղօրոք պատրաստում էր խնդրի լուծումը, հնարում էր ամբոխին մատչելի տեղեկեցիկան և երբ սկսում էր գրել, նրա գլխում առաջին տեղը ամուր բռնած էր լինում այդ տեղեկեցիկան, որ պետք է այսպես թե այնպես անցներ վեպի մեջ: Հետևաբար, գեղարվեստական կատարելագործման, մանավանդ հոգեբանական ճշմարտության մասին շատ էլ չէր մտածում կամ բնավ չէր մտածում: Ահա ինչո՛ւ նա միշտ շտապում էր յոր մտքերը

շուտ արտահայտելու, այս պատճառով գործ էր անում գրելու մի այնպիսի մեթոդ, որ հազիվ թե գեղարվեստին բարձր նշանակություն տվող մի բանաստեղծ-վիպասանի պատիվ բերեր: Ի՞նչ էր անում նա: Գրում էր վեպի առաջին գլուխները, արտագրում էր մի անգամ և իսկույն տալիս էր տպագրության, մտածելով, որ շարունակությունը ինքնըստինքյան չի հակասիլ սկզբին: Գոնե այս ձևով էր գրում այն վեպերը, որոնք նախ տպվում էին լրագրներում և հետո առանձին գրքերով լույս տեսնում: Այդպես էր գրել նա, ի միջի այլոց, և «Դավիթ-Բեկը»: Նա ինքը խոստովանում էր, որ այդ վեպի շատ գլուխները թխել է գրաշարի ներկայությամբ, որ դրանքի առջև կանգնած «նյութի» է սպասելիս եղել «Մշակի» համար:

Ողիղն ասած, վիպասանի այս սովորությունը ինձ վրշտացնում էր, ուստի մի օր ես դարձա նրան և զգուշությամբ ասացի.

— Ինձ թվում է, որ անհամեմատ ավելի հարմար է վեպը առաջ բոլորովին ավարտել, մշակել և հետո հանձնել տպագրության, քան թե կտոր-կտոր գրել: Միայն այսպիսով կարելի է իմ կարծիքով, գեղարվեստական ամբողջություն պահել վեպի մեջ:

Ձեր ասածն ինձ էլ հայտնի է, բայց երբ լրագրի համար ես գրում և ստամոքսդ կերակուր է պահանջում-անհրազոր-ծելի է: Ասում եմ, որ Տորգենը յուր վեպերը մշակում էր և արտագրում առնվազն ութ անգամ և հետո տպագրում: Հավատում եմ, բայց Տորգենը հարուստ էր և ժամանակ ուներ գեղարվեստի մասին երկար մտածելու: Տվեք ինձ այն եռանդը և ժամանակը, որ ինձանից խլում են արտաքին հանգամանքները, ես այդ եռանդն էլ, այդ ժամանակն էլ կնվիրեմ իմ վեպերի գեղարվեստական մշակմանը: Ո՛չ, վիպասանը պետք է նյութապես ապահովված լինի:

Այն պատճառաբանությունը սկզբում ինձ զինաթափ էր անում, բայց նա կորցրեց յուր նշանակությունը, երբ Ռաֆֆին սկսեց գրել «Սամվելը»: Նա այդ ժամանակ նյութապես բա-

վական ապահովված էր. գրքերը վաճառվում էին, և հոբելյանի առթիվ հավաքած փողերից էլ մի մասը դեռ մնում էր: Այսպես թե այնպես, նա կարիք չուներ օրական բանվորի դեր կատարելու: Բայց երևի նախկին սովորությունը խոր արմատ էր ձգել նրա մեջ: Նա շարունակում էր գրել կտոր-կտոր: Այդ սովորության հետևանքը էս մանավանդ տեսա «Ղարիբ մշեցի» վերնագրով վեպիկի մեջ: Դեռ այդ վեպիկը չսկսած՝ Րաֆֆին ասում էր, որ նա կլինի շատ փոքր, մինչև անգամ մի պատկերի չափ և կրոնի «Արձագանք» շաբաթաթերթի երկու, շատ-շատ երեք բանասիրականը: Բայց երբ սկսեց գրել, դուրս եկավ չորս, հինգ, վեց բանասիրական, իսկ վեպիկը դեռ շարունակվում էր:

— Այդ ի՞նչ եք անում,— հարցնում էի ես:

— Եղբայր, չի վերջանում, ի՞նչ անեմ: Պետք է կտրացնե՞լ, թե՞ ոչ: Ծուտով, շուտով կվերջանա...

Վեպիկը վերջացավ իններորդ բանասիրականում<sup>18</sup>, և դուրս եկավ սպասվածից երեք անգամ մեծ: Նույնը համարյա պատահեց և «Սամվելի» վերաբերմամբ: Րաֆֆիի ստեղծված այդ վեպը չափի «Կայծերի» մի հատորից մեծ լինելը, բայց երբ նրա գրիչը տաքացավ, արտադրեց այժմյան ահագին հատորը, որը դեռ ամբողջ վեպի կեսն էլ չէ<sup>19</sup>, մի կողմ թողնելով «Ծանոթությունները», որ նույնպես մի մեծ հատոր կարող են կազմել: Առհասարակ Րաֆֆին վեպի սովորությանը մեծ նշանակություն էր տալիս: Այժմ էլ հիշում եմ, թե ինչպիսի հրճվանքով նա պահում էր յուր ձեռքում և աջ ու ձախ շուռ տալիս տպարանից նոր ստացած յուր մի հաստ վեպը:

— Ամբողջ հաջ գրականությունը այնքան վեպեր չի պարունակում յուր մեջ, որքան ես եմ տվել,— ասում էր նա ոչ առանց պարծանքի:

Նա գիտեր, որ գրվածքի որակությունն է գնահատվում և ոչ մեծությունը, լսել էր, որ Սերվանտեսը միայն մի «Դոն Կիշոտով» է իրեն անմահացրել, իսկ Գրիբոյեդովը՝ մի հատիկ «Խելքից պատուհաս» կոմեդիայով: Այդ նա գիտեր,

բայց և այնպես գրելու ժամանակ նրա գլխից չէր հեռանում էջերի քանակության խնդիրը:

Րաֆֆիի գրականական զարգացումը առհասարակ թույլ էր: Մանավանդ թույլ էր նրա էսթետիկական ճաշակի կըրթությունը: Յուր գաղափարների մեջ խորասուզված՝ նա չէր հետաքրքրվում այն բոլորով, ինչ որ կարող էր կրթել և նրբացնել նրա գեղարվեստական ընդունակությունները:

Նա կարդացել էր Հյուգո, որին շատ էր սիրում, Էժեն Սյու, կարծես, մի քիչ էլ Վալտեր Սկոտից, որոնք արդեն հնացել էին եվրոպական գրականության համար, բայց չգիտեր ով է Բալզակը, Ֆլորերը, Գոնկուրները, որոնցով հըրմվում էին նոր շկոլայի մարդիկ: Կարծես, նա չէր կարդացել նույնիսկ Դիկկենսին, իսկ կլասիկ հեղինակների հետ ծանոթ էր շատ մակերևութաբար: Եվրոպական քննադատներից նա ճանաչում էր միայն Իպոլիտ Թենին, այն էլ վերջին ժամանակ, և կարդացել էր միայն նրա դասախոսությունները գեղարվեստի մասին: Գիտնականների և փիլիսոփաների հետ նույնպես ծանոթ չէր:

Նա չէր հերքում ընթերցանության օգուտը: Նա այն հաշ հեղինակներից չէր, որոնք, չգիտես ինչ հոգեբանական պատճառներով, վախենում են ուսումնասիրել եվրոպական գրականությունը, որ միգուցե նրա ազդեցությանը ենթարկվեն: Ընդհակառակը, նա չարաչար ծաղրում էր այդ մարդկանց, որ հայոց հին գրականությունից դուրս գրեթե ոչինչ չգիտեին և չէին ուզում ճանաչել:

— Սյո տեսակ մարդիկ, — ասում էր նա, ակնարկելով մի երկու հեղինակների, — ոչ միայն գրականության, այլև կյանքի մեջ անտանելի են: Նրանց ասածներից, ինչպես և գրածներից, միշտ Հայամալուրքի և Ծարականի հոտ է փչում, ամա ինչու ես ասում եմ նրանց:

Սյուս կողմից նա ծաղրում էր և՛ այն մարդկանց, որ գիշեր-ցերեկ անխտիր կարդում են ամեն ինչ և իրենց, ողբի մեջ գոչացնում մի տեսակ տամբուր:

— Դրանք գլուխներ չեն, այլ երշիկներ,— ասում էր նա կծու հեգնությամբ:

Նա իրավունք ուներ այնպիսիներին ծաղրելու, որովհետև ինքը թեև շատ քիչ էր կարդացել, բայց ինչ որ կարդացել էր, լավ էր մարտել:

Ինձ սաստիկ զարմացնում էր, որ Րաֆֆին թատրոն չէր այցելում: Մի օր ես հարցրի նրանից դրա պատճառը: Դա 1886 թվականն էր, երբ Ադամյանի ներկայացումներն էին տրվում, և հասարակությունը կեցցեներով ու ծափահարություններով դիրդացնում էր արքունական թատրոնը: Միևնույն ժամանակ ուսաց օպերային ամենաընտիր խումբը Թիֆլիսումն էր, և ամեն երեկո նույն թատրոնն էր գրավում ահագին բազմություն:

— Գնամ ու՞մ տեսնեմ,— հարցրեց Րաֆֆին յուր կողմից:

— Ադամյանին:

— Ես նրա խաղը տեսել եմ և չեմ հավանել:

— Բայց տեսել եք վեց-յոթ տարի սրանից առաջ, այժմ նա հրաշքներ է գործում. ամբողջ Ռուսաստանը հիացած է նրա խաղով:

— Մնակյանին տեսե՞լ եք. նա Ադամյանից լավ դերասան է: Ես նրան էի միայն հավանում, է՛հ, եթե շատ եք ուզում, մի օր կգնանք ձեր սիրած Ադամյանին էլ տեսնելու:

Այդ օրը երբեք չհասավ, որովհետև Րաֆֆին ամեն երեկո զբաղված էր յուր վեպերով:

Նա չէր հետաքրքրվում ո՛չ երաժշտությունով և ո՛չ երգեցողությունով: Չեմ հիշում, որ Թիֆլիս այցելող եվրոպական նշանավոր արտիստներից մեկը նրան հետաքրքրած լինի, նույնպես, որ նա գեթ մի անգամ, գոնե մեր ծանոթության ընթացքում, օպերա տեսած լինի:

— Մեր ականջները ընտելացած չեն եվրոպական մուզիկին, սենք չենք կարող բավականություն ստանալ օպերաներից,— ասում էր նա:

— Բայց դուք բանաստեղծ եք, մուգիկ հասկանալու համար կարիք չունեք մի առանձին սովորության կամ կրթության: Ձեր բանաստեղծական հոգին ավելի հեշտ կարող է զգալ հնչյունների գեղեցիկ մեղեդին, քան մուգիկ հասկացողներից ոմանք, որոնք զուրկ են բանաստեղծական ճաշակից: Գնանք Վերդիի օպերաները լսելու, նրա երաժշտությունը մեր սրտին ավելի մոտիկ է:

Իսկ թախանձանքները հետևանք չունեցան. ինձ չհաջողվեց գոնե մի անգամ Րաֆֆին օպերա տանել: Առհասարակ մա չէր սիրում աշխարհային աղմկալից զվարճություններ, խույս էր տալիս նույնիսկ հասարակական կյանքից, ո՛չ մի հանդես, ո՛չ մի ընկերության չէր այցելում: Նա ճանաչում էր միայն իր մոտիկ բարեկամների շրջանը և Թիֆլիսի ընտանիքների հետ հարաբերություն չունեք: Միայն շաբաթական, կարծես, մի անգամ ճաշում էր Ալեքսանդր Մելիք-Ազարյանցի ընտանեկան շրջանում<sup>20</sup>:

## V

Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ Րաֆֆին օրվա ընթացքում առնվազն պարսպում էր տասնչորս ժամ, իսկ երբեմն և ավելի: Նա ընդունակ էր վեց-յոթ-ութե ժամ շարունակ նստել սեղանի մոտ:

— Այս գիշեր լուսաբացին եմ քնել,— ասում էր նա հաճախ զվարթ եղանակով,— ինը ժամին նստել եմ սեղանի մոտ և հինգ ժամին վեր կացել:

— Դուք կարող եք այսպիսով քայքայել ձեր առողջությունը:

— Է՛հ, ինչ արած, գործ շատ ունեմ, պետք է շտապել: Վճռել եմ բոլոր կիսատ վեպերս ավարտել և հետո մի թեթև ճանապարհորդություն անել:

— Դեպի ու՞ր:

— Կամ Պարսկաստան, կամ Տաճկաստան, դեռ չեմ վճռել: Ուզում եմ մի անգամ Պոլիսը տեսնել, բայց այնպես, որ ոչ ոք չիմանա իմ այնտեղ լինելը: Փառք ատոժո, «Կայծերից» ազատվեցի, այժմ պետք է վերջացնել «Դավիթ-Բեկը», «Հարենը», «Սամվելը», հետո «Սալբին» ուղղել և, վերջապես, տպագրության տալ: Գիտե՞ք, ես շտապում եմ իմ թերի գործերը ավարտել, ո՞վ գիտե, կարող է մի բան պատահել, ի՞նչ կլինեն իմ վեպերը, եթե ես վաղը մեռնեմ...

Այսպիսի հուսահատական մտքեր շատ հազիվ էին ծագում Րաֆֆու գլխում, բայց և այնպես երբեմն ծագում էին: Նրա համար ծանր էր իր տարիքը հաշվել և չէր սիրում ծերության մասին մտածել: Նա աշխատում էր կանոնավոր կյանք վարել յուր առողջությունը պահելու համար, գործելու և միայն գործելու նպատակով:

Նա ճաշում էր հյուրանոցներում և միշտ գանգատվում էր, որ վատ է կերակրվում: Հիշում եմ մի երկար մորուքով և միջին հասակով կարմրադեմ հույն, որ Թիֆլիսի քաղաքային փոստատան դեմ ճաշարան էր պահում: Այդ ճաշարանը հետո տեղափոխվեց «Մշակի» այժմյան խմբագրատան դեմ գտնվող անկյունի տունը: Այժմ նա այլևս չկա:

Այստեղ եմ հավաքվում մեծ մասամբ անտուն-անտեր գործիչները և կործանիչները: Ծատ անգամ եմք Րաֆֆիի հետ միասին այցելել այդ ճաշարանը: Այստեղ երբեմն տեսնում էինք Պետրոս Սիմոնյանին, որ նստում էր սեղանի մոտ և խաղում հույնի շան հետ: Պատկեր: Րաֆֆին, ձեռնափայտը քահանայի գավազանի պես բռնած, ներս է մտնում: Սիմոնյանը հույնի շան գլուխը շոշոյում է և փաղաքշակա՞ն խոսքեր ասում: Տեսնելով Րաֆֆիին, նա քթի ծայրին դրած ակնոցների միջով զարմացած մտիկ է անում նրան, կարծես առաջին անգամն է տեսնում: Րաֆֆին երեսը շոռ է տալիս, արտասանելով՝ «աղվեսն էլ այստեղ է»: Մեկը նստած է ճաշարանի մի անկյունում, մյուսը նստում է հակառակ անկյունում: Երկուսն էլ անտարբեր են ձևանում, բայց երբեմն ակնոցների միջով զաղտուկ նայում են միմյանց և հետո սրա-

խոսում իրարու մասին իրենց սեղանակիցների հետ:

Րաֆֆին շատ չափավոր ուտող էր: Իբրև արևելյի, խմորեղեն և բուսեղեն կերակուրները գերադասում էր մսեղենից, թեև նրա մարտությունը խանգարված էր: Նա ուներ ստամոքսի կատար, որ շատ անգամ ազդում էր նրա հոգեկան տրամադրության վրա: Խմում էր նույնպես շատ չափավոր: Ծաշից առաջ ընդունում էր մի փոքրիկ բաժակ օղի, ճաշի միջոցին՝ մի կամ երկու բաժակ գինի: Երբեմն գարեջուր էր խմում, բայց շատ հազիվ և շատ քիչ քանակությամբ: Ժամանակ առ ժամանակ ակտիվացնում էր հիշում էր զանազան արևելյան կերակուրներ: Մտաբերում եմ այն րուպեները, երբ նա և Ստեփանոս Զելինսկին<sup>21</sup> ճաշից առաջ, քաղցած ստամոքսի թելադրությամբ, հրճվանքով նկարագրում էին հայկական և պարսկական կերակուրներ պատրաստելու եղանակը, համը, հոտը, երբեմն լրջորեն վիճաբանելով միմյանց հետ: Երկուսն էլ կատար ունեին, երկուսն էլ խոսել գիտեին, իսկ ուտելում շատ էլ քաջ չէին:

Ծաշից հետո Րաֆֆին սովորություն ուներ երկու-երեք ժամ ոտով զբոսնելու: Այժմ էլ կենդանի կանգնած է նա աչքիս առջև, ձմեռային քաղաքի երկար, սևագույն վերարկուն մինչև կոկորդը կոճկած, մորթե գդակը գլխին, թանձր, կապույտ ակնոցներով: Անցնում էր նա Գոլովինսկի պողոտեկտով, գլուխը բարձր պահած, ծանր, հավասար քայլերով, ստեպ-ստեպ նայելով գետնին: Արտաքուստ անցորդների վրա մի հաւարակ վաճառականի տպավորություն էր անում: Բայց այդ միայն դրսումը, իսկ տանը, երբ նրա գդակը գլխին չէր, երբ նրա լայն ու խելոք ճակատը բաց էր, միանգամայն կերպարանափոխվում էր:

Մի տարօրինակ գույգ էին ներկայացնում Րաֆֆին և Աղայանը միասին զբոսնելիս: Մեկը փոքրահասակ, գդակը աչքերին քաշած, հանգիստ քայլվածքով, մյուսը՝ բարձրահասակ, հաղթանդամ, քայլերը խոշոր, հսկայական: Անցորդները ականա ուշադրություն էին դարձնում այդ գույգի

վրա, որ միշտ որևէ բանի մասին վիճում էր, դատում և հակաճատում միմյանց: Բաֆֆին խոսում էր հանդարտ, անփոփոխ ոնգալին ձայնով, այնինչ՝ Ադայանցի ազդու ձայնը քանի գնում բարձրանում էր և խորխտանում: Նա վրդովվում էր, բորբոքվում և երբեմն յուր խոսքը ավելի համոզիչ դարձնելու համար կամ խփում էր խոսակցի կրծքին, կամ ամուր բռնում նրա կուրը և ուժգին թափահարում:

Միմյանց մի լավ զգգգելուց հետո երկու վիսպասանները նորից, իհարկե, հաշտվում էին և սկսում էին զվարճախոսել: Միայն վերջում այդ սիրալիր ընկերական հակաճատությունները սուր բնավորություն ստացան: «Կայծերի» առիթով նրանց մեջ ծագեց մի անախորժ բանակոխիլ<sup>22</sup>, մեկը մյուսին վիրավորեց խոսքերով, և այսպիսով ընդհատվեց նրանց անձնական հարաբերությունը:

Զարմանալի զվարճախոս էր Բաֆֆին, բայց այդ հայտնի էր միայն մի նեղ շրջանի: Նա ուներ արևելյան անեկդոտների մի անուպատելի պաշար և գրեթե ամեն օր մի նոր բան էր պատմում: Այդ մարդը, որ անցել էր կյանքի կրակի և ջրի միջով, որ ճաշակել էր ամեն տեսակ դառնություններ, մոտ հիսուն տարեկան հասակում յուր հոգու խորքում դեռ պահում էր երիտասարդական աշխույժ և թարմություն: Նա ուներ մի այնպիսի դուրեկան, անկեղծ ու մեղմ ծիծաղ, որին կարող էր նախանձել ամեն մի քսան տարեկան պատանի:

Սակայն զվարթ ու կատակասեր էր նա միայն բարեկամների նեղ շրջանում: Իսկ դրսում, հասարակության մեջ, լուռ էր, լուրջ և երբեմն շատ սառն: Ավելի սառն էր հեռավոր ծանոթների հետ գործնական հարաբերությունների ժամանակ, այնքան սառն, որ երբեմն կարող էր ամենաանտարբեր մարդուն համբերությունից հանել: Մի անգամ Թիֆլիսում հայտնի հայ թղթավաճառ Հովհաննես Տեր-Սարգսյանը դիմում է նրան փողոցում և սսում.

— Պարոն Բաֆֆի, ձեզ վրա թղթի փող ունեմ:

— Գիտեմ, — պատասխանում է Բաֆֆին, հոգով վրդովված, բայց արտաքուստ այնպես անտարբեր, որ Տեր-Սարգսյանը

յանը չի զգում, թե իր վարմունքը վիրավորել է այդ ինքնասեր մարդուն:

— Ե՞րբ պիտի տաք այդ պարտքը,— հարցնում է Տեր-Սարգսյանը:

— Երբ փող կունենամ:

— Բայց ե՞րբ կունենաք փող,— շարունակում է Տեր-Սարգսյանը, հետզհետե վրդովվելով:

— Չգիտեմ:

— Ինչպե՞ս թե չգիտեք...

— Այո, ինձ հալտնի չէ, թե Րաֆֆին երբ փող կունենա, բայց անշուշտ մի օր կունենա:

— Իսկ եթե բոլորովին չունենա՞ր...

— Դուք դարձյալ ձեր փողերը կստանաք մինչև վերջին կուպեկը:

— Բայց ե՞րբ, ե՞րբ,— գոչում է Տեր-Սարգսյանը, բոլորովին համբերությունը կորցնելով:

— Մի չարանաք:

— Այդ անտանգի է...

— Դուք ձեր փողերը կստանաք մինչև վերջին կուպեկը:

— Դուք ինձ կատաղեցնում եք...

— Ես ձեր պարտքը կտամ:

— Համբերությունս կտրվեց...

— Մինչև վերջին կուպեկը...

— Տո՛ւ, մարդ աստծո, ես տրաքվեցի, դուք էլ բարկացեք, հայհոյեցեք, որ սիրտս մի քիչ հովանա էլի,— գոչում է Տեր-Սարգսյանը միանգամայն կատաղելով:

Րաֆֆին ժպտում է, Տեր-Սարգսյանը մնում է չարացած:

Նույնքան նա արտաքուստ սառն էր և զվարճության ժամանակ, եթե շրջանը ամենամոտիկ բարեկամներից չէր բաղկացած: Մի օր տասը-տասնհինգ հոգի, մի խումբ կազմած, Օրթաճալում զվարճանում էինք: Մինչդեռ ամենը երգում էին, խմում էին և աղմկում, մինչդեռ հսկայամարմին Աղայանցը, տասնոսնհինգ տարեկան պատանիի պես, թոչկոտում էր, Րաֆֆին ծանրութարակ նստած, հանդարտ խոսում էր և նո-

րահարսի պես ծիծաղում: Ամբողջ ժամանակ նա նստած էր միևնույն տեղը, վերարկուն հագին, գոսլը գլխին, այնպես որ կարծես երկու բուպեի հյուր էր: Մինչև անգամ յուր ձեռափայտից նա չբաժանվեց և ոչ մի բուպե: Մյուս օրը նա փողոցում ինձ պատահելով, ասաց.

— Համա երեկ քե՛ֆ արեցիք, է՛ է՛: Հարկավոր է երբեմն այդպիսի գծություններ անել, թե չէ բոլորովին կծանգուտվեք:

Սակայն ժամանակը այնքան թանկ էր Րաֆֆիի համար, որ նա չէր ուզում և ոչ մի օր գոհել անձնական զվարճություններից: Իսկական հոգեկան զվարճությունը նա գտնում էր զբաղմունքի մեջ, իսկ անցյալի դառնությունների և թշվառությունների մխիթարանքը՝ այն համակրության մեջ, որով շրջապատել էր նրան հայ հասարակությունը, փոյթ չէ, որ այդ համակրությունը մեծ մասամբ պղատոնական էր:

Նա գնահատում էր մարդկանց հարգանքը և պարծենում էր նրանով: Ամեն մի համակրական ցույց, մի նամակ կամ խոսք նրան խրախուսում էր, թեև միշտ ուրիշների մոտ աշխատում էր գապել իր ուրախությունը: Բայց այնքան մոլորված չէր, որ չկարողանար անկեղծ հարգանքը ջոկել կեղծից: Ընդհակառակը, մարդկանց հոգին գիտեր ճանաչել և շատ անգամ նրանց խոսքերի մեջ զգում էր սուտն ու ճշմարիտը: Քանի՜-քանի՜ անգամ կեղծավոր մարդիկ իմ ներկայությամբ գովել են նրա երկերը երեսին, այնպիսի մարդիկ, որ նրա հետևից հազար ու մի բան էին խոսում: Րաֆֆին ճանաչում էր այդպիսիներին և նրանց գովասանքը լսելիս անախորժության ծափտ էր երևում նրա դեմքի վրա: Իսկ երբ շողոքորթները հեռանում էին, նա ասում էր.

— Խոմ իրենք էլ գիտեն, որ ես շատ լավ եմ ճանաչում իրենց, ինչու՞ են դիմակ հագնում:

## VI

Րաֆֆիի հոբելյանի տարին էր, երբ մի օր Թիֆլիսում լուր տարածվեց, թե գիշերը ինչ-որ անհայտ չարագործներ հարձակվել են վիսպառանի բնակարանի վրա<sup>23</sup>, իբրև թե նրան սպանելու նպատակով։ Այդ ժամանակ Րաֆֆին դեռ բնակվում էր այն բնակարանում, որ ես համառոտ նկարագրեցի հոդվածիս սկզբում։ Քաղաքի կենտրոնում, մի հալանի փողոցի վրա, տեղի ունեցած եղելությունը հանդուգն էր, մանավանդ որ հարձակման ենթարկվածը մի հասարակ մարդ չէր։ Ուստի անգործ մարդիկ սկսեցին հազար ու մի անտեղի ենթադրություն անել, որոնց թվում էր և այն, թե իբրև մեղավականների դրոմամբ է եղել հարձակումը։

Տեսնենք ինչպես էր պատմում ինքը՝ Րաֆֆին, այդ եղելությունը։

— Մինչև ուշ գիշեր պարապելուց հետո ես մոմերը հանգցրի և անցա ննջարան։ Ծառ էի քնել թե քիչ, չգիտեմ, հանկարծ մի խուլ աղմուկ ինձ զարթեցրեց։ Ես իսկույն ոտքի թուս և բնագրումով ձեռս տարա դեպի բարձս, որի տակ միշտ պահում էի մի ատրճանակ։ Աղմուկը լսվում էր իմ կաթինետից։ Ատրճանակը վերցնելով՝ անցա նախասենյակ։ Այստեղ ականջիս հասան մարդկային շշնջումներ, ինձ թվաց, որ մի քանի մարդիկ դիմում են դեպի իմ ննջարանը և արդեն ուզում են բանալ կաթինետիս դռները։ Ես կանգնեցի դռներիս հետևում և բոլոր ուժովս դեմ կացա, որ նրանք չկարողանան բանալ, իսկ նրանք հրում էին, որ բանան։ Մեր լուր կոխվը տեղեց մի քանի վայրկյան, մինչև որ նրանք կարողացան դռները մի քիչ բանալ։ Ես ատրճանակիս խողովակը ոտլեցի դռների միջով դեպի կաթինետը. չարագործները հետ կանգնեցին։ Ես, սիրտ ստնելով, դռները բաց արեցի և ատրճանակս արձակեցի։ Որքան ես կարողացա նկատել, նրանք երեք հոգի էին, որոնցից երկուսը սենյակումն էին, երրորդը՝ լուսամուտի հատակի վրա։ Նրանք շտապեցին լու-

սամուտով ցատկել դեպի դուրս և անհայտանալ: Ես սկսեցի գոռալ, հարևաններիս օգնության կանչել չարագործներիս բռնելու, բայց ոչ ոք չեկավ. ստորճանակի գնդակը անցավ իզուր, ահա այստեղով...

Այս ասելով, հա ցույց տվեց գնդակի հետքը, որ երևում էր լուսամուտի մի փեղկի վրա:

— Ի՞նչ եք կարծում, ի՞նչ տեսակ մարդիկ կարող են լինել հարձակվողները, — հարցրի ես:

— Ո՞վ գիտե, բայց կարծում եմ, որ կողոպտելու նպատակով չէին եկել: Ինչպես տեսնում եք, ոչ մի բանի ձեռք չեն տվել: Մինչև անգամ այս մի բանի ոտքին էլ, որ, ինչպես այժմ, դրված էին գրասեղանիս վրա, անուշադիր են մնացել: Իսկ նրանք տեսած կլինեն, որովհետև մեկի ձեռքում վառած մոմ կար:

Երկու օր անցած, երբ լրագիրները<sup>24</sup> այդ եղելության լուրը հասցրին գալատները, ամեն մի կողմից սկսեցին Րաֆֆիի անունով գալ շնորհավորական հեռագրեր և նամակներ: Թշնամիները այդ եղելությանը չէին ուզում հավատալ և աշխատում էին տարածված լուրի մեջ մի հետին միտք գտնել: «Մեղուն» այդ լուրը լսելով, մյուս օրը հրատարակեց, թե միննույն գիշեր Հայկունիի բնակարանի վրա էլ հարձակում է գործվել, բայց «չարագործները» ոչինչ չեն կարողացել անել և միայն նրա գալոշները գողացել են ու գնացել: Ահա հենց «Մեղվի» հաղորդած այս լուրը, կարելի է ասել, ուներ մի հետին նպատակ: Մի աննշան Հայկունիի անունը կապելով հայտնի վիպասանի հեղինակավոր անվան հետ, կամենում էին հասարակության վրա մի որոշ տպավորություն գործել...

Անցավ բավական ժամանակ, և մի օր Րաֆֆին ինձ ասաց.

— Գիտեք, վերջապես, ես իմացա՝ ովքեր են եղել ինձ վրա հարձակվողները:

— Ովքե՞ր էին:

— Սովորական գիշերային սրիկաներ: Տեսեք բանը ինչպես է պատահում:

Նա պատմեց, որ եղելությունից մի քանի օր առաջ յուր ծառային տալիս է մի քսանութիւնգանոց թղթադրամ, որ փողոցում մանրացնի: Ծառան թղթադրամը տանում է հարևան օղեւաններից մեկը, որ անտաճ կոնծելիս են լինում մի քանի սրիկաներ: Նրանցից մեկը հարցնում է ծառային, թե արդյոք նրա աղան շա՞տ ունի ալսպիսի թղթադրամներ: Հիմար պատանին պատասխանում է, թե «աղան» մի ահագին սնդուկ լիքն ունի պահած յուր անջարանում: Սրիկաները հարցուփորձ են անում և տեղեկանում, որ Րաֆֆին բնակվում է առանձին բնակարանում և գիշերները մենակ է լինում:

— Ահա այդ մարդիկ են եղել ինձ վրա հարձակվողները, ես նրանց հետ ծանոթացա մինչև անգամ:

— Ինչպե՞ս:

— Երբ ծառաս մի օր ինձ պատմեց այդ բանը, իմ մեջ իսկույն կասկած ծագեց: Ես հրամայեցի նրան, որ ցույց տա ինձ այն օղեւանատին: Գնացի նրա մոտ: Սկզբում օղեւանատը չկամեցավ ոչինչ ասել, բայց ես խնդրեցի, որ «լոթիանա» ցույց տա սրիկաներին: Խոստացա ոչ միայն ուստիկանությամբ չմատնել, այլ մինչև անգամ փող էլ նվիրել նրանց: Մի երեկո օղեւանատը ինձ մոտ բերեց երկու կարմրադեղն, առողջ կինտոներ և ասաց. «Սրանք են լոթիքը»: Կինտոները ժպտացին, ասելով. «Աղա, էս մեկը բախշի»: Ես հիացա նրանց կազմվածքով և մի տասը ոտքիսանոց նվիրելով՝ բաց թողեցի, հավատացնելով, որ ես ոչ միայն փողերով լի սնդուկ չունեմ, այլ երբեմն ինքս էլ ուրիշների սնդուկների վրա արշավանք գործելու չափ կարիք եմ զգում...

Գիշերային հարձակումից հետո շատ հայ կտրիճներ առաջարկում էին Րաֆֆին գիշերները հերթով պահապան կանգնել նրա դռների մոտ: Նա բավականացավ միայն մի մշեցու առաջարկությամբ, որ այնուհետև ամեն գիշեր քնում էր նրա նախասենյակում:

Րաֆֆին վախկոտ մարդ չէր, ընդհակառակը, նրա կյանքի անցյալը լիքն էր վտանգավոր արկածներով: Նա մեծ-մեծ անակ շատ անգամ էր ճանապարհորդել Պարսկաստանի խորքերում և պատահել էր, որ գիշերները ընկել էր ավազակների բները և ազատվել: Այսպես, նա պատմում էր, որ մի անգամ, առևտրական գործերով ճանապարհորդելիս, գիշերը իջևանում է մի ավազակապետի տանը, առանց իմանալու, թե ուր է իջևանում: Տանտերը ընդունում է նրան սիրով, բայց ազամե աչքերով չափում է նրան ոտից մինչև գլուխ:

— Դուք վաճառակա՞ն եք,— հարցնում է նա:

— Այո,— պատասխանում է Րաֆֆին:

— Ձե՞ք վախենում մեծակ ճանապարհորդել:

— Ի՞նչ կարող եմ ինձ անել:

— Կարող եմ ձեր գլուխը սոխի պես թոցնել և ձեզ կողոպտել: Երևի դուք փող ունե՞ք:

— Ունեմ, բայց ինձանից փող խելը հեշտ բան չէ:

Տանտերը կարմրած և կատաղի աչքերով նայում է Րաֆֆին և հեզմաբար պատասխանում.

— Մի՞թե... Ցանկալի է իմանալ, ի՞նչ կանեիր, եթե իսկույն, հենց այս րոպեին մի երկու կտրին ավազակներ կանգնեին ձեր գլխին:

Այս ասելով տանտերը նշան է անում, և դռների սուղե երևում են մի զույգ ավազակադեմ մարդիկ:

— Ի՞նչ կանեի,— պատասխանում է Րաֆֆին,— նախ և սուաջ ես նրանց ցույց կտալի ահա այս փոքրիկ զենքի ուժը:

Այս ասելով, նա գրպանից հանում է վեցտրաքիչ ստորճանակը և մի անգամ արձակում է. գնդակը անցնում է առաստաղի մեջ: Ավազակապետ տանտերը, մի փոքր լռելուց հետո, ասում է.

— Դուք իսկական ճանապարհորդ եք, ես հավանում եմ այն մարդկանց, որ իրենց պաշտպանել գիտեն:

Հետո դառնալով դռների մոտ կանգնած մարդկանց, հրամայում է.

— Ծարբաթ բերեք մեր ղոնաղի համար:

Նույնիսկ այն դեպքը, որ Րաֆֆին տասնվեց տարեկան հասակում<sup>25</sup>, գիմնազիստ ժամանակը, մեն-մենակ ուղտի վրա ճանապարհորդել է Փոքր Ասիայի մի մասում, ցույց է տալիս, որ նա անձնական վտանգները արհամարհում էր։ Նա շատ էր սիրում խոսել հայերի անհատական քաջության մասին։ Նա ասում էր, որ եթե այդ անհատական քաջությունը ընկերական լիներ, հայերը կարող էին աշխարհի երեսին մի գորեղ ազգ լինել։

— Ամեն մի հայ, առանձին վերցրած՝ առյուծ է, ինչպես և խելքով ու դատողությամբ՝ հսկա։ Բայց ընկերական ոգու բացակայությունը, խմբովին գործելիս, ջլատում է նրա ուժերը։ Զգեցեք մենակ հային վտանգների փոթորկի մեջ, նա արժանավորապես կպաշտպանի յուր գլուխը։ Բայց խմբեցեք մի քանի հայեր միասին, և նրանք պաշտպանվելու կամ հարձակվելու փոխարեն կսկսեն խորհել, մտածել, հակաճառել և, վերջապես, թշնամուն թողած՝ միմյանց միսը ուտել։ Այո՛, անհատականությունը հայի գլխավոր թշնամին է, և նա տարածված է մեր բոլոր դասակարգերի ու բոլոր գործերի մեջ։ Արդյոք մեր ազգի մտավոր առաջնորդները կկարողանա՞ն մի փոքր հիմարացնել անհատ հային և խելոքացնել ընկերական հային։ Եթե այդ եղավ, մենք կարող ենք ապագա ունենալ, եթե ոչ՝ մենք կորած ենք, կամ կապրենք այնպիսի անթափ կյանքով, ինչպես ապրել ենք մինչև այսօր։

Զգո՞ւմ էր արդյոք Րաֆֆին, որ ոչ մի մտավոր առաջնորդ հայի ընկերական հոգու զարգացմանը այնքան չէ նպաստել, որքան ինքն յուր գորեղ գրչի միջոցով։

## VII

Ես արդեն ասացի, որ Րաֆֆին շատ քիչ էր ծանոթ եվրոպական գրականությանը։ Սակայն այն հեղինակները, որոնց երկերը նա կարդացել էր կամ ուսումնասիրել, խորին

ազդեցությունն էին արել նրա վրա: Եվ ոչ միայն այս, այլև որոշմել էին նրա ապագա վեպերի վրա իրենց կնիքը:

Դեռ երիտասարդ հասակում նա այնքան էր ոգևորվել Էծեն Սյուի «Թափառական հրեայով», որ կամեցել էր նույն ուղղությամբ վեպեր գրել: Նա ինքը խոստովանում էր, որ «Խաչագողի հիշատակարանը» սկսված է հենց այդ վեպի ազդեցությամբ, բայց հետո ենթարկված է փոփոխությունների: Սակայն կարծում եմ, որ հոտառություն ունեցող բնօրինակի համար այժմ էլ շատ զգալի է այդ վեպի մեջ «Թափառական հրեայի» ազդեցությունը: Այստեղ, ընթերցողին չշփոթեցնելու համար, հարկավոր եմ համարում նկատել, որ թեև «Խաչագողի հիշատակարանը» լույս է տեսել Րաֆֆի մի շարք ուրիշ վեպերից հետո, որոնց մեջ չէ երևում Սյուի ազդեցությունը, բայց նա գրված է «Խենթից», «Կայծերից», «Դավիթ-Բեկից», «Ջալալեդդինից» և մյուս հետագա վեպերից առաջ: Եթե չեմ սխալվում, նա սկսված է անմիջապես «Խլվիկից» և «Սալբից»<sup>26</sup> հետո, որոնք վերաբերում են Րաֆֆի գրչի պատանեկան ժամանակներին:

Հայտնի բան է, Րաֆֆին, մտավորապես հասունանալով, չէր կարող երկար մնալ Է. Սյուի ազդեցության ներքո: Բայց Վիկտոր Հյուգոյի հրապույրը նրա աչքում վատ մնաց մինչև մահ: Նա ծանոթ չէր գրականության պատմությանը: Նա չգիտեր, որ աշխարհի երեսին ոչ մի գրականություն այնքան պատմական շկոլաներ չէ անցել, որքան ֆրանսիականը, հետևաբար, և ոչ մեկի զարգացումը այնքան հաջորդաբար և կանոնավոր չէ կատարվել, որքան ֆրանսիականին: Նա հեղինակներին ճանաչում էր առանձին-առանձին, շկոլայից անկախ և այդպես էր դատում նրանց մասին: Հասկանալի է, ուրեմն, որ նորագույն գրականության ուղղությունների հետ ծանոթ չլինելով, նա ոգևորվում էր ֆրանսիական ողմանտիզմի վերջին և ամենափայլուն դրոշակակրի գործերով այն ժամանակ, երբ այդ գործերը նույնիսկ հեղինակի հայրենիքում դադարել էին միահամուռ ոգևորություն զարթեցնելուց:

Ժամանակները փոխվել էին, գրականության պահանջները նույնպես. ամբողջ ընթերցող աշխարհը սրտի բաբախումով դիտում էր այն գրականական շարժումը, որ սկսվել էր ռոմանտիզմի վերջնական անկումից հետո, իսկ այստեղ, մի կիսակիրթ հասարակության մեջ, կար մի վիպասան, որ դեռ հափշտակվում էր մի մարող աստղի վերջին փայլով: Նա համոզված էր, որ այդ աստղը դեռ շատ երկար ժամանակ պետք է յուր լույսով նսեմացնի ամենին, որ ռոմանտիզմը վիպագրության իշխող ուղղությունն է: Բնական է, որեւմ, որ մի այսպիսի անպայման հավատ պետք է ստիպեր Րաֆֆիին ենթարկվելու Հյուգոյի ազդեցությանը: Ապագա քրեմադատին մեծ դիտողություն հարկավոր չէ, որպեսզի նա Րաֆֆիի գրականական ձևերի մեջ գտնի մի անհերքելի նմանողություն Հյուգոյին: Նույն ձգտումն ամեն մի փոքր թեխոշոր երևույթ ընդհանրացնելու և բնական կամ հասարակական օրենքների տակ դնելու, նույն փափագը միշտ պարտադրանքներով դատելու, նույն սերը դեպի հանկարծակի էֆեկտներ և, վերջապես, նույն ցանկությունը հակիրճ և հատուկաոր դարձվածքներով գրելու, ինչ որ Հյուգոյի մեջ: Տարբերությունը մեկի և մյուսի տաղանդի զորության ու չափի և նրանց քիչ թե շատ ինքնուրույնության մեջն է: Ինչ ասել կուզի, որ ամեն կետից գերազանցությունը անպայման ուսուցչի կողմն է:

Հյուգոյից յուրացրած թերությունը պետք է համարել և այն կրկնությունները, որոնցով լիքն են Րաֆֆիի վեպերը, և որոնք, թեև տեղ-տեղ կրում են բանաստեղծական դրոշմ, բայց ընդհանրապես ձանձրալի և տաղտկալի են: Այդ կրկնությունները դարձյալ առաջանում են վիպասանի դեպի կեղծ էֆեկտները ունեցած անհաղթելի սիրուց: Չլիներ այդ սերը, կարծում եմ, լոկ գաղափարով հափշտակվելը Րաֆֆիին չէր ստիպիլ մոռանալ, որ բանաստեղծության ուժը հոգեբանական ճշմարտության մեջ է պարունակվում, որ ֆորման միայն վեպի արտաքին գեղեցկությունն է, իսկ ներքինը, հարատևը ամփոփված է տիպերի, անձերի, տեսարանների

ու պատկերների խորին ռեալականության մեջ, մի ռեալականություն, որ դժբախտաբար բացակայում է հայ վիպասանի երկերի մեծամասնության մեջ: Բայց ամբոխի գրավելու համար հարկավոր էին կեղծ էֆեկտներ. նրա աչքերը աչքի առաջ էին առնում, նրա հոգին աչքի առաջ էին առնում, նրա սիրտը աչքի առաջ էին առնում, որպեսզի կարողանա իսկական գեղարվեստական նրբությունները գերադասել կոշտ, կոպիտ և շիկոկի գեղեցկությունից: Իսկ Րաֆֆին գրում էր ամբոխի համար, նրան հարկավոր էր թմբած մտքեր զարթեցնել և որոշ զգացումներ գրգռել, ինչ փույթ, որ հոգեբանությունը և գեղարվեստը տանջվում էին այն ձգտումից...

Այսպես, ուրեմն, Րաֆֆին ուսմանտիզմի երկրպագու էր: Հյուգոյով համիշտակված, հետևաբար չէր կարող ոգևորվել նոր գրականական ուղղությամբ: Չգիտեմ, նա կարդացել էր Զոլայի վեպերը, թե ոչ, բայց հարգանքով չէր վերաբերվում դեպի նատուրալիզմը: Հասկանական է, որ ծանոթ չէր «L'assommoir»-ի հեղինակի հետ, որովհետև շատ միակողմանի կարծիք ուներ նրա մասին: Նա Զոլային համարում էր պոռնոգրաֆ և, որքան հիշում եմ, այդ կարծիքը կազմել էր հակադրապական գրվածքների հիման վրա: Այնինչ՝ ինքը Րաֆֆին երբեմն հակումն էր ցույց տալիս դեպի իսկական պոռնոգրաֆիա, երբ կամենում էր իրական կյանքից վերցնել իր վեպերի նյութը: Հիշում եմ այն արատավոր ասիական ինտրիգը, որ նա մտցրել էր յուր վերջին «Մինն այսպես, մյուսն այնպես» վեպի մեջ: Եվ միայն բարեկամների թախանձանքը ստիպեց նրան դուրս ձգել վեպի միջից այդ ինտրիգը...

Րաֆֆին ծանոթ էր ոռոսաց մի քանի խոշոր վիպասանների երկերի հետ: Ամենից ավելի նա սիրում էր Տուրգենևին, որին միայն նա կարդացել էր ամբողջովին և որով նույնպես ոգևորվում էր: Առանձնապես դուր էր գալիս նրան ոռոս վիպասանի ոճը:

— Այդքան պարզ, հասարակ լեզու և այդքան բանաստեղծական,— ասում էր նա,— կարող եմ ունենալ միայն արտաքին կարգի տաղանդները:

Գալով հայ հեղինակներին, Րաֆֆին, ինչպես վերը ակնարկեցի, շատ խստորեն էր վերաբերվում նրանց։ Նրա խնայողությունը շատ պարզ արտահայտված է մի հոդվածի մեջ, որ նրա մահվանից հետո տպվեց «Մշակ» լրագրում<sup>27</sup>։ Հոդվածը գրված է այն ժամանակ, երբ Րաֆֆին «Կայծերի» առթիվ բանակոխիլ ուներ Աղայանցի հետ, երբ երկու հեղինակները միմյանց տալիս էին այնպիսի սուր անսկաններ, ինչպես «Բրուտի շուն», «Արամազդի էջ» և այլն և այլն։ Պարզ է, որ այդ հոդվածը պետք է միակողմանի ուղղությամբ գրվեր, որպես բուհական վրդովմունքի արգասիք։ Բայց և այնպես նրա մեջ բերված կետերի էական մասը Րաֆֆիի համոզմունքն է կազմում։ Այստեղ Խաչատուր Աբովյանցը հռչակված է իբրև մեր ժողովրդական վիպասանների ամենատաղանդավոր, ուսուցիչ, իսկ Ղազարոս Աղայանցը և Պերճ Պողոսյանցը իբր նրա աշակերտներ, բայց աշակերտներ՝ «գուրկ իրենց ուսուցչի տաղանդից»։

Հիշում եմ մի երկար վիճաբանություն Րաֆֆիի հետ այդ հոդվածի առթիվ։ Մասնավորապես ես պաշտպանում էի Աղայանցին։ Ես գովում էի նրա «Երկու քույրը» և «Անահիտը», Րաֆֆին հարձակվում էր.

— Այդ տեսակ տեսքեր կարող է գրել Ներսիսյան դպրոցի ասեն մի աշակերտ, — իսկ այդ ահագին մարդուց ավելի բան պետք է պահանջել, — ինչ ուզում եք ասեք, Աղայանցը վիպասան չէ, այլ մանկական գրող...

Եվ այդպես, մա անպայման հերքում էր Աղայանցի տաղանդը, բայց հերքում էր վրդովված, մի հանգամանք, որ ինձ առիթ էր տալիս կարծելու, որ յուր հոգու խորքում մա զգում է Աղայանցի արժանավորությունները։ Այնինչ Պողոսյանցի մասին մա մեծ մասամբ հեզմաբար էր խոսում։

— Այդ մարդը, — ասում էր մա, — Աշտարակ գյուղի դավթարչին է։ Նրա դավթարի մեջ ինչ ասես կա, բացի բանաստեղծությունից։

Սուևորույանցին Րաֆֆին խիստ էր վերաբերվում միայն նրա լեզվի պատճառով, որովհետև, ինչպես վերը ասացի,

նա ատում էր գավառաբարբառները: Գալով բովանդակության, նա հարգում էր հայ դրամատուրգի կոմեդիաները: Քանի-քանի անգամ փողոցում զբոսնելիս Րաֆֆին ինձ մատնացույց է արել այս կամ այն անցորդին, ասելով. «Տեսե՛ք Սունդուկյանցի Ջինգիսովը» կամ «Սունդուկյանցի Գիքուն, Կակուլին, Պեսյուն»: Հիշել հեղինակի տիպերը՝ մի գեղեցիկ ապացույց է, որ զգում ես նրա տաղանդի ուժը: Րաֆֆին չէր հավանում միայն Սունդուկյանցի նոր տիպերը, համարելով նրանց թերի և անհաջող:

Ձեռն հիշում, ինչ կարծիք ուներ նա Ծերենցի մասին, բայց գիտեմ, որ նրանք միմյանց ատում էին: Մեկը Րաֆֆին էր լուր «Կալծերով» և «Խենթով», մյուսը՝ Ծերենցը, որ հայրենիքի փրկությունը հայ լուսավորչականության մոլեռանդ: Կաշտպանության և վաճառականության զարգացման և տարածվելու մեջ էր որոնում: Պատմում են, որ երբ «Խենթը» տպվում, վերջանում է «Մշակ» լրագրում, մի օր Ծերենցը մտնում է խմբագրատուն և վրդովված հարցնում է, թե ո՞վ է Րաֆֆին: Ցույց են տալիս Րաֆֆիին, որ այդ ժամանակ նստած է լինում խմբագրատանը:

— Դու՞ ես գրել այդ խելատ «Խենթը»,— հարցնում է Ծերենցը բարկացած:

— Այո:

— Խենթը դուռն ես, որ անանկ բաներ գրել ես, ամոր,— ասում է Ծերենցը և հեռանում:

Տաքալյուն ծերունին կատաղած է լինում Վարդանի երագով, որով ավարտվում է «Խենթը»:

Բոլոր ոտանավոր գրողների մեջ Րաֆֆին ընդունում էր միայն Դուրյանի, Պեշկիրաշվյանի և Գամառ-Քաթիպայի բանաստեղծ լինելը: Առաջինին նա գերադասում էր ամենից: Մյուս բոլոր բանաստեղծների վերաբերմամբ նա կամ չէր խոսում, կամ խոսում էր կիսաբերան: Նա խոնարհվում էր Գամառ-Քաթիպայի ժողովրդականության առջև, հարգում էր նրան իբրև ամենաազդու, տենդենցիոզ բանաստեղծի, բայց ատում էր նրան իբրև անձնավորության: Մի անգամ Գամառ-

Քաթիպան Թիֆլիսումն էր, և հասարակությունը բանաստեղծին հարգելու համար հանդիսավոր ընթրիք էր տալիս: Որքան խնդրեցի, թախսանձեցի, Րաֆֆին չկամեցաւ ներկա լինել այդ ընթրիքին:

Րաֆֆին մեծ գովասանքով էր խոսում Թաղիադանցի մասին, որի «Սոս և Սոնդիպին» համարում էր սուսջնակարգ բանաստեղծություն հաշվական գրականության մեջ: Նա վրդովվում էր, որ հայ հասարակությունը լավ չէ ճանաչում այդ բանաստեղծին:

Յուր ոտանավորների մասին Րաֆֆին շատ քիչ էր խոսում: Ըստ երևույթին նա ինքը նրանց մի առանձին նշանակություն չէր տալիս:

## VIII

Ամբոխի մակերևութական հայացքը Րաֆֆիի մասին կազմել էր սխալ կարծիք: Մարդիկ նրան համարում էին և ինքնահավան, և գոռոզ, և ծլատ, և փողատեր, և մարդառյաց:

Նա, ով լավ էր ճանաչում Րաֆֆիին, ուրիշ կարծիք ուներ նրա մասին: Ես չեմ տեսել մի հայ հեղինակ, որ իսկապես այնքան համեստ լիներ, որքան Րաֆֆին, միևնույն ժամանակ չեմ կարող ցույց տալ մի հայ գրականական գործիչ, որ այնքան շատ իրավունք ունենար յուր գործերով պարծենալու, որքան Րաֆֆին:

Եթե նա յուր բարեկամների նեղ շրջանում երբեմն խիստ քննադատում էր յուր արհեստակիցներին, դա դեռ չի նշանակում, որ նա նրանց չէր հարգում: Այդ ցույց է տալիս, որ նա հայ գրականությունից ավելի էր պահանջում: Եթե լրագրության մեջ երբեմն ստիպված էր լինում իրեն պաշտպանել, դա դեռ չի նշանակում, որ ուզում էր իրեն գովել: Ծատանգամ հակառակորդները այնպիսի ծայրահեղության էին հասնում, որ սկսում էին նրան զրպարտել չեղած բաներով:

Ահա հենց բացարձակ զրպարտություններն էին, որ ստիպեցին Ռաֆֆին «Մշակի» մեջ ասպարեզ գալ Փավստոս ստորագրությամբ<sup>28</sup> Հայկունիի դեմ: Նա ինքն էր կամենում պաշտպանել յուր նվիրական գաղափարները, յուր հավատամքը անզգամ հարձակումների դեմ, նա ինքն էր կամենում մաքրել յուր անուընդ անարդար արատներից, որովհետև ուրիշ ո՞վ կարող էր այնպիսի տաղանդով ու հմտությամբ պաշտպանել նրան:

Մարդուն ցեխտոում էին, համարում էին «խաշագող», «փերեզակ», գրականական անբարոյականություն տարածող, ազգի և եկեղեցու դավաճան, չգիտեմ էլ ինչ, և նա պետք է լուեր, պետք է համբերությամբ տաներ այդ բոլոր հայհոյանքները: Ո՛չ, նա ստոճարյուն փիլիսոփա կամ անտարբեր գիտնական չէր, որոնց իսկի չեն էլ հայհոյում այդպիսի անպատկառությամբ: Նա զգայուն սրտի և վառ երևակայության տեր մի մարդ էր, որ չէր կարող ականջները փակել, աչքերը ծածկել բացարձակ զրպարտությունների դեմ:

Նա պետք է պատռեր յուր թշնամիների դիմակը և պատռում էր անխնա:

Ահա ինչով պետք է բացատրել Փավստոս-Ռաֆֆիի մի շարք կրքոտ հոդվածների երևան գալը: Կրկնում եմ, ոչ մի բարեկամ չէր կարող այնպիսի տաղանդով պաշտպանել Ռաֆֆին, որքան նա ինքն էր պաշտպանում իրեն, որովհետև ոչ ոք այնքան լավ չէր ուսումնասիրել նրա թշնամիներին, որքան ինքը:

«Ռաֆֆին գոռոզ է», — դատում էին կարճատես մարդիկ, նայելով նրան արտաքուստ: Եվ այդ անսահման թախծով սքողված դեմքը, այդ մշտական տխուր ժպիտով սեղմված շրթունքները, այդ խորշոմած մուսլլ ճակատը, այդ կնճռված ունքերը-ամբոխի աչքում գոռոզության նշաններ էին: Բայց մոտեցեք այդ մարդուն, խոսեցեք նրա հետ, դիտեցեք նրա դեմքի վրա մերթ ընդ մերթ սահող համեստ ժպիտը, լսեցեք նրա անկեղծ ծիծաղը, այցելեք նրա անշուք ճակարանը, տեսեք ինչպիսի սիրով է նա ընդունում ցնցո-

տիներով կծկված խեղճ, ողորմելի մշեցիներից, ինչ ախորժանքով է նա նրանց հետ ժամերով խոսում, նրանց մխիթարում, սիրտ տալիս ապագայի համար, ինչպես է սեղմում նրանց կոշտ ու ուկորոտ ձեռները, ինչպես է հյուրասիրում նրանց, և դուք կհամոզվեք, որ այդ սատն ու գոռոզ կերպարանքի տակ թաքցված է իսկական ժողովրդական մարդու ջերմ և մարդասեր հոգին:

Բաֆֆին գոռոզ էր, այո՛, ճշմարիտ է: Բայց ո՞ւմ հետ, նրանց հետ, որոնք չգիտեին հարգանքով վերաբերվել դեպի իրենց հայրենիքի ցավերը, նրանց հետ, որոնք հեղքում էին և՛ ազգ, և՛ լեզու, և՛, նույնիսկ, իրենց ծագումը: Դա իսկապես գոռոզություն չէր, այլ յուր հայրենիքի պատվի հախանձախնդիր հայի արհամարհանք: Հոգով ինքը հպարտ լինելով՝ նա ասում էր ուրիշների մեջ ստրկությունը մեծամեծների սոցև և ամբարտաւանությունը փոքրավորների մոտ: Եվ որքան մանավանդ ծաղրում էր գրականական ամբարտաւաններին:

«Բաֆֆին ժլատ է», — կրկնում էր նույն ամբոխը: Նա խույս էր տալիս հասարակական գլխարձատեղերից, վարում էր չափավոր և սուղ կյանք, գրեթե ինչպես մի կամավոր ճրգնավոր, չէր շռայլում աջ ու ձախ յուր դատը քրահներով վաւոտակած չնշին կոպեկները — և դա համարվում էր ժլատության և փողասիրության նշան: Բայց ո՞վ պետք է պահեր նրա ընտանիքը, ո՞վ պիտի հոգար նրա զավակների կրթությունը, ո՞վ պետք է ապահովեր նրան ծերության հասակում:

Սակայն, չնայելով այդ հոգսերին, նա ինքը դարձյալ օգնում էր ուրիշներին:

Քանի՛-քանի՛ անգործ ուսուցիչներ են դիմել նրան և օգնություն ստացել, քանի՛-քանի՛ ամոթխած մորացկաններ, որ չէին ուզում բացարձակ ողորմություն հավաքել, շատ անգամ նրան են դիմել և նպաստ ստացել, քանի՛-քանի՛ հիվանդ տաճկահայերի է օգնել և քանիսի՛ ճանապարհածախսն է հոգացել: Եվ այդ բոլորը անում էր գաղտնի, առանց յուր արածի մասին փողեր փչելու և թմբուկներ զարկելու,

որովհետև չէ՞ որ նա ինքը մարդկանց փարիսեցիական բարեգործության թշնամի էր և քիչ չէր կուլել դրա դեմ գրչով: Այնինչ ամբոխը, որ միայն աչքերով է դատում, չէր ճանաչում նրա հոգին, նրա անհատական կյանքը և համարում էր նրան ժլատ, փողատեր: Ու՞ր մնացին նրա հազարները, որոնց մասին գոռում էին թշնամիները, ինչու՞ մահից հետո երևան չեկան, և այսօր նրա ընտանիքի միակ ժառանգությունը նրա գրքերն են և անունը:

Եթե Րաֆֆին մինչև անգամ ժլատ և փողատեր էլ լիներ, արդարանալու կարիք չունէր: Այն դառնությունները, այն կարոտությունները, որ նա կրել էր իր անցյալ կյանքի ընթացքում, ինքնըստիճքյան կարող էին արդարացուցիչ պատճառներ համարվել: Մինչդեռ սեփական թշվառությունները նրա սիրտը չէին քարացրել, այլ սովորեցրել էին ուրիշների կարիքին կարեկից լինելու և ոչ միայն իբրև հասարակական գործիչ, այլև իբրև մարդ, իբրև անհատ:

— Ծանաչու՞մ եք այդ մարդուն,— դարձավ մի օր նա ինձ, ցույց տալով փողոցում մի անցորդ:

— Ո՛չ,— ասացի ես:

— Ի՞նչ եք կարծում, ի՞նչ գործով է նա զբաղված:

— Արտաքինից դատելով,— պատասխանեցի ես,— կարելի է նրան ընդունել կամ մի միջին կարողության կալվածատիրոջ, կամ վաճառականի տեղ:

Րաֆֆին դառնությամբ ժպտաց և ասաց.

— Այսպես շատ անգամ մարդկանց արտաքինը խաբուսիկ է: Այդ մարդը մուրացկան է, բայց գաղտնի մուրացկան: Թիֆլիսը լիքն է աշդախսիներով: Երեկ երեկոյան նա ինձ մոտ էր, ճանաչում է ինձ, կարդացել է իմ վեպերը: Նա մի ժամանակ հարուստ է եղել, հանդիպել է ձախորդության, կորցրել է ամեն ինչ և այսօր մուրացկան է, բայց ինքնասիրությունը չի թույլ տալիս յուր իսկական վիճակը ուրիշներին հայտնելու: Նա երեկ եկել էր ինձ մոտ և արտասուքը աչքերին պատմում էր յուր օրերը: Նա ասում էր, թե միայն ուրիշների ցավը նկարագրողը կարող է հասկանալ նրա վիճակը,

ուստի ինձ էր դիմել: Ցավում եմ, որ չունեի ավելի տալու, բայց տվեցի, ինչ որ կարող էի. թշվառ մարդ:

Եվ մի՞թե կարող էր ժլատ և մարդաստաց լինել նա, որ այդպիսի վշտակցությամբ էր վերաբերվում դեպի իսկական կարոտյալները և թշվառները:

## IX

Ես չեմ ուզում Րաֆֆիի անձնական հատկությունների փաստաբանը հանդիսանալ, և ոչ էլ նա կարոտ է իմ պաշտպանության: Բայց զգալի է, երբ մի այդպիսի մարդու մասին թյուր և անարժան գաղափար է կազմվում:

Րաֆֆին ուներ թերություններ, բայց ոչ այն, ինչ որ վերագրում էին նրան մարդիկ: Նրա լեզուն երբեմն անզուսպ էր իր հակառակորդների վերաբերմամբ: Ռուսական վրդովմունքը նրան հասցնում էր ծայրահեղության: Նա չէր խնայում ոչ մի սուր ածական յուր հակառակորդների համար, աշխատում էր միշտ միայն նրանց թերությունները տեսնել, գուցե երբեմն և հնարում էր չեղած թերություններ:

Հիշում եմ նրա մի կատաղի հոդվածը «Մշակի» մեջ Պետրոս Սիմոնյանցի և ընկերության դեմ<sup>29</sup>: Դա «Մեղվի» քսանուհինգամյա հոբելյանի ժամանակն էր: Գաղափարներով արդարացի հոդվածը վարակված էր մի քանի այնպիսի ակնարկներով, որոնց կարելի էր միայն Րաֆֆիի թշնամիներից սպասել և ոչ Րաֆֆիից: Այդ ակնարկները նույնիսկ վիպասանի բարեկամների և երկրպագուների վրա անախորժ տպավորություն գործեցին:

Նա քինախնդիր էր և ռիսակալ, ամա՛ նրա հոգու տկար կողմը: Ծատ անգամ էր նա վճռել արհամարհել յուր թշնամիներից, բայց չէր կարողանում, որովհետև կիրքը նրա մեջ գորեղ էր: Նա միշտ բարկանում էր յուր թշնամիների հարձակումների դեմ: Այնինչ արհամարհանքը, ինչպես շատ գեղեցիկ նկատել է Ռեմանը, բարկության հետ կապ չունի:

«Բարկությունը մարդուն թելադրում է ճոճուսն ֆրագներ, կոպտություն, հաճախ և վիրավորանք, իսկ արհամարհանքը գրեթե միշտ արտահայտվում է վաշելուչ և արժանավոր ոճով: Նա, ով որ բարկանում է, կամենում է, որ ուրիշներն էլ յուր հետ բարկանան, իսկ նա, որ արհամարհում է, այնպիսի մի նուրբ հաճույք է զգում, որ կարիք չունե ուրիշների մասնակցությամբ: Արհամարհանքը ինքն իրենով է բավականանում»:

Րաֆֆին կարողանում էր արհամարհել միայն յուր թույլ և աննշան հակառակորդներին, որոնց թիվը լեգեոն էր, իսկ նրանց, որոնց մեջ ուժ էր զգում, աստում էր ամբողջ էությունը: Դրանից էր առաջանում այն սարսափելի թույնը, որով տոգորված են նրա բոլոր պոլեմիկական հոդվածները:

Նա չէր ուզում համոզվել, որ եթե յուր հակառակորդների արժանավորությունները խոստովանի, դրանով ինքն իրեն ավելի կբարձրացնի, որովհետև ինչ հրապույր ունի անարժանների հետ կուլելը:

— Արժե՞ կուլել այդ մարդկանց հետ, որոնց ինքներդ ամեն կրիտիկայից ստոր եք համարում,— ասում է նա երբեմն:

— Արժե, որովհետև նրանք վնասակար են:

— Կնշանակե ոչնչություն չեն, այլ ուժ, խոստովանեցեք, ուրեմն, որ դուք ուժի դեմ եք կուլում:

— Այո, թունավոր միջատներն էլ ուժ են, բայց նրանց հետ չեն կուլում, այլ ջախջախում են նրանց, ոտնատակ են անում:

Եվ իրավ, որ նա չէր կուլում, ինչպես դիսցիպլինայով անցած սառնարյուն զինվոր, այլ ջախջախում էր և ոտնատակ անում, ինչպես մի ասպատակ:

Գուցե դրանով պետք է բացատրել այն անասնման ատելությունը, որ զգում էին դեպի Րաֆֆի-Մելիքզադեն Կաֆանը, որոնք երբևէ ենթարկվել են նրա հարվածներին:

## X

Բանաստեղծների կյանքում կանայք սովորաբար մեծ դեր են խաղում, շատ անգամ արմատապես փոխում են նրանց հոգեկան աշխարհը:

Ազդե՞լ են արդյոք կանայք Րաֆֆիի վրա երիտասարդ հասակում, հետևապես և ներգործություն արե՞լ են նրա բանաստեղծական ուղղության վրա, ինձ հայտնի չէ: Գիտեմ միայն, որ կանանց մասին նրա գաղափարը մերթ թերթեռիկական էր, մերթ միակողմանի, գործնական: Նա նրանց հոգեբանորեն չէր ուսումնասիրել՝ դրանով պետք է բացատրել այն գեղարվեստական անկերելի սխալները նրա վեպերի մեջ, երբ նա կնոջ և տղամարդի սեր է նկարագրում:

Նա ծնվել և մեծացել է այնպիսի ժամանակ և այնպիսի շրջանում, որ կանայք դեռ փակ կյանք էին վարում: Հետևաբար, դժվար է ենթադրել, որ պատանեկան և երիտասարդական հասակում շատ կանանց հետ ծանոթ լինեք, ուրեմն և թարմ հոգով ուսումնասիրեք նրանց: Իսկ հետո, հասուն տարիքում, որքան ինձ հայտնի է, նա բոլորովին հեռու էր կանանց հասարակությունից: Թիֆլիսում նա գրեթե չունեք կին ծանոթներ, բացի մի քանի վարժուհիներից, որոնք մի ստանձին հոգեբանական հետաքրքրություն չէին ներկայացնում:

Բայց և այնպես, Րաֆֆին շատ էր սիրում խոսել կանանց մասին: Նա պատմում էր յուր կյանքի անցյալից քանի մի արկածներ, բայց չեմ հիշում մեկը, որ ունենար ումանալին հիմք: Նրա ձգտումները սովելի զգայատիրական էին, քան հոգեսիրական: Այս դեպքում նա ինձ թվում էր խորին արևելյի, որի հեշտասիրությունը նշմարվում է նրա շատ սիրային նկարագրությունների մեջ անգամ, մանավանդ «Հարեմում»: Հիշում եմ նրա «Պարսկաստանի մամակների» մեջ մի տեսարան, որ նա նկարագրում է յուր հանդիպումը մի անմեղ օրիորդի հետ և նրանց մեջ տեղի ունեցած բո-

պեական ինտրիգը: Բայց ես համոզված եմ, որ այդ տեսարանը նրա հարուստ ֆանտազիայի ծնունդներից մեկն է, և ուրիշ ոչինչ: Նա խոսքով էր միայն այսպես, իրականության մեջ չեմ հիշում նրա կյանքից մի դեպք, որ կարողանար ապացուցել նրա հայացքը, բացի հարկավ երիտասարդական քանի մի սխալներից: Սակայն այդ տեսակ սխալներ, որ ներելի են զգայուն բանաստեղծին, Րաֆֆիի կյանքում եղել են այնքան սակավ, որքան գուցե մի ժուժկալ մարդու կյանքում:

Թշնամիների լուտանքը Րաֆֆիի անձնավորության մասին այս դեպքում էլ չափ չուներ: Այդ ժուժկալ մարդուն նրանք վերագրում էին այնպիսի ախտեր, որոնց մասին ակնարկելն անգամ ամոթալի է: Երբ մանր մարդկանց թշնամական կիրքը հուզվում է, զրպարտությունները տեղում են այնպիսի առատությամբ, որ մարդ չգիտե որը հերքե և որի դեմ վիրավորվե: Հաճախ բարոյապես ապականված մարդիկ ուրիշների մեջ են որոնում այն ախտերը, որոնցով վարակված են իրենք: Ո՛չ որ այնքան հաճախ չի կրկնում գող բառը և այնպիսի դյուրությամբ այդ անունը չի կպցնում յուրաքանչյուրին, որքան իսկական գողը: Ով չգիտե յուր դրական արժանավորություններով իրեն բարձրացնել, ուրիշների բացասական հատկությունները քննադատելով է զբաղվում: Հասարակ մանկանացուների մասնավոր կյանքը սքողված է նրանց անհայտության քողով: Իսկ բացառիկ անհատների անձնավորությունը ենթարկված է հասարակական քննադատությանը, ուստի բնական է, որ նրանց մասնավոր թերությունների վրա ամբոխը խոշորացուցցով ճայե: Հիշում եմ շատ անվայել լուրեր Րաֆֆիի մասին, որոնք բխում էին Րաֆֆիի թշնամի բանակից և որոնք ոչ մի հիմք չունեին: Արհամարհենք այդ լուրերը և զգվանքով երես դարձնենք, որովհետև բոլորն էլ ուրիշ ոչինչ էին, եթե ոչ կրքի և ծայրահեղ ատելության ծնունդ՝ զրպարտություններ:

## ԻՄ ԿՅԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ

(Հատված)

1868 թվականի ծննդյան պատը բռնելուց հետո էս ու Մովսէսը՝ մէկ օր, ճաշելուց հետո, ճանապարհ ընկանք դէպի ս. Էջմիածին: Այլևս չսպասեցի եղբորս գալատյանը: Երեկոյան հասանք Կողա, ուր և գիշերեցինք: Նոր ուղին դեռ շինված չէր, խճուղի դեռ չկար: Ծանապարհն այնպէս ցեխ էր, որ մեր կառքի առջևից երկու ջուխտ գոմէշ լծել տվին, և հազիվ կարողացան Կումսի փոսից դուրս բերել Կողա:

Նոր արդեն հասել էինք, մէկ էլ տեսանք հայրս ներս եկաւ եղբորս հետ: Այդ ծերունի մարդը մույն օրը 66 վերստ ճանապարհ էր կտրել, ցեխ ճանապարհ և այն էլ ոտքով... Հենց որ մենք դուրս ենք եկել, նա ներս է մտել քաղաք և իսկույն մեր ետևիցն ընկել, որ հասնի, ենթադրելով, որ մույն գիշերը չենք կարող Կողայից հեռանալ, ոչ էլ կառքը կարող է ցեխ ճանապարհով այնպէս արագ գնալ, որ ոտքով մեզ չհասնեն:

— Ասի,— ասացի,— դու շատ անգութ էս վարվել դէպի քեզ...

— Այո,— պատասխանեց,— բայց էրեխիս համար, որ չգրկվի ուսումից:

Հայրս մեր գյուղում միակ մարդն էր, որ գիտէր ուսման հարգը, արհեստի նշանակությունը: Երեխա ժամանակը, ծըն-

վել էր Գորի քաղաքում և այդտեղ էլ անցուցել իր պատանեկությունը, աշակերտ է եղել պղնձագործի մոտ և շատ բան էր պատմում իր մանկության օրերից, իր աշակերտական կյանքից: Ծատ լավ մարդ էր վարպետս,— ասում էր հայրս,— բայց մանավանդ վարպետիս կինը, որ մի շատ խելոք տանտիկին էր: Նրա խրատներից չեմ մոռանում այս խոսքը, որ շուտ-շուտ ասում էր.— Ստեփան, աշխատիր, որ լափչիքդ ու քոշերդ տրեխ չդառնան, եթե ոչ՝ տրեխ էլ չես գտնիլ, որ հագնես: —Երևի այս էր պատճառը, որ հայրս ո՛չ ինքն էր հագնում տրեխ և ո՛չ որդոցը հագցնում: —Տրեխի որ սովորեք,— ասում էր,— էլ լափչի հագնելու ձգտում չեք ունենալ:

Մեր կառքը դեռ ետ չէր դարձել: Նրան մի մանեթ տվի, որ հորս տանե մինչև քաղաք:

Օրը՝ կարճ և ցուրտ, գիշերը՝ խալար, ճանապարհը՝ տեղ ցեխ և տեղ սառած: Մենք յոթն օր ճանապարհ գնացինք և ծննդյան թաթախման երեկոյին հասանք Երևան<sup>2</sup>:

Ճանապարհին ոչ մի լավ տպավորություն չզգացի, բացի զգվանքից, մանավանդ Դիլիջանի սարը բարձրանալիս՝ հին ձորամիջի ճանապարհով: Այդ մազե կամուրջներից անցնելով և Գեղամա լճեզրի բուք ու բորանից լավ ծեծվելուց հետո, մոտեցանք Երևանին, իմ բոլոր նեղություններս մոռացա, երբ հանկարծ դեմս ելավ Մասիսը՝ կեսից վեր ձյունով ծածկված: Ես ոտքով էի գնում և կառքի ստջևը: Մասիսը տեսնելուն պես՝ ես վեր-վեր չթռա կաբարդացոց նման, այլ և տեղնուտեղ մեխվեցա, ինչպես մի ահեղ սրբության ստջև, որին մոտենալ կարելի չէ կոշիկները չհանած: Սարը խոտեց ինձ հետ, բայց ինչ որ ասաց, այդ կմնա իմ և նրա մեջը: Այդ մի պատգամ էր և խորհրդավոր պատգամ, սուրբ և աստվածային, որ կարելի չէ լույս աշխարհ հանել նախքան ժամանակը:

Երևան որ հասանք, իջևանի պահողը մի լավ հայ էր. սա իր տանից ուղարկեց մեզ ընթրիք, իշխանաձուկն՝ եփած և խորոված, ձու և շատ լավ փլավ՝ արշտով եփած:

Չէր մոռացել և երեք շիշ իրանց թունդ գինուց ուղարկել: Այդ գինու բնությունը չգիտեի, մի քանի քաժակ որ խմեցի, գլուխս տաքացավ և կտորը լծել տվի, որ այն գիշեր հասնեմք Էջմիածին և առափոտուն ջրօրհների<sup>3</sup> հանդեսին ներկա լինեմք:

Մեր կառապանն, ինչպես երևաց, խամ էր, Դալմի բաղերից մի քիչ անցած՝ ճանապարհը կորցրեց: Ջյունը լցրել էր դար ու փուս և շինել մի հարթ մակերևույթ, որի վրա մարդկային հետք և ճշան չէր երևում: Շատ այս ու այն կողմ պտտելուց հետո պատահեցանք մի պահնակի, ուր թուրք ձիավորներ կալին իբրև ուղեպահներ: Կանչեցինք, մի ձիավոր եկավ ընկավ առաջներս, բայց բավական հեռացրեց մեզ ոլոր-մոլոր ճամփով:

Մի կողմից կասկածելով, թե միգուցե թուրք ձիավորը մեզ տանում է կողոպտելու համար մի տեղ, ուր թաքցրած ընկերներ ունի, մյուս կողմից էլ տեսնելով Մովսեսի և Սարգսի (եղբորս) դողդողալն ու սրթսրթալը ցրտից ու երկյուղից, կառապանին հրամայեցի, որ ետ դառնա եկած տեղով և մեզ կրկին Երևան հասցնե: Այդպես էլ սրսով, և մենք կես գիշերից անց կրկին իջանք Երևանի իջևանումը:

Մյուս առափոտը մեզանից նորից վարձ պահանջեցին Էջմիածին տանելու համար: —Ոչ թե վարձ, այլ սև քար կտամ ձեզ,— ասացի,— ես ձեզ ցույց կտամ, թե ինչ կնշանակե ցրտումը կոտորել մեզ:

Այդ օրը մնացինք Երևան, և ես գանգատվեցի ուր հարկն էր ո՛չ թե նրա համար, որ կրկին վարձ չտամ, այլ որ ուշք դարձնեն այս հանգամանքի վրա և ուրիշներին էլ մեր օրը չզգեն:

Այս դեպքը կարծես նրա համար պատահեց, որ նույն օրն առիթ ունենամ ծանոթանալու մեր գրականությանն մեջ ապագայում երևելի անուն հանած Մելիք-Հակոբյանի հետ, այն է՝ Րաֆֆու<sup>1</sup>: Սա բազարումը պատահում է Մովսեսին, որի հետ մոտիկ ծանոթություն ուներ<sup>5</sup>, և իմ գալն իմանալով՝ իսկույն շտապում է ինձ մոտ, հետո ծանոթանալու

համար: Եկալ, ծանոթացալ, սովորական հաճոյախոսություններ անելով իբրև նոր հեղինակի: — Ես կարդացի,— ասաց,— ձեր «Արություն և Մանկելը»<sup>6</sup> և ինձ վրա շատ խոր տպավորություն գործեց, այդպիսի գրվածք չկա մեր մեջ:

— Ծնորհակալ եմ,— ասացի,— ես էլ ձեր «Խըլվըլիկը» կարդացի, որ Պետրոսի (Քաթանյանց) ձեռով ուղարկել էիք ինձ տեսնելու<sup>7</sup>: Նրանից կարելի է մի բան շինել, եթե աշխատեք:

— Այո, ես այդ ձեռագիրն ուղարկել էի պ. Նազարյանցին<sup>8</sup>, նա ետ է ուղարկել մի բանի նկատողություններով, կաշխատեմ օգուտ քաղել թե՛ նորա, և թե՛ ձեր խորհուրդներից: Հուսով եմ, որ այսուհետև իրար հաճոյապելու առիթ կունենանք, իսկ այսօր կխնդրեմ, որ միասին ճաշենք իմ ազգականիս տանը, որ կծանոթանանք շատ հետաքրքրական մարդկանց հետ:

Ես ընդունեցի պ. Հակոբի հրավերը և Մովսեսի հետ գնացինք ճաշի: Ծջմարիտ որ շատ հետաքրքրական մարդիկ կային, այսինքն՝ ճշանավոր խաչագողներ և երևելի ավազակներ: Այդտեղ էին, ի միջի այլոց, Եզնակենց Խաչատուրը և Սպամասոցոնց Մկրտիչը: Ամենքն էլ, առանց ծածկելու, պատմում էին իրանց կատարած քաջագործությունները, չէին ծածկում նաև, թե ինչպես էին կողոպտել մույնիսկ Մելիք-Հակոբյանի ասպանը Թավրիզից բերելիս և նրան սնանկացրել: Երբ որ սրանք դադարեցնում էին իրանց պատմությունը, Մելիք-Հակոբյանը խոսում էր ժամանակակից գրականության վրա: Նա քիչ բան էր ասում և շատ բան հարցնում, որ իմ կարծիքս իմանա և մի նոր բան սովորի: Ես նրան ոչինչ չէի հարցնում: Եթե երբեմն վստահանում էր իր գաղափարը հայտնել, ես իսկույն ցույց էի տալիս նրա ուղիղ կամ սխալ լինելը և երկուսի համար էլ գոհ էր մնում. մի տեսակ հարգանք և պատկառանք էր տածում դեպի ինձ:

— Ես Նալբանդյանցի ուղղությանն եմ համակրում,— ասաց. — իմ կարծիքով՝ միակ ուղիղ ճանապարհը նրա քրոզածն է:



Ալեքանդր Շիվանդաղի  
(1858—1935)





Բաճաճ աշխատանքներ Թիֆլիսում (1886 թ.)

— Այդ շատ լավ էք նկատել,— ասացի,— բայց մեծ նպատակի հասնելու համար միակ ճանապարհ չկա, այլ շատ. թշնամու դեմ պատերազմը մի ուղիղ գծով չեն մղում և ոչ մի գործողությամբ, այլ զանազան կողմերից և զանազան գործողություններով: Ամենայն ճանապարհ ուղիղ է, եթե տանում է դեպի միևնույն գլխավոր նպատակը: Ոչ մի ճանապարհ անտես անելու չէ: Անվարժ գորքով թշնամուն հաղթել կարող չես: Ինչ կուզես տուր մի տգետի, նա մյուս օրը կկորցնի իր ստացածը: Ուրեմն, եթե բանը ես ու առաջի մասին է, Նալբանդյանցի բարձրացրածը մի ձեռք է միայն, որ միայնակ ծախ չի տալ: Ամենայն ազգ իր այբբենն ունի, և հիմա մեզ համար ամենից շատ մի լավ այբբենաբան է հարկավոր, որ ժողովուրդը հեշտ կերպով գրել-կարդալ սովորի և մեր ասածն ու գրածը ըմբռնե: Ինքը Նալբանդյանցը այդ համոզման էր եկել իր վերջին օրերում. նա ասում էր. «Մեր ազգին հարկավոր է գիտական զարգացում, «Հյուսիսսփայլը»-ը այդ դերը կատարել կարող չէ, հարկավոր են նոր ու թարմ ուժեր, ժամանակակից սոցիալական գիտություններին քաջ հմուտ»:

Մելիք-Հակոբյանն իմ ասածին հավանություն տվավ և ասաց.

— Ծատ ուղիղ է ձեր նկատողությունը: Ծշմարիտ որ ամենից առաջ պետք է լուսավորել ժողովրդին, պետք է ազատել նրան շատ նախապաշարմունքներից, և ես, եթե դեպքը բերի, ամենայն ուրախությամբ հանձն կառնեմ վարժապետ լինել:

Կրթվելն ու կրթելը վարակվելու և վարակելու նման մի բան է: Ինչ գաղափարներով որ ես վարակված էի, նույնով էլ պետք է վարակեի ինձ հետ շփվողներին, մանավանդ նրանց, որոնք վարակվելու տրամադրություն ունեին. Մելիք-Հակոբյանը շատ դյուրաթեք էր վարակման, բավական էր մի փոքրիկ հատիկ, որ նրանից նա մի բան անեցներ: Այս օրվանից ես ու նա ծանոթություն կապեցինք իրար հետ, ստանց որևէ սերտ բարեկամության: Ես երբեք չէի

կարող երևակայել, որ նա երբևիցե Րաֆֆի կդառնա: Տարիքով նա ինձանից մեծ էր առնվազն յոթը տարով<sup>9</sup>, ուրեմն՝ իմ տեսած ժամանակ նա պետք է լիներ մոտ 35 տարեկան, իսկ այդ հասակում նա չունէր ո՛չ գիտական զարգացում, և ո՛չ գրական կրթություն: Բայց ուներ վառ երևակայություն և կյանքից ստացած շատ պաշար: Այդ հում նյութը նա կարող էր պետք ածել, եթե ընկներ մի լավ գործարանի մեջ, և ընկավ «Մշակի» խմբագրատունը, որ մշակեց իր պաշարը: Րաֆֆու մասին առաջմ աչաքան, իսկ հետո կրկին կհանդիպենք գործիս ընթացքում, իբրև արդեն Րաֆֆու հետ և ոչ վաճառական Մելիք-Հակոբյանի:

## ՊԱՏԿԵՐՆԵՐ ՐԱՖՖԻԻ ԿՅԱՆՔԻՑ

Քաղցրախոս պոետ, քու անուշ լեզուն,  
Քնարդ ներդաշնակ, հոգիդ զգայուն՝

Պ. Քաթիպա

Ծառ ու շատ տարիներ անցան այն օրից, երբ մեր վիպագիր-հրապարակախոս Րաֆֆին մեռավ և հողին հանձնվեց։ Պատմության առաջ պատասխանատու չմնալու համար անհրաժեշտ կարիք կար, որ պարսկահայերի կողմից հավաքաբար խմբագրվեր պարսկաստանցի բանաստեղծի լիակատար կենսագրությունը։ Մի բան, որ մինչև օրս առանց հետևանքի մնաց։ Տխր՝իր իրողություն։ Եվ որքան գնում, այնքան զգալի է դառնում այն բաց տեղը, որ թողել է Րաֆֆին։

Բազմաթիվ բարեկամներ, թե՛ Կովկասից և թե՛ Պարսկաստանի այլևայլ քաղաքներից, դիմեցին ինձ, նույնպես և հարգելի տիկին Րաֆֆին՝ հորդորելով, որ մեր վիպասանի կենսագրությունը ես գրեմ, իրբև նրան խիստ մոտից ճանաչող։ Եվ արդարև, իմ կողմից անցերելի զանցառություն կլինե՞ր չգնահատել նրա հազվագյուտ տաղանդը։ Ես կրկնակի պարտավորություն ունեի։ Ինձ դիմողները լավ գիտեին արդեն, որ Րաֆֆին և ես մեր երիտասարդության օրից սկսյալ մինչև նրա մահը եղել ենք խիստ մոտերիմ բարեկամներ, այլև միասին երկար ժամանակ եղել ենք Սալմաստում, Ուրմիայում, Թավրիզում և մի կարճ ժամանակ էլ թուրքաց Հայաստանում, իսկ երբ եղել ենք տարբեր տեղերում, շարունակ թղթակցել ենք միմյանց հետ։

Արդեն 60-ական թվականներից էլ առաջ ես ծանոթացել էի Րաֆֆիի և նրա ընտանիքը կազմող անդամներից շատերի հետ: Նրանցից զանազան ժամանակներում հարցուփորձով բազմաթիվ ուշագրավ տեղեկություն եմ հավաքել նրա մանկության ժամանակի վերաբերությամբ: Որից հետո մի պահանջ դարձավ ինձանում հետաքրքրվել թե նրա գրական գործունեությամբ և թե նրա կյանքում պատահած երևույթներով: Դրանցից շատերը ես գրի եմ առել և հավատարմությամբ պահել մինչև այսօր այն ամենն, ինչ որ ես անձամբ տեսել եմ, լսել և ստուգել վստահելի աղբյուրներից, շատ անգամ էլ դիմելով հիշողությանս: Եվ որպեսզի քանքարաթաքույց չլինեմ, ահա այսօր ես նրանց հավաքելով հրապարակ եմ հանում, նախապես խոստանալով, որ իմ ներկա աշխատությունը հեռու է Րաֆֆիի ամբողջ կենսագրությունը լինելուց:

Ես միայն մի քանի քալ առաջ գնալով հող պատրաստեցի նրա ապագա կենսագրությունը կազմողի համար, որպես մի նախերգանք: Ես վստահ եմ, որ շատ չանցած դուրս է գալու մի նոր հոսանք, որ պրայտելով և թափանցելով անցած գնացած եղելությունների խորքերը՝ բազմակողմանի նկարագրելով, դուրս է բերելու նրա ամբողջ կենսագրության ընդհանուր գծերը: Եվ որովհետև Րաֆֆին «Մշակով» ծանոթացավ հայ գրական աշխարհին, «Մշակով» էլ ահա նրա կյանքի պատկերները տալիս եմ ընթերցող հասարակության:

### Գլուխ առաջին

Հանգուցյալ Րաֆֆի-Հակոբ Մելիք-Հակոբյանցը ծնվել է 1835 թվականին Սալմաստի հայաբնակ Փայաջուկ գյուղում: Նրա հայրը՝ Մելիք Միրզա-բեկը, մի համեստ վաճառական էր իր ժամանակի առևտրական շրջանում, այնպես որ նա մի լավ հոշակ էր ստացել Սալմաստում, Խոյում, Ուրմիում, Թավրիզում և Թիֆլիսում: Նա Փայաջուկ գյուղի

ժառանգական մեղիքն էր, ինքը և իր եղբայր Մելիք-Սարգիսը հերթով վարում էին այդ պաշտոնը:

Սալմաստի հայ ծերունիների պատմելով՝ այդ ընտանիքը շատ վաղուց բնակված է Փայաջուկում, ունենալով մեղիքության իրավունք նույն գյուղի վրա: Մինչև օրս էլ այդ արտոնությունը պատկանում է նույն ընտանիքից սերած շատավիղների: Մելիք Միրզա-բեկի ընտանիքը կազմում էին՝ նրա պատկառելի կինը, ինը աղջիկներ և չորս որդիներ, որոնցից մեծը Րաֆֆի-Հակոբն էր, որին այնպիսի տաղանդ էր տված, որ մի օր նա իր գրվածքներով մի մեծ հեղափոխություն պիտի ձգեր հայ գրական աշխարհում:

Ծերունի Մելիք-Միրզան, որին ես անձամբ տեսել և խոսակից եմ եղել, մի խիստ համակրելի, մահապետական մարդ էր, բնությունից օժտված գեղեցիկ հատկություններով: Նա թեև կրթված չէր, բայց կրթությունն էլ ասողներից չէր: Մելիք-Միրզան Թիֆլիս գնալով՝ ծանոթացել էր այնտեղի հայ ու ռուս դպրոցների հետ, որոնք լավ տպավորություն էին թողել նրա վրա. դառնալով Սալմաստ՝ միշտ խոսում և աշխատում էր հայ գյուղերում դպրոցներ բանալու համար: Նրա համեստ և սիրավիր հյուրասիրությանը սահման չկար: Նրա տունը համարյա թե գյուղական հյուրանոց էր այն ամեն օտարական հայի համար, որ մուտք գործեր Սալմաստ: Ատրպատականի թեմակալներից շատերը ամիսներով հյուրասիրվել են նրա տան մեջ: Նույնիսկ Խրիմյան Հայրիկը (այժմյան Վեհապառ կաթողիկոսը) 1861 թվականին Ատրպատական գալով՝ երբ Սալմաստ ժամանեց, նրա տան մեջ հյուրասիրվեց<sup>2</sup>: Մի խոսքով, նրա սեղանը միշտ բաց էր աստուծո հյուրի ստաց: Մելիք-Միրզան իր գյուղական տունը և ընտանիքը կառավարելու համար պահում էր բազմաթիվ կաթնատու և մշակության օգտակար անասուններ և ձիեր: Նա մշակում էր իր արտերը, պարտեզները և խնամք էր տանում իր ջրաղացների վրա: Նրա տան մի կողմը հայ գյուղացիական էր, իսկ մյուս կողմը արիստոկրատիական ընդունարան՝ լավ կահավորված, որպես քաղաքի ճաշակավոր տուն:

Նա թե հայ գյուղացի էր՝ արորն ու մանը ձեռքին, թե վաճառական էր՝ առևտրական գործերով զբաղված: Պետք է ավելացնեն, որ նրա տունը միևնույն ժամանակ գյուղական հաշտարար դատարան էր՝ գյուղացիների վեճերը լուծելու համար:

Թե՛ Մելիք-Միրզայի և թե՛ սալմաստեցի բազմաթիվ հայ վաճառականների առևտրական գլխավոր պարապմունքն էր շիլա պատրաստել իրանց գյուղերում: Դա մի տեսակ բամբակե հաստ կտավ էր, որ հետո իրանց սեփական հողերում մշակած տորոնի կարմիր գույնով ներկել տալով, ահագին քանակությամբ արտահանում էին Թիֆլիս և վաճառում, որի մեջ ժամանակին մեծամեծ գումարներ շահեցին:

Րաֆֆիի մայրը, որ մինչև օրս էլ կենդանի է<sup>3</sup>, մի խիստ քաղաքավարի և բարեպաշտ կին է: Նրա խնամքներով էր կառավարվում Րաֆֆիի հայրենի օջախը, որ ծխում էր գյուղական լիառատ բարիքների մեջ: Եթե Մելիք-Միրզան տան արտաքին գործերն էր կարգադրում որպես այր մարդ, տան ներքին գործերն էլ նրա տնարար կինն էր կարգի բերում: Օր չէր անցնի, որ նրանց տանը մի քանի հյուրեր չլիներին: Օր չէր լինի, որ մի քանի չքավորներ և թշվառներ չկերակրվեին նրանց տան թոնրից դուրս եկած թաժա հացից, կարժ ու թանապուրից, կամ, ինչպես իրենք էին ասում, աստծու տվածից: Ահա մի այդպիսի շեն տանից էր Րաֆֆին:

Այժմ դառնում եմ դեպի Րաֆֆիի մանկությունը:

### Գլուխ երկրորդ

Փայաջուկի գյուղական դպրոցում եղել է մի վանեցի հայ ուսուցիչ, որի մոտ գնում էին գյուղի առաջավոր մարդկանց որդիքը մի քիչ հաչերեն սովորելու, այն էլ գրաբար՝ ութ կանոն Սաղմոսի, Ավետարանի և խորհուրդաբան Նարեկի վրա: Եղել է և արհեստ, այսինքն՝ քերականություն, այն էլ կամավոր, իսկ մյուսները պարտադիր են եղել. հիսունական թվա-

կաններում դրանից ավելի չէր էլ կարելի սպասել: Գրաքար լեզուն և տիրացու վարժապետները այդ դարաշրջանում իրանց ճիրանների մեջ էին պահում ժամանակի դպրոցները: Այդ դպրոցի վարժապետը անվանի է եղել նրանով, որ «գալազանալ երկայթալ» չէ վարվել իր աշակերտների հետ, այլ միայն ապտակահարությամբ:

Ահա այդ դպրոցումն էր առել Րաֆֆին իր նախնական ուսումը: Րաֆֆին ինձ պատմել էր, որ ինքն էլ մի քանի անգամներ հանդիմանության ապտակներ ստացել էր իր ուսուցչից դասերի համար, որովհետև նրանք չտիպազանց դժվար էին: Բայց ինքը մյուս աշակերտների պես չէր փախել դպրոցից, ընդհակառակը, մի քանի անգամ էլ ինքն է գոռացել իր վարժապետի վրա և դիմադրել, երբ նա իր ընկերակիցներին տեսել է սոսկալի ապտակահարության տակ: Դու ինչու՞ ես խառնվում, Հակոբ, երբ ես իմ աշակերտներին ապտակում եմ, — ասել է ուսուցիչը, — հո քեզ չեմ պատժում:

— Միևնույն է, պատասխանել է պատանի Րաֆֆին, մի օր էլ ինձ այդ օրին կօգես:

Րաֆֆին իր մանկության օրերում եղել է շատ հանդուգն և շատ սրամիտ: Գյուղական դպրոցից տուն վերադառնալով, նա երբեք հանգիստ չէր մնում: Ինձ պատմեցին, որ բացի իր համար հատուկ մանկական խաղեր և զվարճություններ որոնելուց, նա կստիպեր իր պառաւ տատին և մորը, մանավանդ ձմեռվա երկար գիշերներում, որ շարունակ հրեշների զրույցներ, կախարդական հմայքներ, առասպելներ և հեքիաթներ պատմեն, և ինքն էլ կլսեր ականջները լարած: Րաֆֆին իր մանուկ ժամանակից սիրել է հեքիաթներ, հին զրույցներ, դիվական և ճիվաղական արշավանքների պատմություններ լսելը, որոնցով էլ նա իր միտքը սրել է: Մանուկ Րաֆֆին իրանց տան հյուրերին էլ շատ անգամ ունկնդիր կլիներ՝ նրանց խոսակցությունը լսելու համար և երկար նրանց կնայել, նկատելու համար, թե նրանք ինչ տիպեր ունեն, որպեսզի նրանց նկարի թղթի վրա: Թեև անհեթեթ, բայց վերջապես նա գծագրում էր մի դեմք, որքան որ մի մանուկ կա-

րող էր նկարել և վերջացնելով իր գծագրածը, ցույց կտար սամեն մի հանդիպողին:

Ով որ մոտից ճանաչել է Րաֆֆին, նա անշուշտ նկատած կլինի, որ նա նկարչության ձիրք և ճաշակ ուներ: Րաֆֆին իր այդ ճաշակն սուսջ տանելով, մի ժամանակ գեղեցիկ կերպով նկարում էր մարդկանց պատկերներ, ծաղիկներ, աշխարհագրական քարտեզներ և այլն: Մասնավոր սեր էլ ուներ հրացան գործածելու և ձի հեծնելու վրա, որ սովորել էր հենց իրենց տանը և իրենց գյուղում: Կարդալու և սովորելու մեջ այնքան հաջողակ է եղել Րաֆֆին, որ թե իր ծնողների և թե իր ուսուցչին զարմացրել է:

Նրա հայրը շարունակ նկատելով, որ իր անդրանիկ որդի Հակոբի մեջ մի մշտավառ կրակ կա դեպի ուսումն ու կրթությունը, մի օր նրան ասում է. «Հակոբ, մեր այս Փայաջուկի դպրոցից բան չի դուրս գա, արի քեզ հետս Թիֆլիս տանեմ, այնտեղ լավ դպրոցներ կան, թե լավ հայերեն կսովորես, թե ռուսերեն և թե առուտոր, որ մեզ շատ պետք է»: Պատանի Րաֆֆին, որ արդեն տեր-թողիկյան տաժանակի դպրոցը հագիլ թե ավարտելով՝ այնտեղից հեռացել էր, այլևս իր հոր օձիքը բաց չթողեց, շարունակ ստիպելով նրան, որ մի օր սուսջ Թիֆլիս գնան:

Րաֆֆին, որպես ուշիմ պատանի, սկսել էր թե՛ իր հոր գործերի մեջ պիտանի լինել և թե՛ իրանց գյուղացիական-մշակական գործերում օգուտակար լինել, այնպես որ նրա ընտանիքի անդամները մի առանձին համակրական հայացքով էին նայում նրա վրա: Ամբողջ ընտանիքի աչքը Րաֆֆիի վրա էր, որպես իր հոր արժանավոր հաջորդի, իսկ Մելիք-Միրզան էլ շարունակ ասում էր, թե «Իմ Հակոբի հատը ողջ Սալմաստում չկա»:

Վերջապես դրանից մի կարճ ժամանակ հետո 16 տարեկան Րաֆֆին<sup>4</sup> արդեն Թիֆլիսումն էր: Նա մի քանի տարիներ մնալով<sup>5</sup> Թիֆլիսում, իր ուսման ծարավին հագուրդ էր տալիս, հայերեն լեզուն սովորելով Բելախյան Կարապետ վարժապետից, որն այն ժամանակ Թիֆլիսում մեծ հոշակ

ուներ, որպէս հայկաբան, իսկ ռուսերենը և ուրիշ ստարկաները նա սովորում էր Թիֆլիսի գիմնազիայում, որպէս պատրաստություն բարձրագույն ուսում ստանալու համար: Բայց այս վերջինը տեղի չունեցաւ, որովհետեւ հազիվ թէ նա գիմնազիան ավարտել էր, որ նրա ծնողները թախանձագին խնդրել էին նրանից, որ վերադառնա Սալմաստ և ձեռք առնէ իրանց տան առևտրական գործերի դէկը, նկատել տալով, որ նրա հայր Մելիք-Միրզան ծերացել է և հիւլանդագին դարձել, իսկ նրա եղբայրները անչափահաս են:

Րաֆֆին թեւ ակամայից, բայց վերջապէս 1856-ին համոզվեցաւ վերադառնալ իր ծննդավայրը՝ Փայաջուկ, իր 21 տարեկան հասակում<sup>6</sup>:

### Գլուխ երրորդ

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ 1858-ԻՑ ՄԻՆՉԵՎ 1868

Եւ Րաֆֆիի գործունեությունը բաժանել եմ երեք շրջանների: Առաջինը՝ 1858-ից — 68. երկրորդ շրջանը՝ 1868—78, իսկ երրորդ շրջանը՝ 1878-ից մինչև 1888 թվականը:

Րաֆֆին Սալմաստում սկսել է գործել թե՛ որպէս գրագետ և թե՛ որպէս առևտրական մարդ, այլև թղթակցելով այն ժամանակի պարբերական հայ օրագիրներին: Մի կողմից էլ նա նյութեր էր հավաքում իր ապագա հեղինակությունների համար, իր եռուն մտքերը լույս աշխարհ բերելու համար: Թիֆլիսի կյանքի նիստն ու կացը և ստացած կրթությունը նրանում առաջ էին բերել վարքի ու բարքի հեղափոխություն, այնպէս որ այլևս Սալմաստի գյուղական կյանքը նրան դուր չէր գալիս: Նա փոփոխության ենթարկեց իրանց տան ապրուստի և հագուստի ձևերը, եվրոպական եղանակով կահավորեց իր պարապմունքի սենյակը, որ մինչ օրս էլ կա: Այդ սենյակում դասավորեց այն բազմաթիվ գրքերը, որ բերել էր իր հետ Թիֆլիսից, թող նր հետգնեստէ էլ բերել էր տալիս Պոլսից թե՛ նույն քաղաքում, թե՛ Չմյուռնիայում և թե՛ Մխի-

թարչան հայրերի ձեռքով լույս տեսած ուսումնական և կարեվոր գրքեր, որոնցով նա մի ճոխ գրադարան կազմեց և սկսեց ընթերցասիրել նրանց:

Երիտասարդ Րաֆֆին իր տան գործերը կարգի բերելուց հետո սկսեց զանազան դպրոցների և հասարակական օգտակար հիմնարկությունների ծրագիրներ կազմել Սալմաստի մի քանի հաշարնակ գյուղերի համար և պահանջում էր, որ դրանք անհապաղ գործադրվեն: Սակայն նա խորհրդակիցներ և օգնականներ չունենալով (ունենալու համար չէր մտածում), ուզում էր միայնակ գործել բացարձակ իրավունքներով: Հիշյալ ծրագիրները առաջացնելու համար հարկավոր էր երկար համբերություն և ժողովրդականություն՝ մի բան, որ պակասում էր երիտասարդ և անփորձ Րաֆֆիին: Բացի այդ, նա սկսել էր ազդեցություն բանեցնել իր շրջապատողների և հայ առևտրական շրջանի մարդկանց վրա, նախատելով նրանց գյուղական շատ հասարակ կյանքը և շատ անգամ էլ նրանց երեսն ի վեր տալով նրանց չափազանց շահասիրությունը: Մտրակելով գյուղական համայնքների ձախ ու ծուռ կողմերը, նրան համակրող փոքրամասնությունն էլ փոքր առ փոքր նրանից հեռացավ: Իր հորը և ազգականների խորհրդին էլ չէր լսում այդ դեպքում. «Ձեր խստովելու գործը չէ», — ասում էր նա, բնավ միտ չդնելով, որ Սալմաստի գյուղերի համար դեռ այդպիսի ծրագիրները և հրապարակախոսությունները վաղաժամանակ էին: Հենց դրանցից էլ առաջացավ այն մեծ թշնամությունը, որ ինչպես պիտի տեսնե ընթերցողը հետևյալ գլուխներում, Րաֆֆիի ամբողջ առևտրական գյուղական ահագին տունը և կարողությունը քարոտքանդ արեց, ուստի և նրա կազմած բոլոր կրթական ծրագիրներն էլ, ընդունելություն չգտնելով, իսպառ ջուրն ընկան: Ով կարող է ասել, որ Րաֆֆիի առաջարկությունները գեղեցիկ և օգտակար չէին, բայց սխալը նրա մեջն է, որ նա վիրավորական լեզու գործածելով՝ չկարողացավ նահապետական գյուղացիներին գրավել<sup>7</sup>:

Տեսնելով Սալմաստի հայ հասարակության և նույնիսկ իր ազգականների սառն և անտարբեր վերաբերմունքը դեպի իր ազգօգուտ առաջարկությունները և իր անձը, Րաֆֆին սրտի խորին ցավով թողեց այդ բոլորը և այնուհետև ազգային հրապարակից քաշվելով՝ անձնատուր եղավ իր գրական և առևտրական գործերին:

Այժմ տեսնենք, թե նա այս առաջին շրջանում ինչպես է գործում, որպես գրական մարդ և որոնք են այն աղբյուրները, որոնց դիմել է նա, որպես նյութ իր ապագա գրվածքներից շատերի և գլխավորապես «Կայծերի» համար: Պետք է ասած, որ գրեթե ընդմիշտ Րաֆֆիի մտագաղափարն էր Թուրքահայաստանը. նա շարունակ խոսում և հետաքրքրվում էր թուրքահայերի մեջ պատահած զրկանքների, առեւժանգությունների և անարդար անցքերի մասին: Նրա սրտի մեջ այնպես վառ էր ազգային զգացմունքների կրակը, որ իր լսածներն ու կարդացածները բավական չհամարելով, վճռեց ճանապարհորդել այդ կողմերը և իր սեփական աչքերով տեսնել իր թշվառացած հայրենիքը, պտտել մեր նախնիքների շինած գեղազարդ վանքերը, տեսնել պատմական Եփրատ գետի հրաշալի ափունքները և վերջապես անձամբ լսել իր անբախտացած հայրենակիցների ողբն ու կոծը: Ծիշտ այդ միջոցին էլ մի խումբ հայ ուխտավորներ Սալմաստից գնում էին Մուշի ու Կարապետի վանքը, Րաֆֆին էլ, որպես ուխտավոր, մտավ նույն խմբի մեջ և կարավանով ուղևորվեց դեպի Մուշ:

«Ես ուղևորվեցի,— ասում էր Րաֆֆին,— ուխտավորի անունով, որովհետև խենթի տեղ կոչեին ինձ, եթե ես պարզապես ասեի, թե գնում եմ հայրենիքը ուսումնասիրելու: Այդ ժամանակներում լավ լուսաբանված չէր հայրենիք բառը. տեր— թողիկները և խալֆաները անեծքի տակ բանադրել էին այդ սրբազան բառը»:

## Գլուխ չորրորդ

## ՐԱՖՖԻԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Րաֆֆին 1857-ին, իր 21 տարեկան հասակում<sup>9</sup>, անցնելով թուրք-պարսկական սահմանը, մի քանի հայաբնակ գյուղեր և վանքեր տեսնելուց հետո, գնաց հասավ Վան քաղաքը, իջնելով Ալգեստանում: Գնաց տեսավ և Վարազա վանքը, Ժառանգավորաց դպրոցը, ծանոթացավ Խրիմյան Հայրիկի հետ, գովեց նրա արած օգտակար բարեկարգությունները Վարազա վանքում: Դրանից հետո մտնելով նավակ՝ գնաց Աղթամարի վանքը և այնտեղից դուրս եկավ հուսահատ և տխուր տպավորության տակ: Այդ տխուր տպավորության տակ միայնակ և լռիկ գնաց նստեց Բզնունյաց ծովակի ափերի մոտ և զարկելով իր սրտի քնարի լարերին, ողբաձայն երգեց իր անդրանիկ երգը:

«Ձայն տուր, ով ծովակ, ինչու լռում ես,  
Ողբակից լինել չկամիս դժբախտիս.  
Ծարժեցեք զեփյուռ ալիքը վետ, վետ,  
Խառնեցեք արտասուքս այս ջրերիս հետ:

Հայաստանի մեջ անցքերին վկա,  
Սկզբից մինչ այժմ խնդրեմ ինձ ասա,  
Միթե միշտ այդպես կմնա Հայաստան,  
Փշալից անապատ երբեմն Բուրաստան»:

Այնուհետև թողնելով Վասպուրականը և նրա շրջակայքը, Րաֆֆին բազմաթիվ վանքեր ու գյուղեր այցելելով՝ գնաց հասավ Տարոն, տեսավ Մուշի մշուշապատ դաշտերը և ս. Կարապետի վանքը, որ այնքան հռչակ ունի բարեպաշտ հայերի մեջ: Րաֆֆին ճիշտ ս. Կարապետի որոշ ուխտի օրն էր հանդիպել վանքը<sup>10</sup>, ուր և տեսել էր հարյուրավոր ուխտավորներ, որոնք եկել էին հեռավոր երկրներից՝ այր, կին և երեխա, թափելով վանքը դրամի և ալյուսի ուխտ-

յալ նվերների ահագին հեղեղ: Ինչպես ճանապարհի վրա հանդիպած վանքերը, այնպես էլ ս. Կարապետի հարուստ վանքը գոհացուցիչ ազդեցություն չէին թողել նրա վրա: Թեև Րաֆֆին մասամբ հասավ իր նպատակին, բայց իր ցանկացած վայրերից շատերը չկարողացավ աչքից անցկացնել, թողնելով որ մի այլ հարմար ժամանակ այցելե նրանց: Այնուամենայնիվ, նրա հոգու թափանցող աչքերը նկատել էին այդ վայրերում և վանքերում անթիվ վիպական անմշակ նյութեր: Դժվար էր այդ թվականներին միայնակ ճանապարհորդել այն կողմերը, նույնիսկ այսօր էլ: Այն երկարաշար ուխտավորների քարավանը, որի հետ Րաֆֆին ուղևորվել էր Մուշ, վերադառնում էր Սալմաստ, Րաֆֆին էլ ուտիպված էր ընկերակիցների հետ նույն քարավանով վերադառնալ իր հայրենիքը, բերելով իր հետ բազմաթիվ զանազան նկարագիրներ, յի տեղագրական և այլ պիտանի ծանոթություններով, որոնք հետզհետե դասավորելով և մշակելով, ապագա վիպասանությունների և գրվածքների հիմքը դարձան:

Րաֆֆիի գրական գործունեությունը սկսվում է 1858-ից և դադարում է 1888 թվականին, երեսուն տարվա մի շրջան. բայց պետք է ասել, որ նա միայն այդ շրջանի վերջին տասնամյակումն է բեղմնավոր իր բազմազան գրվածքներով, ինչպես կտեսնենք իր տեղում: Րաֆֆին թուրքաց Հայաստանից վերադառնալով Սալմաստ, 1858 թվականից սկսեց թղթակցել «Հյուսիսստիպլին» և «Արծվի Վասպուրականին»: Նա սաստիկ հետևող էր «Հյուսիսստիպլին», թե՛ լեզվին և թե՛ նրա ուղղությամբ: Երկու գեղեցիկ և հետաքրքիր գրվածքներ իր ճանապարհորդական տպավորություններից նա զետեղեց «Հյուսիսստիպլում», որոնցից մեկն էր «Աղթամարա վանքը». նրանք տպվեցին, որքան հիշում եմ, 1860 թվականին<sup>11</sup>: Նրա գրասեղանի վրա միայն կարելի էր գրունել այն ժամանակի հայ պարբերական թերթերը՝ «Մասիս», «Մասյաց աղավնի», «Հյուսիսստիպլ», «Կոռնկ» և «Արծվի Վասպուրականի»: Առաջին անգամն էր, որ ես տեսա մի

պարսկաստանցի հայի, որ իր հայրենասիրական զգացմունքները հաղորդում էր օրագրներին, որպես թղթակից, որովհետև այդ թվականներին ամբողջ Պարսկաստանի հայերի մեջ ոչ միայն ուսման և ուսումնականի, այլև լրագիր ստացողի սով և սնանկություն կար:

Բաֆֆին ավելի քան ընթերցասեր էր. նրա հարուստ գրադարանը, հետզհետե ստացած ոռու և հայ թերթերը և իր գրելիքները այնպես էին զբաղեցնում նրան, որ շատ անգամ նա շաբաթներով տանից դուրս չէր գալիս: Բնավորությամբ արդեն մելամաղձոտ, նա հազիվ թե մասնակցում էր գյուղական զբոսանքներին և հանդեսներին. նա հարգում էր ծերերին և նրանցից էր ձեռք բերում հարց ու փորձով, թե ինչեր են անցել հին ժամանակներում: Երբեմն էլ գնում էր նա Սալրա գյուղը, որտեղից էլ նյութեր էր հավաքում «Խաչագողի հիշատակարանը» կազմելու համար: Բաֆֆին սիրում էր հայկական երգերը, մանավանդ «Մայր Արաքսին». այս վսեմ բանաստեղծությունը նա շատ իրավամբ անվանում էր հայոց երգերի թագուհին:

### Գլուխ հինգերորդ

Բաֆֆիի հեղինակություններից այդ միջոցին գրեթե պատրաստ էին նրա գրասեղանի վրա բազմահատոր «Փունջերը», «Խաչագողի հիշատակարանը», «Կալծերը», «Սալքին» և «Խլվիկը»<sup>12</sup>: Վերջին երկուսը մնում են մինչև օրս անտիպ<sup>13</sup>: «Խլվիկը», որ մի սովոր աշխատություն է, իր չբավորության օրերում գրավ է դրել և գտնվում է իր պարտապանի ձեռքում:

Բաֆֆին սկզբում սիրահար լինելով քնարին և բանաստեղծական ճկուն ու համրած տողերին, այդ ուղղությամբ էլ առաջ էր տանում «Փունջերի» հատորները: Ս. Նազարյանցի ճառախոսությունները, Կիկերոնի թարգմանությունները, «Հանդես նոր հայախոսության» երկու հատորները,

Նալբանդյանցի գեղեցիկ գրվածքներն ու նրա թարգմանած «Թափառական Հրեայի» I հատորը մի-մի ուղեցույց եղան Բաֆֆին, որոնցով էլ նա իր աշխարհաբարը հարթեց:

Այժմ տեղն է, որ նրա կյանքում տեղի ունեցած մի քանի փոքր ճանապարհորդությունները, այլ և մի քանի ուսումնական խոսակցությունները նկարագրեմ, որոնց ես էլ ներկա եմ եղել:

Սալմաստումն ենք: Մի օր Բաֆֆին ինձ առաց. «Ես արդեն ձանձրացել եմ տանը միայնակ նստելուց և որոշել եմ այս ատավոտ ձիով մի գլխուսնք կատարել ձեզ հետ. մի այլ բարեկամ ընկեր էլ ունենք, արդեն ձիերը պատրաստ են: Դուք գիտեք, — առաց նա, — որ Ալի սղա Ծիկակը, որ մեր կողմերի քուրդ վրանաբնակների ցեղապետն է, ինձ հետ բարեկամ է. գնանք նրա այժմյան կացարանը՝ Կաշկալիս, որ մի օդասուն և զվարճալի ձորակ է՝ գեղեցիկ տեսարաններով, այստեղից հազիվ թե 20 վերստ լինի. սա մի փոքրիկ ձիարշավ է, գնանք և մեր թթված կյանքին մի փոփոխություն տանք: Մենք կեսօրից սուսջ այնտեղ կլինենք»:

Մենք ուղևորվելով Սալմաստից դեպի արևմուտք և կտրելով տափարակ դաշտագետիկը, որի վրա փոված եմ բազմաթիվ գյուղեր, այնուհետև ստոիճանաբար բարձրանալով սարահարթի վրա, մոտեցանք Հախլերան հալաբնակ գյուղին, որ մոտ է քրդաբնակ գյուղերին: Մենք պետք է անցնեինք այդ գյուղի մոտով: Ավելի սուսջ գնալով, մենք լսեցինք մի հրաշալի ձայն, մի խիստ ավարժելի երգի գեղ-գեղանք, մի տեսակ քրդախառն հայերենով: Երգողը Հախլերան գյուղի ծերունի տանուտերն էր, որ իր սիրուն եզնե-րը գովելով կկլացնում էր իր սիրուն «լե-լե»-ները, զբաղված իր դաշտապահ մշակությունով: Նա մի բարձրահասակ, աշխույժով լի ծերունի-երիտասարդ էր, կրում էր իր ուսերի վրա մի հրացան, որը ցույց էր տալիս, որ նա պատրաստ էր ինքնապաշտպանության համար: Դժնդակ գյուղական վար ու ցանք, տոթակեզ արևը, անընդհատ թշվառությունները չէին կարողացել մեռցնել նրա մեջ կորովն ու կենդանությունը:

Երբ մենք մոտենալով նրա աչքովն ընկանք, նա իր արորը կանգնեցրեց և լռեց երգելուց: Նա ճանաչեց Րաֆֆին. երկու բարեկամները հեռվից իրար նայեցին և գուցե սրտով էլ իրար հետ խոսում էին:

«Ես քե՛ն ճաշնասես, Մելիք-Միրզայի լան»,— խոսեց հեռվից ծերունին, միևնույն կերպով էլ պատասխանեց Րաֆֆին: Իսկ ծերունու հրապուրիչ գլուղական երգի բովանդակությամբ, որ ես արձանագրելով պահել եմ մինչ օրս, մոտավորապես հետևյալ կերպով էր կազմված:

Ժիր եգերըս, առաջ տարեք արորը,  
Արտը կես է, դեռ չենք հերկել բոլորը,  
Անձրև կը գա, կը կանաչեն արտերըս,  
Ծարժվեցեք, շատ ու շատ են դարդերըս:

Նախորդ հունձըս քուրդը տարավ, կուլ տվեց,  
Կեր ու գարի, հարդ ու ցորեն չը թողեց,  
Ծուտով կը գան աշուն, ձմեռ, բուր, բորան,  
Սով կը հայտնե անբախտացած Հախվերան,

Դե՛հ քաշեցեք, առաջ տանենք վար ու ցան,  
Տերն է միայն իմ արտերիս պահապան,  
Իրիկվան դեմ ձեզ կարծակեմ, կեր կը տամ,  
Դեհ վար արեք, ձեր ոտների՛ն ես դուրբան:  
Լէ, լէ, լէ, լէ, լօ, լօ, լօ, լօ (ամեն տան վերջում):


Րաֆֆին ինձ ասաց, որ կարծե՛ ծանոթանալ այդ քաջ գլուղականի հետ. նա շատ անգամ կովի բռնվելով քուրդերի հետ՝ քաջի պես դիմադրել և նրանցից մի քանիսին վիրավորել է, հենց դրա համար էլ այս կողմերի քուրդերը նրանից պատկառում են: Եթե չլիներ նա, վաղուց արդեն Հախվերան գյուղը կդադարեր գոյություն ունենալուց: Եկեք, որ ձեզ էլ նրա հետ ծանոթացնեմ: Այս գյուղը, ասաց Րաֆֆին, լինելով քուրդերի ճանապարհի վրա, երբ նրանք ձմեռը ոչինչ պաշար չեն գտնում իրանց տներում, հարձակվում են Հախ-



Բաբյա կինը՝ Սենա Բաբյին Արամ և Արշակ որդիների հետ



Տիգրան Նազարյան  
(1858—1926)



վերանի վրա և թալանում, կողոպտում են, որքան ուժ ունեն: Պատահել է, որ մույն գյուղի բնակիչները ամբողջ ձմեռը առանց պաշարի են մնացել. այդ քաջ ծերունին է միայն, որ զենքը ձեռին իբրև հերոս կարողանում է հափշտակության առաջն առնել:

Երբ մենք բոլորովին մոռեցանք ծերունի երկրագործին, արտի մի ծայրում Րաֆֆին սովորական բարևներով ողջունելուց հետո, ասաց նրան:

— Մենք հոժար չենք, ծերունի հայր, որ դուք ձեր դաշտային աշխատությունը կանգնեցնեք մեր պատճառով, դուք առաջ տարեք ձեր օրհնյալ արտերի գործը, թող աստված ուժ և կարողություն տա ձեզ և ձեր սիրուն եզներին:

— Դուք աստուծո հյուրն եք, սիրելի որդիք, դուք սոված կլինեք, արդեն արևը մեր գլխի վրա է կանգնած,— չպատասխանեց ճահապետական ծերունին:— Վայր իջեք ձիերից, առանց մի բանով ձեզ հյուրասիրելու թույլ չեմ տա, որ դուք հեռանաք մեր գյուղի սահմանից:

Մենք թեև քաղաքավարական խոսքերով աշխատեցինք շընդունել նրա պարզ հյուրասիրությունը, բայց նա ստիպում էր, որ ընդունենք, և կարծես դիտմամբ երկարացնում էր իր խոսակցությունը՝ մի որևէ բանի սպասելով, այս ու այն կողմ հայելով:

Ծերունու արտի մյուս ծայրին երևում էին ուռենիներ: Մենք նկատեցինք, որ մի երիտասարդ գյուղացի գյուղի կողմից գալով՝ արագ ու մեծ քայլերով գնում էր դեպի դաշար ու սիրուն ուռենիները: Նա իր երկու ձեռներում բռնած ուներ մի-մի բան:

— Ա՛յ, որդիս եկավ գյուղից,— ասաց ծերունին,— նա ինձ համար ճաշ է բերում: Աստված սիրեք, մի մերժեք, ինձ հետ մի կտոր բան կերեք: Գնանք միասին դեպի այն ծառերը, որոնք ես եմ տնկել և մշակել, դրանք ծառայում են ինձ որպես հովանի՝ տոթից պատահարվելու համար, և որպես ճաշարան:

Չուգելով ծերունուն արտաքին թողնել, մենք ընդունեցինք և ձիերից վաղ իջնելով, գնացինք, նստեցինք ուտեցիների ստվերում, ուր նրա որդին էլ արդեն ճաշը տարածել էր կանաչ խոտերի վրա: Ծերունին պատվիրեց իր որդուն, որ եզներին արձակե, որպեսզի հանգստանան, և ինքն էլ հսկե մեր ձիերի վրա: Ծաշը պարունակում էր ճերմակ լավաշ հացեր, պանիր, կարագ, քսած մածուն և մի քանի հատ թերխորով հալկիթներ, իսկ խմելու համար կար մի մեծ փարչով սառը թան, որ դրված էր ծառերի տակից հոսող փոքրիկ աղբյուրի ջրի մեջ:

— Խնդրում եմ,— ասաց ծերունին,— ախորժակով ուտեք այս գյուղական պարզ ճաշից, օրհնյալ մարդիկ, ձեր նախնիք էլ այսպիսի ուտելիքներով են սնվել:

Ասաց ու խաչակնքեց սեղանը: Անկարելի է նկարագրել, թե որպիսի ախորժանքով էինք ուտում նրա անպաճույճ սեղանից: Ուտելու միջոցին ծերունին երկարորեն պատմում էր իրանց գյուղացիների թշվառության մասին:

— Մենք,— ասում էր նա, —մեր ունեցածի տերը չենք, ցանում ենք, մշակում ենք և հեծում, բայց դարձյալ սոված ենք, ապրում ենք դառն ստրկության մեջ: Մի կողմից գյուղատերն է մեզ կեղեքում, մյուս կողմից քուրդն է թալանում: Ես մի քիչ ավելի ունեմ, քան թե մեր մյուս գյուղացիները. եթե ես իմ ունեցածից տալիս եմ նրանց՝ ես, ընտանիքս և անասուններս զրկված ենք մնում, իսկ եթե չեմ տալիս՝ նրանց դառնագին մրմունջներին չեմ կարողանում դիմանալ: Ես մի քանի անգամ,— ավելացրեց ծերունին,— ինչպես գիտեք, մեր մի քանի արտոտ գյուղացիների հետ՝ զենքը ձեռներիս քուրդերի դեմ պաշտպանվել ենք և նրանց հարկավոր դասը տվել ենք. բայց ինչ արած, նրանք շատ են, լավ զինված, իսկ մենք քիչ ենք, նրանք վրեժ են լուծում:

Մենք զգացված ծերունու խելացի, բայց տխուր պատմությունից՝ մի-մի հուսադրական խոսքեր ասացինք, իսկ Րաֆֆին ուղղեց նրան հետևյալ խոսքերը:

— Դուք մի վհատեք, ծերունի հայր՝ աստված մեծ է, ձեր պաշտպանողական արիությունները անվարձ չեն մնա: Դուք ամուր բռնեցեք ձեր ձեռքում Մովսէսի գալազանը, հովվի պէս կտաավարեցեք ձեր գյուղի փարախը և համբերեցեք:

Լսելով այս խրախուսական խոսքերը՝ ծերունու տխրամած դեմքը մի քիչ զվարթացավ, և սկսեց խոսքը փոխել:

— Երանի ձեզ,— ասաց նա,— որ գրոց աշակերտ եք. մենք՝ գյուղացիներս, կույր ծնվել ենք այս լուսավոր աշխարհում և կույր էլ պիտի մեռնենք: Ես հոգիս կտայի, եթէ մեկը լինէր, որ իմ միակ երիտասարդ որդուս մի քիչ ուսում սովորեցնէր:

— Վարժարան չունե՞ք,— հարցրինք մենք:

— Ի՛նչ եք խոսում, սիրելի որդիքս,— պատասխանեց ծերունին,— Հախվերա՛ն ու վարժարա՛ն:

— Իսկ քահանա՞, ինչպե՞ս,— հարցրեց Րաֆֆին:

— Մեր քահանան վաղուց է, որ սեռել է, մեզ այժմս Սառնա գյուղի Ն... քահանան է մխիթարում. ձմեռը նա գալիս է մեր գյուղը և մնում է մի քանի շաբաթներ, երկար գիշերներում նա մեզ հավաքում է մի տան մեջ և սկսում է մեզ պատմել մեր նախնյաց գործերից, մեր հայությունից և մեր սուրբ հավատից: Նա մեզ քաջակերում է, մեզ ամրապնդում է մեր քրիստոնեական կրոնի մեջ: Նա այնպէս բարի է,— ասաց ծերունին,— նրա պէս քահանա ողջ Սալմաստում չկա. ա՛խ, ես ծառա եմ նրա օրհնյալ գլխին:

Համակրելի ծերունին թեև գրագետ չէր, բայց բավական հասկացող մարդ էր. նա ճանապարհորդել էր Կովկասի կողմերը, գնացել էր մինչև Երուսաղէմ: Երբ ճաշը վերջացավ, մենք ոտքի կանգնելով շնորհակալություն հայտնեցինք, իսկ Րաֆֆին ասաց մոտավորապէս հետևյալը:

— Թո՛ղ հայր Աբրահամու սեղանի նման լիառատ մնա քո սեղանը և քո ցորենի ու պաշարի շտեմարյանները: Պատկառելի հայր, մենք քեզ չենք մոռանա: Ես բարեկամ եմ ցեղապետ Ալի աղայի հետ, այժմ էլ հենց ողղակի գնում եմ

նրա վրանը: Ես նրանից կխնդրեմ, որ իր հովանավորությունը տարածե ձեր գյուղի վրա և հույս ունեմ, որ այլևս քրդական անախորժություններ չեն պատահի ձեզ հետ:

— Շնորհակալ եմ,— ասաց նա,— բայց սևին ստպոնն ինչ անե, խեղճ խրատն ինչ անե:

Այնուհետև մենք բաժանվելով՝ ձիերը հեծնելու վրա էինք, երբ ծերունին ու Րաֆֆին մի կողմ քաշվելով երկար խոսում էին: Ինչ էին խոսում նրանք, այդ ես չգիտեմ, միայն վերջին խոսքերը, որ ես լսեցի, այն էր, որ Րաֆֆին ի նշան բարեկամության, խոստացավ մի հրացան ուղարկել ծերունուն:

### Գլուխ վեցերորդ

Հախվերանից երկու ժամ ճանապարհ գնալով, մենք հասանք Դաշկավիսի ձորակը, ուր մեր առաջ բացվեց մի հիասքանչ տեսարան: Այդ ձորակի երկարությամբ կարկաչաձայն անցնում է Ջուլա գետը, որի մի ընդարձակ եզերքում Ալի աղա Ծիկակը իր բնակության տեղ է հասկացրել, որպես զովարար ամառանոց: Ջուլայի երկու կողմերում ցից-ցից տնկված էին ցեղասպետի, իր բեգերի և իր հետևորդների նահապետական վրանները և եղեգնից հյուսած շրջափակները: Նրանց առաջ երևում էին բազմաթիվ թանկագին ճծույզներ և ձիեր՝ թամբած, կազմ և պատրաստ: Հարյուրավոր զինված քրդեր, իրանց երկար նիզակները գետինը խրած, իրանք անցողւարձ էին անում այս ու այն կողմը, կարծես նրանք պատրաստվում էին մի որևէ արշավանք գործելու: Եվ այդպես էլ էր:

Ալի աղան այդ օրերում իր քաջարի հեծյալներով մի հարձակում պիտի գործեր դրացի մի ուրիշ քրդական ցեղի վրա, իր վրեժը լուծելու համար: Սարերից հետզհետե իջնելով գալիս, ստվարացնում էին ցեղակից զինված քրդերի թիվը՝ իրենց ամենի ձիերի վրա նստած: Մի կատարյալ զորաբանակ

էր: Կեսօրից բալական անցած էր, երբ մենք հասել էինք ձորակը: Ալի աղան իր վրանից մեզ դիտելով՝ իր սայաապորներից մեկին դրկել էր սուաշ, որ գա, մեզ ուղեցույց լինի մինչև իր վրանը: Մենք անցանք մի շրջափակի առաջով, որտեղ չորս պատալ քրդոհիներ նստած՝ շարունակ հաց էին եփում իրանց սուաշ դրած երկաթե շարժական կաակարայի վրա: Թխած հացերը իսկույն խլում, տանում էին քրդերը անհաշիվ, ով ինչքան կամենար: Մյուս կողմից էլ՝ էշերի վրա բարձած ստացվում էին հետզհետե տուպակներով ալյուր: Ո՞րտեղից էին բերում այդ մեծ քանակությամբ ալյուրը:

Այնուհետև մենք անցանք մի քանի վրանների միջով, որ Շիկակ ցեղի բեգերն էին նստոտած, ծխելով իրենց չիբուխները: Մենք մտանք վերջին վրանը, որը ավելի ընդարձակ էր և մյուսներից ավելի շքեղ: Այդ վրանում իշխանական վսեմափառությամբ նստած էր ցեղապետ Ալի աղան մի քանի բեգերի հետ, որոնք կրում էին իրանց վրա քրդական ամեն տեսակ զենքեր և մի ինչ-որ խորհրդով էին պարապած: Քուրդ ցեղապետը մեզ տեսնելով, ոտքի կանգնեց և քաղաքավարի կերպով մեզ ընդունելուց հետո պատվիրեց, որ մեզ համար ճաշ պատրաստեն: Րաֆֆին շնորհակալություն հայտնելով ասաց, որ մենք արդեն ճաշել էինք:

— Գիտեմ ում մոտ եք ճաշել, այդ մասին ինձ լուր բերեցին,— ասաց Ալի աղան,— ես ճանաչում եմ այդ քաջասիրտ հային, որ ձեզ հյուրասիրել է:

— Ի դեպ,— պատասխանեց Րաֆֆին,— ես Հախալերան գյուղը պետք է հանձնարարեմ ձեր բարձր ու հայասեր ուշադրությանը, որը շատ անգամ հանիրավի ոտնակոխ է եղել անազնիվ և անարի քուրդերից, որոնք ձեր ցեղիցը չեն:

— Ծատ ուղիղ է,— ասաց նա,— բայց այսուհետև դուք վստահ եղեք, որ հախալերանցիները ապահով կապրեն, և ոչ ոք ալևս չի համարձակվի նրանց ձեռք դիպցնել:

Ալի աղան մոտ 60 տարեկան մի հաղթանդամ և բարձրահասակ մարդ էր: Նրա դիմագիծը ավելի հալի էր նմանում: Նա ուներ տանուից ավելի չափահաս և լավ պատերազմող

որդիներ: Քուրդ իշխանը իր ձեռքի չիբուխը Ռաֆֆին տվեց, որ ծխի. դա մի մեծ հարգանքի նշան է քրդերի մեջ:

— Այդ չիբուխը՝ իր սաթե թանկագին ամզուկով, հարդողիմենու առաքյալի վանքի վանահայր վարդապետն է ինձ նվիրել,— ասաց Ալի աղան,— որպես բարեկամական հիշատակ, և կարծե, որ դուք էլ դրանով ծխեք:

«Վարդապետ» և «հարդողիմենու» բառերը այնպես մաքուր արտասանեց, որպես մի հայ: Հեռզհետե սպասավորները ներս բերեցին արծաթե մատուցարաններով սուրճ և մի քիչ հետո թեյ, որոնցից հետո սկսվեցին զանազան խոսակցություններ, որոնք մի ժամից ավելի տևեցին: Ռաֆֆին նկատելով, որ օրը տարածամուս է՝ ոտքի կանգնելով շնորհակալություն հայտնեց Ալի աղային նրա արած սիրալիր ընդունելության համար և իրավունք խնդրեց հեռանալու ըստ արևելյան սովորության:

— Թեև մենք գնում ենք, — ավելացրեց Ռաֆֆին, — բայց հայտնում եմ, որ մենք սրտով չենք հեռանում ձեզանից:

Իսկ ցեղապետը, որ ուրախ տրամադրության տակ էր, հետևյալ կերպով պատասխանեց:

— Թե դուք և թե ձեր ընկերակից ճանապարհորդները իմ հյուրերս եք մինչև վաղը, թույլ չեմ տա, որ հեռանաք: Ես այս գիշեր ձեր պատվի համար քրդական երգողների և նվագածուների մի խումբ բերել կտամ, որ դուք զվարճանաք, և գիտեմ էլ, որ դուք կցանկանալիք դրան: Իսկ վաղն էլ, — ավելացրեց ցեղապետը, — ձեզ համար մի քրդական ձիարշավ անել կտամ, որ ավելի գոհ կմնաք:

Մենք ընդունելով մնացինք, որովհետև խոստացված տեսարանները մեզ համար շատ հետաքրքրական էին: Երեկոյան պահուն մենք մի պտույտ արինք կանաչազարդ ձորակում, Ալի աղայի երկու որդիների ընկերակցությամբ, որտեղ մենք հանդիպեցինք բազմերամ լորամարգիների, կաքավների և այլ թռչունների, որոնցից էլ հրացանի հարվածներով մենք վայր էինք գցել տասնից ավելի:

Մոյթն էր արդեն, երբ մենք, մեր զբոսանքը վերջացնելով՝ եկանք, մտանք Ալի աղայի վրանը։ Մեր ամեն մեկիս ձեռքում կային մի մի հրացան և մի քանի հատ սպանված թռչուններ։ Ալի աղան այդ նկատելով՝ մեզ ուղղեց հետևյալ խոսքերը։

— Հայի հրացանը միայն թռչուններ կարող է սպանել, ավելի ոչինչ։ Լավ չէր լինի, որ ձեր այդ հրացանները բարձր գնով վաճառեիք ինձ. գեղեցիկ են, հիանալի։ Հայը ֆլայ է (այսինքն՝ մշակ դասից),— վրա բերեց ցեղապետը մի կեղծ ծպիտով,— հա իսկապես չգիտե, թե հրացանը ինչի համար է հնարված։

Րաֆֆին ցնցված այդ խոսքերից, այսպես պատասխանեց։

— Հայը արժանավոր կերպով է գործածում իր զենքը։ Հայը իր անունը և իր հրացանը չի կեղտոտում կողոպուտի և անարդար մարդասպանության համար։ Հայը այն ժամանակ է զենքի դիմում, իշխան, երբ տեսնում է, որ իր կյանքին սպառնում են և կամ գործադրում է նրան զվարճանալու համար։ Իսկ քուրդը, հակառակ իր քաջ անվան, վաղուց արդեն իր զենքի վրա թողել է անարդար արյան քծեր, որ սակայն ցավալի է։ Այս խոսքերից գուցե դուք վիրավորվեք, իշխան, բայց դուք և ձեր ցեղը բացառություն եք կազմում, այս իմ նկատողությունները այլ և այլ քրդական ցեղերի մասին են, և այս փաստերով կարող եմ հաստատել։

Ալի աղան, որ լուռ լսում էր, կարծես զղջալով իր ասածների վրա՝ այսպես պատասխանեց.

— Ձեր ասածները հեռու չեն ճշմարտությունից. տմարդի դեպքեր շատ են պատահել մերայինների ձեռքով, բայց դրանք քնդհանուր չեն. քուրդ էլ կա, քուրդ էլ։ Բայց, սաացեք խնդրեմ, դուք որտեղ եք սովորել հրացան արձակելը։ Հայ վաճառական դասը մեր կողմերում ծանոթ չէ բնավ զենք գործածելու հետ. որդիքս ինձ պատմեցին, որ դուք երեքդ էլ քալական հաջողակ կերպով հրացան եք արձակում։

Րաֆֆին պատասխանեց.

— Ես չգիտեմ իսկապես, թե իմ ընկերները ինչ առիթներով են ծանոթացել հրացանի հետ, իսկ իմ մասին ես այս կասեմ, որ մանկությունից մի առանձին սեր ունեի հրացանի վրա: Երբ ես 8 տարեկան էի, մի երկար ճիպոտ ունեի ձեռքիս, նրա մի ծայրը դանակով տաշելով տափակացրեցի, մի մատնաչափ տեղը ծայրում բարձր թողնելով, որպես հեճարան, հետո խսիրից կես մատնաչափ լայն և մի թիզ երկար տաշելը կամարի նման կոացնելով՝ նրա մի ծայրը թեշով կապում էի ճիպոտի տաշած տեղի մի կողմին, իսկ մյուս ծայրը կացնում էի հեճարանին, որտեղ էլ պնդացնում էի խսիրից տաշած մի սլաք գրչածայրի մեծությամբ: Երբ մատներովս դիպչում էի կոացած խսիրի կամարին, սլաքը դուրս թռչելով դիպչում էր ճանձին կամ մրջյունին: Այս եղանակով հազարավոր ճանձեր և մրջյուններ սպանեցի: Հետո նկատելով, որ հասակավոր մարդիկ հրացան արձակելով թռչուններ են վայր գցում, բայց որ հրացանը ինձ համար անմատչելի է, ինձանում մի այլ միտք ծագեց: Ես ձեռք բերեցի երկու արշին երկարությամբ մի եղեգ, որի մեջը դասարկ էր, նա ինձ ծառայում էր որպես հրացանի փող, իսկ գնդակների տեղ գործ էի ածում սիսեռներ կամ կավից շինած փոքրիկ կլոր գնդակներ, որ արևում չորացնելուց հետո՝ նրանցից մի քանիսը բերանս էի դնում և փողի մի ծայրն էլ դիպցնում էի բերանիս և փչելով՝ գնդակները փողի միջանցքով հասցնում էի ուղղած նպատակիս: Այս եղանակով էլ բավական փոքրիկ թռչուններ որսացի, որոնք փոքրիկ գրնդակների հարվածից թեև չէին մեռնում, բայց շփոթված վայր էին ընկնում, իսկ ես վրա հասնելով բռնում էի նրանց: Բայց երբ ես բավական մեծացել էի, հրացան արձակելու սերն էլ ավելի էր մեծացել ինձանում. ես փոքր առ փոքր ծանոթացա իսկական հրացանի հետ, մանավանդ Կովկասի և այլ տեղերի ճանապարհորդություններն էլ ինձ այդ բանի մեջ նպաստեցին և այսօր, ինչպես տեսնում եք, բավական վարժված եմ:

— Միշտ է,— ասաց Ալի աղան,— Կովկասում դուք նախելի ծանոթացած կլինեք հրացանի հետ. ես լսել եմ, որ հալ ազգը բավական մեծ թվով քաջ հեծյալներ, աստիճանավորներ և զորապետներ ունի կայսերական բանակի մեջ, և հետզհետե սովելանալու վրա են: Ռուս ազգը մեծ ազգ է և մեծ կայսրություն, մենք միայն այդ կայսրությունից ենք վախենում և ակնածում:

### Պլուխ յոթերորդ

Արդեն գիշեր էր: Քուրդերը շատ վաղ են ընթրում: Ալի աղան պատվիրեց, որ ընթրիքը պատրաստեն: Այս պատվերը լսելուն պես, մի կողմից քուրդ բեգերը ներս մտնելով, եկան իրանց որոշ տեղերում նստեցին, իսկ մյուս կողմից էլ սպասավորները մինը մյուսի ետևից ներս բերեցին պարսկական կլոր պղնձե սինիների (մատուցարան) մեջ դասավորած ընթրիքը: Ալին 2 կամ 3 հյուրի առաջ դրեց մի-մի սինի և մի խոր ամանով թան, մեջը դրած մի խոշոր փայտե շերտի: Ընթրիքը պարունակում էր, բացի սովորական կաթնեղենից, և զանազան թռչուններից պատրաստած կերակուրներ: Ի պատիվ հյուրերի պատրաստված էր և մի մեծ գառը՝ ամբողջապես խորոված մի առանձին սինիի մեջ: Սպասավորներից մեկը, նստելով այդ սինիի մոտ, խորոված գառը մի րուպեում իր ձեռքերով պատառոտեց և դնելով գառան պատառները թեփշիների մեջ, բաժանեց սեղանակիցներին: Քուրդերը, ինչպես և բոլոր մահմեդական ազգերը, ճաշի և ընթրիքի միջոցին ոգեղից որևէ ըմպելիք չեն գործածում և չեն էլ խոսում: Ամեն մարդ լուռ և գլուխը թեքած իր սինիի վրա, ձեռքով ուտում էր և շերտիկով թան խմում, մինչև որ ցեղապետ աղան գլուխը վեր բարձրացնելով ուղղվեց: Դա մի նշան էր, որ ընթրիքը վերջացած է, որից հետո սամեքն էլ իսկույն ուղղվեցան: Ծառաները ձևոք լվալու ջուր բերեցին, հետո սուրճ մատուցին, իսկ հե-

տո ամեն մի հյուրին տրվեց մի-մի նրկար չիբուխ ծխելու համար։ Այնուհետև Ալի սուլան մի կարճ խոսակցությունից հետո սպասավորներից մեկին հրամայեց, որ նվագածուների խումբը ներս թողնեն, որ գան ու հյուրերի համար մի քիչ նվագեն ու երգեն։

Նահապետական օրկեստրի խումբը ներս մտավ, բաղկացած չորս քողերից։ Մեկի ձեռքում կար մի փոքրիկ թմբուկ, երկրորդի ձեռքում՝ մի սրինգ, երրորդի ձեռքում՝ մի ջութակ, իսկ չորրորդը մի կույր երգիչ էր, որ իր հետ բերում էր մի թառ։ Նրանք շարքով նստեցին մեր հանդեպ։ Նրանց նվագարանները իրենց հնությանը և պարզ արվեստով հետաքրքիր էին։ Քողերը ինչպես իրանց հագուստի, լեզվի, գենքի և նիստուկացի առանձնահատկությունները չեն փոփոխել, այնպես էլ պահպանել են իրանց ազգային հինավուրց նվագարանների ձևը և հին երգիչների հանգն ու եղանակը։ Զութակը քիչ նմանում էր պարսկական բամանչաչին, բայց նրանից քիչ բարձր էր և նիհար կազմվածք ուներ։ Նրա լարերը հյուսված էին ոչխարի աղիքներից։ Թմբուկը անարվեստ էր, սրինգը շինված էր եղեգնից, իսկ թառը գրեթե պարսկականն էր։ Նախ ջութակահարն սկսեց մի մեղամաղձոտ ներդաշնակությամբ՝ վին, վին, վին, վու, վու, վու, հետո երեքը միասին, իսկ քիչ հետո կույր երգիչը սկսեց ոգևորված երգել մի քրդական դյուցազներգություն խիստ ախորժելի ձայնով։ Երբեմն էլ նա իր ձեռքն էր առնում թառը, որն ածում էր լի հմտությամբ։

Բնությունը թեև կույր երգչին զրկել էր աչքերից, բայց օժտել էր նրան մի սքանչելի ձայնով, ընդունակ լսելիքով, տալով և նրա մատներից մի զարմանալի դյուրաթեք կարողություն։ Կույրը ի բնե կույր ծնված էր, բայց նա յուրացրել էր իր մեջ թե երգելու և թե ածելու երաժշտական ընդունակությունները։ Մենք երկյուղած լռությամբ և կախարդված լսում էինք դյուցազնական հին լեգենդան, որը վերցրած էր քրդական հերոսական կյանքից։ Երգչի սքանչելի ձայնը, նրա հանգերի պարզ հնչյունները, նվագարանների

Աեդդաշնակությունը, սիրուն գարնան հովիկը, գետի կարկաչահուս ընթացքի անուշ ձայնը, այն էլ վրանի տակ, մի ձորակում, մի խոսքով՝ դաշտային վրանաքնակ կյանքը մեզ այնպես էր հմայել, որ մարդ կարծում էր, թե գտնվում է մի գիշերային մոգական տեսարանի մեջ:

Երգիչը և նվագածուները հոգնելով դադար արին, որ նորից սկսեն: Մենք էլ խզելով մեր լույթունը, սկսեցինք խոսել և ըստ սովորության գովաբանել թե երգչին և թե նվագածուներին: Առիթից օգուտ քաղելով, ես Րաֆֆին ասացի, թե այս դաշտային հանդեսը միտքս քերեց պատմական Որսեռսը և նրա մուսաները, որոնք միասին հանդես կազմելով՝ իրանց քնարով և դուցազնական երգերով հմայում էին իրանց ունկնդիրներին:

— Բայց եթե լավ ուշադրության առնենք,— պատասխանեց Րաֆֆին,— այդ քրդական ջութակը պետք է լինի մեր բամբիդը, որ մեր անմահ Խորենացին հիշատակում է, իսկ երգիչը նույնն է, ինչ որ եղել են Գողթան երգիչները: Տեսնում եք,— ավելացրեց նա,— այս լեռնային բնակիչները ինչպես անխախտ պահել են իրանց ազգային բոլոր սովորությունները: Պատճառն այն է, որ նրանք ազատ ապրելով լեռներում՝ գրեթե ինքնազուխ, չեն ենթարկվել բռնաբարական ուժերի, դրա համար էլ նրանք խրոխտ են, հարձակողական և տիրապետելու ախորժակով լցված: Այնինչ տափարակ երկրներում բնակվողները՝ պաշտպանողական միջոցներ չունենալով, շփվելով զորեղ ազգերի հետ, իրանց ազգային սովորությունները կորցնելով՝ ընդունել են հետըզհետե ուրիշինը:

Րաֆֆին ոգևորված ուզում էր ավելի երկար խոսել, քաց ես նրա խոսքը կտրեցի, նկատել տալով, որ նվագադրանն սկսվում է: Այդ միջոցին նա դիմեց Ալի աղային խընդրելով, որ երգել տա իր այն քաջ որդու վրա հյուսված դուցազներգությունը, որ ընկած էր կովի դաշտում որպես հերոս: Ալի աղան թեև դժկամակելով ընդունեց, քաց պատվիրեց, որ անմիջապես սկսեն: Լեռնային մուսան քրդական

սլարզ լեզվով սկսեց երգել քսիջ տղամարդի պատերազմական քաջագործությունները ոտանավոր հանգերով, ջութակի ձայնի ընկերակցությամբ, այնպես ոգևորված, այնպես ներդաշնակ, որ ոչ միայն լսելու արժանի էր, այլև ամբողջ երգվածը արձանագրելու: Ահա՛ մի պատառ այդ հովվական-լեռնական երգվածից, որ բուրդ երգիչները հորինել են ի պատիվ իրանց ցեղասպետ իշխանի որդու.

«Դու չես մեռած, Ահմեդ աղա, քո գործերըդ  
չատ մեծ են,  
Քանի որ կա քո որդին, դու կը մնաս միշտ  
անմոռաց:  
Նա կը մեծանա, ձի կը հեծնե, ձի կը հեծնե  
գեները ձեռին,  
Եվ կը լուծե հոր վրեժը, դու կը լինես  
անմահացած:  
Վերքը կուրծքիդ մեռար, Ահմեդ աղա,  
սլարծանք ցեղիդ»:

Դյուցազնական հյուսվածքի բովանդակությունը այնքան երկար էր և այնքան հափշտակիչ, որ անգգալի կերպով տևել էր մինչև ուշ գիշեր, իսկ մենք անշարժ մայրոք էինք որպես քարացած մարդիկ և չէինք նկատել, որ որդեկորույս Ալի աղան վրանից վաղուց դուրս էր գնացել իր հետևորդներով տխուր տալավորության տակ: Երբ լուեց՝ քրդական խորը, նրա ծառաներից մեկն ասաց մեզ, որ իշխանը ամբողջապես չկարողացավ լսել այդ տխրալի երգվածը, որ ամեն մի բառում հիշեցնում էր նրան իր սիրելի քսիջ որդուն: Նա վրանից հեռացավ արտասուքն աչքերում: Նա երբեք թույլ չի տալիս, որ իր ներկայությանը այդ հյուսվածքը երգեն, այս գիշեր բացառաբար միայն նա ընդունեց, որովհետև դուք խնդրել էիք: Մի ուրիշ ծառա էլ ասաց. «Այո, քաջերը չեն ուզում լսել դառն մրմունջներ և կսկծալից արտահայտություններ»: Մենք հարցնելով իմացանք,

որ ցեղապետը առանձնացել է Ջոլայի եզերքում, վրանից ոչ այնքան հեռու:

— Այս դեպքում, — Րաֆֆին ասաց, — պետք է գնալ նրա մոտ և մխիթարել նրան մի քանի քաղաքավարական խոսքերով, որովհետև ես չիմանալով, որ այդ երգվածը այդչափ տխուր տպավորություն պիտի գործեր նրա վրա, ես դրանով առիթ եղա նրա վշտերի նորոգվելուն: Մենք դուրս գալով վրանից, գնացինք դեպի գետեզորը, որ ցեղապետը նստած էր գետնի վրա՝ թիկն տված մի մեծ քարածայրի, որպես մի սպարտացի հսկա, երեսը դարձրած դեպի գետի ընթացքը, տխուր և մտահույզ ծխում էր իր չիբուխը: Նրա թիկնապահները և որդիքը նրանից քիչ հեռու կանգնած էին արձանի պես: Նրանք մեզ նշանացի արեցին, որ մոտենանք նրան: Մենք մոտեցանք: Երբ մա մեզ տեսավ, հարցրեց.

— Ինչո՞ւ հանդեսը թողիք եկաք ինձ մոտ:

Րաֆֆին նրան ողողեց հետևյալ խոսքերը.

— Ես չիմացա, իշխան, որ ձեր քաջ և անմահն որդու վրա հորինված այն հերոսական երգվածները այդպես վնասալի ազդեցություն պետք է ստաջ բերեին ձեզ վրա, ուստի և եկա, որ ձեր ներողամտությունը խնդրեմ: Բայց մա ավելի քան արժանի է այդ գեղեցիկ գովասանքին:

— Չխոսեմք, — ասաց Ալի աղան, — տխուր անցյալի մասին, — տեսնում եք, հանդեսի լեռների ետևից ինչպիսի գեղեցկությամբ է բարձրանում լրումն ստած լուսինը, ճշմարիտ որ մաղի չափ մեծ է, ինչպես հրաշալի է, տեսնում եք:

Եվ ճիշտ որ գիշերային արեգակը, փարատելով խավարը, մի լեռան գագաթի ետևից սկսել էր ցույց տալ իր լուսավոր սկավառակը ամենայն փառահեղությամբ, ցույցնելով իր սպիտակագույն լույսի ճաճանչները Ջոլայի արծաթափայլ ջրերի և փոքր առ փոքր ամբողջ ձորակի տարածության վրա: Մի սքանչելի տեսարան էր այդ:

Լուսնի արտափայլումից ձի, արջառ և ոչխար վաղ արթնանալով իրանց անուշ քնից՝ խրխնջում, բառաչում և

մայում էին, որպես թե ստավոտ եղած լինեք: Այս ամենը այնքան գեղեցիկ էր, այնքան հրապուրիչ, որ արժեք առանձին նկարագրության: Հսկա Ալի աղան, որ կես թմրած և կես արթուն էր, դառնալով դեպի Րաֆֆին, ասաց.

— Արդեն կես գիշերը վաղուց անցել է, դուք հեռու տեղից եք գալիս, հոգնած կլինեք, հարկավոր է ձեզ հանգիստ, գնացեք ձեզ համար պատրաստած վրանը քնելու:

Մենք նրան բարի գիշեր մաղթելով հեռացանք և նրա սպասավորի առաջնորդությամբ գնացինք այն վրանը, որի մեջ մեզ համար արևելյան ճաշակով պարզ ու մաքուր անկողիններ էին պատրաստած: Մենք երկուսս հանգիստ քննեցինք, իսկ Րաֆֆին իր անկողնում նստած, ճրագի աղոտ լուսով, մատիտը ձեռքին գրում էր ու գրում: Ի՞նչ էր գրում նա... Ինչո՞ւ էր հետաքրքրվում...

Վաղ ստավոտը արևը հագիլ թե լեռների գագաթներն էր լուսավորել, որ մենք արթնացանք ձորի մեջ տեղի ունեցած աղմկալից իրարանցումից: Ալի աղայի որդիներից մեկը՝ գլուխը կորցրածի պես հանկարծ մոտավ մեր վրանը և նստելով պատվիրեց, որ թեյ բերեն:

— Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել, ինչ-որ հուզված եք երևում,— հարցրեց Րաֆֆին:

— Հուզված եմ, այո,— պատասխանեց իշխանի որդին, հայրս վաղ աղավոտ 400 ձիավորներով գնաց մեր թշնամի ցեղի հետ ընդհարվելու, որովհետև նրանք հանդըգնելով՝ մեր սահմանն անցել են և արդեն սկսել են մեր ցեղի վրանները կողոպտել: Հենց այդ լուրը հայրս իմացավ թե չէ, իսկույն դուրս գնաց իր հեծյալներով: Հայրս բարևներ դրկեց ձեզ, ներողություն խնդրելով, որ չկարողացավ այսօր իր խոստումը կատարել, թողնելով նրան մի այլ հարմար ժամանակի:

Ինչպես տեսնում եք, ձիարշավի հանդեսը չէր էլ կարող այսօր տեղի ունենալ: Մի ժամից հետո մենք ոտքի կանգնելով՝ պատրաստվեցինք հեռանալու: Րաֆֆին սրտագին շնորհակալություն հայտնեց երիտասարդ քուրդ

իշխանին, որ հաղորդէ իր հորը նրա արած գեղեցիկ ընդունելության համար: Երբ մնաք բարյալ ստելով վրանից դուրս եկանք, նկատեցինք, որ ձորակը համարյա թէ դատարկված էր: Մի քանի տասնյակ ձիավորներ էին միայն մնացել, ցեղապետի ընտանիքը և վրանները պահպանելու համար: Լեռների կատարների վրա երևում էին մի քանի քրդեր նիզակները ձեռներին, ոտքով արագ վազում, պանում էին այս ու այն կողմը, որպես ուրվականներ: Նրանք շրջանկատ հսկողներ էին Ալի աղայի կողմից՝ թշնամու շարժումները նկատելու համար: Վերջապես մեկը մեր ձիերը հեծնելով, նույն օրվա կեսօրին հասանք Փայաջուկ գյուղը:

### Գլուխ ութերորդ

Սալմաստ գավառի հայաբնակ գյուղերից մեկն է Փայաջուկը, որ մինչև օրս էլ բնակվում է Մելիք-Հակոբյանների ընտանիքը, ինչպես և մի քանի երևելի հայ վաճառականների ընտանիքներ՝ իրանց առևտրական տներով: Մյուս հայաբնակ և հայաշատ գյուղերից նշանավորներն են Ղալաաբը, Հաֆթվանը, Սալրան, Մահլամը և Սառնան: Սալմաստի տափարակ տարածության վրա գոյություն ունեցող բազմաթիվ գյուղերի գրեթե մեջտեղովն է Դիլման փոքրիկ քաղաքը, որ զուտ պարսիկներով է բնակեցրած: Այդտեղ է ամբողջ Սալմաստի բազարը, քարվանսարները, սուլտոսի կենտրոնը. դա մի տոնավաճառանոց է: Այդտեղ են գալիս և ամեն կողմից հավաքվում Սալմաստի բոլոր հայ և պարսիկ վաճառականները շաբաթը մի կամ երկու որոշ օրեր, գնելու և վաճառելու համար: Ամեն մի վաճառական Դիլմանի բազարում մի խանութ ունի, որ բացվում է միայն տոնավաճառի օրը, Բաֆֆին էլ ուներ այնտեղ իր հատուկ խանութը, որ նա զբաղվում էր իր սեփական սուլտոսով, որը այդ միջոցին հասել էր իր բարձրության մաքսիմումին: Սուլտոսի հետ զուգընթաց, Բաֆֆին իր հոր պես առաջ էր տանում

իրանց գլուխի դաշտաչին և ագարակաչին գործերը, որոնց սակայն առևտրից ավելի էր սիրում:

Ես այստեղ պետք է ասեմ, որ թեև շատ անգամ շեղվում էմ կենսագրական պայմաններից, սակայն մի ստանձին էլ պահանջ կա բազմակողմանի կերպով ուսումնասիրելու կենսագրչալի ամբողջ կյանքի երևույթները: Օրինակ՝ ինչպիսի՞ ընտանիքում է սնվել նա, ինչպիսի՞ մանկություն և երիտասարդություն ունեցել, ի՞նչ գործերով է պարապել, ո՞ր է գնացել և ինչպիսի՞ մարդկանց հետ հարաբերության մեջ է եղել, թե ո՞րպիսի դպրոցներում է ավարտել և ի՞նչ գաղափարի տեր էր և այլն:

Մտնենք մի րոպե Րաֆֆիի վերոհիշյալ խանութը: Մի կողմում դարսած են հազարավոր շիլաների ծրարները, որոնք նա հետզհետե գնում է ու վաճառում: Խանութի մշակները շիլաների ծրարները պատռտելով հակեր են պատրաստում: Խանութում նստած են մի քանի պարսիկ համեստ վաճառականներ, որոնց հետ նա փոխանակագրերի, չեքերի և այլ հաշիվներ է տեսնում: Երբ հաշվի գրքում արձանագրում է դրամական ելումուտքը, սլնուհետև սկսում է նրանց բացատրել, թե հենց սկզբից պարսիկները և հայերը, իբրև դրացիներ, գրեթե միշտ լավ հարաբերության մեջ են եղել:

Րաֆֆին նրանց բացատրում է, որ պարսիկները և հայերը իրար համակիր ժողովուրդներ են, բացառությունները աննշան են: Նա խոսում է Կյուրոսի, Ջենշիդի և Քսերքսեսի մեծամեծ գործերից, Անուշիրվանի բարոյական խրատներից: Արշակունյաց ժամանակ, ասում էր նա, Արշակ մեծ թագավորը Պարսկաստանումն էր թագավորում, իսկ նրա եղբայր Վաղարշակը՝ Հայաստանում, որ այդ ժամանակ պարսկական մի ճահանգ էր համարվում և այլն և այլն: Վերջապես ուզում եմ ասել, որ Րաֆֆին այն տեսակ և այն տիպի մարդկանցից էր, որոնք երբեք հարմար և դիպող րոպեն բաց չեն թողնի. նա կաշխատեր մի բանով օգնել և օգտվել: Նա ժամավաճառ լինել երբեք չէր սիրում:

Անվանի հնագետ և դրամագետ (Numis mate) հայր Կոնստան վարդապետ Սիսիլյանը, որ Վիեննայի Մխիթարյաններից էր, 60-ական թվականներից էլ սուսջ բնակություն էր հաստատել Սափրա գյուղում և շրջելով Պարսկաստանի զանազան կողմերը իբրև հնախույզ՝ բաղկանաչարհի հին ձեռագրեր, հին դրամներ, հին քանդակներ և նկարներ էր հավաքում։ Նա գիտեր արդեն, որ Րաֆֆին էլ ուներ մի գեղեցիկ հավաքածու զանազան հին և հետաքրքրական իրեղեններից և շատ անգամ գնում էր նրանց դիտելու։ Այդ երկուսի մեջ բարեկամական հարաբերությունը սուսջ գնալով՝ նրանք միասին հրատապ վիճաբանություն էլ էին անում կաթոլիկ և հայկական եկեղեցիների տարբերության վրա։

Մի օր հանգուցյալ Կոնստան վարդապետի հետ գնացինք Փաշաջուկ՝ Րաֆֆին այցելության։ Երբ մենք ներս մտանք նրա գրասենյակը, առափոտ էր, բայց նա զբաղված էր գրելով։ Երբ նա մեզ տեսավ, ժպիտը երեսին սկսեց ալապես խոսել.

— Աստված օգնական, դուք լավ եք արել, հայր սուրբ, որ բարեկամիս հետ եկել եք ինձ մոտ. ճշմարիտ, ես ձանձրացել էի մեր գյուղական և սոևտրական գործերը վարելուց։ Մի մարդ, որ փոքրիշատե ապրել է քաղաքներում, նրա համար գյուղական կյանքը անտանելի է. դուք ինձ մի գեղեցիկ շնորհ եք արել և ամբողջ օրը իմ հյուրերս եք։

— Լավ,— ասաց վարդապետը,— բեր տեսնենք նոր ի՞նչ եք գրել, ի՞նչ նոր լրագրեր եք ստացել և ի՞նչ նոր բաներ եք սովելացրել ձեր հնագիտական հավաքածուի վրա, որ ինձ ավելի է հետաքրքրում։

Րաֆֆին ոտքի կանգնելով, որտեղից որ էր, բերեց դրեց սեղանի վրա մարդկային մի հին, շատ խոշոր գանգ, նոր հանված հողի տակից, որի երկու ականջատեղերի միջանցքով, անցրել էին մի հաստ երկաթե ձող՝ իսպառ ժանգոտած։

— Մի քանի օր սուսջ ես փորել էի տալիս մեր տորոնի արևը,— ասաց Րաֆֆին,— մեկ էլ տեսա, որ մշակները մի բան նկատելով՝ վրա ընկան և դուրս բերեցին այս գանգը։ Ես

տեսնելով, որ իր խոշորությամբ զուրկ չէ հնությունից, պահեցի:

— Խոհեմ եք վարվել,— պատասխանեց վարդապետը,— այդ գանգը կրկնակի նշանակություն ունի. մեկ, որ դա այժմյան գանգերից տարբերվում է իր խոշորությամբ, և մեկ էլ՝ այդ երկաթը ցույց է տալիս, որ այդ մարդը հանցավոր է եղել, հայտնի չէ, թե երբ դրան պատժել են երկաթե տաքացրած շամփուրով: Ինչպես տեսնում եք, անցրել են նրա ականջներից:

Դրանից հետո Րաֆֆին մեզ ցույց տվեց իր հնագիտական ամբողջ հավաքածուն, որի մեջ կային հազվագյուտ հին դրամներ, նուրբ քանդակներ, ցկարներ, հին ձեռագիրներ և այլն, որոնք բավական արժեքավոր էին:

Հայր Կղեմեսը ձեռագիրներից մեկը թերթելով, լսավ չես հիշում, թե ինչ գիրք էր, նրանում մի կրոնական խնդիր շոշափող նախադասություն գտավ, որի վրա հրավիրեց Րաֆֆիի ուշադրությունը: Դրա վրա նորից բորբոքվեց նրանց մեջ հավատաքննության խարույկը և սկսեցին վիճել: Վարդապետն ասում էր, որ այժմյան հալ եկեղեցու պաշտոնյաները արժանի չեն իրենց կոչման, նրանք ոչնչով չեն օգնում տգետ ժողովրդին, հոգ չեն տանում, որ նա արթնանա և կրթվի. նրանք մոտենում են ժողովրդին և եկեղեցուն այն ժամանակ, երբ փող դուրս քաշելու կարիք են զգում: Նրանք պատարագ են մատուցում, Ավետարան են կարդում, շարականներ են երգում, բայց ո՛չ իրանք են հասկանում և ո՛չ ռեկնդիր ժողովուրդը:

— Ես մտել եմ Սալմաստի հայ գյուղական եկեղեցիները, ցավելով պետք է ասեմ, որ նրանք եկեղեցու չեն նմանում. աստուծու տաճարները այդպես անմաքուր և տգեղ չպետք է պահվեին: Եկեղեցու պաշտոնյաները,— ասաց վարդապետը,— պետք է իրանց վսեմ, մաքուր և բարձր պահեին և իրանք էլ փոքրիշատե կրթված պետք է լինեն, որպեսզի ժողովուրդը նրանցից պատկատե: Ժողովուրդը տարիներով քարոզ չի լսում: Աստվածածնի և

սուրբերի վերաբերությամբ շատ քիչ բան գիտե: Ս. Կույսի պաշտոնը հայ եկեղեցիներում արժանավոր կերպով չի կատարվում, որին մեր խնկելի և հոգեշունչ հարք այնքան հրաշալի շարականներով փառաբանել են: Հայ ժողովուրդը աղոթքից և եկեղեցուց խիստ հեռու է, որովհետև քահանաները ոչինչ չեն սովորեցրել նրանց: Եթե այսպես շարունակվի, ժողովուրդը կուլ կերթա իր շուրջը թափոր կազմող բողոքականներից, և ես, իբրև հայ վարդապետ, ցալում եմ շատ: Էջմիածինը,— ավելացրեց վարդապետը,— որ կարող է օգնության հասնել, միայն սառն հանդիսատես է լինում:

— Ես արդարացնում եմ ձեր ասածները, հայր սուրբ, և ձեզ հետ էլ համակարծիք եմ,— պատասխանեց Ռաֆֆին,— դուք ասում եք և անցնում, բայց ես ձեզ բաց չեմ թողնի, դուք էլ եք հանցավոր: Պետք է որոնել այդ չարիքի արմատը, դրանք տգիտության հետևանքներն են: Երկաթե դարերի կապանքներից դեռ չէ պթալվել պարսկահայը, նա դեռ չի մտել կրթության ավազանը: Էջմիածինը չունի ուսյալ և կարող վարդապետներ, որոնցով կարողանար կրթության գործը սուսջ տանել և տգետ ժողովրդին օգնել քարոզներով և քարոյական խրատներով, բայց նա էլ շուտով կպթալվի, որովհետև Ռուսաստանում արդեն հայերը սկսել են դպրոցներ հիմնել, գրքեր և լրագրեր հրատարակել: Տեսնում եք, շրջապատող հանգամանքներն էլ նպաստում են ժողովրդի սուսջ գնալուն: Ռուսաստանում կրթության գործը սկսվել է, իսկ մեզանում՝ ոչ, և ի՞նչ եք կարծում, եթե Մխիթարյանները Եվրոպայում հաստատված չլինեին, այսպես ուսումնականներ և լեզվագետներ կդառնա՞յին: Ո՛չ երբեք: Դուք հանցանքը փաթաթելով Էջմիածնի շլինքին, ինքներդ էլ ոչ պակաս սատնարտությամբ եք նայում այդ ցավալի երևույթներին և գուցե սրտով էլ ծափ եք տալիս: Դուք ինչու չեք օգնում հայ ժողովրդին անխտիր, արդեն միջոցներ ունեք, դուք օգնում եք միայն այն հային, որ ձեզ մեղա է գալիս և կաթոլիկ է դառնում, և ներեցեք, որ եթե ասեմ, թե ձեզանից շատերը վարակված են լատինականության ախ-

տով: Մեր գալոց սերունդը ձեզ կդատապարտե այդ ընթացքի համար: Մենք չենք մոռանում Մխիթարյանների երախտիքը և նրանց անխոնջ աշխատասիրությունները հաշկանկան լեզվի վերաբերությամբ, նրանք ավելին էլ կարող են անել: Թող լինեն նրանք կաթոլիկներ, այդ նրանց համոզմունքն է, բայց նրանք իրանց դիմողին էլ պետք է ազատ թողնեն իր համոզմունքի մեջ: Թող նրանք չառաջարկեն պապի անսխալականությունը և Պետրոսի գլխավորությունը այն նեղն ընկած հային, որ դիմել է նրանց: Հարկավ, նա առերես կընդունի այդ բոլոր առաջարկությունները, բայց ոչ ի սրտե, և դա նման կլինի ջրում խեղդվող մարդուն, որի ձեռքը ձկան հանդիպելով, ամուր բռնում է նրան, կարծելով, թե դրանով կազատվի:

### Գլուխ իններորդ

Վարդապետի և Րաֆֆիի վիճաբանությունը երկար պիտի տևեր, բայց մի հասակավոր հայ գյուղացի, որ այդ բանակովի միջոցին եկել նստել էր Րաֆֆիի սենյակի մի անկյունում և լուռ լսում էր, հանկարծ մեջ ընկավ և իր հետևյալ ծիծաղաշարժ անեկդոտով գրեթե վերջ դրեց նրանց վատ կրոնական վեճերին:

— Այդ կաթոլիկները, — ասաց գյուղացին, — ոչ թե միայն այս աշխարհում, այլ նույն իսկ արքայության մեջ էլ բռնություն են գործ դնում իրանց նպատակին հասնելու համար:

— Միթե կարելի է դա, — ասաց վարդապետը, — մենք կուզենայինք լսել այդ, թե ինչպես է լինում և դուք որտեղից գիտեք այդ:

— Ուրեմն, լսեցե՛ք դրախտի սկանդալը: Ես իմ պապերից լսել եմ, — վրա բերեց գյուղացին, — որ մեր սուրբերը և առաքյալները մեռնելուց հետո, երբ նրանց հոգիները փոխադրվել են արքայություն, նրանց մեջ այնտեղ վեճ է ծագել

Պետրոսի գլխավորության վրա, և այդ ծանր խնդիրը լուծելու համար մի մեծ ժողով են կազմել արքայության մեծ պարտեզի մեջ: Հրավիրված ստաքայուները և սուրբերը հավաքվելուց հետո, Պետրոսն ուզելով հանդեսին նախագահել, ժողովը բացված է հրապարակում: Սուրբերից ոմանք Պետրոսին կուսակից լինելով՝ ընդունում են, իսկ ոմանք էլ մերժում են: Ահա տեղ տալով, որ խնդիրը Պետրոսի գլխավորության վրա լինելով, ինքը նախագահելու իրավունք չունի, և մանավանդ, որ դեռ Գրիգոր Լուսավորիչն էլ բացակա է: Վերջապես գալիս է Լուսավորիչն էլ, նստած մի սպիտակ հագված գյուտ ավանակի վրա, անցնելով պարտեզի ծառուղիի միջով: Նրա առաջն ընկած երկու սպիտակագգեստ սերովբեները անդադար խնկարկում և հրեշտակային երգերով փառաբանում էին նրան: Լուսավորիչը, մոտենալով հանդիսավայրին, սպասավորները նրա կողքերը մտնելով վաչր ևս իջեցնում: Լուսավորիչը նկատում է, որ Պետրոսը ամենից քարձր է բազմել հանդեսում, ինքն էլ գնում, ճիշտ նրա կողքին է նստում, որից Պետրոսը վիրավորվում է: Վեճը բացվում է, լինում են թեր ու դեմ խոսքեր, բայց ժողովը չի կարողանում համաձայնություն կայացնել. ոմանք այդ են ասում և ոմանք՝ ոչ, և խնդիրը դարձյալ մնում է անորոշ: Լուսավորիչը ոտքի կանգնելով՝ եղբայրներ, ասում է, ես գնում եմ, բայց իմացեք, որ աստուծո արքայությունը ազատ է ամեն տեսակ ոտնձգություններից և փառասիրական կապանքներից, ես ձեռքերս լվանում եմ: Այս ասելով հեռանում է Լուսավորիչը՝ նստելով իր ավանակի վրա, գնալով նույն պատվով և անցնելով նույն ծառուղիից: Պետրոսի սպասավորները նկատելով, որ Լուսավորիչի պատճառով իրանց տները բավական վիրավորանք ստացավ, ուզում են Լուսավորիչից վրեժխնդիր լինել և նրան ճանապարհ դնելու պատրվակով գնում են նրա ետևից: Նրանցից մեկը իր ձեռքում թաքցրած է լինում փշերից կապած մի փոքր փունջ, որը անզգալի կերպով դնում է ավանակի պոչի տակը, կենդանին սկսում է արագիներ տալ, վեր-վեր թռչել և, վերջապես, իր վրա նըս-

տողին վաչր է գցում փոշիների մեջ: Լուսավորչին մի կերպով կանգնեցնում են, և նա մի հայացք գցելով դեպի աջ ու ձախ, հասկանում է, թե բանն ինչի մեջն է եղել, ասում է. «Ախրը էսպես եք անում, է, որ մարդ չի ուզում էս խարաքը ոտ դնի, էսպես եք անում, որ Պետրոսի գլխավորությունը չենք ընդունում»:

— Տեսնում եք,— շարունակեց գյուղացին,— թե մեր գլխին ինչ խաղեր են խաղում կաթոլիկները:

Թե հայր Կղեմեսը և թե մենք ամենքս մի կուշտ ծիծաղեցինք միամիտ գյուղացու առասպելական պատմության վրա և դրանից հետո թողինք Րաֆֆին իր գրասեղանի առաջ, իսկ մենք մնաւ բարյալ ասելով հեռացանք:

Մի շաբաթից հետո ես նորից Փայաջուկ գնալով, այցելեցի Րաֆֆին. նա սկսել էր մեծ եռանդով սովորել պարսկերեն լեզուն, նպատակ ունենալով պարսից հին պատմական գրքերը հայերենի թարգմանել<sup>14</sup>: Այդ առիթով էլ նա ծամերով երկար խոսում էր իր ծանոթ պարսիկ վաճառականների և մոլլաների հետ, աշխատելով՝ լսելով էլ ծանոթանալ նրանց պատմության և օրենքի հետ, և արդեն բավական տեղեկություններ էր ձեռք բերել: Ես շատ անգամ հանդիպել եմ Րաֆֆին պարսիկ վաճառականների հետ միասին նստած, որոնք թողնելով իրենց առևտրական հաշիվները՝ խոսում էին իսլամ և քրիստոնեական կրոնքի պայու այն կետերի վրա: Պարսիկներն առհասարակ շատ են հարգում այն հային, որը կարող է կրոնքի մասին բավականաչափ խոսել: Այդ կողմից Րաֆֆին շատ էր հարգված պարսիկների երևելիներից իբրև գործին տեղյակ մարդ:

Այդ միջոցներին պարսիկները Մահլամ գյուղից մի 12 տարեկան հայ աղջիկ էին փախցրել և պնդում էին, թե նա արդեն մահմեդականությունն ընդունել է: Աղջկա չքավոր մայրը դիմելով Մելիք-Հակոբյանների ընտանիքին, դառնապես լալիս էր, խնդրելով մի ելք գտնել և աղջկան ազատել: Նրիտասարդ Րաֆֆին, չդիմանալով թշվառ գեղջկուհու մայրական մրմունջներին, գիշերով միայնակ գնաց Դիլման և

մտնելով դեմպետի ստունը, երկար վիճելուց հետո, աղջիկն անչափահաս համարելով, մի կերպով համոզել էր կրոնապետին և հենց գիշերը աղջկան իր հետ ետ բերելով՝ հանձնեց իր մորը։ Պարսկաստանում մի այդպիսի հանդուգն քայլ անելը ավելի քան դժվար է։ Այդպիսի դեպքերում հավաքական ուժերով պետք է դիմումներ անել, այն էլ թեմակալների նախաձեռնությամբ։

Մի կիրակի օր Րաֆֆին իր պարսիկ բարեկամների շքր-ջանից մի տասնյակ պարոնների ճաշի էր հրավիրել իր պարտեզը, այդ օրը ես էլ նրա մոտ էի։

— Վատ չէր լինի,— ասաց Րաֆֆին,— որ դուք էլ ինձ հետ գալիք մեր պարտեզը, այնտեղ մենք միասին կճաշենք և կխոսենք մեր պարսիկ հյուրերի հետ, նրանց խոսակցությունը և դատողությունները հետաքրքիր են։

— Մեր հայերը,— շարունակեց Րաֆֆին, —խորշում են նրանց հետ հարաբերություն ունենալուց, քաց դա սխալ է, պետք է շփվել նրանց հետ, պետք է կարծիքներ փոխանակել և մտերմական հարաբերություն հաստատել, որովհետև մենք ապրում ենք նրանց հետ միասին, և, մանավանդ, որ նրանք են տիրող տարրը։

Րաֆֆիի հետ զնացինք պարտեզը։ Եվ որովհետև պարսիկները հայի ձեռքով պատրաստած կերակուր չեն ուտում, մի պարսիկ խոհարար հատկապես վարձված էր, որ կերակուրները եփե և պարսիկ ճաշակով պատրաստե։ Կեսօրից մի ժամ առաջ եկան պարսիկ հրավիրվածները։ Սովորական բարևներից և մի կարճ խոսակցությունից հետո՝ ճաշը տարածվեց գետնի վրա, և նրանք ուտում էին առանց խոսելու։ Ծաշից հետո սկսվեց սուրճ խմելը և պարսկական դելանի ծխումը։ Այդ միջոցին է, որ պարսիկները սիրում են խոսել։

Հրավիրվածների մեջ անվանի էր Հաջի Ֆաթալին, որ թե՛ վաճառական էր, թե՛ միջնորդ և թե՛ լավ օրենսգետ պարսկական շարիաթին. նա Րաֆֆիին ուղիղ հետևյալ խոսքերը.

— Մենք՝ պարսիկներս, քրիստոնյաներին ալելի ենք համակրում, քան թե սյունիներին, որոնք թեև մահմեդական են, բայց մեզ դավաճանում են, այնինչ քրիստոնյա ազգերը խղճահար են, ողղամիտ և ներողամիտ դեպի մյուս կրոնական ազգերը: Մենք հավատում ենք, որ Հիսուսը (Հագրաթը. Իսան) մեծ մարգարեներից մեկն է և ծնվել է Մարիամից առանց հոր, բայց չգիտեմ ինչպես է լինում, որ դուք նրան ընդունում եք աստված կամ Երրորդության մի անձն (Սալիսե), որ մեր օրենքով անկարելի է աստվածության ընկեր: Որդի և կամ այլ անձն հատկացնել, որովհետև աստված անտեսանելի, անիմանալի և անմատչելի է և մի է (վահիդ): Բացի այդ, դուք՝ քրիստոնյաներդ, մեր մարգարեի վերաբերությամբ լուրջություն եք պահում և ոչինչ չեք ասում: Այդ երկու գլխավոր կետերը մեր և ձեր մեջ շարունակ վեճի ստարկա և խորոց են դարձել, փափագելի է դրանց մասին ձեր կարծիքը լսել:

Րաֆֆին նրան այսպես պատասխանեց.

— Ձեր առաջարկածները կրոնական լուրջ և ծանր խընդիրներ են, այնպիսի խնդիրներ, որ մինչև անգամ աստվածաբանները չեն կարողացել լուծել, բայց ես կասեմ միայն իմ կարծիքը: Մեր Ավետարանը ձեր մարգարեից մոտ 600 տարի առաջ է գրվել, և նրա մեջ որևէ հիշատակություն չենք գտնում այդ մասին: Իսկ գալով Հիսուսի աստվածության, այս կասեմ, որ նա ձեր օրենքով և բոլոր մահմեդական ազգի լեզուներով ընդունված է ասել և գրել Իսա Ռուհ Ուլլահ, այսինքն՝ Հիսուս հոգին աստուծո: Բացի այդ, դուք ընդունում եք, որ սուրբ կույսը հղիացավ նրան հրեշտակի շունչ տալով, և նա ծնվեց առանց հոր: Արդեն դա մի չտեսնված հրաշք է: Իսկ Երրորդության համար ես այսպես կարող եմ ասել. մենք ամենքս էլ տեսնում ենք ամեն օր, որ արեգակը երկնականմարումն է և միակ մի գունդ է, բայց նա ունի և փայլողություն, ունի և ջերմություն, որոնք նրանից են բխում և անբաժան են: Կրկնում եմ, որ սրանք կրոնական խիստ վերացական, խնդիրներ են, որոնց լուծելը իմ կարողությունից շատ վեր է:

Սրանց լավ լուսաբանելու համար հարկավոր է նախ լավ ուսումնասիրել Ավետարանը և Ղուրանը, այլ և երկու կողմերի կրոնական այլ և այլ ծեսերը, գրվածքներն ու հավատալիքները, որից հետո կարելի լինի խոսել և վիճել:

— Ծիշո է,— ասաց Հաջին,— Հիսուսը մեր օրենքով կոչվում է Ռոն Ուլլահ, բայց մեծ մարգարեներից շատերին մենք իրանց նշանակության համաձայն տվել ենք տիտղոսներ, օրինակ՝ Աքրահամին մենք կոչում ենք Իքրահիմ Խեյիլ Ուլլահ, Մովսեսին կոչում ենք Մուսա Քելիմ Ուլլահ և մեր մարգարեին կոչում ենք Մեհեմեդ Ռեաու Ուլլահ, այսինքն՝ Աքրահամ արդարև աստուծո, Մովսես աստվածախոս և Մեհեմեդ ասաքյալն աստուծո: Դրանք տիտղոսներ են, բայց ոչ մի մարգարե, ոչ մի արարած չէ ծնվել առանց հոր, դա միայն Հիսուսն է, և դրա համար էլ ասվել է հոգին աստուծո, փառաբանել պետք է նրան. «Հեզրեթը Իսա ալեհիսեղան, հեզրեթը Մերիամ ալեհիսեղան»։ այսինքն՝ ողջույն լինի մեծ Հիսուսին, ողջույն լինի մեծ Մարիամին:

Պարսիկները սովորաբար այդպիսի ողջույնով են արտասանում սրբերի և մարգարեների անունները:

### Գլուխ տասներորդ

Րաֆֆին շատ էր սիրում ճանապարհորդությունը: Երբ ջելով շարունակ Դիլման, Խոյ, Ուրմի, Թալիզ և Թիֆլիս, թե՛ իրանց առևտրական գործերին էր վերահասությունն անում և թե՛ իր վեպերն էր հետզհետե ուրվագծում: 1861 թվականի հունիս ամսին նա վճռեց նորից գնալ Ուրմի: Ես էլ նրան ընկերացա: Մենք գնում էինք քարավանով, որ քաղկացած էր մի տասնչափ բեռնաքարձ գրաստներից և մի տասնչափ էլ ձիավոր ճանապարհորդներից: Դրանց թվումն էին Րաֆֆիի հաշ ծառան, մի խարբերդցի հաշ, իմ հաշ ծառան, մնացածները պարսիկներ էին: Սալմաստից հագիվ թե տասն վերստ հեռացել էինք, երբ մեր ճանապարհի ձախ

կողմում սկսեցին երևալ մի շարք ո՛չ այնքան բարձր լեռներ:

— Այդ լեռներից մեկի վրա է գտնվում այն հնադարյան քանդակը, — ասաց Րաֆֆին, — որի մասին ձեզ պատմել եմ. նա շատ հեռու չէ, գնանք նայելու, արժե տեսնել:

Մենք ճանապարհից մի քիչ շեղվելով և դեպի վեր բարձրանալով, հեռվից նկատեցինք քանդակը, բայց սկզբում նրա վրա երևում էին միայն հորիզոնական հաստ գծեր, իսկ երբ մենք ավելի մոտեցանք՝ պատկերը պարզ երևաց: Մի ամուր բարաժայտի մի կողքը տաշելով, նրա հարթած երեսում, հայտնի չէ, թե որ դարում, խիստ վարպետությամբ քանդակել են մի քանի բավական խոշոր ձիավորներ հին դարերի տարազով և զենքերով: Պարսիկները այդ լեռան Փիրչախուշ կամ Շեքիլ-դաղի են անվանում, սլսիքն՝ սլատկերի սար: Րաֆֆիի կարծիքով՝ այդ քանդակում դուրս բերված հեծյալները կամ պարսիկ կամ հայ իշխաններ էին, իսկ ես պնդում էի, որ նրանք մակեդոնացիներ պետք է լինեին, որովհետև նրանց երեսի տիպը ավելի նմանում էր հունականին: Րաֆֆին այդ պատկերը նկարագրել է «Կայծերի» 1-ին հատորի Բ գլխում: Փակագծի մեջ ավելացնում եմ, որ երբ պ. Բելք և պրոֆեսոր Լեման<sup>15</sup> 1898-ին Պարսկաստան եկան հետազոտություններ անելու, ես Թավրիզում ծանոթանալով նրանց հետ և խոսելով Պարսկաստանում գտնված հնությունների մասին՝ այդ հին քանդակի վրա էլ ծանոթություն տվի. նրանք ցանկություն հայտնեցին տեսնել և հետազոտել տեղանուտեղը, քանի որ Սալմաստից պետք է անցնեին Վան գնալու համար: Այդ խորին հնությունը, պատմական մի փշրանք ներկայացնող քանդակը, որին ժամանակի կործանիչ ժանիքները չեն կարողացել խորտակել, մարդուն մի առանձին պատկառանք է ազդում: Բայց ափսո՛ս, որ մենք մի րոպեական ակնարկ տալով բավականացանք, որովհետև մեր քարավանը շատ էր հեռացել մեզանից, մենք հազիվ թե մի քառորդ ժամից կարողացանք հասնել նրան:

Սալմաստի և Ուրմիի միջավայրում գտնվող ճանապարհները բավականին վտանգավոր են քրդերի շարունակ կողո-

սրտների և հարձակումներն արտառով: Մեր ճանապարհի ընկեր խարբերոցին քարավանի առջևից էր գնում շարականներ երգելով: Նա գրեթե անգիր գիտեր ամբողջ ժամագիրքը և բոլոր շարականները: Նրա անունը Միրան աղա էր (գուցե Միհրան). նա ինչ-որ առանձին հանձնարարություններով եկել էր Սալմաստ և վերադառնում էր Վան: Նա լավ սպասագինված էր, կրելով իր վրա ասորճանակներ, հրացան և մի արծաթապատ սուր, որի երախակալից կախված ոսկեհոտ փունջը ցույց էր տալիս, որ նա կառավարչական պաշտոնչա պետք է լիներ: Միրան աղան երբեմն քարավանից քիչ հեռանալով՝ իր ձին խաղացնում և զանազան հմուտ ձիարշավներ էր անում, ապա գալիս կանգնում էր մեր քարավանապետի առաջ, որ մի քաջ պարսիկ էր, նույնպես լավ զինված, և նրան հրահանգներ էր տալիս:

— Դուք ամենքդ,— ասում էր Միրան աղան,— քարավանի ետևից և կողքից քայլեցեք, որպեսզի քարավանից մի բան չգողանան, իսկ ես քարավանի առջևից գնալով, եթե մի որևէ հարձակում պատահի, կդիմադրեմ զենքի զորությամբ, ինչպես որ պետք է: Մանավանդ,— ավելացրեց Միրան աղան,— արևը խոնարհվում է դեպի իր մուտքը. միշտ այս միջոցին է, որ ավազակները դուրս գալով իրանց որջերից, դիմում են հափշտակությունների:

Միրան աղայի անվեհեր խոսքերն այնպես լավ տպավորություն թողին ինձ վրա, որ ես Րաֆֆիին ասացի, թե մեր այս ընկերն ինձ թվում է, որ մի քաջ մարտնչող պետք է լինի, բայց չգիտեմ ձեր կարծիքն ինչ է նրա մասին:

— Ոչ,— պատասխանեց Րաֆֆին,— դուք սխալվում եք, խաբվելով նրա խրոխտ խոսքերից. նա այն մարդը չէ, ինչ ուզում է ցույց տալ: Դուք լավ ծանոթ չեք մեր թուրքահայերի հետ, նրանք մի քանի դարեր շարունակ, որպես ստրուկ ապրելով թուրքի և քուրդի հարվածների տակ՝ կորցրել են իրանց էներգիան և այրական քաջությունը: Անձնապաշտպանությունը նրանց համար մեռած խոսք է, ես այդ բոլորը անձամբ նկատեցի իմ նախորդ ճանապարհորդության միջո-

ցին և, իբրև փորձ, այս իրիկուն, երբ լսավ մթնանա, եւ մի պնգամ հրացան կարձակեմ, և դուք կտեսնեք, որ այդ մարդը իր գլուխը կկորցնի:

Այս խոսակցությունից մի քանի րոպե հետո մի դեպք պատահեց, որը, ինչպես կնկատե ընթերցողը, այդ մարդի վարագույրը պատռեց, առանց Րաֆֆիի հրացան արձակելու:

Մեր քարավանը առաջանալով՝ հասել էր Իլինցե բուննի ասված լեռան, որ մեր աջակողմն էր գտնվում, իսկ մեր ձախ կողմի լեռների ետևումն էր Ուրմիի լիճը: Այդ ձորում դեռ զարուհը փռած էր իր կանաչազարդ սփռոցները լայնատարած արոտատեղերի և լեռների լանջքի վրա, փշում էր իրիկվան անուշ հովիկը, ոչխարների բազմաթիվ հոտերը ամբողջ օրն արածելով այդ դալարիքով ճոխ տարածության մեջ՝ այժմ վերադառնում էին դեպի իրենց փարախը: Հազարավոր թռչուններ, թաքնվելով դաշտերի կանաչ խտության տակ, իրանց ուրախ դայլալիկներով, իրանց երեկոյան դադարի սիրուն երգերով կարծես կախարդում էին անցորդներին: Հովառուն զեփյուռը անցնելով լեռների ծաղկավետ փեշերից՝ օդը լցրել էր եթերական անուշահոտությամբ. մի առանձին կենդանություն կար ամբողջ ձորի մեջ, որտեղից մարդ չէր կարողանում անցնել առանց հոգեզմայլության: Արեգակն արդեն իր երեսը թաքցրել էր լեռների ետևում, մեր քարավանը ընթանում էր հանդարտ քայլերով, և մենք ուրախ տպավորության տակ էինք: Հանկարծ մենք լսեցինք մի քանի հրացանի որոտմունք:

— Թալան է, թալան,— խոսեց մի ձայն:

Դա մեր քարավանապետի ձայնն էր: Երեսը սպիներով պատած, իսպառ ալյանդակված մի քաջ պարսիկ էր նա, մի ծերացյալ առյուծ, որ եղել էր բազմաթիվ կոիվներում:

— Բուրդերը,— ասաց նա,— մեր տեսած ոչխարների հոտերից մի քանիսը գրավելով՝ քշել են դեպի իրանց սահմանը, հովիվները չկարողանալով իրանց հոտերը պաշտպանել՝ թողել, փախել են. այժմ ահա տեսեք այդ քրդերից մի քանիսն էլ մոտենում են դեպի մեզ, որովհետև մեր քա-

բավանք մի յողալի պատառ է նրանց համար: Քրդի հետ եթե խիստ չվարվես, նա քո գլխի տերն է. ես չեմ թողնի, որ նրանք մեր քարավանին մոտենան. ով որ ձեզանից լավ զինված է, թող ինձ հետ գա: Այս ասելով՝ հրացանը ձեռքն առնելով առաջացավ դեպի քրդերը, որ մի 50 քալ հեռու կանգնած մեզ դիտում էին:

Րաֆֆին, իր սպասավորը և մի այլ պարսիկ, որոնք հրացաններ ունեին, հետևեցին քարավանապետին: Մեր քարավանը կանգ առավ: Երկու խմբակները իրարու մոտենալով՝ խոսքեր փոխանակեցին: Քրդերն իսկույն ճանաչել էին դիմադրող պարսիկին և հայտնեցին միանգամայն, որ իրանք քարավանի հետ գործ չունեն, միայն ուզում էին իմանալ, թե ով է անցնում այդ կողմերից: Մեզ ոչխարներն էին հարկավոր, ասել էին նրանք. նրանց տերերից վրեժ լուծելու համար, նրանց գյուղի ոչխարները մեզ սեփականացրինք: Քուրդերը փոքր առ փոքր հեռացան, և մերոնք վերադարձան: Րաֆֆին սկսեց փնտրել Միրան աղային, ես էլ նոր մտաբերեցի, որ նա իրարանցումի միջոցին մեջտեղից վերացել էր, բայց թե ուր էր գնացել, ես էլ չգիտեի: Մեր քարավանի պարսիկներից մեկը նկատելով, որ մենք նրան ենք փնտրում, ասաց՝ ահա նրա ձին, որ հանձնել է ինձ պահելու, իսկ ինքը թաքնվելով այս մոտիկ գառիվայրում՝ չոքել է և աղոթք է անում: Րաֆֆին և ես առաջացանք դեպի պարսիկի ցույց տված տեղը և տեսանք, որ ճիշտ, Միրան աղան նստել է խոտերի վրա, սուրն ու հրացանը ընկած են գետնին, իսկ ինքը բազկատարած անգիր կարդում է Նարեկից «Ընկալ քաղցրությանք» և «Որդի Աստուծո կենդանվո» աղոթքները:

— Այդ ինչ եք անում, Միրան աղա,— խոսեց Րաֆֆին,— այսօր դուք ինչ էիք խոսում, դուք խոստանում էիք, որ միայնակ դուրս կգաք հարձակմունքների առաջ և հրաշքներ ցույց կտաք, բայց երբ հեռվից մի քանի քրդեր նկատեցիք, այն աստիճան սարսափահար եք եղել, որ երեխայի նման փախել, թաքնվել եք, լավ գենք գործածող եք, կեցցե՛ք դուք, լավ անումն թողիք:

Միրան աղան ցնցված այս խոսքերից՝ ոտքի կանգնելով, այսպես պատասխանեց.

— Ինչէր կխոսիս, աղբար, միթե աղոթքը զենքի զորութենէն պակաս է, ես եթե աղոթքի չի կենայի, մեր քարավանը հիմա կորած կըլլար: Չեք հիշեր, որ մեր երանելի Մեծըն Ներսէսը պատերազմի ատեն աղոթքի դիմելով հակառակ բանակը կործանեց:

— Հիշում եմ,— ասաց Րաֆֆին,— բայց այդ անելու համար մեծն ներսէսներ պետք են, և ես զարմանում եմ, որ դուք ձեզ համեմատում եք այդ անգուգական և սուրբ մարդի հետ: Բացի այդ՝ հանգամանքներն այժմ այլ կերպարանք են ստացել: Ասորոց պատրիարք Մար Շմոնը զենք է կրում իր վրա և իր զինակիր-հրացանակիրներով ընկնում է քուրդերի ետևից և հալածում է նրանց:

Այս խոսքերից հետո Րաֆֆին ինձ ասաց, թե չարժե այլևս այդ մարդի հետ երկար ու բարակ խոսել, գնանք դեպի քարավանը, և նա արդեն սկսել էր շարժվել և մեզ էր սպասում: Միրան աղան էլ եկավ նստեց իր ձիւն, բայց այնուհետև նա գալիս էր քարավանի ետևից կորագլուխ: Մենք գնում էինք ճանապարհի ուղղությամբ խոսելով:

— Դուք այդ մարդուն առյուծի նմանեցրիք այսօր, բայց տեսաք, որ նա կատու էլ դուրս չեկավ,— ասաց ինձ ժպտալով Րաֆֆին.— այդպես են լինում միշտ պոռոտախոսները:

Արդեն խավարն տիրապետել էր լեռ ու ձոր, մենք մի ժամից հետո իջևանեցինք և երկրորդ օրը Ուրմիումն էինք:

### Գլուխ տասնմեկերորդ

Ուրմին մի զվարճալի և առևտրական քաղաք է, ընկած ծովակից քիչ տարածությամբ հեռու. քաղաքը թե ներսից և թե դրսից լիքն է բազմաթիվ պարտեզներով ու այգիներով: Ուրմիի գավառն ունի հարյուրավոր լավ մշակված գյուղեր: Մի որոշ թիվ գյուղեր էլ կան, որոնց մեջ հին ժամանակներ-

րից բնակված են ասորիներ. դրանք հասարակ երկրագործ-ներ են, խիստ տոկուն և աշխատասեր, բայց, դժբախտաբար, անկիրթ և տգետ, այնպես որ ոչ մի հասկացողություն չունեն իրենց ազգային ինքնությունության վրա: Միսիոներների աշխատությանը հույս կա, որ նրանց նոր սերունդը կրթվի և առաջանա: Ամերիկացի միսիոներները և ֆրանսիացի լազարիստ վարդապետները, հաստատվելով Ուրմիում և նրա մի քանի գյուղերում, դպրոցներ, աղոթարաններ, եկեղեցիներ և այլն հիմնելով, նրանց մի մեծ մասը նեստորական հին եկեղեցուց դարձրել են բողոքական կամ կաթոլիկ, երկար տարիներ քարոզելով: Ուրմի քաղաքում թե ասորի և թե հայ բնակիչներ էլ կան քիչ թվով: Ուրմիի գյուղերից մի քանիսում էլ երկրագործ հայեր կան, որ նույնպես զուրկ են կրթությունից և չունեն ո՛չ դպրոցներ և ո՛չ էլ կրթական միջոցներ:

Մի կիրակի օր Րաֆֆիի հետ գնացինք այցելեցինք ամերիկացիների հաստատած դպրոցը, տպարանը և աղոթարանը: Այս վերջինը աչքի էր ընկնում իր ընդարձակությամբ և մաքրությամբ, այնտեղ բազմաթիվ ասորիներ՝ այր և կին, օրիորդ և երիտասարդ, նստած քարոզ էին լսում ավետարանից: Քարոզիչը մի ամերիկացի միսիոներ էր, որ առանց դժվարության խոսում և քարոզում էր ասորերեն լեզվով: Քարոզից հետո բոլոր ունկնդիրները ձայն ձայնի տալով գեղեցիկ ներդաշնակությամբ երգում էին Սաղմոսից: Տեսանք և նրանց տպարանը, որ դուրս էր բերել զանազան կտորներ ս. գրքից և տպում էր մի լրագիր ասորերեն լեզվով: Դրանից հետո գնացինք տեսանք լազարիստների բնակարանը, եկեղեցին և դպրոցը, որոնցով նրանք նույնպես օգնության են հասել խեղճ ու կրակ ասորի ազգի մի փոքր մասին թե՛ բարոյապես և թե՛ նյութապես: Մանավանդ գթության քույրերը /*Soeurs de charité*/, որոնք շարունակ մի պաշտասկ ձեռներին, հարցնելով գնում գտնում են այն ամեն հիվանդների և անճարների, որոնք անտուն և անտեր են, և որոնց էլ ամեն տեսակ օգնություն են հասցնում:

Մի անգամ էլ Րաֆֆիի հետ գնացինք ձիով մի պտույտ անելու Ուրմիի շրջակաները և երբ քաղաքից բալական հեռացել էինք, Րաֆֆին ինձ ասաց.

— Արի մի քիչ հեռու գնանք, գնանք դեպի Վան տանող ճանապարհը. այն տեղերում մի քանի հետաքրքրական հնություններ կան, որ արժե տեսնել. ես իմ ծառային պատվիրել եմ, որ մի քիչ ուտելիք վերցնի. երբ կեսօր լինի, հենց լեռներում կճաշենք:

Մենք քարձրացանք դեպի լեռները: Մի ժամ քայլելուց հետո մա կանգնեց մի լեռան լանջքի հանդեպ և ինձ ցույց տվեց երկու քարացած ձկներ մի ժայռի վրա կպած, իսկ դրանից մի քիչ հեռու, մի ուրիշ սարի վրա մա ինձ նշմարել տվեց մի քանի ծովային խեցգետիններ և այլ անծանոթ կենդանիներ, որոնք մույնպես քարացած էին:

— Ես առաջ այն կարծիքին էի,— ասաց Րաֆֆին,— որ սրանք արհեստական կերպով են դուրս բերված, բայց իմ մախորդ ճանապարհորդության միջոցին ես հանդիպեցի մի անգլիացի ճանապարհորդի, որ գիրքը ձեռքն այս կողմերում հետազոտություններ էր անում: Անգլիացին պատմում էր,— ասաց Րաֆֆին,— թե Ուրմիայի լիճը մի ժամանակ այնքան մեծ տարածություն է ունեցել, որ բոլոր այս լեռները պարունակված են եղել մրա մեջ: Լիճը հետզհետե տեղատվություն անելով և դարերի ընթացքում ետ-ետ քաշվելով, այդ կենդանիները ջրից դուրս են մնացել և քարացել են, ինչպես այդ երևույթը պատահել է շատ տեղերում: Անգլիացին,— ինչպես ասաց Րաֆֆին,— երկար մնալով այս կողմերը վարձել էր տասնչափ մշակներ և զանազան պեղումներ անել տալով, զանազան հին առարկաներ էր գտել և իր հետ տարել:

Լեռներից վայր իջնելով, եկանք քաղաքի այն ավերակ մասը, որ մի քանի մոխրաբլուրներ կան, որոնք կիտված են անհիշատակ ժամանակներից: Այդ մոխրակույտերի առաջ Րաֆֆին կանգ առավ: Նրանց զանազան կողմերից մեծ-մեծ

ծակեր էին բաց արել ներս մտնելու համար, որոնք բաւական խոր էին երևում:

— Այս ծակերից, — ասաց Րաֆֆին, — ներս են մտնում շահասեր հրեաները, որոնք գիտեն ամեն դեպքից օգուտ քաղել: Նրանք երկար խարխալելով մոխրակոյուտների խորքերում, քանդում և նորանոր պեղումներ են անում՝ գաղտագողի դուրս բերելով, այն էլ գիշերով, տեսակ-տեսակ պղնձե, արծաթե և միզե անգամ ոսկե անոթներ, այլ և հին ու հետաքրքիր դրամներ: Նրանք այնպես վարպետ են այդ գործի մեջ, որ դուրս բերած իրերը Ուրմիում չեն վաճառում, որ մի գուցե բանը հասկացվի և իրերը նրանց ձեռքից խլեն, այլ միառժամանակ պահելով իրենց մոտ, առարկաները և դրամները սիրուն հոկում են, ժանգը մաքրում, ապա տանելով նրանց այլևայլ քաղաքներ՝ բարձր գներով վաճառում են հետաքրքիր գնողներին:

— Շատ անգամ էլ, — ասում էր Րաֆֆին, — խորամանկ հրեաները հին դրամների կեղծերը շինելով, վարպետորեն նմանեցնում են ճիշտ իսկականին, որոնց էլ ավելի բարձր արժեքով են վաճառում: Ես էլ իմ հավաքածվի մեծ մասը, — ասում էր նա, — այդ հրեաներից եմ գնել, որ սկզբում լավ չճանաչելով՝ իսկական հին դրամների հետ մի քանի հատ էլ կեղծ դրամներ էի գնել, որոնք հայր Կղեմես վարդապետի խորհրդով դուրս նետեցի, այնուհետև նա ինձ հրահանգներ էր տվել, թե ինչպես պետք է ճանաչել հին դրամները և թե նրանք ինչպիսի հանգամանքներում պետք է լինեն և այլն:

Ես երկու շաբաթ միայն Ուրմի մնալով, վերադարձա իմ հայրենի քաղաքը՝ Թալրիզ, իսկ Րաֆֆին մի քանի ամիսներ մնացել էր Ուրմիում, իր մի կողքին ունենալով ստևորական համրիչն ու հաշվեգրքերը և մյուս կողքին՝ իր գրական աշխատությունները:

### Գլուխ տասներկուերորդ

Ուրմիից վերադառնալուց հետո, ես Րաֆֆիին շատ անգամ հանդիպել եմ Թալրիզում 1862-ից մինչև 1867 թվականները, ուր գրեթե նա տարին մի անգամ գալիս էր իր սեփական գործերի համար: Բացի այդ, նա սիրում էր տարին մի քանի ամիսներ ժամանակ անցկացնել Թալրիզում, իր ծանոթների և բարեկամների շրջանում: Եվ որովհետև նա բոլորն ցանկություն ուներ իր նախագծած վեպերը առաջ տանելու, ուր որ գնում էր, նա շալակած ման էր ածում իր հետ իր գրական աշխատությունները:

1863 թվականին Ատրպատականի թեմակալ առաջնորդը էր Աբել եպիսկոպոս Մխիթարյանցը<sup>16</sup>, որ գրագետի և ուսումնականի համբավ ուներ: Րաֆֆին, պետք է ասած, շատ չէր համակրում մեր կղերականներին. նա շատ անգամ ասում էր, թե մեր վարդապետները միայն երեք բան են ցանկանում՝ լինել եպիսկոպոս և վիճակալոր, ունենալ գրպանում մի քանի հազար ոտքիներ և մի քանի շքանշաններ կրել կուրծքի վրա, պրծալ ու գնաց: Բայց հաշ ժողովուրդը խարխափում է տգիտության մեջ, նա մնում է անհույս, նա լինում է կրոնափոխ, նրա զավակները մեծանում են անկիրթ. այդ բոլորի համար մեր վարդապետները անտարբեր են: Նրանք, ասում էր Րաֆֆին, միայն երկար ու ողբալի երեմիականներ կարդալով են բավականանում և իրենց տեղերում հանգիստ նստած հորանջում են: Աբել եպիսկոպոսը Րաֆֆիի հետ ծանոթ լինելով՝ նրա գրվածքներից մի քանիսը վերցրել պահել էր իր մոտ, որպեսզի կարդա և նրանց մասին իր կարծիքը հայտնի:

Թալրիզումն էնք: Մի օր Րաֆֆիի հետ գնացինք ագալին առաջնորդարանը՝ Աբելին տեսության: Նա հասած էր դահլիճում, նրա առաջ դրված սեղանի վրա երևում էին «Հյուսիսափայլի» տետրները և Պոլսի հաշ թերթերը: Նա տրամադիր էր երևում խոսելու: Սկզբում նա խոսում էր Սալ-

մաստի հայերի վերաբերությամբ, որոնք, ասում էր նա, թեև բազմաթիվ են և ունևոր, բայց դպրոցներ ունենալու համար չեն աշխատել, որ մի ցալալի երևույթ է և այլն: Հետո եպիսկոպոսը խոսքը դարձրեց Րաֆֆիի գրվածքների վրա:

— Ես ձեր աշխատությունները ծայրե ի ծայր կարդացի, — ասաց նա, — գովում եմ ձեր գրական եռանդը, բայց համաձայն չեմ ձեր գաղափարների հետ և ձեր գրության ոճը բուն հայերեն չեմ կարող համարել, դա մի անհեղձիկ գրվածք է: Ես նկատում եմ, որ դուք հետևում եք թե՛ «Հյուսիսսիայի» լեզվին և թե՛ նրա ուղղության: Խոստովանում եմ, — ասաց Աբելը, — որ Նազարյանցը, Նալբանդյանցը և իրենց գաղափարակից մի խումբ ուսումնական ընկերակիցները ժիրածիր գործում են մեր գրական ասպարեզում, բայց նրանք մոլորություններ էլ ունեն, որ հետևանք է օտար երկրում ստացած դաստիարակության: Նրանք պահանջում են, որ Հայաստանաց եկեղեցին վերանորոգվի, դա անկարելի է, Հայկական եկեղեցին այդպես էլ կմնա մինչև կատարած աշխարհի: Իսկ ձեզ էլ խորհուրդ եմ տալիս, որ փոխանակ «խըլվըլիկների», «ասլքիների» և «կայծերի» վրա աշխատելու, փոխանակ գռեհիկ ժողովրդի միջից «Մըլոյի, Մարոյի, Մըհեի» և այլ այդ տեսակ տիպեր վերցնելու՝ դուք ավելի լավ կանեիք, որ մեր անապատելի գանձի նման ազգային պատմությունից և մատենագրությունից ընտրեիք ձեր գրելու նյութերը, որոնք լի են բազմազան գեղեցիկ հատուկություններով: Դուք հետևեցեք իմ գրելու ձևին և ոճին, ա՛յ, ինչպես գրել եմ ես «Անուշավանը»<sup>17</sup> (ցույց տալով իր «Անուշավան» աշխատությունը, որը դրված էր իր գրասեղանի վրա):

Րաֆֆին, չկարողանալով կուլ տալ վարդապետի վիրավորական խոսքերը, բացեց իր բերանը.

— Սրբազան հայր, — ասաց նա, — ես էլ ծայրե ի ծայր կարդացել եմ ձեր «Անուշավանը». նա ո՛չ գրաբար է և ո՛չ աշխարհաբար, ո՛չ սղոսական բարբառով է գրված և ո՛չ արարատյան բարբառով. դա մի տարօրինակ և մտացածին ոճ

է, այդպէս էլ մտածում են մեր կղերականները: Փոխանակ ժողովրդի արտին մոտիկ և նրա խոսածի պէս գրելու, նրանք պահանջում են, որ ժողովուրդը մոտենա իրանց առաջարկած բարբառին: Եվ տեսե՛ք, այժմյան հայ ժողովրդի խոսած լեզուն որքան իրանից հեռու է թողել Եզնիկի և Եղիշէի լեզուն: Անկարելի է այդ երկու ծայրահեղությունները ի մի բերելու, այդպէս չի մտածում «Հյուսիսափայլը»: Նա գրում է ժողովրդի խոսածին պէս, որ գնալով հասարակաց լեզու և գրական բարբառ կդառնա և սրդեն դարձել է, իսկ ձեր գրելու ոճը, սրբազան հայր, հասարակաց չի կարող լինել, որովհետեւ ժամանակիս պահանջին հակառակ է: Գալով «Հյուսիսափայլի» պահանջներին, ոչ թէ միայն դուք, շատերն են ծուռ հասկացել: Պետք է իմանալ, որ նա իսկապէս շատ էլ հակառակ է, որ հայ եկեղեցին որեւէ օտարամուտ փոփոխության ենթարկվի կամ միանա մի այլ եկեղեցու հետ: Նա պահանջում է, որ հայ կղերը ուսլալ լինի, շարականները, երկարածիօք ընթերցվածները և ս. Ավետարանը աշխարհաբար լեզվով ավանդվեն: Պատարագը, որ տևում է 3—4, մինչև անգամ 5 ժամ տոներին, մի կամ 2 ժամում վերջանա, թեկուզ հենց գրաբար լեզվով էլ լինի: Մի ժամ բալական է պատարագի համար, մի ժամ էլ թող կենդանի լեզվով քարոզ լինի եկեղեցում, որպէսզի ժողովուրդը հոգևոր սնունդ ստանա հասկանալի լեզվով: Բայց բանն այն է, որ ժողովուրդը մի քանի ժամեր մնալով եկեղեցում փայտի նման՝ ոչ մի բան չի հասկանում, նույնիսկ եկեղեցական պաշտոնյաների մեծագոյն մասն էլ չի հասկանում, թե ինքն ինչ է ավանդում: Ես եղել եմ հոռոմեական և բողոքական եկեղեցիներում իբրև ունկընդիր. կաթոլիկ եկեղեցում թեև պատարագը տևում է 20 րոպե, ճայնավոր պատարագը կիրակի կամ տոներին մի ժամ միայն և մի կարճ քարոզ, իսկ բողոքական եկեղեցիներում ժողովրդին մատակարարում են հասկանալի լեզվով Ավետարանի ընթերցանությունը, քարոզներ և մի քանի հոգևոր երգեր, որոնք դարձյալ մի ժամից ավելի չեն տևում: Բայց մեր եկեղեցական արարողությունների վերջը չի գալիս: Այդ

դեպքում՝ ժողովուրդը հուսահատված խրթին լեզվից և անախորժ երգեցողությունից, դուրս է փախչում, և հոգևորականներն էլ դժգոհություն են հայտնում, թե ժողովուրդը ժամաներ չէ և ալլն: Ահա սրանց համար է, սրբազան, որ «Հյուսիսափալը» նոր պահանջներ է անում, բայց միշտ հայկական եկեղեցու կարգերի համաձայն: Մեր հոգևոր երգերը, աղոթքները և շարականները հրաշալի են իրենց խնկելի բովանդակությամբ, բայց ցավալի է, որ անգրագետ ժամատերերը նրանցից ոչինչ չեն հասկանում: Անցել են երկար դարեր ալլն ժամանակից, որ սակավապես հաչ ժողովուրդը գործ և պարսպամուկ չունենալով, բացի առավոտյան և երեկոյան եկեղեցու պաշտամունքներին ներկա լինելուց, օրվա մյուս ժամերին էլ մտնում էր եկեղեցին կամ մոտիկ վանքը, որ մի բան լսի անցյալից և սուրբերի վարքից: Ասածս վկայում է Հայամալուրքի գոյությունը, որ պատրաստված է հատկապես ալլ պարսպ ժամերի համար: Մեր եկեղեցական երկար արարողությունները հարմարեցրել են հիշյալ ժամանակներից, իսկ մեր օրերում հանգամանքները փոխվել են, հացի ահագին խնդիր կա մեջտեղում, որ ուտացվում է մեծ դժվարությամբ: Մարդիկ ամբողջ շաբաթը ալլնպես զբաղված են լինում, որ նույնիսկ կիրակի և տոն օրերին խուսափում են եկեղեցում երկար մնալուց: Անհասկանալի և աններդաշնակ երգեցողությունն էլ չունի իր գրավիչ կողմերը, որ աղոթավորներին հրապուրե: Ներեցեք, սրբազան, որ ալլնպես երկար խոսեցի. թող հաչ եկեղեցին մնա անփոփոխ մինչև աշխարհի կատարածը, ինչպես դուք, ալլնպես էլ մենք ամենքս ցանկանալով ցանկանում ենք ալլ: Բայց եթե նրան մի փոքր բարեփոխություն ներշնչվի մեր եկեղեցու նախավանդ կարգերի համաձայն, մեզանից ոչ ոք կրոնափոխ չի լինի: Մեզանից հազարներով կաթոլիկ և պրոտեստանտ են դառնում, բայց ինչու նրանցից էլ չեն դիմում դեպի մեր եկեղեցին: Պատճառը շատ պարզ է: Նրանց կրոնականները, ընթացիկ ժամանակից օգտվելով, իրենց եկեղեցու կարգերը թեթևացրել և հասկանալի են դարձրել, իսկ մեզանում դրա հակա-

ռական է, ծանր, երկար և վերացական է: Երկու խոսք էլ և վերջ: Դուք պահանջում եք, սրբազան, որ թող տալով հասարակական տիպերը, միայն մեր ազգային պատմությունից նյութեր վերցնենք: Թե մեկը և թե մյուսը հարկավոր են: Այժմս ավելի կարիք կա ազգի ստորին խավերում գտնվող գոեհիկների կյանքը և սովորույթները պատկերացնելու: Դա ժամանակի պահանջ է: Մենք պետք է նկարագրենք մինչև անգամ ընդհանուր կացությունը, որպեսզի ասպագայում մենք դատապարտելի չդառնանք, ինչպես մենք այսօր դատապարտում ենք մեր մախորդների անփութությունը, որ լավ չեն լուսաբանել հայ ժողովրդի կյանքը և նիստ ու կացը և այլն:

Եպիսկոպոսը, որ մի դյուրագրգիռ և բարկացող մարդ էր, լուռ լսում էր, երբ Րաֆֆին իր ճառը վերջացրեց, այսպես պատասխանեց.

— Հարգելի պարոն, ես ձեզ մի հորդոր և խրատ կարդացի, իսկ դուք մի երկար ճառ և քարոզ խոսեցիք ինձ: Մտո և քարոզ խոսելու իրավունքը վարդապետինն է, ես պետք է ճառեմ և քարոզեմ: Ես նկատում եմ, որ դուք էլ Նազարյանցի թելն եք հյուսում, նա իրեն վարդապետ է անվանում, իսկ դուք էլ քիչ է մնում, որ ձեզ քարոզիչ հրապարակեք: Վերջապես, ես ձեզ պատվիրում եմ, որ այսուհետև իմ ներկայությանը այդպիսի նորամուտ խոսքեր չարտասանեք, եթե ոչ...

Այս հանդիմանական խոսքերից էլ Րաֆֆին վշտանալով՝ սկսեց նորից ավելի բորբոքված խոսել: Ես նկատեցի, որ նրանց վիճաբանությունը երկար պիտի տևե, հեռացա մի կարևոր գործի համար, թող տալով, որ երկու շենք ու շնորհք միասին վիճեն, որքան կամենում են:

Մի քանի օրից հետո, երբ Րաֆֆիի հետ տեսնվեցա.

— Տեսաք,— ասաց նա ինձ,— ինչ խայտառակ կերպով վերաբերվեց վարդապետը դեպի իմ գրվածքը և իմ կարծիքները: Եվ դա մեր լուսամիտ և գիտնականի հոշակ ստացած

վարդապետն է. այժմ կարծես մի լավ գաղափար կազմած կլինեք, թե ինչ կլինեն մեր մյուս սևագլուխները...:

### Գլուխ տասներեքերորդ

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ 1868—1878

Այս երկրորդ շրջանում Րաֆֆին ամուսնացած է. ավելի խոնու, լուրջ և մտածող է դարձել: Նա երկունքի մեջ է, դեռ իրան չի ծանոթացրել գրական աշխարհին որպես հրապարակախոս: Նրա երկերից պատրաստ են «Փունջի» մի քանի հատորները, վառելառ աշխատում է «Խաչագողի հիշատակարանի», «Սալբիի» և «Կալծերի» առաջին հատորի վրա, հրանց փոփոխության ելթարկելով: 1864, 65 և 66 թվականներում նա իր սովորության պես, ինչպես շատ տեղեր՝ նույնպես էլ Թավրիզ գալիս և գնում է: Նա այդ թվականներում հղացել էր մի այսպիսի միտք էլ, որ իր հաշվին մի սեփական տպարան բերել տա Ռուսաստանից կամ Պոլսից:

— Մամուլն,— ասում էր նա,— լուսավորության բերանն է, եթե ես կարողանամ մի տպարան հաստատել, դա առաջին քայլը կլինի մեր պարսկահայերի համար և ինձ համար էլ այն դյուրությունը կունենա, որ ես նրանով հետզհետե իմ գրվածքները լույս աշխարհ կբերեմ և, թերևս, մի փոքրիկ լրագիր էլ կունենանք:

Րաֆֆիի այս դիտավորությունը հաջողություն չգտավ, հակասակ իր ջերմ ցանկության: Հաջողություն չգտավ, որովհետև այս երկրորդ շրջանը ինչպես ընթերցողը պիտի տեսնե, Րաֆֆիի համար դառնում է մի ավերանքի և հալածանքի շրջան:

Մելիք-Միրզայի տան և Րաֆֆիի կատաղի հակառակորդները հայտնի և ծածուկ այնքան աշխատեցին, որ գաղափար անարդար միջոցներով այդ տունը քարոքանդ արին:

Վաճառական Րաֆֆին սնանկ հրապարակվեց: Պատվամիրությունից զգացված՝ նա անդադար դիմում է Սալմաստից հեռի, Ուրմի, Թավրիզ և Թիֆլիս, իրանց սոսևորական գործակալներից հաշիվ է պահանջում, որ մի կերպով կարողանա իրանց գործերը ընթացիկ վիճակի մեջ դնել և դարձյալ շարունակել: Բայց գործը գլուխ չէր գալիս:

Թավրիզում 1867-ին հանդիպելով բանաստեղծին՝ Գևառեցի, որ ավելի մուսլ և ավելի մեխամադոս էր դարձել, էլ հանաքներ չէր աւնում: Նրանում այլևս չէր երևում նրա սովորական աշխույժ վստ կրակը, նրա հոգեկան թարմ զգացմունքները կարծես նրանից հեռացել էին: Նա ընկճված էր թեև, բայց դարձյալ գրասեղանից չէր բաժանվում: Պատոհմական սառնությամբ և հոնքերը կիտած՝ նա գրում էր մուսուրույզ և խռովահույզ:

— Ի՞նչ է, ի՞նչ է պատահել ձեզ հետ, — հարցրեցի մի օր ես նրանից, — որ ձեր նախկին խանդը հեռացել է ձեզանից, չեք խոսում և չեք զվարճանում:

— Էլ ի՞նչ եք ուզում, որ պատահի ինձ հետ, — պատասխանեց Րաֆֆին, — մեր ուխտյալ թշնամիները վերջապես հասան իրանց նպատակին. մեր դրամական կարողությունն և առևտուրը վտանգեցին, մեր կալվածները գրավեցին և մեզ անդունդը գլորեցին: Դրանք բավական չէին, — ավելացրեց նա, — մեր գործակալները, որ կեղտոտ և ապերախտ մարդիկ են եղել, այժմ նրանք էլ են սկսել մեզանից զանազան անիրավ պահանջներ անել իրանց խարդախ հաշիվներով, փոխանակ մեզ կարեկցելու և մեր սեփականը մեզ վերադարձնելու: Հոգիս դուրս եկավ դրանց հետ վիճելով. ոչինչ չեմ կարողանում հասկանալ դրանց լաբիրինթաների հաշիվներից. ինձ մնում է մի հույս միայն՝ ես որոշել եմ Թիֆլիս գնալ և, կարծում եմ, որ այնտեղի մեր գործակալի մոտ մի բավական խոշոր գումար պետք է լինի գանձված մեր վաճառողներից, որը կարող էր մեր գործերի ընթացքը մի փոքր փոխել: Ես շատ չեմ ցավում, որ մեր բախտը մեզանից այժմս երես է դարձրել, դրամական հարստություն, բնախտ

և վիճակ՝ դրանք փոփոխական են և գրեթե անցողական: Ես ավելի ցավում եմ նրա համար, որ մեր նյութական կարողությունը և մեր առևտրական վարկը օդը ցնդելուց հետո, որի վերջինը մեզ համար սովելի պատվաբեր էր, քան թե առաջինը, այժմ ես կորցնում եմ իմ թանկագին ժամանակը: Գրելու համար հարկավոր է խաղաղ վիճակ, հանդարտ սիրտ և ոգևորություն, և մի փոքր էլ խանդ. դրանք ամենքն էլ արդեն խույս են տվել ինձանից: Մեր անհրաժեշտ պահանջատերերը ինձ միջոց չեն տալիս, որ ես մի տեղ դադար առնեմ, հալածված որսի պես ինձ վռնդում են մի տեղից մի այլ տեղ: Նրանք ինձ պարտքերի մեջ խեղդել են, իմ բոլոր ապրուստի աղբյուրները փակել են: Աշխարհս կատարյալ դժոխք է, դժոխք: Բայց, այնուամենայնիվ, ես շատ չեմ զարմանում, թող ինչ ուզում են անեն, սակայն ես իմ գրչից չեմ բաժանվի: Ես նրան կգորեղացնեմ և թույլ չեմ տա, որ նա ժանգոտի. չպետք է վհատվել աշխարհիս պատահարներից, պետք է գործել:

Բանաստեղծը ուղևորվեց Սալմաստ, որտեղից էլ պետք է գնար Թիֆլիս, բայց առաջ, քան Կովկասի ուղևորությունը, ես նրանից ստացա հետևյալ նամակը, գրված Փայաջուկից, հունվար 1868-ին:

«Քրիստոնյաների ընդունած տարեթիվը փոխեց իր մի ցիֆրը, այդ նշանագրի փոփոխության պատճառով միլիոնավոր մարդիկ լցված ուրախությամբ գոչում են. «Ընորհավոր Նոր տարի», բայց ես չեմ սիրում հաղորդ լինել հասարակաց անխորհուրդ ուրախություններին, ուրեմն ներեցեք, որ միևնույն քաղաքավարությամբ չեմ բարևում Ձեզ: Ընդհակառակը, այդ փոփոխության րուպեներում իմ սիրտը լի էր վշտերով, և կարծես մի աներևույթ ձայն մեղմիկ շշնջում էր իմ ականջին, թե մի տարի ևս գնաց քո կյանքից, և դու մի քայլ ևս մոտեցար գերեզմանիդ: Դեկտեմբերի վերջին գիշերը ես նստած միայնակ և խորասույզ եղած խառն մտածմունքներում, հանկարծ լսելի եղան անսովոր դրոդմունք, և հրացանի

որուօրը փոխեց իմ սենյակի մեղամաղձական լուռությունը: Գյուղական խրճիթների կտորների վրա բարեկրճական կատաղի խտնաձայնություններ կային: Ես կարծեցի, թե գյուղացիք այդ սպառնալիքով հալածում էին սատանային, որ սկզբան հինուց բույն էր դրել նրանց խրճիթներում: Բայց ոչ, նրանք իրանց սովորական ավանդությամբ հալածում էին հին տարին նրա համար, որ նա խիստ չար էր և որ չէր բերել մեզ՝ հայերիս համար մի նոր բախտ: Թող նա կորչի ուրեմն... Քանի՜-քանի՜ հազար այդպիսի դեկտեմբերներ արտաբնել են մեր ուսմիկները, քանի՜-քանի՜ նոր տարիք սիրով ընդունել են, բայց նրանցից ոչ մինը չէր բերել նրանց համար մի երջանիկ բախտ: Արդարև, հոլովական տարիքը ոչինչ չեն ներգործում հայերի տխուր վիճակի վրա, պատճառ, որ բնության օրենքների համաձայն տարիքը փոփոխվում են. գնում է հինը, գալիս է նորը, բայց մեր հայերը անխտով իրանց գերեզմանական անշարժության մեջ երբեք չեն մտածում փոխել իրանց մեռելային դրությունը: Նրանք իրենց կյանքը չեն համաձայնեցնում տարիների ընթացքի հետ: Միով բանիվ, հայի համար չկա Նոր տարի<sup>18</sup>...

Ստացա ձեր ողորկած ներկա տարույս օրացույցը, որ կացուցանում է Ձեր առ ինձ ունեցած բարեկամական հիշատակարանը. որքան չնչին գնով եք գնահատում Դուք բարեկամությունը, որի հիշատակի համար կանգնած մետաղյա, մարմարյա, որձաքարե կոթողները, գրանիտե սյուները մաշվում փչանում են, իսկ ձեր հիշատակարանը մի գրքույկ է, որ տարին լրանալուց հետո կորուսանում է իր նշանակությունը և պիտի մի կողմ ձգվի: Ներեցեք այդ մի փոքր երգիծաբանությանս... Վերջին դասիդով (ոտքով գնացող սուրհանդակ) ստացա նույնպես Ձեր վերջին գրությունը. մի քանի թերթ «Մասիս» լրագրից, այլև մի թերթ «Ծաղիկ» լրագրից, որի մեջ կարդացի Մ. Նալբանդյանցի մահը: Այդ հոդվածը գոհացուցիչ չէր, ազգի այդ թանկագին զոհի ցավալի կորուստը նկարագրելու համար՝ հուշակալոր Հյուգոյի

գրիչը պետք է և Արուվյանի վառված, կրակված սիրտը: Մի՞թե այդքան կարճ պետք էր խոսել այն սողամարդի մասին, որ այնքան երկար ու սրտաշարժ ոճով խոսել է մեր ազգային կարիքների մասին: Գրած էիք, թե Նալբանդյանցի լուսանկարը տեսել եք մի պոլսեցի պարոնի մոտ և խնդրած եք, որ մի քանի հատ էլ բերել տա Պոլսից: Երևի մի քանի ամիսներ կտևեն, մինչև որ ստանաք: Բեր այդքան համբերություն»<sup>19</sup>...

Այդ նամակն ինձ գրելուց հետո Րաֆֆին Սալմաստից ուղևորվել էր Թիֆլիս և երկար աշխատել իր տարտամ գործերի վրա, որոնք շատ հեռու էին կանգնած կարգի տակ մըտնելուց: Արդեն նա եղել էր Թիֆլիսում իր ուսանողության ժամանակ, բայց այս անգամ նա գտնում է Թիֆլիսը շատ բարեփոխված, ինչպես ինքն է նկարագրում իր հետևյալ նամակում, որը ես նրանից ստացա 1868, օգոստոս 24-ին գրված:

«Ես այժմս Թիֆլիսումն եմ, դուք այդ վաղուց իմացած կլինեք, բայց ի՞նչ Թիֆլիս... Ո՛չ այնպես երևում է ինձ այժմ այդ զեխ ու շուալ քաղաքը, որպես տեսել էի նրան տասն տարի առաջ. այժմ ինձ այստեղ ամեն մի սուսրկա, ամեն մի իրողություն հրապուրում է և հիացնում... Դուք գիտեմ, կասեք, ի՞նչ հաճույական մի բան պիտի լինի մի կիսասափական և կիսաեվրոպական քաղաքում, որպիսին է Կովկասյան Թիֆլիսը: Ի՞նչ եք ուզում, սիրուն հավերժամարտո՞նք, կախարդական զբոսանքնե՞ր, գեղեցիկ ծառազարդ ճեմելիքներով... Միով բանիվ, ամեն ինչ, որ կարող են գրավել մեր խելքն ու միտքը՝ դուք կտեսնեք այստեղ:

Դրանք ցնորական բաներ են:

Բայց ես ունեմ այժմ մի նախանձելի շրջանակ, այստեղի ուսումնական և կարի աշխույժ երիտասարդներից: Իմ «Խըլվըլիկը» զարմանալի ընդունելություն գտավ տեղիս ընթերցող հասարակությունեն. քանի՜-քանի՜ գիշերներ եղել

են առանձին-առանձին ժողովներ նրա ընթերցանության համար:

Նազարյանցեն նամակներ են ստանում, նա պահանջել էր իմ գիրքը Մոսկվա ուղարկելու, որ տպվի իր «Հապտեր Հայաստանի» օրագրի մեջ, որ միտք ունի այս տարի հրատարակել: Մեր առևտրական գործի և ընկերական հաշիվների մասին, որոնց համար այստեղ եկած են, տակավին պիտի ուշանամ, որովհետև անիրավ Ջ-ն զանազան չարահոգի և մեզ թշնամի անձանց թելադրությամբ չկամի իր գործը մեզ հետ վերջացնել»<sup>20</sup>...

### Գլուխ տասնչորսերորդ

Րաֆֆին երկար մնաց Թիֆլիսում, աշխատելով ալեկոծության մեջ տատանվող իր նավի դեկը մի կերպով ձեռք բերել, բայց ոչինչ չէր օգնում: Երբեմն նա արհամարհանքով էր նայում դեպի այն թակարդը, որի մեջ գլորել էր նրան իրանց առևտրական տան հակառակորդ լեգեոնը: Թակարդի հյուսվածքի թելերը հասցված էր այդ միջոցին մինչև Թիֆլիս: Երբեմն էլ Րաֆֆին խիստ կատաղի հարձակումներ էր գործում հակառակ բանակի վրա, որպեսզի նրանց զինաթափ անի, բայց Գորդյան հանգույցը չէր լուծվում: Թե գործերի հանգամանքը և թե իր ընտանիքը տեսնելու տրամադրությունը նրան ստիպեցին վերադառնալ Պարսկաստան: Այդ միջոցին ես Թեհրանումն էի: Նավաբեկյալ Րաֆֆին տխուր և բեկբեկված սրտով ինձ գրել էր մի այսպիսի բովանդակությամբ նամակ.

«Թավրիզ, 22 մարտի 1869 ամի

Ավելորդ են համարում իմ գործերի այժմյան վիճակից ձեզ որևիցե տեղեկություն տալ, մտածելով այն իրողությունքն, որ այնքան անտանելի են ինձ, չցավեցնել նրանով մի... բարեկամի սիրտ: Բայց զարմանալի է, երբ մարդկային

կյանքի մի տարրը շեղվում է իր բնական կարգից, արդեն դժբախտության մրրիկը կատաղաբար սկսում է ամեն կողմից փոթորկել... ազգականը, բարեկամը, ընկերը և ծանոթը բոլորը հեռանում են նրանից... բայց մարդը, այդ դժոխքների դրության մեջ, ոչինչ հույս, ոչինչ մխիթարություն և ապավեն չէ գտանում իրան, բացի այն միակ աներևույթ **Էակից**, որովրա դրվում է անճարների հույսը: Արդարև, ես մի մեծ պատերազմ եմ մղում բախտի անհաջողության դեմ, բայց միևնույն ժամանակ իմ սիրտը և իմ խիղճն այնպես անդորր և հանգիստ են, որպես առաջ: Ես միշտ մխիթարություն եմ գտնում իմ տեսած, լսած և կարդացած հազարավոր օրհնակների մեջ, որ բախտի անհաստատ ճախարակի շրջանը երբեմն մինչև աստղերը բարձրացնում է մարդին, իսկ երբեմն մինչև անդունդն ի խոր գլորում: Կամք ճախախնամության օրհնյալ եղիցի, կվարվենք բախտի հեղափոխությանց հետ, միշտ ակներև ունենալով, որ աշխարհս անցավոր մի բան է...»<sup>21</sup>:

Բանաստեղծը իր անճախանձելի և անապահով վիճակը այդպիսի տխրամած սրտով նկարագրելուց հետո, այդ միջոցին նա այն աստիճանի արծաթի կարոտություն է զգում Թավրիզում, որ կարիքը ստիպում է նրան իր «Խըլվըլիկ» աշխատությունը գրավ դնել: Այն «Խըլվըլիկը», որի համար գիշերները իր երիտասարդական քունը կտրելով, իր հանգիստը, իր աչքերը և իր կուրծքը զոհել էր թե՛ նրան, թե՛ «Խաչագողի հիշատակարանին», թե՛ «Սալբիին» և թե՛ «Կայծերին»: Րաֆֆին թալանված իր բոլոր դրամական կարողությունից և ապրուստի միջոցներից, այս անգամ նորից դիմում է դեպի Կովկաս, որպես մի նոր Ֆիեսկո, որ միայնակ և ձեռնունայն կանգնելով դատարկ ու մերկացած ճավի մեջ, մեծ հուսով էր դեպի ցամաքը:

Բանաստեղծը 1870 թվականից մինչև 1875-ը Թիֆլիսումն էր, բայց դառն, խիստ դառն չքավորության մեջ: Նրա կրած դրամական տագնապը և ապրուստի միջոցների հա-

մար ունեցած տառապանքը խիստ զարհուրելի է եղել, մահավանդ մինչև 1872 թվականը: Նա մի օր ինձ հետևյալը պատմեց իր ունեցած կարոտ և չքավոր վիճակի մասին:

— Ինչո՞ւ թաքցնեմ, ես այն աստիճան հացի կարոտ մնացի Թիֆլիսում, որ օրվա կարիքն ինձ սոփյույեց մի հասարակ գործակատարի պաշտոնն ընդունել մի մագազինում<sup>22</sup>, այն էլ ոչ թե իսկական գործակատարի, այլ պարզապես դուքանչու աշակերտի պաշտոնն մի չնչին ոռնիկով: Օրվա հացս գտնելու համար հանձն առա այդ ստորությունը: Մագազինում պատրաստի հագուստներ էինք վաճառում, ես շուրերը հագցնում էի հաճախորդներին, քղանցքներից բռնելով, քաշքշելով հարմարեցնում էի և սուտ գովաբանություններ էի անում, որ մուշտարուն ձեռքիցս չժախցնեմ: Մի անգամ մի երիտասարդ ծանոթի մի քանի իրեղեններ ճիսիս էի վաճառել, այդ օրը քիչ էր մնում, որ ինձ մագազինից դուրս վոլդեդեին: Ա՛խ, ինչ զզվելի պաշտոն էր այդ և որքան անտանելի...

Բայց երբ 1872 թվականից բանաստեղծը ծանոթանում է արժանաճիշատակ Գրիգոր Արծրունու հետ<sup>23</sup> և նրա խորհրդով սկսում է գրել «Մշակում», նրա անապահով վիճակը մի քիչ փոխվում է և նա սկսում է շունչ քաշել:

Րաֆֆին փոքր առ փոքր սթափվելով չքավորության հարվածներից, 1873—1874 թվականներում լույս ընծայեց իր «Փունջ» անունով աշխատությունից երկու հատոր: Բայց «Փունջերը» ոչ թե երկու, այլ տասն հատորներով պիտի վերջանային: Նա որոշել էր սկզբում, որ իր ձգտումները և հրահանգիչ մտքերից շատերը ճկուն ուսանավորների մեջ ամփոփե, բայց հետևելով հանգուցյալ Գրիգոր Արծրունու լուսավոր կարծիքներին՝ հեռացավ «Փունջերի» մնացած հատորները հրատարակելուց: Արծրունու սուր և խորաթափանց աչքերը արդեն նկատել էին Րաֆֆիի գրական դեմքը և նրա մտքի մեջ կուտակված անհամար ժողովրդական հուզիչ գաղափարները, որոնց համար էլ շարունակ խրախուսում

էր նրան, որ հրապարակ դուրս գա կենդանի նկարագիրներով: Արծրունու խորհրդով մեր բանաստեղծն այնուհետև ալեյի ոգևորված անձնատուր եղավ իր արձակ վիպագրություններին, թողնելով լիրիկական բանաստեղծությունը, որ, սկետք է ասած, նրան բավականին հաջողվում էր: Այդպես նա բոլոր ուժով ընդգրկեց արձակ ռոմանտիզմը և շարունակեց մինչև իր կյանքի վերջը: Նա թեև այդ թվականներում ընդունված էր «Մշակի» խմբագրության մեջ, բայց 1872-ին՝ մինչև 1875-ը «Մշակը» շաբաթական էր, այն էլ սակավաթիվ բաժանորդներով, հասկանալի է, որ նրա նյութականն էլ նախանձելի չէր կարող լինել: Րաֆֆին իր «Պարսկաստանի նամակները» հետզհետե հրատարակելով «Մշակում», մի մասնավոր վարձատրություն էր ստանում: Այդ նամակների թիվը, կարծում եմ, 50-ից ալեյի պետք է լինեին, որոնցից 25-ը միայն տպվեցին, որոնք լավ տպավորություն էին թողնում և հետաքրքիր էին:

### Գլուխ տասնհինգերորդ

#### ՐԱՖՖԻՆ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑԻՉ

Հանգուցյալ Անդրեաս եպիսկոպոս Հովհաննիսյանը 1875 թվականին Ատրպատականի թեմակալ նշանակվելով<sup>24</sup>, եկավ Թավրիզ և իր պաշտոնն ստանձնեց: Նա մի համեստ և բարեխիղճ վարդապետ էր և պատկանում էր կրթված դասին: Նոր թեմակալը նկատեց, որ Թավրիզի միակ արական դըպրոցը՝ այժմյան Արամյան դպրոցը, համապատասխան չէ իր կոչման, ուստի և իր ամբողջ ուշադրությունը դարձրեց նրա վրա:

Այդ դպրոցը կառուցել էր նախկին թեմակալ, երախտաշատ Սահակ եպիսկոպոս Սաթունյանը 1850 թվականին<sup>25</sup>, մասամբ իր սեփական և մասամբ ժողովրդի արդյունքներով և իր բազմադիմի ջանքերով, որին էլ անվանել էր Ներսես V կաթողիկոսի հիշատակին նվիրված, այն դիտավորու-

թյամբ, որ դպրոցը Ատրպատականի հայոց նոր սերունդի մտավոր զարգացման բավականություն տա: Բայց հանգուցյալի մահից հետո նորակառույց դպրոցը իր որոշ նպատակով չէր ընթացել: Ծիշտ մի քառորդ դար սահել էր դպրոցի գլխով, «որպես հողմն զոր հոսե»:

Նոր թեմակալը թե եկեղեցու բեմից և թե առաջնորդարանում ժողովներ կազմելով, բացատրեց հասարակության ուսման կարիքները, դպրոցը նորանոր փոփոխության ենթարկելու պետքը՝ նոր մանկավարժական ուղղությամբ և այլն: Բացատրեց, որ եթե ժողովուրդը անտարբեր մնա, ինքն այդ դեպքում միայնակ ոչինչ չի կարող առաջացնել: Հասարակության առաջավոր մասը, ըմբռնելով թեմակալի կուտորական օգտակար առաջարկությունները և իր աջակցությունը խոստանալով, դիմում է անմիջապես դրամական հանգանակության, որը մի քանի օրվա մեջ հասցնում է մոտ տասն հազար ռուբլիի: Թեմակալի ջանքերով պատրաստվեց մի ընդարձակ ուսման ծրագիր դպրոցի համար և կազմըվեց մի նոր հոգաբարձական մարմին՝ 6 հոգուց բաղկացած: Նոր թեմակալը այնուհետև մի քանի ուսումնասեր և բանիմաց անձիքների հետ աշխատելով, հաստատեց և մի գրադարան-ընթերցարան, որ դպրոցի չափ կարևոր էր, Պոլսից և Կովկասից ստացվեցան հարյուրավոր ընթերցանության օգտակար գրքեր, հայերեն և օտար լեզուներով: Այդ միջոցին՝ գրական աշխարհին ծանոթ պ. Հ. Առաքելյանը<sup>25</sup>, որ մեր քաղաքումն էր բնակված, գործում էր երիտասարդական մեծ եռանդով: Պետք է ավելացնել, որ ընթերցարանի կազմակերպության համար մենք նրա ջանքերին ենք պարտական: Նոր հոգաբարձությունը մի քանի ուսուցիչներ հրավիրեց Արամյան դպրոցի համար, որոնցից մեկն էլ Րաֆֆին էր:

— Երբ Արամյան դպրոցի հայերեն լեզվի ուսուցչության պաշտոնը Թիֆլիսում ինձ առաջարկեցին,— ասում էր Րաֆֆին,— սիրտս ճխալով ընդունեցի և անմիջապես ուղեվորվեցի դեպի Պարսկաստան: Թիֆլիսը ես շատ եմ սի-



Ավագ Ավթանդիլյան  
(1838—1917)



Թավրիզի Արամյան դպրոցը, ուր որպես սանկւլարո՞ւ աշխատել է Իւսէֆին

րում,— ասում էր նա,— բայց կյանքի պայմանները թանկ են այնտեղ: Ես թեև մի կերպ ապրում էի, բայց միշտ ընտանիքս հեռու: Եթե ընտանիքս Թիֆլիս փոխադրեի, մեծ ծախքեր պետք է անեի, որը ես չէի կարող գտնել, բայց այսուհետև հեշտությամբ կապրեմ Թավրիզում, ընտանիքիս հետ, որովհետև կյանքի պայմանները այստեղ ավելի նպաստավոր են: Մանավանդ որ ես շատ սիրում եմ մեր նոր սերունդի կրթական գործերով պարապելը: Մի այլ առավելություն կա ինձ համար, որ այստեղ հանդարտ ապրելով՝ մի կողմից թե՛ իմ հեղինակությունը կպատրաստեմ սպագորության համար և թե՛ տեղիցս կթղթակցեմ «Մշակին», որը ինձ համար ավելի քան ցանկալի է: Արամյան դպրոցով մի նոր շրջան բացվեցավ պարսկահայի առաջ, կազմելով մի նոր վերածնության դարագլուխ:

Դրանք էին ահա իսկական առիթները, որոնցից Րաֆֆին ուզելով օգտվել, նոր հույսերով և նոր եռանդով շինված՝ եկավ, բնակվեց Թավրիզ և մտնելով ուսուցչական նոր կազմի մեջ, սկսեց շարունակել իր պաշտոնը Արամյան դպրոցում: Հինգ տարի էր, որ ես չէի տեսել Րաֆֆիին. չքավորության սև օրերը և դառն ապրուստը նրան այնպես էին ընկճել, որ նա գրեթե կմախք էր դարձել: Նրա երեսի և ճակատի վրա դրոշմվել էին խորշումներ, աչքերը առանց ակնոցի համարյա թե լավ չէին տեսնում, կերպարանքն ավելի մուսլ և ձայնն ավելի խուպոտ էր դարձել, նրա միջակ հասակը ավելի փոքր ծավալ էր դարձել: Մի բան, որ նրանում չէր փոխվել, դա նրա հպարտ ու բարձր պահած գլուխն էր, որ երբեք չէր խոնարհվում ոչ ոքի առաջ, և դա նրա ինքնաճանաչության հատկություններից մեկն էր:

Րաֆֆին ցերեկը պարապում էր դպրոցում, իսկ գիշերը հանգիստ նստած գրում էր և պատրաստում էր վեպերը՝ լի կորովով: Մի քանի ամսվա ընթացքում նա այնպես փոխվել, այնպես զվարթացել էր, որ կարծես թշվառության երեսը չէր տեսել: Նրա դեմքը ցույց էր տալիս, որ նա իր այժմյան վիճակից խիստ գոհ էր: Մի բանից

միայն, որից ինքն էլ երկյուղ էր կրում, դա նրա կուրծքն էր, որ սկսել էր խրխուլալ: Նրա թոքերը կարծես քանդվում էին: Հանգուցյալը մի օր անհանգիստ պատկած էր իր սենյակում. երբ ես ներս մտա, նա սկսեց իր մասին պատկեր խոսել.

— Իմ կուրծքս իմ գերեզմանն իջնելու սանդուխդներն է պատրաստում թեև, բայց ինձ թվում է, որ դեռ մի քանի տարիներ էլ կապրեմ: Ինձանում արդեն մարմին ու միս է դարձել գրելը. գիտեմ էլ, որ այսպես վրա ընկած գրելը՝ իմ առողջությունն ավելի է խախտում, բայց ես չեմ կարող մի անգամ սկսածը բաց թողնել: Մեր նոր սերունդը ընթերցանության գրքեր չունի,— ասում էր նա,— անցել է «Նրազահան» և «Պղնձե քաղաքի» և դրանց նման գրքերով պարսպելու ժամանակը. ես մեր նոր սերունդին ուշագրավ և միտք մշակող նոր վեպեր, նոր պատմական վեպեր պետք է տամ, որքան կներեն իմ ուժերը: Թող ավելի բարձր գրվածքները, բարձր վեպերը գրեն նրանք, որոնք ավելի բարձր ուսում են ստացել: Ով ինչ կարող է: Ես թեև այժմս ծերանալու վրա եմ, բայց միտքս արթուն է, ես պետք է կովեմ նեղ հալացքների և նախապաշարմունքների դեմ, որոնք հասարակության թարմ ձգտումները կաշկանդել են: Ես անշեղ պետք է հետևեմ իմ այս ծրագրին:

Այդպես նա գրեթե ընդմիջոտ ոգևորված առաջ էր տանում իր գաղափարական վսեմ գործը: Թալիբզում այդ միջոցին թեև չկային աչքի ընկնող երևույթներ, բայց պետք է խոստովանած, որ հասարակական կյանքը լավ պայմանների մեջ էր: Նկատելի էր, որ մի խումբ ուսման արժանիքը հասկացող պարոնների ջանքերով կազմվեցան դպրոց, ընթերցարան, հոգաբարձություն և ուսուցչական մարմին, որոնցով առաջ էր տարվում ուսման գործը հաստատ քալերով: Հայ հասարակությունը համակրանքով էր ողջունում այդ ազգային գեղեցիկ ու նորարարող երևույթները. Րաֆֆին էլ այդ միջոցին խիստ հարգված էր ամենքից: Հասարակության մեջ հռչակ ունեցող անձինք երբ մի հրավերը կամ ճաշկերույթ էին տալիս, Րաֆֆին էլ հրավիրված էր

լինում, բայց շատ քիչ անգամ էր մասնակցում: Նա չէր սիրում աղմկալից կյանք և ատում էր հանդեսները: Կերուխումի մեջ էլ նա խիստ չափավոր էր և ժուժկալ: Նրա սիրածը մի կտոր խորոված էր, մի կամ երկու բաժակ գինի, իսկ լավ թեյը և ընտիր ծխախոտը նրա անբաժան ընկերներն էին իր գրասենյակում: Մի քանի բաժակ թեյ կիսեր ու կսկսեր ծխել, այնուհետև կգրեր ու կգրեր:

Ես *Garte blanche* ունեի նրա մոտ գնալու համար: Ջսեռային երկար գիշերները մոտեցել էին, որոնց նա անհամբեր սպասում էր: Այդ երկար գիշերների մեջ էր գտնում նա իր հրճվանքը, որպեսզի անձնատուր լինի իր վեպերը գրելուն: Երեկոյան ժամը 6-ն էր, որ ես մի օր մտա նրա գրասենյակը: Այս իրիկուն, ասացի ես, պ. Թումանյանցների տանը հրավերք կա, գիտեմ, որ դուք էլ հրավիրված եք, վեր կացեք միասին գնանք:

— Դուք գիտեք, որ ես չեմ կարողանում հաշտվել հրավերքների հետ,— պատասխանեց Րաֆֆին,— այս իրիկուն, որքան ինձ հաշտնի է, այնտեղ կլինեն բազմաթիվ հյուրեր, լավ ուտելիքների հետ կլինեն և լավ ըմպելիքներ, և դուք ինչ եք սպասում մի այդպիսի ժխորից: Անտվոր կերակուրները, անտվոր կյանքի շրջանը ինձ այնպես հոգնեցնում են, այնպես ջարդում, որ մի քանի օրեր են պետք լինում ինձ, մինչև որ ես իմ նախկին տրամադրության վերադառնամ: Նրանք ազնիվ մարդիկ են,— ասաց նա,— և մեզ կներեն մեր բացակայության համար, արի՛, չգնանք, ես սիրում եմ փոքրիկ բարեկամական շրջանը, այս իրիկուն այստեղ ինձ մոտ անցկացնենք, ես կարծում եմ, որ վատ չի լինի:

— Շատ ճիշտ է ձեր նկատողությունը,— պատասխանեցի ես,— բայց, այնուամենայնիվ մի ստանձին կարիք էլ կա սովորական կյանքին փոփոխություն տալու համար: Հանդեսները, բազմամարդ ընկերությունները և զանազան շրջաններն էլ ունեն նշանակություն: Պետք է մտնել այդպիսի շրջանները թե՛ լսելու և թե՛ խոսելու համար: Լավ չէ

այդպես կտրված, այդպես անշատ ապրելը, պետք է մոտենալ և շփվել հասարակական խավերի հետ:

— Դուք իմ խոսքերի համար կացին ունեք պահած,— ասեց նա, և հագիվ թե համոզվեց:

Մենք գնացինք: Սեդանի վրա նա իրան այնպես պատկառանքով էր պահում, որպես մի նորահարս. նա շատ չէր խոսում, ուտում էր շատ սակավ քանակությամբ, և երբեմն էլ ակնոցների տակից նկատում էր սեղանակիցներին: Նրա մթնոճած դեմքը նկատելի էր: Բայց երբ սեդանի վերջում խոսք եղավ մի օրիորդաց դպրոց հիմնելու և մի մշտական ուսուցչական խումբ պահելու մասին, Րաֆֆիի տրամադրությունը փոխվեց, և նա սկսեց հրապուրված խոսել:

— Մեր մայրերը դաստիարակված չլինելով՝ մեզ ոչինչ չսովորեցրին, ոչինչ չտվին,— ասաց նա,— հայ կինը նույնն է մնացել գրեթե ամեն տեղ, ես չեմ խոսում բացառությունների վրա: Պարոններ, եթե դուք ցանկանում եք կրթված զավակներ ունենալ, դրա համար էլ հարկավոր է կրթված մայրեր պատրաստել, և այդ պետք է ապասել մի օրիորդաց դպրոցից, որի անհրաժեշտությունը ակներև է և ոչ միայն Թավրիզում, այլ ամբողջ պարսկահայերի մեջ: Կրթությունը նախ ստացվում է ընտանիքից, իսկ հետո՝ դպրոցից: Կրթված մայրը օրորուցում պետք է նախապատրաստի իր երեխային՝ նրա ականջներին հայկական օրորներ ասելով, Աղասու մոր երգը հնչեցնելով: Երկար, շատ երկար կտեն, մինչև որ մեր իգական սեռը կոռնելիաներ ծնե, հարուցված խնդիրը ստիպողական է և անհրաժեշտ, պետք է ստաճություն տալ օրիորդաց դպրոցին: Իսկ մշտական ուսուցչական խումբ պահելը դեռ վաղաժամ է Թավրիզի համար, դա այն ժամանակ կարելի կլինի, երբ մեր դպրոցը զարգացած աշակերտներ կհասցնե, առ այժմ եղածները պետք է պահպանել և լավ վարձատրել: Ես շատ անգամ դառնապես գանգատվել եմ, թե ժողովուրդը լավ չի վերաբերվում դեպի ուսուցիչները, բայց պետք է այն նկատի առնել, որ մեր ուսուցիչներն էլ շատ քիչ բան են տվել հասարակության, գոնե մինչև այսօր: Տես-

նում եք, «Մշակ» լրագիրը ինչպես է հարգվում հասարակությունից, որովհետև նա ծնվել է ժողովրդի համար, նա տալիս է հալ ժողովրդին այն նյութը, այն պաշարը, որոնք նրան օրըստօրեկան կերպով պետք են և օգտակար: Այդպես էլ մեր ուսուցիչները պետք է տան հասարակությանն, ազգին լավ կրթված և պիտանի անդամներ, որպեսզի իրանք էլ հարգվեն:

### Գլուխ տասնվեցերորդ

Մեր նորահաստատ ազգային ընթերցարանը նախանձելի դիրք էր բռնել: Նա, բացի գրադարան լինելուց, դարձել էր և մի տեսակ հանդիպատեղի: Վաճառական դասից, ուսուցիչներից և ընթերցասեր երիտասարդներից շատերը նրա բացման որոշ երեկոներից ներկա էին լինում մինչև գիշերվա ուշ ժամանակ՝ զբաղված լրագիրներ կարդալով և գրախոսություններ անելով: Ընթերցարանը ուներ տետուշ, գանձապահ, քարտուղար, որոնք ընտրվում էին անդամակիցների ձայներով: Քարտուղար էր ընտրված Րաֆֆին, որ գրեթե միշտ գալիս էր թե՛ իր պաշտոնը կատարելու, թե՛ խոսելու և թե՛ ընթերցանության գրքեր վերցնելու: Ես նկատում էի, որ նա վերցնում էր Ժորժ Սանդի, Էոժեն Սյուի, Ալեքսանդր Դյումայի և Վ. Հյուգոյի հատորներից, որոնք թարգմանված էին պոլսական աշխարհաբարով, Պոլսում և Զմյուռնիայում: Դրանց մեջ՝ նա Հյուգոյի գրվածներից հետո փոքրիշատե նշանակություն է տալիս Մոնթե Քրիստոյին, իսկ հրապուրված և ծարավի կերպով կարդում էր Հյուգոյի հատորները՝ որպես հաիշտակված սիրահար: Տուրգենևի գործերից էլ նա կարդում էր և շարունակ կասեր, որ դրանք իրանց գեղեցիկ դարձվածքներով և պարզությամբ ուս գրականության զարդն են կազմում:

Ես մի օր ներս մտնելով բանաստեղծի գրասենյակը և նկատելով նրան՝ խորատուզված «Թշվառների» ընթերցանու-

թյան մեջ, ուզեցի նրան մի փոքր գրգռել և բացականչեցի.

— Ինչ եք այդպես վրա պրծել այդ ֆանֆարոն ֆրանսիացու գրվածքի վրա, դրանք ընթերցողի ուղեղում միայն երևակայական տպավորություն են թողնում, ավելի ոչինչ:

Րաֆֆին գլուխը բարձրացնելով և մի ապշած հայացքով ինձ նայելուց հետո, պատասխանեց:

— Մի այդպիսի կարծիք ես երբեք չէի սպասում ձեզանից, ես այն կարծիքի էի, որ դուք Հյուգոյի փառաբանողներից եք... Ո՛չ, անկասկած դա մի կատակ է, ես ձեզ շատ անգամ նախանձել եմ,— ասաց նա,— տեսնելով Հյուգոյի բնագիր հեղինակությունները ձեր գրասեղանի վրա, որոնք ես չեմ կարողանում կարդալ: Ես կարդում եմ միայն հայերենի թարգմանածները, որոնք բնագրի համն ու հոտը չունեն,— և ավելացրեց,— «Երանի է քեզ, Ֆրանսիա, որ Հյուգոյի պես բանաստեղծ ես ծնել, և ով կարող է հավասարվել նրան»:

Վերջին խոսքերը կարծես նա իր սրտի խորքերից հանեց: Պետք է ասած, որ Րաֆֆին իրավունք էլ ուներ նախանձելու, որովհետև նա ոչ մի եվրոպական լեզու չգիտեր, բացի ռուսերենից, այն էլ ո՛չ մեծ չափերով: Եթե նա գիտենար եվրոպական լեզուներ և ունենար բարձր ուսում, գուցե նա այդ չափերով չէր ենթարկվի ո՛չ այս, ո՛չ այն հեղինակի դարձվածներին և ո՛չ էլ Հյուգոյի ազդեցության, որ պարզ երևում է համարյա թե նրա վիպագրություններից շատերի մեջ: Հավատալով, որ այդ այդպես է, հավատալով, որ նա դավաճանել է ռոմանտիզմի և գեղարվեստի կանոններին, հավատալով, որ նա նմանողության հետևելով՝ գոռով յուրացրել է ստվարաթիվ էֆեկտներ և կրկնություններ, որոնցով հոգեբանորեն դատողները պետք է ասեն, թե դրանք բանաստեղծի հետևողության պակասություններն են, բայց այսուհանդերձ Րաֆֆին մնում է միշտ հաշվիպագրական աշխարհի առաջընթաց գիևվորը: Նրա մեջ կամքը այնքան զորեղ է եղել, որ հաղթելով ստվար դժվարություններին, նա միայնակ առաջ տարավ իր բազմաթիվ աշխատությունները՝ արյուն քրտինք թափելով:

Ես, շոշափելով նրա պակաս կողմերը, այս էլ ասեմ, որ խալֆայական դպրոցից դուրս եկած մի բանաստեղծ է նա, մի բնական ձիրքերով օժտված բանաստեղծ, որին չի հաջողվում բարձր ուսում ստանալ, որին և չի հաջողվում հայերեն լեզվով նպատակահարմար վիպական գրքեր գտնել, որոնցով կարողանար իր բեղմնավոր ուղեղը զորացնել։ Դիմել օտար լեզուներով կլասիկական, քնարերգական, ռոմանտիկական և այլն հեղինակությունների, չէր կարող։ Ուրեմն, նրան մնում էր միայն մի ելք։ Դա այն ելքն է, որին էլ դիմել է նա։ Նրա թերությունն էլ կապանում է նրա մեջ, որ շատ է ենթարկվել նմանողության, և այդ է նրա հոգեբանական թույլ կողմը։ Ուրիշ կերպով էլ Րաֆֆին Րաֆֆի չէր կարող լինել, շատ-շատ նա մեզ համար մի աշուղ պիտի դառնար՝ նկարագրելով զանազան լեգենդներ, հին գրույցներ և ավանդավեպեր «Ալլի Քարամի» նման, կամ պիտի երգեր մի այսպիսի բան.

Ո՞վ էր տեսել էս աշխարհս էս օրին,  
Մեր մեղացն շարժը բանդեց Ակոռին<sup>27</sup>։

Եվ ինչպես կարելի է համեմատել այդ երգվածը «Զայն տուր, ո՞վ ծովակի» հետ։ Այլ պայմանների մեջ են ծնվել կրթված աշխարհի բանաստեղծները։

Բանաստեղծը շարունակ իր գրասեղանի վրա պահում էր պոլսական աշխարհաբարով թարգմանած վեպերից, ըստ մեծի մասին Հյուգոյից, բայց նա ատելով ասում էր արևմտյան աշխարհաբարի գրելու ձևը, ոճը և թափօթիած տառադարձությունը։ «Պոլսական բարբառը, — ասում էր Րաֆֆին, — բառերով է միայն հարուստ, իսկ նրա երկարաձիգ նախադասությունները և տարօրինակ հնչմունքները անտանելի են. օրինակ՝ փան մը ըսել (մի բան ասել), քորց մը ընել (մի գործ անել), փալական քեշ կըլլա (բալական գեշ կլինի), թասս սորված եմ (դասըս սովորել եմ) և այլն, որոնք խիստ անսովոր են հայ ականջների համար, և կարծես դրանք թմրած մտքերի հնչմունքներ լինեն։ Այդ խտտորմունքների

պատճառը,— ասում էր նա,— ավելի Մխիթարյան գիտնական հայրերն են եղած, որ փոխանակ նոր աշխարհաբարը այդ ակտերից մաքրելու, ավելի և ավելի տարածել են»:

Երբ ես նկատում էի, որ Րաֆֆին լավ տրամադրության մեջ է, առիթներ կտայի, որ նա մի քիչ խոսի:

Գիշեր է, և մենք ազգային ընթերցարանումն ենք: Ես երկար թերթում էի Պոլսից ստացված լրագիրները, հանկարծ Րաֆֆին այդ նկատելով հարցրեց.

— Այդ ի՞նչ եք կարդում:

— Պոլսից նոր ստացված թերթերը:

— Ի՞նչ եք գտնում դրանց մեջ կրթական:

— Ես մի քիչ սիրում եմ պոլսական ոճը:

— Ինչո՞ւ եք սիրում:

— Որովհետև նա ավելի կոկված է, քան թե մերը:

— Ինչպե՞ս եք գտնում նրա ուղղագրությունը:

— Է՛հ, դա էլ մի մոդայի պես բան է, էլի:

— Իսկ ի՞նչ կասեք նրանց լրագրական ուղղությանը:

— Նրանց ուղղությունն էլ մի տեսակ ուղղություն է:

— Ո՛չ,— ասաց Րաֆֆին,— դուք գործին թե քննական աչքով չեք նայում և թե ձեր էսթետիկան լավ զարգացած չէ:

Րաֆֆին երբեմն ինձ հետ մենտորի պես էր վարվում, որովհետև նա ինձանից 6 տարով էլ մեծ էր<sup>28</sup>:

— Պոլսական-տիրացուական ուղղությունը,— վրա բերեց նա,— որը դուք սիրում եք, չունի իր հրահանգիչ կողմերը: Պոլսի լրագրությունը՝ երկար տարիներ ախ ու վախ քաշելով, ափսոս, ավաղ Հայաստան կանչելով և զանազան հառաչանքներ արձակելով, բթամիտ է դարձրել տեղական ժողովրդին, խարխալեցնելով նրան այդ տափակ ուղղությամբ և մեռելային հեծեծանքներով: Ցավալի է,— ասաց նա,— որ նրանց խմբագիրները նոր սերունդին չեն տալիս սթափեցուցիչ գրական պաշար: Ժամանակն է, որ նրանք իրանց լրագրական ուղղության փոփոխություն տալին՝ մոտեցնելով նրան ժողովրդի սրտին, կրթելով նրանց թմրած և ապշած միտքը: Ժամանակն է, որ թոթափելով տղայական

խանձարուրքը, փոխանակ իրանց էֆենդի-բեյերի ունեցած ապրուստը, բնակարանը և կյանքի զանազան երևույթները նկարագրելու, ժողովրդին տալին այնպիսի կենդանի նկարագիրներ, այնպիսի զարթեցնող վեպեր, որոնցից նա կարողանար մտավոր ուժ և պաշար հավաքել: Ժամանակիս պահանջն ուրիշ է, դուք անշուշտ հիշում եք մեր Միրան աղային, մնացածը հասկանալի է:

Ես կարծում եմ, որ ընթերցողը ինձ հետ կհամաձայնի ելնթադրելու, որ Րաֆֆին իր պարզ ու վսեմ գաղափարներով և իր զորեղ գրչով միշտ մնացել է ժողովրդի սրտին մոտիկ, ժողովրդի մոռացված խավերը նկարագրող վիպասան՝ առանց սեթևեթելու: Կարդալով նրա բազմաթիվ նամակները, հոդվածները և հեղինակությունները, ես գոնե չեմ հիշում նրա մեծաքանակ գրվածքներում մի այնպիսի վայնասուն, որպիսին հիշատակվեց վերևում: Մի անգամ ես հանդիպել եմ նրա գրվածքներից մեկում՝ «Հյուսիսափայլի» մեջ, որտեղ Րաֆֆին խոսելով հայրենասիրական բուռն զգացմունքներով, բերում է մի այսպիսի հառաչանք, այն էլ մի սրբազան հեղինակի հոգեբուխ երգերից.

Հուրըն սիրոյ իմոյս ազգի,  
Միշտ ի խարոյկ սըրտիս վառի,  
Զուրք արտասուաց ո՛չ շիջանի,  
Օգնեա՛, Յիսուս, Փրկիչ քարի<sup>29</sup>:

Րաֆֆիի համար առանց գրելու օր չկար. խուսափելով կյանքի ամեն տեսակ լավ ու վատ երևույթներից, նա լարվում էր իր գրասեղանի առաջ և կուրծքը դեմ տված՝ գրում: Նա այն տեսակ գրողներից էր, որոնք քիչ են մտածում և շատ են գրում: Նրա միակ հոգեկան մխիթարությունն այն էր, որ իր վշտահար կուրծքի խորին վերքերը, իր նվիրական գաղափարները ամփոփե իր սիրած երկում: Երբ նա խորասուզված էր լինում «Կայծերը» գրելու մեջ, այնպիսի թախժալի կերպարանք էր ընդունում, որպես մի սգավոր: Ո՛չ մի կատակով, ո՛չ մի գվարնալի խոսքերով, նույնիսկ ցնծության

աղաղակներով չէր կարելի հրապուրել նրան: Դժվար էր հեռացնել նրան իր մի անգամ սկսածից, լինել դա մի մեծ գրվածք կամ մի հոդված: Նա իր մտքում մի անգամ հղացած պատկերը, բազմակողմանի ամբողջը մինչև չվերածել թղթի վրա, նրանից չէր բաժանվի: Այդ դեպքում նա մոռանում էր իր մոտ եղած հյուրը, իր ընտանիքը, մինչև անգամ՝ իր կյանքը:

Մի կիրակի օր արդեն ժամը երեքն էր, երբ ես այցելեցի վիպասանին, նա պինդ կպած էր իր գրասեղանին: Վեր կացե՛ք, ասացի ես, գնանք մի պտույտ անելու, տերուհական օրերին շատ չեն զբաղվում, այլ հանգիստ են մնում և մի քիչ էլ զբոսանքներ են անում:

— Այո,— պատասխանեց նա,— ես էլ գիտեմ, որ կիրակի օրերում գեղեցիկ զբոսանքներ են անում մի լավ մաշից հետո, բայց արդեն ժամը երեքն է, և ես դեռ չեմ մաշել և ախորժակ էլ չունեմ: Չափազանց աշխատությունը ախորժակս կտրել է:

Ես կարեկցելով նրան և մի քանի մտերմական կշտամբանքներ անելով ավելացրի, որ այդչափ վրա ընկած գրելը կարող էր նրա առողջության վտանգ սպառնալ: Իսկ հետո սկսեցի նրան մի նորություն, մի հետաքրքիր անցք պատմել հանգամանորեն, որ նոր էր տեղի ունեցել մեր քաղաքում: Ես խոսել էի մոտ 10 րոպե, բայց նա այդ միջոցին առանց խանգարվելու թե գրել էր և թե լսել միաժամանակ: Երբ ես դադարեցի խոսելուց, նա երեսը դարձրեց դեպի ինձ և կրկնեց իմ ասածները առանց մի կետ անգամ մոռանալու, իր կողմից էլ զանազան նկատողություններ անելով: Եվ այդ առաջին անգամը չէր. ես մի քանի անգամ փորձել էի նրա մտքի այդ կարողությունը: Այդ օրը նա աշխատում էր «Կայծերի» վրա: Բաֆֆին մի այսպիսի սովորություն էլ ուներ, որ երբեմն իր գրածներից մի պրակ կդներ սեղանի վրա և կհանձներ իր բարեկամների ուշադրությանը, որ կարդան, երբեմն էլ ինքը կկարդար իր հատուկ տոնով: Վերջացնելով մի կամ երկու գրվածքը՝ ապա կհարցներ. «Ինչ տպավորու-

թյուն թողեց ձեզ վրա, ես կարծում եմ, որ հավանեցիք, այնպես չէ»։ Բայց անկարելի էր մի թեթև նկատողություն անել կամ մի փոքրիկ փոփոխություն առաջարկել, նա անմիջապես իր պատճառները հեղեղի պես դուրս կթափեր, որ իր գրածն ու ասածը լրիվ հաստատե։ Նա շատ համառ էր իր համոզմունքի մեջ և հավատարիմ՝ իր գրչին ու ընդգծած գաղափարներին։ Նա, թե իր հարուստ և թե չքավոր միջոցներից, միշտ հավատարիմ մնաց իր տաժանակիր բեռին, որ տանում էր առանց հոգնելու, և որը մի մարդու, մի հասարակ արարածի գործ չէր։ Նա գիտեր, թե ինքն ինչ է, նա իրան ավելի լավ էր ճանաչում։

Ես մի ուրիշ անգամ էլ այցելեցի Րաֆֆիին և գտա նրան այդ օրը իր բնական տան բակում՝ զբաղված իր բազմաթիվ ծաղկամաններով, որոնց մեջ եղած գույնզգույն և հոտալեւծ ծաղիկները ինքն էր ցանել, տնկել և մշակել։ Ամառ էր, ծաղկամանները շարված էին ստվերում, բակի հյուսիսային պատի երկարությամբ, և ինքն էլ թեքված դրությամբ, նրանց զննողական հայացք տալով, մոտից տընտղում էր ու իր մատներով մի ինչ-որ բան էր շինում, որ ինքն էր միայն հասկանում։

— Այդ ինչ էք անում,— հարցրի ես։

— Տեսնում եք, էլի։ Ինչպես գիտեք, ես ծաղիկներ շատ եմ սիրում, և դրանք շատ խնամք են պահանջում, հակառակ դեպքում կփչանան։ Ծաղիկների բուրմունքը, նրանց անուշ հոտը մարդու ճաշակն ու հոտոտելիքը ազնվացնում են։ Նստեցեք հենց այստեղ, և երեկոյան թեյը այստեղ խմենք, ծաղիկների համոզեալ։ Թեյ խմելու միջոցից ես նկատեցի, որ բանաստեղծը ոչ միայն տրամադիր է երևում խոսելու, այլև կատակներ անելու։

— Ես ցանկանում եմ,— ասաց նա,— որ այսօր ձեր ճապարհորդական տոպրակը էլի մի քիչ թափահարեմ։

Ուզում էր ասել, որ ես ճանապարհորդական տոպրակություններից դարձյալ մի բան պատմեի նրան։ Նախորդ տարին ես, վերադառնալով Թեհրանից, նրան նկարագրել

Էի մայրաքաղաքի առաջադիմությունը, նորանոր շենքերով, եվրոպական ճաշակով շինված նոր փողոցները, ճաշակավոր պարտեզները և պալատները և այլն: Րաֆֆին, որպես պարսկաստանցի, շատ էր փափագում, որ մի անգամ Թեհրանը տեսնի, բայց այդ նրան չհաջողվեց: Դրա համար էլ նա միշտ ախորժանքով էր լսում ճանապարհորդներից՝ հարավային Պարսկաստանի և մայրաքաղաքի նկարագրությունները: Վերջապես, ես այդ օրը նրան պատմեցի մանրամասնորեն կրակապաշտ պարսիկների մասին, որոնք այսօր Գեքրներ են կոչվում: Նրանց մեծ մասը ապրում է Պարսկաստանի հարավային կողմերում և, ավելի մեծ բազմությամբ, Եզդ քաղաքում: Նրանք ազատ են իրանց ճախնիքների հին կրոնքը պաշտելում, խոսում են հին պարսկերենը, որ այժմյան պարսիկներին անհասկանալի է: Մի քանի տասնյակ գեքրի ընտանիքներ էլ ապրում են Թեհրանում, որոնց ճշանավորներից մի քանիսի հետ ես անձամբ տեսնվել ու խոսակից էի եղել: Նրանք դիմագծով, հագուստով և սովորույթներով, թե աչք և թե կին, այժմյան պարսիկներից տարբերվում են: Դրանք պատմելուց հետո ես, որպես ականատես, նկարագրեցի գեքրների գերեզմանատունը, որ Թեհրան քաղաքից մի քանի վերստ հեռու է շինված կառավարչական կարգադրությամբ: Գեքրները իրանց մեռելներին չեն թաղում, այլ փոխադրում են այնտեղ, ուր յուրաքանչյուր ընտանիք իր որոշ տեղն ունի մեռել պահելու համար: Գերեզմանատունը մի մեծ պարսպապատ տարածություն է՝ կտրտված և բաժանված բազմաթիվ քառակուսի ածուների, որոնց մեջ էլ կանգուն կերպով թողնում են դիակը՝ երեսը դարձրած դեպի արեգակը, և դիակի թևերի տակ փայտե հենարաններ դնելով, որ կանգուն մնա ածվի մեջ: Ածուն ունի մի քառակուսի մետր տարածություն և կես մետր խորություն: Դիակի միսը երկար մնալով ածվի մեջ, որ մի տեսակ օջախ է, հետզհետե սկսում է թուլանալ, հոտել և վաքը ընկնել ածվի խորության մեջ և մի մասն էլ գիշատիչ թռչունների և գազանների բաժին է դառնում: Այդ գերեզմա-

նատունն ասվում է «Բիբլ Շարաքան», որի նկարագրությունը խոր տպավորություն թողեց Րաֆֆիի վրա: Նա լսում էր մեծ հետաքրքրությամբ:

Անցան մի քանի շաբաթներ: Րաֆֆին համարյա թե ամեն կիրակի օր ներկա էր լինում պատարագին: Մի կիրակի օր, ես դուրս գալով եկեղեցուց, տեսա, որ Րաֆֆին ինձանից ավելի շուտ է դուրս եկել Բերդաթաղի եկեղեցուց և ման է գալիս վրդովված, սուաջնորդարանի դռան առաջ: Երբ ես մոտեցա նրան, այսպես խոսեց.

— Այս ինչ է, մարդ չի կարողանում եկեղեցում պատարագի արարողությունը, նույնիսկ «Սուրբ սուրբի» ժամանակ, արբազնագործության խորհրդին ուշադիր լինել և ջերմեռանդությամբ աղոթել: Մարդու խանգարում են. մի կողմից վաճառական դասը շշուկներ հանելով, բորսայի, բարաթի և առևտրի որպիսություններն են իրարու հաղորդում, մյուս կողմից էլ եկեղեցականը գանձանակադրամը վեր ածելով սեղանի վրա անագին դրոշյունով, սկսում է համարել: Աստուծո տաճարը սեղանավորների տուն են դարձրել, այնպես որ մարդ չգիտե, թե դրանց որին լսի:

Ես կարող եմ բացարձակ ասել, որ Րաֆֆին մի ջերմեռանդ քրիստոնյա էր, և որքան ես նկատել եմ, նա, մանավանդ եկեղեցում, իրան խիստ համեստ էր պահում և ամենայն երկյուղածությամբ լսում էր պատարագի արարողությունը: Մենք, եկեղեցու բակից դուրս գալով, գնացինք Րաֆֆիի բնակարանը, որ եկեղեցուն խիստ մոտ էր: Երբ մտանք նրա գրասենյակը, նա վեր առնելով իր գրասեղանի վրա դրված «Մշակի» մի քանի համարները<sup>30</sup>, որոնք նոր էին ստացվել, և տալով ինձ, ասաց. «Կարդացեք, դրանց մեջ են «Բիբլ Շարաքանին», որ դուք ինձ պատմեցիք և տեսեք, թե դուք եք լավ նկարագրել նրան, թե ես»:

«Բիբլ Շարաքանին» տպվել էր 1876-ին «Մշակի» բանասիրականում:

### Գլուխ տասնութերորդ

Հազիվ թե մի դպրոցական տարի էր բոլորել, որ Րաֆֆին Թալրիզում ուսուցչությամբ էր պարապում, նորանոր փոթորիկներ սկսեցին բարձրանալ նրա դեմ: Ինչպես տեսանք, նա Սալմաստում մտրակելով մի խումբ հայ վաճառականների պակաս կողմերը, շարժել էր նրանց զայրույթը և սև նախանձով լի ատելությունը դեպի իր անձը: Նա իր ետեվում թողել էր մի անհաշտ հակառակորդ քանակ, որից մի քանի հոգի օձի պես սողալով՝ մտել էին Թալրիզ: Նրանք, միանալով մի քանի թալրիզեցիների հետ, սկսեցին Րաֆֆիից զանազան հին և անարդար դաժժարներով դրամական պահանջներ անել: Մի քանի սրտացավ հայ վաճառականներ մեջ մտնելով իբրև իրավարարներ, ժողովներ արին և գործը քննեցին, որոնց մեջ նրա հակառակորդները չկարողանալով իրանց առնելիքները հաստատել՝ ավելի և ավելի զայրացան:

Եվ այդ եղալ նրա հալածանքի սկիզբը: Հակառակ հուսանքը Րաֆֆիին Սալմաստում պոռտ և ուրացող էր անվանել, Թալրիզում նոր կազմված հակառակ քանակն սկսեց նրան անվանել որպես սոնտրական խարդախ, թերահավատ, սաղմաստեցի խաչագող և այլն: Հալածող քանակը ատելությամբ լցված՝ Թալրիզի հասարակության մի մասն էլ գրգռելով նրա դեմ, իր թևը ստվարացրեց և սկսեց բացարձակ պահանջել, որ նա դպրոցից հեռանա իբրև ուսուցչության ի սպառ անհարմար մարդ, այլևայլ անվայել զրպարտություններ անելով<sup>31</sup>: Իսկ Րաֆֆին ստոնարյուն անտարբերությամբ ուշ չէր դարձնում այդ սպառնալիքներին, հանդարտ շարունակելով իր ուսուցչական պաշտոնը: Այս խաչատուակ միջադեպը երկար ամիսներ ձգձգվեց:

Սա մի թշվառ երևույթ է, որ մենք մեր հասարակական գործիչներին ծածկում ենք սև տիղմով, որպեսզի նրանց ստվերն էլ չտեսնվի: Հայը միշտ հայ է մնացել գրեթե ամեն

տեղ իր նկատելի պակասություններով: Եթե Րաֆֆին իբրև մարդ մի քանի թերություններ է ունեցել, դա կարող է պատահել. «Ով իցէ, որ ոչ մեղիցէ», բայց նա ունեցել է և այնպիսի բացարձակ ստավելություններ, այնպիսի գրական հրաշալի տաղանդ, որ մեր օրերում շատ քչերն են նրան հավասարվում: Անձնական հաշիվների, անձնական աստվածությունների համար Րաֆֆին ո՛չ միայն Պարսկաստանում հալածվեց, այլ նույնիսկ ուսանալուց մեջ էլ, ուր մի խումբ հակառակորդներ՝ զինված զգվելի նախանձով, թե նրա անձը և թե նրա վիպագրությունները հանիրավի քննադատեցին, ավելացնելով, թե նա կոտ է, խաչագող է, գրական գողություն անող է և այլն<sup>32</sup>: Այդպիսի բախտի են հանդիպել մեր գրական գործիչներից շատերը: Օրինակները պակաս չեն: Եվ Րաֆֆին այնքան շատ չէր մտածում իր նյութական կարողության կորուստի համար, որքան նա մտածում էր Թալրիզում պատահած անախորժ դեպքերի վրա:

Երբ նրա հակառակորդները իրանց շինովի թղթերով և խարդախած մոբհակներով նրանից պահանջներ էին անում, երբ նա լսում էր, որ Թալրիզի հասարակության մի մասն էլ զայրացած է իր դեմ, նա ընկնում էր սրտի տագնապի մեջ, մի տեսակ տենդային դրության մեջ: Երբեմն ստոնափրտ կերպով էր վերաբերում Րաֆֆին դեպի հակառակ հոսանքի բռնած ընթացքը և քրիստոնեական հեզությամբ տանում էր այն ամեն անտեղի անարգանքները, որ տեղում էին նրա գլխին: Բայց երբեմն էլ նա դուրս էր գալիս իր խաղաղ դիրքից և ազդու հարվածներ էր տալիս իր անիրավ հալածողներին: Նա նկատում էր, որ նրանք մի ստիթի են սպասում, որ նոր խռովություն հանեն իր դեմ:

— Ես այժմ համոզվեցի,— ասում էր Րաֆֆին,— որ մեր երկիրը բնավ հարմարություն չունի գրական գործիչի և ուսուցչի համար: Չկա լավ շրջան, չկան կրթիչ և հրահանգիչ հաստատություններ, որոնցից մարդս կարողանար օգտվել: Ոչինչ չկա նպաստող, լավ տրամադրություն էլ, ինչպես գիտեք, այստեղ շատ սակավ կարող է լինել: Երբ ես

մտքով խորասուզված եմ լինում մի բան գրելու համար, հանկարծ տեսնում եք, հանգիստս վրդովելով՝ կտրեցին մտածությանս թելը, որին այլևս չեմ կարող վերադառնալ, և նա հավիտյան կորավ ինձ համար: Հարկավոր է լինում մի հաջող դեպք, որից ես նոր ի նորո ոգևորվեմ, բայց դրա փոխարեն անաշ էր գալիս մի թշվառ երևույթ, մի խայտառակ դեպք: Կամ մի զգվելի գործ: Ո՛չ մի տեղում հանգիստ և բարօրություն չեմ գտնում, ինչ թշվառ եմ ես... Այդպես է գրած իմ բախտում:

Բանաստեղծի սիրտը լցված էր խորին թախծություններով, նա իր սրտի անհամար վշտերը արտահայտում էր մինը մյուսի ետևից: Այդպիսի սև մտածությունները այդ միջոցին այնպես էին ազդել նրա վրա, որ մի քանի օր իբրև հիվանդ, նա տանից դուրս չէր գալիս: Ես գնացի նրան տեսնելու և գտա նրան պառկած՝ թմրածի պես: Նրա թուխ դեմքը ավելի մոռյալ էր, շարժվածքը թույլ և մոռալին կարողությունը կարծես կորցրածի պես լինէր: Նա ավելի միմալ էր, և ակնոցներն էլ աչքերից հանելով թե՛ նրա ցավագար աչքերը և թե՛ նրա կերպարանքի փոփոխությունը մի րոպե զարհուրելի տպավորություն թողեցին ինձ վրա: Նա ինձ սովորականի պես չընդունեց. ես երբեք նրան այդպիսի անելանելի վիճակում չէի տեսել: Չնայելով նրա սառն ընդունելության, ես նստելով մի թիկնաթոռի վրա՝ սկսեցի կատակներ անել:

— Դուք հիվանդ չեք,—ասացի ես,— բայց ես կուզեի գիտենալ, թե ինչ է պատահել ձեզ հետ: Երևի դուք շատ եք մտածում այն հին ու մին անախորժ հաշիվների մասին կամ լսած կլինեք մի քանի մարդկանց անտեղի սպառնալիքները. այդ ոչինչ, դրանք անցավոր բաներ են:

— Ինչպես թե դրանք անցավոր բաներ են,— ասաց Րաֆֆին,— դրանք այնպես վատ են ազդել ինձ վրա, որ ես ջղալին հիվանդություն եմ ստացել. անցյալ գիշեր ես անցրել եմ զստանցանքների մեջ: Ես կարծում էի, թե Թավրիզում ավելի հանգիստ կապրեմ, բայց հանգամանքները



Փայաջուկի այն տունը, ուր ծնվել է Բաֆֆին

այնպես թարս են եկել, որ ինձ թվում է, թե ես այստեղ պետք է նահատակվեմ: Ամբողջ օրը ես ուսուցչությամբ եմ պարսպում, գիշերն է մնում ինձ գրելու, մտածելու և հանգստանալու բաժին. ավելացնենք և այն էլ, որ աշակերտների շարադրություններն էլ պետք է գիշեր ժամանակ սրբագրեմ: Ծճմարիտ, որ մեջիցս կես եմ լինում մի անշնորհք ամսականի համար, այն էլ մշտական չէ: Մեր մեջ գրական գործիչները նախանձելի դիրք չունեն, ուսուցչությունն էլ, պետք է ասած, մի ապերախտ պաշտոն է, մաշող և տանջող պաշտոն: Ընկել եմ մի փշոտ հողի վրա, ես և ընտանիքս այսօր կուշտ ենք, վաղը՝ սոված. գրողի առաջ պետք է լինի լայն ասպարեզ և ընդարձակ միջոցներ, իսկ իմ ասպարեզը, իմ կյանքը տեսնում եք, էլի... Եվ սա կյանք չէ, մի կտոր զահրումար է... Իմ տարիքը, վրա բերեց բանաստեղծը, շատ չէ, բայց ես զգում եմ, որ լավ առողջության մեջ չեմ, իմ ուժերը սպառվում են... Այսպիսի բախտի են ենթարկվել մեր մեջ գրեթե բոլոր հեղինակները, ուսուցիչները և սզգի կուպեկներով ապրողների մեծագույն մասը: Մերայինք գիտեն միայն գնահատել և օվսաննաներ կարդալ արժանիք ունեցող գործիչների վրա ետևից: Ետևից միայն, երբ արդեն նրանք դադարել են ապրելուց:

Այս բոլորն ասաց Րաֆֆին իբրև սրտի խոստովանություն, բայց մի դառն խնդրումով և կարծես հոգնած մի քիչ շունչ քաշեց: Նա թեև չէր սիրում հուսադրական խոսքեր, բայց ես կարեկցելով նրա նկարագրած դժնդակ վիճակի վրա, հետևյալ խոսքերն ուղղեցի նրան.

— Դուք իզուր եք վշտանում, պարոն Րաֆֆի, որ կորցնելով ձեր նախկին փայլուն վիճակը, այժմ կուպեկներով եք ապրում, բայց վերջապես պատվավոր կերպով եք ապրում, և դա միայն ձեզ հետ չէ, որ պատահել է, շատերին է վիճակված բախտի փոփոխություն և նրա անողորք հարվածները կրելը: Բայց այժմ դուք ունեք մի գրական գործիչի անուն: Դուք առաջ տարեք թե ուսուցչական և թե վիպական աշխատությունները, այս վերջինները ձեզ մի լավ հե-

տևանքի կհասցնեն: Ուլ ինչ գործում է, շուտ թե ուշ վաճելում է նրա պտուղը: Ոչ ոք չգիտե, թե վաղն ինչ կլինի: Մեծամեծ դժբախտություններից հաջորդել են երջանիկ օրեր, սև-սև ամպրոպները ծնել են պայծառ օրեր: Մերայնոց զարգացած մասի սիրտը ձեզ հետ է: Քաջալերվեցեք, և ապագան ձերը կլինի:

— Փակենք այս մեռելային խոսակցությունը, որ ծալքահողության հասցրինք,— պատասխանեց Րաֆֆին, կարծես մի փոքր զվարթացած,— ես մի պատալի նման ի՞նչ դարդերը պատմեցի ձեզ, իսկ դուք էլ ինձ ապագայի հույսերով կերակրեցիք:

### Գլուխ տասնիններորդ

ՆՈՐ ՖԱԶԻՍ: ՐԱՖՖԻՆ ԴՈՒՐՍ Է ՔԾՎՈՒՄ ԱՐԱՄՅԱՆ ԴՊՐՈՑԻՑ

Րաֆֆին Թավրիզից թղթակցում էր «Մշակին»:

1877 թվականի գարնան սկզբին «Մշակում» տպվեց նրա մի նամակը<sup>33</sup>, որի մեջ նա ցավ էր հայտնում, թե Թավրիզի հասարակությունը չէ պթափվում և չէ մտածում մի օրիորդական դպրոց հիմնելու մասին, որը օրվան հրատապ և անհրաժեշտ խնդիրներից մեկն է: Ավելի ցավալին այն է, որ եկեղեցական դասն էլ պնդում է, թե պարսկաառանցի հայ աղջկա համար ամոթ է բաց երեսով վարժարան երթնելը՝ պատռելով սովորական փակ կյանքի վարագույրը:

Րաֆֆիի հակառակորդները կարդալով «Մշակի» այդ համարը, ավելի բորբոքվեցին և գրգռելով իրանց կողմնակիցներին, մի զորեղ կուսակցություն կազմեցին, հաստատվեցին կայացնելով, որ ինչ միջոցով էլ լինի, այս անգամ պետք է Րաֆֆիին դպրոցից արտաքսեն: Այս կուսակցությունն ասում էր, թե Րաֆֆին, ինչ ասել կուզի, որ ամեն տեսակ զեղծումներ արել է, այժմս էլ սկսել է մեր ընտանե-

կան պարզության և մեր կղերականների վրա հարձակվել: Տրտունջ, դժգոհություն և զայրույթ մինը մյուսի ետևից բարձրացան Րաֆֆիի դեմ:

Այդպես չէր մտածում սակայն հակառակ կուսակցությունը, որն ավելի զորեղ էր: Այդպես չէր մտածում դպրոցի և հոգաբարձական կազմը, որ բաղկացած էր հետևյալ անվանի վաճառականներից՝ պ. պ. Արզ. Նազարբեգյանց, Սիմ. Թումանյանց, Սարգ. Տեր-Օհանյանց, Տեր-Վարդանյանց, Աս. Միքայելյանց, Ա. Ղարաբեգյանց և Խաչ. Տեր-Զաքարյանց: Սրանք ասում էին, թե Րաֆֆին, իբրև Հակոբ Մելիք-Հակոբյանց, 3 տարի ժամանակով վարձված է դպրոցի համար և ահա 2 տարի է, որ նա անթերի կատարում է իր պաշտոնը և որ հասարակության մի մասը չէ կարող նրան դպրոցից հեռացնել, որովհետև այդ իրավունքը վերապահված է հոգաբարձությանը: Եթե Րաֆֆին «Մշակի» միջոցով վիրավորանք է հասցրել ժողովրդին, նրա երեսին չսրտելով նրա տգիտությունը, դա երբեք առնչություն չունի նրա ուսուցչության հետ: Վիրավորված համարվող կուսակցությունը կարող է իր պատիվը վերականգնել նույն լրագրում և այլն: Հասկանալի է, որ այս փաստաբանությունները իրավացի էին, բայց ընդունելություն չգտան, և Թավրիզի հայ հասարակությունը բաժանվելով՝ երկու կուսակցություն կազմեց, որից առաջացավ մի եղբայրասպան պատերազմ:

Րաֆֆին հակառակ եղող կուսակցությունից մոտ 30 հոգի՝ մի օր հանկարծ մոռնելով Արամյան դպրոցը, ուղղակի գնացին ներս մտան այն դասարանը, որ Րաֆֆին այդ ժամին դասավստում էր: Րաֆֆին այլապես ճկատում է նրանց և հարցնում.

— Ի՞նչ եք կամենում, պարոններ:

— Մենք կամենում ենք,— պատասխանում են նրանք,— որ դուք դպրոցից դուրս գնաք այսօրվանից:

— Ինչո՞ւ դուրս գնամ:

— Այնպես, էլի, մենք չենք ուզում, որ դուք մեր դպրոցում լինեք:

— Բայց ես ձեզ չեմ ճանաչում, ես վարձված եմ հոգաբարձությունից:

— Հոգաբարձուներին էլ մենք ենք ընտրել,— ասել են նրանք:

— Ուրեմն դուք կարող եք իմ մասին հոգաբարձության հետ խոսել:

— Բայց մենք կարող ենք ուժով դուրս վռնդել:

— Ոչ, դա անկարելի է, չեք կարող,— ասում է Րաֆֆին և երկաթի նման դիմադրում է մինչև վերջ: Իսկ նրանք տեսնելով, որ հեշտ չէ Րաֆֆին դուրս քշելը, խոհեմություն են համարում թողնել և հեռանալ:

Արամյան դպրոցի հոգաբարձությունը լսելով այդ տրխոր անցքը և միևնույն օրը ժողով կազմելով, Րաֆֆին էլ է հրավիրում և նրան խորհուրդ է տալիս, որ միառժամանակ դպրոց չգնա: Հասարակության մի մասի մտքերը գրգռված լինելով, ասել էին հոգաբարձուները, կարող է մի այլ ավելի տխուր տեսարան առաջանալ դրանից, այդ դեպքում պետք է չափազանց զգույշ լինել:

Այսպես երկու կուսակցություններ իրարու հետ վիճում էին երկար ժամանակ: Մեկն ասում էր, որ ես իրավունք ունեմ դպրոցի ուսուցչին դուրս քշել, իսկ մյուսն ասում էր, որ դու միայնակ այդ բանը չես կարող անել: Բայց արդարությունը պահանջում է խոստովանել, որ երկու կուսակցության մեջ էլ խոհեմ և զգայուն սրտեր շատ կային, որոնք ոչ թե չեզոք սնացին վեճերի ժամանակ, այլ մինչև անգամ ի սրտե ցավում էին, որ երկու հարազատ եղբայրներ կոխում էին միասին, աշխատելով հափշտակել մեկը մյուսի ձեռքից այն ժառանգական իրավունքը, որ պատկանում էր երկուսին էլ հավասարապես:

Այս անօգուտ մրցումների միջոցին թեմակալ Անդրեաս Եպիսկոպոսը բացակա էր իր թեմից<sup>34</sup>: Լսելով այդ ցավալի միջադեպը՝ շտապեց, Էջմիածնից վերադարձալ Թալրիզ:

Նա աշխատում էր իր խաղաղասիրական քարոզներով հանգցնել այն եղբայրատյաց վեհի կրակը, որ իր բացակայության ժամանակ տեղի էր ունեցել իր սիրելի հոտի մեջ, բայց նրա հովվական սպեղանիները շատ շուտով չբուժեցին նոր բացված վերքերը: Հաշտությունը չէր կայանում: Ուստի Րաֆֆիի բարեկամները և հոգաբարձուները խորհուրդ տվին նրան, որ Թավրիզից հեռանա:

Րաֆֆին էլ արդեն պատրաստ էր մտնել փրկելու համար իրան ծովը նետել: Այդպես էլ արեց: Նա իր կոշիկների փոշին թոթափելով՝ տխուր ու սրտաքեկ ողևորվեց Թիֆլիս՝ 1877 թվականի մայիս ամսին:

### Գլուխ քսաներորդ

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ 1878—1888

Վերջացավ Րաֆֆիի հալածանքի շրջանը: Բախտն իր դառնության բաժակի վերջին մրորը քամեց նրա գլխին: Նա այժմ սկսել է ազատ շունչ քաշել: Բանաստեղծն այս շրջանումն է հրապարակ հանում իր վառվռուն մտքի ամենամեծ պաշարը, ամփոփելով նրան քաղմայթիվ ժամանակակից և պատմական վեպերի մեջ իր կրակոտ ու խանդավառ լեզվով: Այս վերջին տասնամյակում նա հրապուրելով տանում է իր ետևից հայ ընթերցող հասարակության ուշքն ու միտքը: Բայց նախ տեսնենք, թե նա այժմ որտեղ է և ինչով է պարսպած: Այդ պարզելու համար ես թույլ եմ տալիս, որ աչտեղ բանաստեղծը ինքը խոսի իր մամակով, որը ես նրանից ստացա 1877 թվի նոյեմբերին, գրված Ագուլիսից:

«Ներողություն եմ խնդրում այսպես անագան ձեզ գրելու համար: Գիտեմ, ձեզ ցանկալի կլինի լսել իմ Պարսկաստանից դուրս գալեն հետո վարածս թափառական կյանքը, ուրեմն գրեմ: Դեռ Թիֆլիս չհասած՝ բարեկամներիս հայտնի էին այն բոլոր անիրավ անցքերը, որ անցան ինձ հետ Թավ-

րիզում: Ամենքը համարել էին ինձ կորած... այս պատճառով իմ անակնկալ հայտնվելը Թիֆլիսում բոլորին զարմանք պատճառեց: Բոլորը հայտն էին ինձ վրա որպես մի նոր Ղազարոսի վրա, որ նոր էր վերադարձել գերեզմանից:

Թիֆլիսում ես մնացի մի ամբողջ ամիս: Այդ ամիսը անցավ որպես մի քանի րոպե. ամեն տեղ սեր և համակրություն էի ստանում ծանոթներից: «Փորձի» խմբագրության մեջ արդեն բացվել էր ինձ համար մի տեղ, որովհետև պ. Աղալանցը գնացած լինելով Երևան, նրա պաշտոնը կատարող չկար: Բացի դրանից, Ներսիսյան դպրոցում դասեր սուսաշարկեցին, բայց ես չկամեցա Թիֆլիս մնալ, երբ Ագուլիսի հոգաբարձությունից հրավեր ստացա: Ինձ վաղուց սիրելի էր հեռու մնալ քաղաքի աղմկալի կյանքից և գյուղական պարզ ու խաղաղ մի անկյունի մեջ ապրել: Ագուլիսը իմ ցանկությանը համապատասխանում էր: Այստեղ կարող եմ փոքր-ինչ շունչ քաշել և հանգստանալ՝ անցյալ հոգնածությունից...

Երևակայեցեք Սալմաստի Խոսրովա գյուղը. Ագուլիսը մի այդպիսի տեղ է, միայն դրա լեռնային դիրքը բացառություն է կազմում, որ ավելի նպաստում է առողջության: Բոլոր տները կորած են այգիների և պատնեշների մեջ: Փողոցներով հոսում են սառն ու մաքուր աղբյուրներ: Ես կենում եմ Թոմա Առաքելոց հոյակապ վանքումը, երեք սենյակ ունեմ բոլոր պատրաստի պարագաներով հանդերձ: Կացարանիս լուսամուտները երկու կողմից ևս հայտն են ծառազարդ պարտեզների վրա: Վանքի գավթումն է նաև տղայոց դըպրոցը, այստեղ է կենում և վանահայրը՝ հայր Սուրենյան վարդապետը, որ միանգամայն թե՛ փոխ-ստաճնորդ է և թե՛ տեղ-վոյս երկսեռ դպրոցների տեսուչը, այլ և դասեր ունի աշխարհագրությունից և ընդհանուր պատմությունից:

Հայր Սուրենյանը մի երիտասարդ կրոնավոր է, որ վարդապետական վեղարի տակ պահպանել է ուսանողի և ուսումնականի մաքուր բնավորությունը: Ծառ եռանդով և ազնիվ մարդ է. ես և նա թեև ստանձին սենյակներում ենք ապրում, բայց միասին ենք ճաշում և ընթրում:

Ես ընդունել եմ երկսեռ դպրոցների բարձր դասատուանց հայոց լեզվի և հայոց պատմության դասերը. շաբաթական 24 դասեր ունեմ: Դասերն սկսվում են առախոշյան 8 ժամին և վերջանում ժամը 2-ին, այնուհետև բոլոր ուսուցիչներն ազատ են: Եվ այսպես, ես ամեն օր կեսօրից հետո ազատ ժամեր ունեմ իմ առանձին գրավոր աշխատություններով զբաղվելու, որոնց մեջ գտնում եմ իմ գլխավոր մխիթարությունը: Թողյալ այդ, տեղի ույս հասարակությունը բավականին համակրական է և կրթյալ քաղաքացու կյանքն է վարում:

Ցանկալի էր ինձ Արամյան դպրոցից տեղեկություններ ունենալ և մանավանդ դպրոցի այժմյան դրությունը ինձ շատ հետաքրքրում է: Դուք աշխատեցեք խնամք տանել դպրոցի բարվոքմանը, որպես..., որ գիտե, թե ինչ կարևորություն ունի ազգային դաստիարակությունը: Խաղաղասերների խոչընդոտները թող չվհատեցնեն ձեզ, խաղաղասերը ամեն տեղ լուսո դեմ պատերազմում է, բայց ճշմարիտ ազգասերների եռանդը թուլացնել չի կարողանում:

Չգիտեմ, ինչպես վերջացան ինձանից հետո տեղի ույթ խոսվությունները: Կցանկանալի, որ խոսվաբարները մինչև այժմ հանգստացած լինեին իրանց չար կրքերից, որ պատիվ չի բերում Թավրիզի հասարակությանը և մանավանդ կործանման անդունդ է բացում ամենքի առաջ...

Ես գերում եմ իմ հակառակորդներին և աշխատում եմ մոռանալ այն բոլոր անիրավությունքը, որոնցով վարվեցան ինձ հետ: Ես քրիստոնեական անհիշաչարությամբ ցանկանում եմ, որ Աստված հեռու պահեր նրանց իրանց մոլորություններից»<sup>35</sup>:

Այս նամակի գրելուց հետո Րաֆֆին լուռ գործում էր Ազուլխում, բայց ինձ համար պարզ չէ, և ինքն էլ ինձ ոչինչ չի գրում, թե ինչ էր շարժառիթը, որ նա մի տարի միայն Ազուլխ մնալուց հետո տեղափոխվեց Թիֆլիս: Երկար լուծությունից հետո, 1879 թվականին ես նրանից ստացա հետևյալ նամակը՝ գրված Թիֆլիսից.

«Վաղուց է, որ առիթ չեմ ունեցել Ձեզ համակ գրելու: Պարսկաստանի հետ հարաբերություններս կտրելով՝ ես անգգալի կերպով մոռացա բարեկամներին: Բայց պետք է մոռանալ տխուր անցյալը: Ես կցանկանայի, որ Դուք շարունակեիք գրել ինձ, որպես մեկը...

Կյանքի աղիքների մեջ տատանվող իմ հավակը այժմ կարծես թե հասել է իր հավահանգիստին. երկար թափառելեն հետո, երկար անախորժություններ կրելեն հետո, վերջապես Թիֆլիսում դադար գտա: Տացե աստված, որ մի նոր փոթորիկ չբարձրանա իմ դեմ, որը գրեթե ինձ վիճակված է:

Այժմ ես իմ աշխարհի մեջն եմ գտնվում, որ վաղուց ինձ փափագելի էր: Գրավոր աշխատանքը միշտ եղել է իմ կյանքի նպատակը, և գոհ եմ, որ այդ աշխատանքով կարողանում եմ մի կողմից իմ ապրուստը հայթայթել, մյուս կողմից՝ իմ մտքերը տարածել: Օրական երկու ժամ պարապմունք ունեմ «Մշակի» խմբագրատանը, այնուհետև զբաղվում եմ իմ մասնավոր հեղինակություններով: Դուք արդեն կարդացած կիկնեք, որ առաջիկա տարվանից կսկսվի տպվել իմ «Կայծերը»: Այստեղ և գավառներում ստորագրություն են հավաքում տպագրության համար: Առաջին անգամն է, որ մեր հասարակությունն սկսում է համակրել և նպաստել գրականությանը: Դա ուրախալի երևույթ է:

Ծարունակեցեք ձեր թղթակցությունները «Մշակին», ձեր համակները հետաքրքիր են: Խնդրում եմ այս ծրարով Ձեզ ուղարկած համակները հավատարիմ մարդու միջոցով հասցնել Վան քաղաքը»<sup>36</sup>

### Գլուխ քսանմեկերորդ

Ինչպես տեսանք, Րաֆֆին երկար չմնաց Թավրիզում, բայց այդ կարճ, երկամյա միջոցին էլ նա համարյա թե ընդմիշտ ուժգնապես մտրակելով հայ հասարակության թույլ

կողմերը, հին, ծուռումուռ հայացքները՝ կարողացավ պատ-  
րաստել թարմ և ժամանակի ոգուն համապատասխանող  
նոր ուղղություն՝ նորակազմ ուսուցչական խմբի աշխատակ-  
ցությամբ։ Հենց նրա հետ պատահած այն տխուր հանգա-  
մանքներն էին, որ առիթ տվին նոր սերունդին աչքերը  
չորս բանալու։ Երիտասարդ, վառվառ ուժերը և դպրոցա-  
վարտ աշակերտները այդ դեպքից քիչ հետո սկսեցին կազ-  
մել Թավրիզում ընթերցարան-գրադարաններ, թատրոնա-  
կան ներկայացումներ, զանազան բարեգործական և բարե-  
սիրական ընկերություններ, կանանց ընկերություններ և  
օրիորդական դպրոցներ և այլն, որոնք մինչև օրս էլ գոյու-  
թյուն ունեն և հետզհետե հաստատ հիմունքներ ձգելով՝  
ճյուղեր և ընձյուղներ են արձակում դեպի Ասորպատականի  
հայաքանակ գյուղերը և գավառները։ Իսկ Րաֆֆին, որ թեև  
հեռու աշխարհում է ապրում, բայց սակայն այդ բոլորի վրա  
հեռվից հայում է գորգորանքով և բավականություն զգում։

Այժմ բանաստեղծը վերջնականապես Թիֆլիսումն է<sup>37</sup>,  
ինչպես ինքն է ասում, իր սիրած աշխարհում և վայելում է  
մեծանուն Գրիգոր Արծրունու համակրանքը և ընդունված  
է «Մշակի» աշխատակիցների շարքում։ Նա սկսում է իր  
մեծաքանակ գրական հյուսվածք-շտեմարանի դուռը բանալ,  
հետզհետե լույս աշխարհ բերելով «Խենթը», «Խաչագողի  
հիշատակարանը», «Խամսալի մելիքությունները», «Դավիթ-  
Բեկը», «Ջալալեդդինը», «Ոսկի արսուղաղը», «Դարաբաղի  
Աստղագետը», «Կայենի կտակը», «Սամվելը», «Կայծերը»՝  
2 սովար հատորներով։ Այս տասը աշխատությունները լույս  
են տեսել հեղինակի կենդանության միջոցին 1880—1888։  
Իսկ նրա մահվանից հետո հրատարակվել են հինգ աշխա-  
տությունները. «Վեպիկներ և պատկերներ», «Հայ կինը և  
հայ երիտասարդությունը», «Արծիվ Վասպուրականի»,  
«Ջահրումար», «Մինն այսպես, մյուսն այնպես»։ Վերոհիշ-  
յալ աշխատություններից շատերը միայն՝ հրատարակվել են  
մաս առ մաս, «Մշակի» միջոցով և հետո՝ առանձին հատոր-  
ներով։ Եւ չեմ խոսում նրա բազմաթիվ օգտակար և հրա-  
11—552

հանգիշ մամակների և հոդվածների մասին, որոնք իր կենդանության օրերում լույս են տեսել «Մշակի», «Փորձի», «Արձագանքի» և «Աղբյուրի» մեջ, չեմ խոսում նրա անտիպ մնացած երկերի մասին:

Այդ ստվար և բազմաթվանդակ հատորներով Բաֆֆին կարողացավ իր հմայիչ լեզվով նոր սերունդի ուշքն ու միտքը գրավել և կրթել: Երիտասարդությունը ծարավի կերպով կարդում էր և կարդում նրա գրվածքը և էլի պահանջ գզում: Որքան դժվարություններ է հարթել հարգելի վիպասանը, մինչև որ կարողացել է սպիտակաշական գործերը ի լույս բերել: Նա այնքան կորովի է եղել դեպի իր ձեռնարկները, որ երբ նրանց տպագրության է հանձնել, ինքն էլ անձամբ օրական մի քանի ժամ գնացել, հստել է գրաշարների շարքում, հարկավոր բացատրություններ տալու համար, որպեսզի տպագրական գործերը անուպթաք ընթանան: Այդպիսի դժնդակ աշխատությունների տակ ճնշված, նյութականից զուրկ, երկայթե Բաֆֆին՝ դեռ էլի ոգևորված, մի կողմից էլ նորանոր մտքեր հղանալով գրում և պատրաստում էր ապագայի համար: Այնուամենայնիվ նա Կովկասում էլ ունեցավ մի խումբ սևանախանձ հակառակորդներ, որոնք հանիրավի դատափետեցին նրա վեպերը որպես ինկվիզիտորներ<sup>38</sup>: Մի դատաստան, որ շատ անգամ պետք էր արդարադատության բովերին ենթարկել:

Եվ դա արդեն կատարվեց, երբ նրա մահից հետո հայ հասարակությունը նրա վրա երախտագիտական արձան կանգնեցրեց Խոջափանքի գերեզմանատանը: Դա մի խրատական ապտակ էր մինևույն ժամանակ, որ հակառակ բանակն ստացավ ինտելիգենտ հասարակությունից: Բաֆֆին մի անվեհեր հրապարակախոս էր, նա թեև շատ ուշ չէր դարձնում ամբոխական հարձակմունքների, բայց երբ ժամանակ էր գտնում, նրանց արժանի պատասխանն էլ շարտում էր նրանց երեսին: Նա, իբրև մի անասուն վիպագրող, մեծ զոհաբերություններով հրապարակ հանեց իր հեղինակությունները, մինչև իր կյանքի վերջը, ինքն էլ նահատակ դառնալով իր

ուխտած վեպերին, որոնք այսօր մեր գրասեղանների զարդն են կազմում: Հենց այդ իր նոր վեպերով էլ նա կարողացավ հայ վիպական աշխարհում նոր ձևեր ստեղծել, որոնց մեջ էլ պետք է փնտրել վիպասանի փառքը:

Րաֆֆին ստաջին վիպագրող հայն է, որ շրջելով թուրքահայերի մեջ, պատկերացնում է նրանց հասարակական ցավերի, զրկանքների և հատաչանքների արձագանքները իր վեպերում: Թեև նա բանաստեղծական հնչյուն հանգեցրով չի երգել նրանց, բայց նա եղել է միշտ պարզ թարգման այդ բոլոր դարդերին, ջերմ հայրենասիրությամբ լուսաբանելով երկրի դրությունը՝ իր սեփական գեղանկար ոճով և հայացքներով: Նա հանդես է բերել թուրքահայ կեղեքիչների իսկական նկարագիրը և իր բանաստեղծական տաղանդով կարողացել է ստեղծել իր վեպերում և այնպիսի բնորոշ տիպեր, հերոսներ և դեմքեր, որոնք սակայն եղածի պես են:

Նա ամեն ճիգ թափել է ժողովրդական ամեն տեսակ տիպեր ուրվագծելու համար, օրինակ՝ մի Խաչոյի ընտանիք, մի Սալման: Դուրս է բերել մի Թոմաս Էֆենդի և մի Վարդան, առաջինը որպես մի ավերիչ և խռովարար, իսկ երկրորդը որպես մի քաջ հայրենասեր հերոս: Րաֆֆիի բերանում կարծես խոսքերի հեղեղ կա՝ հետզհետե հետաքրքիր և լայնարձակ գլուխներ արտադրելու համար, որոնց մեջ եռում են նրա վսեմ զգացմունքները՝ ուղղված ժողովրդին: Նա նկարագրում է, օրինակ, մի վանք, նրա շրջակայքը, ուխտավորների խումբը, սազ, աշուղ, սիրահարներ, հիվանդոտներ և ընկճավորներ, այնպիսի տիպիկական կերպով, որ մարդ կարծում է, թե ինքն անձամբ ներկա է այդ բոլորին: Նա խոսում է ջրի, ցամաքի, լեռների և բնության հրաշալիքների վրա այնպես մարմնացրած՝ որպես մի հայելի, մի լուսանկար: Եվ իսկապես դրանք են նրա վստփունն մտքի մեծ ուժը:

### Գլուխ քսաներկուերորդ

Րաֆֆին մի զորեղ գրական մարտնչող էր: Շարունակ հալածանքներ կրելով՝ նա թեև հոգնում էր, բայց չէր ենթարկվում, այլ շուտով նոր աշխույժ ստանալով ոգևորվում էր: «Հարդե գնդակներ են դրանք», կասեր նա, և բռնե եռանդով կսկսեր գրել: Նա շատ մեծ հավատ ուներ իր ներշնչած գաղափարների և իր քարոզած սկզբունքների վրա: Ես հիշում եմ, մի անգամ այցելեցի նրան, երբ նա իր սովորականի պես մուսլ կերպարանքի տակ մտած՝ խորասուզված գրում էր:

— Թույլ տվեք ինձ տեսնելու, — ասացի ես, — թե ինչ էք առաջացրել երեկ ու աչսօր, թույլ տվեք, որ կարդամ ձեր կախարդական գրչի նոր արտադրությունները, որոնք ախորժելի տպավորություն են թողնում:

— Ո՛չ թե միայն դուք, — պատասխանեց Րաֆֆին, — այլ ես ինքս էլ շատ անգամ հիանում եմ իմ գրածների վրա, և հենց այդ է պատճառը, որ հափշտակված գրում եմ: Ո՛չ քաղցը, ո՛չ ծարավը և ո՛չ էլ աշխարհային հոգսերը չեն կարողանում ազդել ինձ վրա:

Այդ խոսքերից հետո նա սկսեց մի քիչ կատակներ անել: Նրա կատակները խիստ հաճելի էին: Մեր կատակները շատ անգամ Քալոթր Պետրոսի և նրա գործողությունների մասին կլիճեին: Րաֆֆին մի կատարյալ գառն էր, մի *Agnus Dei*\*, երբ նա ուրախ տրամադրության տակ էր, իսկ դրա հակառակը՝ նա մի առյուծ էր, երբ նրան դիպչեին: Մի քանի սրախոտություններ անելուց հետո՝ նա ինձ հետևյալն ասեց մի խորին հառաչանքով.

— Տեսնում եք, ինչքան եմ աշխատում, ինչքան եմ հալ ու մաշ լինում իմ վեպերի վրա, բայց իմացեք, որ հենց դրանք էլ ինձ վաղաժամ գերեզման կտանեն: Ես չգիտեմ,

\* Լատ. ասածո մատանի:

թե ինչ հույսով և ում հույսով եմ գործում: Թե՛ Կովկասում և թե՛ մեր երկրում հուսացածս հարգանքը և օժանդակությունը չգտա: Գրեթե ամեն տեղ ինձ ծաղրում են և հալածում, մարդ չգիտե, թե ինչ անի: Դժոխք է, դժոխք, մի դատնության բաժակ է տված միայն իմ ձեռքը:

Այստեղ հարկ եմ համարում ավելացնել, որ Րաֆֆին չէր այն ֆանտաստիկ և սպանիչ վիպագրողներից, որոնք իրանց գրվածքներում լցնում են ճարճատուղ ճոռոմաբանություններ, որոնք կարդացվում են միայն կարդալու համար, բայց մտալին սնունդ չեն տալիս, նման սառույց կրծող երեխայի որ իր ստամոքսների ձայնից խաբվելով կարծում է, թե մի բան է կերել, բայց նրա ստամոքսը շուտով բողոքում է, որ ոչինչ չի ստացել: Րաֆֆին գրում էր ժողովրդի հասկացողության չափով, պարզ ու կենդանի լեզվով ու կրակված սրտով: Նրա նպատակն էր՝ արթնացնել հառարակական թմրած մտքերը, պատկերացնել թուրքահայերի կրած ստրկական տանջանքները: Այդ հանդուգն ձեռնարկությունը նա իր ձեռքով պակեց և հասավ իր նպատակին, փշրելով այն ամեն խոշրնդոտները, որոնք ցցվում էին նրա առաջ: Նրա մի առավելությունն էլ այն է, որ հին վիպական հետևողությամբ չընթացավ: Նա մտքով չբարձրացավ օդեղեն, երևակայական աշխարհը գրչի նյութ շինելու, ինչպես անում էին այդ հին վիպագրողները: Նա իր վսեմ և այծմեական գաղափարներով հինը տապալեց, դիմելով նորանոր հեղաշրջող մտքերի, նվիրելով իր գրիչը իրական աշխարհում աչքի ընկնող երեվոյթների, այն երևույթներին, որտեղ անհամար զեղծումներ էին կատարվում, որտեղ թշվառը, անճարը և կեղեքվածը իրենց ողորմելի հառաչանքներով զարհուրանք էին բերում ականատեսներին և իրանք էլ զոհ դառնում մարդակուլ հրեշների: Մի խոսքով, նա նկարագրում էր մարդկային իսկական տիպեր և ոչ թե օդեղեն և հրեղեն դեմքով:

Ավելին կասեմ: Բանաստեղծը մի խոշոր գրական դեմք կլիներ, եթե նա բարձր ուսում ստանար: Բայց ինչպես տեսանք, այդ նրան չհաջողվեց: Նա իր մանկական կրթությունն

Էլ խալֆայական թափթփված դպրոցում կատարելով, ցանկալի հառաջադիմությունից էլ գրկվեց: «Հայր մերը» պոչի կողմից աշակերտին անգիր սովորեցնող վարժապետները քանի-քանի մատաղ հանճարներ են սպանել՝ ամբողջ քերականական գրաբար, անմարսելի կանոնները, բալերը և հոլովները քերան անել տալով: Որքան սրամիտ աշակերտների միտքը բթամիտ և ապուշ են դարձրել սոսկալի գանակոծության տակ: Ես ինքս էլ հիշում եմ վաթսուհակու թվականներում ավանդված ուսումը: Այդ մեղցնող դրությունն էր, որ վաթսուհակու թվականներից առաջ մի քանի սերունդ, ապուշ կրթելով՝ կիսատ ու թերատ թողեց ուսանելի առարկաներից:

Ես բավական շեղվեցի: Այժմ էլ երկու խոսքով իմ կարծիքս եմ ուզում հայտնել «Կայծերի» վերաբերությամբ, որ այնքան աղմկալից քննադատությունների ենթարկվեց: Որքան էլ քննադատեն «Կայծերը», նա միշտ մնում է, որպես մի գեղարվեստական գեղեցիկ գրվածք, լի հերոսական սքանչելի տիպերով և նվիրական գաղափարներով: Դրանով հարգելի վիպասանը թուրքահայերին շատ բան է ասել, ինքնապաշտպանություն է ներշնչել, բայց ոմանք լավ չըմբռնելով հեղինակի իսկական նպատակը՝ այդ գրվածքը նկատել են որպես մի ալլանդակ, որպես մի անուսակտ հեղինակություն: Ասիտու, որ «Կայծերի» երրորդ հատորը հեղինակից անկախ, կարճ ու սրատ դուրս եկավ: Ծիշտ է, որ հեղինակը «Կայծերի» լեզվի վրա հոգ չի տարել, բայց նրա վրա շատ երկար տարիներ աշխատել է, որ իր փայլուն և հեռատես գաղափարները տարածե նրանց մեջ: «Սամվելը» գրված է գեղանկար և սիրուն աշխարհաբարով, որի նյութը վերցրած է ազգային պատմությունից, իսկ «Կայծերը» կենդանի կյանքից վերցրած կենդանի պատկերների տեսարանացույց է: Մի խոսքով, ինչ որ էլ ասեն ու գրեն նրա հակառակորդները, «Կայծերը» Րաֆֆիի գլուխգործոցն է կազմում: Րաֆֆի և «Կայծեր»՝ այդ երկու անունները միասին ամուր կապված են: Ով որ անձամբ ծանոթ չէ եղել բանաստեղծի հետ, ով որ խոսակից չէ եղել նրա հետ, թող կարդա «Կայծերը»: Դրանց

սեջ կարծես ինքը՝ Րաֆֆի— վիպասանն է, որ խոսում է իր բորբոքված մտազաղախարհերով և հայրենաշունչ ոգևորությամբ: «Կաշծերը» կարդալով մարդ բնավ չի հոգնում:

Րաֆֆին 1881 թվականին Թիֆլիսից ուղևորվելով Սյունիաց աշխարհը, Ղարաբաղի մելիքների պատմությունը ուսումնասիրելու համար, երբ նա վերադառնում էր Թիֆլիս, մի անգամ էլ Պարսկաստան եկավ նույն թվականի աշնանը: Ժամանելով Թավրիզ, նա մի քանի օր միայն մնաց, որից հետո վերցնելով իր հետ ընտանիքը, ընդմիջտ հեռացավ Պարսկաստանից: Րաֆֆին ամուսնացել է 1863 թվականին Ուրմիում և թողել է երկու արու զավակներ: Մեր պարսկաստանցի միակ գրական գործիչը և նշանավոր բանաստեղծը այժմ այնպես է մոռացված իր հայրենի երկրում, որ պարսկահայերից շատ քչերն են ծանոթ նրա հազվագյուտ տաղանդի հետ, թեև ինքը միշտ մնում է պարսկահայերի պարծանքը: Այդպես է մարգարեն իր գավառում: Րաֆֆին ծնած լինելով 1835-ին, վախճանվել է Թիֆլիսում 1888 ապրիլ 24-ին, 53 տարեկան:

Եւ 1896 թվականին Թիֆլիսումն էի. մի օր ես առաջին անգամ գնացի Խոջեվանքի գերեզմանատունը՝ բանաստեղծի գերեզմանին այցելության: Դեռևս նրա վրա արձան կանգնած չէր<sup>39</sup>: Գիտեի արդեն, որ հանգուցյալը ծաղիկներ շատ էր սիրում, ուստի ես ինձ հետ վերցրել էի մի սիրուն ծաղկեփունջ: Եւ պատկաստանքով մոտեցա նրա գերեզմանին, երբ թեքվեցի որ ծաղկեփունջը նվիրեմ, երկու կայծիլ արտասուք դուրս թռան իմ աչքերից և ընկան նրա սառն շիրմի վրա, իսկ ես մնացի կանգնած որպես արձան:

Մեր մտերմական հին հիշողությունները զարթեցրին ինձանում նորանոր, բայց տխուր զգացմունքներ: Խորտակված սրտով, լռիկ ու մնջիկ, ես մտքովս հետևյալ խոսքերն ուղղեցի նրան: Ընդունիր իմ այս չնչին ու պարզ նվերը, բարեկամ Րաֆֆի: Թեև ուշ, բայց այսօր միայն ինձ հաջողվեց այցելել քո պատկառելի գերեզմանիդ: Եւ քերել եմ ինձ հետ

քո հայրենի երկրից և պարսկահայերից շա՛տ, շա՛տ բարով, ուղղված քո արդեն չորացած ու ցամաքած ոսկրներիդ: Ննջի՛ր, ժողբացյալ Ռաֆֆի, դեռևս փոթորիկների սեջ է Թուրքահայաստանը: Որտորդ Ավոն իր գործող խմբով անշարժ քնած են գերեզմանի խորքերում: Մի օր գուցե քո արթուն հոգին քեզ կավետե, թե արդեն մոտ է ցանկացյալ լուպեն. այն ժամանակ միայն քո ոսկորներից անյունը կշարժվի: Վաղաժամ մեռար, բանաստեղծ, և թաղվեցիր քո աշխատասիրած բազմաթիվ հատորների կույտի տակ, որոնք ընդմիջտ կմնան որպես մի-մի փառավոր հիշատակարաններ քեզանից: Պատռելով խավարի վարագույրը, վերջապես դու տարար այն գրական-հաղթական դրոշակը, որի վրա քո ձեռքով գրված է՝ Ռաֆֆի:



Գրիգոր Արծրունի  
(1845—1892)





## ՀԱԿՈՒ ՄԵԼԻՔ-ՀԱԿՈՒՅԱՆ (Րաֆֆի)

(հատված)

Երբ Մելիք-Հակոբյանի առաջին գրվածքը երևաց «Հյուսիսափայլի» մեջ<sup>1</sup>, նա ինքն դեռ երիտասարդ էր:

Պարսկաստանի Սալմաստ գավառում ծնված Րաֆֆին պատանի ժամանակ բերվեցավ Թիֆլիս<sup>2</sup>, որտեղ նա քնդունվեցավ որպես գիմնազիայի աշակերտ:

Թիֆլիսի գիմնազիայում նա իր ուսումը չափարտեց<sup>3</sup>. դա էր նրա ամբողջ ուսումը: Ուրեմն՝ իր ամբողջ ուսումով և գիտությամբ նա պարտական էր միմիայն իր անձնակրթությանը, պարտական էր ընթերցանությանը: Ռուսերեն լեզուն նա գիտեր ճիշտ այնչափ, որչափ հարկավոր էր մի գիրք կարդալու և կարդացածը հասկանալու համար: Բայց, ինչպես երևում է, նրա սկզբնական մտավոր զարգացման աղբյուրը դարձյալ հայերենն էր և այն էլ «Հյուսիսափայլի» ընթերցանությունը: Ես պնդում եմ, որ իր առաջին մտքերով հանգուցյալը պարտական էր Նազարյանցի շկոլային, որովհետև նրա առաջին գրվածքը, որ լույս տեսավ «Հյուսիսափայլի» մեջ և որ նկարագրում էր Աղթամարի վանքը, կարծես ներշնչված էր Նազարյանցի ուղղությամբ և ոգով: Այդ գրվածքը, որ պարունակում էր իր մեջ մեր հոգևորականության այժմյան կազմակերպության պակասությունների և թերի կողմերի

խիստ քննադատությունը, արդեն գուշակել էր տալիս Րաֆֆիի գրական գործունեության ապագա ուղղությունը՝ նկարագրական ձևի կատարելությունը, հասարակաց տեղեկցիա և խիստ քննադատական ոգի:

1871 թվին ես արդեն թույլտվություն էի ստացել «Մշակը» հրատարակելու<sup>4</sup> և կազմակերպում էի խմբագրությունը, աշխատելով իմ չորս կողմը խմբելու ընդունակ, թեև գրականության մեջ դեռևս անհայտ երիտասարդներին: Ծաքաթը մի անգամ լինում էին ինձ մոտ խմբագրական երեկոներ: Այն ժամանակ այդ երեկոներին լինում էր ուրիշների թվում և պ. Սենեքերիմ Արծրունի<sup>5</sup>: Մի օր պարոնը հրավիրում է ինձ իր տունը, որտեղ նույնպես գրական երեկո պետք է լիներ: Այդտեղ տան տերը ծանոթացնում է ինձ մի մարդու հետ, որին ինքն կարճ կերպով անվանում էր **Հակոբ**: Դա պարսկաստանցի Մելիք-Հակոբյանն էր: Մինչև որ ուրիշները բարձր ձայնով խոսում, վիճում էին, պարսկաստանցի երիտասարդը, որ այն ժամանակ իմ կարծիքով 30—35 տարեկան կլիներ, լուռ նստած էր սենյակի մի անկյունում և գրեթե ամենևին չէր մասնակցում ընդհանուր խոսակցությանը: Այդ ժամանակ նա աննշան ոռճիկով հաշվապահ էր մի ինչ-որ հայի խանութում<sup>6</sup>:

Ընդհանուր տպավորությունը, որ առաջին անգամ գործեց ինձ վրա Մելիք-Հակոբյանը, այն էր, որ զգալով ուրիշների՝ ինտելիգենտ, համալսարանական մարդկանց մտավոր գերազանցությունը, նա քաշվում էր մեր հասարակության մեջ որևէ վիճաբանությունների մեջ մասնակցելուց: Նրա ամբողջ պատկերը, մեր շրջանում իրան հետ քաշած, լուռ պահելու կերպը՝ ցույց էր տալիս, որ նա իրան պատահական հյուր էր համարում համալսարանականների շրջանում. այդ թուխ, շատ թուխ դեմքով, սև միրուքով, սև գանգուր մազերով, կապույտ ակնոցների միջից կարմրած, հիվանդոտ, հոգնած լաչքերով մեզ վրա խորհրդավոր լայն ճակատի տակից նայող մարդը կարծես մեզ ամենիս դիտում էր, մեզ ուսումնա-

սիրում էր, դեռևս իր ուժերին հավատ չընծայելով իրանից բարձր ուսում ստացածների հետ որևէ բանակով մտնելու Պ. Սենեքերիս Արծրունին ներկայացրեց ինձ Մելիք-Հակոբյանցին, ավելացնելով, որ մարդը բազմաթիվ անտիպ գրքավածքներ ունի և կարող է պիտանի լինել նոր ծնվող «Մշակի» խմբագրությանը:

Մելիք-Հակոբյանը սկսեց հաճախել և իմ խմբագրական ժողովները: Ինչպես ես նրան առաջին անգամ տեսա, նա շարունակեց երկար ժամանակ նույն ձևով պահել իրան և իմ խմբագրական ժողովներում. դիվանի մի անկյունում լուռ նստած, նա մի գլուխ պապիրոսներ էր ծխում, լսում էր ուրիշների խոսակցությունն ու վիճաբանությունները և գրեթե երբեք չէր մասնակցում այդ վիճաբանություններին: Մի օր նա բերեց իր անտիպ գրվածքներից մեկը, որքան հիշում եմ, դա վեպ էր և կրում էր «Սելվիկ» վերնագիրը<sup>7</sup>: Ես բացարձակ հայտնեցի միտքս. վեպի նկարագրական տեղերը անման էին, բայց ամբողջ հյուսվածքը ես չհավանեցի. ես անհարմար գտա այդ վեպը մի լրագրի, այն էլ շաբաթը մի անգամ հրատարակվող լրագրի մեջ տպագրելու համար:

Այնուհետև Մելիք-Հակոբյանն սկսեց ինձ հաճախել խմբագրական ժողովներից դուրս օրերին: Մեր խոսակցությունների ժամանակ ես աշխատում էի բացատրել նրան իմ ուղղությունը, իմ պրոգրամը: Ես 26 տարեկան երիտասարդ էի, ես եվրոպական ուսում էի ստացել, բայց ես չէի ճանաչում Արևելքը:

— Դուք աշխարհ տեսած մարդ եք, դուք ինքներդ պարսկաստանցի, բուն արևելցի եք, պտտել եք և թյուրքաց Հայաստանում, տվեցեք մեզ տեղեկություններ այդ երկրների մասին, տվեցեք մեզ հում նյութեր, — անդադար աւում էի ես նրան, — թողեցեք երևակայականը և հաղորդեցեք մեզ իրականը, այն, ինչ որ կա, ինչ որ ինքներդ գիտեք, ինչ որ տեսել եք: Նկարագրեցեք կյանքը Պարսկաստանում ինչպես նա. կա...

Այդ մասնավոր խոսակցությունների ժամանակ մշակվեցավ «Պարսկաստանի նամակների» պրոգրամը<sup>8</sup>, այստեղ էլ ծնունդ առավ **Րաֆֆի** կեղծ անունը, որով Մելիք-Հակոբյանը այնուհետև հայտնվեցավ մեր գրական ասպարեզում:

Այն րոպեից սկսած՝ **Րաֆֆիի** վիճակը կապվեցավ «Մշակի» վիճակի հետ: Նրա անունը, նրա հոշակը, նրա ժողովրդականությունը մեծանում էին, քանի ավելի և ավելի էր ընդարձակվում «Մշակի» գործունեությունը: Գրեթե ոչինչ սխտեմական ուսում չունեցող, ինքնակրթությամբ զարգացած մարդը՝ մի տեսակ ներքին ազդմամբ, մի տեսակ հոտառությամբ գուշակում էր ժամանակի պահանջը, տպավորվում էր ժամանակակից հարցերով և արտահայտում էր այդ հարցերը վիպական ձևով:

«Մշակի» խմբագրության հետ իր վիճակը կապելուց հետո **Րաֆֆիի** տաղանդի սահմանները և այդ տաղանդի ձևը հետզհետե որոշվեցան:

Ինչպես շատ անգամ ասել էի, գեղարվեստական գրվածների երկու ձև կա. կան գեղարվեստական գրվածներ, որոնք նկարագրում են այն, ինչ որ կա, ներկայացնում են այն տիպերը, որոնք գոյություն ունեն կյանքի մեջ, բայց կան և այնպիսի գեղարվեստական գրվածներ, որոնց նպատակն է ներկայացնել այնպիսի տիպեր, որոնք մի հայտնի հասարակության մեջ չկան, բայց որոնք ցանկալի է, թե լինեին այդ հասարակության մեջ:

Այդ վերջին գրվածներին պատկանում էին և **Րաֆֆիի** հեղինակությունների մեծ մասը: Թողնենք նրա մեծ մասամբ անհաջող ոտանավորները, նրա «Փունջի» մեջ՝ պարունակվող փոքրիկ վեպերը<sup>9</sup>, բայց վերցնենք նրա այն գրվածները, որոնք հոշակեցին հայերի մեջ **Րաֆֆիի** անունը, — կհամոզվենք, որ նրա ամենալավ գրվածների՝ «Ջալալեդդին», «Խենթը», «Դավիթ-Բեկ», «Կայծեր» վերնագրով հեղինակությունների մեջ, միայն բնության նկարագրությունը, վեպի նկարագրական կողմը, ժողովրդական կյանքի, ժողովրդի կեն-

ցաղավարության նկարագիրը վերին աստիճանի ռեալական՝ իրական են: Գործող տիպերի մի մասը միայն, այն է՝ վատ տիպերի նկարագիրը, թեև, գուցե դիտմամբ, փոքր-ինչ չափազանցած է, բայց այնուամենայնիվ կատարելապես ռեալական է,— իսկ Րաֆֆիի գրվածների գլխավոր նպատակը մի ձգտում է, մի տենդեցիա է՝ ներկայացնել այն կյանքը, որ չկա, բայց որ պետք է լիներ (հիշենք այստեղ «Խենթի» մեջ երազը), այն տիպերը, որոնք մեզանում դժբախտաբար չկան, բայց որոնց գոյությունը ցանկալի է մեր մեջ:

Բարձր, ազնվացնող հասարակաց իդեալներով աղքատ մեր կյանքի մեջ, անտարակույս, մեծ գին պետք է ունենային և ունեցան էլ Րաֆֆիի գրվածներում ներկայացրած իդեալական, ցանկալի անձնավորությունների և հասարակաց գործիչների բարոյական պատկերները. անտարակույս, պետք է այդ ազնիվ, անձնվեր, թեև երևակայական տիպերը կրթիչ ներգործություն ունենային և ունեցան էլ համակրելի իդեալների միշտ ծարավ երիտասարդության վրա: Դրանով բացատրվում է Րաֆֆիի մեծ ժողովրդականությունը մեր երիտասարդ սերունդի մեջ, որ չէ քննում և չէ էլ կարող քննել՝ որքան իրական կերպով է ներկայացրած իդեալը,— միայն թե այդ իդեալը ամփոփեր իր մեջ այն բարձր ձգտումները, որոնց մասին երազում են երիտասարդական ոգևորվող գլուխները:

Րաֆֆին, պետք է խոստովանվեմ, մեծ ծառայություն է մատուցել մեր հասարակությանը, սփռելով այդ հասարակության այլևայլ խավերում ազնիվ **իդեալներ**, որոնցով միշտ աղքատ է եղել Հայոց գրականությունը, այդ իդեալները երևակայական լինեին և ոչինչ իրական հիմք էլ չունենային մեր հողի վրա... Բավական է, որ երևակայական, չեղած իդեալական տիպերը ստեղծագործվեցան գրքերի էջերում,— այնուհետև նույն տիպերը, որոնք անշուշտ կրթիչ ազդեցություն ունեն ընթերցողի վրա, գուցե ժամանակով կիրականանան, հոգի կառնեն, մարմին և արյուն կդառնան, կմարմնանան:

Բայց բացի «Մշակի» խմբագրության շրջանից, Րաֆֆիի տաղանդի զարգացման վրա, անկասկած, մեծ ներգործություն ունեցան և ժամանակակից անցքերը՝ ուսա-թյուրքաց պատերազմը, քրիստոնյաների մահմեդական տիրապետությունից անցյալ թագավորության<sup>10</sup> բերանով հարուցած ազատության խնդիրը և այլն: Րաֆֆիի տաղանդը, այդ բնածին, ինքնուրույն, ամեն սխառնական ուսումից զուրկ տաղանդը, այնքան տպավորվող էր, որ արձագանք էր տալիս բոլոր ժամանակակից այրող, առօրյա հարցերին. նրա բոլոր ստեղծագործած տիպերը, նույնիսկ նրա պատմական վեպերի տիպերը այդ պատճառով խոնարհվում էին տենդեցիային, ստանում էին նրա գրչի տակ այն երևակայական, իդեալական կերպարանքը, որ գուցե պատմության իրականության մեջ երբեք էլ ունեցած չէին: Ո՛չ «Խենթի» հերոսի պես մի տիպ կա հայերի մեջ, ո՛չ «Դավիթ-Բեկի» պես, ո՛չ «Կալծերի» մեջ ներկայացրած համակրական տիպերի պես,— բայց դրանք հարկավոր էին մեզ կրթելու, մեզ ներկայացնելու համար այնպիսի տիպեր, այնպիսի իդեալներ, որոնց ցանկալի էր, թե մենք ձգտեինք:

Այդ է պատճառը, որ եթե Րաֆֆիի ուսմանների բոլոր տիպերը խիստ, անողորմ քննադատության ենթարկենք, նրա ներկայացրած վատ տիպերը բոլորն էլ իրական, բնական կգտնենք, որովհետև նրանք կան, նրանք կենդանի են մեր մեջ. իսկ նրա ստեղծագործած լավ տիպերը հոգեբանական խիստ, անողորմ, անաչառ քննադատությանը չեն դիմանա, որովհետև արվեստական են, իրական կյանքի մեջ գոյություն չունենալով և ստեղծված լինելով հեղինակի հարուստ երևակայության մեջ՝ հատկապես հասարակության վրա կրթիչ, դաստիարակիչ ներգործություն ունենալու նպատակով:

Րաֆֆիի ամենանշանավոր գրվածներից երկուսը միայն կատարելապես զուրկ են իդեալական տիպերից և կատարելապես ռեալական են իրանց բոլոր անմխիթար կողմերով՝

սրանք նրա «Ոսկի արաղալ» և «Խաչագողի հիշատակարան» վեպերն են:

Բայց անցավ ոռոս-թուրքական պատերազմի ժամանակը իր բոլոր բարձր իդեալներով, վրա հասավ սովորական կյանքի խաղաղ և անգույն ընթացքը, միևնույն ժամանակ վերջին տարիները Րաֆֆին հեռացավ և «Մշակի» խմբագրությունից, որի շրջանում նա, անտարակույս, առատ սնունդ էր ստանում իր տաղանդը բեղմնավոր անելու համար,— և վերջին ժամանակ նրա տաղանդը կարծես սկսեց սպառվել, հաստատ հող կորցնել իր ոտների տակ... Հարկավոր էր այդ ժամանակ փոխել գրելու ձևը, գրելու սխառեման, կյանքի ուրիշ շարք երևույթների վրա դարձնել նրա ուշադրությունը, հարկավոր էր ներգործել նրա վրա, համոզել նրան՝ այսուհետև թողնել իդեալական տենդեցիան և դիտել, ուսումնասիրել իրականությունը և նկարագրել այդ իրականությունը... Բայց այդպիսի ներգործող շրջանի չհանդիպեց տաղանդավոր հեղինակը և ընկավ ծայրահեղության մեջ՝ նա սկսեց զբաղվել այնպիսի գրական ձևով, որ ամենևին հատուկ չէր իր տաղանդին և որին, իմ կարծիքով, նա անպատրաստ էր. դա պատմական ռոման էր, որի մեջ ալլևս առաջվա պես չէր փալլում Րաֆֆիի տաղանդը<sup>11</sup>:

Րաֆֆին ստեղծված էր տենդեցիական գրող լինելու: Երբ որ կյանքը ալլևս տենդեցիայի նյութ չէր տալիս նրան, նա պետք է **ռեալիստ**, իրական կյանքը դիտող, ուսումնասիրող և նկարագրող դառնար: Եվ ուղիղ այդ տեսակ գրական ձևը մեծ մասամբ աջողվում է գրողներին իրենց հասունացած տարիքում, 40—55 տարեկան հասակում:

Այստեղ հարկավոր եմ համարում հիշել, որ բացի վիպական գրվածներից, հանգուցյալը ունի բազմաթիվ պուրլի-ցիստական հոդվածներ, որոնք տպվեցան տարիների ընթացքում «Մշակի» մեջ «Մեխիքզադե» ստորագրությամբ: Այնուհետև «Փորձ» ամսագրում նա տպում էր իր ճանապար-

հորդությունը<sup>12</sup>, իսկ նրա վերջին պատմական «Սամվել» վերնագրով վեպը նախ տպվում էր «Արձագանքում»<sup>13</sup> և ապա հրատարակվեցավ առանձին գրքով:

Բացի գրական գործունեությունից, Մելիք-Հակոբյանը մի քանի ժամանակ ուսուցչություն էր անում թե՛ Վերին • Ագուլիսի և թե՛ Թավրիզի հայոց դպրոցներում<sup>14</sup>:

## ՐԱՖՖԻ ԵՎ ՀԱՅ ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Հատված)

...Երբ մի հեղինակ սիրելի է մաքիդ ու սրտիդ հալա-  
սարասյես, կարծես թե բան մը կը սլակասի ի քեզ, թե այդ  
հեղինակի կենաց մանրամասնություններուն իսկ տեղյակ  
չլինիս: Հեղինակին ներքին կենաց և յուր գործոց մեջ թվի  
թե սերտ կապ մը կա, և ստանց այդ կյանքն գիտնալու կար-  
ծես դժար է ըմբռնել հեղինակին ոգին: Երբ անցյալ տարի Ժյուլ  
Հոշ հրատարակեց յուր սիրուն գիրքը՝ «Բարիզիք իրենց տան  
մեջ», այդ գիրքը շատերնիս ուրախությամբ ողջունեցինք,  
վասնզի ի դեպ կուգար, մեզ զանազան մեկնություններ տալ  
ֆրանսացի մեր սիրած հեղինակներու ներքին կենաց, մինչև  
իսկ տան մեջ ապրելու եղանակի վրա:

Բնական էր, որ երբ Թիֆլիզ էի, առիթ որոնեի այս  
հետաքրքրությանս գոհացում տալ<sup>1</sup>: Կենթադրեի Րաֆֆիի  
մասին, թե այս հետաքրքրության մասնակից են Թուրքիո  
հայոց մեջ Րաֆֆին սիրողներն բազումք: Երբ կուզեի տե-  
ղեկություն ստանալ այ. Րաֆֆիի ներքին կենաց վրա, հա-  
մոզվեցա, թե այս տեսակ խնդիրներու մեջ հետաքրքրությու-  
նը մինչև որ աստիճանն օգտակար գյուտերու ծնող կրնա  
լինիլ:

Թիֆլիզ հասնելուս երկրորդ օրն ապրիլի 26 հինգշաբթի  
երեկոյան դեմ էր. մինչև կանցնեի արքունի փողոցեն, տեսա

թե հեռվեն կուգար միջահասակ, բավական լայն մի պարոն, կապույտ ակնոցներով: Քովեն անցնելով՝ ձեռք երկնցուցի.

— Բարև, պ. Րաֆֆի, ինչպե՞ս եք:

— Բայց պարոն...

Եվ զարմացած կը նայեր, թե ո՞վ է անծանոթն, որ զինքը կը ճանաչեր: Ծանոթացուցի զինքս, և երկար չկեցա, վասնզի ընկեր ունեի:

Հաջորդ օր երբ միասին էինք, պ. Րաֆֆի զարմացմամբ չհարցնեք, թե ինչպե՞ս բազմության մեջ զինքը ճանչցա, վասնզի ո՛չ զինքը տեսած էի և ո՛չ ալ լուսանկարը: Ընկերս ալ ամենակին բան մը չէր ըսած:

Վասնզի այս է պատասխանս՝ խոտն բազմության մեջ գեղեցիկ տաղանդ մը անտես չանցնիր. չեմ գիտեր ինչ շնորհք կա դեմքին վրա, որ մագնիսական զորությամբ կը քաշե տեսնողին:

Րաֆֆիի լուռ բնավորությունը, մի քիչ խորհրդավոր դեմքը, շարժումներն, ոչ ինչ ի նման ենթադրել կուտա, թե վիպասան լինելու համար ստեղծված լինեք: Սակայն երբ օր մը կտեսնես զնա, շաբբան հաճած, գլուխը բաց, այն ժամանակ է, որ այդ գեղեցիկ ճակատը, որ արդարև վսեմ ճակատ մե, կը հարկադրե գրեզ մտածել, թե ինչ որ ալ լինի արտաքին երևույթը, այդ ճակատն կրողը սքանչելի կերպով բանաստեղծ, վիպասան կրնա կոչվիլ:

Թե օր մը բարեկամաբար սեղանի մը վրա կախեղու գինին հանկարծ մի քիչ շատ փախչի, և երևակայությունդ փոխադրվի աչքերուդ մեջ ու տեսնես, թե վիպասանը որպիսի բարեկամական գորով ցույց կուտա, այն ատեն կըմբռնես, թե արտաքուստ անտարբեր երևցած կերպարանք մը շատ տաքուկ սիրտ կկրե: Եվ վիպասան մը, որ տաքուկ սիրտ չունի, կը նմանի կնոջ մը, որ կուգե գեղեցիկ կոչվիլ առանց ունենալու աղվոր աչքեր:

Պ. Րաֆֆին տեսնելուս մյուս օրն էր, որ միասին գնացինք յուր տունը՝ անցնելով այն լայն, մեծ ու անհոգ փողոցներեն, որ քիչ-շատ բնակչաց բնավորությանը հարմարցու-

ցած են: Կուգե՞ք ճանչնալ ժողովուրդի մը բարքը, կացությունը, գաղափարներն. երբ կը մտնեք քաղաք մը՝ պտըտեցեք փողոցներեն և շուտով ըստ բավականին գաղափար մը կը կազմեք ձեզ հետաքրքրող այս կետերուն վրա:

Մտանք միապաղաղ Սոլովակի թաղը և հասանք Սվեչ-հիկյան տան դուռը: Դուռը արդեն բաց է, և անմշակ քիչ մը հողի վրայն անցնելով, փայտե սանդուղի մը սատիճաններն կ'ենելով, ներս մտանք սենյակի մը մեջ, զոր պատեր պաշարեր էին գարնանային տերևներեն: Ու՞ր ենք, քարակերտ փողոցի՞ մեջ, թե՞ այգեստան մը: Կանաչ տերևներեն մթնաշաղ գույն մը կը ճմայեն բնակարանին. փոքրիկ սենյակին մեջ փոքրիկ գրասեղան մը կա, որու վրա անհնարին է նշմարել փոշվո հյուլե մ'իսկ:

Հսած են, թե ո՞նք մարդն է, բայց ուրիշներն ալ կըսեն, թե կարասիքը մարդն է:

Չափալիք մեծությամբ գրասեղանին ձախակողմն է մի գրադարան, ուր կը պահվին մեյմեկ օրինակ հեղինակին գործերեն և մի քանիներն յուր սիրած գրքերեն: Պ. Րաֆֆիի աշխատանաց սենեկի հանդեպ ուրիշ մը սենեակ կը պարունակե գրքեր սվեյի մեծ քանակությամբ:

Ուր որ աչքերդ ածես Րաֆֆիի սենեկի մեջ, սկներս կը տեսնես գեղեցիկ ճաշակով օժտեալ տանուտերը: Գրքերը կազմված են գեղեցիկ, թավշապատ, ոսկեգօծ: Գրասերներու համար հեշտությանց մեծագույնն է իրենց ափերովը գզվել գեղակազմ մասոյան մը: Յուր փարթամությանց մեջ Ռոչկիտներեն մին, որ այնքան դժբախտ վախճան ունեցաւ, երկու մեծ հրճվանք ուներ,— աղքատաց բարիք ընել և աչքերն պարուրել ի տես փառակազմ գրոց մատենադարաններու:

Րաֆֆիի սենեկին մեջ մի քանի պատկերներ, պարսկական սոֆա մը և նստարանք կամբողջացնեն համեստ կարասիքը:

Այս տեսարանը ինձ համար տարօրինակ էր. չէի կրնար քմբոնել, թե ինչպէս մի մարդ կարող է գրել, երբ մեծ գրասեղանի մը վրա յուր թևերն ազատ չի պարզեր, երբ գրքերու

կույտ մը զինքը չի պաշարեր, և գրասեղանը չնմանի քառսի մը: — Բայց այդ կոկիկ, պարզ սեռեկին մեջ պ. Րաֆֆի կամփոփե յոր միտքը, կը չափավորե հոգվոյն թոխշքը: Ռուսիո մեջ գրող մը, նույնիսկ երբ օրագրի մեջ կը գրե, պարտավոր է ամեն միջոց ձեռք առնել յոր եռանդը սահմանափակ ընելու համար...

Եթե հեղինակը ինքնին չփույթա օրագրի մը էջերուն մեջ հրատարակելիք հոդվածոց կամ վիպասանությանց մասին շղթայապիւրկ ընել յոր միտքը, արդեն պ. Մանասթեանց<sup>2</sup> անդ կեցած է: «Մշակ» օրագրի մեջ հրատարակյալ վիպասանությանց կամ պատմական գրվածոց ձեռագրերն տեսա. արյունաճերկ թանաքի շատ սքանչելի տողեր կիսամեռ անդ ձգած է: Մարդ կապշի, որ քաղաքակրթության մեծ դարուն վերջերը տակավին օրագրությունը ենթարկյալ լինի մեծ պետության մը մեջ ամեն անգարգացած մանասթեանցներու հաճոյից, և մեծ տաղանդ մը պարտավոր լինի յոր ամենեւն գեղեցիկ տողերեն զոհել որևէ անձի հիմարական մտածությանց: Տասնեկններորդ դարու վերջերը անհանդուրժելի է այդ ընդդեմ մտաց բարբարոսությունը: Ինչ, անեղ պետություն մը ափ մը հանդարտ և հավատարիմ ժողովրդեն կը սարսափի, որ նորա մամուլը այսքան չարաչար կը կաշկանդե<sup>3</sup>:

Սակայն չհուսահատինք քաղաքակրթյան հաղթանակեն: Մտաց արտահայտություններեն ատեն մը ուրիշ կարմիր գույնով կը ներկվեն. այժմ արյան տեղ հաջորդած է կարմիր թանաքն, յոր կարգին նա ալ անհետ կը լինի:

Բայց մինչև որ անհետ լինի, իցե թե Ռուսիո կառավարությունը փոխանակ խավարամիտ կատրոֆներու<sup>4</sup>, ունկն դներ մադկության ճշմարիտ բարեկամներու ձայնին, որք միանգամայն ազգաց բարեկամներն են:

Երիտասարդ, լի կորովով կերևի Ռուս ժողովուրդը, սակայն մութի կաշկանդումը շատ շուտ անդամալույծ կընե հույժ քաջառողջ երևացող ազգն իսկ:

«Մարդկային ցեղ մը կրնա ուրիշ ցեղերն վերջ երևան

գալ պատմության մեջ, բայց միանգամայն անկման դրոշմովը դրոշմված լինիլ, այնքան շուտ կը ծերանան ժողովուրդը ստրկության մեջ, այնքան քիչ ժամանակ կը բավէ կուրաքանակ ընելու զիրենք և կերպարանափոխ: Տեսար զանոնք երեկ. լի, զեղուն էին կենդանությամբ. այսօր կանցնիս, բայց այլևս զիրենք չես ճանաչեր: Ծառ ավելի վատ է հետևությունը երբ խնդրո ստարկա են ժողովուրդը որք բնավ ազատ չեն եղած: Անոնց ամեն մեկ օրը մի դար կը հաշվի: Կը կարծես թե երիտասարդ են, գի ոչինչ ըրած են, իբր այն թե ի անհիշատակ ժամանակաց անտի ստրկությունն չլինէր աշխատությանց ամենեւնի դժնդակը: Ի հեռուստ ձեզ թվի թե՛ են ճոքա պարզամիտ սուաքյալը ապագային. և սակայն ճոցա ճակատներու վրա արդեն դրոշմյալ են վաղահաս ծերության կնճիռներն զոր անիրավության թմբրական արեգակի՝ ի ճոսա փորած է իրենց օրորոցին մեջեն: Մերձեցեք դեռատի ալդ ցեղերուն. ի՞նչ կը գտնեք.— մահամերձ ծերունիներ որք տակավին կյանք չվայելած արդեն հլուծյալ են»: (Է. Գիլե.— «Իմաստասիրություն Ֆրանսիայի պատմության»):

Իմաստասերին ցաղած ոգվոյն արտահայտություններն կը փափագինք որ օր մը չը լինին տխուր իրականություն: Վասն գի եթե իբր մարդ ամեն ազգաց և ժողովրդոց զարգացման և մեծության փափաքողներն ենք, անշուշտ իբր հայ կը տենչանք, որ քաղաքակրթության մեջ շուտ հառաջանան, որչափ հնար է շուտ, այն պետությունը որոց հովանվոյն ներքև կապրին հայեր: Տիրապետող ժողովրդի քաղաքակրթությունը մեծապես կը ներգործէ հպատակ ազգին զարգացման վրա:

Եվ սակայն առ աշտմ առ կախ կը թողունք մեր այցելությունը Րաֆֆիի տան մեջ, և հաջորդ շաբաթվան կը պահենք ներկայացնել զանազան առարկաներ որոց միջոցով Կովկասու և Անդրկովկասու հայ ժողովուրդը կարծած է ավելի զգալի կերպով արտահայտել յուր համակրանքն առ պ. Րաֆֆի<sup>6</sup>:

## ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՐԱՖՖԻԻ ՄԱՍԻՆ

Րաֆֆիի հետ ես ծանոթացա 1879 թվի դեկտեմբեր ամսին<sup>1</sup>:

Նոր ավարտած իմ կրթությունը Պետրոպոլսյան երկրագործական ակադեմիայում և մի քանի ամիս Ռուսաստանում գիտական ճանապարհորդություններ կատարելուց հետո, ես վերադառնում էի հայրենիք, Թիֆլիսի վրայով:

Ծանոթությունը տեղի ունեցավ «Մշակի» խմբագրատանը:

Գր. Արծրունին ծանոթացնելով ինձ Րաֆֆիի հետ հաղորդեց, որ Րաֆֆին վերջացրել է իր մի նոր վեպը, որը պետք է լույս տեսնի «Մշակում», բայց նախքան տպվելը Րաֆֆին ցանկանում է կարդալ իր վեպը խմբագրությանը մոտ անձերի շրջանում:

Ասելով այդ՝ Արծրունին հրավիրեց ինձ ևս գալ երեկոյան խմբագրատուն, միասին լսելու Րաֆֆիի վեպը:

«Մշակի» խմբագրատունը այն ժամանակ գետեղված էր նախկինում Արծրունու գալլերեայում, Դվորցովայա փողոցի վրա, և խմբագրատան լուսամուտները նայում էին դեպի փողոց:

Նշանակված ժամին ես խմբագրատանն էի:

Այնտեղ սպասում էր Գր.Արծրունին իր տիկնոջ հետ միասին: Եկան Հ. Տեր-Մարկոսյանը և Հ. Տեր-Գրիգորյանը, Ա. Մամյանը, Մ. Սաղաթելյանը<sup>2</sup>:

Րաֆֆին տեսողը ծրարած պահել էր ձեռքին:

Սկզբում տեղի ունեցավ զրույց ամօրյա հարցերի մասին: Եվ հազիվ պատրաստվում էինք լսելու վեպի ընթերցանությունը, որ հանկարծ լսվեց աղմուկ փողոցի կողմից և մի քնշ-որ օտարոտի իրարանցում:

Մենք վազեցինք դեպի լուսամուտը և տեսանք, որ կրակ է ընկել մի խանութ՝ դիմացի տան ստորին հարկում:

— Սալամբեկյանների խանութն է այրվում, — բացականչեցին շրջապատողները:

Հրդեհը սկսեց ծախալվել:

Խանութի մեջ այրվում էին իրերը:

Մի քանի ժամանակից հետո լսվեցին պայթյուններ:

Գր. Արծրունին դուրս վազեց կարգադրություններ անելու, որպեսզի իր տանը գտնվող հրաշեջ գործիքը պաշտպանի տունը հրդեհի տարածման դեմ:

Բարձրացան խմբագրատուն մի քանի կողմնակի մարդիկ և բացատրեցին, որ մագազինը անհայտ պատճառից կրակ է ընկել: Պայթյունների մասին հայտնեցին, որ մագազինում եղել են զենքի պարագաներ, որոնք բռնկվել են հրդեհից:

Րաֆֆին և ես կանգնած էինք միասին լուսամուտի առաջ և դիտում էինք հրդեհի զարգացումը: Հրեղեն լեզուները ձգվում էին վերև և լիզում էին պատերը: Մենք ցույց էինք տալիս միմյանց հրդեհի այս ու այն նոր նվաճումները:

Մեր շրջապատողները թեև հանգստացնում էին տիկին Արծրունուն, թե հրդեհը չէ կարող տարածվել և չէ կարող անցնի գալլերեպային, բայց որոշ աստիճան երկյուղ պատել էր բոլորին:

Արծրունու հրշեջ գործիքը ողողում էր ջրով Արծրունու տան պատերը և թույլ չէր տալիս, որ պատերը չափազանց տաքանան:

Շուտով եկան հրդեհաշեջները և սկսեցին եռանդուն կերպով հանգցնել կրակը:

Այլևս տրամադրություն չմնաց լսելու Ռաֆֆիի վեպը:  
 Վնուվեց հետաձգել ընթերցումը մինչև հաջորդ երեկո:  
 Հրդեհը վերջացավ, Գր. Արծրունին և տիկինը հան-  
 գրատացան: Փոքր-ինչ գրույց արինք հրդեհի վնասների և  
 նրա բռնկման ենթադրությունների մասին և ցրվեցինք:  
 Հետևյալ երեկո նորից հավաքվեցինք:  
 Ռաֆֆին խոսեց ինձ հետ երեկվա հրդեհի մասին և  
 ասաց.

— Ես օգտվեցի կրակի տեսարանից ավելի լավ խմբա-  
 գրելու և ավելի համապատասխան բառեր գործածելու Բա-  
 յազետի հրդեհի տեսարանում<sup>3</sup>:

Նրա վեպը «Խենթն» էր:

Ընթերցանությունը տևեց բավական երկար ժամանակ:  
 Ռաֆֆին կարդում էր ոչ գրավիչ եղանակով, բայց՝  
 կենտրոնացած և խորացած իր ընթերցանության մեջ, մաշա-  
 կելով առանձին ինքնահրճվանք և ինքնագոհություն:

Գր. Արծրունին և մյուսները երբեմնապես կատակաբա-  
 նություններ էին անում Ռաֆֆիի մի քանի նկարագրություն-  
 ների առիթով:

Ռաֆֆին ժպտում էր և մայրում շուրջը աչքի տակով:

Վեպը գտավ ընդհանուր հավանություն, իբրև հետա-  
 քրքրական և տպավորիչ: Նրա ընթերցանությունը չվերջա-  
 ցավ այդ երեկո և, որքան հիշում եմ, վեպը չէր էլ ավարտ-  
 ված այդ ժամանակ:


Այնուհետև այն մի քանի օրերում, որ Թիֆլիսումն էի,  
 պատահում էի Ռաֆֆին խմբագրատանը, և մի օր էլ կա-  
 տարեցինք մի փոքր զբոսանք Գոլովինսկի փրոսպեկտում,  
 Միրիմանյանի տան առաջ՝ խոսելով գրական երևույթների  
 մասին:

Ռաֆֆին հարց ու փորձ արավ ուսանողների մասին և  
 խոսք գցեց իմանալու, թե որքան հարազատ և միշտ էին  
 նրա հոդվածները հայ ուսանողության մասին<sup>4</sup>: Ես ասացի,  
 որ նրա գրվածքի մեջ շատ կան ուղիղ նկարագրություններ և



Աննա Բաթթի (Աննա Մելիք Հակոբյան)  
(1858—1920)





Այս էլ, թեմա ստաբիլից վանքին կից դպրոցը, ուր որպես մանկավարժ աշխատել է Բաֆֆին

նկատողություններ, բայց կան նույնպես սխալ ըմբռնված և ոչ հաջող ձևակերպված կտորներ. երևում է, որ հեղինակը չէ տեսել ուսանողական կյանքը, այլ գրել է նրա մասին հարց ու փորձերի հիման վրա: Նա պատմեց, թե ովքեր են եղել նրան նյութ մատակարարողները: Դրանք նախկին ուսանողներ են եղել:

Բաֆֆիի հետ էս նորից սկսեցի տեսնվել դարձյալ Անդրկովկաս վերադառնալուցս հետո, 1887 թվականին:

Այս անգամ այլևս մեր տեսակցության տեղը «Մշակի» խմբագրատունը չէր<sup>5</sup>:

Պատահում էինք փողոցում, երբ դեպքը բերում էր:

Հիշում եմ այդ ժամանակվա գրույցներից միայն մի բան, որ նա սկսել էր առանձին հրապույր զգալ պատմական վեպեր գրելու մեջ և մտադիր էր տալ պատմական վեպերի մի շարք<sup>6</sup>:

Վերջին անգամ տեսա Բաֆֆիին արդեն անշնչացած:

Նրա մահվան լուրը ցնցում պատճառեց հայ հասարակության ընդարձակ խավերին:

Մահվան լուրը ցույց տվեց, թե որքան մեծ ժողովրդականություն էր վայելում և որքան մեծ էր նրա ընթերցողների և հարգողների թիվը:

Ես հաքու էի, երբ հեռագիրը գումեց ժողովրդական վիպագրողի կորուստը: Երիտասարդությունը ողբում էր սիրելի գրողի մահը: Որոշվեց ողարկել պատգամավորություն և դնել պատկ հանգուցյալի դագաղի վրա:

Իբրև պատգամավոր, էս շտապեցի հաքվից Թիֆլիս և պատվիրեցի մի շքեղ պատկ:

Անձրևային ցուրտ օր էր թաղման օրը<sup>7</sup>: Բայց հուշարկավորությունը, այնուամենայնիվ, հանդիսավոր էր մինչև վերջ:

Վատ եղանակից հիվանդացան շատերը. էս ստացա քուր բրոնխիտ և ստիպված լինելով երկու շաբաթ անկողնին

ծառայել՝ անկարող եղա կազմել հողված Ռաֆֆիի մասին, որ մտադիր էի հրատարակել:

Ռաֆֆիի հողարկալիորության ժամանակ շատերի խոսակցության առարկան այն էր, որ հրատարակության տրվեն թե՛ արդեն լույս տեսած երկասիրությունները և թե՛ այն անտիպ գրվածքները, որոնց մասին լուրեր կային, թե նրանք շատ են թվով և ունեն գրական արժանիքներ<sup>8</sup>:

Աչքի առաջ ունենալով, որ Մելիք-Հախնազարյանները մի որոշ դեր կատարել են Րաֆֆիի կյանքում, մենք դիմեցինք Ալեք. Մելիք-Հախնազարյանին՝ հաղորդելու մի քանի տեղեկություններ Րաֆֆիի մասին:

Նա եկավ «Մշակի» խմբագրատուն, և մենք ունեցանք հետևյալ խոսակցությունը:

— Ե՞րբ ծանոթացաք դուք Րաֆֆիի հետ, — հարցրի ես:

— Յոթանասուն թե յոթանասունմեկ թվականներից էր, — պատասխանեց նա. — Րաֆֆին Թիֆլիս եկած օրից՝ բնակվեց մեր տանը և մնաց մեզ մոտ ամբողջ երեք տարի:

— Ինչպե՞ս տեղի ունեցավ ծանոթությունը, — հետաքրքրվեցի ես:

— Որքան ինձ հայտնի է, դա մի դիպված էր, — պատասխանեց նա. Րաֆֆին Թիֆլիս եկած օրը մտավ Սոլո-լակում գտնվող եվրոպական դերձակության մեր այն ժամանակ հայտնի մագազինը: Ես հիշում եմ, որ նա խնդրում էր խորհուրդ տալ, թե որտեղ իջնի:

Մենք հարց ու փորձ արինք, թե ով է նա և որտեղից է գալիս. նա պատասխանեց, որ պարսկատոանցի է և եկել է Թիֆլիս զբաղմունք գտնելու իր համար: Րաֆֆին մեզ հետուպրքեց, և իմ ավագ եղբայրը հրավիրեց նրան մեզ մոտ մի քանի օրով, մինչև բնակարան գտնելը: Րաֆֆին, որ այն ժամանակ հայտնի էր իր սեփական Հակոբ Մելիք-Հակոբյան անունով, այնքան հաճելի հյուր եղավ մեզ համար, որ մենք ստաջարկեցինք մեզ մոտ ապրել անորոշ ժամանակով: Նա մնաց, իսկ հետո ցանկանալով մի որևէ եղանակով վարձահատույց լինել մեզ, խնդրեց, որ իրեն հանձնենք մեր խանութի հաշվապահությունը: Մենք համաձայնվեցինք, և այսպես

նա մնաց մեզ մոտ երեք տարի<sup>2</sup>։ Որոշ ժամանակ նա զբաղվում էր հաշվապահական գործերով, իսկ այնուհետև նա ազատ էր։ Նա սովորություն ուներ գիշերները պարապել և անդադար կարդում, մանավանդ գրում էր.

— Արդյոք հայտնի<sup>3</sup> էր ձեզ, թե ինչ էր գրում։

— Ոչ,— պատասխանեց Մելիք-Հախնազարյանը,— նա գաղտնիք էր պահում և միայն այն էր ասում, որ ժամանակով բոլոր գրվածքները լույս կտեսնեն և այն ժամանակ նրանք կծանոթանան նրա աշխատության հետ։

— Ի՞նչ զգեստով նա մոտավ ձեզ մոտ։

— Նա հագել էր եվրոպական զգեստ՝ պիջակ և ծիլետե, թեև արդեն կորցրած թարմությունը։ Պահում էր իրեն շատ համեստ, առանց շատախոսության։ Կրում էր մի որոշ աստիճան խորհրդավորություն և ազդում էր հարգանք մեզ՝ պատանիներիս վրա։ Սիրում էր ծխել և սառը թեյ խմել։ Այսպիսով՝ նա պարապում էր ամբողջ ժամեր։ Երբ երեք տարի անցնելուց հետո նա տեղափոխվեց իր ստանձին բնակարանը, որը վարձել էր Սվեչնիկովի տանը<sup>3</sup>, նա չէր մոռանում մեզ և ամեն օր, երկու երեք անգամ անցնում էր մեզ մոտ և զրույց անում մեզ հետ։

— Ե՞րբ Րաֆֆին ծանոթացավ Գր. Արծրունու հետ,— հարցրի ես։

— Դեռ մեր տանը եղած ժամանակ,— բացատրեց Ա. Մելիք-Հախնազարյանը։ — Չգիտեմ թե որտեղից, Գրիգոր Արծրունին լսել էր, որ Հակոբ Մելիք-Հակոբյանը հեղինակություններ ունի<sup>4</sup>. մի օր մտնելով մեր մագազինը հայանեց, որ ցանկանում է տեսնել երիտասարդ գրողին<sup>5</sup>։ Մենք հայտնեցինք Հակոբին, և նա գնաց Արծրունու մոտ։ Արծրունին խոսեց հետը և հայտնեց, որ նա կուպագրի Րաֆֆիի աշխատությունները։ Րաֆֆին շատ շուրջված և բերկրացած էր այդ ստաշարկից։ Այդ ժամանակից սկսվեց նրա հոշակը, որը ժամանակի ընթացքում մեծացավ, ընդարձակվեց, և այսօր Րաֆֆին դարձել է հայի պարծանքներից մեկը։

Ա. Մելիք-Հախնազարյանը պատմեց մի քանի դեպքեր Րաֆֆիի կյանքից:

— Րաֆֆին առհասարակ սատն մարդ էր երևում, կենտրոնացած իր մեջ, առանց ծիծաղի, բայց մեր ընտանեկան հարկի տակ նա հաճախ ժպտում էր և զվարճանում, երբ պատմում էինք առօրյա կյանքի դեպքերից և երևույթներից, նա հետաքրքրվում էր և երբեմն խնդրում էր, որ նորից կրկնենք մեր պատմածը: Գուցե նա մեր պատմածներից նյութ էր վերցնում իր պատկերների և նկարագրությունների համար<sup>6</sup>: Նա սիրում էր դիտել թե՛ պատշգամբում և թե՛ ճեմելիքներում նստած ժամանակ: Երբեմն հարցնում էի նրան, թե ինչո՞ւ նա այդքան անբուն գիշերներ է անցկացնում, մինչդեռ վերջին կինտոն ուրախություններ է անում և դրանով զվարճանում. նա ծիծաղում էր կուշտ-կուշտ և հայտնում, թե կինտոները իրենց կերուխումով էլ կվերջացնեն ամեն բան, իսկ նա իր գրվածքներով կխոսի երկար տարիներ:

## ԿՏՈՐՆԵՐ ՈՒՂԵՂՈՒՄՍ ԿՈՒՏԱԿՎԱԾ ՊԱՇԱՐԻՑ

### 1. ԲԱՖՖԻ

Ես ճանաչում էի Րաֆֆին 1872 թվից, երբ Գրիգոր Արծրունին սկսեց հրատարակել իր «Մշակը»: Այդ ժամանակներն էին, որ Արծրունու հայրը՝ գեներալ Երեմիան, իր ներքին քարվանսարայի (Գևորգ աղի քարվանսարան, Սիոնի տաճարի մոտ) կառավարելը հանձնել էր իր որդուն, իսկ վերջինս իբրև իր օգնական հրավիրել էր Րաֆֆին, որը և միևնույն ժամանակ բնակվում էր նույն այդ քարվանսարայի սենյակներից մեկում: Գր. Արծրունին ճանաչելով Րաֆֆին ինչպես հմուտ վաճառական և, միևնույն ժամանակ, իբրև գրող, որ մոտ ուսումնասիրել էր հայաբնակ թե՛ Պարսկաստանը և թե՛ Թուրքիան, կամենում էր նրան իր մոտ պահել և օգտվել նրա կրկնակի հմտությունից: Արծրունին գործում էր առաջուց մտածված ու մշակված նախագծով. այդ ժամանակները գուցե նա չգիտեր, թե ապագայում ինչ տեսակ կերպարանք պիտի ստանար հայկական հարցը, թե ինչպես պետք է նա բարձրանար և ընդարձակվեր, բայց մի բան շատ լավ գիտեր և այդ բանին իր բոլոր ուժերով ձգտում էր, այն է՝ համերաշխություն հաստատել Ռուսաստանում, Թուրքիայում և Պարսկաստանում բնակվող հայերի միջև, ոչնչացնել կրո-

նական խտրությունները, որ մի շինական պատ էր հանդիսանում Արծրունու ձգտումների և դիտավորությունների առաջ: Բացի այդ, նա սշխատում էր մոտ հարաբերություններ ունենալ հայկական բոլոր գաղութների հետ և ուրախությամբ տպում էր այդ տեղից ստացված տեղեկությունները և թղթակցությունները, որոնք, իհարկե, տիրացուական ուղղություն չունեին և չէին պտտվում բացառապես եկեղեցու շուրջը և նրա պարիսպների մեջ: «Մշակի» էջերում ընդարձակ տեղ ունեին Բաֆֆիի նամակները Պարսկաստանից, Հարոյի թղթակցությունները Փարիզից, Պ. Իզմայիլյանի գրվածքները նույնպես Ֆրանսիայից և այլն: Մի քանի ժամանակից հետո թղթակցության ծավալը այնքան ընդարձակվեց, որ «Մշակի» խմբագրությունը ճիշտ տեղեկություններ էր ստանում բոլոր փոքրիշատե կարևոր և աչքի ընկնող երևույթների մասին, որոնք տեղի էին ունենում հայաբնակ ոչ թե միայն կենտրոններում, այլև անկյուններում: Հետագայում, իբրև խմբագրության քարտուղար, ես ամեն օր բերանացի զեկուցումներ էի տալիս Արծրունուն և ներկայացնում էի նշանավոր նամակները, որոնց կարևոր տողերի վրա ուշադրություն դարձնելու համար ես դրանք ընդգծում էի կարմիր մատիտով:

Բաֆֆիի պատճառով հայր և որդի Արծրունիների միջև անդադար անբավականություններ էին պատահում. հայրը կամեցում էր, որ ինքը լինի կառավարողը, իսկ որդին՝ իր օգնականը. որդին հոր սխառեմը գտնում էր վնասակար և կամեցում էր ինքնագլուխ կառավարիչ լինել՝ Բաֆֆին իրեն օգնական ունենալով: Հոր ու որդու միջև այդ հողի վրա ծագած անբավականությունները այնքան սուր կերպարանք ստացան, որ Գրիգորը հրաժարվեց ոչ թե միայն քարվանսարան կառավարելուց, այլև հոր հետ որևէ հարաբերություն ունենալուց: Իսկ Բաֆֆին տեղափոխվեց քարվանսարանի իր բնակարանից Սիոնի նրբափողոցում գտնվող մի տուն<sup>2</sup>, որ հետո ես անդադար այցելում էի Մելիքզադեին՝ մինչև իր մեկնելը Վերին Ագուլիս<sup>3</sup>, ուսուցչի պաշտոնով...

## 2. ԲԱՖՖԻԻ ԱԿՆՈՅԸ

Երկուշաբթի օր էր, խմբագրական երեկո:

Եւ հանգուցյալ Ամերիկյանի հետ մտա «Մշակի» խմբագրատունը, որ արդեն հավաքվել էին Պավել Իզմայիլյան, Վ. Շահվերդյան, Գ. Չմշկյան, Ստեփանոս Պալասանյան, հսկա Ներսես Մելիքյան, որ հայտնի էր իր միջամտությամբ բոլոր հարցերին և վերջը միշտ համաձայնում էր Արծրունու կարծիքի հետ:

— Պարոն Մելիքյան,— ընդմիջում էր նրան Արծրունին,— ես առաջուց գիտեմ, որ դուք համաձայն եք իմ կարծիքի հետ:

— Այո՛, անպատճառ:

— Ուրեմն ես հարցը պարզված եմ համարում:

Մելիքյանը հաղթական ժպիտը երեսին նստում էր իր տեղը: Այդ Մելիքյանը երբեք ոչ մի տող չի տվել «Մշակին», բայց ներկա է եղել խմբագրական բոլոր ժողովներին, խոսել է բոլոր հարցերի մասին և վերջը միշտ համաձայնել է Արծրունու կարծիքի հետ, անխնա ոչնչացնելով վերջինի ծխախոտները...

Պատուհանի մոտ, «Դրոտբա» լրագրի խմբագիր Սերգեյ Մեսխիի կողքին նստած էր Բաֆֆին, իր առաջ մի փոքրիկ կլոր սեղանի վրա ունենալով «Խաչագողի հիշատակարանի» ահագին տետրակը, որ նա խմբագրական երեկոների վերջը մաս-մաս կարդում էր: Այդ «Խաչագողի հիշատակարանը» Բաֆֆիի այն գրվածքը չէր, որ դուք կարդացել էք, իմ թանկագին ընթերցողներ, այլ պատմությունների, դեպքերի ու պատահածների մի ահագին ժողովածու, անկապ և անմշակ միմյանց վրա կուտակված: Եթե այժմ ձեր ձեռքն անցնի այդ տետրակը և դուք նրան համեմատեք տպվածի հետ, դուք կտեսնեք, թե երկուսի միջև որքան զանազանություն կա, և թե հետզհետե հանգուցյալ վիսպասանի աշխարհայեցողությունը՝ նեղ շրջաններից դուրս գալով, ինչպիսի ահագին ծավալով ընդարձակվում էր և ըմբռնում

էր շրջապատող իրականությունը: Միայն Մելիք-Հակոբյանի անսահման ընդունակությունը և տաղանդը կարող էին հպաստել հայացքների և կարծիքների ալսալիսի արագ զարգացմանը և գեղարվեստի գեղեցկության ըմբռնմանը...

Մենք ծանոթացանք<sup>2</sup>. իմ և Րաֆֆիի միջև հառաժ էր Սմերիկյանը: Րաֆֆին սկսեց կարդալ, այս րոպեիս նրա ձայնը լսվում է ականջիս, և ինձ թվում է, որ կարող եմ կոկորդիցս հանել նրա հնչյունները, եթե ես բեմի վրա նրան ներկայացնեիս լինեի:

Ես հայացքս չէի հեռացնում նրա աչքերից, իսկապես ոչ թե աչքերից, այլ ակնոցից, որը շատ մոտ կաշտում էր նրա հոնքերին և բոլորովին ծածկում էր աչքերը. հազիվ թե մեկը, բացի բանաստեղծի ընտանիքից տեսած լինի այդ աչքերը առանց ակնոցի: Աչքերը ամեն դիտողին շատ բան են ասում մարդու մասին, բայց ոչ ոք չէր տեսել Րաֆֆիի աչքերը, և նրան հանդիպելուց և շատ անգամ տեսնելուց հետո ոչ ոք չէր կարող ճիշտ գաղափար կազմել Րաֆֆիի մասին, մինչև նրա հետ յոսրիներով ծանոթ չլինեի: Րաֆֆին ձեզ շուտով ուսումնասիրում էր, ձեզ, ինչպես ասում են, խոսեցնում էր, ուշադրությամբ լսում և անմիջապես գաղափար էր կազմում, թե դուք ի՞նչ եք, ո՞վ եք, և ի՞նչ եք կամենում. իսկ ինքը մնում էր ձեզ համար հանելուկ: Նա իր մասին ձեզ այնպիսի գաղափար էր տալիս, ինչպիսին ինքն էր կամենում, և միշտ ծաղրում էր ձեր կարճատեսությունը: Նա առանձին հմտությամբ օգտվում էր իր շուրջը պատահածով, իր լսած խոսակցությունով:

Օրինակ կբերեմ հետևյալ դեպքը. Ալեքսանդր Բալանթարը այցելեց Գ. Արծրունուն: Նրա ոտը, ինչպես ասում են, վրա չեկավ Դվորցովայա փողոցին, և մյուս օրը հրդեհ պատահեց Սալամբեկովի շքանշանների խանութում, Դվորցովայի փողոցի վրա, «Մշակի» խմբագրատան դիմացը: Այդ ժամանակ Ալ. Բալանթարը խմբագրատանն էր և պատուհանի մոտ կանգնած նկարագրում էր հրդեհը:

Րաֆֆին լսում էր նրան ստանձին ուշադրությամբ, և այդ նկարագիրը գրեթե բառ սու բառ Բայազետի հրդեհի նկարագրությունը կազմեց «Խեղճի» մեջ, որն այդ միջոցներից մաս-մաս տալիս էր «Մշակում»<sup>6</sup>:

Վերադառնում եմ Րաֆֆիի աչքերին, որոնց ես մեր ծանոթության և անվերջ տեսությունների և երկար խոսակցությունների ժամանակ միայն երկու անգամ եմ տեսել առանց ակնոցի: Առաջին անգամը մեր տանը, որտեղ Րաֆֆին իր ձեռքերի վրա բարձրացրեց իմ ավագ որդուն, իսկ վերջինս պոկեց նրա ակնոցը և շատ հեռու շարտեց... Րաֆֆին գետին իջեցրեց երեխային և շտապով վերցրեց ակնոցը: Իսկ երկրորդ անգամ նա շտապով եկավ իր բնակարանը, ուր ես նրան սպասում էի, առանց գլխարկի և ակնոցի և շատ շփոթված, մի երկու րոպեից նրան հետևեց Րաֆֆիի դրկից մատաղահաս տիկին Ռոզան, Րաֆֆիի գլխարկն ու ակնոցը ձեռքին:

— Ներեցե՛ք, պարոն,— ասում էր գեղեցկուհի Ռոզան, որի չքնաղ կապույտ աչքերում արտասուքներ էին փայլում,— ամուսինս խելագարվում է, երբ արբում է... Վերցրեք ձեր գլխարկն և ակնոցը... Դարձյալ ներողություն եմ խնդրում, հազար ներողություն եմ խնդրում:

Բայց այս ի՞նչ ներողություն խնդրել էր: Ռոզայի ձայնից ես սիրալին մոտաներ էի լսում, իսկ նրա քնքուշ այտերի վրա արցունքի կաթիլներ տեսնում, Ռոզան հեռացավ մի քալվածքով, որ հատուկ է միայն հավերժահարսներին...

Րաֆֆին անմիջապես պաշտպանեց իր աչքերն ակնոցով, բայց ես արդեն նկատել էի մի անսովոր կրակ այդ աչքերի մեջ...

— Եղբայր,— այդ անպիտան արբեցողը իր փայտի հարվածով գցեց գլխարկս ու ակնոցս:

— Բայց ձեր աչքերը կարող էին վնասվել այդ հարվածից:

— Ո՛չ, փայտը կալավ գլխարկիս, իսկ գլխարկը՝ գցեց ակնոցը:

— Պետք է գանգատվել հաշտարարին, ես կվկայեմ...

— Ո՛չ, չարժե:

— Բայց այդ դեպքը կարող է կրկնվել և վատ հետևանքներ ունենալ: Արքեցողը ձեր մոտ դրկիցն է:

— Ոչինչ, Ռոզան իմանում է նրան զուպել: Նրա ներկայությամբ ամուսինը կատու է կտրում: Ռոզան ինձ ինքնատե է տալիս, և ես նրան վճարում եմ մի աննշան ամսական: Դա մի չքնաղ կին է, որի աչքերի կախարդիչ հայացքների ազդեցության տակ նրա ամուսինը կերպարանափոխվում է... Ես չեմ կամենում խզել այդ հրապուրիչ կնոջ երթևեկը ինձ մոտ:

Տուն մտնելիս ես մտքումս կրկնում էի անդադար Ռաֆֆիի այդ վերջին ճախադասությունը, որ հիշատակարանիս մեջ չակերտված է:

### 3. ԱՄԵՐԻԿԱՆ, ԱԴԱՄՅԱՆ ԵՎ ՐԱՖՖԻ

Այսօր հիշատակարանս թերթելիս նրա մեջ գտա Ամերիկյանի պատկերը իր ձեռագրով և Ադամյանի ինձ գրած ճամակը Մոսկվայից: Ես շտապում եմ մի փոքր ընդհատել իմ պատմությունը և ծանոթացնել ընթերցողներին այդ ձեռագրի և նրա ճամակի հետ, եթե կամենում եք, հենց միմիայն նրա հասար, որ միմյանց մոտ շարեմ հայերի համար անգնահատելի երեք մեծ տաղանդների անունները՝ Հակոբ Մելիք-Հակոբյան, Միհրդատ Ամերիկյան և Պետրոս Ադամյան: Ահա՛ Ամերիկյանի գրվածքը պատկերի վրա:

«Իմ սիրելի ընկեր Հովհաննես Տեր-Գրիգորյանցին: Նշան բարեկամության, Պոլիս, գնալուս օրը առավոտյան ժամը 6-ին, 1873 թվի դեկտ. 28-ին: Փոթի-Թիֆլիսյան երկաթուղու վրա: Մարդասպանի հեղինակին»<sup>7</sup>:

... Վերջին երկու բառերը Ամերիկյանը ընդգծել էր:

... Այս պատկերը հանձնում եմ «Տարազի» խմբագրությանը<sup>8</sup>:

Ադամյանի նամակը.

1883 թ. 5 օգոստոսի Մոսկվա:

«Պարոն Տեր-Գրիգորյան.

Ստացա ձեր վերջին նամակը անցյալ ամսույն 29 թվականի. երեկ ստացա և այսօր պատասխանում եմ ձեզ. համառոտիվ, որպեսզի գոնե սպասել չիտամ Ձեզ, սակայն հավատացեք, անկեղծորեն կանեմ, որ ցավելով տալիս եմ Ձեզ այս պատասխանը: Դուք ստաջարկում եք ինձ ոռնիկ, ամիսը 150 ռուբլի և զուտ հասույթից ծախսերը դուրս գալով 10 տոկոսը, սակայն, ներեցեք, այդ պայմաններեն և ոչ մեկը չեմ կարող ընդունել: Ուստի իմ վրա հույս մի դնեք, սիրով կընդունեի, եթե կարելի լիներ: Բայց չեմ կարող իմ ընկեր:

Կը ցանկանամ ձեզ ամենայն հաջողություն»:

**Ձերդ Պ. Հ. Ադամյան**

Այս նամակը և Ադամյանի գիրքը՝ «Բերթվածք և թարգմանությունք, Պ. Հ. Ադամյան, հրատ. Ս. Արծրունու», Ադամյանի հետևյալ ձեռագրով. «Հիշատակ սու մեծ [ապատիվ] պարոն Տեր-Գրիգորյանց հեղինակից, 1880 թ. մարտ, Թիֆլիս», հանձնում եմ Ազգագրական ընկերությանը:

Եթե մի երկու կամ երեք տարի էլ ապրեմ, դեռ շատ կտորներ կտամ ընթերցողին ուղեղումս կուտակված պաշարից...

#### 4. ԲԱՖԳԻԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԵՎ ԿԱՊՈՒՅՑ ԱԶԳԵՐԸ

Ահա այն բնակարանը, որտեղ տաղանդը գրեց իր «Ուխտյալ միանձնուհին» և կազմեց «Փունջի» հատորները: Երբ դուք մտնում եք Սիոնի նրբափողոցը, ձախ կողմը գնում է մի նեղ փողոց, որ տանում է դեպի Էկզարշուկայա հրապարակը: Դուք չեք մտնում այդ փողոցը, այլ շարունակում եք գնալ Սիոնի նրբափողոցով. աջ կողմի նրբափողոցը գնում է դեպի Սիոնը, իսկ ձախ կողմի վրա դարբասի փոքր դռնով մտնում եք մի փոքրիկ բակ և, սանդուղքներով բարձ-

բանալով՝ մտնում էք Րաֆֆիի բնակարանը: Տունը երկհարկանի էր, ներքին հարկում ասրում էր գեղեցկուհի Ռոզան, իսկ վերին հարկում՝ Րաֆֆին: Տաղանդավոր վիպագրողի բնակարանը կազմում էին մի փոքր ու մեծ սենյակ, եթե կարելի է մեծ անվանել երկու սաժեն լայնություն և երեք սաժեն երկարություն ունեցող մի սենյակ: Սա հյուրասենյակն էր, իսկ փոքրը միաժամանակ և ճնջարան ու գրասենյակ, որտեղ դըրված էր մի մահճակալ ու մի գրասեղան: Գրասենյակի պատուհանը նայում էր մի փոքր պատշգամբի, որ պատից դուրս էր ցցվել ուղղակի Քոռ գետի վրա: Պատշգամբը կարելի էր գնալ միայն հյուրասենյակի դռնից: Սենյակները կահավորված էին ավելի քան համեստ: Սունդուկյանը սիրում էր կահավորված լինել կոմֆորտով և նա այդ կարողանում էր անել, իսկ Րաֆֆին ստիպված էր ապրել ավելի պակաս, քան թե համեստ:

Պատշգամբից նրաշալի տեսարան էր բացվում: Քոռ գետը գողալով վազեցնում էր իր ալիքները, պատշգամբը կարծես օդի մեջ էր կանգնած, և կասեիր, թե նա ոչ մի պատվանդան չունեի ու մի րուպեից հետո կընկնի և կընկղմվի կատաղած գետի մեջ: Պատշգամբի վրա, գրասենյակի պատուհանի մոտ դրված էին մի փոքր սեղան ու երկու աթոռ: Երկար ժամերի ընթացքում պատշգամբի վրա խորին լռություն էր տիրում ամառները, և այդ լռությունը ընդհատվում էր, բանաստեղծի գրչի խզխզոցով: Առավոտ և երեկո ժամը 6-ին պատշգամբը կենդանանում էր: Քնքուշ Ռոզան բերում էր փոքրիկ ինքնատեղ, դնում էր սեղանի վրա և, ինչպես աղավնին թռչում է օդի մեջ և թևերը բանալով հանկարծ կանգնում, նույնպես Ռոզան նազելի շարժվածքներով թռչում էր ինքնատեղի և նրա ամանների շուրջը և հանկարծ կանգ էր առնում՝ ցցելով իր հարցական հայացքը վիպասանի վրա:

—Թեյ կը կամենա՞ք,— հարցնում էր նա ոռութեն,— իսկ հետագայում նա այդ հարցը արտասանում էր հալերեն:

—Խնդրեմ, շատ շնորհակալ կլինեմ:

Ռոզան պատուհանից մեկնում էր տաղանդավոր վիպասանին թեյի բաժակը, իսկ վերջինը գցելով գրիչը՝ թեքում էր իր գլուխը ձեռքերի վրա և իր ակնոցի հետևից նայում էր երիտասարդ տիկնոջ մանկական անմեղությունն արտահայտող քնքուշ պատկերին, նայում էր, նայում և անվերջ նայում:

—Ռոզա,— լսվում էր ամուսնու կոպիտ ու խապոտ ձայնը:

—Գալիս եմ,— պատասխանում էր Ռոզան իր երածը տական մեղմ ձայնով ու փափուկ քայլերով վազում էր դեպի ամուսինը, միշտ ձեռքին ունենալով թեյի բաժակ, կամ ափսե, կամ թեյի սրբիչ:

Նորից գրիչը ընկնում էր բանաստեղծի ձեռքը, նորից նա վազում էր սպիտակ թղթի վրա, նորից թափվում էին թունավոր նախադասություններ կամ մեղմ և դառն երգեր, որոնք արտահայտում էին բանաստեղծի հուզմունքը, նրա սրտի վիշտը, նրա բողոքը կյանքի անարդար կազմի դեմ, նրա համակրանքները դեպի հարստահարվածները, դեպի ժամարգվածները, դեպի անարդար ու զարհուրելի կապով կապվածները...

—Թեյ կը կամենա՞ր,— հարցնում էր նորից Ռոզան պատշգամբը արագ դուրս նետվելով ու պատուհանից մեկնելով իր մինչատուր ձեռիկը դեպի դատարկ բաժակը:

—Ռոզա, մի բուպե, թող սլապեա մնա ձեռքդ:

Ռոզան առնում էր բաժակը իր ձեռքը և պահում էր այսպես մեկնաժ դիրքով: Նրա կրծքի ելևեջները նկարում էին նրա սրտի հուզմունքը, այն փոթորիկը, որ բարձրացել էր վիպասանի սրտի մեջ և ամենը ավետում էր...

Ռոզան աժում էր թեյը և մեկնում հեղինակին: Նրա սպիտակ գոգնոցի հետ խաղում էր առավոտյան զեփյուռը, կոկետ շարժվածքով նա ուղղում էր գոգնոցի ծալերն ու իր հայացքը չէր հեռացնում բանաստեղծի դեմքից:

—Պարո՛ն, ինչի մի բուպե չեք դուրս գալիս պատշգամբ:

Տեսեք, Քոռից ինչ մեղմ քամի է փչում, որքան օդը թարմ և մաքուր է:

— Չեմ կամենում:

Այս հարցն ու պատասխանը ամեն առավոտ ու երեկո կրկնվում էր, բայց Րաֆֆին դուրս չէր գալիս պատշգամբ:

Վիպասանը սվեդի շատ երիտասարդ էր, քան թե հասակավոր: Գուցե նա վախենում էր մոտենալ այդ հրաշալի արարածին, գուցե նա վախենում էր արքել Ռոզայի քնքուշ մարմնի ջերմությունից ու իրեն մոռանալ...

Ժամը 8-ին Ռոզան հեռանում էր և երևում երեկոյան ժամը 6-ին, և դարձյալ կրկնվում էր նույն տեսարանը...

— Ռոզա, պահիր աչքդ անշարժ քո ձեռքը, թող որ ես հայեմ նրա վրա...

Եվ նա իր գեղեցիկ, փոքրիկ ձեռքը պահում էր անշարժ, ու բանաստեղծը սիրով ու հրճվանքով նայում էր այդ բյուրեղյա ձեռքին, նայում էր, անվերջ նայում...

— Ռոզա,— լսվում էր խապոտ ձայնը, և Ռոզան անհետանում էր:

Մի՞թե Րաֆֆին սիրում էր այդ հրաշալի արարածին, հրապուրված էր նրա շլացնող գեղեցկությունից, հմայված էր նրա պայծառ, կապույտ աչքերից...

Այո՛, Րաֆֆին սիրում էր Ռոզային, անչափ ու անասման սիրում էր նրան, բայց սիրում էր նրան հայրական մաքուր ու անաքատ սիրով: Չէր թույլ տալիս իրեն մինչև անգամ շոյել նրա մագերը կամ շփվել նրա ձեռքերին: Րաֆֆին սիրում էր Ռոզային իբրև մի գեղեցիկ, բայց դժբախտ երեխայի, որը ընկել էր արբեցող գազանի ճիրանները:

Իսկ Ռոզա՞ն:

Ռոզան հպատակվում էր Րաֆֆիի կամքին, կատարում էր նրա բոլոր հրամանները... Իր կուպիտ ամուսնուն կից նա գտել էր մի մարդու, որ անչափ նրան համակրում էր, սիրում, գուրգուրում, և համոզված էր, որ այդ բարի մարդը, որ այդքան շատ գրում է, անվերջ գրում և գրելու ժամանակ հաճախ արտասովում, այդ մարդը չէր կարող նրան վատ բան

հրամայել. ուրեմն, բնական էր, որ Ռոզան անշալի հավատքով էր վերաբերվում վիպասանին և կատարում էր նրա բոլոր հրամանները: Րաֆֆիի համար գեղեցկուհի Ռոզան մի մոդել էր, իսկ Ռոզայի համար Րաֆֆին՝ մի նկարիչ...

Երբ էս կարդում էի Րաֆֆիի վեպերում նրա նկարագրությունները կապույտ աչքերի, մարմարյա ձեռքերի, քրնքուշ շրթունքների և սպիտակ գոգնոցի մասին, իսկույն իմ առաջ պատկերանում էր չքնաղ ու մատաղահաս Ռոզան: Եվ երբ տեսնում էի Ռոզայի նման մի գեղեցկուհի, ինքս ինձ ասում էի՝ ահա Րաֆֆիի համար մի նոր մոդել ևս: Բայց ուր է ինքը, վիպագրողը:

— Պարոն, այդ ի՞նչ եք դուք այդքան շատ գրում,— ասում էր Ռոզան համեստությամբ բանաստեղծին նայելով և իր քնքուշ մատներով իր գոգնոցի հետ խաղալով:

— Գրում եմ երգեր ու հեքիաթներ:

— Հեքիաթներ՞, այո՛, գիտեմ: Իմ տատը ինձ միշտ հեքիաթներ էր պատմում, երբ էս երեխա էի... Ես գիտեմ, թե ինչպես չար հսկային հաղթեց մի նիհար, բայց բարեպաշտ երիտասարդ... Իսկ այդ հեքիաթները ձեզ ո՞վ է պատմել. ձեր պա՞պը, թե՞ տատը:

— Ո՛չ էս ինքս եմ հնարում:

— Հնարում եք, մի՞թե կարելի է հեքիաթը հնարել... իսկ երգե՞րը, մի՞թե երգերն էլ հնարում եք: Պարոն, ներեցեք իմ համարձակությանը, ես ձեզնից կամենում եմ մի բան խրնդել, բայց վախենում եմ, որ բարկանաք...

— Ձեմ բարկանա, ասա, ի՞նչ էս խնդրում:

— Խնդրում եմ, երգեցեք ձեր երգերից մեկը:

— Ես երգել չգիտեմ:

— Ինչպե՞ս, երգեր եք գրում և երգել չգիտե՞ք... Դուք ինձ ծաղրում եք...

— Ձեմ ծաղրում, երեխա՛, չեմ ծաղրում. ես երգել չգիտեմ: Գնա, հանգստացիր, արդեն ուշ է, աստված քեզ հետ:

Բարի գիշեր, պարոն,— ասում էր Ռոզան կոկետությամբ իր ոտքը սայթելով և գլուխ տալով,— ցանկանում եմ

ձեզ երագում տեսնել կախարդված իշխանին, որ միշտ պըտտում է մի շրջանում և չի կարողանում մոտենալ իր պաշտած գեղեցկուհուն...

Րաֆֆին մնում էր մենակ և գրում էր: Գրում էր անվերջ, մինչև առավոտյան արշալույսը ծագում էր, և արևի ճառագայթը ստիպում էր նրան իջեցնել պատուհանի մուգ վարագույրը և հանգստանալ:

## 5. ՓԼԱՎԸ ՐԱՖՖԻԻ ՄՈՏՑ՝

Ես հետաքրքրվում էի այն բոլոր թղթակիցների անձնավորություններով, որոնք գրում էին «Մշակի» մեջ. Աշոտ Տեր-Վարդանյան, Խաչատուր Մարանկոզյան և ուրիշներ, և, առհասարակ, «Մշակի» բոլոր աշխատակիցներն ինձ համար նվիրական մարդիկ էին, և հետագայում իմ արտիստական տորենների ժամանակ ես նրանց բոլորի հետ էլ ծանոթացա և մեծ աջակցություն ունեցա իմ տված ներկայացումներին, ուստի և շատ ուրախացա, երբ Րաֆֆին հրավիրեց ինձ իր մոտ փլավ ուտելու, որ մեծ վարպետությամբ պատրաստում էր նրա՝ Պարսկաստանից իր հետ բերած Գրիգոր աճուռով կարմրաթշիկ ու հաստիկ ծառան ասելով, որ իր մոտ կլինի և Համբարձումը<sup>10</sup>, որի հետ ինձ կծանոթացնի: Այս ծանր ժամանակներում, երբ մարդիկ կատարելապես սով են ապրում<sup>11</sup>, ես կթվեմ Գրիգորի պատրաստած փլավի տեսակները, որպեսզի ընթերցողներս, եթե ուտել չեն կարող, գոնե լրագրի մեջ կարդան նրա աճուռները. փլավ նուշով, քիշմիշով և աղջանաբադով կամ ալիբուխարով, փլավ մսով կամ ճուտերով, փլավ դավուրմայով կամ շավիթով, փլավ տակը ձվածեղով, կամ տակը փռած և տապակած լավաշով և այլն: Րաֆֆին բնակվում էր Սիոնի մոտ, Քոտ գետի ափին, մի վրացի իշխանուհու տանը, որի պատշգամբը նայում էր գետին. և հենց այդտեղ մենք ճաշեցինք:

Զարմանալի հակապատկերներ էին ներկայացնում այդ երկու անձնավորությունները, որոնց վիճակված էր հետա-

գայում նշանավոր դեր խաղալ հայ իրականության մեջ: Համբարձումը անվերջ խոսում էր և խոսում էր «Մշակի», Գ. և Ա. Արծրունիների և «Մշակի» մեջ գրողների արտահայտած մտքերի շուրջը, վայրկենաբար միայն ընդհատելով իր խոսքը, երբ փլավով լցնում էր բերանը. իսկ Րաֆֆին անվերջ լռելով միայն ուտում էր և նայում էր իր կապույտ ակնոցների տակից և այնպիսի տեսք ունեւ, որ կարծես թէ նա ձեւացնում էր, թէ լսում է, իսկ ինքը զբաղված է բոլորովին այլ մտքերով, որոնք սավառնում էին շատ հեռուները: Պարզ երևում էր, որ Համբարձումը ծայրե ի ծայր կարդում էր «Մշակը» և գրեթե բերանացի գիտեր այն բոլորը, ինչ որ լրագրի մեջ տպված էր: Նա շատ ուրախանում էր, երբ այդ մտերմական շրջանի մեջ Րաֆֆին և ես հայտնում էինք պսևողոնիմները, և մեծ ցանկություն էր հայտնում նրանց հետ ծանոթանալ: Բացի այդ ճաշը, ես Համբարձումին սեղանակից եմ եղել երկու անգամ «Մշակի» քառասնամյակին և նույն քառասնամյակի սլաոճառով «Ֆանտազիա» այգում պրոֆեսոր Հակոբյանի Թիֆլիս ժամանելու ստիթով տված ընկերական ճաշին: Առաջին անգամ նա շատ չխոսեց, որովհետև գլխավորապես խոսում էին ուրիշները, իսկ երկրորդ անգամ նա և Քալանթարը անվերջ խոսում էին անկասկած հրաշալի հասարակական գործերի շուրջը: Այս վերջին ընկերական ճաշը շատ հիշեցնում էր ինձ փլավը Րաֆֆի մոտ, որովհետև երկու անգամն էլ Համբարձումը անվերջ խոսում էր...

## ՐԱՖՖԻԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Րաֆֆիի հետ եւ ծանոթացաւ, երբ առաջին անգամ Թիֆլիս եկա 1872 թ.: Նա կարդաց ինձ մի քանի քան յոր «Փունջից», որ տակաւին չէր տպւած<sup>1</sup>: Այնուհետեւ չտեսաւ նրան մինչև 1884 թ., բայց մենք երբեմն-երբեմն նամակներ էինք փոխանակում իրար հետ<sup>2</sup>: Երբ եւ վերստին Թիֆլիս եկա այդ թվականին, մեր բարեկամությունն ավելի սերտ բնավորություն ստացավ, և նա պարզեց ինձ յոր գրվածքների բոլոր հատորները՝ սիրուն, սիրուն կազմերով: Մեր բնակարանները Նագորնայա փողոցում իրար մոտիկ<sup>3</sup> էին, և մենք ստեպ էինք տեսնում միմյանց: Նա մենակ էր ապրում այդ միջոցին:

Րաֆֆիի երկերից և ոչ մեկը կարող էր այնքան պարզ գաղափար տալ ինձ՝ նրա քանքարի մասին, որքան տալիս էր նրա կենդանի խոսակցությունը: Րաֆֆին լսելիս եւ տեսնում էի, որ այդ քանքարն ավելի մեծ էր յոր որոճած, քան թե արդեն լույս ընծայած երկերում: Նա մեռավ հենց այն միջոցին, երբ յոր տաղանդը լիովին հասունացել էր և թոթափել օտարամուտ գաղափարների ազդեցությունը: Րաֆֆին այնքան խելոք էր, որ չէր կարող երկար մնալ դրանց լուծի տակ, ապացույց՝ «Սամվելը»:

«Սամվելը» գրելիս նա անդուլ պարսպում էր մեր հին հեղինակների ուսումնասիրությամբ. Ագաթանգեղոսը, Խորենացին, Եղիշեն, Եզնիկը, Փարսեցին և Փավստոսը նրա երևակայությունը վառել էին, և նա այնքան նոր վեպեր էր հղացել, որ եթե անգութ մահն այնպես շուտ վրա չհասներ, «Սամվելը» դեռ շատ հաջորդներ կունենար: Բաֆֆին մտադիր էր, ի միջի այլոց, մի ընդարձակ պատմական վեպ գրել, որի նյութը լինելու էր քրիստոնեական և հեթանոսական գաղափարների ընդհարումն ու պատերազմը Հայաստանում:

Երբ նա տաք-տաք խոսում էր այդ ապագա վեպերի մասին, ես ապշած էի մնում նրա զորեղ երևակայության առջև. նա այնպես էր պատկերացնում յուր պատմած բաները, որ կարծես թե դրանք նկարված լինեին պատի վրա՝ յուր աչքին տեսանելի պայծառ և որոշ գույներով: Ուրեմն, կմնա միայն գրի անցնել այդ բոլորը, որ, անշուշտ, նրա համար մի դժվար գործ չէր լինի:

Բաֆֆին անդադար առաջարկում էր ինձ, որ մենք միասին մի ամսագիր հրատարակենք<sup>9</sup>: Մինչ մենք բանակցում էինք այդ մասին, ես մի զորավոր հրամանի հնազանդելով՝ ստիպվեցա գնալ Ս. Էջմիածին և տարին չանցած՝ բարեկամիս անակնկալ մահվան գույժը լսեցի... Ազգը կորցրեց յուր Բաֆֆիին: Ծատ գեղեցիկ խորհուրդներ, առատ նյութեր, ոսկի հույսեր գերեզման տարավ տաղանդավոր վիպասանը: Անչափ է մեր ցավը այդ մասին. բայց շնորհակալ լինինք նրանից և այն ճոխ ավանդի համար, որ նա կտակեց մեր մանուկ գրականությանը:

## ԹՈՒՈՒՑԻՆԿ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

...Այսպես շարունակվում էին մեր խմբագրական նիստերը մինչև Րաֆֆի երևալը մեր մեջ<sup>1</sup>, որ ամեն անգամ մտնում էր մի-մի ահագին տետրակ դրած կոնատակին: Սկզբում նա խմբագրական գործերին չէր խառնվում, այլ կարդալով և հանձնելով յուր «Պարսկաստանի նամակները»<sup>2</sup> Րաֆֆի ստորագրությամբ, հեռանում էր խաղաղ և անվրդով, բայց հետզհետե «տոտոն տուն դնելով», ինչպես ասում են թիֆլիսեցիք, նա սկսեց մեծ ազդեցություն ձեռք բերել պ. Արծրունու վրա:

Կարճ ժամանակում մեզ ամենքիս համար նկատելի եղավ, որ պ. Արծրունին օրեցօր սկսում էր մեզանից անկախ գործել և միշտ ամեն մեկ հարցի ժամանակ ավելի մեծ ուշադրություն է դարձնում Րաֆֆի հայտնած կարծիքներին, քան ընդհանրության վճռին:

Մի քանի ամսից հետո բաժանորդների թվի ավելանալովը<sup>3</sup> «Մշակի» նյութական միջոցները սկսեցին օրըստօրե լավանալ: Րաֆֆին արդեն պ. Արծրունու աչքում ստացել էր հեղինակություն: Ամերիկյանը<sup>4</sup> նմանապես յուր սուր ֆելիետոնական գրվածքներով («Չաքուն» ստորագրությամբ) կարևոր ուժ էր դարձել խմբագրության համար: Եվ որով-

հետև խմբագրության գործերի բարդվելու պատճառով հարկավոր էր մի անձնավորություն, որ միշտ խմբագրության մեջ գտնվեր, նորա ընթացիկ գործերին վերահսկեր մի որոշ վարձատրությունով, ահա այդ պաշտոնը ձեռք բերելու նպատակով Րաֆֆին և Ամերիկյանը սկսեցին մրցել միմյանց դեմ:

Ամերիկյանը, որ հույսը դրել էր խմբագիրների համակրության վերա, աշխատում էր մեզնով ազդել պ. Արծրունու վրա, այնինչ Րաֆֆին, արդեն նախատեսելով խմբագրության քայքայումն, գործում էր ուղղակի, հաղորդակցվելով անմիջապես իրա՝ Արծրունու հետ: Վերջ ի վերջո Րաֆֆին տարավ հաղթությունը և մնաց «Մշակի» մշտական վարձ ստացող աշխատակից<sup>6</sup>:

## ՐԱՖՖԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուս-թուրքական պատերազմից հետո ոռոսահայ կյանքը մտորում էր:

Հայ գրականությունը, մամուլը, թատրոնը մտել էին նոր ֆազիսի մեջ:

Երկու հոյակապ վիպասաններ՝ Ծերենց և Րաֆֆի, Թիֆլիսումն էին. այստեղ էր և հոյակապ Ադամյանը:

Արծրունու թատրոնին կից գոյություն ուներ մի ճաշարան՝ «Կոմերչեսկի թեստորան» անունով: Այստեղ էին այդ ժամանակ հաճախ ճաշում Ծերենցը, Րաֆֆին, Ադամյանը և ուրիշ շատ գրականագետներ և արտիստներ: Ծերենցը և Րաֆֆին չէին ճաշում մի սեղանի վրա, իսկ Ադամյանը և ես, որ այդ ժամանակ ապրում էինք Բարյատինսկայա փողոցի վրա, Ամիլախվարի կահավորված սենյակներում, ճաշում էինք միասին, մերթ ընկերանալով «Թորոս Լևոնի», «Երկունք իմներորդ դարու», «Թեոդորոս Ռշտունի» վեպերի հեղինակին, մերթ «Խենթի», «Խամսայի մելքությունների» և այլն հեղինակին:

Մի օր այս ճաշարանում երկու հսկա վիպասանները վեճի բռնվեցին, որի ֆինալը Ծերենցի՝ Րաֆֆիի վրա շիշ քարձրացնելը եղավ<sup>1</sup>:

\* \* \*

Անցան տարիներ... Արծրունին «Մշակը» ավանդ տվեց Րաֆֆին<sup>2</sup>, Գաբր. Միրզոյանին<sup>3</sup> և Ներսես Աբելյանին<sup>4</sup>, ինքը Շվեյցարիայումն էր։ Ավանդապահներից երկուսը՝ Րաֆֆին և Միրզոյանը, մեկը մյուսից գաղտնի, որոնումներ էին անում «Մշակի» համար։ Փոթիում անակնկալ երկու ընկերակից ախույանները գնդապետ Մելիք-Հայկազյանի տանը<sup>5</sup> միմյանց հանդիպելով<sup>6</sup> հենց այստեղ էլ իրենց որոնումները թաղեցին...

Այնուհետև Րաֆֆին և Միրզոյանը միմյանցից խոյս էին տալիս, և մեկը սրանցից թաք էր կենում կամ հետևի դոնով դուրս գալիս, երբ մտնում էր մյուսը։

Արծրունին Րաֆֆիից բաժանվեց Շվեյցարիա գնալիս ոչ հաշտ։

Րաֆֆին մի շարք պահանջներ էր հարուցել հենց այն վայրկյանին<sup>7</sup>, երբ Արծրունին բռնկված սրտով, վհատված ու լքյալ՝ մեկնում էր Շվեյցարիա։

Տիկին Արծրունին ողևորվելիս ասաց.

—Գրիգորը մի շապիկով, իսկ ես էլ մի յուբկայով ենք գնում, էլ ինչ ունենք, որ ինչ տանք<sup>8</sup>։

\* \* \*

Արծրունին վերադարձել էր, վերսկսել էր «Մշակը»։ Ամենքիս փափագն էր, որ Րաֆֆին էլ վերադառնար «Մշակին»։ Բայց Րաֆֆին ծանր ու հույճիսկ Արծրունու ինքնասիրությունը վիրավորող պայմաններ էր առաջարկում, որոնք, իհարկե, չընդունվեցին<sup>9</sup>։

Րաֆֆին ենթադրում էր, որ անցնելով «Արձագանքին», կբարձրացնի այդ թերթի տիրածը, և Աբգար Հովհաննիսյանն էլ իրեն առատ կվարձատրե։

Սակայն շուտով նա հիասթափվեց, նյութական ապահովություն չտվեց նրան «Արձագանքը»։

Ահա հենց այս միջոցներին էս հորից վերսկսեցի փորձել Րաֆֆին «Մշակի» գիրկը նետելու։ Պետք է սկսեր աշ-

խատակցությունը սուանց «Մշակի» խմբագրատունը մշտ-  
նելու:

\* \* \*

Մարտ ամիսն էր, 1888 թ.: Րաֆֆին Ալ. Մելիք-Ազար-  
յանի դահլիճում նստած է իբրև սգավոր: Ծերենցի աճյունը  
սիսի տանեկնք եկեղեցի: Վերցրինք դագաղը մեր ուսերի  
վրա և ողի ընկանք դեպի եկեղեցի<sup>10</sup>:

Մի քանի օր հետո Մուշտալիդի այգում Րաֆֆին հենց  
ինքը «Մշակում» իր աշխատակցելու խոսքը բաց արեց, և  
ես հրճվանոք մոտալուտ հաղթանակն էի տեսնում: Բայց  
երկինքը այլ կերպ էր տնօրինել: Ծերենցի մահվան քառա-  
սունքին ինքն էլ էր սլացել երկինք:

Գուցե, եթե ունենար նյութական միջոց և դիմեր արմա-  
տական բժշկության, նա դեռ երկար կսպրեր:

Իսկ եթե հայրենասեր վիպասանի բժշկության համար  
ծամանակին չգտնվեց անհրաժեշտ գումարը, գտնվեցին  
շատ ուրբիներ անընչացած դիակի վրա պսակներ դնելու և  
կոկորդիլոսի արցունքները հեռագիրներով հասցնելու:

Այժմ ամենքը հրապարակ եկան դիակին տեր լինելու:

Իսկ հարուստները մեկը մյուսից խլում էին Րաֆֆի  
մանկահաս երկու տղաներին որդեգրելը:

Հետևա՞հր...

Հետևանքը այն, ինչ միշտ: Եվ ոչ մեկը սրանցից տա-  
ղանդավոր վիպասանի այրուն և որդիներին չապահովեց  
գեթ այն աստիճան, որ Րաֆֆիի այրին կարող լիներ մի աղա-  
խին-խոհարարուհի ունենալ, իսկ զավակները անձնատուր  
լինեին իրենց ուսման, ապահով, որ քաղցից չեն մեռնի, եթե  
միաժամանակ իրենք կողմնակի վսատակ չունենան:

Եվ նրանք հեռացան, հեռու աշխարհ, օտար աշխարհ:  
Լոնդոնը ապաստարան եղավ նրանց<sup>11</sup>, որոնք իրենց չար-  
քաշ աշխատանքով, թեև պատիվ բերող, թեև աղքատ, ապ-  
րուստ ունեն այսօր:

## ԻՄ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Րաֆֆիի մահվան 25-ամյակի առիթով հիշողություն գրողներից և պատմողներից հետո<sup>1</sup> ես կամենում եմ մի քանի հիշողություններ պատմել նրա վերջին տարիներից:

Երեկոները հաճախ լինում էի Րաֆֆիի մոտ. միշտ նրան տեսել եմ գրքերով լի սեղանի առաջ նստած՝ պարապելիս, իրենից անբաժան ծխախոտով լի մի տուփ, մի շաքարաման՝ մեջը լցված շատ մանր կտրտած շաքարի կտորներով. թունդ թելով լի բաժակը լցնում էր մանր շաքարով և այնպես շատ քաղցր խմում էր մի քանի բաժակ և ծխում էր իր ձեռքով շինած շատ հաստ պապիրոս. կարծեմ, որ նա այնպես էր անում երևակայությունը հուզելու համար:

Մի օր հարցրի, թե ինչո՞ւ այսպես շատ մանր է կտրում շաքարը:

—Որպեսզի,— պատասխանեց,— բաժակում շուտով հալվի:

Իր երկու որդիների պատկերը<sup>2</sup> միշտ աչքի առաջ դրած ուներ. մի անգամ հարցրի.

—Պ. Րաֆֆի, երբ այսպես ջերմ սիրում եք ձեր զավակներից, ինչու ձեզ մոտ չեք ապրեցնում. չէ՞ որ, ինչ որ մեռակ ժամանակ կծախսեք, բոլորիդ բավական կլինի:

Պատասխանեց, որ շուտով մտադիր է տեղափոխել նրանց իր մոտ<sup>3</sup>. մեռակությունը իրեն էլ ձանձրացրել է:

Ջանազան խոսակցությունների ժամանակ մի քանի անգամ Հ. Տեր-Մարկոսյանի<sup>4</sup> մասին հայտնեց, թե սա իրեն բոլորովին մոռացել է և այլևս իր մոտ չի գալիս:

Մի օր պատմեց, թե հ. Ալիշանը գրել է իրեն<sup>5</sup>, թե աշխարհաբար լեզվով հայոց պատմություն գրելը Ռաֆֆիից է սպասում. բայց ինքը շատ է դժվարանում:

— Ծատ հաճախողների պատճառով,— ասում էր,— դժվար թե Թիֆլիսում կարողանամ գրել. մտադիր եմ երեք տարով առանձնանալ մի գյուղ և այնտեղ իրագործել այդ մտադրությունը:

Սակայն բախտը ուրիշ տեսակ էր կարգադրել. նա տեղափոխվեց այնտեղ, որտեղից չէր կարող այլևս վերադառնալ:

Ինչպես ասաց, նա իր ընտանիքը տեղափոխեց Թիֆլիս, բայց այնպես փակած էր պահում, որ կարծեմ մեզանից ոչ ոք չէ տեսել նրա կնոջը միշև նրա մահը, երբ հանկարծ կինը դուրս եկավ ու սզատ, համարձակ կարգադրություններ էր անում թաղման կարգադրիչ մասնախմբի հետ միասին, որի անդամները ընտրված էին հետևյալ անձինք. Հ. Առաքելյան, հանգուցյալ Գ. Միրզոյան, Ալ. Մելիք-Ազարյան, Խուրով և Կարապետ Արզումանյաններ և Ալ. Ստեփանյան:

Այնուհետև երկար ժամանակ, Գ. Միրզոյանի հետ միասին, զանազան խորհուրդներով օգնում էինք տիկնոջը, մինչև որ այլ մարդիկ սկսեցին խառնվել նրա գործերին, և մենք հեռացանք:

Ռաֆֆին իր աշխատություններից մի-մի օրինակ նվիրել էր ինձ իր ստորագրությամբ:

Ես այդ գրքերը և մի քանի նամակներ, որ իր գործի համար գրել էր ինձ, Գրիգոր Արծրունու նամակների հետ միասին կազմել և պահում եմ<sup>6</sup>:

## ՄԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՐԱՖՖԻԻ ՄԱՍԻՆ

Այժմ, երբ հայ հասարակության կողմից միակ և արժանավոր հարգանքը մեծ հեղինակին կլինի այն, որ նա կանգուն պահե յուր բացառիկ գավակի գաղափարները և հիշատակը ու արժարժե, ավանդե մատաղ սերունդին, ավելորդ չենք համարում մեր լսածներից մի քանի փաստ հաղորդել ձեր ընթերցողներին: Սորանից վեց տարի առաջ հանգուցյալից խնդրել էի նրա երկերի ո՞ր գրված լինելու մի ցուցակ, որ նա խոստացավ կատարել: Երկու տարի առաջ նա բերանացի պատմեց մի քանի տեղեկություններ և հաղորդեց, որ յուր կենսագրությունը արդեն գրել է մասամբ<sup>1</sup>: Խոսակցության մեջ ի միջի այլոց պատմեց հետևյալ տեղեկությունները, որ «Արձագանքի» վերջին համարում զետեղված են<sup>2</sup>, բայց փոքր-ինչ տարբեր կերպով:

Րաֆֆին Թիֆլիզի առաջին գիմնազիոնը մտել է այն ժամանակ, երբ նա «Ազնվականների դպրոց»<sup>3</sup> էր կոչվում, և դուրս է եկել հինգերորդ դասարանից: Հանգուցյալը պատմում էր, որ այդ ժամանակները նորա հետ ուսանում էր մի պարսիկ ազնվականի որդի, որի հետ կամեցնում էին և Րաֆֆին ուղարկել Պետերբուրգ՝ բարձրագույն ուսում ստանալու համար: Հայրը հանգուցյալի պարտավորված է եղել խանգարել որդու այս բախտավորությունը, ցանկանալով, որ որդին օգնե իրեն վաճառականական գործում: Մի առան-

ձին և խորհրդավոր եղանակով պատմում էր հարգելի բա-  
 նաստեղծը Հովհաննես Տեր-Հովսեփյանի ազդեցության մա-  
 սին<sup>4</sup>; որի տանը ապրել է գոնե մի ամսո Մանգլիսում, եթե  
 ուրիշ ժամանակ էլ ապրած չէ եղել: Այս ամսոը Րաֆֆիի  
 աշակերտ ժամանակն է եղել<sup>5</sup>: Հովհաննես Տեր-Հովսեփ-  
 յանը առանձին հոգատարությամբ և խնամքով հայթայթել է  
 Րաֆֆիի մտավոր զարգացման առաջին պաշարը և, որ շատ  
 նշանավոր է այն ժամանակի համար, այս, ըստ երևույթին,  
 ծառայող պաշտոնյան գլխավորապես հայերեն գրքեր է մա-  
 տակարարել յուր սիրելի Հակոբին: Մի օր, ամռանը<sup>6</sup>, պատ-  
 մում էր ոգևորությամբ Րաֆֆին, Տեր-Հովսեփյանը Մանգ-  
 լիսից գալիս է քաղաք և վերադառնալիս քերում է հետը  
 հայերեն գրքեր, ի միջի այլոց, «Վերք Հայաստանին» և  
 մտնելով Րաֆֆիի սենյակը, առում է. «Ա՛յ, կարդա այս գիր-  
 քը»,— և մի քանի օր շարունակ խոսում է պատանի Հակոբի  
 հետ «Հայրենասիրի ողբի» բովանդակության մասին: Չգի-  
 տեմ, ինչպես հաշտեցնել այս տեղեկությունները Րաֆֆիի  
 քերանից լսածի և 1857 թվին գիմնագիտնից դուրս գալու  
 հետ<sup>7</sup>, քանի որ «Վերք Հայաստանի» համար գրաքննիչի  
 թույլտվությունը ստացված է 1857 թվի օգոստոսի 16-ին և  
 տպագրված է 1858 թվին: Րաֆֆիի մոտիկ բարեկամները և,  
 անկասկած, հանգուցյալ Տեր-Հովսեփյանի ընտանիքը և եղ-  
 բայրները չեն զլանալ իրենց ունեցած տեղեկությունները և  
 հիշողությունները հաղորդել խմբագրությանդ, որով մեծ ծա-  
 ռայություն արած կլինեն հայ գրականության առաջին հե-  
 րոսի հիշատակը արժանի կերպով կենդանի պահելու գոր-  
 ծին:

## [ԱՆԱՆԻԱ ՍՈՒԼԹԱՆԾԱՀԻ ՊԱՏՄԱԾԸ]

...Բժիշկ Անանիա Սուլթանջանը<sup>1</sup>, որ առհասարակ շատ էր սիրում պատմել «անվերադարձ անցյալից» և հալոնի էր իբրև հազվագյուտ պատմող ու հիշողության տեր մարդ, պատմեց, թե ինչպես Րաֆֆին աշխատակից էր դարձել «Հյուսիսափայլին»:

Քառասունհինգ տարի առաջ եղած այս խոսակցությունը Րաֆֆու տարիքի մասին բերում են միայն այն նպատակով, որ ցույց տամ, թե արդեն այն ժամանակներում որոշ շրջաններում կասկածով էին վերաբերվում հայ պարբերական մամուլի մեջ տրված Րաֆֆու ծննդյան սխալ թվականին: Բացի այդ, ավելորդ չհամարեցի մեջ բերել և Րաֆֆիի հասակակից ու ժամանակակից «Հյուսիսափայլի» երկու աշխատակիցների կարծիքը:

Անցնենք, սակայն, բժ. Սուլթանջանի պատմածին:

\*\*\*

«Երբ «Հյուսիսափայլում» դուրս եկավ մեզ ամենքիս անձանոթ ստորագրությամբ Հակոբ Մելիք-Հակոբյանցի «Աղթամարա վանքը»<sup>2</sup>,— ասաց նա,— մենք հիացած էինք այդ ճանապարհորդական նկարագրությամբ և հարցնում էինք, թե ո՞վ է այդ հեղինակը: Այն ժամանակ Հովհաննես

Քաթանյանցը<sup>3</sup>, որ հիսնական թվականներին Ներսիսյան դպրոցի վերակացու էր եղած, «հառաջադիմական-լուսավորիչներից» էր և մեր բանակից, պարծենալով պատմեց, որ Մելիք-Հակոբյանցին ինքն է գտել դեռ 1858 թ. Թիֆլիսում: «Նա մի «անբեղ 19—20 տարեկան պատանի էր»<sup>4</sup>, պատմում է Քաթանյանցը, իմ աշակերտների ընկերն էր, համակրում էր մեր պաշարին խավարամիտ Ջալալյան եպիսկոպոսի դեմ<sup>5</sup>: Մի օր էլ նա եկավ ինձ մոտ, բազմաթիվ էջեր պարունակող ձեռագրերով ու խնդրեց, որ, եթե կարելի է, աջակցեմ, որ «Հյուսիսափայլում» գետեղեն<sup>6</sup>: Լսած էր իմ մոտերիմ հարաբերությունների մասին խմբագրության հետ: Ես այդպես էլ արի, թեև ձեռագիրը մեկ տարուց ավելի ինչ-ինչ պատճառներով մնաց, մասամբ իմ, մասամբ Նալբանդյանցի, մասամբ էլ Նազարյանցի մոտ: Հոդվածի լեզուն Նալբանդյանցը մասամբ ուղղել էր և ավելի մոտեցրել «Հյուսիսափայլի» լեզվին: Հոդվածը Աղթամարի վանքն էր նկարագրում»<sup>\*</sup>:

Բժ. Սուրբանշահի այս պատմությունը ամրացնում էր Ծափագիգի կարծիքը<sup>7</sup>, թե նրա ու Մելիք-Հակոբյանցի միջև տարիքների մեծ տարբերություն չկար: Իսկ ես այն եզրակացությունն եմ անում, որ եթե «Աղթամարի Վանքի» հեղինակը 1858 թ. «անբեղ 19—20 տարեկան պատանի էր», ինչպես ասել էր Քաթանյանցը, ուրեմն, Ռաֆֆին ծնված պիտի լիներ 1837—38 թվականներին<sup>8</sup>:

\* Հ. Քաթանյանցը նկարիչ էր և փորագրիչ, Մ. Նալբանդյանցի մոտերիմն էր: 1862 թ. Նալբանդյանցը գործակալ նշանակեց նրան իր հրատարակելիք «Հայաստանի Աշխարհագրական Քարտեզը» տարածելու համար: Ռ. Բ.

## ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Բաֆֆիի հիշատակին)

Ակսած 1858 թվից, տողերիս գրողը, տակավին չահել հասակում, բարեհիշատակ Ս. Նազարյանցի հրատարակած «Հյուսիսափայլ» ամսագրի բաժանորդն էր, վաթսունական թվականներում լույս տեսավ այդ ամսագրում Հակոբ Մելիք-Հակոբյանցի «Աղթամարա վանքը» վերնագրով մի վերին աստիճանի հետաքրքիր պատմվածքը<sup>1</sup>: Այդ ցկարագիրը իր անհուն գողտրիկ ոճով, իր կենդանի ասացվածքով, իր բանաստեղծական վսեմ ոգևորությամբ ինձ վրա այնպիսի խոր և հանելի տպավորություն ունեցավ, որ կարդալուց անմիջապես հետո շտապեցի այդ տպավորությունը ժամ առաջ հայտնել իմ մտերիմ ընկերներիցս մեկին, և երբ ես իջնում էի Կոնդ թաղամասի դարևանդից, և ինձ պատահում էին փողոցի անց ու դարձ անող քաղաքացիներ, ինքս իմ մեջ ասում էի, թե սրանք ի՞նչքան սուպերախո եմ, որ չեն կարդացել ո՛չ «Աղթամարա վանքը» և ո՛չ ևս «Ձայն տուր ով ծովակ<sup>2</sup>» բանաստեղծությունը, մանավանդ նրա դիմումները լուսնի հետ Աղթամարի ժայռի վրա տխուր տրտում նստած միջոցում...

Եվ այս օրվանից իմ մեջ առաջացավ մի ջերմ փափագ, մի բոցավառ տենչ... Ինքս ինձ ասում էի, թե յարաք կլինի մի օր, որ ես կարողանամ տեսնել Հակոբ Մելիք-Հակոբյանցին՝ և արժանի լինել նրա տեսույն՝ Աղթամարա վանքի նկարագիրը տվող այդ պատվական հեղինակին և ազնիվ հայրենասերին, որը այնքան սիրով և լրջությամբ վերաբերում է մեր ազգային ցավերին:

Եվ մինչ ես հնկնում էի այս բուռն տենչով, հենց այս միջոցներում, 1861 թվի աշնան սկզբին ինձ ասացին, թե Խրիմյան Հայրիկի՝ Վասպուրական արծվի ձագերից Գարեգին Սրվանձտյանը և Հաջի Միքայելը<sup>3</sup> այստեղ, Երևանում են գտնվում, որոնք Ղարաբաղից, Գանձակից և Տիֆլիսից մոտերս վերադարձել են և Հին Նախիջևանի Ջուֆայի վրայով Թալրիզ են գնալու և այնտեղից՝ Սալմաստով Վան:

Ես շտապեցի այդ պարոններից տեսնել և քանի որ (կանխորեն Խրիմյան Հայրիկի համաձայնությունը ստացել էի Վարագ գնալ աշակերտել և ուսմանս պակասը լրացնել) այդ մեր հայրենիքի ապագա լուսավորության ուսնվիրաներին գտա Բունիաթյանների<sup>4</sup> խղճուկ քարվանսարայում, էլ ամելի խղճուկ քնջերից միևնույն, ուստի ստաջին գործս եղավ սրանց անմիջապես հասնել այս երիցս եղկելի վիճակից, փոխադրել մեր տունը: Եվ այսպես՝ մի քանի օրից մենք ճանապարհ ընկանք Նախիջևան և այնտեղից՝ Ջուֆայի վրայով Թալրիզ, որ կարևոր եղած հանձնարարությունները կատարելուց և տեղվույս հայ վանականների հյուրասիրությունը ընդունելուց զկնի, քարավանի ուղեկցությամբ Ուրմիի աղի լճի ափերի մոտից անցնելով՝ Սալմաստ գնացինք:

Սալմաստում իջևանեցինք Հավթվան և կամ Քոհնաշհար կոչվող ավանում, որ մեզ հայտնեցին, թե այստեղ առևտրական տուն ունի Հակոբ Մելիք-Հակոբյանը<sup>5</sup>:

Այժմ երևակայեցեք իմ բերկրանքը, որ ես վերջ ի վերջո տեսնելու եմ վաղուց ցանկացածս անձին «Աղթամարի վանքի», «Ջայն տուր ով ծովակի» հոշակավոր հեղինակին: Եվ մենք մեր քայլերը ուղղեցինք դեպի այն կողմը, որ որ սու-

տըրական գործով զբաղվում էր Րաֆֆին. և իսկապես, նրա զբաղմունքը բավական տենդային էր. նա մեծ քանակությամբ կաշիի, բրդի և բամբակի առևտրական գործով էր զբաղված. ես ներկայացրի պարոն Սրվանձությանցին, որպես Վարազա վանքի, Խրիմյան Հայրիկի աշակերտի<sup>6</sup>, իսկ Սըրվանձությանցը ինձ ներկայացրեց, որպես Խաչատուր Աբովյանի աշակերտի<sup>7</sup>, և չնայելով, որ պարոն Հակոբ Մելիք-Հակոբյանցի զբաղմունքը, ինչպես վերը ակնարկեցի, բավական շատ էր, բայց և այնպես լսելով Խրիմյանի և Խաչատուր Աբովյանի անունները, նա ստիպված եղավ մեզ սիրալիք ընդունելություն ցույց տալ և խնդրեց, որ շնորհ բերենք իրեն մոտ Փայաջուկ գյուղը, ուր էր նրա հայրական տունը:

Բայց որովհետև Վանի տիրամոր ուխտավորների կարավանը պետք է հենց նույն այդ գիշերը մեկներ Սալմաստից և Բաշկալայի վրայով Վան պետք է գնային, այս հաջող դեպքը ձեռքից բաց չթողնելու համար ստիպված եղանք հրաժարվել Մելիք-Հակոբյանի հյուրընկալությունից, որ այնքան թախանձագին խնդրում էր ասպնջանակություն ցույց տալ մեզ իր հայրենի օջախում... իսկ մենք անկարող լինելով հետաձգել մեր երթը, վասնորո ջերմագին սեղմեցինք միմյանց ձեռքը և ափսոսանքով բաժանվեցինք նրանից և շտապեցինք Սալմաստի ուխտավորների քարավանին հասնել. և իսկապես, որքան նվիրական կլինեք մեզ համար, եթե հնարավորություն ունենայինք գոնե մի գիշեր Փայաջուկում մնալ և մի գիշեր մեր անմահ բանաստեղծ-վիպագիր Րաֆֆու հետ ժամանակ անցնել...

Այս անցքից անցել էր ուղիղ 16 տարի, երբ 1877 թվի օգոստոսի վերջերը կրկին բավտ ունեցա Հակոբ Մելիք-Հակոբյանին տեսնելու Ալեքսանդրովսկի աչքում<sup>8</sup>, և դուք չգիտեք, թե ի՞նչ բերկրանքով և սիրով մենք միմյանց գրկեցինք և ողջագորվեցինք: Մեր շրջապատի տեսնողները մնացել էին ապշած, որ այդ միշտ տխուր, միշտ մտածկոտ մարդը հանկարծ մինչև այդ աստիճան ոգևորություն և ուրախություն արտահայ-

տեց: Երկար շրջագալեցիւնք աչգում և միասին մտանք մի ռեստորան, այնտեղ թե՛ գարեջուր և թե՛ լիմոնադ խմեցինք. նա ցալ հաշտուեց, որ կրկին ստիպված է շուտ թողնել Տըփ-խիսը և գնալ գալաո<sup>9</sup> և հանդիմանություն կարդաց ինձ, ասելով. դուք, գավառի գործիչներդ, մայրաքաղաք եք շտապում, իսկ ես՝ ձանձրացած այստեղի կյանքից, գալաո եմ գնալու. տեսնենք, թե ով մեզնից իր գործը արդյունավոր կանի:

Եվ նա իսկապես հենց մյուս<sup>10</sup> օրը Տիփխիսը թողեց և Ագուլիս ուսուցչական պաշտոն ստանձնելով՝ այնտեղ գնաց. լավ չէս հիշում, թե նա որքան ժամանակ մնաց Վերին Ագուլիսում, որպէս տեսուչ<sup>11</sup> և ուսուցիչ, բայց ինձ թվում է, թե այդ զոկերի աշխարհում ևս նրան ըստ արժանւոյն չգնահատեցին, և նա հիասթափված զոկառանի ստոնասիրտ համայնքից, դարձաւ դատը սրտով կրկին Տիփիս. և եթե չէս վստայվում, կարծում եմ, թե այդ տեղից վերադառնալու ժամանակն էր, որ իր ազգական Սալմաստեցոնց Մկրտիչի հետ ինձ այցելության եկան, և երբ մեր տան առջևի պարտեզում թեյ էինք խմում, որ կային և մի քանի այլ երիտասարդ ընկերներ, ընդորս և Աշոտ Տեր Վարդանյանցը<sup>12</sup>: Այդ երիտասարդներից մինը ասաց՝ ես կուզեի հարուստ վաճառական լինել, որ աշխարհիս վրա եղած բոլոր վաճառաւան քաղաքները շրջեմ, ուզած ապրանքները գնեմ ճանապարհ դնեմ, որով թե աշխարհներ տեսած կլինեմ և թե դրամագլուխս ավելացրած: Մինը ասաց, թե ես կուզեի կալվածատեր լինել, իմ կալվածում հիանալի ծաղիկների և ծառերի մէջ իմ առանձին վիլլան ունենալ, ընտանեկան կյանքով, սիրուն զավակներով այդ դրախտանման վայրում ապրել, բաւականություն գտնել... Մի երրորդն ասաց՝ ես կուզեի, որ մի որևէ պետության հյուպատոսը լինել, և ինչ երկիր, որ ինձ ողարկեին, միշտ մեծ պատվով ընդունելություն կլիներ, սկսած թագավորի պալատից մինչև նախարարների ապարանքը՝ ամեն տեղ հարգանքով և ակնածությամբ ինձ ընդունեին և այլն, և այլն: Իսկ ես էլ իմ կողմից ավելացրի, թե ես ո՛չ վաճառական

կուգեմ լինել, ո՛չ կալվածատեր և ո՛չ ևս դեսպան և կամ հյուպատոս: Ինձ ցանկալի էր պարոն Հակոբ Մելիք-Հակոբյանի գրիչն ունենալ, նրա պես հիանալի պատմական սիրուն վեպերով<sup>13</sup> հարստացնել հայոց աղքատիկ գրականությունը և սրանցով դարուց ի դարս անմահ ապրել և ալն, և ալն:

Այս լսելով՝ Րաֆֆին իր թալ հոնքերի և թալ ընչացքի տակից մեղմ ժպտաց և ասաց. «Այդ բոլորը լավ երազներ են միայն թե կատարվեին»: Ահա այդ օրից էս ալևս նրան տեսնելու բախտ չունեցա, և ահա մի չարաբաստիկ օր լսեցի, թե՝ Րաֆֆին վախճանվել է Տփլիսում, մեծ շուքով և ժողովրդականությամբ, անկեղծ ցավակցությամբ տարել, Խոջավանքի գերեզմանատանը թաղել են, և ինձ՝ վշտահար բարեկամիս, ուրիշ բան չի մնում, բացի այն, որ երբ էս որդուս և թոռներիս տեսնելու համար Երևանից Թիֆլիս եմ գնում, իմ սրբազան պարտքս եմ համարում նրա գերեզմանին այցի գնալ և Րաֆֆու շիրիմը իմ թարմ արտասուքով ողողել...

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՐԱՖՖԻ

Иных уж нет, а те далече...

А. С. Пушкин.

Բաղական վաղուցվա բան է. ականա հիշում ես Պուշ-  
կինի վերև բերած մեղանխողիկ բացականչությունը\*:

Ես, նոր ավարտելով միջնակարգ դպրոցը, գալստա-  
կան Ծ<sup>1</sup>. քաղաքից շտապում էի Պետերբուրգ, որի ոչ միայն  
բարձրագույն ուսումնարանները, այլև «Հասարակաց գրա-  
դարանը» իր հարուստ գանձերով մագնիսի ուժով դեպի  
իրենց էին քաշում. ապագա մտավոր ուսանողական կյանքը  
այնքան հրապուրիչ, այնքան քաղցր էր թվում:

Պոստային կառքով Վլադիկավկազ գնալու համար  
Թիֆլիսում պետք էր մնալ մի երկու օր: Պատում էի Թիֆլի-  
սում, մտա կենտրոնական գրալանառանոցը՝ ձեռք բերելու  
«Armenische Bibliothek»-ի նոր ստացված հատորիկները<sup>2</sup>  
և հանկարծ, օ հրճվանք, վիտրինայում աչքիս ընկավ վա-  
ղուց սպասած «Վայժերի» 2-րդ հատորը: Ինձ սասցին, որ  
գիրքը հենց այժմ են ստացել<sup>3</sup>, և հեղինակը նոր է դուրս եկել  
խաճութից: Վճիռս թուլեական էր. օգուվել դեպքից և տես-  
նել իմ պաշտած գրողին: Բայց ի՞նչ ձևով: Մտածելով դրա

\* Նրանք կամ չկան, կամ հեռու են շատ, Ա. Ս. Պուշկին, «Եվ գեղի-  
օգեգին»:

մասին, ես քայլերս ուղղեցի Բարյատինական փողոցը, երբ Գոլովինսկու անկյունում պատահեցի մի բավական կարճահասակ մարդու. Բաֆֆին էր: Նմանողությունը այն պատկերի հետ, որ քիչ առաջ, հոբելյանի ստիթով հրատարակել էին Պետերբուրգի հայ և ռուս ուսանողները, շատ էր. ես ստանց տատանվելու, բայց շփոթված, փողոցում իսկ մոտեցա և ինչ-որ ողջույն ասացի՝ հագիվ լսելի ձայնով:

Բաֆֆին ասաց, որ երեկոն ազատ է և ինձ թեյի հրավիրեց: Մենք խոսելով ուղևորվեցինք դեպի հրա բնակարանը: Ծանապարհին, Երևանյան հրապարակում, հա մտավ մի տուն, խնդրելով մի րուպե սպասել. Թիֆլիս էր եկել իր մեկեմաս Մելիք-Հայկազյանը<sup>4</sup>, պետք էր տեսնվել հետը: Սուղլակով դեպի վեր շարունակեցինք մեր ճանապարհը, որ գտնվում էր վիպասանի բնակարանը,— Թիֆլիսը ես վատ եմ ճանաչում և սառն տեղը որոշակի չեմ ասի<sup>5</sup>,— երևի նույն բնակարանում և վախճանվեց Բաֆֆին:

Այդ ամառը Բաֆֆին մեռավ էր սպրում. մենք տեղավորվեցինք հրա առանձնասենյակում, և իսկույն սկսվեց այն անկյապ, բայց և հետաքրքրական խոսակցությունը, որ հաճախ տեղի է ունենում պոստալին կաշարանում երկու բարեկամների մեջ, մինչև ձիեր լծելը...

Սենյակը լուրջ գրադված մարդու սենյակի տպավորություն էր անում. գրքեր պարզ կազմերով, մեծ սեղանը ծանրաբեռնված էր գրքերով, բրոշյուրներով, լրագիրներով, տպագրական ներկի թարմ հոտ ունեցող թերթեր, երևի սրբագրության թերթեր,— գրքերի պահարան, էտաժերկա, պատից կախած էին մի քանի պատկերներ. հիշում եմ՝ Բաֆֆին և Վասպուրականի մշակների ալլաբանական գեղեցիկ ուղերձը 25-ամյակի ստիթով:

Ես աշխատում էի, որքան կարելի է, լիացնել իմ երիտասարդական հետաքրքրությունը և հարցեր էր, որ առաջարկում էի վիպասանին:

Բաֆֆին ասաց, որ տիրապետում է պարսիկ և ռուս լեզուներին, իսկ ֆրանսերենը գիտե այնքան, որ կարող է

գրքեր կարդալ. մեր խոսակցությունը երբեմն անցնում էր ուսերեցեցի, որին թեև վարժ էր, բայց հայկական որոշ շեշտը պարզ լսելի էր:

Խոսելով իմ հայրենի Խամսայի մեղիքությունների մասին, Րաֆֆին հայտնեց, որ մտադիր է թողնել Թիֆլիսը և Վիեննա անցնելով, զբաղվել վերջին դարերի հայոց պատմության ուսումնասիրությամբ. «Բացի Խամսայի մեղիքություններից, մենք մինչև վերջերս ունեցել ենք շատ անկախ իշխանություններ, և «Խամսայի մեղիքությունները» մի փորձ էր մի կողմից այդ ապացուցանելու համար»:

«Խամսայի մեղիքությունները», «Դավիթ-Բեկը» և առավել «Սամվելը» Րաֆֆիի մեջ վերջերս ավելի զարգացրել էին սեր դեպի հայ պատմությունը, անցյալը. հայտնի է, որ նույնիսկ նրա ոճը մասամբ կերպարանափոխվել էր «Սամվելի» մեջ, որ շատ հասկանալի է: Նա ինձ ցույց տվեց մի մեծ էտաժերկա՝ լիքը գրքերով, որ նա ուսումնասիրել է վերջը գրելիս: Խոսակցությունից երևում էր, որ նա իր վիպասանական գործունեությունը վերջացրած էր համարում, նորից վերադառնալ կենցաղական վեպին ցանկություն չուներ: «Կան Աղայան, Պոռչյան, երիտասարդ Ծիրվանզադե, Լեո, պետք էր զոր տալ պատմության ուսումնասիրության, որ մեր ուսանալերիս մոտ գրեթե թողնված մի ճյուղ է»:

Խոսք եղավ և Գրիգոր Արծրունու հետ պառակտման խնդրին: Րաֆֆին տաք կերպով սկսեց պաշտպանել իրեն և ընկերներին: Նա լավ գգում էր, որ հայ երիտասարդությունը կարգին ստեղծ է դեպի իրեն այդ դեպքից հետո: Երիտասարդությունը, մոռանալով անգամ իր թշնամական հարաբերությունը դեպի «Մեղուն», ալնտել էլ բողոքել էր Րաֆֆիի դեմ (Հ. Առաքելյանի հոդվածը)<sup>6</sup>. Րաֆֆի-Արծրունու այս պառակտումը այն ժամանակ երիտասարդության համար մի հրատապ խնդիր էր, ինչպես ասացի, և իմ ծանոթ, «Մշակի» վաղամեծ աշխատակից Լևոն Աթաբեկյանը մի նամակով խնդրել էր Արծրունուց հայտնել բուն պատճառները: Արծրունին պատասխանել էր, որ միայն երկուսի մահից հետո

կհրատարակվեն խնդիրը պարզող դոկումենտները<sup>7</sup>:

Պահվա՞ծ են այդ թղթերը:

Մենք մինչև այժմ որոշակի չենք իմանում՝ երբ է ծնվել Րաֆֆին. ի՞նչ զարմանք, որ Խորենացուն V դարուց փոխադրում ենք VIII կամ, գուցե, IX դարը: Իմ հարցիս նա պատասխանեց (1887), թե 42 տարեկան է. գուցե այս տարին (42) այժմ ես սխալվում եմ. այն ժամանակ լավ հիշում էի Աղթամարի նկարագրությունը «Հյուսիսափայլում», և այդպիսով դուրս եկավ, որ եթե ընդունեի Րաֆֆիի տարիքը նրա սասածի համաձայն, նա «Զայն տուր ով ծովակը» գրել է 15 տարեկան հասակում<sup>8</sup>: Ես այդ հարցը նրան առաջարկեցի, բայց դրական պատասխան չստանալով, բավականացա նրա հաղորդածով: Երբ վախճանվեց վիպասանը, չգիտեմ որ աղբյուրից, «Մշակը» գրել էր, որ նա 47 տարեկան էր<sup>9</sup>. երևի գրողը հիմնվել էր Արծրունու հիշողությունների վրա, թե «Մշակի» հրատարակման սկզբին Մելիք-Հակոբյանը 32 տարեկան երիտասարդի էր նմանում (տե՛ս Արծրունու հիշողությունները Րաֆֆիի մասին «Մշակում») <sup>10</sup>: Այդ տարեթիվը ինձ ևս մոտ է թվում իրականության: «Աղթամարի վանքի» հեղինակի դատողությունները վերագրել մի 15 տարեկան պատանու դժվար է, այն էլ մի պատանու, որ մեր այն ժամանակվա կյանքից կամ գրականությունից դուրս հագիվ թե զարգացման ուրիշ աղբյուրներ ուներ:

Ծառան մտավ սենյակ և հայտնեց, որ թեյը պատրաստ է: Մենք անցանք պատշգամբը, որ խիտ ու խիտ դրված էին բույսեր, ծաղիկներ, երևում էր, որ խնամող, սիրող մի ձեռք հսկում է նրանց: Րաֆֆին ասաց, որ սիրում է բուսականությունը և ինքն է անձամբ խնամում: Պատշգամբից բացվում էր գեղեցիկ տեսարան դեպի Թիֆլիսի սարերը: «Թեև իմ միջոցները չեն ներում վարձել այս տեսակ բնակարան, բայց վարելով ստանձնացած կյանք, սա է իմ բոլոր զվարճությունս», — ասաց Րաֆֆին:

Չեմ հիշում, ինչ լեզվով էր խոսում ծառան, հայերեն չէր միայն: Րաֆֆին հայտնեց, որ նա մի որբ մանուկ էր՝

կարծեմ վրացի, մեծացրել է ինքը, այժմ իր հաշվով սովորում է ինչ-որ արհեստագիտական դպրոցում և ամառը եկել է ծառայելու իրեն:

Հարավային երեկոն իր սև թևերը շոտափույթ տարածում էր շրջակայքում, աղոտ նրագը սփռում՝ կավաարդիչ սովերներ. ես լի ուշադրությամբ լսում էի վիպասանի զրույցին: «Իմ ուժս նրանումն է, որ մեր մյուս գրողներից առավել հասկացա ժամանակի պահանջը, — ասում էր նա: — Այս միջոցին անցերելի էր հեքիաթներով կամ զուտ գեղարվեստական գրվածքներով պարսպել: Կգա դրա ժամանակը, գուցե և շուտով: Ուրիշ նյութ պիտի տալ մեր նոր սթափվող հասարակությանը. թող ամենքը ցնցվեն «Խենթի» երազներով»:

Խոսելով գրելու մեթոդի մասին, ես հետաքրքրվեցի իմանալ՝ եղե՞լ է արդյոք վիպասանը Ռուսաստանում և այն տեղերում, որ հաճախակի անց է կացնում իր վեպերի գործողությունը («Ոսկի արքայաղում»՝ Մոսկվա, «Խաչագողի հիշատակարանում»՝ Սև ծովի ափերը, Սիբիր, «Ղարիբ մշեցու» մեջ՝ Պոլիս և այլն): Ստացա բացասական պատասխան: «Մի՞թե Մոսկվայի բորսան պիտի այցելել մեր վաճառականների խոսակցությունը ուսումնասիրելու կամ ուսանողների բնակարանները տեսնել, նրանց նիստուկացը նկարագրելու համար. նույն մարդկանց ամեն օր հանդիպում եմ Թամանշևի քարվանդարայում կամ խմբագրության մեջ, կամ մասնավոր շրջաններում. մի՞թե մի բան կփոխվի, եթե նրանց տեղափոխես Մոսկվա կամ մի ուրիշ տեղ»: Դույն մեթոդով ղեկավարվել է վիպասանը և «Սամվել» վեպում հին կյանքը վերատեղծելու գործում:

Սրամիտ համեմատություն է, բայց չի կարելի ասել, որ այստեղ ձեր ականջին չի հնչում ումանտիզմի ուղղությունը, որին Րաֆֆին մեծ չափով ենթարկված էր. ռեալիստ վիպագրողը չի նկարագրի չուսումնասիրած բնությունը, երկիրը...

Երևում էր, որ հեղինակին մեծ բավականություն էր տալիս իր երկերի օտար լեզվով թարգմանելը. հիշեց, որ Ասեթի-

կայի հայերը ուղարկել են մի քանի անգլերեն թարգմանություններ<sup>11</sup>, և իր բարեկամ պրոֆեսոր Անդրեաս Արծրունին ձեռնարկել է «Հարեմի» թարգմանությունը<sup>12</sup>:

Ոչ գայրացած, այլ բավական հումորով պատմեց իր հակառակորդների արարքները, որոնցից մեկը լավ հիշում էմ: Ոմն Սեյադ Ամիրյանց<sup>13</sup> (կարծեմ) քանի ժամանակ առաջ ասիական գովասանքով լի մի նամակով դիմել էր Րաֆֆին թույլատվություն խնդրելով, չեմ հիշում այժմ ո՞ր վեպը առանձին հրատարակելու համար. հրատարակչի առաջարկած պաշմանները հեղինակին ձեռնառու չեն թվել, և նա մերժել է. և օ գարմանք, մի քանի ժամանակից հետո նույն պարոնը հրատարակում է Հայկունու իբր թե Րաֆֆուն ոչընչացնող կրիտիկան. պարոնը երևի տոչորվել էր «Մեկենաս» անուն ստանալու տենչով. Րաֆֆին չիմի, թող Հայկունին լիմի. գիրքը համեմայն դեպս կունենա և ունեցալ հիրավի Succès de Scandal\* և տարածեց մեկենասի մեզ այդ անհայտ անունը:

Աննկատելի մոտեցավ կես գիշերը, պետք է հանգիստ տալ տանտիրոջը: Մենք բաժանվեցինք, այլևս չհանդիպելու համար: Մյուս տարի գարնանը Գաբրիել Միրզյանից Պետերբուրգի ուսանողությունը հեռագիր ստացավ, թե «умер Раффи» մենք հասկացանք, որ մեռնողը մեր պաշտած Րաֆֆին էր...

\* (Ֆր.) խախտման հաջողություն:

## ԱՌԱՋԻՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՍ ՐԱՖՖԻԻ ՀԵՏ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՏԵՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՍ

Վաթսունական թվականների վերջերին, երբ ես ծառայում էի հայտնի Ալադարյանների գրավաճառանոցում, որ գտնվում էր Թիֆլիսի Երևանյան հրապարակի վրա, հաճախ անցնում էի կամ մտնում այդ իսկ հրապարակում գտնված դերձակ Գրիգոր Նասիբյանի հանդերձեղենի վաճառատունը, որի մուտքի աջ կողմում դրված գրասեղանի ստաջնատած էր լինում կարճ մորուքով, ավելի կարմրած ու ցավոտ աչքերով, կապույտ ակնոցով, մեխակի գույնի ժակետ հագած, ցածր հասակով մի երիտասարդ, որը համարյա գլուխը միշտ քարշ գցած՝ զբաղված էր լինում հաշիվներ անելով, լրագիր կարդալով կամ իր ստաջ դրած մեկ քառորդ թերթաչափ կազմած տետրակում գրելով:

Պատանեկությանն ժամանակներից ավելի հետաքրքրասեր լինելով, քան այժմս, շատ էի հետաքրքրվում իմանալ, թե ո՞վ է այդ անձնավորությունը, քայք չէի կարողանում իմանալ: Սակայն մեկ օր փոռ մանրացնելու համար զրախանութից վազելով մտա հիշյալ Նասիբյանների խանութը, և երբ մանրութք ձեռքիս համբելով դուրս էի գալիս խանութից, լրագիր կարդացող այդ անձը հարցրեց.

—Միքայել Նալբանդյանի «Մովսես Խորենացին»<sup>1</sup> ստացվե՞ց:

—Այո՛,— ասեցի:

—Ահա փողը ստացիր և մեկ օրինակ բեր:

—Կբերեմ, հետո կվճարեք փողը:

Երբ խանութից դուրս եկա, այդտեղ ծառայող իմ ընկեր-  
Զումշուդը դուրս գալով ինձ կանչեց և հարցրեց.

—Մեր հաշվապահը ինչ էր խոսում հետո:

—Ոչինչ, գիրք էր կամեցում, հիմա պետք է բերեմ:

—Թե՞ ուրիշ տեղեկություններ էր հարցնում,— ասաց:

—Ո՛չ, բայց այդ մարդը ո՞վ է Զումշուդ,— հարցրի այս  
անգամ ես իմ խոսակցին

—Պարսկաստանցի է:

—Որտեղի՞ց է սովորել, որ այդքան կարդում է:

—Առաջ դա Կարապետ Բելախյանի<sup>2</sup> պաշտոնումն էր.  
սովորում, հետո մտավ գիմնազիա, բայց շուտ թողեց, դուրս  
եկավ,— պատասխանեց Զումշուդը:

—Ազգանունն ի՞նչ է,— հարցրի ես:

—Մելիք-Հակոբյան Հակոբ:

Դրանից հետո նոր լույս տեսած գրքեր՝ մասին ինձ  
հաճախ հարցնում էր: Մի ուրիշ անգամ ևս հարցրեց, թե  
Տոլստոյի «Война и мир»-ը ստացել եք, թե ոչ:

—Ծուռով կատանա՞մք,— ասացի:

Եվ երբ ստացվեց գրախանութում, անմիջապես վազեցի  
իրեն տեղեկացնելու:

—Ինքս կմոռնեմ, կվերցնեմ,— ասաց:

Այդ օրվանից միշտ հանդիպելիս այդ պարոնին գլխարկս  
վերցնում էի և բարևում: Սակայն մի քանի ամսից հետո վա-  
ճառատանը այլևս չէր երևում այդ պարոնը: Ալադաթյաննե-  
րի մոտ եղած ժամանակս ամբողջ գրադարանում ես այլևս  
գիրք չէի թողել առանց կարդալու, և թեև Նազարյանի Մոսկ-  
վայում հրատարակվող «Հյուսիսստիպլը» քանիցս կարդա-  
ցել էի, ինչպես նրա մեջ տպված «Ձայն տուր, ով ծովակ»  
ոտանավորը<sup>3</sup>, Հ. Մելիք-Հակոբյան ստորագրությամբ, ա-

կայն ինչ կմտածեի, թե հենց այդ հասարակ գործակատարը կլինի այդ բանաստեղծության հեղինակը:

Այդ ժամանակից անցել էր ավելի քան երեք տարի. «Մշակի» հրատարակության սուաջին տարվա սկզբներին էր: Այդ ժամանակ թողել էի ես գրախանութը և մտել «Մշակի» խմբագրություն ծառայության՝ լրագրի տնտեսական մասը կառավարելու:

Մի ուրբաթ օր, երբ խմբագրի ննջարանին կից սենյակում պոստին հանձնելու լրագրի համարների հասցեներն էի գրում, և Գ. Արծրունին օգնում էր ինձ արտասահմանյան հասցեները գրելում, խմբագրության զանգը քաշեցին. վեր կացա և սենյակի դռնից դուրս նայեցի. ելրուպական հագուստով մի մարդ էր, որին, ինձ թվում է, թե տեսած պետք է լինեի, միայն չկարողացա հիշել, թե որտեղ:

—Պ. խմբագիրը տա՞նն է,— հարցրեց:

—Սպասեցեք,— ասեցի և Արծրունուն հայտնեցի նրա մասին, երբ գնում էի մյուս կողմի ընդունարանի դուռը բանալ...

—Ես կերթամ կբանամ, դու շտապիր վերջացնել հասցեները, ասաց Արծրունին և գնաց ընդունեց և խոսակցելով մտան խմբագրատան դահլիճը:

Մի քառորդ ժամից, երբ այդ պարունը դուրս եկավ և սանդուղքներից ցած էր իջնում, դռան բացվածքից նայեցի և նանաչեցի, որ Հակոբն է:

Նրա գնալուց հետո Արծրունին ձեռքին բռնած մի սովարակազմ տետրակ կարդալով ներս մտավ ու գցելով այդ տետրակը մեր սեղանի վրա, նստեց հասցեների գրելը շարունակելու՝ ասելով.

—Այս գրվածքի մեջ Պարսկաստանի մասին բավական հետաքրքրական տեղեկություններ կան. այս նամակները արտաքին տեսության բաժնում կգետեղենք:

Ձեռագրի վերնագիրն էր «Պարսկաստանի նամակներ»\*:

—Պ. Գրիգոր, այդ մարդը նոր շորեր է հագել, բաժականի՞ն փոխվել է, ես չճանաչեցի երբ զանգը բաշեց. դա այստեղ Երևանյան հրապարակի վրա գտնվող Նասիբյանների վաճառատանը գործակատար, թե հաշվապահ էր,—ասացի:

—Ի՞նչ ես գլխից դուրս տալի,— ինձ խեթ նայելով ասաց Արծրունին: —Անցյալ գիշեր մի հրավերքում ինձ ծանոթացրին<sup>4</sup>, դա խոստացավ այդ գրությունը բերել: Դա հայտնի Հակոբ Մելիք-Հակոբյանն է, որը «Հյուսիսատիպչում» ես բանաստեղծություններ<sup>5</sup> ունի տպված:

Գ. Արծրունու բնավորությունն իմանալով, որպեսզի չզայրանա, ես չպնդեցի ասածս, սակայն դրանից հետո, երբ հաճախ սկսեցինք պատահիլ խմբագրատանը, մեկ օր Գ. Արծրունուն խնդրեցի, որ երբ Րաֆֆին գա, մեր մեջ եղած այդ թյուրիմացությունը ստուգի, Գրիգորը հարցրեց:

—Ծիշտ է,— ասաց Րաֆֆին,— ես ժամանակաւոր մտել էի նրանց վաճառատունը:

Այնուհետև ոչ միայն «Մշակի» խմբագրատանն էինք պատահում Րաֆֆիի հետ, այլ 80-ական թվականներին, երբ Միքայելյան կամորջի վրա «Նոր գրախանութ» («Новая книжная торговля») ֆիրմայով սեփական գրախանութ էի բացել, համարյա ամեն օր, ճիշտ ժամը 2—3 մտնում էր, նրություններ հարցնում, օրվա հարցերից խոսում և մի քանի ծխախոտ ծխելուց և զանազան հանձնարարություններ տալուց հետո՝ դեպի Կուկիա իր զբոսանքը շարունակում:

Հանգուցյալի հանձնարարությունները, որը մեծ մասամբ վերաբերում էր իր գրքերի, իր հեղինակությունների գրավաճառներին հանձնելու խնդրին, ես առանձին սիրով ու եռանդով էի կատարում, իսկ ինքն ես, ինչպես երևում էր, անբավական էր գրավաճառներից, այդ պատճառով աշխատում էր, որ գրա-

\* Մի քանի շաբաթից այդ հոդվածը<sup>6</sup> սկսվեց «Մշակում» մաս-մաս տպվել Րաֆֆի ստորագրությամբ, և այդ օրվանից «Րաֆֆի» պսղոնիմը ստացավ իր հռչակը:

խանութս ավելի առաջ գնա, որի համար իր հեղինակությունները կոմիսիայով վաճառելու համար ուրիշներից ոչ միայն ավելի տոկոսով էր տալիս, այլև ամեն տեսակ բարի խորհուրդ և աջակցություն չէր խնայում ինձ անել:

Ամենատխտի տրամադրված ես նրան տեսա մի օր, երբ գնացի իր մոտից վերցնելու մեր պապեմական տան կես պողաչափ ծանրություն ունեցող մագաղաթյա «Վարք սրբբոց» ձեռագիր գիրքը, որի միջի հիշատակարանը տեսնելու համար՝ ինձանից խնդրել էր մի քանի օրով, սակայն 6 ամսից էլ ավելի անցավ, և մինչև որ ինքը չսպասվիրեց, չնշանակեց օրը, ես չգնացի վերցնելու:

Այդ ժամանակ հանգուցյալը բնակվում էր Թիֆլիսի Սոլովակ թաղամասում, և Դավթի լեռան հարավային լանջամասից ցած գտնված նախկին կաթոլիկաց հանգստարանի կից փողոցներից մեկում շինված մի տան, եթե չեմ սխալվում՝ երրորդ ամենաբարձր հարկում:

Երբ բարձրացա պատշգամբ, առաջս մի հիանալի տեսարան բացվեց. դիմացս դեպի հարավ արձանացան Կոջորի խճուղու ու բուսաբանական այգու կեռ ու մեռ զիգագներով ճանապարհները, իսկ դեպի արևելք՝ Թիֆլիս քաղաքի հին մասը՝ Նարիդալա բերդի պատերով, Հավլաբար և Նալթոյուղ քաղաքամասերը՝ շարունակվող հարյուրավոր մղոն տարածվող հորիզոնով:

— Մակար, եկա՞ր, — ձայն տվեց հանգուցյալը:

— Այո, բայց ինչ հիանալի տեղ եք բնակվում, — ասացի:

— Հա, լավ տեղ է, բայց բարձրանալ ես դժվարանում եմ. եթե լավ բնակարան գտնեմ, կտեղափոխվեմ: Դու էլ աշխատիր գտնել ինձ համար մի բնակարան. ամեն տեղ ման ես գալիս:

— Ա՛յս քաղաքամասում, թե ուրիշ կողմը:

— Ես կարծում եմ, շուկային ավելի մոտ որ լինի, ավելի լավ կլինի, որովհետև այստեղի խանութներում ամեն բան չի գտնվում: Բայց այստեղ օրը ավելի մաքուր կլինի և թե քաղաքի աղմուկներից ազատ, — ասացի:

—Առանց այն էլ ես գիշերվա ժամը 12-ից վաղ չեմ նրստում աշխատելու, գրելու, այդ ժամանակ ավելի խաղաղ լինելով՝ ինձ այլևս ոչ ոք չի խանգարում:

—Պ. Հակոբ, ի՞նչ է պատահել, վերջերքս այլևս մեզ մոտ չեք անցնում, տղերքը հարցնում եմ,— ասացի:

—Պետք է ասած ճիշտը, մի փոքր տկար եմ և շատ էլ զբաղված եմ. նոր բաներ եմ գրում:

Ապա հանգուցյալը ներս հրավիրեց ինձ իր գրասենյակը, սկսեց ծխախոտ պատրաստել և տեսնելով, որ ես կանգնած եմ, սուսջարկեց նստել:

—Նստիր, մի բաժակ թեյ կխմես, հետո կերթաս:

—Ծնորհակալություն,— ասացի,— գործ ունեմ:

Հանձնելով ինձ «Վարք սրբոց» գիրքը մայրաքաղաքի հին լրագրի մի թերթի հետ՝ փաթաթելու համար, ասաց.

—Մագաղաթի վրայից հիշատակարանը շատ է մաշվել. լավ չէ կարդացվում, և երևում է, որ այս գրքի միջից շատ թերթեր կտրված, կորած են: Ծնորհակալություն, երկար սպանեցի:

—Ոչինչ,— ասացի,— եթե կամենում եք, թող էլի մնա: Յոնեսություն:

Ես դուրս եկա:

Վերջին անգամ, մահվանից երեք թե չորս շաբաթ առաջ, մտավ գրախանութս և ասաց.

—Գալառական քաղաքներում ինչ գրավաճառների հասցեներ գիտես, գրիր և տուր ինձ:

Իսկույն նեթ մի ցուցակ պատրաստած տվի իրեն և երբ հարցրի.


—Էլ ի՞նչ կհրամայեք:

—Եթե մի հմուտ կազմարար էլ գիտես, ողարկիր մոտս, շատ գրքեր ունեմ կազմել տալու:

—Ծատ բարի, կողարկեմ և կպատվիրեմ, որ թանկ չվերցնի և այն գնով կազմի, ինչպես մեզ համար է կազմում:



Փիկար Վահագյան  
(1842—1916)



Հովհանն Զախարյան  
(1851—1920)



Հովհանն Զախարյան  
(1855—1913)

—Էդ հո ալելի լալ, միայն պատվիրիր նրան, որ երբ գալու լինի, ժամը 12-ից ուշ չգա, հետո ինձ տանը չի գտնի: Յտեություն:

Երբ արդեն դուրս էր ելնում, կրկին ետ դարձավ և ասաց.

—Մակար, տե՛ս, չմոռանաս, կապասեմ. ուղարկիր անպատճառ:

Այս վերջին նախադասությունը ականջիս հասած նրա վերջին արտասանած խոսքերն էին, և այդ օրը նրա գրախանոյթ հաճախելու վերջին անգամն ու օրն էր:

Այդ օրվանից ես ո՛չ նրա ձայնը լսեցի, և ո՛չ էլ նրան տեսա կենդանի:

## ԱՆՑՅԱԼԻՑ ՄԻ ՀԻՇԱՏԱԿ

1886 թվի գարնանը Թիֆլիսի մշուշապատ երկինքը բացել էր յուր պայծառ դեմքը: Յուր դյուրական քաղցր ժպիտով կարծես կյանք էր ներշնչում ձմեռվա ցրտաշունչ, տաղտկալի եղանակից դժգոհ բազմությանը: Երկսեռ բազմությունը, ամեն հասակի ու դասակարգի, ձմռան կապանքներից ազատված, շտապում էր լցնել զբոսավայր ծառաստանը ծաղկազարդ գարունը ողջունելու և լիաթոք շնչելու այն թարմ ու կենսատու օդը, որից զրկված էին մի քանի ամիս:

Ո՞ւմ ձանձրալի չէ ձմեռը յուր մերկ, միանման, սպիտակ պատանքով, յուր ցուրտ ու բուքով, երբ աշխարհն կորցնում է յուր կենդանությունը և ամբողջ հրապույրը... Եվ սրա հակառակ՝ ո՞ւմ սիրելի չէ գարունը յուր ծաղկափթիթ զարդարանքներով, յուր անուշ ու կենսաբեր օդով, երբ աշխարհը հարուստ նորահարսի պես, գոհության ժպիտը շրթունքին, ամբողջ մարդկային ազգը սեղմած յուր գրկում օրորում է զայն՝ գոյության հուսո քաղցրիկ երազներով, երջանկության վայելքի քաղցր արբեցողությամբ:

Եվ սրա, որպես ապացույց, քաղաքային զբոսավայր ծառաստանը յուր ընդարձակ ծառուղիներով լիքն էր զբոսասեր բազմությամբ:

Եւ նույնպէս ենթակա նույն հոսանքին, գտնվում էի ծառատանի մեջ. չունենալով խոսակից ընկեր, միայնակ անցողարձ էի անում: Բայց ուղեղս մեռակ չէր, նա ուներ յոր զբաղումը, նա թափառում էր բազմության շուրջը և յորաքանչյոր դասակարգը աչքիս պատկերացնում էր յոր պարտականություններով, յոր հատկություններով ու զգացումներով:

Տեսնում եմ ժամանակակից երիտասարդությունը, նրա հոռի կենցաղավարությունը, նրա անխորհուրդ ժամավաճառությունը, նրա ներքին և արտաքին հատկությունները, վերջապէս՝ յոր սկզբունքները, որով ստացնորդվում է նա, կրելով յոր վրա մի ամբողջ ազգի ապագան, մի ամբողջ ժողովրդի բարոյական ու քաղաքացիական բարձր կոչումն:

Տեսնում եմ հալ կիւնը, մարդկության քաղաքակրթությունը յոր շուրջը դարձնող հզոր տարրը, որպէս կոչեց գիտական աշխարհը: Նա է մատուղ սերնդի բարոյական սկըզբանաց հիմնադիրը, նա է, որ ընտանիքի բախտը կրում է յոր ձեռքում բռնած նորա դէկը, դարձնում է աջ ու ձախ, ըստ յոր տաղանդի ու փորձառության, որպէս մի նավավար օվկիանոսի հզոր ալիքների մեջ: Ինչո՞ւլ տարբեր է կյանքը օվկիանոսից: Կյանքն ունի յոր մշտատև և ավելի հզոր ալեկոծությունները, որոնց մեջ լողում և որոնց դեմ անընդհատ մնաքառում է ամբողջ մարդկությունը, և որքան պետք է ճանաչե կիւնը յոր պաշտոնի սրբությունը և դժվարությունը միանգամայն, որքան զգույշ լինելու է նա չխորտակելու յոր ընտանիքը կյանքի ալիքների մեջ...

Տեսնում եմ օրիորդներ, ապագա մայրեր, բայց «ապագա մայր» բառի գեթ նշույլ չէ երևում անոնց մեջ: Եթէ մի վայրկյան դադարեին շարժիլ, ճոխ պահունակապատանքի կամ զարդասեր նկարիչի մի շքեղ պատկեր կարելի է համարել զանոնք: Մոդան Նոյան ջրհեղեղից ավելի գորեղ կերպով ողողել է մեր ընտանեկան բոլոր ծալքերը և նրա հոսանքի առաջ քշվում են մեր օրիորդները դեպի կորուստ:

Տեսնում եմ և մատաղ սերունդը, զվարթ, անհոգ, թըռչկոտող ու վազվզող, որ պետք է շարունակե պահպանել գոյությունն այն ազգի, զոր իրավամբ ջրհեղեղյան ազգ կարելի է համարիլ:

Եթե մի րոպե մտածելու լինենք, թե այդ մատաղ դասակարգը մի քանի տարի հետո պետք է կազմի ժողովրդի ամենեն գործունյա ու հզոր տարրը, ստանձնելով ընկերական, հասարակային և ընդհանրապես մարդկային ազգի միտքը հուզող մեծ դերը, որի համար կոչված է նա, եթե համոզվինք նույնպես թե սույն սերնդի դաստիարակությունեն կախում ունի այս կամ այն ազգի, ժողովրդի, ցեղի ապագան, բարոյական, մտավոր, տնտեսական և, որ ավելին է, քաղաքացիական իրավանց ու տեսությանց հեղաշրջումն դեպի լավը կամ դեպի վատը, ուրեմն պարզ է, որ այս հարցը ամենեն հետաքրքիրն է, որով զբաղելու է ամեն ճշմարիտ մարդասեր անձն: Մարդկության հասակների մեջ մտքեր զբաղեցնող միակ խրթին տարրն է մանուկ դասակարգը: Այսօր տեսնում ենք, նրանք անհոգ միամիտ վազվզում են, խաղում են, խաղում են քար ու փայտի հետ, ընկնում ու կանգնում են, արտասվում ու ժպտում են... Բայց մի քանի տասնյակ տարի հետո նոքա դառնում են մի-մի հսկաներ, նոքա են գեղարվեստն ու արվեստը ծաղկեցնողը, զրականական աշխարհը հուզողը, կյանքի անիվը իրենց ուզածի պես դարձնողը. վերջապես անոնցմե առաջ կուգան աշխարհիս ամենամեծ մարդիկ թե աշխարհ շինելու և թե քանդելու գործի մեջ: Եվ սա իրավամբ ամենեն խրթին հանելուկն է, որի վրա պետք է նայիլ մեծ երկյուղածությամբ:

Այս և սորա մասն շատ հարցեր կզբաղեցնեն զիս. մի շեշտակ իմաստասեր էի դարձել: Կանցնեի զքոսավաչրի ծառուղիներեն. երբեմն կընդհարվեի քնքուշ սեռի բազմության՝ առանց կարենալ պահպանելու քաղաքավարության կարգը:

Ժիշտ այդ պահուն մի ծանոթ ձայն մեղմորեն կրկնեց անունս: Սթափվեցա իբր խոր քնից, կննդալի մտածությունները մի րոպե ցնդեցան, մտածություններ, որ դեռ շատ եր-

կար պետք է թափառեցնեին զիս այնքան ալազան խնդիրների շուրջը, որքան ալազան բազմությունը գտնվում էր այնտեղ, և որքան զանազան խորհրդածություն ու ենթադրություններ կարելի էր անել նրանց մասին, թե ներկայի և թե ապագայի վերաբերմամբ:

Անունս կրկնողը Հ. Մելիք-Հակոբյանն էր: Նա նույնպես միևնաչափ աստած էր խոլ ծառուղիներից մեկում դրված նստարանի վրա: Քալչերս ուղղեցի դեպի նա: Տեսնելով ժամանակակից հայ գրականության տաղանդավոր ներկայացուցիչներեն միևին, մեծ ուրախություն զգացի, հավատացած լինելով, որ նա յուր յուր գրչով պետք է կարողանար ուղղություն տալ այն հարցերին ու խնդիրներին, որոնք կըզբաղեցնեին զիս մի վայրկյան սուս, և նույն վայրկյանին իսկ, զբոսավայրի խոլ անկյունում աստած՝ ով գիտե, չէ՞ր փնտռում հյուրեր ու պատկերներ յուր ապագա որևէ մի վեպի համար...

Սովորական հարց ու բարեկից հետո աստեցի յուր մոտ: Մեր խոսակցությունը սկսվեցավ նախ՝ եղանակի անհամեմատ գեղեցկությունից, ապա՝ դարձավ զբոսնող բազմության, հետո անմիջապես՝ ընդհանուր հարցերին, որոնց մասին սիրում էր խոսել յուր տրամադրության լավ րուպեներում: Լսելով նորա խոսքերը, որ վերաբերում էին նույն վայրկյանի տպավորություններին, զարմանքով տեսա, որ նույնքան հուսահատական էին և որոնցմե երևում էր, թե նա այնքան էլ մեծ հավատք չունեի այն ներգործության վրա, զոր յուր աշխատություններն էին կարող սուս թերել:

«Հեշտ չէ որևէ մի քանովս շենք վերաշինել յուր բեկորներով, մանավանդ եթե երկար ժամանակի ընթացքում բնությունը կամ ներքին ու արտաքին այլ հանգամանքներ ալակերպել են նորա մասնիկները, զրկելով զանոնք այն բոլոր հատկություններից, որոնք անհրաժեշտ են մի օրինավոր շենք կառուցելու»:

Ասաց զայս և մի առանձին դրական համոզմամբ եզրակացուց.— Այո, հինը այլևս անպետք է... նոր ամենայն հյուր

նոր պետք է ձեռք բերել, որ հեշտ չէ ներկա պայմանների մեջ:

— Բայց պարոն, — նկատեցի ես, — այսքան երիտասարդությունը յուր թարմ ձգտումներով ու բարձր գաղափարներով, այսքան երկսեռ վարժարանները իրենց բավականաթիվ սան ու սանուհիներով, այսքան ուսանողները, որք նույնպես քիչ թվով չեն ցրված աշխարհիս զանազան կողմերը բարձր գիտություն ստանալու մտքով... մի՞թե սրանք նոր չեն, մի՞թե սրանք նույնպես անպետք են:

— Հը, բարեկամ, հեռվից նայելով իրավ որ տեսնում ենք սվեյի ուրախալի երևույթներ, որոնք հիմնովին կարող էին փարատել իմ հայտնած կասկածները, բայց ճանաչելով մոտից, այն էլ արվեստագետի աչքով, կտեսնենք, որ այդ բոլորը պատրանքներ են: Մեր ընտանիքը չունի դաստիարակության այն որոշ սկզբունքը, որ անհրաժեշտ էր մանուկ սերնդի նախնական մարզանքի համար. ընտանիքի սույն պակասը լրացնող՝ չունինք մանկապարտեզներ, որոնց ընդունելության պայմանները համապատասխանեին ընտանիքների նյութական պայմաններին. մեր տարրական կամ քիչ սվեյի բարձր դասընթացով դպրոցները՝ ենթարկված այս կամ այն անփորձի կամայականության, նույնպես չեն կարող տալ կրթական որոշ ուղղություն. կմնան պետական դպրոցները, որոնց պայմանները նույնպես թե՛ մատչելի չեն մեծամասնության և թե՛ խորթ են մեր կյանքին: Եվ սույն հաստատություններից դուրս եկող երիտասարդներն են, որ գնում են զանազան կողմեր, բարձր գիտություններ ստանալու: Ինչո՞ւ: Նախ՝ քանի որ դպրոցական նստարանների վրա են, երազում են յուրյանց երկրին ու ժողովրդին ծառայելու գաղափարը, ապա՝ երբ ավարտում են համալսարանը, մոռանում են թե՛ յուրյանց երկիրը, թե՛ ժողովուրդը և թե՛ շատ-շատ փաշիպաձ գաղափարներ: Սոքա կամ մնում են հեռու աշխարհներում, կամ հաստատվում են մեծամեծ քաղաքներում, ամուսնանալով հարուստ օրիորդների հետ և սովորացնելով անգործ համալսարանականների թիվը,

որոնցից ցայսօր չի օգտվել ո՛չ երկիրը, ո՛չ ժողովուրդը:

Հայտնի վիպագիր Հ. Մելիք-Հակոբյանի այս խոսքերը սկսեցին ինձ ավելի հուսահատեցնել: Կարծեմ, նա նկատեց այդ, որով և ասաց.— Թեև մեծամասնությունը այդպես է, սակայն որպես անցյալումն, նույնպես և այժմ կան բացառություն կազմող երիտասարդներ, որոնց վրա կարելի է հույս դնել:

Խոսքը փոխելով՝ դարձրի ժամանակակից գրողների վրա: Այս բանում պ. Հ. Մելիք-Հակոբյանի կարծիքը այնքան էլ հուսահատական չէր:

Գլխավոր մխիթարական բանն այն է, ասաց նա, որ ասպարեզում տիրապետող գրական լեզուն դարձավ աշխարհաբարը, զոր կարողանում է հասկանալ ժողովուրդը: Լեզվաբանական տեսակետից եթե քննելու լինենք, կգրտնենք, որ մեր արդի լեզուն դեռ շատ կարոտ է մշակության: Արարատյան բարբառը մեծ առավելություններ ունի ապագա աշխարհաբար լեզվի հիմքը կազմելու, բայց նա կատարյալ և ընդհանուր լեզու չէ կայող դառնալ, եթե յուր մեջ չլուծե տաճկահայոց և պարսկահայոց բարբառներից ընտիր, հայ լեզվի հոգուն սեփական բառեր, դարձվածքներ ու ոճեր: Այս երեք հայ բարբառների ձուլումն անհրաժեշտ է ապագայում մշակված և ճոխ լեզու ունենալու համար: Ամենից առաջ խոսելով լեզվի մասին, միտք ունի ապացուցել, թե մշակված լեզուն մեծ գործ է կատարում վիպագրության գործում, որով կարելի է լինում քիչ բառերով ու կարճ խոսքերով արտահայտել շատ միտք և բարձր գաղափարներ, որ կազմում է գրականական հաջողությունը:

—Գրականության արտաքին զարդարանքի մասին խոսելուց հետո, դառնանք նրա ոգուն (նա միշտ ակնարկում էր վիպագրության մասին, որ յուր մասնաճյուղն էր): Գրականական ոգի չունինք մենք, կամ ավելի պարզ ասել, մեր գրականությունը ոգի չունի և այն ոչ նրա համար, որ կարող չենք կամ չենք կամենում ունենալ, այլ նրա համար, որ կյանքը անկարող է մատակարարել առատ և որոշ նյութ գրչի համար:

— Ինչպե՞ս, միթե մեր կյանքը աննշտ է, — դիտմամբ ժպտալով, հարցուցի ես, հարցը ավելի պարզելու մտքով:

— Ո՛չ, կյանքը աննշտ չէ, և կարող չէ լինել, բայց որովհետև կյանքի զանազան երևույթները ու պայմանները մասնագիտորեն ուսումնասիրված չեն ու անհայտ են մեր մտքին ու ըմբռնման, այս դեպքում մա ներկայանում է մեզ որպես աննշտ...

— Օրինակ, գրիչ եմ ստնում գրելու. գործը սուաջ է գնում, բայց երբ հանդիպում եմ կարագրածու կյանքի իրավաբանական, հոգեբանական մասին, գրիչս ակամա կանգ է առնում: Եվ ինչպե՞ս սուաջ գնար, մինչ ես ո՛չ իրավաբան, ո՛չ հոգեբան եմ, սակայն պետք է լույս աշխարհ հանեմ իմ գործի այդ հատկությունները: Տարօրինակ կացություն է. ժողովրդի զանազան հատկությունների ուսումնասիրության գործը թողնված է երեսի վրա, մենք չունենք այդ կարգի աշխատություններ, որոնցմով օգտվում են Եվրոպայի թե՛ գրողները, թե՛ ընթերցողները... Այս սուաջին պայմանն է մեր գրական հետադիմության: Ահա և երկրորդը. մեր մասնագետ ուսումնականները յուրաքանչյուր պաշտոնների և յուրաքանչյուր հատկությունների հետևից ընկած, ժողովրդի զանազան հատկանիշները ու սովորությունները ուսումնասիրելու գործի վրա ամենևին ուշադրություն չեն դարձնում, նոցա այս պարտականությունը բնականաբար ծանրանում է վիպասանի վրա, որով վեպը պարզ վիպասանական լինելուց շեղվելով՝ դառնում է մի տեսակ վիպա-ուսումնասիրական գրվածք, սակայն երկուսի գլխավոր հատկություններից ևս զուրկ:

Հենց այն ժամանակ էլ ես համամիտ էի նորա հետ, թե ժողովրդի կյանքի մանրամասն ուսումնասիրության պակասությունը մեծ արգելք է դառնում վիպական գրվածքների առաջադիմության, ուր վիպասանը փոխանակ յուր գծած պատկերներին կենդանություն տալու, ստիպված է լինում թաղվել մի ամբողջ ժողովրդի հատկությունների ծալքերի մեջ, որից հաջող դուրս գալ մինչև այսօր չէ կարողացել ոչ մի վիպասան:

Խոսքը նորեն փոխեցի: Կուզեի գիտենալ, թե որպիսի գաղափար ունեւ նա ժամանակակից լրագրության մասին: Ժամանակը սուղ էր, կարծես մի նախազգացում կըսէր ինձ, թե այդ տեսակցությունը վերջինն էր (այսպէս էլ եղաւ), որի համար աշխատում էի լսել նրա կարծիքները այն բոլորի մասին, որոնցով հետաքրքրվում էի: Նա ասաց.

—Սկզբներում «Մշակի» մասին ես լավ գաղափար ունեի, և այսպէս էլ էր, որովհետեւ լուսամիտ թերթ կարծելով, որպէս կոչում էր ինքն իրեն, նորա շուրջը ժողոված էին նույն ժամանակվա ամենաընտիր ուժերը... «Մշակը» այդ ժամանակ կրթեց ժողովրդի մտավոր, բարոյական և տնտեսական զգացումները, զարգացնել ջանաց ժողովուրդը, բաց շունեցաւ առաջնորդողի գլխավոր հատկությունները, որ նրան մղեր դեպի առաջադիմություն. ժողովուրդը քնաթաթաւ աչքերը սրբելով՝ երբ առջևը չգտաւ առաջադիմության ուղին, ստիպւեցաւ մի քանի քայլ էլ հետ գնալ... Որովհետեւ այդ թերթը չմնաց միևնույնը. նա կամաց-կամաց մերկացրեց յոր դիմակը, որի տակ, որպէս մի սոսկալի հրեշ, փայլեց նորա «եսը»: Ընտիր ուժերը ցրվեցան, և «Մշակի» խմբագիրը մնաց միմակ, որպէս յոր թանկագին զարդերից մերկացած մի կմախք, որից զզվելով հետ քաշվեցան և ընթերցողաց մեծ մասը: Ես համակրում եմ նորա անցյալը յոր ժամանակակից թերթերի հասնեմատությամբ, իսկ նորա ներկան հալաւար է մի մեծ գերոյի, նման Թիֆլիսի դալիրիալին, շուրջը բոժոժների տեղ շարված Գ. Արծրունիւ և նրա մի խումբ արբանյակների կոպիտ «եսերը»:

—Իսկ ապագա՞ն...,— հետաքրքրությամբ հարցուցի ես:

Մեկիք-Հակոբյանը շարժեց գլուխը և փոքր լույծունից հետո պատասխանեց.

—Նորա ապագան կմնա նույնը, ինչ որ է ներկան, եթե միշտ կմնա նույն խմբագրի և աշխատակիցների ձեռքում...

Սույն կարծիքը միմիայն խոսակցիս սեփականությունը չէր, այս համոզմամբ խոսում էին և այն ամենքը, որոնք լրագրությունը ըմբռնում էին յոր սրբագան կոչմամբ և ոչ խըմ-

բազրի կամ այս ու այն համբակ աշխատակցի փառամոլ ձրգտումներով<sup>1</sup>:

Ապա նա խոսելով «Փորձի» և «Արձագանքի» մասին, եզրակացուց, թե «Փորձը» մի տաղտկալի և անբովանդակ թերթ էր, բայց առավել մի քանի նշանավոր աշխատակիցների գրվածքները, որոնք պարբերաբար հրատարակվում էին նորա էջերում, իսկ «Արձագանքը» առաջինի վիժմունքն է:

— Որովհետև մենք չունենք ամսաթերթ, որի պակասությունը այնքան զգալի է մեզանում, գոնե «Արձագանքը», որպես շաբաթաթերթ, կարող էր առաջադիմել և մեծ ծառայություն մատուցանել մեր գրականական աշխարհին, եթե նա խմբագրվեր արժանավորապես... Բայց ինչ էլ որ է, ես ավելի «Արձագանքի» ապագայի վրա հույս ունեմ, քան թե «Մշակի»<sup>2</sup>:

Կարճ լուրջությունից հետո ես հարցրի «Նոր-Դարի» և «Աղբյուրի» մասին: Նա վերջինիս սնունդն անգամ չկամեցավ հիշել. այսքանս միայն ասաց, թե մանկական թերթի խմբագիրը պետք է որ օժտած լինի մասնագետ, փորձված հոր կամ մանկավարժի բոլոր ձիրքերով ու հատկություններով, այն ինչ այդ թերթի խմբագիրը ինքը երեխա է, այսինքն՝ ավելի երեխայական հատկություններ ունի, քան խմբագրի արժանավորությունը<sup>3</sup>:

Գալով պ. Սպանդարյանի «Նոր-Դարին», — կարելի չէ բացարձակ կարծիք հայտնել: Նա դեռ նոր է, մի երկու տարի է, որ լույս աշխարհ է եկել<sup>4</sup>. որպիսի սկզբունքով ու ուղղությամբ էլ առաջնորդվում լինի նա այսօր, — այդ պետք չէ, որ նորա հիմնական ուղղությունը համարինք, աչքի առաջ ունենալով, որ խմբագրի հիմնական ուղղությունը կարող է յուր առաջի քայլերում բավել անսպասելի արգելքների և չընթանալ վաղօրոք գծած ուղղությամբ և կարող է սրա հակառակը լինել. ուրեմն՝ կանխապես կարծիք հայտնել անկարելի է<sup>5</sup>: Սակայն պետք է չորանալ, որ «Նոր-Դարը» ունի սովելի ընտիր, մշակված և

սահուն լեզու, քան մեր մյուս բոլոր թերթերը. «Նոր-Դարի» այդ մյուսը ուշադրության արժանի է: Լավ է և բանասիրական բաժինը. նորա ամենայն խնամքով ընտրած և ժողովորդի ճաշակին հարմարեցրած նյութերի ճոխությունը չի ունեցել ոչ իսկ «Փորձը» յուր ամբողջ թանձրությամբ: Քրոնիկոնի բաժինը նույնպես վատ չէ. այս բաժնում երբեմն կարդացել եմ այնպիսի տեսություններ, որ ուրիշ թերթերը գետնադրում են իրենց խմբագրականների բաժնում, և այն իրենց գլխի մեծությամբ տատերով: Անաչառությունը պարտավորեցնում է մեզ խոստովանիլ, որ «Նոր-Դարը» յուր առաջին հրատարակված օրից դարձել է որպես փուշ մյուս թերթերի աչքում. սակայն բանակրիվների ժամանակ ես միշտ նկատել եմ նորա մեջ լրջություն, բուն հարցին վերաբերյալ փաստեր և ոչ անձնական կեղտոտ վիրավորանք, որպես անում են նորա հակառակորդները: Բանակրիվի ժամանակ անձնավորությունը շոշափել, կնշանակի խնդիրը պաշտպանելու չափ փաստերի պաշար չունենալ.— իմ կարծիքը այս է, թեև մի դաս նորեկուկներ այդ հայռույանքը համարում են միակ հաղթանակ...

Այսանդարյանի դեկը ազգի և եկեղեցու սերն է...

Մի քանի միջանկյալ խոսակցությունից հետո խոսք բացի վաճառականության վրա: Լսելով նա այս բառը, խնդացներկա ժամանակներում և ներկա պայմաններում այդ ամենն ուշագրավ և անհրաժեշտ պարսպմունքի վերացականը՝ վաճառականությունը, համարում եմ խաբեբայություն, որպես համարել եմ միշտ, երբ առիթ եմ ունեցել այդ դասակարգի մասին գրել կամ խոսիլ՝ իսկ նորա իրականը՝ վաճառականը, որպես մի պարզ միջնորդ: Մենք վաճառականներ չունինք, նրանք, ինչպես ասացի, միջնորդներ են գործարանատիրոջ կամ հում նյութ սրտադրողների ու սպառող ժողովրդի մեջ: Մենք վաճառականություն չունինք. նա կորցնելով իր բարձր և պատկառելի անունը, դարձել է լոկ խաբեբայություն: Հարկավ, վաճառականությունը խաբեբայության փոխողը հայերը

չեն, հետևապես մեղադրելի էլ չեն: Հացի խնդիր է, որ ներկա պայմանների մեջ սովելի սոսկալի է, քան երբևիցե: Գոյության կովում ամեն մեկը աշխատում է հաղթող հանդիսանալ կամ պաշտպանել յոր գոյությունը: Եթե ընդհանրապես այդ կոիվը մղվում է խաբեբայությամբ զինյալ, ուրեմն ինչով պետք է զինվի հակառակորդը: Գործարանատերը խաբում է յոր հաճախորդին, սա խաբում է իրենին, մինչև որ կարգը հասնում է հայ վաճառականին, որով խաբված հայ վաճառականն էլ ստիպված է լինում խաբելու յոր հաճախորդներին, և այսպես շարունակ:

«Սակայն պետք է հարվածել, պետք չէ թույլ տալ, որ այդ տարափոխիկ հիվանդությամբ վարակվի ապագա սերունդը: Այսպես ամում են եվրոպացիք, այսպես պետք է անենք և մենք, որով սակավ սո սակավ վաճառականությունը կստանա յոր առաջին ճշմանկությունն ու կոշումն...»:

Դեռ շատ քաների մասին պետք է հարցնեի իրեն, սակայն այդ պահուն մի քանի ինձ անձանոթներ մոտենալով ընդհատեցին մեր խոսակցությունը:

Ես բաժանվեցա, և այդ եղավ վերջին բաժանումն: Արտասահմանում էի, երբ լսեցի նրա ցավալի մահը...

## **ԹԱՎՐԻԶԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԱՆՑՅԱԼԻՑ**

### **1. ՄԻ ՀՈՒՇ ՐԱՖՖԻԻՑ**

Երջանկահիշատակ հորս մոտ հյուր էր գալիս սև ակնոցներով մի պարոն, որը Արամյան տղայոց դպրոցի ուսուցիչ էր:

Հայրս նրան շատ մեծ պատվով էր ընդունում: Իսկ մենք՝ վեց քույրերս, տեսնելով մեր հոր արտաքու կարգի ընդունելությունը, երբ բակում հանդիպում էինք պարոն ուսուցչին, նույնպես մեծ հարգանքով էինք բարևում:

Հայրս, երևի, գուշակում էր այդ համեստ ուսուցչի ասպագան: Այդ սև ակնոցներով ուսուցիչը Հակոբ Մելիք-Հակոբյանն էր, հայտնի վիպասան Րաֆֆին:

Րաֆֆին հորս այցելում էր գարնան ու աշնան, ամենաքորումնալից օրերին:

Մեր բակում բավականին մեծ պարտեզ ունեինք, որի մեջ կային մի քանի բարձր և գեղեցիկ բարդիներ: Դրանք ժամը 4-ից հետո իրենց հանգիստ սոսափյունով զովացնում էին բակում նստողներին:

Մեր պարտեզում կային նաև ամեն տեսակ մրգերի ծառեր, խաղողի որթեր՝ միշտ ծանրաբեռնված պտուղներով: Կային հաամիկի ու վարդի թփեր, ուռենիներ և այլն: Պարտեզի ամուսներում բուսնում էին տեսակ-տեսակ հոտավետ ծաղիկներ:

Գարնան և աշնան երեկոներին բակն ու պարտեզը ջրովում էին ջրմուղով, որից հետո բակը լցվում էր անուշ բուրմունքով:

Երեկոյան ժամը 6-ից հետո, մեզ մոտ շատ հյուրեր էին լինում:

Մեր պարտեզը շատ գրավիչ էր մեծերի համար: Նրանք սիրում էին այնտեղ նստել՝ հանգստանալ օրվա աշխատանքից հետո: Իսկ մեզ՝ փոքրիկներիս համար, հաճելի էր խաղալ այնտեղ:

Բակի մոտքին մոտիկ մայրը սպասավորները գորգով էին ծածկում, նախօրոք սեղան և աթոռներ էին պատրաստում: Իսկ թախտի վրա հատուկ տեղ էին պատրաստում նահապետական տան մեծ հոր և մեծ մոր համար, որոնք գալիս, նստում էին և հյուրեր ընդունում:

Հայրս առանց իր պատվելի ծնողների հյուր չէր ընդունում:

Իմ մեծ մայրս միշտ իր սիրելի ամուսնու կողքին էր նստում: Երբեմն էլ կանանց մատմն էր լինում: Այդ թվականներին կանայք տղամարդ հյուրերի մոտ դուրս չէին գալիս և տղամարդ հյուրեր նույնպես չէին ընդունում: Բայց մեր մեծ հայրը և մեծ մայրն ավելի բարեկիրթ նիստուկաց ունեին:

Երբ Րաֆֆին գալիս էր մեզ մոտ, մեծ հայրս և մեծ մայրս միշտ զրույց էին անում Րաֆֆու հետ, մինչև հորս գրասենյակից գալը:

Այդ երջանիկ և պայծառ օրերից սկսվեց մեր նահապետական ընտանիքում մասնավոր հարգանքը դեպի ուսուցիչը և մտավորականը:

Րաֆֆին հաճախ գալիս էր մի վարդապետի հետ, երբեմն էլ շատ ուրիշ պարոնների հետ: Երկար ժամերով նրանք խոսում ու վիճաբանում էին: Ի՞նչ էր նույնը այդ հուզումնալից վիճաբանությունների, իհարկե, անհասկանալի էր մեզ՝ երեխաներիս:

Հետո պարզվեց, որ նրանց հուզումների և վեճերի նյութը եղել էր մեզ լուսավորելու կոշված դպրոցի բացման հարցը<sup>1</sup>:

## 2. ԱՌԱՋԻՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԸ

Մեր մահապետական տանը մենք դաստիարակվում էինք մեր բարի ծնողների օրինակով: Նրանք մեզ ներշնչում էին հարգանք ծերերի, հոգևորականների, ուսուցիչների և ամեն մարդու հանդեպ:

Մի անգամ հայրս ձեռքիցս բռնած՝ տարավ ինձ եկեղեցու փողոցը: Ես հարցրի հորիցս. «Մի՞թե այսօր շաբաթ է» (որովհետև մեր մեծ մայրը ամեն շաբաթ օր մեզ իր հետ տանում էր եկեղեցի): Հայրս հայտնեց, որ գնում ենք Րաֆֆիի տունը, ուր այժմ Աննայան օրիորդաց դպրոցն է գրտնըվում: Այս տանն էր ապրում Րաֆֆին:

Հիշում եմ, մտանք մի բակ, որի ստվերախիտ ծառերի տակ դրված էր մի մեծ սեղան, շուրջը՝ աթոռներ: Սեղանի վրա էր հեշտաեղը (սամուլար) թեյի պարագաներով:

Րաֆֆին ժպտալով ինձ ծանոթացրեց իմ հասակակից իր աղջկա հետ, որի անունն էր Եսթեր<sup>2</sup>: Մենք շուտով մտեքմացանք և գնացինք խաղալու:

Մեծ սեղանի մոտ ևս դրված էր մի փոքր սեղան և երկու փոքր աթոռ: Տիկ. Րաֆֆին մեզ հյուրասիրեց թեյով և քաղցրեղենով:

Ինչպես միշտ, այս անգամ էլ շատ հուզված էին խոսում հայրս և Րաֆֆին:

Րաֆֆին ընտանիքով տեղափոխվեց Թիֆլիս<sup>3</sup>:

Ինչպես ապագայում հայտնվեց, Րաֆֆին էր եղել, որ աղաջին անգամ արժարժել էր Թալրիզի հայ օրիորդաց դպրոցի անհրաժեշտությունը<sup>4</sup>: Այդ գովելի մտքի պատճառով մի խումբ տգետ մարդիկ աշխատել էին, որ Րաֆֆին հեռանա Թալրիզից և մեզ գրկի իր ներկայությունից:

## ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՐԱՖՖՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

Տիկին Րաֆֆիի անունը Աննա էր, հոր անունը՝ Ղաշա Հունան, մոր անունը՝ Ծերի, ընտանեկան անունը՝ Ղաշաջան։ Ուներ երեք եղբայր և հինգ քույր։ Ծննդյան իսկական թվականը չգիտենք։ Ամերիկյան դպրոցը ավարտած (մինչև 9 բաժանմունքով), ամուսնացած է շուրջ 17—18 տարեկանում, բարձրաբանական և գեղեցիկ կազմվածքով, դեմքով սպիտակ ու ժպտադեմ և չափազանց գեղեցիկ։ Ընտանեկան համեմատ և խաղաղ կյանք ուներ, շրջապատված իր քույրերով և եղբայրներով, իր անչափ բարի ծնողներով և մոտիկ ազգականներով (տիկին Ռեփեկայի հորեղբոր կինը Աննայի հորաքույրն էր)։

Աննան ծնված էր Գոգ-Թափա գյուղաքաղաքում, որը գտնվում էր Ուրմիայից մեկ ֆարսախ հեռավորության վրա (6 կիլոմետր), 3000 տուն բնակչություն ուներ՝ բաղկացած հայերից և ասորիներից, ոչ մի պարսիկ կենվոր չկար։ Այն ժամանակ որևէ պարսիկի գյուղը մտնելը վախ ու սարսափ էր ազդում գյուղի բնակիչներին։ Գոգ-Թափա գյուղաքաղաքը գտնվում էր մի բլրի կողքին (գոգ՝ թուրքերեն նշանակում է կանաչ և թափա՝ բլուր)։ Ամերիկացի միսիոներները այնտեղ ունեին մի եկեղեցի, որի քարոզիչն էր Ղաշա Հունանը, իսկ դպրոցները գտնվում էին Ուրմիայում, և ուսանողները պարտավոր էին այնտեղ գնալ։ Երիտասարդները



Բաֆֆի 1887 թ.



Հովհաննես Տեր Գրիգորյան  
(1851—1931)



Ալեքսանդր Ստեփանյան-Սահյան  
(1846—1924)

ստանում էին ամերիկյան կրթություն: Գյուղը ընդհանրապես շատ աստվածասեր էր և եկեղեցասեր:

Տիկին Րաֆֆիի հայրը շատ հարգված և սիրված մարդ էր ամբողջ գյուղում: Լինելով քարոզիչ, թեև նրան քիչ էին վարձատրում, սակայն նրա դուռը բաց էր ամեն մի օտարի և չքավորի համար: Ապրում էին համեատ նյութական պայմաններում: Չնայած դրան, Աննայի հայրը շատ մեծ ազդեցություն ուներ գյուղում, և նրա անունը սիրված էր նույնիսկ Ուրմիայում:

Աղջիկները սովորում էին ամերիկյան դպրոցում, բուլլորը ունեին շատ քաղցր երգելու ձայն, նրանց երգերը վերցրած էին եկեղեցական կտորներից և սաղմոսներից, և հաճախ շրջակա այգիներում լսում էին նրանց քաղցր ձայները:

Դպրոցի շրջանավարտության հանդեսի օրն էր, երբ Ուրմիայի դպրոցի սրահը լցված էր հրավիրյալներով, ներկա էր նաև Րաֆֆին: Նրա ուշադրությունը գրավում է մի գեղեցիկ աղջիկ, որը նստած էր ավարտողների շարքում: Նա հավանում է այդ աղջկան և որոշում է անպայման գրտնել նրա ծնողներին և խնդրել նրա ձեռքը: Րաֆֆին մոտ 23 տարեկան էր՝ այդ ժամանակ: Նրա հայրը զբաղվում էր վաճառականությամբ, և նա օգնում էր իր հորը: Մի քանի օրից հետո նա գալիս է Գոգ-Թափա, հարց ու փորձ անելով գրտնում է իր սիրած աղջկա հետքը. նրան պատմում են, որ Ղաշա Հունանը իր աղջկան խոսք է տվել դուկա. Հունանի տղին (մի բժիշկ էր): Րաֆֆին չի հուսահատվում և իր ծառայի հետ ուղղակի գնում է Ղաշա Հունանի տունը: Տանտերը թեև լսել էր նրա մասին, բայց առաջին անգամ էր նրան հանդիպում: Նա իր երիտասարդ հյուրին շատ լավ պատվում է և իր գյուղացի աղջիկներին երգել է տալիս մի քանի եկեղեցական կտորներ: Այդ միջոցին լուր են տալիս Աննայի նշանածին, որ այդ երիտասարդը հետաքրքրված է Աննայով, նա էլ իր ընկերներով անհամբեր սպասում է մոտիկ մեկ կտուրում, որ իր ախույանից վրեժ սունի: Երբ Րաֆֆին դուրս

է գալիս նրանց տնից, մի հսկայական քար կտրից ընկնում է նրա մեջքին և նրան գետին է փռում ուշաթափ: Իսկույն Ղաշա Հունանին յոր են տալիս, նա Րաֆֆուն ներս է տանում և մի քանի օր նրան իր տանը խնամում է: Րաֆֆին իր նպատակը հաշտնում է Ղաշալին, և նա ուրախությամբ ընդունում, նույնպես և մյուս անդամները, և նրանք մերժում են իրենց աղջկան տալ դուկտ. Հունանի տղին: Րաֆֆին վերադառնում է Ուրմիա, այնտեղի դատավորից օգնություն է խնդրում, նա էլ մի քանի ֆառաշներ է տալիս: Րաֆֆին իր հարսի համար հագուստներ է առնում, մի քանի հատ խանջաններ և այն տանում, լիքը քաղցրեղեններով, և գնում են ամուսնանալու: Աղջիկը և իր ծնողք ուրախությամբ ընդունում են Րաֆֆուն: Հարսնիքը շատ անշուք են առնում, վախենալով որևէ անախորժությունից Րաֆֆու թշնամիների կողմից, նվազ և ալլն չի լինում, հրավիրյալներ չեն լինում:

Ամուսնանալուց հետո գնում են Ուրմիա, որտեղ և երջանիկ ապրում են:

Երեք երեխա են ունենում, երկու տղա և մեկ աղջիկ: Աղջիկը 12 տարեկան հասակում մեռնում է:

Երկար չի տևում, որ Րաֆֆին սնանկանում է, և իր ունեցած չունեցածը պարտատերն է տանում (այստեղ նա, կարծես, մի որոշ ժամանակ ուսուցչություն է առնում):

Րաֆֆին որպես ամուսին և հայր հիանալի մարդ է լինում, և նրա կինը իր ամբողջ էությանը իր փոքրիկ ընտանիքի երջանկությունն է հոգում:

Տիկին Րաֆֆին իր ամուսնուն միշտ քաջալերում է իր գրական աշխատության մեջ և իր ամուսնու գործերը գնահատում: Նա շարունակում է իր ամուսնու գրական գործը, բոլորովին տարվելով իր աշխատանքին և ամենայն ուշադրությամբ խնամում է նրա թանկագին գրքերը: Նա հայերեն սովորել էր իր ամուսնուց և ազգականներից, լինելով շատ ընդունակ և ուշիմ: Երբ նա նոր էր ամուսնացել, գալիս է իր հոր տունը ձեռնապաշիկի և այնքան գեղեցիկ էր հագնվում,

որ ամբողջ գյուղը խոսում էր Աննայի թերմա և մետաքս հագուստների մասին: Սակայն մի օր էլ նրանք տեսնում են պարսիկներ Աննայի ագարակներում ու այգիներում, և լացելով միմյանց պատմում, որ Աննայի ունեցածը գնաց պարսիկ պարտատերերի ձեռքը<sup>2</sup>:

Հայերի և ասորիների մեջ ոչ մի խտրություն չկար և նրանց խնամփութությունը սովորական մի բան էր:

Գյուղը գտնվում էր պարսիկ տիրապետության տակ, և սրանք խոնարհաբար ենթարկվում էին իրենց պետերին և դատավորին, որը ապրում էր Ուրմիայում: Գյուղը շատ հանգիստ և խաղաղ վիճակ ուներ մինչև քրդական կոռիվները և այլն:

Տիկին Րաֆֆին իր ամուսնու սնանկանալուց հետո Դավրիժում էր ապրում, հետո տեղափոխվում են Թիֆլիս<sup>3</sup>, որտեղ իր ամուսնու մահվանից հետո իր տղաները սովորում էին և ինքը այնտեղ շարունակում էր գրական աշխատանքը և իր ամուսնու գրքերից մի գրադարան էր պահում:

Լուսանկարը, դժբախտաբար, չկարողացա գտնել, իր մի քանի ազգականների մոտ գնացի և խնդրեցի, սակայն բոլորը ասում են, որ ունեցած են և գաղթի ժամանակ մեջտեղից գնացել է:

## ՐԱՖՖԻ

(ՏՈՒՆԸ ԵՎ ԴԵՊԳԵՐ ՐԱՖՖՈՒ ԿՅԱՆՔԻՅ)

Այսօր, երբ ողջ հայկական սփյուռքը տոնում է ազգային վիպասանի ծննդյան հարյուրամյակը<sup>1</sup>, ավելորդ չենք համարում հանրության սեփականությունը դարձնել նաև մի քանի դեպքեր և ավանդություններ Րաֆֆու կյանքից: Դրանք խիստ հատկանշական են թե մեծ վիպասանի և թե իր ժամանակի համար: Բայց նախ երկու խոսքով տանք նրա տան կյարագրությունը:

1. **Րաֆֆու տունը**— Րաֆֆու պապենական տունը գրողն ընկնում էր Փալաջուկի կենտրոնում (այժմ ավերակ երկրաշարժի հետևանքով), շրջապատված Օրդուենց և Մելիք-Հակոբյան տոհմի շատավիղների տներով: Տունն ուներ զանազան բաժանմունքներ բնակության և տնտեսության համար: Արևմտյան գծի վրա շինված էին երկհարկ սենյակներ, որոնցից միջինը Րաֆֆու ստանձնասենյակն ու աշխատանոցն էր: Բազմաթիվ ճամփորդների ուշադրությունն է գրավել այս սենյակը, որի պատերը և առաստաղը ամբողջովի՝ ծածկված էին յուղաներկ գունագեղ և ոսկեգոծ զարդանկարներով, գլխավորապես ծաղիկներ և թռչուններ՝ արևելյան ճաշակով: Պատերի մեջ զետեղված էին փորքիկ պահարաններ, դեպի արևելք նայող մի խոշոր պատուհան երկու ծանր փեղկերով, որոնք բարձրանում և իջնում էին (տեղական

ատումով՝ ուռուսի), ապակիները՝ գունավոր, մանր կտրատված՝ և մոզայիկ դասավորությամբ, որոնք ստավիտյան արեգակի շողերից բազմերանգ գույներ էին արտացոլում դեպի ներս և պար բռնում գորգերի ու պատերի գույների հետ: Առաստաղի կենտրոնում ագուցված էր խոշոր հայելի. իսկ արևմտյան պատի վրա, ծաղկանկարների մեջ, աչքի էր ընկնում մի քնար՝ շողարձակ արևով,— արվեստի և լույսի սիրվողով: Այս բոլորը շինվել և գեղազարդվել է 60-ական թվականներին: Րաֆֆու անմիջական հսկողությամբ և ցուցմունքներով, իսկ քնարը, համաձայն Ջեյրան խանումի վկայության՝ գծագրել է Րաֆֆին իր ձեռքով: Այս տան և սենյակի նկարն ստանձին բացիկներով մի ժամանակ տարածված էր, կա նաև «Գեղունիի» մեջ<sup>2</sup>:

2. «...Ականջների խուզեցեք»— Րաֆֆու աշակերտներից թավրիզեցի պրն. Հարություն Դանիելյանը (այժմ վախճանված) ինձ պատմել է հետևյալը. «Արամյան դպրոցի աշակերտ էի, Րաֆֆին մեր դասատուն էր<sup>3</sup>. չէր ծեծում, բայց սիրում էր երբեմն մեր մազերից քաշել, որն այնուամենայնիվ ցավ էր պատճառում: Մի օր որոշեցինք մեր մազերը տակից խուզել և հետևյալ օրը բոլորս շատ կարճ խուզած մազերով նստած էինք դասարանում և սպասում. ուրախ էինք, որ այլևս չի կարող մեր մազերից քաշել: Ներս մտավ Րաֆֆին և նկատելով մեր խորամանկ խաղը՝ քմիծաղ տվեց, ապա կանգեց ընկերներիցս մեկին դաս պատասխանելու. սա մի քանի տեղ սխալվեց և կմկմաց: Րաֆֆին հանգրստությամբ ձեռքը մեկնեց. բռնեց նրա ականջից և ասաց. «Դե, հիմա էլ գնացեք ականջների խուզեցեք»:

3. Ուրմիայի ճանապարհին— Մի անգամ Րաֆֆին Ուրմիայից վերադառնում է Սալմաստ՝ մեկ-մեկակ. ձիան թամբին կապած խորջիւղում բալական դրամ կար: Ծանապարհի կեսին իջևանում է մի գյուղում (ստորապարսկական), ծանոթ ընտանիքում. տեսնում է նույն տանն իջևանել եկ նաև մի քանի քուրդ սղաներ իրենց հետևորդներով, բոլորն էլ զինված: Խոսակցության ընթացքում քրդերից մեկը հարց-

նում է. «Հայ, ինչպե՞ս ես սիրտ անում և մեհակ ճամփորդում ես այս կողմերով. եթե վաղը մի քանի զինված մարդիկ առաջդ կտրեն՝ ի՞նչ կանես»: Րաֆֆին ամենայն ստունաւորությամբ ձեռքը տանում է գրպանը, հանում է ատրճանակը և ուղղելով խոսակցին՝ պատասխանում է. «Այ, սրանով կպատասխանեմ...»: Տպալորությունը շատ զորեղ է լինում և... քրդերը բարեկամանում են նրա հետ:

4. **Քարամը**— Ընտանեկան շրջանակում պատմում էին հետևյալ դեպքը: Թավրիզում Րաֆֆու թշնամիներն այնքան են առաջ գնում (երևի Արամյան դպրոցի դեպքից հետո), որ նրան գրպարտում են բարձր պաշտոնեության առաջ, և նույնիսկ հայտնի ավագակապետ Քարամին հանձնարարվում է նրա «հաշիվը փակել»: Գիշերվա ուշ պահին Քարամն անշուշտ մտնում է Րաֆֆու սենյակը և տեսնում է նրան աշխատելիս՝ կործքը հեհնած գրասեղանին: Իր մտքերի ու երևակայության մեջ խորասուզված հեղինակը չի զգում, չի անդրադառնում, որ հոչակալոր ավագակապետը կանգնած է իր թիկունքին, ձեռքը սրի դաստակին և... դիտում է իր աշխատանքը, լսում իր գրչի խզզոցը: Որքան է տևում այդ խորհրդավոր լուծությունը, հայտնի չէ. մեկ էլ հեղինակն զգում է, որ մի ձեռք ծանրացավ իր ուսին. ետ է նայում և... զարմանքը սատում է դեմքին: «Ինձ ուղարկել են քեզ սպանելու, բայց ես գործ չունեմ այն մարդկանց հետ, որոնք սրի փոխարեն գրիչ են շարժում. վեր կաց, շտապիր քեզ քաղաքից հեռացնեմ»: Որքա՞ն վաղերական է այս դեպքը՝ չեմ կարող երաշխավորել, ընդունենք որպես ավանդություն, սակայն Քարամի և Թավրիզի հայ աղաների բարոյական ըմբռնումների միջև անդրունդ կա:

## ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1877 թվականն էր, եւ այդ ժամանակ՝ յոսան տարեկան, Արամյան դպրոցի պատրաստական դասարանի աշակերտ էի։ Ավագ հինգշաբթի օրն էր<sup>1</sup>։ Երեկոյան, ոտնալվայի հանդեսին բոլոր աշակերտները մեր հարգելի ուսուցիչ Հովհաննէս Խիզանյանցի<sup>2</sup> հսկողությամբ ներկա էինք եկեղեցում։

Ժամասացությունը ավարտելէն ետ, երբ ժողովուրդը ցրվում էր, բարձր դասարանի աշակերտները հալաքված՝ շատ խորհրդալոր կերպով խոսում էին մի ինչ-որ քանի մասին։ Քանից դուրս եկաւ, որ խոսակցությունը Րաֆֆիի մասին էր, և ինչպէս որ այդ մասին հայտնեց մեզ մեծ աշակերտներից մէկը, «Հակոբ վարժապետը Տեր-Հովսէփի համար գազեր է գրել և անպատկել»<sup>3</sup>։

Պարզվեց, որ մի քանի օր առաջ հոգաբարձական ժողովում<sup>4</sup>, որտեղ նախագահում էր հանգուցյալ Տեր-Հովսէփը (Անդրեաս արքեպիսկոպոսի բացակայության պատճառով), իբրեւ առաջնորդական փոխանորդ, մի ինչ-որ խնդրի մասին, երկար վիճաբանությունից ետ, փոխանորդը ոչ մի կարծիք չէ հայտնել, այլ ամբողջ ժողովի ընթացքում լուռ է մնացել, որ և առիթ է տվել Րաֆֆիին «Մշակին» իր տված հոդվածի նյութ դարձնել, անվանելով փոխանորդին մարմարէ արձան<sup>5</sup> և այլն, և այլն։

Զատկի տոներին միակ խոսակցության առարկան սույն հոդվածն էր: Այս բանից խիստ զայրացած՝ հանգուցյալ Տեր-Հովսեփը Զատկից անմիջապես հետո եկեղեցու դռան կախել է տալիս իր հրաժարականը ոչ միայն նախագահությունից, այլև քահանայագործությունից. այս հրաժարականը մեծ աղմուկ առաջացրեց տեր հոր կուսակիցների մեջ, այն է՝ հայ խաների և մի քանի իրենց համախոհների, որոնք թախանձանոք խնդրում էին Տեր-Հովսեփին ետ վերցնել յուր հրաժարականը, երդմամբ խոստանալով՝ խիստ պատժել տալ Հակոբ վարժապետին, բայց տեր հայրը պնդեց յուր հրաժարականի վրա մինչև Հակոբի պատժվելը: Խաները հետամուտ եղան պատժել տալու «ըմբոստ» և «անհավատ» վարժապետին, դիմում են մի աններելի միջոցի, այն է՝ թարգմանելով պարսկերեն Րաֆֆիի «Հարեմը» («Փունջ» հատոր 2-րդ), իհարկե, շատ համառոտ և մի աղերսագրի հետ ներկայացնում են այն ժամանակ Ատրպատականի ընդհանուր կառավարիչ, թագաժառանգ Մուզաֆերեդդին Միրզային և իր օգնական Սահաբ-Դիվանին, խնդրելով խիստ պատիժ ըմբոստ, խռովարար, ապամատեցի պարսկահպատակ Հակոբ վարժապետին, հայտնելով միևնույն ժամանակ, որ իրանք, իբրև պարսկահպատակներ և հավատարիմ ծառաներ, իրանց պարտականությունն են համարում պատժել տալ այդպիսի խաբդախ հպատակին: Թագաժառանգը շատ էլ ուշադրություն չէ ուզում դարձնել, բայց խաների անվերջ թախանձանքից ստիպված խոստանում է արքայել:

Եվ ահա՝ մայիսին էր, առավոտյան երկրորդ դասի ժամանակ, ուսումնարան մտան խաները մի քանի ֆերաշների (ուսուկյան) հետ, անցան առաջին դասարանը<sup>6</sup>, ուր դասավանդում էր «Հակոբ վարժապետը». ներս մտնելով՝ խաները թագաժառանգի անունով հրամայում են թողնել ուսումնարանը և անմիջապես հեռանալ քաղաքից, եթե չէ ուզում ամենախիստ պատժի ենթարկվել. աղմուկ բարձրացավ, գոռում էին խաները, պահանջում էին դուրս ելնել դասարանից: Այդ դասարանից մի դուռ բացվում էր դեպի մեր դասարանը, ուր

այդ միջոցին մեզ դասավանդում էր մեր սիրելի ուսուցիչ պ. Մվազ Ավթանդիլյանը (այժմ խան)<sup>7</sup>, որը լսելով աղմկալի խոսակցությունը, շտապեց միջի դռնով դեպի առաջին դասարանը. չմոռանամ ասելու, որ պ. Ավթանդիլյանը հանգուցյալ Րաֆֆիի ամենամտերիմ ընկերն և սրտակից բարեկամն էր. մենք էլ հավարվեցինք դուռն առաջ և վախով չի հետաքրքրությամբ նայում էինք: Խաների սպառնալիքին Րաֆֆին շատ ստոնությամբ և խրոխտ կերպով էր պատասխանում. Հեռացեք, — ասում էր, դուք իրավունք չունեք աշակերտներիս ներկայությամբ ինձ անպատվել, թողեք դասս վերջացնեմ, այնուհետև դրսում խոսեցեք ինչ որ խոսելիք ունեք: Բայց խաները միմյանց խրախուսելով և հրելով, մոտեցան Րաֆֆիին՝ «Խա՛ն, քաշի, քաշենք դուրս» գոռալով: Իսկ նա տեսնելով, որ կարող եմ բռնի կերպով դուրս հանել, գլխարկն առնելով՝ իսկույն հեռացավ յուր բնակարանը, որ գտնվում էր դպրոցին կից, խոստանալով երկու օրվան ընթացքում հեռանալ քաղաքից: Սույն դեպքին ականատես լինելով Րաֆֆիի Եսթեր անունով աղջիկը, սաստիկ վախեցած երկու օրից հետ վախճանվեց<sup>8</sup>:

Րաֆֆին հեռացավ քաղաքից սրտի անհուն կսկիծով, թողնելով իր ընտանիքը նյութապես անապահով դրության մեջ, մինչև որ քիչ ժամանակից հետ ընտանիքը փոխադրեց Թիֆլիս<sup>9</sup>:

Րաֆֆին հեռանալով, Տեր-Հովսեփը ետ վերցրեց իր հրաժարականը և քահանայագործում էր մինչև իր մահը, այսինքն՝ մինչև 1887 թիվը:

Րաֆֆին այդ դեպքից մի քանի տարի հետո, այն է՝ 1882 թվին, վերջին անգամ եկավ Թալլիզ մի քանի օրով. չմոռացավ և այցելել դպրոցը, այդ ժամանակ ես դեռ աշակերտ էի չորրորդ դասարանում:

**ՆԱՄԱԿ Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ**

Մի քանի շաբաթ առաջ այստեղի նշանավոր վանատականներից մեկի՝ պ. Բ. Տեր Միքայելյանցի տանը ընթրիք կար պատրաստված, հրավիրված էին երեսունի չափ անձեր։ Ընթրիքը բավական ճոխ էր, և եթե մի եվրոպացի հանկարծ ներս մտնելու լիներ և տեսներ փառավոր սեղանը, բավական լավ գաղափար կկազմեր հայ գյուղացու բախտավորության մասին։

Խոսքս դրա վրա չէ, փառավոր սեղաններ շատ տեղերում լինում են, բայց գինին ամեն խմողի վրա միևնույն ազդեցությունը չէ գործում։ Ծատ մարդերի մեջ նա գրգռում է վայրենի զգացմունքներ, շատերը խմելով ազնվանում են, ոգևորվում են և սկսում են գեղեցիկ ճառեր կարդալ, իսկ շատերը անասնանում են... Բայց ի՞նչ է լինում ագուլեցին խմելու ժամանակ։ —Նա դառնում է **ազգասեր**։

Ահա այդ հատկությունից օգուտ քաղելով, պ. Հ. Մելիք-Հակոբյանը սեղանի վրա մտածեց մի բան սարքել։

Տաք-տաք խմում էին և երգում էին երգեր. պարոնը վեր կացավ և մի տոստ առաջարկեց։ Հայտնի է, թե ինչ տոստ կառաջարկեր, երբ խոսքը հայրենիքի թշվառության վրա էր. նա միշտ մեր տանկաստանցի հայ եղբայրներին։ Հետո նա խոսեց փոքր-ինչ երկար, բայց բավական խելացի ճառ։ Նա իր ճառի մեջ առաջարկում էր մի ամբողջ պրոեկտ՝ Ագուլի-

սում հիմնել մի ընկերություն բարեգործական նպատակով: Ընկերության նպատակը պետք է լիներ երկու բան. առաջին՝ չքավոր և միջոց չունեցող մանուկներից վարժապետացուք պատրաստել, երկրորդ՝ տպագրել դպրոցների համար դասագրքեր և այնպիսի գրքեր՝ ժողովրդի մեջ ընթերցանություն տարածելու համար: Ընթերցից հետո նա ավելի պարզ կերպով բացատրեց իր միտքը, ցույց տվեց մի այսպիսի ընկերության կարելությունը, նրա օգտավետությունը և ապագան: Հանդիսականները մեծ ուրախությամբ համակրեցին պարոնի առաջարկությանը և խնդրեցին մի կանոնադրություն գրել: Նա հայտնեց, թեև ինքը ունի իր գլխում այդ ընկերության ձևակերպության մասին մի ծրագիր, բայց կցանկանար, որ իրան երկու օգնական տրվեր կանոնադրությունը կազմելու համար: Օգնականներ որոշվեցան պ. պ. Մ. Աթաբեկյան<sup>4</sup> և դոքտոր Հ. Դերջանյան<sup>5</sup>, մի երիտասարդ բժիշկ, որ նոր է դարձել Փարիզից:

Մենք մեծ անհամբերությամբ սպասում էինք կանոնադրության պատրաստվելուն, երբ մեր պատվելի մեղիքը՝ Մ. Հ. Կոստանդինյանը<sup>4</sup>, լուր տվեց, թե օրիորդաց դպրոցի դահլիճում ժողով կա<sup>5</sup>: Ժողովը նշանակված էր երեք ժամին կեսօրից հետո. չորսից փոքր անցած, հրավիրյալները պատրաստ էին: Այն օր պետք է քննվեր ընկերության կանոնադրությունը, որ արդեն պատրաստ էր: Պ. Մելիք-Հակոբյանը կարդաց, միևնույն ժամանակ բացատրելով և պաշտպանելով յուրաքանչյուր հոդվածները: Կանոնադրությունը ընդունվեցավ մասնավոր փոփոխությամբ: Եվ միևնույն ժողովում 36 հոգի հիմնադիր անդամ գրվեցան այս ընկերության, մի մասը կանայք և մի մասը տղամարդիկ: Ստորագրությունը դեռ շարունակվում է, և երբ հիմնադիր անդամների թիվը կհասնի 50-ի, այնուհետև կանոնադրությունը կուղարկվի բարձր կառավարության հաստատելու համար:

Բայց պ. Մելիք-Հակոբյանը նույն ժողովում հայտնեց, թե ընկերության դրությունը նախքան բարձր կառավարության ներկայացնելը, ինքն մտադիր է ուղարկել «Մշակի»

խմբագրատունը լրագրության կարծիքը նրա մասին լսելու համար<sup>6</sup>, որպեսզի գործը ավելի հիմնավոր և կատարյալ կերպով սկսվի: Այդ առաջարկությունը նույնպես ընդունվեցավ ժողովից:

Բոլոր սրտով ողջունելով իմ հայրենակիցների այդ նոր ձեռնարկությունը, ես պատիվ եմ համարում ինձ հրապարակաբար հայտնել, եթե ագուլեցիք մինչև այսօր կատարել են շատ հասարակաց օգուտ բերող գործեր, այդ վերջինը ամենի պատկը կլինի: **Գիրք և ուսուցիչ**,— դրանք մեր դարո՞ւս ամենամեծ գործիչներն են, որոնց կարոտ ենք մենք:

Ես նպատակ չունեմ այժմ գրել այդ ընկերության կազմակերպության մանրամասնությունները, ի նկատի ունենալով, որ գուցե շուտով կտպագրվի նրա կանոնադրությունը, միայն կասեմ, որ առաջին անգամ մեզանում մի բարեգործական ընկերություն կազմվում է այդ և կին մարդերից, դա շատ լավ նշան է: Մեր կանայքը այն աստիճան ոգևորությամբ կսյան այդ գործին, որ համեստությունը արգելում է ինձ հայտնել մի քանի ազնիվ տիկիների անուններ, որ իրանց վիրավորված համարեցին, թե ինչու ստորագրության բերթը չտարան նրանց մոտ, որ նրանք ևս անդամ գրվեին:

Այդ ընկերությունը ունի ընդհանուր նպատակ և իր շրջանը ընդարձակելով պիտի տարածվի Ռուսաստանի ամեն հայաբնակ քաղաքներում, ամեն տեղ առանձին ճյուղեր հիմնելով: Եվ ոչ ոքի այնքան հնարավոր չէ, իմ կարծիքով, իրագործել մի այսպիսի ընկերություն, որքան ագուլեցուն, որովհետև նրա մեջ եռանդ կա, բացի դրանից, ագուլեցի վաճառականը ամեն տեղ տարածված է, և կարող է շատ հեշտությամբ նոր և նոր անդամներ գտնել, մանավանդ ընկերության անդամ լինելու պայմանները խիստ թեթև են:

Օրինակ առնելով Բագուի «Մարդասիրական ընկերությունը» (թեև նա մի նշանավոր գործ չէ գործել)<sup>7</sup>, ես համոզված եմ, որ փոքր քաղաքներում, փոքր հասարակությունների մեջ ավելի հեշտությամբ են կազմվում և հառաջ գնում ընկերությունները, քան մի այնպիսի մեծ հայ հասարակու-

թյան մեջ, որպես Թիֆլիսն է։ Ագուլեցի վաճառականները դեռ շատ առաջ Թիֆլիսում մտադիր էին կազմել մի տպագրական ընկերություն, և մինչև այսօր այն ժամանակից հավաքված մի գումար գտանվում է քանկումը։ Մոսկվայում գտանվող ագուլեցի վաճառականները աղա Հ. Արախանյանցի<sup>8</sup> թելադրությամբ կազմեցին մի գումար, որ պիտի հիմք դներ մի ընկերության աղքատներին օգնելու համար<sup>9</sup>, այժմ նույն գումարը մի քանի հազարի է հասել։ Ես կարող եմ շատ օրինակներ բերել, որոնցից պարզ երևում է, թե ագուլեցիք զուրկ չեն ընկերական ոգուց և ոչ խնայող, երբ մի գործ վերաբերում էր հասարակաց օգտի։

Եվ այս պատճառով ես ս. Մելիք-Հակոբյանին սխալված չեմ համարում իր ձեռնարկության մեջ, և ցանկանում եմ նրան և իր համախոհներին կատարյալ հաջողություն։

[ՊԱՏԱՌԻԿ ՀՈՒՇԵՐԻՑ]

Րաֆֆին կքաշվեր իր սենյակը և կգրեր բոլորովին ամփոփված: Այդ ատեն թույլ չէի տար, որ որևէ մեկն ընդմիջեր զինքը: Ես ինքս աշխատասենյակին դուռը բանալու ատեն չափազանց զգուշություն կընեի և ոտնաձայն իսկ չէի հաներ:

Անդադար կծխեր, թեյ կխմեր և կգրեր: Սենյակը ծուխով լեցված կըլլար և այդ միջոցին, ծուխին ընդմեջեն, ան կերևակայեր և կվերանար՝ իր գրական արտադրանքը կատարելու:

Ծարունակ պակաս չէի ըներ իր թեյը և երբ հատներ, կճորոգեի, մի՛շտ զգուշանալով, որ չխանգարեմ զինքը: Թեյը կդնեի սեղանին վրա:

Անոր աշխատանքին ատեն թույլ չէի տար, որ հյուրեր այցելեն:

## ՐԱՖՖԻՆ ԶՈՒԼՖԱՅՈՒՄ

Րաֆֆին Թավրիզի Արամյան դպրոցում ուսուցիչ էր: Հեռվից հեռու ծանոթ էինք և բարևում էր: Դպրոցի հոգաբարձության ոմանց կամաչականության մասին նա 1876 թ. «Մշակում» հոդվածներ տպագրեց<sup>1</sup>: Զինախնդիր մի քանի հայեր թարգմանեցին այդ հոդվածները և տվեցին կառավարության ու իբր «խռովարարի» նրան արտաքսեցին Թավրիզից:

Գրգուլած հակառակորդները՝ մի քանի խաներ և խավարամիտ մարդիկ, հարձակվում են, որ դասարանից դուրս քշեն Րաֆֆուն: Նա վազում մտնում է ուսուցչանոց և կանգնում է Նասրեդդին շահի նկարի տակ, հետապնդողները էլ չեն համարձակում մոտենալ ու վնասել նրան:

1877-ի հոկտեմբերին, երբ սկսվել էր ռուս-տաճկական պատերազմը, ես Րաֆֆիի ընտանիքը տարա ռուսաց Ջուֆա բնակավայրը, որ Ագուլիսից եկել էր նաև Րաֆֆին: Այստեղ կարանտինի պատճառով մնացինք տասնհինգ օր: Ջուֆայում ես մոտիկից ծանոթացա Րաֆֆիի հետ: Ինձ վրա նա լավագույն մարդու տպավորություն թողեց: Նրա ընտանեկան հարաբերությունը լավ էր: Կինն ասորի էր՝ հասնատ ու ընտանեհետ: Այդ օրերին Հաղբակից և Վանի արեւելեյան սահմաններից փախտականներ էին անցել Խոյ ու Սալմաստ և այնտեղից եկել էին Ջուֆա: Րաֆֆին այդ

փախստականներին իր գլխին հավաքելով՝ պատմել տվեց Հաղբակի կոտորածի ու շեյխ Ջալալեդդինի արշավանքի մասին և հաջողությամբ գրի առավ ու կազմեց իր հայտնի վեպը՝ «Ջալալեդդին»։ Այդ փախստականները հանգամանորեն պատկերացրին Ջալալեդդինի արշավանքի ընթացքը և տվին մանրամասնությունը ամբողջությամբ։ Րաֆֆին գրի առավ նրանց պատմածը, հետո կարդաց ու ստուգեց։ Տասնհինգ օր մնալուց հետո իր ընտանիքն առավ ու գնաց Ագուլիս, ուր ուսուցիչ էր վարձվել։


Րաֆֆին այդ ժամանակ 42 տարեկան էր<sup>2</sup>։ Ամբողջ օրը նա զբաղված էր լինում գրելով։ Հալ փախստականների պատմածները գրի էր առնում և ապա առանձնանալով ընդարձակում էր։



Օգոստ 1868 թ.



Հազարյուս Աղայան  
(1840—1911)



## ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՐԱՖՖԻԻ ՄԱՍԻՆ

Րաֆֆին բնավորությամբ հանգիստ ու խաղաղ մարդ էր: Իբրև ուսուցիչ շատ սիրվում էր աշակերտներից: Շատ լավ հայոց պատմություն գիտեր և ոգևորությամբ էլ ավանդում էր:

Րաֆֆիի Արամյան դպրոցից հեռանալը այսպես եղավ:

Գարուն էր եղանակը: Մեր դասարանում (դ. դասարան<sup>1</sup>) Րաֆֆին ավանդում էր հայոց պատմություն: Դասի ժամանակ նստելու սովորություն չունեի, շրջում էր շարքերում: Դաս չիմացողներին մազերը բռնում ու թեթև քաշում էր:

Մեծ հաճույքով լսում էինք նրան:

Դպրոցի աղա հոգաբարձուները և հարուստները տատասներկու օրվա մեջ երկու անգամ եկան դպրոց և տեսուչ Սամվել Գյուլգաղչյանից պահանջեցին, որ Հակոբ Մելիք-Հակոբյանցին դպրոցից հեռացնի: Առաջին անգամ տեսուչին հաջողվում է համոզել աղաներին ու ճամփու դնել նրանց: Երկրորդ անգամ գալիս և ուղղակի մտնում են դասարան: Նախ մեր դասարանը մտան Թադևոս և Անտոն խան Մատֆեյան Երվանդական եղբայրները: Սրանք առաջարկեցին, որ Րաֆֆին դուրս գա դասարանից: Այստեղ է, որ Պատմագրյան (ոսկերիչ) եղբայրները (Մկրտումը և Արիստակեսը)<sup>2</sup> ասում են.

— Խան, քաշիր դուրս դասարանից: Դրսում կանգնել էին տաս-տասներկու հոգի, որոնց մեջ տեսնում եմ նաև Մկրտում և Հովհաննես Նաջարյաններին:

Մենք աշակերտներս լուռ, սպասողական վիճակի մեջ էինք, թե ինչ է կատարվելու:

Րաֆֆին նրանց պատասխանեց.

— Դուք կարող եք ձեր ասելիքը հայտնել տեսչին և նա էլ կխոսի ինձ հետ:

Եկավ Գյուլզադյանը:

Մենք ուրքի կանգնեցինք: Նա մոտեցավ պ. Հակոբ Մելիք-Հակոբյանցին, մի քանի գաղտնի խոսքեր ասաց նրա ականջին և դուրս տարավ նրան: Դասարանում տիրեց խորին լռություն, իսկ հետո հուզված խոսում էինք իրար հետ: Այս դեպքը շատ ծանր տպավորություն թողեց բոլորիս վրա: Ծառ լավ հիշում եմ նույնիսկ պատմության դասի նյութը— Հայոց Խոսքով թագավորի սպանության և Տրդատի հոր մասին:

## ՀՈՒՇԵՐ ՐԱՖՖԻԻ ՄԱՍԻՆ

Թուրքիզի Արամյան դպրոցում ես աշակերտել եմ Րաֆֆին 1875—77 ուսումնական տարեշրջանում, երբ Բ քաժանմունքի աշակերտ էի<sup>1</sup>: Րաֆֆին մեզ տալիս էր հայոց պատմություն: Տեսուչը Սամվել Գյուլզադյանն էր<sup>2</sup>:

Րաֆֆին դպրոցից արձակելու դեպքը պատահել է հետևյալ կերպ: Եկան հակառակորդները և նրան առաջարկեցին դասարանից դուրս գալ: Րաֆֆին պատասխանեց՝ դասերս վերջացնեմ հետո:

Ասացին՝ ո՛չ, հիմա դուրս պիտի գաս: Նա չընդունեց: Խաներն սկսան իրար ասել.

— Խան, քաշիր:

— Ախր ես քաշեմ, նա էլ կքաշի:

Այդ նույն երեկոյան Մահուտի Սիմոն աղան<sup>3</sup> ինձ կանչեց և ասաց.

— Գնա վարժապետիդ կանչիր, թող գա, կարևոր գործ ունեմ:

Րաֆֆին եկավ (1877 մայիսի վերջն էր), և հենց այդ իրիկունը Րաֆֆին ճանապարհեցին Զուլֆա, հակառակորդներից ազատելու համար:

Նա հաճախ կգար մեզ մոտ և կխոսեր Հարություն պապիս հետ, որ այն ժամանակ կլիներ մոտ 79 տարեկան (պապըս մեռավ 1889-ին):

Րաֆֆին Թավրիզում ապրում էր Հավար Ասլանի տանը, որ այժմ Աննայի դպրոցն է: Այս տունը առին և շինեցին դըպրոցը: Ուրեմն՝ Րաֆֆիի տունը հենց դպրոցին կաած էր: Րաֆֆիի սենյակը պարզ էր, ուներ մի հասարակ սեղան: Ալեքսան Եղիազարյանը (որ թավրիզեցի էր և Թումանյանների Աստրախանի ներկայացուցիչը), սա էր արտագրում Րաֆֆիի գրվածները, որովհետև նա չէր կարողանում հասցընել:

1878 թվի աշնանը ես գնացի Մոսկվա, ինձ տարան և դրին ոռոսական գիմնազիա: Մոսկվայում հայրս ստանում էր «Մշակը», որ տպվում էր Րաֆֆու «Դավիթ բեկը»: Ես շատ ոգևորված էի Րաֆֆիի ստեղծագործություններով և անկալման ցանկանում էի նրա գրվածքներից մեկը տպել: Խոսելով Մկրտիչ Բարխուդարյանի հետ<sup>4</sup> (Ագուլեցի), ես նրան հայտնեցի, որ Րաֆֆիի գրվածքներից մեկը ցանկանում եմ տպել: Նա ասաց՝ լավ է որ տպես «Ջալալեդդինը», որը հրատարակված է «Մշակում»<sup>5</sup> և որի հավաքածուն ունի Ալեքսան Քալանթարյանը<sup>6</sup>: Խնդրեցի, որ ինձ տան «Մշակի» հավաքածուն: Առանց հորս մի բան ասելու դիմեցի մորս՝ Հովհիսիմեին, հայտնելով նրան ցանկությունս:

Բարխուդարյանը հետո նամակ գրեց Րաֆֆիին<sup>7</sup>, որ Ձեր նախկին աշակերտ Վարդան Թումանյանը ուզում է հրատարակել «Ջալալեդդին»:

Րաֆֆին համաձայնեց. պիտի տալի նրան 200 օրինակ իբրև հոնորար:

Բարխուդարյանը ինձնից ստանում էր անգամ փոստի ծախսերը և գրքերն ուղարկում էր... բայց ես ոչ մեկ սանթի չստացա, Բարխուդարյանը դրամը կերավ:

Րաֆֆին ինձնից վիրավորվեց, կարծելով, որ ես եմ ուշացրել իրեն առաքվող գրքերը, մինչդեռ հանցանքը Բարխուդարյանցիկն էր<sup>8</sup>:

Կարծում եմ, որ նա լավ չէր վարվում իր տիկնոջ հետ, որ հաճախ նրան զգուշացնում էր, թե գրական աշխատանք-

Անրից աչքերդ հոգնում եմ, ջղալի՜ն ես դարձել և ընտանիքիդ ուշադրություն չես դարձնում:

Իբրև ուսուցիչ խիստ էր, բայց աշակերտները համակրում էին նրան:

Մի օր նա դասարանում մի քարտեզ փռեց սեղանի վրա և ասեղներով ծակեց և հետո հանեց պատճեն: Մենք հետաքրքրությամբ դիտեցինք նրա այդ արարքը:

Ջերմնեղանդ էր, միշտ եկեղեցի էր գնում և ուշադրությամբ լսում էր մանավանդ պատարագը: Հասարակության հետ շփում չունեք, միայն Թումանյանների հետ էր մոտ: Ծափաթը երկու-երեք անգամ այցելում էր. —Վարժապետը գալիս է,—ասում էինք:

## ՐԱՖՖԻՆ ՂԱՓԱՆՈՒՄ ԵՎ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

### 1. (ՐԱՖՖԻՆ ՂԱՓԱՆՈՒՄ)

Ես հոր էի ավարտել Տաթևի դպրոցը: 1881 թվականին գործով գնացել էի Արծվանիկ գյուղը, որ այն ժամանակ շրջանի վարչական կենտրոնն էր: Լսեցի, որ Րաֆֆին գտնվում է գյուղում և հյուր է Տեր Հարությունյան Մեսրոպ քահանայի տանը: Նա ժամանակի ուսումնասեր ու սուսաջալիք մարդկանցից էր:

Քահանայի ընդարձակ սենյակում հավաքվել էին գյուղի հասարակության ներկայացուցիչները և զրուցում էին: Ամենից վերևում, բազմոցի վրա, նստած էր միջին տարիքի խոհուն ու բարի դիմագծերով մի մարդ, որի գլխի ու երեսի մազերը թուխ էին, հատ ու կենտ ճերմակած: Րաֆֆին էր: Քահանան ինձ նրան ներկայացրեց, ավելացնելով, թե եղվարդցի էմ, Տաթևի դպրոցի հորավարտ սաներից:

Իմ ուրախությանը սահման չկար: Վիպասանի համբավը լսել էի դեռ դպրոցում սովորելիս: Ինչպիսի բախտ՝ հանկարծ հանդիպել ժողովրդի պաշտամունքի առարկան դարձած այդ մարդուն: Նա էլ ասես ուրախացավ, որ եղվարդցի էմ, ու, ձեռքս սեղմելով, քաղցրությամբ ասաց.

— Զեզ պիտի անհանգստացնեմ, հարգո երիտասարդ: Մի քանի օր պիտի շրջագայեմ ձեռք կողմերում. հատկապես ինձ

հետաքրքրում են ձեր գյուղի պատմական հուշարձանները և պետք է խնդրեմ, որ այդ գործում օգնեք ինձ:

— Ես պատրաստ եմ, — սաացի, — մեծալ ուրախությամբ ծառայելու ձեզ:

Նա թևիցս ձգելով նստեցրեց իր կողքի բազմոցին ու ընդհատված զրույցը շարունակեց: Խոսում էին գլխավորապես Ֆրանգյուլի սզգադալ արկածների շուրջը...

Երկու ժամից հետո վիպասանը պատրաստվեց մեկնելու: Հագավ իր թեթև վերսրկուն, լայնեզր գլխարկը, երկարավիզ ճամփորդական կոշիկները, սպա խորին շնորհակալություն հայտնեց տանտիրոջը, գյուղի հասարակությանը ու նստեց ձին: Ես էլ նստեցի իմ ձին ու ճամփա ընկանք դեպի Եղվարդ: Նրա թեթև ու վարժ ձի բարձրանալը և մեր դժվարանց ճանապարհներով սլուկես հաջող ձիավարելը ինձ զարմացրեց: Ծանապարհին սկզբում նա հարցուփորձ էր անում մեր գյուղի դրության, ժողովրդի կենցաղի մասին, սպա հետաքրքրվեց իմ ընտանեկան վիճակով ու դպրոցական կյանքով, լավ կարծիք հայտնեց իմ ուսուցիչ Մովսիսյանի մասին, որին ծանոթ էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցից և վերջերս էլ հանդիպել էր Տաթևում: Հետո պատմեց իր տպավորությունները Արծվանիկի շրջակայքում՝ Երիցավանքի, Կարմրաքարի, Հին Զափնու, Բերդիկի, Կոմենի և այլ հուշարձան վայրերի իր այցելություններից:

Ֆրանգյուլի գերեզմանի մասին սաաց.

— Դա մի կուպիտ քար է իր հոգու պես սև, ճզովքի ու ստեղծության կնիքը վրան... Մանուկներն անգամ ցույց են տալիս մատով ու թքում: Ահեղ է ժողովրդի դատաստանը ու անասան՝ նրա դատավճիռը:

Ծանապարհն անցնում էր անտառի միջով: Րաֆֆին անընդհատ դիտում էր շուրջը, հարցնում պատահած սարավալրի ու դաշտավալրի անվանումը ու ճշումներ անում ծոցատեարում: Միտքը շարունակ որոնումների մեջ էր:

...Ծանապարհի աջ կողմում, Խդրանց գյուղի վերևում, նա նկատեց մի սարաբլուր, ծածկված ահագին հաստաբուն ծառերով ու, դիմելով ինձ, ասաց.

—Սյունիքում ամենուրեք հուշարձանները շրջապատված են լինում հնադարյան վիթխարի ծառերով: Սյդտեղ անշուշտ մի բան կա:

—Այս կողմերում մի հին եկեղեցի կա, որը կոչվում է «Չորեք դռնի»,— պատասխանեցի ես:

—Պետք է տեսնել, բարի եղեք առաջնորդելու:

Բարձրացանք բլուրը, մտանք եկեղեցին: Վիպասանը զննեց ամեն կողմ, նկատեց դռան գլխին սրբատաշ դեղնավուն մի քար, որի նակատին կաշին բարձրաքանդակ խաչ ու փորագրված մի քանի տառեր, որ հայերենի նման չէին:

—Գիրը հունական է,— բացատրեց նա,— իսկ կառուցվածքի ոճը՝ հայկական, բայց շատ հին է, հավանորեն VI—VII դարերի գործ:

Սյդտեղ կար մի սառնորակ աղբյուր, որ բխում էր բոխի ծառերի թափ արմատների միջից: Խմեց պաղ ջրից ու հիացմունքով ասաց,— սա ջուր չէ, այլ՝ անգին դեղ:

Երեկոյան մթնաշաղիւն վերադարձանք տուն: Ընթրիքից հետո Րաֆֆին երկար գրուցում էր տառիս հետ, որը տարիքով հարյուրին մոտ էր և շատ բան տեսած ու լսած: Րաֆֆուն ամենից շատ հետաքրքրում էին Դավիթ Բեկի ժամանակներին վերաբերող հին գրույցներն ու ավանդությունները: Վիպասանի հարցուփորձերին տալու շատ հետաքրքրաշարժ հնություններ էր պատմում, նա էլ գրի էր առնում իր հուշատետրում: Ծանապարհի հոգնածությունից Րաֆֆին արդեն սկսել էր նիհեղ: Մայրս անկողին փռեց:

Լուսաբացին վաղ արթնանալով, Րաֆֆին դիմելով ինձ, ասաց.

—Սիրելի Ավետիս, թող ձերը պատրաստեն, գնանք հիշարժան վայրերը տեսնելու:

Շտապ նախաճաշելով, մենք ճամփա ընկանք դեպի այն դաշտավայրը, ուր տեղի էր ունեցել Դավիթ Բեկի զորավար-Թորոս իշխանի ճակատամարտը Ֆաթալի խանի դեմ:

Իջնելով գյուղից, Մովսես կոչված դաշտում հանդիպեցինք մեր գյուղացի որսկան Հարութին, ահագին երկար «Մաջառ» հրացանը ուսին: Միջահասակ, վաթսունի մոտ մարդ էր, երիտասարդական դեմքով, և քայլում էր այնպես արագ, որ մեր ձիերը չէին հասնում նրան: Որսկանին ներկայացրի Րաֆֆուն, ասելով որ նա լավ գիտի տեղանքը և մեզ կօգնի:

Տեղ հասնելով, ձիերը կապեցինք կաղնու ծառերից: Հարութը ընկավ սուաշ, մենք հետևեցինք նրան: Առաջին հիշատակարանը, որին հանդիպեցինք, դա կալի չափ մի ցածրանիստ թունք էր, ծածկված քարերով ու նարգիզի դեղնականաչ թփերով: Եղբայրական գերեզման էր: Մի քարի արանքից Հարութը հանեց երկու հատ կավե սևացած ճրագներ ու դարձյալ դրեց տեղը, բացատրելով, որ դրանց մեջ ուխտավորները «լույս են վառում»:

Անցանք սուաշ: Դարձյալ հանդիպեցինք նույնանման մի քանի գերեզմանների, ապա՝ տասնյակ շիրմաթմբերի, սուզված նարգիզի խիտ՝ թփերի մեջ: Դա ժողովուրդն է զարդարել նահատակների շիրիմները անթառամ ծաղիկներով: Դրա համար էլ դաշտը անվանել է Նարգիզուտ (տեղի բարբառով Ա. Ծ.)<sup>\*</sup>:

Երբեմնի ռազմադաշտի հուշարձանները մի սու մի զրնկելով, Րաֆֆին անհամբեր որոնում էր մի գիր՝ քարե մի լեզու, խոսեցնելու, սակայն գորշ ու անդրդվելի քարակույտները համառում էին: Նա միայն կարողացավ գտնել մի քանի քարերի վրա փորագրված խաչերի հետքեր: Շիրմաքարերը շարված էին արևմուտքից արևելք ողողությամբ: Այնուհետև մենք անցանք դաշտի արևելյան հատվածը, որ մի փոքր ձո-

\* Գտնվում է Եղվարդից դեպի արևելք, մոտ 8 կմ հեռավորության վրա:

րակով սահմանագծված էր մյուս մասից: Այստեղ ավելի խիտ էին շիրմաթմբերը, որոնց վրա քարերը շարված էին հարավից-հյուսիս և նարգիզի թփեր չէին երևում: Հարույթը բացատրեց, որ դրանք նակատամարտում ընկած պարսիկների գերեզմաններն են:

Մենք բավականին հոգնել ու քաղցել էինք, ուստի վերադարձանք ձիերի մոտ հանգստանալու: Հարույթը իր խորջինից հանեց լավաշ, միս ու պանիր: Ախորժակով ճաշեցինք կաղնիների հովտում: Բաֆֆին, դառնալով որսկանին, ասաց.

—Եղբայր Հարույթ, շատ շնորհակալ եմ: Ես բացառիկ ախորժակով ճաշեցի, ստանձնապես շատ համեղ էր միսը: Դա ի՞նչ թոչուն էր:

—Միրհալ: Ծառ գեղեցիկ թոչուն է, անտերը շատ զգույշ է ու դժվար է որսվում: Բայց ձեռքիցս քիչ է դուրս պրծնում:

—Հարույթը իրոք որ հայտնի որսորդ է,— ասացի ես: —Նա տափաստանում ջեյրան է որսում, դրա համար էլ կոչում են Զեյրան Հարույթ:

Հանգստանալուց հետո պատրաստվեցինք ճանապարհավելու:

—Արժանի է այս դաշտում մի հոյակապ հուշարձան կանգնեցնել: Ավաղ, դրա համար մեր ունևորների ձեռքերը շատ կարճ են, իսկ շինականը թեև լայնասիրտ, բայց աղքատ է ու անուժ,— ասաց վիպասանը վշտացած շեշտով:

Վերադարձանք տուն, իսկ Հարույթը մնաց միրհալ որոնելու: Ընթրիքին մայրս մատուցեց փլավ ուլի խաշած մսով: Հայրս Ծվանիձորի նարնջագույն ընտիր գինին լցրեց բաժակը և առաջարկեց Բաֆֆուն: Նա հակիրճ բարեմադրություններով դատարկեց բաժակը, սակայն երկրորդ բաժակից կըտրուկ հրաժարվեց.

—Խուսափում եմ ոգելից խմիչքների գործածությունից, այս մի բաժակն էլ խմեցի մեր ճանապետական ընդունված կարգը չխախտելու համար:

Ընթրիքից հետո մեզ մոտ հավաքվեցին գյուղի ծերերը: Նրանք մեկ առ մեկ պատմում էին դարերի խորքից եկող

գրույցներն ու սովանդությունները, Պողոս պապը, որ քաջատեղյակ էր ժողովրդի ասմունքին, շատ հետաքրքիր անցքեր նկարագրեց Դավիթ Բեկի ժամանակներից: Դավիթ Բեկի մահվանից հետո, — ասում էր նա, — պարսիկները մեր գյուղը ավերեցին, իսկ բնակիչներին, որպես ապստամբ ժողովրդի, բռնեցին Իրանի Ղարադաղ կոչվող լեռները: Չէ՞ որ եղվարդցիք Թորոս իշխանի քաջամարտիկ զինվորներն էին: Ապա ավելացրեց, որ ինքը դեռ երիտասարդ է եղել, երբ եղվարդցիք ուսի տիրապետության սկզբում վերադարձան Իրանի Վինա գյուղից ու վերաշինեցին հալածված գյուղը, որ արդեն ավերակների էր վերածվել ու ծածկվել վայրի ծառերով, և միայն եկեղեցին էր մնացել կանգուն: Զրույցները տևեցին շատ երկար, և երբ աքաղաղի առաջին կանչը լսվեց, ծերունիները, բարի գիշեր մաղթելով, ցրվեցին:

Այսու առավոտ վիպասանը այցելեց գյուղի եկեղեցին, որ տեր Բաղդասարը նրան ցույց տվեց մի ավետարան, որի կազմի վրա հիշատակություն կար Նարգիզադաշտի պատերազմի ու Թորոս իշխանի մահվան մասին: Մեր և հարևան գյուղերից՝ անվանի հյուրին ողջունելու համար, եկեղեցու բակում բազմաթիվ մարդիկ էին հավաքվել: Վիպասանը զրննող հայացքով երկար դիտում էր եկեղեցու պատի հին արձանագրությունը և ապա եկեղեցու մոտ գտնվող Թորոս իշխանի ու նրա զինակիցների հուշարձանների բարձրաքանդակ գրերն ու պատկերները: Նա վերլուծեց դժվար ընթերցելի այդ գրերը և վերաբտադրեց իր հուշատետրում: Այդ տեղ վիպասանը հանդիմանեց գյուղի ավագներին՝ հուշարձանների պահպանման նկատմամբ լավ խնամք չտանելու համար:

Այդ օրը վիպասանը իմ ողեկցությամբ այցելեց մեր գյուղի մոտերքի մյուս հիշատակարանները ևս՝ Սպիտակ աղբյուր, Մովսան, Ծովակ, Խաչտաի, Քաշքարուտ, ուսումնասիրեց հին դարերի հուշարձանները՝ սեպաձև, ասորական և մեսրոպյան գրերով, ու գտավ, որ մեր գյուղը հարուստ է նյութական մշակույթի հիշատակարաններով:

Երրորդ, օրը մենք գնացինք Ուժանիս գյուղը: Այստեղից Զուհականց Վանեսի ու տանուներ Բաղալի ուղեկցությամբ, որոնք գրագետ ու բանիմաց մարդիկ էին, այցելեցինք: Հին Ուժանիս, որի հնամյա ավերակների մեջ պահպանվել է միայն եկեղեցին: Հետագոտելով այդ վայրը, Րաֆֆին գտավ եկեղեցու պատի վրա մի արձանագրություն, սակայն գրերը եղծված էին ու անընթեռնելի: Ոչինչ չհաջողվեց պարզել: Միայն Վանեսը բացատրեց, թե Ուժանիսի բնակչությունը այստեղ է տեղափոխվել դեռ Դավիթ Բեկի ժամանակներից: Բարձրացանք Մողես\* գյուղը, որը նոր էր հիմնադրվել: Նրա բնակիչները փոխադրվել էին Իրանի Ղարադաղից, Հայաստանը ոռոսական կայսրությանը միացնելուց հետո:

Գյուղացիք մոտակա անտառում վիպասանին ցույց տվեցին մի հին գյուղի ավերակներ:

Գեղատեսիլ մի բարձրավանդակի վրա մեր հալսքքներին ներկայացան հնագույն եկեղեցու փլատակներ և ընդարձակ մի բնակավայրի հետքեր, պարիսպների հազիվ նշմարելի բեկորներով: Տեղանքը կոչվում է Նովրուզլու: Վիպասանը հավանական էր համարում, թե դա Սոռ. Օրբելյանի Այունյաց պատմության մեջ<sup>1</sup> հիշատակված Նախկորզան մեծ ավանը պետք է լիներ, որ հիմնել էին Այունյաց իշխանները իրենց տիրապետության նախնական շրջանում, ուստի և կոչվել է Նախկորզան:

Վերադառնալիս Ուժանիսի մոտ իջանք ձիերից, որովհետև ճանապարհը զառիվայր իջնում էր քարափների միջով: Հասնելով հարթությանը, աղբյուրից սառնորակ ջուր խմեցինք: Բոլորս խիստ հոգնել էինք: Նստեցինք ձիերը ու եկանք տուն:

Գիշերը Րաֆֆին քնեց անհանգիստ: Հագում էր, երկի ճանապարհին մրսելուց:

Առավոտը նա թույլ էր զգում իրեն, բայց որոշել էր մեկնել: Ես խորհուրդ չտվեցի վատառողջ ճամփա ընկնել, և նա

\* Ներկայիս Կաղնուտն է:

հասնաձայնվեց: Մայրս տաք կաթ ու թերխաշ ձու մատուցեց: Ապա բազմոցի վրա նստելով, գրադվեց իր հուշատետրի նշումները «կարգի բերելով»:

Կեսօրին մեզ մոտ եկան Ագարակ գյուղից ծերունիներ Սարդարանց Թումանը և Ամիջանանց Պետրոսը: Վիսախանը ասես աշխուժացավ ու սկսեց զրուցել նրանց հետ:

—Ես շատ ուրախ եմ,— ասաց նա,— ձեզ պես կյանք տեսած ու ապրած մարդկանց հետ զրուցելու և խոսելու հին-հին քանների մասին:

Թուման ապերը արխալուղի գրպանից հանեց համրիչը ու, մատների արանքում հանդարտ տրորելով, ասաց.

—Ես գիտեմ ինչն է հետաքրքրում ձեզ, դրա համար էլ եկել եմ:

Նա սկսեց պատմել այն, ինչ-որ գրեթե նույնությամբ պատմել էր Պողոս պապը ու ավելացրեց, որ Նարգիզադաշտի կովի ժամանակ պարսիկները հարձակվել են Գարվա լեռնաշղթայի ողողությամբ, Թորոս իշխանին շրջապատելու նպատակով: Բայց, ուժեղ դիմադրության հանդիպելով ու մեծ կորուստներ կրելով, նահանջել են:

—Այդ կովում էլ,— ավելացրեց նա,— սպանվեց իմ պապ Սարդարը: Նրա դին ամփոփված է մեր գյուղի հին ֆեկեղեցու մոտ և դրա համար էլ կոչվում է «Սարդարա եկեղեցի»:

Րաֆֆին, լսելով ծերունու հետաքրքիր զրույցը, հարցրեց.

—Զեր այդ եկեղեցու մոտ որևէ հիշատակություն կամ գիր կարող եմք գտնել, եթե գնանք հետազոտելու:

—Ո՛չ, դա կիսավեր մի շինություն է. գիր-քան չկա: Պետրոսը, որ անհամբեր մարդ էր, հրեց Թուման ապոր կողքին.

—Էնտեղ մի մեծ տափակ քար կա, կարող է վրան գիր ձիւնի:

Թուման ապերը զայրացավ.

—Այ մարդիկ, մի սրա խելքին նայեցեք, բա ջրաղացի քարի վրա գիր կլինի՞:

Րաֆֆին շեշտակի նայեց Պետրոսին, որ խիստ շփոթվել էր, ու ծիծաղելով ասաց.

—Ոչինչ Պետրոս քեռի, դուք էլ ձեր իմացածը ասեք:

Պետրոսը պատմեց միայն իր տեսածն ու լսածը, թե ուսաց տիրապետության սկզբում, երբ պետական սահմանի վրա կազակներ էին հսկում և պահպանությունը թույլ էր, Իրանից ավազակախմբեր էին հարձակվում ու թալանում գյուղերը: Դրա առաջն առնելու համար պետությունը տեղացիներից զինվորներ հավաքագրեց: Նրանք զարաբաղեցի Աթաբեկի գլխավորությամբ պաշտպանում էին գյուղերը: Այդ խումբը մի քանի անգամ ջարդ տվեց ներխուժած ավազակներին և դրանից հետո նրանք այլևս չէին համարձակվում սահմանն անցնել: Աթաբեկը այդ ծառայության համար արծաթե մեդալ էր ստացել պետությունից:

Ջրույցից հետո ծերունիները, մնաս բարով ասելով, ցրվեցին:

Երեկոյան, երբ Րաֆֆին վերանայում էր գրի առած իր նյութերը, հարց տվի նրան, թե ինչպիսի արդյունք կարող են տալ նրան այդ զրույցները, մինչդեռ մեզանում կան գրավոր շատ հիշատակարաններ:

Նա ինձ պատասխանեց.

—Բավական չեն մեր վանքերում պահպանված ձեռագիր վավերագրերը: Դրանք չոր ու ցամաք տարեգրություններ են: Պատմագրությունն ստեղծելու համար հարկավոր է նաև կենդանի նյութ, որը կուտակված է ժողովրդի կենցաղի մեջ:

Հինգերորդ օրը, Րաֆֆին վերջացած համարելով իր հետազոտությունները, պատրաստվում էր մեկնելու: Դառնալով ինձ ասաց.

—Ծատ անհանգստությունն պատճառեցի ձեզ: Արդեն ժամանակն է մեկնելու: Բայց դեռ շատ տեղեր ունեմ այցելելու: Այսօր կլինեմ Բեխում, վաղը կանցնեմ Հալիձոր, հե-

տո՝ վահանավանք և աչքպես հերթականությամբ կապեղեն Կապան քաղաքի ավերակները, Բաղաբերդը, Զեյլան, Գեղին և այլն: Բեխում սխտի զբաղվեալ Հալիձորի հուշարձանների հանգամանակից հետազոտմամբ, քանզի Հալիձորը, որպէս Դավիթ Բեկի բուն հենարանը, լորջ ուսումնասիրության կարիք ունի: Մասամբ էլ այդ է պատճառը, որ ես սուսպժմ դադարեցրել եմ իմ վեպի հրատարակումը մամուլում<sup>2</sup>: Կարդացե՛լ եք «Մշակում»:

— Ես այդ մասին լսել եմ միայն Մեսրոպ քահանայից: Իմ ուսուցիչ Մովսիսյանը հիացմունքով է խոսում ձեր այդ երկասիրության անդրանիկ հատվածի մասին, — պատասխանեցի ես:

Մեկնելիս նա ձեռքս ջերմագին սեղմեց:

— Շատ գոհ եմ, — ասաց, — իմ աչքելությունից և անչափ շնորհակալ ձեզանից: Ձեր սիրալիր վերաբերմունքը անջինջ կմնա իմ լավագույն հուշերում:

Նա հանեց իր սրալուսակից մի գիրք և, դնելով սեղանի վրա, շարունակեց.

— Թող իմ այս համեստ նվերը\* մնա ձեզ մոտ որպէս հիշատակ ու առհավատոշյա փոխադարձ հարգանքի: Դեմ, մնաք խաղաղությամբ:

Ապա շնորհակալություն հայտնելով գյուղի հասարակությանը, նստեց ձին և ճամփա ընկալ իր հեծյալ ուղեկցի հետ, որ նշանակված էր գյուղի ալիագների կողմից նրան տնակ Բեխ ընկերանալու համար:

## 2. ՐԱՖԻՅԻՆ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

— Րաֆիին Եղվարդից Բեխ ճանապարհվելուց հետո, — շարունակեց հալոս, — մի շարաթ անց լսեցի, որ նա վերադարձել է Արծվանիկ: Դա 1881 թ. օգոստոս ամսին էր: Նըս-

\* Այդ գիրքը Ս. Օրբելյանի «Սյունաց պատմությունը» էր, հրատարակված Մոսկվայում 1861 թ. Մ. Լմինի հրատարակությամբ և այժմ էլ պահվում է մեր տանը Ս. Մ.:

տեցի ձին ու անապարեցի Արծվանիկ: Այնպիսի արագությամբ էի ձին քշում, որ խեղճ անասունը քափուքքափնքի մեջ կորել էր: Ամբողջ ճանապարհին մտածում էի, թե որքան ճգողական ուժ կար այդ մարդու հոգում, որ այդպես հրապուրել էր ինձ և համոզվեցի, որ այդ զորությունը վիսպասանի հայրենասիրական հուանարն է, նրա մեծ հմայքը: Ծանապարհվելիս ես ինձ ասել էր, որ իր որոնումների նպատակը Դավիթ Բեկի բերդն է ու նրա շուրջ պատող ավանդությունները: Եվ ես շտապում էի իմանալու, թե ինչ արդյունքի հասավ վիսպասանը ու լսել նրա տպավորությունների մասին:

Տեղ հասնելուն պես իջա մեր բարեկամ Կակունց Միրզայի տանը, ձին կապեցի գոմում ու գնացի տեղ Մեյրոպի մոտ:

Ուխտավորի ջերմեռանդությամբ մտա ներս: Րաֆֆին քահանայի հետ սեղանի շուրջը նստած թեյ էր խմում: Դուռեցու ու ողջունեցի: Րաֆֆին ժպտաց ու ձեռքս սեղմելով ասաց.

—Ուրախ եմ քեզ նորից տեսնելու, նստիր:


Տեղավորվեցի դիմացի բազմոցին:

—Անհամբեր սպասում էի ձեր վերադարձին, լսելու ձեր տպավորությունները,— սկսեցի ես:


—Իմ տեսածն ու լսածը պատմելով չի վերջանա, կասեմ համառոտը. ինչպես գիտեք, ձեր գյուղից գնացի Բեխ, այնտեղից՝ Հալիձոր, Վահանավանք, Բաղաբերդ, Ջեյվա մինչև Քաջարանց: Վերադարձիս այցելեցի Վաչագան, Գուտկում և Ծակասեն գյուղերը: Ամեն տեղ էլ ջերմ ընդունելության հանդիպեցի: Ձեր ժողովուրդը շատ հյուրասեր է: Գլխավորը, որ իսկական հաշ մարդիկ են, չեն մոռացել առաքինի նախնիների թողած ավանդությունները, պահպանել են սյունեցու ազատասեր ոգին: Տեսա Ղափանի յոթն ասուղի բերդերը, որոնք արթուն պահապանների նման իրենց վաղեսի վեհությամբ ասես թե հսկում են շրջակայքի վրա: Իսկ Կապանը դրանց անմատչելի կողաբն է: Բնության այդ հրաշակերտ ամրությունները պարսպաձև վեր են սլանում դեպի երկինք:



Արփիար Արփիարյան  
(1851 — 1908)



Րաֆֆի 1883 թ.



Լեռների կատարներին աճել է անտառը, ասես քարից է ծլել: Ժայռերի կրծքին արծիվների հետ բույն են դրել և մարդիկ, որոնք գառների պես բարի են խաղաղ մարդկանց նկատմամբ և վագրի պես չար՝ դեպի թշնամին: Բաղախ հզոր բերդի տասներկու աշտարակները դեռ կանգուն են, պարիսպները՝ խարխլված. Կասեի եկեղեցին կիսավեր: Ինձ թվաց, թե իրենց քարե լեզվով նրանք ասում էին. «Մենք դարերով պաշտպանեցինք ձեզ թշնամիներից, բայց դուք չեք պահպանում մեզ կործանումից»: Բաղաքերդի այդ պարիսպները յոթը դար իրենց գրկի մեջ պահպանել են Հայաստանի հոգևոր մշակույթի տասը հազար ձեռագիր մատյանները: Սյունյաց Անդրովկ իշխանը IV դարում այդ պարիսպների տակ ջախջախել է պարսից Ծապուն արքայի զորությունը: Այդ մեծ գրադարանը ոչնչացվել է XI դարում սելջուկների ավերիչ ձեռքով. նրա անունը պահպանվել է Բերդի դիմացի սարավանդի մի ավերակ բնակավայրում, որը կոչվում է Գրաթաղ:

Ես, ներողություն խնդրելով, ընդհատեցի վիպասանի զրույցը, բացատրելով, թե Գրաթաղ անունով գյուղ կա այժմ և հարցրի, թե ինչ է նշանակում խոյակերպ քարե արձանը, ավելացնելով, որ նման արձաններ տեսել եմ Քիրս, Աջիքաջ, Փխտրուտ և Ավսարլու գյուղերի հին գերեզմանոցներում, եկեղեցիների մոտ:

Բաֆֆին բացատրեց, թե Սյունիքում շատ կան այդ արձաններից և դա զինվորական խորհրդանիշ է. խոյ նշանակում է ուզմիկ, ճակատ առ ճակատ կռիող, հետևապես դրանք պատերազմում ընկած հերոսների հուշարձաններ են:

—Հետո, այդ լավ հիշեցրիք,— շարունակեց Բաֆֆին,— ես շատ փնտրեցի Դավիթ Բեկի գերեզմանը, բայց ցավոք սրտի, ինձ չհաջողվեց այդ սրբազան դամբարանը տեսնել: Հալիժորի բերդի դարբասի առաջ միտքս գրավեց մի խոշոր դամբարանաբար, սիրտս բաբախեց հուզմունքից, բայց երբ վերծանեցի արձանագրությունը, տեսա, որ կալերցի Մահ-

տեսի Հայրապետի գերեզմանն է, վախճանված 1651 թվականին: Գտա և Մելիք-Փարսադանյանի կողակցի՝ Ռեհանի դամբարանը, վախճանված 1741 թվականին: Ծառ հետախուզեցի բերդի եկեղեցու ներսն ու գավիթը, նույնպես Հայկ-ձոր գյուղի հին եկեղեցու շուրջը, դարձյալ ապարդյուն: Հետո Վահանավանքում շատ ման եկա, տեսա Սյունյաց իշխանների, հոգևոր հայրերի շիրիմները,— բայց փնտրածս չկա ու չկա: Մտածեցի, թե այստեղ մի առեղծված կա. այդպիսի կարծիք հայտնեցին և Բելիս ծերունիները, թե տապալմաքարը թաքցված է կամ շրջված հակառակ երեսի վրա՝ գրեթե թաքցնելու նպատակով: Ո՞վ էր շահագրգռված այդ բանն անելու. իմ կարծիքով կամ հարազատներն են թաքցրել Դավիթ Բեկի անյունը՝ թշնամիների պղծումից փրկելու համար, կամ թշնամիները՝ նրա հիշատակը ջնջելու համար, որի հուշարձանը, որպես ազատամարտի դրոշ, կարող էր միշտ խանդավառել սյունեցիների ըմբոստ ոգին:

Առանց մարգարեության, համոզված եմ, որ մեզանից հետո էլ մեր հայրենասեր սերունդը կհալոնագործե այդ մեծ սրբությունը: Ես տեսա Թորոս իշխանի գերեզմանը Եղվարդում, Մխիթար սպարապետինը՝ Խնձորեսկի բերդում: Մելիք-Փարսադանի անյունը մնաց Ագուլիսի Թովմա Առաքյալի վանքում: Տեր Ավետիսը գնաց Երուսաղեմ մեղքերի թողության համար ապաշխարելու և չվերադարձավ: Իսկ Դավիթ Բեկի և մյուս հերոսների գերեզմանները այդպես էլ մնացին անհայտ:

—Իսկ դուք ոչինչ չասացիք պատմական Կապան քաղաքի ավերակների մասին,— հետաքրքրվեց Մեսրոպ քահանան:

—Ի՞նչ է մնացել Կապան քաղաքից, անունն էլ չեն հիշում: Ինձ ողեկցող բեխցի Հարությունը ասում էր, թե այդ վայրը կոչվում է «Տանձին լենջ», երևի դա առաջացել է մի ժամանակ եղած Տանձափարախ վանքի անունից: Այս կողմից գնալիս տեսանեյի են ձորի գլխին երկու փլված աշտարակների քարակույտերը և արևմտյան կողմից բարձունքի վրա

մի փլված շենքի հիմնապատկերը. դա երևի եկեղեցի է եղել: Իսկ հարթության վրա և անտառի մեջ կան ապարի գանգավածներ, որ փլատակներ են հիշեցնում: Մի քանի տեղ էլ հանդիպեցի հողի մեջ կիսով չափ թաղված խաչքարերի, և ուրիշ ոչինչ: Առանց պեղումների ավելին հնարավոր չէ հայտնաբերել, վայրը շատ գեղատեսիլ է:

— Իսկ պղնձի հանքերը տեսե՞լ եք և ինչ կարծիք ունեք այդ մասին, — հարցրեցի ես:

— Հալիձորի տակ, գետի ձախ ափին, — շարունակեց վիպասանը, — տեսա մի քանի արհեստանոցներ, որ մի քանի հաչ և հույն պղնձագործներ պատրաստում էին կարասներ, սինիներ, կժեր և այլ անոթներ: Զրուցեցի վարպետների հետ, ասում են լեռների ընդերքն այնտեղ հարուստ է պղնձով ու արձիճով, անգամ սրժաթ ու ոսկի կա: Իսկ Բեխից վերադառնալիս ինձ հետ եկող Փարսադանը ծանոթացրեց պղնձահանքերին: Գետի ձախ ափին տեսա հալոցքի քուրաներ, որ մխում էին: Գետի աջ ափին մի քանի չարչու խանութներ կան, դարբնոց, ներկարան, ջրաղաց, ուղտերով պղինձ էին տեղափոխում: Բաց պղինձը մեծ հարստություն է, ժամանակավոր կգարգանա այդտեղ արդյունաբերությունը: Կապանի տեղ հաչ ժողովուրդը կկերտե մի նոր քաղաք: Դեռևս XVII դարում Իսրայել Օրին գեկուցել էր ոռոսաց կայսր Պետրոս Մեծին, թե իր հայրենիքը հարուստ է պղնձով, երևի ի նկատի էր ունեցել Ղափանի հանքերը:

Նախաճաշը վերջանալուց հետո սենյակը լցվեց մարդկանցով: Քահանան ծանոթացրեց եկողներին: Առաջինը բռնակրթիցի Հայրապետ բեկն էր, որ բնակվում էր Սևքարում և գավառային հաշտարար դատարանի ատենադպիրն էր (դատարանի ատյանը Արծվանիկում էր գտնվում, որպես գավառի կենտրոն), հետո ըրկենանցի աշուղ Առաքելն էր, չափնեցի Տերանց Գասպարը, Թունին, Աբելանց Վանեսը, սևքարեցի Օհանը, գեյվացի Ասրին, Արծվանիկի խոջաները՝ Առաքելը, Մանասը, Արզումանը և ուրիշներ: Քահա-

նայի տունը դարձել էր ուխտատեղի: Նրանք ողջույն տալով, գլխարկները հանած, բազմեցին պատերի ուղղությամբ դռրված թախտերին ու հարգալից լուռությամբ հայացքները բևեռեցին վիպասանին:

Ողջույնները առնելուց հետո վիպասանը դիմեց նրանց.

— Ինձ համար շատ հաճելի են ձեր գրույցները. ձեր հայրերից ու պապերից լսած անգքերի, ավանդությունների ու գրույցների մասին... Ես լսում եմ ձեզ:

Առաջինը խոսք առավ չափնեցի Գասպարը.

— Ես քահանայի որդի եմ. հորիցս լսել եմ, որ մեր գյուղը Հին Չափնին էր, Կարմրաքարում: Գյուղի տեղը շատ լավ էր, բայց անօրեն պարսիկները հափշտակում էին գյուղի ունեցվածքը, մարդկանց գերեվարում: Այդ պատճառով մեր պապերը տեղափոխվեցին և հիմնադրեցին Նոր Չափնին՝ Արծվանիկին ավելի մոտիկ լինելու համար: Այդ նույն պատճառով էլ սևաքեցիք են տեղափոխվել Եղեգավանքից, որ այժմ կոչվում է Ծաբադին: Այսպիսով չորս գյուղ, մեջք-մեջքի տված պաշտպանվում էին թշնամիներից:

Գասպարի գրույցը ընդհատեց Թումանը, բացատրելով.

— Բայց Նոր Չափնում էլ բարի օրի չենք արժանացել: Ռուսի տիրապետությունից հետո սուլթանի անունով թուրք բեկերը մեզ հանգստություն չեն տալիս, զավթել են Կարմրաքարի մեր լավ հողերը:

Վանեսը ավելացրեց, թե սկզբում Կարմրաքարի հողերի համար մենք հարկ էինք վճարում պետությանը, հողը պետական էր:

— Իսկ այդ հարկաթերթերից ձեզ մոտ կա՞ն այժմ, — հարցրեց Րաֆֆին:

Թումանը արխալուղի կարկատանների միջից հանեց մի հնամաշ դեղնավուն թուղթ ու մեկնեց վիպասանին, — թղթի մի անկյունում երևում էր ճրագի մրով դրոշմված արծվանիշ կնիքը:

Րաֆֆին առավ թուղթը, կարդաց և բացատրեց.

—Թեև ես իրավաբան չեմ, բայց այս վավերագիրը կփրկե ձեզ բեկերի ոտնձգությունից, դիմեք դատարան:

Ապա դառնալով Հայրապետ բեկին, ասաց.

—Դուք ատենադպիր եք, խնդրում եմ օգնել այս գյուղացիներին՝ իրենց արդարացի դատը պաշտպանելու օրենքով: Հայրապետ բեկը բացատրեց.

—Ճիշտ է, այդ փաստաթուղթը օրինական ուժ ունի, սակայն գյուղացիք անգրագետ մարդիկ են, պետք է դիմեն իրավաբանի օգնության,— և հարցը լուծված համարվեց:

Աշուղ Առաքելը տեղից վեր կացավ, թե՛ ես եկել եմ քո գովասանքն ասելու, պատվելի վիպասան:

—Գալդ բարի, վարպետ,— ասաց վիպասանը:— Ես սիրում եմ մեր հայրենի գուսաններին, որ իրենց երգերով վառ են պահում մեր ժողովրդի սրբազան սովանդություններն ու հայրենասիրական զգացմունքները, իսկ ինձ գովելը միտք չունի, իմ գնալուց հետո կուզեք գովեք, կուզեք հալհույեք:

Բայց աշուղը չհասկացավ վիպասանի միտքը, սազն առավ գիրկը, զարկեց լարերին ու երգեց.

Դու ասող ես լուսավոր,

Հայոց երկնքում խավար,

Մարդ կա՝ մարդկության զարդն է,

Ունես համբավ ու ուսում:

Մարդ կա պատկերով մարդ է,

Ինքը հիմար անասուն.

Էդպիսին տեսնելը ցավ է,

Տեսնես էլ, չխոսեցնես լավ է...

—Շնորհակալություն, աշուղ, այդ երգ ու նվագը ինչպես գուսաններն են ասում՝ «սոհբաթն ու սազը», ազատ ժամանակվա բաներ են. հիմա, տեսնում եք, այս մարդիկ ինձ են սպասում, պիտի վերջացնեմ գործս, դուք կներեք ինձ,— այսպես ասելով, Րաֆֆին մի արծաթե ռուբլիանոց դրեց աշուղի ափի մեջ: Աշուղը սազի շապիկը հագցրեց ու գոհ սրտով դուրս գնաց:

Դրանից հետո Արծվանիկի խոջաները սկսեցին պատմել իրենց առևտրական գործարքներով կատարած շրջապայությունների մասին, թե ինչպես ջորիների քարավանով ապրանք էին ներմուծում Թիֆլիսից, Շամախուց, Նուխուց և Շուշի քաղաքից: Բերում էին մետաքսյա և բրդյա գործվածքներ, մահուդ, գլխի աղլուխներ, արծաթյա զարդարանքներ ու այլ ապրանքներ և թե ինչպես հեռավոր ճամփաներին երբեմն ենթարկում էին ավազակների հարձակմանն ու կողոպուտին: Այնուհետև խոսեց ծերունի Հայրապետը: Նա ստաց.

—Քիչ առաջ չափնեցիք բողոքում էին բեկերի դեմ և իրավացի էին: Ղափանում հրանք շատ հողերի են տիրացել: Գյուղացիների պայքարը բեկերի դեմ սուր կերպարանք է ստանում: Դատարանում բազմաթիվ գանգատներ կան, սակայն բռնագրավիչները, ներկայացնելով պարսկական խանների կողմից նախկինում տրված կալվածագրերը, շատ անգամ շահում են հողային վեճերը: Մեր դատավորն էլ խղճով մարդ է, ցավում է գյուղացիության վիճակի համար, բայց ի՞նչ կարող է անել, երբ օրենսդրությունը իրավական է համարում կալվածագրերը:

—Ո՞վ է ձեր այդ բարեխիղճ կոչված դատավորը,— հարցրեց Րաֆֆին:

—Ղարաբաղցի հայ է, Կուսապատ գյուղից: Ազգանունը Բեկզադով է, իրավաբանական կրթությունը ստացել է Պետերբուրգում:

—Իսկ ինչպե՞ս է, որ Մելիք Փարսադանի, Թորոս իշխանի և Մելիք Նուբարի ժառանգները չեն կարողացել պահպանել իրենց հայրական կալվածքները:

—Որովհետև դրանք չունեին պարսկական խաներից կալվածագրեր, որոնց հետ թշնամական դրության մեջ էին: Հետո էլ Մելիք Փարսադանի ժառանգների մի մասը թողել-գնացել է Թիֆլիս, Պետերբուրգ, Փարիզ, գեղում մնացածներից նշանավոր է Դավիթ Բեկ անունով մի գնդապետ, որն այժմ սահմանապահ զորամասի գլխավորն է Արաքսի սահմանագծի վրա, իսկ Մելիք Նուբարի ժառանգները տեղա-

փոխվել են Թիֆլիս: Թորոս իշխանի ժառանգները հայտնի չեն:

—Բայց այդ, բեկերի կալվածագրերը կարող են և կեղծ լինել: Ես վերջերս Ղարաբաղում էի, իրազեկ անձինք ինձ պատմեցին, թե ինչպես սուսջացան այդ կեղծ կալվածագրերը՝ թաղիաները: Հայտնի դարձավ, որ Ղարաբաղի բռնակալ Իբրահիմ խանին, ուս գործի սուսջառացման ժամանակ, երբ հա ուզում էր դավադրություն ասարքել ուսաց դեմ, Շուշա բերքում հաշերը սրախողող արին իր ազգականների հետ: Այդ դեպքից հետո, երբ Ղարաբաղի հալազգի Մադայթով գորավարը Ղարաբաղում ջախջախեց պարսից զորաբանակը և հաստատվեց ուսաց տիրապետությունը, Իբրահիմ խանի հաջորդը՝ Մեհտի-Կուլի խանը, կեղծ կալվածագրով, գրված Իբրահիմ խանի անունից ու նրա կնիքով, Ղարաբաղի մելիքներին և Գանձասարի վանքին պատկանող կալվածները բաշխեց իր բարեկամներին, ծառաներին, ձիապաններին և այլոց՝ իբրև սեփականություն: Հետագայում, համառ պայքարից հետո, բարձրագույն ատյանների միջոցով Զալալյան Բաղդասար Մետրոպոլիտին<sup>3</sup> հաջողվեց Գանձասարի վանքապատկան կալվածքների մեծ մասը փրկել, նույն կարգով և Ղարաբաղի մելիքների ժառանգները ետ սուսցան իրենց կալվածների մի մասը: Դուք, Հայրապետ բեկ, պետք է լուրջ ուշադրություն դարձնեք այդ վեճերին և օգնեք գյուղացիներին, ես կխոսեմ և դատավորի հետ:

—Դժբախտաբար, դատավորը իր տիկնոջ հետ գնացել է Շուշի աներոջ տեսությանը, եթե աչտեղ լինեք, ինքն էլ կդիմավորեք ձեզ:

Ջեյլացի Ասրին, որ թախտին ծալապատիկ նստած լսում էր գրույցները, տերողորմյան դանդաղ գցելով, ուզում էր մի բան էլ ինքն ասի:

Րաֆֆին նկատելով այդ, ասաց.

—Երևի, հալըիկ, դուք ասելու բան ունեք:

Ծերունին տեղում շտկվեց ու մորուքը տմամբացնելով սկսեց.

— Մեր հին գյուղը Տախն էր, այժմ էլ հին եկեղեցին մնում է անտառի մեջ: Մեզանից դեռն էլ Մատաղաքար գյուղն էր, նա էլ հիմա ավերակ է: Հորիցս լսել եմ, որ Զելու բերդը, որտեղ խանն էր նստում, Դավիթ Բեկը քանդել է: Այնտեղից գաղթական հայերը եկան մեր կողմը և հիմնեցին Նոր Զելվան: Հետո մեր գյուղացիք էլ Տախից տեղափոխվեցին Զելվա, քանի որ այնտեղի ջուրը առատ էր, հողը հարուստ...

— Ասում են Բարկուշատի բերդը ձեզ մոտիկ է, — հարցրեց Րաֆֆին, — ի՞նչ գիտեք այդ մասին:

— Բերդը մեր գյուղից մի երկու ժամվա ճանապարհի վրա է դեպի հյուսիս-արևելք, Որոտանի աջ կողմին, բարձր բերձերի վրա: Պարսպի պատերը, աշտարակները հիմա էլ մնում են. հիմա կոչվում է Խոջա-Մուսախլու, Խոջա Միսակի անունով: Ասում էին, թե իմ պապը՝ Գուքին (Գրիգոր), իր թանկահոգ «Ծաբան» հրացանը առել էր Խոջա Միսակից, որի դիմաց մի ձի էր տվել: Ասեմ, թե Գուքի պապին ինչու է առել այդ լավ հրացանը. նա վաչագանցի Խոջա Նուրիջանի թվանքչին էր (հրացանակիր պահակ). նրա ուղտերի, ջորիների քարավանի հետ գնում էր Պարսկաստան, գալիս: Խոջա Նուրիջանը Սպահանից, Զոռաչից, Թալրիզից թանկագին ապրանքներ՝ մահուդ, քաշմիրի շալ, մետաքսյա նորբ կտորներ, քիրմանի լալա, դանավուզ, դարեկի հնդկական համեմունք՝ հիլ ու զանջաֆիլ, չինի թասեր, սև չայ, փռանկի շաքար, որ գործածում էին հիվանդների համար որպես դեղ, բերում ստևոտր էր անում Արաքսից մինչև Քաջարանց, Մեղրուց մինչև Տաթև: Մեծ վաճառական էր:

Զրույցները տևեցին երկար և մենք արդեն ձանձրացել էինք: Հյուրերը ցրվեցին, կեսօրն անց էր: Րաֆֆին Մեսրոպ քահանայի հետ ուղևորվեց դեպի գյուղի ոտորոտը՝ բաց օդում թարմանալու: Ես հետևեցի նրանց: Գյուղի տակ պոռնի մի մեծ ծառ կա, որի շուրջը գտնվում են հիմալուրց խաչքա-

րեր: Րաֆֆին կանգ առավ այդ քարերի մոտ, որոնք ծածկված էին կանաչ մամուռով և հափշտակված գնում էր դարերից մնացած այդ հուշարձանները: Դրանցից մեկը այնպիսի բարձրարվեստ նորք ճաշակով էր քանդակագործված, որ հմայք էր պատճառում տեսնողին: Քահանան բացատրում էր, թե դրանք ավելի հին են, քան գյուղի մոտ գտնվող գերեզմանոցի եկեղեցին, որը X—XI դարերի գործ է:

Իջնում ենք ցած, Րաֆֆին ուշադիր դիտում էր առջևում փռված գեղատեսիլ դաշտավայրը ծածկված թավշյա կանաչ թփերով: Բավականին մոտիկ տարածության վրա դաշտում սիգանեմ քաջում էին երկու եղջերու, վզներից կախված զանգակների ներդաշնակ հնչյունների տակ:

— Ինչ բան է, աչքերիս չեմ հավատում, Ավետիս: Եղջերուներ են: Կուսական անտառների թագուհին ինչպե՞ս է ընկել այստեղ, — հարցրեց վիպասանը:

— Այո, եղջերուներ են ընտելացրած, ես էլ առաջին անգամ որ տեսա, զարմացել էի:

— Դրանք դատավոր Բեկզադովի ձեռնասուն եղջերուներն են, — ասաց քահանան: — Նվեր է ստացել ներքին Հանդ գյուղից. սրանց փոքր ժամանակ բռնել էին Մթնաձորի անտառում որսորդները:

Այնտեղից վերադարձանք տուն ճաշելու: Քահանան օրհնեց սեղանն ու ասաց.

— Ճաշակեցեք խնդրեմ, Ղափանի մթերքի համն ուրիշ է. մանավանդ Եղվարդի լավաշն ու Փխորոտի մոթալ պանիրը հիանալի են:

Ճաշից հետո գնացի Մակունց Միրզայի տունը: Նա հրավիրեց ճաշի, ասացի որ ճաշել եմ, ասպա հարցրեց թե՛ բա էդ վարժապետը ինչ է շինում տերտերի տանը:

Ես բացատրեցի, որ նա վարժապետ չէ, այլ գրող, վիպասան և զբաղվում է պատմագրությամբ:

— Միրզա, — ասացի, — դու ի՞նչ գիտես Ֆրանգուլի մասին:

—Ես էն գիտեմ,— բացատրեց Միրզան,— ինչպես փոքր ժամանակս պատմում էր տատս, մեր պապ Վանեսը Ֆրանգուլի զորքում յուզբաշի է եղել (հարյուրապետ)։ Ղոչաղ մարդ էր, գնդակը տափը չէր ընկնում։ Երբ Եղվարդի տակ, Նարգիզլուի կովում, Ֆրանգուլը դավաճանությամբ հրամայել էր զորքին՝ հրացաններում գնդակ չդնել, միայն վառողով կրակել պարսիկների վրա, Վանեսը չի լսել և մի քանի պարսիկների գնդակով տապալել է։ Էդ օրը Ֆրանգուլը ուզեց նրա գլուխը կտրել, Վանեսն էլ դե, կուլ գնացող պատառ չէր, իր հավատարիմ գինկորներին առավ փախավ Թորոս իշխանի կողմը և սկսեց կուլել թշնամու դեմ։ Ֆրանգուլը միճբաշուն (հազարապատին)՝ թե ուր կորավ էն Ղարա-գյուլան (սև գնդակը), ճարեք, սպանեցեք։ Բայց դե, էլ որտեղ ճարեն։ Էդ օրվանից էլ Վանեսի մականունը մնաց Ղարա-գյուլա և մինչև հիմա էլ մեր տոհմին կոչում են Ղարագյուլենց։

Երեկոյան դարձյալ գնացի քահանայի տուն։ Րաֆֆին գրադված էր. ամփոփում էր իր հավաքած տեղեկությունները։

Ընդհատելով աշխատանքը, Րաֆֆին դարձավ դեպի մեզ, թե ինչ ավանդություններ եք լսել Երիցաւանքի մասին։ Տեր Մեսրոպը բացատրեց.

—Մեր նախնիներից լսել ենք, որ այդ վանքը շատ հին է, հավանական IV—V դարերից, կոչվում է նաև Կարմիր վանք, շրջակա կարմիր ժայռերի պատճառով։ Նրա կալվածքը նույնպես կոչվում է Կարմրաքար։ Վանքին էր պատկանում և Պհածտեղ կոչվող մոտակա բերդագյուղը, որի կիսավեր պարիսպները այժմ էլ մնում են։ Վանքը եղել է Սյունյաց եպիսկոպոսական աթոռը, որ հետո փոխադրվել է Վահանավանք, այնտեղից էլ X դարում՝ Տաթև։ Հետո ճգովյալ, երիցս անիծյալ Ֆրանգուլի աջակցությամբ Ֆաթալի խանը քանդեց վանքի երեսապատման սրբատաշ քարերը, իր համար ամառանոցի շենք կառուցեց հենց վանքի մոտ, պղծելով այդ օրհնյալ հողը։ Հետո Դավիթ Բեկը ավերեց

այդ սողոմային շենքը և հիմնապատերը այժմ էլ նշմարվում են:

— Ես որքան փնտրեցի, վանքի պատերի վրա ոչ մի գիր չգտա, — ասաց Րաֆֆին, — հավանորեն քանդակագրված քարերը մնացել են փլվածքների տակ, կամ տեղահանված սրբատաշ քարերի վրա: Չի կարող, որ նման հույակապ կոթողը վիմագրություն չունենա:

Ես բացատրեցի, թե Տաթևի դպրոցում Հովակիմ վարդապետը Չամչյանի հայոց պատմության դասավանդման ժամանակ մեկնաբանում էր մեզ, թե հայոց Մուշե կաթողիկոսը Դվին մայրաքաղաքից եկել էր Երիցավանք, սպիտակ ջորիներ լծած կառքով՝ վանահայր Երիցակին եպիսկոպոս ձեռնադրելու մեծ հանդիսավորությամբ:

— Այդպես էլ ասված է, — շարունակեց վիսպաաճը, — Ստ. Օրբելյանի «Սյունյաց պատմության» 54—55 էջերում. «Եվ էր վանքս այն տեղի գեղեցիկ և զարմանալիս ի վերայ քարծրավանդակի միոջ, շինեալ եկեղեցի յանուն սրբոյն հախավկային ճորին Երիցակայ ձեռամբն, պարսպեալ մեծամեծ քարամբք...»: Մուշե հայրապետը ապրել է VI դարում, Վահան Մամիկոնյանի մարզպանության ժամանակ և այդ դարում էլ կառուցվել է այս վանքը: Զեզ մոտ, Ղափանում, պատմական հիշատակարաններ շատ կան, ինչպիսիք են՝ Գրիամա բերդը (Ագարակի մոտ), Նավաս բերդը—Վարոսի վանքը, Խիցյաա բերդագյուղը Շիկահողի անտառներում, Վանանդաձորի բերդը (Չալգամի), Բարկուշատի բերդը, որի մասին մեզ ծանուցեց Ասրի քեռին և այլն: Սակայն ես ժամանակի տղության պատճառով ի վիճակի չեղա շատ տեղեր այցելելու:

— Պատմություն ստեղծելու համար, — շարունակեց վիսպաաճը, — անհրաժեշտ է խոսեցնել քարե վկաներին, ուսումնասիրել հինավուրց վիմագրությունները, գրի առնել ժողովրդի մեջ մնացած ավանդությունները, ունկնդրել բանահյուսության ակունքներին, որի համար էլ ես հաճախ դիմում եմ ժողովրդին: Իսկ դու, սիրելի Ավետիս, դեռ երիտա-

սարդ ես և ուսյալ, տեսնում եմ, որ շատ ես հետաքրքրվում մեր պատմական անցյալով, հետևիր և գրի առ լսածդ ավանդությունները, հին գրույցները, մեր հնադարյան հոգևոր մշակույթի փշրանքները, որոնք ժամանակի հետ մոռացվում, անհետանում են, որպեսզի մեր հաջորդներն էլ այդ բանում չմեղադրեն մեզ:

Հետևյալ առավոտը գնացի Րաֆֆուն ճամփա դնելու:

Նա, սրահում կանգնած, սպասում էր գյուղից նշանակված ուղեկցողներին: Բեղլու Օհանջանին տեսնելուն պես Րաֆֆին դարձավ դեպի ինձ.

—Մոռացա քեզ ասելու. ձեր գյուղից ինձ ուղեկցող Խոսրովը շատ հետաքրքիր մարդ է. թուրը կապած, ատրոճանակը գոտին խրած, փափախը թեքած ականջին, իր նիհար ձիով արշավում էր իմ առջևից: Երբ ձին հոգնած ետ մնաց, նա սկսեց սպասել իր արկածների մասին: Ասում էր. ջահել ժամանակս փախցրել եմ գյուղի տերտերի աղջկան, տերտերը դիմել է մովրովին, փախել եմ անտառ դաշտների մոտ, վերջը տերտերը ստիպված հաշտվել է: Ասում էր գյուղի բեկին ծեծել է, հարկը չի տալիս:

—Ծիշտ է,— ասացի,— նա խիզախ մարդ է. Մելիք Մուշկամբարի թոռն է և իր տոհմային հպարտության պատճառով ոչ ոքի չի ենթարկվում: Բան էլ չունի, հենց այն լղար ձին է ու թուրը: Ապրում է իր քեֆին, դժբախտաբար իմ էլ մորեղբայրն է:

Րաֆֆին ծիծաղեց, ասելով.

—Կատարյալ Դոն-Կիխոտ է քո քեռին:

Արծվանիկցի Մանուշարն ու Օհանջանը պիտի ուղեկցեին վիպասանին մինչև Տաթև, քանի որ ճանապարհը վտանգավոր էր ավազակներից: Րաֆֆուն ճանապարհեցինք մինչև գյուղի ծայրը, բարեմաղթելով հաջողություն:

## ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒԹՍՈՒՆԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՑ

(Հատված)

Հայ գրողներից, որոնց հետ ես ծանոթացա ութսունական թվականներին, պետք է հիշեմ և Րաֆֆի մասին: Մեր ծանոթությունը երկար չտևեց<sup>1</sup>, որովհետև նրա վաղաժամ մահը ընդհատեց, բայց նրա մասին հիշողությունները չեն անհետացել իմ մտքից: Նա ինքնուրուի իսկական տիպն էր, որը կրում էր իր վրա իր ծագման բոլոր հետքերը: Չձգտելով ոչ պնդելիության, ոչ էլ արտաքին ձևերին, նա ոչ միայն համեստ էր հագնվում, հասարակ էր իր վարվեցողության մեջ, չէր քաշվում երևալ այն, ինչ որ էր, այսինքն՝ ժողովրդի մարդ: Նրա կրթությունը, իհարկե, աչքի չէր ընկնում իր հիմնավորությամբ, սակայն նա բավական կարդացած մարդ էր և լավ էր ծանոթ հայերի, պարսիկների, թուրքերի և քուրդերի կյանքին և բարքերին, մի խոսքով՝ ճանաչում էր Հյուսիսային Պարսկաստանի և Թուրքիայի մեծ մասի մարդկանց և բնությունը: Այդ տեղերը նա շատ էր թափառել իր հոր հետ՝ առևտրական գործերով, ուշադրությամբ աչքի անցնելով այն ամենը, ինչ որ տեսնում էր, և իր դիտողություններից աշխատում էր եզրակացություններ հանել: Այդպիսով ժողոված նյութը ահագին էր, և ճարպիկ կերպով

օգուտ քաղեց իր վեպերի համար, որոնք մինչև անգամ հայ ընթերցողների մեծամասնության առաջ նոր աշխարհի բացին: Համարյա այդ բոլոր վեպերի տեղեկեցիան միևնույնն էր, այն է՝ կարեկցություն զարթնեցնել դեպի թուրքահայերի դրությունը:

Նրա ժողովրդականությունը գլխավորապես հիմնված էր այդ բանի վրա, բայց չէ կարելի հերքել, որ նրա պատմըվածքներից մի բանիսը բավական հետաքրքրական են, թեպետև մշակությունը շատ տեղերում կաղում է, այլ տեղ-տեղ է միայն գեղարվեստական: Րաֆֆի ոճը հիշեցնում է հենց իրան, և ով ճանաչում էր նրան, հեշտ կարող է գտնել այդ նմանությունը: Ծնորհիվ իր պակասությունների՝ Րաֆֆիի վեպերը ժամանակով կկորցնեն իրանց ճշմանկությունը<sup>2</sup>. դրանք հենց այժմ ավելի պակաս են կարդացվում. սակայն ութսունական թվականներին մեծ ժողովրդականություն էին վայելում, դրանց հետ մեծ հեղինակություն էր վայելում և նրանց հեղինակը:

Հսկայական էր նրա թաղումը. նրա դագաղի ետևից գնում էին հազարավոր մարդիկ, մեծ մասամբ բանվոր դասակարգից: Հայ հարուստներից, կարծես, միայն քչերն էին գերկա, և երբ թաղման հանդեսը Սոլովակի փողոցներից մեկով տանում էին, տեղի ունեցավ հետևյալ բնորոշ ինցիդենտը:

Մի պատշգամբում կանգնած էր մի հարուստ վաճառականի ընտանիք և հետաքրքրությամբ նայում էր աղքատ գրողի բազմամարդ թաղման հանդեսին: Աբգար Հովհաննիսյանը նկատելով՝ ձայն տվեց նրանց. «Այո, նայեցեք, առևտրականներ: Ձեզ համար այդպիսի թաղում չենք սարքի»:

## ՎԵՐՀԻՇՈՒՄՆԵՐ

Թիֆլիսում ապրում էր Սահակ անունով մի ծերուկ: Նա իմացել էր, որ հայրս ու ես Րաֆֆու երկրպագուներն ենք, և մի օր եկավ մեր տուն: Վաթսունհինգ-յոթանասուն տարեկան մարդ էր:

—Լսել եմ, որ դուք Րաֆֆուն սիրում եք,— դիմեց նա հորս:

—Ամեն մի ազնիվ հայ պետք է նրան սիրի,— ասաց հայրս:

—Այո, ճշմարիտ խոսք է: Իսկ գիտե՞ք, որ մենք մոտ բարեկամներ էինք, հարազատ եղբոր պես: Ունեի գրախանութ, նրա գրքերը տարածում էի հայ հասարակության մեջ:

—Իսկապե՞ս,— ուրախացավ հայրս:— Ըստ հետաքրքիր է, հորեղբայր: Պատմիր, ինչ որ գիտես նրա մասին:

Ես լարեցի ուշադրությունս: Սահակը ծաղապատիկ նրստեց թախտին, վստեց ծխամորճն ու սկսեց խոսել:

—Հակոբ Մելիք-Հակոբյանը, այսինքն՝ մեր Րաֆֆին, վերջնականապես բնակություն հաստատեց Թիֆլիսում<sup>1</sup>: Մեռակ էր, ընտանիքը դեռ չէր բերել Սալմաստից, բայց անհանգիստ էր, շարունակ մտածում էր կնոջ ու երեխաների մասին:

—Ինչու՞ էր անհանգիստ,— հարցրեց հայրս:

Կրոնամոլ ու հայաույաց շեյխերից որևէ մեկը կարող է նորից արշավանք գործել Սալմաստի վրա: Նրանց նպա-

տակն է ավերել հայաբնակ վայրերը, թալանի ու կոտորածի մատնել անգեւն ժողովրդին: Պարզ է, որ Րաֆֆու ընտանիքը ևս զոհ կդառնար մոլեռանդ շէյխերի ասպատակությանն: Ես նրան խորհուրդ տվեցի Պարսկաստանում ապրող իր բարեկամների օգնությամբ կնոջն ու երեխաներին բերել տալ Թիֆլիս<sup>2</sup>:

«Լավ առաջարկ ես անում, Սահակ ջան»,— ասաց Րաֆֆին:

«Դե քանի շուտ է, մտածիր այդ մասին»:

«Ես արդեն տեղեկացրել եմ կնոջս, որ սլատրաստվեցն անապարհ ընկնելու: Միակ ելքն է՝ օր առաջ մերոնց բերել Ռուսաստան: Ինձ վրա այնտեղ ծուռ աչքով են նայում»:

Հաջորդ առավոտյան նա եկավ իմ գրախանութը, գրքւանից հանեց մի գրած թուղթ ու ասաց<sup>3</sup>.

«Կարդա»:

Նամակ էր, հասցեագրված Թավրիզում ապրող իր մտերիմ ընկեր Խաչատուր Տեր-Չաքարյանին: Այդ Խաչատուրը Րաֆֆու նոր լույս տեսած «Կալծեր» վեպը Թավրիզում տարածողներից էր:

—Ի՞նչ էր գրված նամակում, հիշո՞ւմ եք,— հարցրեց հայրս:

—Մոտավորապես հիշում եմ: Րաֆֆին հայտնում էր Խաչատուրին, որ կինը՝ Աննան և Արամ ու Արշակ որդիները շուտով գալու են Թավրիզ:

—Հարգելի բարեկամ,— գրում էր նա,— ես դիտավորություն ունեմ ընտանիքս այս աշուն բերել տալու Թիֆլիս<sup>4</sup>:

Խնդրում եմ հոգ տանեք՝ մուծումբարցի ջարվադարներով անապարհ դնեք մինչև Ջուլֆա կամ, եթե կարելի լինի, մինչև Նախիջևան... Այնտեղից ֆուրգոն կվարձեն, կգան մինչև Թիֆլիս:

Ես լսում էի Րաֆֆու մտերիմ Սահակին ու զարմանում. Թավրիզից Թիֆլիս ֆուրգոնով:

—Է, հաջող եկել-հասել էին,— հետաքրքրվեց հայրս:

—Այո: Երևանում բնակվող Վասիլ Եղիազարյանը վարձում է թարմ ուժերով ձիեր և Րաֆֆու ընտանիքը ողջ-ստողջ գալիս-հասնում է Թիֆլիս<sup>5</sup>:

—Ո՞ր է այդ Վասիլ Եղիազարյանը:

—Ծիշտն ասած՝ չգիտեմ, միայն իմացա, որ նա ևս Րաֆֆու մտերիմ բարեկամներից մեկն է<sup>6</sup>:

Հաճելի էր լսել Սահակի հիշողությունները Րաֆֆու մասին: Ծառ բան, իր ասելով, մոռացել էր, մեկ-մեկ էլ շփոթում էր տարերվերն ու դեպքերը, բայց հայրս ու ես կլանված ուշադրությամբ լսում էինք նրա խոսքը:

Սահակը մեր տան ցանկալի հյուրն էր: Ընտիր ծխախոտն ու մորս եփած բուրավետ սուրճը բարձրացնում էին նրա տրամադրությունը: Դե, մեզ էլ այդ էր պետք, որ նա «բացվի», և մենք նրանից լսենք Րաֆֆու հետ կապված միջադեպեր:

—Մի օր մտա «Մշակի» խմբագրություն,— սկսեց նա իր հերթական հիշողությունը,— տեսնեմ Րաֆֆին արագ-արագ գրում է:

«Էդ ի՞նչ ես գրում»,— հարցրի նրան:

«Ուզում եմ ձաղկել կեղծ հոգևորականներին»:

«Լավ գործ է, ձաղկիր: Հոգևորական ասացիր՝ հիշեցի. քիչ առաջ հանդիպեցի Մամբրե վարդապետին: Ասաց, թե...»

«Ա, նա շատ ազնիվ մարդ է»,— կտրեց խոսքս Րաֆֆին:

«Ազնի՞վ: Իսկ նա, սիրելի Հակոբ, քեզ պախաարակում էր»:

«Մի՞թե: Ուրեմն՝ ես էլ, նա էլ պաալվում ենք»:

Ծարումակեց գրել: Երբ հողվածն ավարտեց, ես նրան հարց տվի.

«Ի՞նչը ստիպեց քեզ աշխատակցել «Մշակ» թերթին»:

«Երկու պատճառ կա,— պատասխանեց նա:— Նախ. «Մշակը» համեմատաբար դեմոկրատական ուղղություն ունեցող թերթ է, ունի իր ուրույն ազգային դեմքը, մյուս

կողմից՝ նրա խմբագիր ու տնօրեն պարոն Արծրունին համակրանք է վայելում հասարակ ժողովրդի խավերում, հինն ու հետադիմականը խորթ են նրան։ Դե, դու իմ հայացքները գիտես՝ մենք ժողովրդի մշակներն ենք»։

Սահակի պատմածը ինձ հիշեցրեց մի դեպք, որը վկայում էր «հասարակ» ժողովրդի խավերում Րաֆֆու ունեցած հեղինակությունը։ Կարսում կար «Անուշ խմեցիր» ցուցանակ ունեցող մի պանդոկ, որի հիմնական հաճախորդներն էին քաղաքի կառապաններն ու մանր արհեստավորները։ Պանդոկի տեր Համբարձումը վայելում էր ազգասեր մարդու համբավ։ Իր ձեռնարկության պատերը նա զարդարել էր հայոց փառքը կազմող պատմական անձանց մեծադիր նկարներով։ Ներս մտնողը կլանված ուշադրությամբ նայում էր Մովսես Խորենացու, Մեսրոպ Մաշտոցի, Վարդան Մամիկոնյանի և... իտալական կոսյուզիտոր Ջուզեպպե Վերդիի դիմանկարները։

Մի օր Սուրբ Խաչ եկեղեցու սարկավազ Սուրբասը, գալով պանդոկ, հարց է տալիս Համբարձումին.

— Էս իտալացին ի՞նչ գործ ունի քո պանդոկում։

— Ո՞նց թե,— զարմանում է Համբարձումը,— հայ չէ՞։ Բա ինձ ասել են, թե Րաֆֆին է։ Վայ ես դրանց են...

Ըստ երևույթին, վաճառողը ձեռքի տակ չունենալով Րաֆֆու նկարը, սողացրել էր իտալացուն։

Հայրս մի քանի անգամ խնդրեց ու առաջարկեց Սահակին, որ նա գրի սունի իր հիշողությունները Րաֆֆու մասին։ Ծերուկը խոստացավ կատարել հորս խնդրանքը, բայց ոչինչ չգրեց, մեռավ ու գնաց, իր հետ տանելով մեծ վիպասանի հետ կապված անցքերը...



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



«Րաֆֆին ժամանակակիցների հուշերում» խորագիրը կրող սույն ժողովածուի մեջ հավաքված ու ի մի են բերված գրեթե այն ամենը, ինչ հրապարակվել է Րաֆֆու մասին ժամանակակիցների կողմից: Դրանց մի մասը գրվել ու հրապարակվել է անցյալ դարի վերջին տասնամյակներին, մնացած զգալի մասը կազմավորվել է 1918 թվականին, Րաֆֆու մահվան 25-ամյա տարեդարձի առիթով: Լայնորեն նշելով Րաֆֆու մահվան 25-ամյա տարեդարձը, զեկուցումներով ու հուշերով հանդես են գալիս Ալ. Ծիրվանզյան, Հ. Թումանյանը, Լեոն, Հ. Առաքելյանը, Ա. Քալանթարը, Բ. Նավասարդյանը, Ավ. Եզեկյանը, Հ. Տեր-Մարկոսյանը, Մ. Չմշկյանը, Հ. Տեր-Գրիգորյանը, Տ. Նազարյանը և ուրիշներ: Այդ հուշերի մեծագույն մասը գետնիցված է այս հատորում: Ինչ վերաբերում է Բ. Նավասարդյանի, Հ. Առաքելյանի, Հ. Թումանյանի ու Ավ. Եզեկյանի հիշողություններին, ապա մեզ չհաջողվեց դրանք հայտնաբերել ո՛չ մամուլում և ո՛չ էլ համապատասխան արխիվներում:

Նյութերի գերակշռող մասը քաղված է պարբերական մամուլից ու ժողովածուներից, իսկ մի քանիսը՝ այլևայլ անձանց արխիվներից, ուստի և վերջիններս հրապարակվում են առաջին անգամ: Հատորում գետնիցված են նաև այնպիսի հուշեր, որոնք հատվածաբար են վերցված այս կամ այն բնագրից: Նման դեպքում ծանոթագրությունների մեջ տրված է համապատասխան բացատրություն: Թեև նյութերի ամբողջական ընդգրկումը դրված է եղել ուշադրության կենտրոնում, այսուհանդերձ մեկ-երկու հուշ՝ փաստերի անճշտության ու կրկնությունների պատճառով հատորից դուրս են մնացել:

Հրապարակվող նյութերի հեղինակային ձևագրերը, բացառությամբ մի երկուսի, չեն պահպանվել, ուստի և դրանք տպագրության պատրաստելիս հիմք ենք ընդունել մամուլում հրապարակված տեքստերը: Փոխելով ուղղագրությունը, աշխատել ենք պահպանել հեղինակների լեզվառական առանձնահատկությունները: Առանձին դեպքերում (խոսքը վե-

րաբերում է ձեռագիր, ոչ մաքրագիր բնագրերին) կատարել ենք իւր-բազրական բնույթի շտկումներ, որոնց մասին ծանոթագրությունների մեջ արված են համապատասխան հիշատակություններ:

Ծանոթագրությունների սկզբում, ըստ հնարավորին, անդրադարձել ենք Րաֆֆու և հուշագրողի փոխհարաբերությանը՝ նրանց ծանոթությանը, բարեկամության բնույթին, մտերմության չափին ու հարաբերությունների բարդացմանը, եթե եղել է այդպիսին: Հայտնի է, որ հուշագրությունը սուրբեկաիվ ժանր է, համակրանքն ու հակակրանքը որոշակի դեր են կատարում այդտեղ: Ցուցաբերելով նման մոտեցում և անդրադառնալով Րաֆֆու ու հուշագրողի փոխհարաբերությանը, նպատակ ենք ունեցել օգնել ընթերցողին՝ ճիշտ կողմնորոշվելու:

Մեր կողմից գրված վերնագրերը առնված են [ ] փակագծի մեջ:

Ծիրվանգադեի և Բաֆֆու ծանոթությունը տեղի է ունեցել 1883 թվականի ամռանը: Կարճ ժամանակ հետո նրանց հարաբերությունը դառնում է մտերմական ու այդպես հարառոտում մինչև վերջինիս մահը: Սույն՝ «Բաֆֆիի կյանքից» խորագիրը կրող հուշը ծնունդ է առել Բաֆֆու թաղման առիթով Ծիրվանգադեի գրած դամբանականից: «Ես,— գրում է Ծիրվանգադեն իր համակերպից մեկում,— հաճճն ստա խոսել (թաղման ժամանակ) իբրև անհատի— մարդու մասին...» (տե՛ս Ծիրվանգադե, Երկերի ժողովածու, հտ. 10, Ե., 1962, էջ 637): Ծիրվանգադեի գրած դամբանականը Բաֆֆու թաղման օրը ինչ-ինչ պատճառով չի կարդացվում: Նա որոշում է իր ելույթը ընդարձակել ու հրատարակել «Մուրճ» ամսագրում, «Խմ հիշողությունները» վերնագրով: Հետագայում, հրաժարվելով այս մտքից, նա Բաֆֆու մասին իր ունեցած հիշողությունները «Բաֆֆիի կյանքից» վերնագրով հրապարակում է «Հորիզոն» գրականական ժողովածվի ստաջին գրքում: Այնուհետև՝ 1924—25 թթ., երբ նա ձեռնարկում է գրել իր «Կյանքի բովից» աշխատությունը, տպագրված տարբերակը վերամշակում և տարբարվածում է ստաջին մասի 8, 9 և 10-րդ գլուխների մեջ:

«Բաֆֆիի կյանքից» տարբերակը մեր օրերում ստաջին անգամ հրապարակվել է հեղինակի Երկերի ժողովածվի 1960—62 թթ. հրատարակության 8-րդ հատորում (տեքստը՝ Հր. Թամբալյանի և Խ. Սամվելյանի, ծանոթագրությունները՝ Ա. Ինճիկյանի):

Արտատպված է «Հորիզոն» ժողովածվից, գիրք ստաջին, Թիֆլիս, 1895, էջ 114:

1. «Կաշճերի» ստաջին հատորը լույս է տեսել 1883 թ. փետրվարի կեսերին Թիֆլիսում:

2. Խոսքը վերաբերում է Թավրիզի ու Վերին Ագուլիսի դպրոցներում տեղի ունեցած դեպքերի առիթով ծալր առած խոսակցություններին, որի ձեռներեց հրահրողներից մեկն էլ «Մեղու Հայաստանի» լրագիրն էր (տե՛ս այս հատորում Ն. Մելիք-Ջոհրաբյանի «Մանկական հիշողություններ» վերնագրով հուշը, էջ 255):

3. Նկատի ունի «Մեղու Հայաստանի» լրագրում Հայկունու (Եղիշե ըսանաճ Գեղամյանի) հրատարակած «Մատենախոսություն», «Խմ պատախանը» և «Երկրորդ պատախան» վերնագրով հոդվածները (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1883, № 31—37, 39 և 57, 88 և 91, 104—109, 112, 113, 115 և 117):

4. «Մեղու Հայաստանի» լրագրում Հայկունու տպագրած մատենախոսականների դեմ (տե՛ս նախորդ ծանոթագրությունը) «Մշակում» հանդես է գալիս Լեոն (Առաքել Բաբախանյանը), հրապարակելով «Կրիտի-

կան մեր մամուլում» պատասխան հոդվածը (տե՛ս «Մշակ» 1883, № 118, 119): Ավելի ուշ, բանավեճին մասնակցում է նաև Բաֆֆին, Փալատոս ատորագրությամբ «Մշակում» հրապարակելով «Պ. Հայկունու կրիտիկան և «Կայծերը» խորագիրը կրող հոդվածը (տե՛ս «Մշակ», 1883, № 141, 142, 144, 145, 148—150, նաև՝ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հտ. 10, Ե., 1959, էջ 68):

5. «Կայծերի» մասին գրած իր մատենախոսականներում Հայկունին վիպի հերոսներին համեմատում է Ալեքսանդր Երկրորդին սպանող ռուս անարիստոսներ Ժեյլարովի, Կիբալչիչի և Միխայլովի հետ: Միևնույն ժամանակ նա Բաֆֆու և աքսորում գտնվող Չերնիշևսկու հերոսների միջև զուգահեռներ է անցկացնում՝ անողղակի կասկածանքի մթնոլորտ ստեղծելով Բաֆֆու շուրջը (տե՛ս «Մեղու Հայատառնի», 1883, № 39):

6. Բաֆֆու վարժապետ Բելախյանի անունը ոչ թե Հակոբ, այլ Կարապետ է: Ծիրվանգաղեն այս բանը չէր կարող չգիտենալ: Այս դեպքում նա Հակոբ է գրում, հավանաբար, բառախաղի համար:

7. Առաջավոր մտավորականությունը մտադրվել էր Բաֆֆու գրական գործունեության 25-ամյա հոբելյանը տոնել 1884 թ. «Ջատկվա տոներին»՝ ապրիլին: Ամեն ինչ արված էր հանդիսավորությունն ապահովելու համար, երբ իշխանության բարձրագույն հրամանով արգելվում է հոբելյանի կատարումը:

8. Բաֆֆու հասցեին անվայելուչ անվանարկումներ արված են Հայկունու մատենախոսականներում (տե՛ս 3-րդ ծանոթագրությունը):

9. Բաֆֆու ծնողները՝ Մելիք-Միրզան և Ջեյրան խանումը, ունեցել են 14 զավակ: Ծիրվանգաղեի մատնանշած ժամանակամիջոցում զավակներից երկուսը՝ Ավետիքը և Արշակը, վախճանված էին: Բաֆֆին ուներ երկու եղբայր՝ Կարապետ ու Տիգրան, և ինը քույր Գայանե, Խանում, Աշի, Գյուլիսար, Մարիամ, Հուփսիմե, Ալմաստ, Կատարինե և Ջավահիր:

10. 1884 թ. սկզբին Գրիգոր Արծրունու և Բաֆֆու միջև տեղի ունեցած անհամաձայնության պատճառով վերջինս դադարում է աշխատակցել «Մշակին»:

11. Բաֆֆին «Մշակի» մշտական աշխատակիցն է դառնում թերթի հիմնադրման օրվանից, սակայն առանց վարձատրության: 1879 թ., երբ նա Վերին Ազովիսից վերադառնում է Թիֆլիս (կրթ «Մշակը» դարձել էր ամենօրյա), սկսած հուլիս ամսից դառնում է լրագրի մշտապես վարձատրվող աշխատակիցը:

12. Խոսքը վերաբերում է Բաֆֆու կրտսեր եղբորը՝ Արշակին: Վերջինս Թիֆլիսում ուսանելու ժամանակ 1872 թ. վախճանվում է, դժվար կացություն ստեղծելով վիպասանի համար: Այս ծանր ու մղձավանջալիկ վիճակի անմիջական ազդեցության տակ Բաֆֆին գրում է իր

«Ապանդանոց» խորագրով պատմվածքը (տե՛ս Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, Ե., 1957, էջ 203):

13. Գրիգոր Արծրունին արտասահման է մեկնում 1884 թ. հուլիսի կեսերին:

14. Արծրունու արտասահման մեկնելուց հետո Բաֆֆին, Գ. Միրզոյանը և Ն. Սրելյանը որոշում են միացյալ ուժերով վերահաստատակել «Մշակը»: «Մշակի» խմբագիր հաստատվելու համար նրանք Գ. Միրզոյանի անունով խնդրագիր են ներկայացնում Պետերբուրգ: Վերջինիս համարելով անբարեհույս անձնավորություն, իշխանությունները մերժում են նրանց խնդրանքը:

15. Ժիլիպուս Վարդանյան (1842—1916) — Թարգմանիչ, գրական-հասարակական գործիչ, մանկավարժ, լրագրող: Թարգմանել է Ֆ. Շմիդտի համառոտած «Խլիականն», ու «Ռդիսականը», «Բենիամին Ֆրանկլինը», «Գևորգ Վաշիգտոնը», 2. Դիկկենսի «Դավիթ Կուպերֆիլդը», Ֆ. Կուպերի «Վերջին Մոնիկանը», Ֆ. Շիլլերի «Ալվազակները» և այլն: Աշխատակցել է «Մեղու Հայաստանի», «Փորձ», «Արձագանք», «Նոր-Դար» պարբերականներին: Ընդարձակ նամակագրական կապեր է ունեցել հայ գրողների՝ Բաֆֆու, Պատկանյանի և այլոց հետ:

16. Շիրվանզադեն սխալվում է, Բաֆֆու «Մինն այսպես, մյուսն այնպես» ստեղծագործությունը մնացել է անավարտ:

17. Շիրվանզադեի հետ չպետք է համաձայնել. «Կայծերի» երկրորդ հատորի ուշացման գլխավոր պատճառը հեղինակի նյութական միջոցների տղությունն ու գրաբնչական խտություններն էին:

18. Բաֆֆու «Ղարիբ մշեցին» վիպակը հրատարակվել է «Արձագանքի» 1886 թ. 30—32, 34—38 համարներում:

19. Շիրվանզադեն չափազանցում է. Բաֆֆու «Սամվել» վեպից անտիպ են մնացել չորրորդ գիրքն ու ծանոթագրությունները, որոնց ընդհանուր ծավալը ծայրահեղ դեպքում չէր կարող անցնել հրատարակված գրքի մեկ քառորդից:

20. Ալեքսանդր Մելիք-Ազարյանց ("...1922) — Թիֆլիսում բնակություն հաստատած մեծահարուստ: Լինելով վիպասան Մերենցի աղջկա՝ Թագուկի ամուսինը, սերտ կապերի մեջ էր գրական շրջանների հետ, մասնակցում էր Թիֆլիսի մշակութային կյանքին, անհրաժեշտության դեպքում նյութական ու բարոյական օգնության ձևեր էր մեկնում Բաֆֆուն: Վերջինիս մահվանից հետո Ալեքսանդր Մելիք-Ազարյանը դառնում է նրա որդիներից մեկի խնամակալը:

21. Ստեփան Զեդինսկի (1847—1904) — Գյուղատնտես, մանկավարժ, ազգագրագետ, լրագրող: Պաշտոնավարել է Երևանի պրոգիմնազիայում որպես ուսուցիչ և տեսուչ: Նդել է «Պասկ» և «Առողջապահական թերթ» պարբերականների գրաբնիչը: 1880-ական թվականների սկզբին տեղափոխվել է Թիֆլիս: Հեղինակ է մի շարք գյուղատնտեսա-

կան ու ազգագրական ուսումնասիրությունների: Աշխատակցել է «Ազգագրական հանդեսին», «Մշակին» ու «Արձագանքին»: 1882 թ. բարձրացել է Արարատի գագաթը: Եղել է Բաֆֆու մերձալորագույն բարեկամներից մեկը:

22. Երբ 1887 թ. լույս է տեսնում Բաֆֆու «Կայծեր» վեպի երկրորդ հատորը, Ղ. Աղայանը «Աղբյուր» ամսագրում հանդես է գալիս «Խմատացած տպավորությունը պ. Բաֆֆու «Կայծերի» երկրորդ հատորից» խորագիրը կրող գրախոսականով («Աղբյուր», 1883, № 8—9, էջ 73, տե՛ս նաև Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1963, էջ 143): Քննադատելով «Կայծերի» հերոսներին, Աղայանը անողղակիորեն սուղեր է գցում նաև վեպի հեղինակի վրա: Այս հանգամանքը ստիժ է դառնում, որ Բաֆֆին հանդես գա «Արձագանքում» «Պարոն Ղ. Աղայանի հասցեին» հոդվածով և «Բրուսի շունը» ոտանավորով (տե՛ս «Արձագանք» 1887, № 39, էջ 615, 619, նաև Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 151 հ. 8, էջ 104): Աղայանը սրան պատասխանում է «Առ պ. Բաֆֆի» հոդվածով և «Առակ ընդ ստակին» գրվածքով («Աղբյուր», 1887, № 11, երկրորդ բաժին, էջ 107, 109, նաև Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1963, էջ 154): Կարդալով Աղայանի պատասխանը, Բաֆֆին նորից հանդես է գալիս «Պարոն Ղ. Աղայանի հասցեին» հոդվածով ու «Դիտար և էշերը» ոտանավորով («Արձագանք», 1887, № 47—48, էջ 741, նաև Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 152, հ. 8, էջ 106):

23. Ծիրվանգաղեն փոքր-ինչ սխալվում է. Բաֆֆու բնակարանի վրա գիշերային հարձակման դեպքը տեղի է ունեցել 1883 թ. դեկտեմբերի 11-ի գիշերը, մինչդեռ Բաֆֆու հոբելյանը կատարվելու էր 1884 թ. ապրիլին:

24. Բաֆֆու բնակարանի վրա գիշերային հարձակման մասին լուրը հրապարակվել է «Մշակի» 195-րդ (13 դեկտեմբերի 1883 թ.) և «Մեղու Հայաստանի» լրագրի 117-րդ համարներում (15 դեկտեմբերի 1883 թ.):

25. Ծիրվանգաղեի մատնանշած անապարհորդությունը Փոքր Ասիայում (= Արևմտյան Հայաստանում) Բաֆֆին կատարել է 1857 թվականին, երբ նա ոչ թե տառնվեց, այլ քսանինիզ տարեկան էր:

26. Բաֆֆու «Խլվիկը» և «Մալբին» ոչ թե առանձին վեպեր են, այլ «Սալբին» «Խլվիկի» վերամշակված ու հարստացված տարբերակն է:

27. Խոսքը «Վիպագրությունը ուսահայերի մեջ» հոդվածի մասին է, որը լույս է տեսել հեղինակի մահվանից հետո, «Մշակում», 1889 թ. (Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 155, 634):

28. Խոսքը Բաֆֆու «Պ. Հայկունու կրիտիկան և «Կայծերը» խորագրով հոդվածի մասին է, որը հրապարակվել է «Մշակի» 1883 թ. 141, 142, 144, 145 և 148—150-րդ համարներում (Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 68):

29. Ծիրվանգաղեն նկատի ունի Րաֆֆու «Մամուլի անբարոյակա-  
նությունը» խորագրով հոդվածը հրապարակված «Մշակում», 1888, № 25,  
տե՛ս նաև Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 59:

## **Ղազարու Աղայան**

### **ԻՄ ԿՅԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԵՊՋԵՐԸ (Էջ 69)**

Րաֆֆու և Աղայանի ծանոթությունը տեղի է ունեցել 1869 թ. հուն-  
վարի 6-ին, Երևանում: «Այդ օրվանից,— գրում է Աղայանը,— ես ու նա  
ծանոթություն կապեցինք իրարու հետ, առանց որևէ սերտ բարեկամու-  
թյան»: Աղայանը այստեղ որոշ փաստեր աչքաթող է անում: 80-ական  
թվականների սկզբում նրանց ծանոթությունը դառնում է մտերմական և  
նա իր «Սառնամանիք» վերնագրով ոտանավորը նվիրում է «Կայծերի»  
հեղինակին: Հետագայում, 1887 թ., «Կայծերի» երկրորդ հատորի շուրջը  
ծագած բանավեճի առիթով նրանց հարաբերությունները սրվում են:  
Ավելի ուշ, երբ ծայր առած բանավեճը երկուսի կողմից էլ վեր է ածվում  
անձնական վիրավորանքի, առիթ է դառնում նրանց հարաբերությունների  
խզման:

Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրությունը, որտե-  
ղից առնված է Րաֆֆուն վերաբերող այս հատվածը, առաջին անգամ  
հրատարակվել է «Մուրճ» ամսագրում 1893—94 թթ: Նույն թվականին  
աշխատությունը լույս է տեսել նաև առանձին գրքով:

Մեր օրերում Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» ունեցել է  
երեք հրատարակություն. Երկերի ժողովածու, 1939—40 թթ. հրատարակու-  
թյան երրորդ հատորում, 1956 թ. առանձին գրքով («Իմ կյանքից» վեր-  
նագրով) և 1962—63 թթ. երկերի չորսհատորյա հրատարակության չոր-  
րորդ հատորում:

Հատվածը արտատպված է՝ Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հտ. 4,  
Ե., 1963, էջ 425—430 (տեքստը և ծանոթագրությունները Աս. Ասատրյա-  
նի):

1. Մովսես Վարդանյան— Թիֆլիսում Աղայանի հետ եղել է ձուլա-  
րանի աշակերտ, հետո դարձել է Հնգփաճյանցի տպարանի գլխավոր գրա-  
շարը: 1869 թ. Աղայանի հետ մեկնում է Էջմիածին և շուրջ մեկ տարի  
Մաշո Աթոռի տպարանում աշխատում է որպես գրաշար: Աղայանի մեկ-  
նելուց հետո դառնում է տպարանապետ: 1880-ական թվականներին գա-  
լիս է Թիֆլիս և այլոց ընկերակցությամբ հիմնում է տպարան ու ծա-  
վալում հրատարակչական լայն գործունեություն:

2. Աղայանը և Մովսեսը Երևան են հասնում 1869 թ. հունվարի 5-ի  
երեկոյան:

3. Զբօրհների հանդեսը Լուսավորչական եկեղեցում տեղի է ունենում հունվարի 6-ի ստավոտյան:

4. Աղայանի և Բաֆիու ծանոթությունը տեղի է ունեցել 1869 թ. հունվարի 6-ին:

5. Մեզ չհաջողվեց պարզել, թե Բաֆիին Մովսես Վարդանյանի հետ ինչ «մոտիկ ծանոթություն է» ունեցել:

6. Աղայանը «Արություն և Մանկե» վեպը գրել է 1865 թ. Պետերբուրգում: Լույս է տեսել 1867 թ. Թիֆլիսում:

7. Մեզ չհաջողվեց պարզել, թե Պետրոս Քաթանյանը և՛րբ և ի՞նչ պարագաներում է «Խլվիկիլը» հանձնել Աղայանին: Անհավանական չէ, որ Աղայանը վեպը Պ. Քաթանյանից ստացած և կարդացած լինի Ստ. Նազարյանի վերադարձնելուց հետո՝ 1868 թ. վերջերին:

8. Բաֆիին վեպը Ստ. Նազարյանին է ուղարկում 1868 թ. օգոստոսի վերջերին կամ սեպտեմբերի սկզբին: Ա. Ավթանդիլյանին Թիֆլիսից ուղարկված 24-ը օգոստոսի թվակիր համակում Բաֆիին գրում է. «Իմ «Խլվիկիլը» զարմանալի ընդունելություն գտավ տեղի հասարակությունեն. քանի՜-քանի՜ գիշերներ եմ եղել առանձին-առանձին ժողովներ նորա ընթերցանության համար: Նազարյանցեն համակներ եմ ստանում, նա պահանջել էր իմ գիրքը Մոսկվա ուղարկելու, որ տպվի յուր «Լուսավորչական» օրագրի մեջ, որ միտք ունի այս տարի ի լույս ընծայել: Բայց քանի օր տակավին կուշացնեմ նորա ուղարկելը, պատճառը՝ շատերը ցանկանում են կարդալ» (Բաֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 525):

Անհա Բաֆիին «Սայբի» վեպի 1911 թ. վիեննական հրատարակության առաջաբանում այն միտքն է հայտնում, որ Բաֆիին ցանկացել է «Խլվիկիլը» տպագրել նաև «Հյուսիսասիայում»: «1863 թվականին,— գրում է նա,— այս վիպասանությունը (Բաֆիին) ուղարկում է Մոսկվա Ստ. Նազարյանի «Հյուսիսասիայ» ամսաթերթում մաս-մաս տպագրելու համար, սակայն, դժբախտաբար, դեռ այդ վեպի տպագրությունը չսկսած՝ դադարեցվում է հիշյալ ամսաթերթը զանազան փոփոխիկների շնորհիվ...» խոսքը «Հյուսիսասիայի» 1863 թ. ժամանակավորապես դադարելու մասին է (տե՛ս Բաֆի, Սալբի, Վիեննա, 1911, էջ 9):

Որքան էլ ճշմարտանման թվա այս հավաստիացումը, միևնույն է, Անհա Բաֆիին գտնվում է թյուրիմացության մեջ, եթե չասե՞նք ավելին:

Ցավալին այն է, որ նրա կարծիքը տարիներ շարունակ գայթակղության քար է դարձել Բաֆիիագիտության համար և «Սալբի» վեպին անդրադարձողները գրեթե բոլորն էլ տուրք են տվել այս անհիմն վարկածին:

9. Իրականում Բաֆիին Աղայանից մեծ էր ոչ թե յոթ, այլ ութ տարով: 1869 թ. սկզբին, երբ նրանք հանդիպում են, Բաֆիին ոչ թե 35, այլ 37-ի մեջ էր:

## Ավագ Ավթանդիլյան

## ՊԱՏԿԵՐՆԵՐ ՐԱՖՖԻԻ ԿՅԱՆՔԻՑ (Էջ 75)

Րաֆֆու և Ավագ Ավթանդիլյանի (1838—1917) ծանոթության վավերական թվականը հայտնի չէ: Ամենայն հավանականությամբ՝ նրանք միմյանց հանդիպել են 1858—59 թթ. ընթացքում Սալմաստում: 1859—60 թթ. նրանց ծանոթությունը վեր է ածվում մտերմության ու շարունակվում է մինչև վիսպասանի վախճանվելը: «Մեր երիտասարդության օրերից սկսյալ,— գրում է Ավթանդիլյանը իր հուշերում,— մինչև նրա մահը եղել ենք խիստ մտերիմ բարեկամներ»: Իսկ երբ նրանք գտնվել են տարբեր վայրերում, ապա նրանց բարեկամությունը շարունակվել է մտերմիկ համակարգությամբ: Այդ մտերմության բարոյական կողմն էլ պարտավորեցնում է Ավթանդիլյանին ու շարժախի՝ ծառայում սույն հիշողությունները հրապարակ հանելուն: «Եվ որպեսզի,— գրում է նա,— քանքարաթագույց չլինեմ, այսօր ես դրանք հավաքելով՝ հրապարակ եմ հանում»:

Ներքին պարտավորվածությունից բացի, նման հորդորներով նրան դիմում են շատերը, որոնց թվում նաև Րաֆֆու այրին՝ Աննա Րաֆֆին: 1890 թվականին թավրիզաբնակ Խաչատուր Տեր-Ջաքարյանին հղած համակում Աննա Րաֆֆին գրում է. «Պ. Ավագին գրեցի, որ աշխատի մի թեթև նկարագրություն գրի հանգուցյալի Պարսկաստանի կյանքից, որովհետև նա դեռ վաճառականության ժամանակից ծանոթ էր» (տե՛ս Զարեցի անվան գրականության և արվեստի թանգարան, Րաֆֆու ֆոնդ, № 40): Զնայած այս բոլորին, հուշերի երկունքը երկար է տևում, հղացումից մինչև հրապարակ գալը անցնում է շուրջ տասներկու տարի:

1903 թ. մարտի 11-ին «Մշակի» ներքին լուրերի բաժնում հրապարակվում է մի այսպիսի հայտարարություն. «Թավրիզեցի Ավագ-խան Ավթանդիլյանը՝ «Մշակի» վաղեմի թղթակիցներից մեկը, ուղարկել է մեզ իր մի մեծ աշխատությունը՝ «Պատկերներ Րաֆֆիի կյանքից» վերնագրով: Դա մեր հանգուցյալ տաղանդավոր վիպագրողի կենսագրությունն է, որի մեջ մանրամասն նկարագրված են մահավանդ Րաֆֆիի մահկությունը, պատանեկությունը, կյանքը հայրենիքում ու ճանապարհորդությունները Պարսկաստանում և Թուրքիայում. այդ հետաքրքրական աշխատությունը,— ասված է հայտարարության վերջում,— մենք կըսկընենք տպագրել «Մշակի» մեր վաղվա համարից»: Եվ իրոք, «Մշակի» 1903 թ. մարտ-ապրիլ համարներում հրապարակվում են Ավթանդիլյանի հուշերը: Մեկ տարի անց, 1904 թ. կեսերին, Ալեքսանդրապոլում մի ոմն վերցնում է «Մշակի» համարներն ու առանց հեղինակի համաձայնության, բավականին անփույթ հրատարակում առանձին գրքով:

1905 թ. օգոստոսի 18-ի թվակիր համակով Ալթանդիլյանը Համբարձում Առաքելյանին բողոքում է այս ապօրինության դեմ: Հայտնելով, որ շատերը խնդրել են նրա համաձայնությունը հուշերը առանձին գրքով հրատարակելու համար, Ալթանդիլյանը ավելացնում է. «Ես ոչ մեկին իրավունք չտվի, որովհետև ես մտադիր էի նորանոր հավելումներով ավելի ճոխ և ճկարկներով հրատարակել: Ժամանակ անցնելուց ես մի պարոն իմ սեփական աշխատությունը, առանց ինձնից իրավունք խլեցողի, վերցրել է և Ալեքսանդրապոլի մի ետ ընկած տպարանում տպել է ու առանց բաշխելու վաճառում է» (տե՛ս Զարեհյի անվան գրականության և արվեստի թանգարան, Հ. Առաքելյանի ֆ., № 418): Թե ինչով է վերջացել այս պատմությունը, մեզ չհաջողվեց պարզել: Ցավալիմ այն է, որ Ալթանդիլյանը, որքան մեզ հայտնի է, չի կարողացել «նորանոր հավելումներով» հրատարակել Րաֆֆու մասին իր հիշողությունները:

Տեքստը տպագրության պատրաստելիս հիմք ենք ընդունել Ալթանդիլյանի հրատարակած տարբերակը (տե՛ս «Մշակ», 1903, № 54—56, 59—62, 66, 67, 70, 78—81) և ըստ այդմ ուղղել Ալեքսանդրապոլի 1904 թ. հրատարակության մեջ թույլ տրված սխալները:

1. Այս բնագրանը վերցված է Ռ. Պատկանյանի «Երկու բանաստեղծ» վերնագրով ոտանավորից (տե՛ս Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 1, Ե, 1963, էջ 65):

2. Մկրտիչ Խրիմյանը Մելիք-Միրզայի տանը հյուրընկալվել է 1860 թ. նոյեմբերին և 1861 թ. հունիսին:

3. Րաֆֆու մայրը՝ Ջևրան խանումը, վախճանվել է 1904 թ. հոկտեմբերի 28-ին, Փայաջուկում:

4. Րաֆֆին, ինչպես վկայում է նրա վարժապետ Կարապետ Բելախյանը, «Թիֆլիս է քերվում 1847 թվականին (տե՛ս «Նոր-Դար», 1888, № 67, էջ 2): Եթե հավատանք Ալթանդիլյանի այն վկայությանը, թե նա Թիֆլիս է եկել 16 տարեկան հասակում, ապա Րաֆֆին ծնվել է ոչ թե 1835, այլ 1831 կամ, որ ավելի ճիշտն է, 1832 թվականին:

5. Թիֆլիսում Րաֆֆին մնացել է շուրջ ինը տարի (1847—1856): Սկզբում նա սովորում է Կարապետ Բելախյանի գիշերօթիկ դպրոցում, այնուհետև 1852 թ. ընդունվում է գիմնազիա և 1856 թվականին հոր ճնշմամբ անախարտ թողնելով ուսումը, վերադառնում է Պարսկաստան՝ վարելու նրա առևտրական գործերը:

6. Այստեղ Ալթանդիլյանը հեճկում է ոչ թե վավերագրի, այլ հիշողության վրա, և սխալ է որոշում Րաֆֆու տարիքը: Թիֆլիսից 1856 թ. Սալմաստ վերադարձող Րաֆֆին ոչ թե քսանմեկ, այլ քսանչորս տարեկան էր:

7. Րաֆֆու այս շրջանի գործունեության վերաբերյալ շատ սակավ տեղեկություններ են հասել մեզ:

8. Սալմաստից Մուշ ճանապարհորդությունը Րաֆֆին կատարել է 1857 թ. սեպտեմբերին:

9. Ավթանդիլյանը սխալվում է. 1857 թվականին Արևմտյան Հայաստան ուղևորվելիս Րաֆֆին քանակինգ տարեկան էր:

10. Ս. Կարապետի տոնախմբությունը կատարվում է տարվա ընթացքում երեք անգամ. Վարդավաթին (հուլիսի սուաջին կես), Վերափոխում ս. Աստվածածնի տոնին (օգոստոսի երկրորդ կիրակի) և Խաչվերաց տոնին (սեպտեմբերի կես):

11. Ա. Ավթանդիլյանը Րաֆֆու գրական գործունեության սկիզբը համարում է 1858 թվականը՝ նկատի ունենալով «Արծվի Վասպուրական» ամսագրի նույն թվականի 4-րդ համարում (էջ 109) հրապարակված նրա «Քարեջան վանահայր Մկրտիչ Վ. Խրիմյան» վերնագրով հոդվածը: Ինչ վերաբերում է «Հյուսիսասիային», ապա այս ամսագրում Րաֆֆու սուաջին ստեղծագործությունը («Աղթամարս վանքը») լույս է տեսել 1860 թ. նոյեմբերի ամսատետրակում:

12. Տե՛ս Ծիրվանգաղեի հուշերի 26-րդ ծանոթագրությունը:

13. «Սալբի» վեպի սուաջին հատորը տպագրվել է 1911 թ., Վիեննայում, Աննա Րաֆֆու հրատարակությամբ:

14. Պարսկերենից Րաֆֆու կատարած որևէ թարգմանություն մեզ չի հասել: 1887 թ. «Արձագանքում» հրապարակված մի հաղորդագրությունից հայտնի է, որ Րաֆֆին «Քեշկյուլ» լրագրի խմբագիր պ. Ջալան էֆենդի Ունաի-Ջադեի աջակցությամբ... սկսել է պարսկերենից հայերենի թարգմանել պարսկական հոշակավոր «Լեյլի Մեջլում» սիրավեպը («Արձագանք», 1887, № 39, էջ 615):

15. ա) **Բելք Վոլեմար** — Գերմանացի նշանավոր արևելագետ, ուրարտագետ: Բիմիկոսի պաշտոնով ծառայել է Գետաքեկի պղնձահանքերում: 1891 թվականին ճամփորդել է Գանձակի ու Երևանի ճանահանքերում, Վանի ու Էրզրումի վիլայեթներում: Արևմտյան Հայաստանում հայտնաբերել ու վերծանել է մինչ այդ անհայտ 7 ուրարտական արձանագրություն:

բ) **Լեման Հաուպտ** (1861—1938) — Գերմանացի հայտնի արևելագետ, որը զգալի ախանջ է մտնել ուրարտագիտության մեջ:

1898—99 թթ. Վոլդեմար Բելքը և Լեման Հաուպտը ուրարտագիտական հետազոտություններ են կատարում Թուրքիայում, Պարսկաստանում ու Արևմտյան Հայաստանում, զբաղվում են հատկապես Թուրքա-Վալեի պեղումներով: Արևմտյան Հայաստանի սահմաններում՝ Վասպուրականում, նրանք հայտնաբերում ու վերծանում են մինչ այդ անհայտ շուրջ 60 բնակավայր արձանագրություն: Կատարված հետազոտական աշխատանքների ու պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերի մասին

նրանց ներկայացրած զեկուցագրի թարգմանությունը տե՛ս «Հանդես ամսօրյա», 1899, № 9, էջ 281:

16. Ալթանդիլյանը թվականի հարցում սխալվում է. Աբել եպիսկոպոս Մխիթարյանը Ատրպատականի թեմակալ առաջնորդ է եղել 1860 թ. մարտից մինչև 1861 թ. մայիսը ընկած ժամանակահատվածում: Աբել Մխիթարյանը գալով Թալրիզ, ոչ միայն սերտ մտերմություն է հաստատում Բաֆֆիի հետ, այլև «մի ամբողջ ձմեռ» մնում է նրա տանը (տե՛ս Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 391): Բաֆֆին լավ համարում ուներ նրա գիտելիքների վերաբերյալ:

17. Խոսքը Աբել Մխիթարյանի «Անուշաան ի զերեվարս» վերնագրով ստեղծագործության մասին է, որը 1860 թ. կեսերին Ստ. Նազարյանի ջանքերով լույս է տեսնում Մոսկվայում, Լազարյանների տպարանում:

18. 1868 թ. հունվարի 1-ին Փայաջուկից Բաֆֆու գրած այս նամակը Ալթանդիլյանը մեջ է բերում կրճատումներով ու որոշ փոփոխություններով, ամբողջությամբ՝ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 522:

19. 1868 թ. հունվարի 20-ին Փայաջուկից Բաֆֆու գրած այս նամակը Ալթանդիլյանը մեջ է բերում կրճատումներով ու որոշ փոփոխություններով, ամբողջությամբ՝ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 524:

20. 1868 թ. օգոստոսի 24-ին Թիֆլիսից Բաֆֆու գրած այս նամակը Ալթանդիլյանը մեջ է բերում կրճատումներով ու որոշ փոփոխություններով, ամբողջությամբ՝ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 525:

21. 1869 թ. մարտի 22-ին Թալրիզից Թեմրան Բաֆֆու գրած այս նամակը Ալթանդիլյանը մեջ է բերում կրճատումներով ու որոշ փոփոխություններով, ամբողջությամբ՝ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 526:

22. 1869—71 թթ. կարիքի մեջ գտնվող Բաֆֆին աշխատանքի է մտնում Գրիգոր Նասիբյանի, սույա նաև Մելիք-Հախնազարյանների պատրաստի հագուստեղենի խանութում (տե՛ս այս հատորում «Բաֆֆին Մելիք-Հախնազարյանների տանը» վերնագրով հուշը, էջ 187):

23. Ալթանդիլյանը սխալվում է. Բաֆֆին Գ. Արծրունու հետ ծանոթացել է ոչ թե 1872, այլ 1871 թ. Անկերեքիմ Արծրունու տանը, «Մշակի» նախապատրաստական շրջանում, խմբագրական ժողովներից մեկի ժամանակ (տե՛ս այս հատորում Գ. Արծրունու հուշը, էջ 169):

24. Ալթանդիլյանը սխալվում է. Անդրեաս արքեպիսկոպոս Հովհաննիսյանը Ատրպատականի առաջնորդ է եղել ոչ թե 1875-ին, այլ 1874 թ. մայիսի 29-ից (Թալրիզ է եկել 1874 թ. հունիսի 13-ին):

25. Սահակ եպիսկոպոս Սաթունյանը Ատրպատականի թեմակալ է եղել 1851 թ. ապրիլի 5-ից մինչև 1857 թ. ապրիլի 22-ը, ուստի և չէր կա-

րող 1850 թվականին դպրոցը կառուցել: Վերջինս դպրոցի շենքը կառուցել է 1851 թվականին:

26. Մանկավարժ, գրող, լրագրող, գրական-հասարակական գործիչ, հետազայում «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելյանը (1855—1918) երիտասարդական տարիներին բնակություն էր հաստատել Թավրիզում, աշխատում էր տեղի գրադարան-ընթերցարանում և եռանդուն մասնակցում էր պարսկահայոց հասարակական կյանքին:

27. Մեջբերումը կատարված է Ազբար Ադամի «Երգ ի վերայ ամերման և խորասուզման Ակոտի գեղջ ի 23 հունիսի 1840 ամի» վերնագրով ոտանավորից, տե՛ս «Ջնար Հայկական», Ս. Պետերբուրգ, 1853, էջ 526:

28. Թեև հուշերի սկզբում Ավթանդիլյանն այն տեսակետն է հայտնում, որ Րաֆֆին ծնվել է 1835 թվականին, սակայն խոստովանելով, որ նա իրենից մեծ էր 6 տարով, անողոգակիորեն ընդունում է 1832 թ. ձևված լինելու փաստը: Ասպես՝ հայտնի է, որ Ավթանդիլյանը ծնվել է 1838 թ., այս դեպքում՝ 1838—6=1832:

29. Գ. Մ. Փելշտմայլյանի «Հուրը սիրո» վերնագրով բանաստեղծությունից առնված սույն քառատողը մեջ է բերված «Աղթամարա վանքը» ողբերգության մեջ (տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 290):

30. Րաֆֆու «Բիբի Շարաբանի» պատմվածքը տպագրվել է 1876 թ. հունվարի 22-ին «Մշակի» երկրորդ համարում: Ավթանդիլյանը Թեհրանի արևապաշտ Գեորգիների մասին Րաֆֆուն պատմել է (1875 թ.) այն ժամանակ, երբ պարտեզում ծաղիկներ կային (նշանակում է ամռանը կամ աշնանը), իսկ «Մշակի» համարները Րաֆֆին նրան կարող էր տալ լավագույն դեպքում 1876 թ. հունվարի վերջերին: Այս պարագայում պետք է վերապահորեն ընդունել Ավթանդիլյանի այն հավաստիացումը թե պատմելուց մի քանի շաբաթ հետո Րաֆֆին նրան է հրամցրել «Մշակի» համարները:

31. Թավրիզի դպրոցում տեղի ունեցած անախորժ միջադեպի մասին տե՛ս այս հատորում, Թավրիզի Արամյան դպրոցի նույն շրջանի աշակերտ Մելիք-Զոհրաբյան Նազարի «Մանկական հիշողություններ» վերնագրով հուշը (էջ 255):

32. Նկատի ունի Հայկունու, Պ. Սիմեոնյանի ու Սպ. Սպանդարյանի հոդվածները, տե՛ս «Մեղու Հայաստանի» 1883, № 7, 11, 17: № 31—37, 39: № 55, 57, 59, 60, 62, 64, 66, 68, 70: № 104—109, 112, 113, 115 և 117:

33. Մասնանշված հոդվածը «Դավրիժու ընթերցարանի ընկերություն» վերնագրով, Մի հանդիսական ստորագրությամբ հրապարակվել է «Մշակի» 1877 թվականի 19-րդ համարում (մարտի 17):

34. Ստրպատականի այդ ժամանակաշրջանի հոգևոր առաջնորդ Անդրեաս արքեպիսկոպոս Հովհաննիսյանը 1876 թ. ընթացքում ընդհարվե-

յով տեղի «սաղա-հոգաբարձուների» հետ, հույն թվականի սեպտեմբերի 27-ին թողնում է Թավրիզն ու մեկնում Էջմիածին: 1877 թ. հուլիսի 4-ին կաթողիկոսի հրամանով կրկին վերադառնում է Թավրիզ և մնում այնտեղ մինչև 1878 թ. հուլիս ամիսը:

35. 1877 թ. հոյեմբերի 2-ին Ագուլիսից Րաֆֆու գրած այս համակր Ավթանդիլյանը մեջ է բերում կրճատումներով ու որոշ փոփոխություններով, ամբողջությամբ՝ **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 553:

36. 1879 թ. դեկտեմբերի 29-ին Թիֆլիսից Րաֆֆու գրած այս համակր Ավթանդիլյանը մեջ է բերում կրճատումներով ու որոշ փոփոխություններով, ամբողջությամբ՝ **Րաֆֆի**, Երկերի ժողովածու հ. 10, էջ 557:

37. Րաֆֆին Թիֆլիսում վերջնական բնակությունն է հաստատում 1879 թ. կեսերին:

38. Նկատի ունի Հայկունու գրած «Մատենահիտասականները», տե՛ս 32-րդ ծանոթագրությունը:

39. Րաֆֆու հողաթմբի վրա մահաբձան կանգնեցվել է 1898 թ. սեպտեմբերի 27-ին, Գ. Բաշինջաղյանի նախագծով:

## Գրիգոր Արծրունի

### ՀԱՎՈՐ ՄԵԼԻՔ-ՀԱՎՈՐՅԱՆ (ԷՋ 169)

Ինչպես հայտնի է դառնում Գ. Արծրունու պատմածից, Րաֆֆին վերջինիս հետ ծանոթանում է 1871 թ., Սեմեքերիմ Արծրունու տանը կազմակերպված գրական կրկններից մեկի ժամանակ:

«Մշակի» հրատարակության ստաջին շրջանում՝ 1872—75 թթ., Րաֆֆու և Արծրունու հարաբերությունը վեր է ածվում մտերմության: 1875—79 թթ. Թավրիզից (Արամյան դպրոցում աշխատելու ժամանակ) և Վերին Ագուլիսից Րաֆֆին թղթակցում է «Մշակին»: Այս մտերմությունը չէր խանգարում, որ նրանք հասարակական-քաղաքական հարցերի հանդեպ ունենային տարբեր տեսակետ:

1879 թ., երբ Րաֆֆին վերադառնում է Ագուլիսից, Արծրունին նրան առաջարկում է դառնալ «Մշակի» մշտական աշխատակիցը: Րաֆֆին սիրով ընդունում է այդ հրավերը, ստանալով համապատասխան վարձատրություն:

1883 թ. վերջերին «Մշակի» հրատարակության կազմակերպչական հարցերի շուրջ նրանց միջև կայանում է ներքին համաձայնություն, սակայն, սովորի ուշ, Արծրունին անտեսում է այս հանգամանքը և գործում է պայմանավորվածությանը հակառակ: Այս պատճառով՝ սկսած 1884 թ.

ակզբից, նրանց հարաբերությունը գնալով արվում է, և ի վերջո՝ Րաֆֆին դադարում է աշխատակցել «Մշակին»:

1885 թ. հուլիսին Արծրունին վերադառնալով արտասահմանից՝ դիմում է Րաֆֆուն և խնդրում առաջվա նման աշխատակցել «Մշակին»: Րաֆֆին 18-ը հոկտեմբերի թվակիր նամակով պատասխանում է Արծրունուն, որ և շարադրում է իր տեսակետները ինչպես «Մշակից» հեռանալու, այնպես էլ Արծրունու հանդեպ իր ունեցած վերաբերմունքի մասին: «Դեմ լինելով Արծրունու միանձնյա ղեկավարությանը, Րաֆֆին առաջարկում է հիմնել խմբագրական մարմին՝ կազմված «Մի խումբ համերաշխ անձիքներից, որոնք թե՛ բարոյապես և թե՛ նյութապես կապված լինեն լրագրի խմբագրության հետ»: Այս նամակից պարզ է դառնում, որ Րաֆֆին ցանկանում է ունենալ հույնախի իրավունքներ, ինչպիսիք ունեն Արծրունին: Նա այլևս չէր կարողանում հանդուրժել Արծրունու վարվելաձևը և պահանջում էր, որ վերջինս ցած դնի իր «դիկտատորի գավազանը» և ընկերների հետ ընկերաբար վարվի: «Դուք,— գրում է Րաֆֆին,— պետք է հավասար բաժանեք թե՛ արդյունքը, թե՛ իրավունքը և թե՛ պարտականությունները» (տե՛ս **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 620):

Սույն հատվածը վերցված է Րաֆֆու մահվան առիթով 1888 թ. ապրիլի 28-ի «Մշակում» Գ. Արծրունու հրատարակած «Հալոք Մելիք-Հակոբյան» հոդվածից («Մշակ», 1888, № 48, էջ 1):

1. Խոսքը Րաֆֆու «Աղթամարա վանքը» խորագրով աշխատության մասին է: Հրատարակվել է «Հյուսիսատիպ», 1860, № 11, էջ 391 (**Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 280):

2. Պատանի Րաֆֆին Թիֆլիս է բերվել 1847 թ. ամռանը: Նախ սովորել է Կարապետ Բելախյանի գիշերօթիկ դպրոցում, ապա՝ Թիֆլիսի ռուսական (պետական) գիմնազիայում:

3. Րաֆֆին դուրս է եկել Թիֆլիսի գիմնազիայի վեցերորդ դասարանից, 1856 թվականին:

4. Գ. Արծրունին «Մշակը» հրատարակելու թույլտվությունը ստացել է 1871 թ. օգոստոսի վերջերին:

5. **Սենեքերիմ Արծրունի** (1847—1918) — Իրավարան, լրագրող, թատերական ու հասարակական գործիչ, դրամատուրգ: Ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Բ. Նավասարդյանի ու Գ. Սունդուկյանի հետ մասնակցել է Կովկասի բարեգործական ընկերության հիմնադրման աշխատանքներին: Գրել է «Տփլիսեցի ապետները» վերնագրով պիեսը: Գործարար մասնակցություն է ունեցել Արևելահայ թատրոնի սկզբնավորմանը: Պ. Ադամյանի համար ջարդամանել է Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունը: Սկզբում գործակցել է «մշակականներին», հետո դարձել է մղի «մեղվական»: Աշխա-

տակցել է «Կոունկ», «Արարատ», «Մեղու Հայաստանի» պարբերականներին:

6. 1870—71 թթ. Բաֆֆին հաշվապահի պաշտոնով աշխատում էր Մելիք-Հախանդարյանների պատրաստի հագուստեղենի խանութում:

7. Բաֆֆին «Մշակում» հրապարակելու համար Գ. Արծրունուն ներկայացրել է «Սալբի» վեպի «Խլվիկ» վերնագրով տարբերակը:

8. Գ. Արծրունու հիշատակած աշխատությունը՝ «Պարոն Բաֆֆի ուղևորությունից Պարսկաստանում» խորագրով, տպագրվել է «Մշակի» 1872—73 թթ. համարներում, Ալեքսանդր Բաֆֆի ստորագրությամբ (տե՛ս «Մշակ», 1872, № 3, 5, 7, 9, 13, 16, 18, 23, 27, 29, 33, 35, 38, 41, 43, 46, 50, 1873, № 3, 12, 19, 23 և 27: Տե՛ս նաև Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 310):

9. Խոսքը Բաֆֆու «Փունջի» երկրորդ հատորում գետեղված «Անմեղ վաճառք», «Ուխտյալ միանձնուհի», «Տնային փեսա» և «Հարեմ» (սուաշին մաս) ստեղծագործությունների մասին է:

10. Նկատի ունի Ալեքսանդր Երկրորդ ցարի՝ 1877 թ. ապրիլի 12-ին ռուս-թուրքական պատերազմի առիթով հրապարակած մանիֆեստը: Այստեղ պատերազմը սկսելու շարժառիթը դիտվում է քրիստոնյա ժողովուրդներին մահմեդական Թուրքիայի տիրապետության լծից ազատագրելու խնդիրը:

11. Արծրունին գիտակցորեն շրջանցում է իրողությունը, ընդգծելով, որ Բաֆֆին հեռանալով «Մշակից» ընկնում է ծայրամեղությունների մեջ և սկսում է գրադվել «այնպիսի գրական ձևերով, որ ամենևին հատուկ չէ իր տաղանդին և որին... նա անպատրաստ էր. դա պատմական բռնանք էր»: Արծրունու խոսքում սուկա է ոչ միայն անսքող միտումնավորություն, այլև փաստական անճշտություն: Բաֆֆին «պատմական բռնանքով» գրադվել է նաև «Մշակին» աշխատակցելու շրջանում: «Դավիթ Բեկ» պատմավեպը նա հրատարակել է «Մշակի» 1880—1882 թթ. համարներում:

12. Նկատի ունի «Փորձ» հանդեսի 1877/78 թվականի 3-րդ համարում հրատարակված՝ «Շահապարհորդություն Թիֆլիզից մինչև Ագուլիս» երկը (Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 487):

13. «Սամվելը» նախ հրատարակվել է «Արձագանք» շաբաթաթերթի 1886 և 1887 թթ. համարներում, ապա՝ 1888 թ. լույս է տեսել նաև ստանձին գրքով:

14. Բաֆֆին, իբրև ուսուցիչ, Թավրիզում պաշտոնավարել է 1875 թ. օգոստոսի կեսերից մինչև 1877 թ. մայիս-հունիս ամիսները, իսկ Վերին Ագուլիսում՝ 1877 թ. հոկտեմբերից մինչև 1879 թ. մայիսի կեսերը:

**Արփիար Արփիարյան**

ՐԱՖՖԻՆ ԵՎ ՀԱՅ ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ (Էջ 177)

Րաֆֆու և Արփիար Արփիարյանի ծանոթությունը ընդարձակ պատմություն չունի: «Մշակի» պոլսաբնակ թղթակից Հայկակը (Արփիար Արփիարյանը), իբրև կաթողիկոսական ընտրության պատվիրակ, Պոլսից Էջմիածին ուղևորվելիս՝ 1884 թ., մի քանի օրով դադար է առնում Թիֆլիսում: ԴՎորցովայա փողոցով անցնելու ժամանակ Արփիարյանը պատահաբար հանդիպում է Րաֆֆուն, մոտենում է ու ծանոթանում հետը: Թե՛ այդ ծանոթությունը հետագայում ինչպիսի ընթացք է ունեցել, համապատասխան փաստերի բացակայության պատճառով դժվարանում ենք ասել: Մի հանգամանք սակայն հատկանշական է. այս ծանոթությունից հետո Արփիարյանը սկսում է մեծ հարգանք տածել Րաֆֆու հեղինակության հանդեպ: Վերադառնալով Կ. Պոլիս, կարճ ժամանակ անց նա «Մասիս» պարբերականում սկսում է հրապարակել «Րաֆֆի և հայ վիպասանություն» խորագրով հոդվածաշարը («Մասիս» շքթ., 1884, № 3734, 3736, 3737, 3739): Զգոհանալով իր գրածից՝ հոդվածի վերջում Արփիարյանը ավելացնում է. «Թերևս անիթ ունենանք օր մը, երբ պարգաները ներեն, ավելի ընդարձակ ուսումնասիրություն մը ներկայացնել»: Որքան հաշտնի է, Արփիարյանը Րաֆֆու մասին խոստացած «ընդարձակ ուսումնասիրությունը» չի գրել: Ինչ վերաբերում է Րաֆֆուն, ապա նրան խանդավառել էր երիտասարդ Հայկակի «ոգեկից» բնավորությունը: Րաֆֆին վերջինիս դարձնում է իր վեպի՝ «Կալեդերի», հերոսներից մեկը: Բաղելում Ասլանին նամակ քերող անձանոթ երիտասարդ Արփիարը նույն ինքը Վեներտիկի Մխիթարյան վարժարանում ուսում ստանալով Արփիար Արփիարյանն էր:

Րաֆֆու մասին Արփիար Արփիարյանի գրած սույն հուշը կազմում է «Րաֆֆի և հայ վիպասանություն» հոդվածաշարի Գ. գլուխը: Որոշ կրճատումներով արտատպված է՝ «Մասիս» շաբաթաթերթից: 1884, № 3736, էջ 192:

1. Արփիար Արփիարյանը Թիֆլիս է ժամանել 1884 թ. ապրիլի 25-ին:

2. Խոսքը Կովկասի ցենզորական կոմիտեի շաքրային գրաբնիչ Մանասիրցի մասին է:

3. 1880-ական թթ. սկզբին Թուրքիայում գրաբնությունը համաժամաբար մեղմ էր, հետո է, որ խստանում է:

4. Նկատի ունի լրագրող, գրական ու հասարակական գործիչ, խմբագիր Միխայիլ Նիկոֆորովիչ Կատկովին (1818—1887), որը «Ռուսկի վեդոմոստ» թերթի միջոցով պաշարում էր առաջավոր մտայնության

դեմ: Կյանքի վերջին շրջանում դարձել է միապետական ռեակցիայի հեղափոխական ու խորհրդատուն:

5. Հողվածի շարունակության մեջ հիշված է, թե Բաֆֆին իր գրական գործունեության 25-ամյակի առիթով որտեղից ինչ նվերներ է ստացել:

### Ալեքսանդր Քալանթար

#### ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՐԱՖՖԻԻ ՄԱՍԻՆ (Էջ 182)

Կրթությամբ գյուղատնտես, գրական ու հասարակական գործիչ, լրագրող, 1893—1913 թթ. «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարի (1834—1913) ու Բաֆֆու ծանոթությունը տեղի է ունեցել 1879 թ. Թիֆլիսում:

Բաֆֆու մահվան 25-ամյակը լրանալու կապակցությամբ «Մշակի» շուրջը համախմբված մտավորականությունը 1913 թվականի ապրիլին որոշում է կազմակերպել «Երեկույթ ի հիշատակ ազգային այդ նշանավոր գրողի» և «Մշակի» զլխավոր աշխատակցի: Լրագրի 77-րդ համարում խմբագրությունը կոչ է անում պատշաճ հանդիսախորությամբ նշել Բաֆֆու մահվան 25-ամյա տարեդարձը: Ապրիլի 25—27-ը ընկած ժամանակամիջոցում «Մշակի» խմբագրատանը, հայոց գրական ընկերության դահլիճում ու գրական գեղարվեստական սալոնում անց են կացվում գրական-երաժշտական երեկույթներ՝ նվիրված Բաֆֆու մահվան 25-ամյա տարեդարձին: Մտավորականներից նրանք, ովքեր հանդիպել ու շփում են ունեցել Բաֆֆու հետ, շտապում են իրենց հարգանքի տուրքը մատուցել մեծ վիպասանին: Զեկուցումներով ու հուշերով հանդես են գալիս Ալ. Ծիրվանզադեն, Հ. Թումանյանը, Լեոն, Ս. Քալանթարը, բժիշկ Բ. Նավասարդյանը, Հ. Առաքելյանը, Հ. Տեր-Գրիգորյանը, Ավ. Եզեկյանը, Մ. Չմշկյանը, Հ. Տեր-Մարկոսյանը, Տ. Նազարյանը, Օրբել Հախնազարյանը և ուրիշներ: Երեկույթին մասնակցում է նաև Փարիզի գրանդ օպերայի երգիչ Ա. Ծառ-Մուրադյանը: Գրական-երաժշտական բաժնում կատարում են Բաֆֆու ստեղծագործություններից և այլն:

«Հիշողություններ Բաֆֆու մասին» վերնագրով սույն հուշը «Մշակի» խմբագիր Ա. Քալանթարը նախապես կարդում է Բաֆֆու տարեդարձին նվիրված վերոհիշյալ երեկույթում և ապա հրապարակում է «Մշակում»:

Սրտատուպված է «Մշակ», 1913, № 88, էջ 1—2:

1. Եթե ճիշտ է, որ նրա և Րաֆֆու ծանոթությունը տեղի է ունեցել «Խեղճի» ձեռագիրը կարդալու առիթով, ապա այդ ծանոթությունը տեղի է ունեցել 1879 թ. դեկտեմբերի 24-ին:

2. Հ. Տեր-Մարկոսյանը (1858—1913), Հ. Տեր-Գրիգորյանը (1851—1931), Ա. Մամյանը և Մ. Սաղաթելյանը «Մշակի» աշխատակիցներն ու թղթակիցներն էին:

3. Բալազետի հրդեհի տեսարանը, որի մասին խոսում է Րաֆֆին, տրված է «Խեղճը» վեպի Ա. գլխում (տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1955, էջ 76):

4. Խոսքը «Հայ երիտասարդություն» վերնագրով հոդվածի մասին է, որը տպագրվելով «Մշակում» (տե՛ս 1879, № 192—195, 197—199, 201—208, նաև Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1958, էջ 388, 537), մեծ ազդու է հարուցում՝ տեղի տալով մի շարք թեր ու կողմ կարծիքների («Մշակ», 1879, № 217, էջ 2):

5. Խզելով իր հարաբերությունը Գ. Արծրունու հետ, սկսած 1884 թ. Րաֆֆին այլևս չի հաճախում «Մշակի» խմբագրատուն:

6. Կյանքի վերջին շրջանում «Պատմական վեպերի մի շարք տալու» Րաֆֆու ունեցած «հրապույրների» մասին վկայում է նաև Փ. Վարդանյանը (տե՛ս այս ժողովածուում, էջ 203):

7. Րաֆֆու հուղարկավորությունը տեղի է ունեցել 1888 թ. ապրիլի 29-ին:

8. Րաֆֆու ձեռագիր աշխատությունների մասին չափազանցված լուրեր իրոք որ եղել են: Իրականում նրա «գրական արժեք» ունեցող ստեղծագործություններից անտիպ էին մնացել «Մինն աչապես, մյուսն այնպես», «Զահրումար» և «Սալբի» վեպերը, որոնք հաջորդաբար տպագրվել են 1890, 1895 և 1911 թթ., ըստ որում, «Սալբի» Բ և Գ հատորները մնացել են անտիպ: Դրանց որտեղ կամ ինչ լինելը տակավին հայտնի չէ:

#### ՐԱՖԳԻՆ ՄԵԼԻՔ-ՀԱՍՆԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ՏԱՆԸ (ԷՋ 187)

1913 թվականի ապրիլին, երբ տոնվում էր Րաֆֆու մահվան 25-ամյա տարեդարձը, «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարյանը խմբագրատուն է կանչում Ալեքսանդր Մելիք-Հախնազարյանին և հարցազրույց է ունենում նրա հետ, որը և «Րաֆֆին Մելիք-Հախնազարյանների տանը» վերնագրով հրապարակվում է «Մշակում» Ա.[լեքսանդր] Ք.[ալանթար] ստորագրությամբ:

Հուլի արտատպված է «Մշակից», 1913, № 88, էջ 2:

1. Րաֆֆին Հախնազարյանների օգնությանն է դիմում 1870 թվականի սկզբին:

2. Հախնազարյանների տանը Րաֆֆին մնում է ոչ թե երեք, այլ մեկ և կես տարի, 1870 թ. սկզբից մինչև 1871 թ. վերջերը:

3. Ավեչնիկովի տանը Րաֆֆին ապրել է ավելի ուշ: Ինչ վերաբերում է տեղափոխմանը, ապա Հախնազարյանների մոտից նա տեղափոխվել է Արծրունու ներքին քարվանսարան (տե՛ս այս ժողովածուում Հ. Տեր-Գրիգորյանի հուշը, էջ 190):

4. Րաֆֆու մասին Գրիգոր Արծրունուն պատմել էր իրավաբան Սեմեքերիմ Արծրունին (տե՛ս այս ժողովածուում Գ. Արծրունու հուշը, էջ 169):

5. Ալեքսանդր Մելիք-Հախնազարյանը այս փաստը պատմել է հիշում: Արծրունու և Րաֆֆու հանդիպումը տեղի է ունեցել բոլորովին ուրիշ պարագաներում (տե՛ս Գ. Արծրունու հուշը, էջ 169):

6. Րաֆֆին այս շրջանում գրել է «Զահրումար» խորագրով վեպը (տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1955, էջ 6):

### Հովհաննես Տեր-Գրիգորյան

ԿՏՈՐՆԵՐ ՈՒՂԵՂՈՒՄՍ ԿՈՒՏԱԿՎԱԾ ՊԱՇԱՐԻՅ (ԷԶ 190)

Դերասան, լրագրող, հասարակական ու մշակութային գործիչ, «Մշակի» քարտուղար Հովհաննես (Վանո) Տեր-Գրիգորյանը (1851—1931), ինչպես հաճախում է իր հուշերում, Րաֆֆուն ճանաչել է դեռևս 1872 թվականից, բայց նրանք մտերմանում են 1873 թվականին, երբ վերջինս կապվում է «Մշակի» խմբագրական աշխատանքների հետ: Ավելի ուշ, երբ Րաֆֆին գտնվում էր Թալրիզում ու Ագուլիսում, իր համարյա բոլոր թղթակցությունները Հ. Տեր-Գրիգորյանի հասցեով էր ուղարկում և նրա միջոցով էր կարգավորում ուր և ինչպես հրատարակելու հարցերը:

1913 թվականին, երբ «Մշակի» շուրջը համախմբված մտավորականությունը նշում է Րաֆֆու մահվան 25-ամյա տարեդարձը, ապրիլի 25-ի նիստում Հ. Տեր-Գրիգորյանը կարդում է «Կտորներ ուղեղումս կուտակված պաշարից» հուշը, որը հաջորդ օրը հրապարակվում է «Մշակում»:

Մի ուրիշ անգամ, 1918 թվականին, Հ. Ստաբլյանի մահվան լաուսուների աոիթով, Հ. Տեր-Գրիգորյանը «Մշակում» հրատարակած իր հիշողության մեջ, նորից է անդրադառնում Րաֆֆու անձնավորությանը և հրապարակում է «Փլավ Րաֆֆիի մոտ» վերնագրով հատվածը:

«Կտորներ ուղեղումս կուտակված պաշարից» հուշագրության առաջին չորս հատվածը արտատպված է «Մշակի» 1913 թվականի 89-րդ համարից, իսկ վերջինը՝ «Մշակ», 1918, № 163:

1. Երեմիա Արծրունին ներքին բարվանաարայի կառավարումը որդուն՝ Գրիգոր Արծրունուն է հանձնում 1873 թվականին, ուստի և Բաֆին 1873 կամ 1874 թվականից բնակվում էր այդ բարվանաարայի սենյակներից մեկում:

2. Հոր և որդու գծաորությունը տեղի է ունեցել 1874 թվականին, ճիշտ այդ ժամանակ էլ Բաֆին նոր բնակարան է վարձում Սիոնի նրբանցքում:

3. Հուշագիրը սխալվում է. Բաֆին Սիոնի նրբանցքում ապրել է ոչ թե մինչև Ագուլիս, այլ մինչև Թավրիզ մեկնելը, այսինքն՝ 1875 թ. հունիսի սկիզբը:

4. Մեսսի Սերգեյ Սիմեոնովիչ (1845—1883) — Գրական բնադատ, մշակութային ու հասարակական գործիչ: 1869—1883 թթ. եղել է վրացական «Էրոտեա» («Ժամանակ») լրագրի խմբագիրը: Խմբագրել է նաև «Սաստիլո գազերի» («Գյուղական թերթ») պարբերականը:

5. Հուշագիրը դեպքերի ժամանակագրությունը շփոթում է. իր և Բաֆի ծանոթությունը տեղի է ունեցել 1872 թ. ընթացքում, երբ Գ. Չմշկյանը, Մ. Ամերիկյանը և Ստ. Պալասանյանը տակավին չէին հեռացել «Մշակից»: Ինչ վերաբերում է «Խաչագողի հիշատակարանի» ընդարձակ տարբերակի («առաջին տետրակի») ընթերցմանը, ապա այն չէր կարող Ամերիկյանի ներկայությամբ տեղի ունենալ, որովհետև այդ տարբերակը ստեղծվել է 1873 թ. հետո, երբ Մ. Ամերիկյանը այլևս Թիֆլիսում չէր:

6. Բաֆի «Խները» վեպը «Մշակում» սկսել է հրատարակվել 1880 թ. փետրվարից (տե՛ս «Մշակ», 1880, № 30—42, 44—47, 49, 51, 55—57, 59—61, 63, 66, 69—71, 73—76, 83—86, 88, 90—92):

7. «Մարդասպանը» Հ. Տեր-Գրիգորյանի առաջին շրջանի պատմվածքներից է, որի բովանդակությանը Մ. Ամերիկյանը ծանոթ էր նախքան հրապարակվելը: Այն լույս է տեսել «Մշակի» 1874 թ. № 3—4-ում:

8. Խոսքը վերաբերում է Միհրդատ Ամերիկյանի լուսանկարին, որը ժամանակին հրապարակվել է «Տարագում» (տե՛ս 1912, № 5, էջ 94):

9. «Փլավ Բաֆի մոտ» հատվածը չի կազմում ճախորդների փաստական շարունակությունը և հատուրում պետք է տեղադրվեր «Թերթիկներ իմ հիշողությունից» ընդհանուր վերնագրի տակ, քայք քանի որ Բաֆի վերաբերող այս դրվագը օրգանապես առնչվում է ճախորդների, նպատակահարմար գտանք աճջատել «Թերթիկներ...» վերնագրով հուշագրության ընդհանուր շղթայից և տեղադրել «Կտորներ ուղղումնս կուտակված պաշարից» խորագրի տակ, իբրև վերջին ենթագլուխ:

10. Խոսքը հետագայում «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելյանի (1855—1918) մասին է, որը այդ շրջանում աշխատում էր Թավրիզի Արամյան դպրոցում:

11. Այս հուշը գրված է 1918 թ., երբ Անդրկովկասում իրոք որ «ծանր ժամանակներ» էին:

### Փիլիպոս Վարդանյան

#### ՐԱՖՖԻԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ (էջ 203)

Թարգմանիչ, մանկավարժ, գրական ու հասարակական գործիչ, լրագրող Փիլիպոս Վարդանյանը (1842—1916) Րաֆֆու մասին հուշեր, իբրև այդպիսիք, չի գրել...

1876 թ. սկզբին Փ. Վարդանյանը մտադրվելով մեծահարուստ Մկրտիչ Սանասարյանի աջակցությամբ Պետերբուրգում հրատարակել «Լումա» անունով մի ամսագիր, նամակով դիմում է Թավրիզում բնակվող Րաֆֆուն և խնդրում աշխատակցել իր հանդեսին: Այս առաջարկը Րաֆֆին ընդունում է «ամենայն սիրով, որովհետև,— գրում է նա,— Ռուսաստանում մի օրինավոր ամսագրի հրատարակությունը խիստ վաղուց իմ բաղձանքների առարկան է եղել» (տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 546):

Րաֆֆին ոչ միայն քաջալերում ու խրախուսում է Փ. Վարդանյանին նախաձեռնությունը, այլև խոստանում է կանոնավոր թղթակցել նրա հիմնադրելիք ամսագրին: Ավելի ուշ, Րաֆֆին նրան է ուղարկում «Խաչագողի հիշատակարանը» վեպի առաջին հատորը, խոստանալով ուղարկել նաև շարունակությունը: Այս և համանման այլ առիթներով նրանց նամակագրական կապը, ինչպես վկայում է Փ. Վարդանյանը, շարունակվում է նաև հետագայում:

1892 թ. Փ. Վարդանյանի մեջ հղանում է Րաֆֆուց իր ստացած նամակները տպագրելու ցանկություն և նա «Րաֆֆիի նամակները» վերագրով մի փոքրիկ ներածականի հետ իր ստացած նամակները հրապարակում է «Արձագանք» լրագրում (տե՛ս 1892, № 34—35, նաև Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 545): Արտատպված է «Արձագանքից»:

1. Ըստ նախնական ծրագրի, Րաֆֆին իր ստեղծագործությունները պետք է հրատարակեր տասը հատորով՝ «Փունջ» ընդհանուր խորագրով: 1872 թ. «Փունջի» հատորներից շատերը արդեն պատրաստ էին, ուստի դժվար է ասել, թե հատկապես ինչ է կարդացել Րաֆֆին Փ. Վարդանյանի համար: Անհտվանական չէ, որ խոսքը վերաբերում է բանաստեղծություններին («Փունջ», առաջին հատոր):

2. Ըստ Փ. Վարդանյանի՝ «Արձագանքում» արած հավաստիացման, Րաֆֆին վերջինիս գրել է «մի քանի նամակներ», որոնցից մեզ են հա-

սել երեքը (տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 545):

3. Չ. Վարդանյանը շփոթում է. 1884 թ. Րաֆֆին Նագորնայա փողոցում չի ապրել: Այդ շրջանում նա բնակվում էր Սողոմակում, Սվեչնիկովի տանը:

4. Րաֆֆու այս մտադրությունը չի իրականացել: Չգրված վեպի մասին անհարկ կա նաև Ալեքսանդր Քալանթարի հիշողություններում (տե՛ս էջ 182):

5. Ծ. Վարդանյանի այն հավաստիացումը, թե Րաֆֆին իրեն «անգաղար առաջարկել» է «միասին մի ամսագիր» հրատարակել, փոքր-ինչ թեակսան է:

### Քևորգ Չմշկյան

#### ԹՈՒՈՒՑԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ (Էջ 205)

Հալ ռեալիստական թատրոնի հիմնադիր, անվանի դերասան, լրագրող Քևորգ Չմշկյանի (1837—1915) ու Րաֆֆու ծանոթությունը տեղի է ունեցել, հավանաբար, 1871 թ. վերջերին, «Մշակի» նախապատրաստական շրջանի խմբագրական ժողովներից մեկում: Հայտնի է, որ «Մշակի» շուրջը համախմբված մտավորականության մի մասը՝ «համալսարանական» կոչվող խումբը, կարճ ժամանակ հետո գծովում է Գ. Արծրունու հետ և հեռանում է լրագրից: Գ. Չմշկյանը գտնվում էր հեռացողների խմբում, իսկ Րաֆֆին՝ ընդհակառակը: Այս հանգամանքի պատճառով Չմշկյանի ու Րաֆֆու հարաբերությունների բնույթը փոխվում է...

Գ. Չմշկյանը Րաֆֆու մասին հուշ, իբրև այդպիսին, չի գրել: 1889 թ. Գ. Արծրունին «Մշակում» հրապարակում է «Մշակի» գոյության կարճատև պատմությունը՝ վերնագրով հոդվածը, ուր ոչ միայն տիրացուներ է համարում «Մշակից» հեռացողներին, այլև մասամբ անտեսում է նրանց մատուցած ծառայությունը: Ի պատիվս դրա, Գ. Չմշկյանը «Արձագանքում» տպագրում է իր 1883 թ. գրած «Թոռուցիկ հիշողություն» վերնագրով բանավիճային բնույթ կրող հուշը: Այստեղ Չմշկյանը այլևայլ հարցերի հետ անդրադառնում է նաև Րաֆֆու «Մշակի» սկզբնաղբիւրման շրջանի գործունեությանը և Արծրունուց վարձ առանալու խնդրին: Չմշկյանի վերաբերմունքը այս հարցում պարտավորեցնում է Պ. Պոռչյանին, բանավեճի առիթով գրած 26-ը սուրբիի նամակում («Արձագանք», 1890, № 10), ուղղումներ մտցնել Չմշկյանի ասածի մեջ՝ ցրելու համար նրա անաբող կողմնակալությունը:

2մշկյանի գրած այս հուշը մեր օրերում՝ «Մշակ» լրագրի հիմնադրումը» վերնագրով, արտատպվել է թատերագետ Ս. Մելիքսեյանի կազմած Գ. 2մշկյանի «Իմ հիշատակարանը» խորագրով գրքում (Երևան, 1953, էջ 108):

Արտատպված է «Արձագանքից», 1890, № 9, էջ 11:

1. Խոսքը «Մշակի» խմբագրական ժողովների մասին է, որ տեղի էին ունենում Գ. Արծրունու տանը՝ Գ. Սունդուկյանի, Պ. Պողոջանի, Վ. Շահվերդյանի, Մ. Ամերիկյանի, Ստ. Պալասանյանի, Ա. Հովհաննիսյանի, Ս. Արծրունու, Պ. Իզմիրյանի, Գ. Եվանդուկյանի, Գ. 2մշկյանի և Ս. Քիչմիշյանի մասնակցությամբ:

2. Տե՛ս Գրիգոր Արծրունու հուշերի № 8 ծանոթությունը:

3. «Մշակը» հրատարակության ստաջին մի քանի ամսում ուներ ընդամենը 50 բաժանորդ: Մինչև տարվա վերջը բաժանորդների թիվը հասնում է 500-ի (տե՛ս Լ. Դանիելյան, «Մշակի» քառասունամյակը, Թիֆլիս, 1912, էջ 36):

4. Միհրդատ Ամերիկյան (1843—1879) — Հայտնի դերասան, գրական ու թատերական գործիչ, լրագրող, հանդես է եկել պատմական ողբերգություններում և Գ. Սունդուկյանի պիեսներում: Գ. 2մշկյանի հետ ակտիվորեն պայքարել է հայ թատրոնում ռեալիզմի արմատավորման համար: «Մշակի» սկզբնավորման շրջանում աշխատում էր որպես լրագրի սրբագրիչ, միաժամանակ «Հարուն» ստորագրությամբ հրատարակելով Թիֆլիսի հայության կենցաղն ու բարքերը մերկացնող ֆելիետոններ:

5. Գ. 2մշկյանը սխալվում է, Բաֆֆին «Մշակի» մշտական, վարձատացող աշխատակիցն է դարձել 1879 թվականից, երբ Միհրդատ Ամերիկյանը հեռացել էր ասպարեզից, մինչդեռ վերջինս հենց սկզբից վարձատրվում էր իր կատարած սրբագրական աշխատանքի համար: «Լրագրի սրբագրիչն էր,— գրում է Լեոն,— տաղանդավոր դերասան Միհրդատ Ամերիկյանը: Միայն սա էր, որ իր այս աշխատության համար ստանում էր Արծրունուց մի շատ չափավոր ռոնիկ» (Լեոն, Գրիգոր Արծրունի, հ. 2, Թիֆլիս, 1903, էջ 50): Նույն բանը հաստատում է նաև Պ. Պողոջանը (Երկերի ժողովածու, հ. 7, Ե., 1964, էջ 424):

### Տիգրան Նազարյան

ՐԱՖՖԻ — ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ (էջ 207)

«Աղբյուրի» և «Տարագի» խմբագիր Տիգրան Նազարյանի (1858—1926) ու Բաֆֆու հարաբերությունների մասին մեզ հասած տեղեկու-

թղւումներ շատ չեն, իսկ եղածը հստակ պատկերացում չի տալիս նրանց բարեկամութիւնն բնույթի վերաբերյալ: «Աղբյուրի» լույս ընծայման առաջին համարից Րաֆֆին դառնում է այս ամսագրի մշտական թղթակիցը մինչև 1885 թ. կեսերը: «Աղբյուրում» է տպագրւում Րաֆֆու «Մշակ» բանաստեղծությունը, «Ջրաբերդ» պատկերը, «Պարույր Հայկազն» վեպիկը, «Կեղծերի» «Վարագ» գլուխը, թարգմանություններ Տուրգենևից, Հյուգոյից ու Հայնեից և այլն: Հետագայում, երբ սրվում են Գ. Արծրունու և Րաֆֆու հարաբերությունները, վերջինիս հանդէպ ստանություն է նկատւում նաև Տ. Նազարյանի կողմից, և Րաֆֆին դադարում է աշխատակցել «Աղբյուրին»: Ավելի ուշ, 90-ական թվականների սկզբին, Րաֆֆու «Էրենն այսպես, մյուսն այնպես» վեպը «Տարագում» հրատարակելու և ապա առանձին գրքով տպագրելու առիթով ոչ հաճելի փոխհարաբերություն է ստեղծւում Աննա Րաֆֆու և Տ. Նազարյանի միջև: Հավանաբար, հենց այս փաստերով էլ պայմանավորված է այն կողմնակալ վերաբերմունքը, որը իր անբող արտահայտությունն է գտել Տ. Նազարյանի հուշերում:

Տիգրան Նազարյանը իր այս հուշերը 1913 թ. ապրիլին կարդացել է Րաֆֆու մահվան 25-ամյա տարեդարձի առիթով կազմակերպված երեկույթում, ապա հաջորդ օրը հրատարակվել է «Մշակում»:

Արտատպված է «Մշակից», 1913, № 89, էջ 2:

Լ. Րաֆֆու և Ծերենցի միջև անբավականությունն ծագել է 1876 թվականին: Ծերենցի «Թղթակցություն» վերնագրով հոդվածի առիթով (տե՛ս «Արևելյան մամուլ», 1876, № 1, էջ 22): Րաֆֆին «Մշակում» հրապարակում է «Գժառուն» վերնագրով պատասխան հոդված (տե՛ս «Մշակ», 1876, № 14, նաև՝ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 192): Այս առիթով նրանց հարաբերությունը թեև սրվում է, բայց երբեք չի հասնում Տ. Նազարյանի նկարագրած վիճակին:

2. 1884 թ. հուլիսի 11-ից դադարեցնելով «Մշակի» հրատարակությունը, Գ. Արծրունին մեկնում է Ծվեչցարիա: «Մշակի» լույս ընծայման գործը իրենց վրա են վերցնում Րաֆֆին, Գաբրիել Միքայելը և Ներսես Աբեղյանը:

3. Գաբրիել Միքայել (1857—1902) — Մանկավարժ, լրագրող, գրական ու հասարակական գործիչ: Րաֆֆու մերձավոր բարեկամը: Եղել է «Աղբյուր», ամսագրի եռանդուն աշխատակիցն ու նաև ոչ փաստական խմբագիրը: Աշխատակցել է նաև «Մշակ» և «Տարագ» պարբերականներին:

4. Ներսես Աբեղյան (1855—1939) — Լրագրող, գրական ու հասարակական գործիչ, մանկավարժ: Աշխատակցել է «Մշակին»՝ տպագրելով մի շարք անտեսագիտական նշանակություն ունեցող հոդվածներ:

5. Ալեքսանդր Մելիք-Հայկազյան (1811—1890) — Փոթիում բնակվող մեծահարուստ զինվորական (գնդապետ), որի նյութական օժանդակությամբ հրապարակվում է Րաֆֆու «Կայծեր» վեպը:

6. Տ. Նազարյանը փոքր-ինչ այլ կերպ է ներկայացնում փաստերը: Րաֆֆին և Գ. Միրզոյանը թեև ունեին տարբեր նպատակներ, բայց Փոթի էին գնացել միասին, (տե՛ս Ծիրվանգադե, Երկերի ժողովածու, հ. 8, Ե., 1961, էջ 133):

7. Տ. Նազարյանը աղավաղում է փաստերը. Րաֆֆին իր տեսակետները ու պահանջները Արծրունուն հայտնի էր դարձրել նրա արտասահման գնալուց շատ առաջ, 1883 թ. վերջերին:

8. Հուշագիրը տիկին Մարոյի անունից Րաֆֆու պահանջներն ու ցանկությունները հանգեցնում է նյութականի, մինչդեռ իրականում խընդիրը վերաբերում էր «Մշակի» խմբագրության վերակառուցմանը:

9. Րաֆֆու առաջադրած պայմաններն ու ցանկությունները շարադրված են նրա՝ Գ. Արծրունուն ուղղված 1885 թ. հոկտեմբերի 18-ի նամակում (տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 620):

10. Ծերեցնցի թաղումը տեղի է ունեցել 1888 թ. փետրվարի 23-ին:

11. Րաֆֆու հնագիտական հարուստ հավաքածուն բրիտանական թանգարանին վաճառելու նպատակով Աննա Րաֆֆին մեկնում է Անգլիա, իսկ հետո որդիների հետ ընդմիջտ բնակություն է հաստատում Լոնդոնում:

## Սանդրո (Ալեքսանդր Ստեփանյան)

### ԻՄ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ (Էջ 210)

Ալեքսանդր Ստեփանյանը, որ ընկերական ու գրական շրջանում հայտնի էր Սև Սանդրո անունով, յուրատեսակ մտերմություն է ունեցել Պ. Ադամյանի, Գ. Բաշինջադյանի, Ղ. Ադայանի, Րաֆֆու և արվեստի ու գրականության մյուս անվանի գործիչների հետ:

Նրա և Րաֆֆու ծանոթությունը տեղի է ունեցել Թիֆլիսում և որոշ իմաստով կապված է ռուս-թուրքական պատերազմի ընթացքում կամավորական խմբեր կազմող և ռուսական բանակի առաջխաղացմանը օգնող կոմիտեի գործունեության հետ:

Ալեքսանդր Ստեփանյանը մամակագրական սերտ կապի մեջ է եղել Պետրոս Ադամյանի հետ, թղթակցել է «Մշակին» ու մյուս պարբերականներին, 1898 թ. ձերբակալվել ու Ղ. Ադայանի հետ արքայիկ է Նոր-Նախիջևան:

Սույն հուշը արտատպւած է «Մշակից» (1913, № 91, էջ 2—3):

1. Խոսքը Բաֆֆու մահւման 25-ամյակի առիթով 1913 թ. ապրիլի 25—27-ը ընկած ժամանակամիջոցում «Մշակում» հրապարակւած և գրական-գեղարվեստական սալոնում ու Գրական ընկերության դահլիճում պատմւած հուշերի մասին է:

2. Այդ շրջանում վիպասանի Արամ ու Արշակ որդիները և կինը՝ Աննան, բնակւում էին Պարսկաստանում:

3. Որդիներին ու կնոջը Բաֆֆին Թիֆլիս է բերում 1887 թ. նոյեմբերին:

4. Խոսքը «Մշակի» հնագույն աշխատակից, սրբագրիչ ու հրատարակիչ Հովհաննես Տեր-Մարկոսյանի մասին է, որը Արծրունու և Բաֆֆու հարաբերությունները խզվելուց հետո դադարեցրել էր իր այցելությունները Բաֆֆուն:

5. Ինչպես «Խամսայի մելիքություններ» աշխատության կապակցությամբ, այնպես էլ «Դավիթ Բեկի» երկրորդ հրատարակության նկարներն ու կլիշեները Վենետիկում պատրաստել տալու առիթով, Բաֆֆին ու Ալիշանը նամակներ են փոխանակել: Մինչև այժմ այդ նամակներից և ոչ մեկը չի հրապարակվել, ուստի և դրանց բովանդակության, ինչպես նաև գույքային փաստի մասին ստույգ ոչինչ ասել չենք կարող: Ալիշանին Բաֆֆու հղած նամակները, ինչպես նաև գրած պատասխանի սևագրերը, ամենայն հավանականությամբ, պահպանւում են Ալիշանի արխիւում (Վենետիկ, Ս. Ղազար):

6. Բաֆֆու՝ Ալեքսանդր Ստեփանյանին գրած նամակները և նվիրած գրքերը մեզ չեն հասել:

## Գ[արեգին] Ե[նգիբարյան]

ՄԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՐԱՖԻՈՒ ՄԱՍԻՆ (Էջ 212)

Մանկավարժ, քննադատ, իրավաբան, գրական ու հասարակական գործիչ Գարեգին Ենգիբարյանը (1863—1920) Բաֆֆու հետ մտերմություն է հաստատում 80-ական թվականի սկզբին:

1885 թ., երբ Բաֆֆին սկսում է աշխատակցել «Արձագանքին», նրանց մտերմությունը ավելի է խորանում: Այստեղից էլ բխում է այն վերաբերմունքը, որ հանդես է բերում Գարեգին Ենգիբարյանը իր հուշերի մեջ:

Հուշը արտատպւած է «Արձագանք» շաբաթաթերթից (1888, № 13, էջ 240):

1. Ինչպես Աճա Բաֆֆին, այնպես էլ որդիները մի բանի՝ անգամ առիթ են ունեցել հրապարակով խոսելու Բաֆֆու ձեռագիր ժառանգության մասին, բայց դրանց մեջ ոչ մի խոսք չկա Բաֆֆու ձեռքով գրված կենսագրության վերաբերյալ:

2. Խոսքը «Արձագանքի» 1888 թ. 16-րդ համարում, էջ 215, հրապարակված Ծիրվանգադեի «Բաֆֆի» խորագրով անստորագիր հոդվածի մասին է:

3. Հուշագիրը սխալվում է. ուղղակի գիմնագիտական «Ազնվականների դպրոց» է կոչվել մինչև 1829 թ. օգոստոսը (տե՛ս ՎՍՍՀ ՊԻՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 2299, թ 28—29):

4. Հովհաննես Տեր-Հովսեփյանը իրոք որ նշանակալից դեր է կատարել Բաֆֆու կյանքում: Նրա օգնությամբ և անմիջական միջամտությամբ է Բաֆֆին Բելախյանի դպրոցից տեղափոխվում գիմնագիտական:

5. Այստեղ կա որոշ անճշտություն: 1858 թ. Բաֆֆին այլևս աշակերտ չէր: Իրենց առևտրական տան գործերով գալով Թիֆլիս, հա՞թերևս ունեցել է նաև ուսումը շարունակելու և գիմնագիտական ավարտելու ցանկություն: Այս առիթով նա որոշում է տեսակցել գիմնագիտի իր-բարեկամ Հովհաննես Տեր-Հովսեփյանցի հետ, բայց նրան տանը չգտնելով և տեղեկանալով, որ գտնվում է ամառանոցում, մեկնում է Մանգիս, որ և ծանոթանում է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպին:

6. Դեպքը կարող էր տեղի ունենալ միայն 1858 թ. օգոստոսին «Վերք» լույս տեսնելու մասին առաջին հաղորդագրությունը հրապարակվել է 1858, թ. օգոստոսի 2-ին «Մեղու Հայաստանի» լրագրում:

7. Հուշագիրը սխալվում է. Բաֆֆին գիմնագիտից դուրս է լինել ոչ թե 1857, այլ 1856 թվականին:

## Ռուբեն Բերբերյան

### ԱՆՆԱՆԻԱ ՍՈՒԼԹԱՆԱՇԱՀԻ ՊԱՏՄԱԾԸ (Էջ 214)

1938 թ. Ռուբեն Բերբերյանը Բաֆֆու ծննդյան թվականի շուրջը ծագած մի բանավեճի առիթով վերհիշում ու մեջ է քերում այն, ինչ ինքը բառատունհինգ տարի առաջ լսել էր Ամբաս Շահագիզի տանը տեղի ունեցած մի ճաշկերույթի ժամանակ, իր քեռի Անանիա Սուլթանջանից:

Հուշերի այս հատվածը վերցված է Ռ. Բերբերյանի «Երբ էլ ուրեմն, ծնվել Բաֆֆին» խորագրով հոդվածից:

Տեքստը տպագրության է պատրաստված «Հայրենիք» ամսագրում

հրատարակված բնագրի հիման վրա: Տե՛ս «Հայրենիք», 1938. № 8, էջ 115:

1. Անանիա Սուրբանշահ (1832—1898) — Բժշկության դոկտոր, գրական-հասարակական գործիչ: Սովորել է Լազարյան ճեմարանում: Ավարտել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Նախաճարձանի մերձավոր բարեկամն էր, նրա գաղափարական համախոհը: «Հյուսիսատիպյուն» հրատարակած «Հայոց լուսավորիչը» կատակերգությանը (փոխադրություն է) մասնակցում է Նալբանդյանի գլխավորած գաղափարական պայքարին:

2. Բաֆֆու «Աղթամարա վանք» ակնարկը հրատարակվել է «Հյուսիսատիպ» ամսագրի 1860 թվականի 11-րդ ամսատետրակում, էջ 398:

3. Հովհաննես Քաթանյան (1824—1894) — Մանկավարժ, նկարիչ, փորագրիչ: Ապրում և աշխատում էր Պետերբուրգում: Ծանշյանի նրավերով 50-ական թվականների կեսերին գալիս է Թիֆլիս և Ներսիսյան դպրոցում վարում է ավագ վերակացուի պաշտոն մինչև 1858 թ. վերջը: Ծանշյանի հետ ունեցած մտերմության և աշակերտների մեջ «Հյուսիսատիպ» ամսագիրը տարածելու համար հեռացվում է (=հրաժարվում է) պաշտոնից: 1859—61 թթ. աշխատում է Սոսալրուպոլի արքունի գիմնազիայում իրեն նկարչության դասատու: 1862 թ. Ներսիսյան դպրոցի տեսուչ Արզանյանի հեռանալուց հետո նա նորից վերադառնում է Թիֆլիս: Նույն թվականին Նալբանդյանը նրան հռչակում է իր հրատարակելիք աշխարհագրական քարտեզի գործակալը Թիֆլիսում:

4. 1858 թ. Բաֆֆին եղել է 26 տարեկան: Նրան տեսնողները վկայում են, որ նա ունեցել է փոփոխ կազմվածք: Թերևս այս հանգամանքը որոշ դեր է կատարել Քաթանյանի տպավորության հարցում:

5. 1850-ական թվականի վերջերին Թիֆլիսի թեմի ստաճնորդ Սարգիս եպիսկոպոս Ջալալյանը սուր պաշքար է ծավալում Ներսիսյան դպրոցի տեսուչ Խաչատուրյանի ու լուսավորական Պետրոս Ծանշյանի և նրա համախոհների դեմ: Բաֆֆին հարել է Ծանշյան— Քաթանյան թեմի ու մասնակցել է Ջալալյան եպիսկոպոսի դեմ մղվող պայքարին:

6. Հուշերում շարադրանքից աչնպես է ստացվում, որ Բաֆֆին «Աղթամարա վանքը» նրան է հանձնել 1858 թ. Թիֆլիսում՝ անձամբ, մինչդեռ հայտնի է, որ այդ աշխատությունը, մի համակի հետ մեկտեղ Բաֆֆին Փայաջուկից Ատալրուպոլ՝ Հ. Քաթանյանին է ուղարկել 1859 թ. հունվարի 15-ին (տե՛ս Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 521): Շիշտ է 1858 թ. Բաֆֆին նրան դիմել է, բայց ոչ թե «Աղթամարա վանքի» այլ բոլորովին ուրիշ հողվածի առիթով, որը ուղարկվել է «Հյուսիսատիպին», սակայն չի տպագրվել: Տասնամյակներ անց վերապատմելով իր հիշողությունները Հ. Քաթանյանը մոռացության է տվել միմյանցից տարբեր. բայց իրար հաջորդող երկու դեպքերի մանրամասները:

Մյուս կողմից «Աղթամարա վանքը» «Հյուսիսսփայլում» տպագրվելու փաստը հետադարձ ներգործություն է ունեցել նրա հիշողության վրա և մոռացվել ու անտեսվել է, որ «Աղթամարա վանքը» նա ստացել է ավելի ուշ՝ Ստավրոպոլում: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս մեր «Աղթամարա վանքը» և «Հյուսիսսփայլի» խմբագիրները հոդվածը՝ «Սովետական գրականություն», 1984, № 11, էջ 132:

7. Ըստ Ռ. Բերբերանի Ս. Ծահագիզը այն կարծիքն է հայտնել, որ իր և Րաֆֆու տարիքների միջև առանձնապես մեծ տարբերություն չի եղել: Քանի որ Սմբատ Ծահագիզը ծնվել է 1840 թվականին, ուստի նա պաշտպանել է Րաֆֆու՝ 1837 կամ 1840 թվականին ծնված լինելու տեսակետը:

8. Կան Րաֆֆու 1832 թ. ծնված լինելու տեսակետը հաստատող ավելի հիմնավոր կովաններ, քան այդ կարող է տալ որևէ տարիքային համեմատություն կամ հիշողություն: 1888 թ. Րաֆֆու թաղման հանձնաժողովի հսկողությամբ «Մշակի» մայիսի 7-ի համարում հրապարակվում է մի հաղորդագրություն, ըստ որի «Րաֆֆին ծնվել է Պարսկաստանի Սալմաստ գավառի Փալաշուկ գյուղում 1832 թվականին...» («Մշակ», 1888. № 52, էջ 2):

### Ղևոնդ Աթանասյան

#### ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Էջ 216)

Մանկավարժ, դերասան, գրական ու հասարակական գործիչ Ղևոնդ Զաֆանա Աթանասյանը (1839—1919 աշխարհական անունը Նահապետ) սույն հիշողությունները գրել է 1913 թ. ապրիլի 27-ին Երևանում, Րաֆֆու մահվան 25-ամյակի առիթով և ուղարկել է «Մշակ» լրագրին: Մեզ անհայտ պատճառով «Հիշողությունները» լրագրում չի հրատարակվել և ձեռագիրը մնացել է «Մշակի» արխիվում:

Ղևոնդ Աթանասյանը Հավթվանում Րաֆֆու հետ իր ունեցած հանդիպմանը ավելի ընդհանուր գծերով անդրադարձել է նաև հուշերի գրքում (անոխյա աշխատություն, տետր 2-րդ, էջ 89, պահպանվում է Զարեհի անվան գրականության և արվեստի թանգարանում՝ չմշակված նյութերի մեջ): Նկատի ունենալով, որ «Մշակին» ուղարկված տարբերակը ունի ավելի լայն ընդգրկում, նպատակահարմար գտանք սույն ժողովածուի մեջ զետեղել ոչ թե հուշերի գրքում եղած, այլ «Մշակին» ուղարկված տարբերակը:

Արտատպւած է՝ ՀՊԿՊ արխիւ, «Մշակի» բաժին, ֆոնդ 227, ց. I, գործ 324, ք 1—3:

1. Հուշագիրը շփոթում է. «Աղթամարա վանքը» պատմւածք չէ, ակնարկ է:

2. «Ձա՛յն տո՛ւր, ո՛վ ծովակ» բանաստեղծությունը վերցւած է «Աղթամարա վանք» աշխատության շարունակությունը կազմող «Ամեն տեղ տիրած խորին լուռություն» սկսւածքով չափածո հատվածից:

3. Մկրտիչ Խրիմյանը Գարեգին Սրվանձտյանի, Հրաչյա Սևիկյանի ու Հաջի Միքայելի ուղեկցությամբ 1860 թ. նոյեմբերին գալիս է Կովկաս, որպէսզի Վարագա ժառանգավորաց դպրոցի և «Արծաթի Վասպուրական» ամսագրի հրատարակման համար հանգանակություն հավաքի: Խրիմյանը 1861 թ. կեսերին անավարտ թողնելով իր առաքելությունը Հրաչյա Սևիկյանի հետ վերադառնում է, իսկ Գ. Սրվանձտյանն ու Հաջի Միքայելը շարունակելով իրենց առաքելությունը Ղարաբաղում. Գանձակում ու Թիֆլիսում, աշնան սկզբին գալիս են Երևան, Նախիջևանի և Զուլֆայի վրայով Վան մեկնելու համար:

4. Բունիաթյանների քարվանսարայը ոչ մեծ, ընդհանուր հաշվառումից դուրս, իջևանատուն էր հին Երևանում:

5. Հալթվանում Բաֆֆու հետ Ղևոնդ Աթանասյանի ունեցած հանդիպման մի այլ տարբերակ գետեղված է հուշագրողի որդու՝ Սալ-Մանի (Աշոտ Աթանասյան) հուշերում: Քանի որ այստեղ կան փաստական լրացուցիչ, թեև փոքր, բայց արժեքավոր մանրամասնություններ, ուստի նպատակահարմար գտանք այդ հատվածը մեջ քերել ամբողջությամբ:

### Հորս հանդիպումները Բաֆֆու հետ

«Հասցր երբ 1861 թվին Գարեգին Սրվանձտյանի հետ Կովկասից (Երևանից) Վան, Խրիմյանի մոտ ուսանելու էր գնում, իր թողած ճամփորդական հուշերի մեջ այսպես է նկարագրում իր հանդիպումը Բաֆֆու հետ Հալթվանում (Պարսկաստան, Սալմաստի շրջան)»:

«...Մոտենում եմք Հալթվանին, և իմ սիրտը սկսում է ուժգին բարախել, ինձ ասել էին, որ այստեղ՝ Հալթվանում ես իմ աչքերով կարող եմ տեսնել Հակոբ Մելիք-Հակոբյան (Մելիքբաղե) Բաֆֆուն, որի «Ձա՛յն տո՛ւր ո՛վ ծովակը» մենք՝ պատանիներս, կարդացել էինք «Հլուսխապալում» և ոչ միայն այն անգիր գիտեինք, այլ, նրան երգ դարձրած, երգում էինք մեր բոլոր քեֆերի, հանդեսների ու հավաքույթների ժամանակ: Եվ անհա մեր կողմից այդքան սիրված ու պաշտած բանաստեղծին ես հանդիպելու ու տեսնելու եմ այստեղ՝ Հալթվանում... Ահա այդ ակնկալությունով լի՝ մեր ձիերը մտան Հալթվան գյուղաքաղաք, ուր մենք իջանք հացոց եկեղեցու երեցփոխան Մահմետի Բադալի տանը:

Մահտեսի Բաղալին տված իմ առաջին հարցին, թե Հակոբ Մելիք-Հակոբյանը այստեղ է թե Փայաջուկում, նա ասաց.

— Թեև Րաֆֆին փայաջուկից է և ապրում է այնտեղ, բայց գործերով ամեն օր լինում է այստեղ՝ Հավթվանում, և ապրում է մեր տանից՝ ոչ հեռու:

— Ուրեմն կարո՞ղ ենք մենք նրան տեսնել,— եղավ իմ երկրորդ հարցը:

— Այո, քիչ հաճախացեր, մի բան անուշ արեր, հետո մենք կերթանք նրա մոտ,— պատասխանեց ինձ Մահտեսի Բաղալը:

Թե ինչպե՞ս ճաշեցինք, ի՞նչ կերանք, չեմ կարող ասել, որովհետև ինձ զբաղեցնում էր մի միտք՝ ժամ առաջ գնալ Րաֆֆու մոտ, տեսնել նրան, ծանոթանալ նրա հետ: Եվ այդպես էլ արինք: Ծաշից հետո, աչացնց մի բուպե իսկ հանգիստ ստնելու մեր կատարած երկար ճամփորդությունից, մենք չորսուխ, Մահտեսի Բաղալի ոտնեկցությամբ, գնացինք այն տունը, ուր ապրում էր Հավթվանում Րաֆֆին:

Շու չեմ հիշում ո՞չ այն տունը, ուր նրան տեսա, ո՞չ այն փողոցները, որոս գնացինք, միայն հիշում եմ նրան՝ Րաֆֆուն, որին տեսա և նրի հետ ծանոթացա և հետը մի ժամի չափ զրուցեցի: Թավ հոգնեքով, թավ ընկազքով, խուռն սև մազերով, միջակ հասակով, նիհար և մուսլ դեմքի սքառահաչուությամբ 35 տարեկան կամ զոցե էլ ավել մարդու տեսք ուներ, բայց նա ընդամենը 26 տարեկան էր: Իր ամբողջ խառնվածքով նա շատ քիչ էր նման կովկասցի զվարթադեմ այն հայերին, որոնց մենք թողինք Թավրիզում: Ավելի շուտ նա նման էր Արազդալանի և Արալսի այն թուրքերին, որոնց մասին Վառվառե տառու շատ անգամ պատմել էր Պեգ՝ նկարագրելով նրանցից դուրս եկող ավազակների արշավանքները: Իզուր չէ թուրքերի իմաստուն առածը, թե «Իզիթի անունը լսիր, բայց երեսը մի տես»: Ինչպես երևում էր, Գարեգին Արվանձադյանը վաղաժամ էր Րաֆֆուն ողջունելուց ու նրա հետ ողջագործվելուց հետո: Նա ներկայացրեց ինձ Րաֆֆուն, ասելով, որ ես Խաչատուր Աբովյանի աշակերտն եմ եղել, տեսել եմ նրան և այլն: Րաֆֆուն այս բանը շատ հետաքրքրեց և նա նստեցնելով ինձ իր մոտ, սկսեց մանրամասն հարց ու փորձ անել Խ. Աբովյանի մասին, մանավանդ նրան հետաքրքրում էր Աբովյանի անհայտացման գաղտնիքը: Ես պատմեցի իմ մանկական տպավորությունները Աբովյանից և այն բոլորը, ինչ որ լսել էի Երևանում նրա անհայտացման վերաբերմամբ: Րաֆֆին լսում էր մեծ հետաքրքրությամբ և կենտրոնացած: Երբ պատմությունն ավարտեցի և մի քանի րոպե զրույցից հետո մենք տեղներիցս բարձրացանք, որ հրաժեշտի ողջույն տանք «Զայն տո՛ւր ո՛վ ծովակի» հեղինակ-բանաստեղծին, թե, նա և թե նրա հայրը թախանձագին խնդրեցին, որ մնանք ու այս գիշեր հյուր լինե՞նք նրանց մոտ Փայաջուկ, սակայն մենք՝ մեծ ցավ չսիրտ, ստիպ-

ված էինք մերժել մեր արտին այնքան մոտ այդ հրավերը, որովհետև վաղը՝ Վան, «Տիրամոր» ուխտ գնացող սալմաստեցիների քարավանի հետ մենք ևս խոսք էինք տվել միանալ և հանձնարարել էինք երեցփոխին՝ մեզ համար ձիեր վարձել, մի բան, որը նա կատարել էր: Բաֆֆին ու հրա հայրը մեծ ափսոսանքով մեզ ճամփա դրին:

— Երբ գնալու կլինեք, — ասաց Բաֆֆին մեզ, — խորհուրդ կտամ անցնեք իրենց խաչագողներով հոշակ ստացած Սափրա գյուղով: Մենք ազդ խորհուրդն ընդունեցինք և նույն օրը երեկոյան դեմ մտանք Սափրա գյուղը, որը Հալիփանից միայն մի բանի վերստ հեռու էր, ու իջանք Մահմետի Բադալի փեսայի տանը, ուր և լավ հյուրասիրվեցինք, և ապա մեր մի ժամ շրջեցինք այդ հոշակավոր գյուղում, որի հերոսների մասին քսան տարի անց հափշտակությամբ կարդացինք Բաֆֆու «Խաչագողի հիշատակարանը» արկածային վեպում» (տե՛ս Ա. Աթանասյան, Գրական դեմքեր — Բաֆֆի, Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, չմշակված նյութեր):

6. Գարեգին Սրվանձությանը 1857—1860 թթ. Վարազա ժառանգաւորաց դպրոցում աշակերտել է վանահայր Մկրտիչ Խրիմյանին:

7. Ըստ հուշերի Ղևոնդ Աթանասյանը 1848 թ. Երևանի գաղտնական դպրոցում աշակերտել է Խաչատուր Աբովյանին (տե՛ս «Մամանակակիցները Խաչատուր Աբովյանի մասին», Ե., 1941, էջ 78, կազմեց և ծանոթագրեց Հրայր Մուրադյանը): Աբովյանագիտությունը մերժում է Ղևոնդ Աթանասյանի Աբովյանին աշակերտած լինելու վարկածը տե՛ս Պիոն Հակոբյանի «Ո՛վ և ե՛րբ է նկարել Աբովյանին» հոդվածը (տե՛ս «Գարուն», 1970, № 3, էջ 80):

8. Թավրիզից գալուց հետո, 1877 թ. օգոստոս-սեպտեմբերի ընթացքում շուրջ մեկ ամիս Բաֆֆին մնում է Թիֆլիսում:

9. 1877 թ. սեպտեմբերի երկրորդ կեսին, Բաֆֆին ուսուցչի պաշտոնով մեկնում է Ագուլիս:

10. Եթե ճիշտ է, որ Ղ. Աթանասյանը Բաֆֆու հետ հանդիպել է օգոստոսին, ապա ճիշտ չէ, որ վերջինս «հենց մյուս օրը» մեկնել է Ագուլիս:

11. Բաֆֆին Ագուլիսի դպրոցում տեսուչի պաշտոն չի վարել, ինչ վերաբերում է այնտեղ մնալուն, ապա նա Ագուլիսում պաշտոնավարել է 1877 թ. հոկտեմբերից մինչև 1879 թ. կեսերը:

12. Տեր-Վարդանյան Աշոտ — Մեզ չհաջողվեց պարզել հրա ով լինելը:

13. Այս շրջանում Բաֆֆին դեռևս ոչ մի պատմական վեպ չէր գրել:

## Պետրոս Զաքարյան

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ — ՐԱՖՖԻ (Էջ 221)

Լրագրող, թարգմանիչ, գրական ու հասարակական գործիչ Պետրոս Զաքարյանը (1867—1922) ժամանակի առաջավոր մտավորականներից է։ Աշխատակցել է «Մշակ», «Մուրճ», «Անկախ մամուլ», «Կամիր աստղ» և «Նորք» պարբերականներին։ Նրա հուշերը բաղկացած են երկու մասից։ Առաջինը վերաբերում է Գ. Արծրունուն, երկրորդը՝ Րաֆֆուն։

Տեքստը պատրաստված է «Մշակում» հրապարակված բնագրի հիման վրա, տե՛ս «Մշակ», 1902, № 89, էջ 1։

1 Պետրոս Զաքարյանը միջնակարգ կրթությունը ստացել է Ծուշի քաղաքում։

2 «Հայկական մատենադարան» ընդհանուր խորագիրը կրող մատենաշար, որը Լևո Ռոբեկուն (=Աբգար Հովհաննիսյանի), Գ. Խալաթյանի, Արթուր Լալասի և այլոց գերմաներեն թարգմանությամբ հրատապակվում էր Լայպցիգում։ Այդ մատենաշարի Գ. հատորը (1887 թ.) ամբողջովին նվիրված է Րաֆֆուն։ Այստեղ գետնդրված են նրա «Խաղափուշ», «Բիրի Ծարսրանի», «Հարեմ» և «Զալալեդդին» ստեղծագործությունները։

3. «Կայծերի» երկրորդ հատորը լույս է տեսել 1887 թվականին և Թիֆլիսի գրավաճառներին է հասել հունիսի վերջին։

4. «Կայծերի» մեկեմաս գնդապետ Ալեքսանդր Մելիք-Հայկապյանը բնակվում էր Փոթի քաղաքում։ Թեև ե՛րբ է ելել Թիֆլիս կամ որ գալըստյան մասին է խոսքը, մեզ չհաջողվեց պարզել։

5. Այդ շրջանում Րաֆֆին բնակվում էր Սոլովյակ թաղամասում, Նովո-Օրլովսկայա փողոցի մի բարձրահարկ տան երկրորդ հարկում։

6. «Մեղու Հայաստանի» լրագրի 1884 թ. 41-րդ համարում Հ. Առաքելյանը հրապարակում է իր «Պե՛տք է, և արժե՛» սլոգան տոնել Րաֆֆու հոբելյանը՝ խորագրով հոդվածը, որ խիստ մեղադրում է Րաֆֆուն Արծրունու հետ ունեցած միջադեպի՝ «Մշակից» հեռանալու կապակցությամբ։

7. Այդ փաստաթղթերի մեծագույն մասը պետք է կորած համարել։ Դրանցից մեկը՝ Րաֆֆու 1885 թ. 18-ը հոկտեմբերի Գ. Արծրունուն գրած նամակը, հրապարակված է։ (Տե՛ս Րաֆֆի, Երկրի ժողովածու, հ. 10, Դէջ 620)։

8. Րաֆֆին «Աղթամարա վանքը» գրել է ոչ թե 15, այլ 26 տարեկան հասակում։

9. Հուշագիրը սխալվում է. Րաֆֆու մահվան առիթով «Մշակի» հրապարակած մահախոսականում ասված է, որ նա վախճանվել է 53 տա-

րեկան հասակում, որը նույնպես ճիշտ չէ (տե՛ս «Մշակ», 1888, № 52, էջ 2):

10. Հուշագիրը աղավաղված է վերաշարադրում Արծրունու գրածը: Խուսելով 1871 թ. նախամշակյան շրջանի խմբագրական ժողովների մասին, Արծրունին գրում է, որ այդ ժամանակ Մելիք-Հակոբյանը կլինեք 30—35 տարեկան (տե՛ս այս գրքում, Գրիգոր Արծրունու հուշը, էջ 169): Ինչպես նկատելի է, Արծրունու նշած թվերը մոտավոր ճշտություն ունեն, ուստի և այս թեական կարծիքից չի կարելի ստույգ եզրակացության հանգել:

11. Մեզ չհաջողվեց պարզել, թե այդ շրջանում Բաֆֆուց ինչ է թարգմանվել անգլերեն:

12. Հուշագրի հայտնած միտքը «Հարեմի» թարգմանության մասին խիստ տարակուսելի է: Նրա պատմածից հայտնի է, որ ինքը գրախանույթ է մտել «Հայկական մատենադարան» մատենաշարի հերթական հատորը գնելու համար: Վերը 2-րդ ծանոթագրության մեջ արդեն ասված է, որ այդ գրքում Լեո Ռուբենյու գերմաներեն թարգմանությամբ Բաֆֆու ալ ստեղծագործությունների թվում թարգմանված ու հրապարակված է նաև «Հարեմ» վեպիկը: Այս պարագայում դժվար թե Անդրեաս Արծրունին ցանկություն հայտներ նորից թարգմանելու «Հարեմը»:

13. Սեյադ Ամիրյան — Բաքվեցի հարուստ, որ իր ծախքով 1884 թվականին ստանձին գրքով հրապարակում է «Մեղու Հայաստանի» լրագրում Բաֆֆու «Կայծերի» դեմ Հայկունու տպած «մատենախոսականները»:

## Մակար 2մշկյան

ԱՌԱՋԻՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՍ ՐԱՖֆԻԻ ՀԵՏ ԵՎ ՎԵՐՋԻՆ  
ՏԵՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՍ (Էջ 227)

1913 թ., երբ նշվում էր Բաֆֆու մահվան 25-ամյա տարեդարձը, գրաշար, լրագրող, մշակութային գործիչ, օրացույցներ կազմող, հրատարակիչ Մակար 2մշկյանը (1852—1920) «Մշակի» մեջ հրատարակում է Բաֆֆու մասին իր ունեցած հիշողությունները «Առաջին ծանոթությունն Բաֆֆիի հետ և վերջին տեսակցությունն» վերնագրով: Այստեղ Մ. 2մշկյանը այնպիսի դեպքերի հետ ավելի ընդհանուր գծերով անդրադառնում է նաև «Մշակի» խմբագրություն Բաֆֆու կատարած առաջին այցելությանը:

Տեքստը պատրաստված է «Մշակում» հրապարակված բնագրի հիման վրա: Տե՛ս «Մշակ», 1913, № 88, էջ 2:

1. Հուշագիր Մակար Չմշկյանը Մ. Նալբանդյանի թարգմանած գործի անունը շփոթում է կամ պարզապես չի հիշում: Խոսքը վերաբերում է «Ղազար Փարպեցու գրած թուղթ մեղադրությունն ստախոս արևդաներին» վերնագրով գործին: Լույս է տեսել 1868 թ. Պետերբուրգում:

2. Բաֆֆին 1847—1852 թթ. սովորել է Կարապետ Բելախյանի գիշերօթիկ դպրոցում, իսկ 1852-ից մինչև 1856 թվականը՝ ուսանելու գիմնազիայում:

3. Տե՛ս Ղևոնդ Աթանասյանի հուշի 2-րդ ծանոթագրությունը:

4. Տե՛ս Ավագ Ավթանդիլյանի հուշի 22-րդ ծանոթագրությունը:

5. Տե՛ս Գրիգոր Արծրունու հուշի 8-րդ ծանոթագրությունը:

6. Խոսքը «Աղթամարա վանք» աշխատության շարունակությունը հանդիսացող «Ամեն տեղ տիրած խորին լուրջություն» սկսվածքով չափածո հատվածի մասին է (տե՛ս Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 307):

## Ա. Մ-յան

### ԱՆՅՅԱԼԻՑ ՄԻ ՀԻՇԱՏԱԿ (Էջ 234)

Մեզ չհաջողվեց պարզել Ա. Մ-յանի ով լինելը: Վերջինիս հուշերը գրված են այն շրջանում, երբ սուր պայքար գոյություն ուներ «Մշակի», «Արձագանքի» ու «Նոր Դարի» միջև, և յուրաքանչյուր կողմ աշխատում էր իր առավելությունը հակադրել դիմացինի թերությանը: Նորդարական Ա. Մ-յանը ոչ միայն չի թաքցնում իր միտումնավորությունը, այլև 1836 թ. իր այս խոսակցությամբ աշխատում է Բաֆֆու հեղինակությունը ծառայեցնել «Նոր-Դարի» շահերին: Հավանաբար, հենց այս հանգամանքն էլ սույն է դարձել, որ նա հանդես գալիս ոչ լրիվ անուն ազգանունով, այլ **Ա. Մ-յան** գրչանունով:

Այս հուշը նախապես հրատարակվել է Կ. Պոլսի «Ծաղիկ» կիսամյա հանդեսում, ապա անմիջապես արտատպվել է «Նոր-Դարում» (տե՛ս «Նոր-Դար», 1892, № 54, էջ 2 և № 55, էջ 2):

Արտատպում ենք «Ծաղիկ» շաբաթաթերթից (տե՛ս «Ծաղիկ», 1892, № 21, էջ 251 և № 22, էջ 256):

1. Խոսելով «Մշակի» կատարած դերի մասին, հուշագիրը ցուցաբերում է միտումնավոր մոտեցում: Ծիշտ է, երբ Բաֆֆին հեռացել էր «Մշակից», ավելի քննական հայացք ուներ այս լրագրի անցյալի ու նպագայի հանդեպ, բայց նա չէր կարող նման ժխտական վերաբերմունք դրսևորել: Նույն շրջանում գրած «Վիպագրությունը ուսանալների մեջ» հոդվածում Բաֆֆին հանդես է բերում հուշագրի տեսակետին չհամա-

պատճախանող մոտեցում (տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 155):

2. Ակաժ 1835 թվականից Րաֆֆին աշխատակցում էր «Արձագանք» շաբաթաթերթին, թեևս այս փաստով էլ պայմանավորված են նրա դատողությունները:

3. Րաֆֆին ծանոթ լինելով Տիգրան Նազարյանի գիտելիքներին, այն կարծիքին էր, որ վերջինս իր տեղում չէ: Տ. Նազարյանին հայտնի էր Րաֆֆու կարծիքը իր մասին, և նրա վախճանվելուց հետո հանդես է բերում անհարգալից վերաբերմունք: Տե՛ս նրա հուշերը Րաֆֆու մասին (էջ 207):

4. «Նոր-Դարը» սկսել է լույս տեսնել 1833 թ. դեկտեմբերի 30-ից:

5. Այստեղ հուշագիրը ակնհայտ կերպով մեղմացնում է վիճակը: Րաֆֆուն վաղուց էր հայտնի խմբագրի ու լինելը: Նա ոչ միայն դժգոհ էր Սա. Ապանդայանից, այլև չէր համակրում «Նոր-Դարի» ուղղությունը: Գ. Արծրունուն ուղղված 18-ը հոկտեմբերի համակում խոսելով «Մշակից» հետո մի նոր պարբերականի աշխատակցելու անհրաժեշտության մասին, Րաֆֆին ավելացնում է, որ դա չի վերաբերում «Մեղվին» ու «Նոր-Դարին» (տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 624):

## Իսկուհի Հակոբյան

ԹԱՎՐԻՋԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԱՆՑՅԱԼԻՑ (էջ 245)

Հուշերի հեղինակը՝ Իսկուհի Հակոբյանը, Թավրիզի մեծահարուստ Թումանյան գերդաստանից է: Իսկուհու հայրը՝ Սիմոն Թումանյանը, իր եղբայրների մեջ ամենից զարգացածն էր և վայելում էր Րաֆֆու առանձնակի հարգանքը (տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 576):

Տպագրվել է՝ «Հայրենիք», 1957, № 11, էջ 90, որտեղից և արտատպվում է: Կրճատված են Րաֆֆուն չվերաբերող մասերը:

1. Խոսքը վերաբերում է օրիորդաց դպրոց հիմնելու առիթով տեղի ունեցած «հուզումներին ու վեճերին»: Արամյան դպրոցում աշխատելու ժամանակ, 1875 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, Րաֆֆու գլխում հղանում է Թավրիզում օրիորդաց դպրոց հիմնելու գաղափարը: Այս հարցի շուրջը նա ոչ միայն խորհրդակցում, խոսում ու վիճում է, այլև դիմում է գործնական քայլերի: Նրա անմիջական ջանքերի շնորհիվ հիմնվում է մի ընկերություն, որի նպատակն էր տեղում բաց անել օրիորդաց դպրոց: Ընկերության համար կանոնադրություն են մշակում Հաջինյանն ու Րաֆֆին: Վերջինս հանձն է առնում ստանց վարձատրության վարել

դպրոցի տեսուչի պարտականությունը, նրա կինը՝ Աննա Րաֆֆին, պետք է դասեր տար նույնպես առանց վարձատրության (տե՛ս Խ. Սամվելյան, Րաֆֆի, Ե., 1957, էջ 90):

2. Րաֆֆին ունեցել է երկու տղա և եսթեր անունով մի աղջիկ, որը վախճանվել է 1877 թ. զարնանը (մայիսին):

3. Րաֆֆին 1877 թվականին Թավրիզից Թիֆլիս է մեկնում առանց ընտանիքի: Ավելի ուշ, աշնանը, նա ընտանիքը տեղափոխում է իր մոտ՝ Ագուլիս:

4. Տե՛ս առաջին ծանոթագրությունը:

### Սառա Խանում

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՐԱՖԻՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ (ԷՋ. 248)

«Րաֆֆու քրոջ աղջկա՝ Սառա խանումի հուշերը» գրի են առնվել գրող Լևոն Մեսրոպի ջանքերով: Ըստ վերջինիս հավաստիացման, 1937 թվականին նա դիմում է թեհրանաբնակ «բարեկամի մը» և խնդրում է նրան տեսակցել Րաֆֆիի քրոջ աղջկա՝ Սառա խանումի հետ «և գրի առնել անոր հուշերը Րաֆֆիներու մասին»: Ստանալով պատվիրած հուշերը, Լևոն Մեսրոպը ձեռագիրը պահում է իր մոտ մինչև 1955 թվականը և ապա տպագրում է այն Փարիզում հրատարակվող «Լուսադրյուր» գրական-գեղարվեստական հանդեսում:

Ջեռքի տակ ունենալով սույն տեղեկությունները և ծանոթ լինելով Րաֆֆու տոհմագրությանը, 1967 թ. մեր տարակուսանքը փարատելու համար այս հարցով դիմեցինք Րաֆֆու՝ Թեհրանում ապրող միակ ազգականին, նրա քրոջ՝ Կատարինեի որդի Ղազար Ղազարյանին: 1967 թ. 9-ը սեպտեմբերի թվակիր նամակով նրանից ստացանք հետևյալ պատասխանը. «...Րաֆֆու տոհմում Սառա խանում չի եղել, գոնե մենք այդպիսին չենք ճանաչում»: Թեև ցայսօր պարզված չէ պատմողի իսկությունը, այսուհանդերձ, հուշերը իրենց մեջ պարունակում են հետաքրքիր ու հավաստի տեղեկություններ, ուստի և նպատակահարմար գտանք գետեղել սույն ժողովածուի մեջ:

Տեքստը տպագրության պատրաստելու ընթացքում հիմք ենք ընդունել «Լուսադրյուրում» հրատարակված բնագիրը: Տե՛ս «Լուսադրյուր», 1955, № 29—31, էջ 131:

1. Հուշագիրը սխալվում է. Րաֆֆին ամուսնացել է 1863 թ., 31 տարեկան հասակում (տե՛ս «Մշակ», 1888, № 52, էջ 2):

2. 1860-ական թվականի վերջում Րաֆֆու ֆինանսական գործերը

ճարդանում է.ն. նրա առևտրական տունը սնանկ է հայտարարվում: Րաֆֆին ստիպված է լինում իր շարժական ու անշարժ գույքը պարտապաններին հանձնել, օժիքը ազատելու համար:

3. Րաֆֆու ընտանիքը մինչև 1875 թվականի կեսերը ապրում էր Փայաջուկում: Երբ Րաֆֆին մանկավարժի պաշտոնով մեկնում է Թավրիզ, ընտանիքը տեղափոխում է իր մոտ:

1877 թվականի աշնանը Րաֆֆին ընտանիքը Թավրիզից տեղափոխում է Ագուլիս, իսկ երբ թողնում է Ագուլիսը ու մեկնում Թիֆլիս, ընտանիքը նորից տեղափոխվում է Փայաջուկ:

Հետագայում, 1887 թվականին, երբ Րաֆֆին վերջնականապես հիմնավորվում է Թիֆլիսում, կնոջը և տղաներին Փայաջուկից տեղափոխում է իր մոտ:

### **Սողոմոն Մելիք-Հակոբյան**

#### **ՐԱՖՖԱ (ԼՁ 252)**

Դարականայ գրող, մանկավարժ, լրագրող, Րաֆֆու եղբոր՝ Տիգրանի որդի Սողոմոն Մելիք-Հակոբյանը ծնվել է 1883 և վախճանվել՝ 1964 թվականին: Գրաճանաչություն ստիպում է Փայաջուկում, ապա ծնողները նրան ուղարկում են Թիֆլիս: Ավարտելով Ներսիսյան դպրոցը, 1902 թ. Սողոմոնն ուղևորվում է Մոսկվա բարձրագույն կրթություն ստանալու: Հանդիպելով անհաջողության նա տեղափոխվում է Էջմիածին ու մի քանի ամիս Գևորգյան ճեմարանում սովորելուց հետո, մեկնում է հայրենիք և շուրջ հիսուն տարի զբաղվում մանկավարժությամբ:

Այդ ընթացքում, այլևայլ պարբերականներում նա տպագրում է իր ստեղծագործությունները, ուսումնասիրություններն ու թարգմանությունները:

Վերջինս հինգ տարեկան է լինում, երբ վախճանվում է Րաֆֆին, ինքնին հասկանալի է, որ նա Րաֆֆու մասին անձնական տպավորություններ ունենալ չէր կարող: «Հուշերից» նկատելի է, որ նա վերարտադրում է իր ոչ թե տեսածները, այլ լսածները...

Սույն «Հուշերը» առաջին անգամ լույս են տեսել «Նալասարդ» հանդեսում, ապա նաև հեղինակի «Երկեր» խորագրով ժողովածվում:

Արտատպված է «Երկեր» ժողովածվից, Թեհրան, 1965, էջ 355:

1. Ավյուրքում Րաֆֆու ծննդյան հարյուրամյակը տոնվել է 1937 թվականին:

„2. Ռաֆֆու սեղանի և բալի նկարը հրապարակված է «Գեղարվեստ», 1902 թ., № 4—6, էջ 26:

3. Ռաֆֆինեց անտորական տան կարմիր կտավի (շիլայի) արձանացը, գործարանը գտնվում էր բնակարանի ներքնամասից կից սեղանի և բալիից բաժանված էր հատուկ մուտքով:

4. Ռաֆֆին Թավրիզի Արամյան դպրոցում իբրև դասատու աշխատել է՝ 1875 թ. օգոստոսից մինչև 1877 մայիս ամիսը:

### **Մելիք-Չոհրաբյան Նազար**

#### **ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Էջ 255)**

Թավրիզի Արամյան դպրոցի աշակերտ Ն. Մելիք-Չոհրաբյանը Ռաֆֆու մասին իր ունեցած հիշողությունները գրի է առել 1913 թ. մայիսի 6-ին, Ռաֆֆու մահվան 25-ամյա տարեդարձի առիթով և ուղարկել է «Մշակ» լրագրին:

Քանի որ ձեռագիրը խմբագրատուն է հասել ուշացումով (Ռաֆֆու մահվան 25-ամյա տարեդարձը ընկել է 1913 թ. ապրիլին), ուստի և հուշը մնացել է անտիպ:

Տեքստը տպագրության է պատրաստված ինքնագրի հիման վրա, տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, «Մշակի» բաժին, ֆոնդ 227. ց. I, գործ 305, թերթ 15—18:

1 1877 թ. Ավագ հինգշաբթին եղել է մարտի 24-ը:

2 Հովհաննես Խիզանյանը Ներսիսյան դպրոցի շրջանավարտներից էր և Թավրիզի Արամյան դպրոցում աշխատում էր որպես ուսուց լեզվի ու թվարանության դասատու:

3 Խոսքը վերաբերում է «Դավրիժի ընթերցարանի ընկերություն» խորագրով հովաձին, տպագրված՝ «Մշակ», 1877, № 19, էջ 1, որը հրապարակված է «մի հանդիսական» անորոշությամբ:

4 Հուշագիրը փաստերը շփոթում է: Խնդրո առարկան ոչ թե, հոգաբարձության ժողովն էր, այլ ընթերցարանի ընկերության ընդհանուր ժողովը, որը տեղի է ունեցել 1877 թ. փետրվարի 20-ին, առաջնորդի բացակայության շրջանում:

5 Հուշագիրը ճիշտ չէ: Հոգվածում նման անվանարկումներ չկան: Ընթերցարանի ընկերության ատենադպիր Հ. Մելիք-Հակոբյանը խոսելով ընթերցարանից օգտվող հասարակական տարբեր խավերի մասին, դատապարտում է հոգևորականության բռնած դիրքը, ինչպես գրադարանի, այնպես էլ հասարակության հոգևոր կարիքների հանդեպ:

«Նրանք, — ասում է Հ. Մելիք-Հակոբյանը, — որ ավելի պետք ունեն կարդալու, ընթերցարան չեն գնում» (տե՛ս «Մշակ», 1877, № 19, էջ 1):

6. Տե՛ս Աշոտ Փալանջյանի հուշերի 1-ին ծանոթագրությունը:

7 Ավագ Աթանդիլյանը Րաֆֆու մանկության ընկերն էր, նրա մերձավորագույն բարեկամը, տե՛ս այս հատորում «Պատկերներ Րաֆֆիի կյանքից» խորագրով հուշը (էջ 75):

8 Րաֆֆու դուստրը՝ Եսթերը, իրոք վախճանվել է 1877 թ. գարնանը (մայիսին): Որքանով է այս իրողությունը կապված դպրոցում տեղի ունեցած դեպքերի հետ, դժվարանում ենք ասել:

9 Հուշագիրը սխալվում է. Րաֆֆու ընտանիքը տեղափոխվել է ոչ թե Թիֆլիս, այլ Ագուլիս, 1877 թ. հոկտեմբերին, տե՛ս այս ժողովածուում Աբրահամ Մելիք-Աբրահամյանի «Րաֆֆին Զուլֆայում» վերնագրով հուշը (էջ 263):

## Մի Ագուլեցի

ՆԱՄԱԿ Վ. ԱԳՈՒՎԻՍԻՑ (Էջ 258)

1877 թ. սեպտեմբերի երկրորդ կեսին մեկնելով Վերին Ագուլիս, Րաֆֆին մինչև 1879 թ. մայիսի վերջերը մնում է այնտեղ, զբաղեցնելով տեղի երկսեռ դպրոցի բարձր դասարանների հայոց լեզվի և պատմության դասատուի պաշտոնը: Մանկավարժական աշխատանքը զուգակցելով հասարակական հետ Րաֆֆին ձեռնարկում է Ագուլիսում հիմնել «Գողթնեցոնց լուսավորչական ընկերություն» անունով կազմակերպությունը, որի նպատակը պետք է լիներ՝ ժողովրդի չքավոր դասից ռադիկներ պատրաստել և ընկերության հաշվին գրքեր տպագրել ու ձրի բաժանել չքավորներին:

Սույն նամակը վերաբերում է Րաֆֆու ձեռնարկած գործի նախնական շրջանին:

Մեզ չհաջողվեց պարզել նամակագրի ինքնությունը, որ, թերևս, ինքույթին մասնակցող դասատուներից մեկը լինի:

Արտատպված է՝ «Մշակ», 1878, № 193:

1. Ընթրիքը ագուլեցի նշանավոր վաճառական Բ. Տեր-Միքայելյանի տանը, որի ընթացքում Րաֆֆին բարձրացնում է «Գողթնեցոնց լուսավորչական ընկերություն» ստեղծելու հարցը, տեղի է ունեցել 1878 թ. հոկտեմբերի կեսերին:

2. Մ. Արաբեկյան — Ագուլիսի դպրոցի դասատուներից է, Բ. Տեր-Միքայելյանի համախոհներից մեկը:

3. 4. Դերջանյան — Փարիզում կրթություն ստացած բժիշկ, որը մի պարս ժամանակամիջոց աշխատելուց հետո հեռանում է Ագուլիսից:

4. Մ. Յ. Կոստանդինյան — Ոչ մեծ հարուստ, այդ շրջանում եղել է Վ. Ագուլիսի տանուտերը:

5. Ժողովը, որի ընթացքում Բաֆֆին կարդում է «Գողթնեցունց լուսավորչական ընկերության» կանոնադրությունը, տեղի է ունեցել 1878 թ. հոկտեմբերի վերջին, Վ. Ագուլիսի դպրոցի դահլիճում:

6. Ընկերության կանոնադրությունը «Մշակում» չի հրապարակվել: «Մշակի» նոյեմբերի 18-ի համարի «Պատասխաններ» բաժնում խմբագրությունը հայտնում է, որ «ընկերության ծրագիրը դեռևս չի ստացվել»: Անհավանական չէ, որ այդ գործի ձախողման պատճառով Բաֆֆին հրաժարվել է ծրագիրը «Մշակում» հրապարակելու մտքից:

7. Բարձի Մարդասիրական ընկերությունը հիմնվել է 1864 թ. մայիսի 21-ին նշանավոր բժիշկ Դավիթ Հարությունի Ռոստոմյանի գլուխն առնելով: Թեև ունեցել է գործունեության բազմամյա տևողություն, բայց որովհետև չի ունեցել նյութական առատ միջոցներ, ըստ ամենայնի սահմանափակ է եղել նրա գործունեության ոլորտը:

8. Հայրապետ Արասխանյան — (Ավետիք Արասխանյանի հոր՝ Մկրտումի եղբայրը) ոչ անվանի հարուստ, այդ շրջանում վարում էր Ագուլիսի հոգևոր իշխանության գանձապետի պաշտոնը:

9. Ագուլեցիների այդ ցանկությունը չի իրականացվել:

## **ԱՆՈՒՄ ԲԱՓՖԻ (ԱՆՈՒՄ ՄԵԼԻՔ-ՀԱԿՈԲՅԱՆ)**

[ՊԱՏԱՌԻՎ ՀՈՒՇԵՐԻՑ] (ԷԶ 262)

Բաֆֆու և Աննայի (օրիորդական անունը՝ Աննա Հյուրմուզ, 1846—1920) հանդիպումը տեղի է ունեցել 1863 թ. սկզբին, Ուրմիայի ամերիկյան միսիոներների օրիորդաց վարժարանում: Ամուսնությունը կայացել է 1863 թ. վերջերին: Ունեցել են մեկ աղջիկ՝ Եսթեր անունով և երկու արու՝ զավակ:

Աննա Բաֆֆին, ինչպես պատմում են ժամանակակիցները, սիրով ու ոգևորությամբ է խոսել Բաֆֆու մեծության, նրա գտած ժողովրդականության և առհասարակ անցյալի դեպքերի մասին: Ունեցել է «մեծ տեսրակի մը մեջ» գրի առած «բավականին մանրամասն հիշողություններ» իր ամուսնության, ընտանեկան կյանքի, ամուսնու ճանապարհորդությունների և այլ դեպքերի ու դեմքերի մասին:

Նրա հուշերի տետրի ուր և ինչ լինելը տակավին մնում է անհայտ: Սույն հատվածը բերում ենք Մ. Վերծանիի «Րաֆֆիի և իր ընդհանր-բին շուրջը» հոդվածից (տե՛ս «Հայրենիք», 1938, № 5, էջ 144):

### Աբրահամ Մելիք-Աբրահամյան

ՐԱՖԳԻՆ ԶՈՒԼՖԱՅՈՒՄ (ԷԶ 263)

Սույն հուշը թավրիզաբնակ Աբրահամ Մելիք-Աբրահամյանի պատմածից, գրի է առել Հ. Աճեմյանը 1936 թ. ապրիլի 20-ին: Մեր ձեռքի տակ էղել է. մատիտով գրված 11 փոքրադիր էջից բաղկացած սևագիր, մի դժվարընթեռնելի ձեռագիր, որ պահվում է Զարեհի անվան գրականության և արվեստի թանգարանում, Րաֆֆու ֆ. № 53:

Տեքստը տպագրության պատրաստելիս կատարել ենք խմբագրական բնույթի որոշ շտկումներ:

1. Հուշագիրը փաստերը շփոթում է: Րաֆֆու հակասակոթյունները թարգմանել ու պարսից կատարարությանն են ցերեպացրել ոչ թե դճարոցի հոգաբարձության կամայականությունները մերկացնող հողիածները, այլ պարսից կատարարության ու մահմեդական մոլեռանդության դեմ «Մշակում» հրատարակած թղթակցություններն ու «Հարեմ» վիպակը:

2. Այս փաստի արձանագրումը կախված է ոչ այնքան Աբրահամ Մելիք-Աբրահամյանի հիշողության, որքան գրի առնողի պաշտպանած տեսակետի հետ: Հ. Աճեմյանը ընդունում է Րաֆֆու՝ 1835 թ. ծնված լինելու վարկածը:

### Ավետիս Սարգսյան

[ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՐԱՖԳՈՒ ՄԱՍԻՆ] (ԷԶ 265)

Այս հուշերը Րաֆֆու աշակերտ թավրիզաբնակ Ավետիս Սարգսյանի պատմածից գրի է առել Հ. Աճեմյանը, հավանաբար 1936 թվականին: Զեռագիրը գրության թվական չունի: Մեր տրամադրության տակ էղել է մատիտով գրած, 4 էջից բաղկացած մի սևագիր, դժվարընթեռնելի՝ ձեռագիր:

Տեքստը տպագրության պատրաստելիս կատարել ենք խմբագրական բնույթի որոշ աշխատանք:

. Հուշերի բնագիրը պահվում է Չարենցի անվան գրականության՝ և՛ արվեստի թանգարանում, Րաֆֆու ֆ. № 54:

1. Այս միջադեպը ո՞ր դասարանում տեղի ունեցած լինելու վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Եթե ըստ հուշագրի դեպքը տեղի է ունեցել Դ. դասարանում, ապա ըստ Վարդան Թումանյանի՝ դեպքը եղել է Բ. բաժանմունքում (տե՛ս էջ 267), ըստ Արշակ Գորոյանի՝ 5-րդ դասարանում (տե՛ս Րաֆֆի «Կյանքը, գրականություն, հիշողություններ», 100 ամյակին նվիրված ժողովածու, Փարիզ, 1937, էջ 158), ըստ Ն. Մելիք-Ջոնաթյանի դեպքը տեղի է ունեցել առաջին դասարանում (տե՛ս այս ժողովածուում, էջ 255):

2. Թադևոս, Անտոն և Մատվեյ Նրվանդյան եղբայրները, Մկրտում և Արիստակես Պատմագրյան եղբայրներն ու Մկրտում և Հովհաննես Նաջարյան եղբայրները Թավրիզի Արամյան դպրոցի հոգաբարձության անդամներից են:

#### Վաղեղան Թումանյան

#### ՀՈՒՇԵՐ ԸՍՖՖԻԻ ՄԱՍԻՆ, (էջ 267)

Այս հուշերը Րաֆֆու աշակերտ թավրիզաբնակ Վարդան Թումանյանի պատմածից գրի է առել Հ. Աճեմյանը 1936 թ. մայիսի 10-ին: Բնագիրը մաքրագիր տարբերակ ունի թե ոչ, դժվարանում ենք ասել: Մեր ձեռքի տակ եղել է մատիտով գրած 5 էջից բաղկացած մի սևագիր դրժվարընթեռնելի ձեռագիր:

Տեքստը տպագրության պատրաստելիս կատարել ենք խմբագրական բնույթի որոշ աշխատանք:

Բնագիրը պահվում է Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Րաֆֆու ֆ. № 52:

1 Տե՛ս Ավետիս Սարգսյանի հուշերի 1-ին ծանոթագրությունը:

2 Խոսքը Շուշիի, Ագուլիսի ու Թավրիզի դպրոցներում անուն վաստակած մանկավարժ, թարգմանիչ, 1874—76 ուս. տարում Արամյան ազգային դպրոցի տեսուչ Սամվել Գյուլզադյանի (1833—1912) մասին է:

3 Մահտեսի Սիմոն Թումանյանը Թավրիզի մեծահարուստներից էր, Րաֆֆու մտերիմներից մեկը:

4 Խոսքը «Հանդես գրական և պատմական» պարբերականի խմբագիր, հրատարակիչ, տպարանատեր Մկրտիչ Բարխուդարյանի (1862—1927) մասին է, որը ապրելով Մոսկվայում՝ ծախվել էր գրական-հրատարակչական լայն գործունեություն:

5 «Ջալալեդդինը» հրատարակվել է «Մշակի» 1878 թ. 78—85-րդ համարներում։

6 Դեկտի ունի հետազայում (1892—1913) «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Բալանթարին, որը այդ ժամանակ տվորում էր Մոսկվայի Պետրովյան երկրագործական ակադեմիայում։

7 Բարխուդարյանի նամակը մեզ չի հասել։ Նույն խնդրով Րաֆֆուն դիմել է նաև իմքը՝ Վարդան Թումանյանը, որի առաջադրած հարցերին Րաֆֆին պատասխանել է Մ. Փանյանին ուղղված 1882 թ. 20-ը մարտի թվակիր նամակով (տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 574)։

8 Հուշագիրը սնտեում է փաստերը։ Րաֆֆին նրանից նեղացել է ո՛չ միայն «առաքվող գրքերը» ուշացնելու համար, այլև գիրքը («Ջալալեդդին») տպագրվելու մասին հաղորդագրություն հրապարակելու, նախկինում առացած հրատարակության իրավունքը չարաշահելու, Ա. Ապրեսյանի ձեռնարկած հրատարակությունը խափանելու, իր հեղինակային իրավունքը չհարգելու համար։ Տե՛ս Մ. Փանյանին գրած 1884 թ. 7-ը մարտի թվակիր նամակը։

#### Արտաշես Ծատուրյան

ՐԱՖԲԻՆ ՂԱՓԱՆՈՒՄ ԵՎ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ (Էջ 270)

Հայտնի է, որ 1881 թ. հունիսին Րաֆֆին «Մշակում» դադարեցնում է «Դավիթ Բեկի» տպագրությունը և գլխավոր հետոսի հետքերով մեկնում է Լարաբադ, ապա Սյունյաց աշխարհ՝ «Դավիթ Բեկի» պատմության մի շարք մուք մնացած հարցեր լուսաբանելու և պատմական ու տեղագրական ուսումնասիրություններ կատարելու համար։ Լարաբադի՝ Գյուլիստան, Զրաբերդ, Խաչեն, Վարանդա և Տիգակ մելիքություններում շրջագայելուց և համապատասխան գրառումներ կատարելուց հետո, Րաֆֆին շարունակում է իր ճանապարհը՝ Զանգեզուրի, Սիսյանի, Բարգյուշատի, Զափանդարի, Ղափանի, Մեղրիի ու Օրդուբադի գավառներում։ Ահա այդ օրերին (1881 թ. օգոստոսի երկրորդ կես) Եղվարդից, գործով, վարչական կենտրոն՝ Արծվանիկ եկած գյուղական ուսուցիչ Ավետիս Ծատուրյանը, տեղեկանալով, որ Րաֆֆին գտնվում է Հարունյանի տեր Մեսրոպ քահանայի տանը, հերկայանում է նրան և առաջարկում իր ծառայությունը։

Րաֆֆին վերջինիս ուղեկցությամբ մեկնում է Եղվարդ։ Իր ուսումնասիրությունները ավարտելուց հետո Րաֆֆին Եղվարդից մեկնում է Զանգեզուր, ապա նորից գալիս է Արծվանիկ՝ Տաթև մեկնելու համար։

Ավետիս Ծատուրյանը Արծվանիկում նորից է հանդիպում վիսպասանին և օգնում է նրան: Այդ հանդիպումների անմիջական ազդեցության տակ Ավետիս Ծատուրյանը գրի է առնում իր հուշերն ու տպավորությունները: 1966 թ. Ավետիսի որդին՝ Արտաշես Ծատուրյանը վերանայում, խմբագրում և իր անունով հրատարակում է այդ հուշերը:

Արտատպում ենք «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսից. 1966, № 1, էջ 151, 1967, № 2, էջ 219:

1. Խոսքը XIII դարի երկրորդ կեսի հայ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Ստեփանոսի Սիմեոսց կաթսկոպոսի պատմութիւն, Տանն Սիսական» գրքի մասին է, Մոսկվա 1861, 386 էջ:

2. Խոսքը «Դավիթ Բեկի» մասին է, որի տպագրությունը 1881 թ. հունիսի 20-ից հետո Րաֆֆին ընդհատում է «Մշակում» և պատմական վայրերում ուսումնասիրություններ կատարելու նպատակով մեկնում է Հարաբաղ ու Սյունիք:

3. Հասան-Ջալալյան Բաղդասար Մետրոպոլիտ — (1775—1854) ծնվել է Հարաբաղի Խաչեն գավառի Գանձասար ավանում: 1798 թ. ձևոնադրվում է վարդապետ: 1830 թ. Եփրեմ կաթողիկոսը Ջալալյանին կարգում է Մետրոպոլիտ Աղվանից աշխարհի: 1836 թ. Հովհաննես Կարբեցի կաթողիկոսը վերացնում է մետրոպոլիտությունը և նրան կարգում է Արցախի թեմի առաջնորդ: 1843 թ. կառուցելով նոր շենք, նա առաջնորդարանը տեղափոխում է Ծուշի: Հայտնի է իր եռանդուն գործունեությամբ և բարեկարգումներով: Վաճախվել է 1854 թ., թաղված է Գանձասարում:

## Արթուր Լալստ

ՀՆԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒԹՍՈՒՆԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՑ (ԷՋ 293)

Թիֆլիսաբնակ գերմանացի գրական գործիչ, հայ և վրաց գրականության թարգմանիչ Արթուր Լալստը նախքան Րաֆֆու հետ անձամբ ծանոթ լինելը գիտեր նրան: 1884 թ. փետրվարին Լալստը «Մշակի» միջոցով մի նամակ է հղում Րաֆֆուն, ուր ընդգծված ջերմությամբ շնորհավորում է նրա գրական գործունեության 25-ամյա հոբելյանը: Նա միաժամանակ խնդրում է Րաֆֆու նկարը և «Հարեմ» ու «Ջալալեդդին» վեպիկները՝ գերմանացի ընթերցողներին ծանոթացնելու համար:

Այնուհետև, „Armenische Bibliothek“ մատենաշարի հրատարակության առիթով Լալստը մտերմանում է Րաֆֆու հետ: Մի մտերմություն, որ, ինչպես խոստովանում է նա, կարճատև է լինում:

1912 թ. «Մշակի» քառասնամյակի օրերին Լալստը հրատարակության է հանձնում իր սույն «Հիշողություններ ութսունական թվականներից» վերնագրով հոդվածը, որի վերջին հատվածը վերաբերում է Րաֆֆուն:

Արտատպված է «Մշակից» (1912, № 109, էջ 3):

1. Լալստի և Րաֆֆու ծանոթությունը ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել 1884 թ. ընթացքում:

2. Ժամանակը ցույց տվեց, որ Լալստը սխալվում է. հայ գրողների մեջ Րաֆֆին այսօր էլ կարող է համարվել շատ կարդացվող հեղինակներից մեկը: Լալստի հուշերից նկատելի է, որ նա հենվում է ոչ այնքան իր տպավորությունների, որքան ուրիշների հաղորդած տեղեկությունների վրա:

## Աշոտ Փալանջյան

### ՎԵՐՀԻԾՈՒՄՆԵՐ (ԼԶ 295)

Գրող, երգիծաբան Աշոտ Փալանջյանը «Փայաջուկ— այստեղ է ծնվել Րաֆֆին» խորագրով հոդվածում (տե՛ս «Գարուն» ամսագիր, Ե. 1968, № 9, էջ 47) անդրադառնալով իր՝ Րաֆֆու հայրենիք կատարած այցելությանը, վերնիշում և հոդվածում մեջ է բերում տարիներ առաջ գրավաճառ Սահակի պատմած հուշերը Րաֆֆու մասին:

Ջանի որ հոդվածը, իբրև այդպիսին, չէր կարող տեղադրվել այս հատորում, ուստի հեղինակը ընդառաջելով մեր խնդրանքին հոդվածից առանձնացրեց Սահակի պատմած հուշերը, վերանայեց ու հանձնեց մեզ, որը և նույնությամբ զետեղում ենք սույն ժողովածուի մեջ:

1. Րաֆֆին Թիֆլիսում վերջնականապես բնակություն է հաստատում 1879 թ. կեսերից:

2. Երկուդ կրելով շեյխ Իբրադուլանի արշավանքից, Րաֆֆու ընտանիքը Սալմաստից տեղափոխելու վերաբերյալ նույնպիսի խորհուրդ է տալիս նաև հրա բարեկամ Ավագ Ավթանդիլյանը: Նույն թվականի վերջերին Ա. Ավթանդիլյանին ուղղած նամակներից մեկում Րաֆֆին գրում է. «Ծնորհակալ եմ Ձեր նախազգուշության համար, որով հայտնել էիք ինձ մեր ընտանիքը տեղափոխել Սալմաստից: Բայց զանազան հանգամանքներ առիթ են տալիս մտածելու, որ թե շեյխը և թե հրա խումբը, այս տարի հազիվ թե շարժումներ կանեն դեպի Պարսկաստանի կողմերը: Այս պատճառով ես բարձր համարեցի, որ մեր ընտանիքը դեռևս մնա Սալմաստում (տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 584):

3. Հուշագիրը փոքր-ինչ սխալվում է: Ծեյխի ենթադրվող արշավանքի վտանգը տեղի է ունեցել 1882 թ. ընթացքում, մինչդեռ Խաչատուր Տեր-Ջաքարյանին ընտանիքը տեղափոխելու վերաբերյալ հանձնարարություն Ռաֆֆին արել է 1887 թ. հոկտեմբերի 12-ին (տե՛ս Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 633): Բացի դրանից, այս դեպքում շարժառիթը ոչ թե շեյխի արշավանքն էր, այլ որդիներին ուսման տալու անհրաժեշտությունը:

4. Խաչատուր Տեր-Ջաքարյանին Ռաֆֆու գրած հիշյալ նամակը տե՛ս Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 633:

... 5. Իրավարան, հասարակական թաղաքական գործիչ Վասիլ Եղիազարյանը 1887 թ. նոյեմբերի կեսերին օգնում է Ռաֆֆու կնոջն ու զավակներին Թալրիզից Թիֆլիս տեղափոխվելու գործում:

1887 թ. 26-ը դեկտեմբերի թվակիր նամակով Ռաֆֆին շնորհակալություն է հայտնում Վ. Եղիազարյանին իր ընտանիքի հանդեպ ցուցաբերած բարեկամական կարեկցության համար, (տե՛ս Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 636):

6. Ռաֆֆու և Վասիլ Եղիազարյանի մտերմությունը ունի երկարամյա պատմություն: Թե նրանք երբ են ծանոթացել, և ինչ պարագաներում դժվարանում ենք ասել... Սկսած 1877 թվականից, երբ Վասիլ Եղիազարյանը հանդիսանում էր գաղթականների պետքերը հոգացող երևանյան մասնաժողովի անդամը, Ռաֆֆին ակտիվ կերպով գործակցում էր նրա հետ: Նրանց մտերմությունը սլայմանավորված էր նաև Երևանում գործող «Հայասեր-ազգասեր» գաղտնի կազմակերպության գործունեությամբ: Թերևս հենց այս է պատճառը, որ նրանց մտերմության շարժառիթներն ու բարեկամական փոխհարաբերությունների կարևորագույն մասը մինչև այսօր էլ մնացել է անհայտության մեջ:

Ա Ն Ջ Ն Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր

- Աբել եպիսկոպ. Մխիթարյան 12,  
122, 123, 312  
Աբելյան Ներսես 35, 208, 305,  
325  
Աբովյան Բաչատուր 9, 17, 59,  
131, 218, 328, 332, 333  
Ագաթանգեղոս 204  
Արամյան Պետրոս 44, 195, 196,  
207, 315, 326  
Ազգար Աթան 313  
Աթաբեկ (ղարաբաղեցի) 278  
Աթաբեկյան Լևոն 223  
Աթաբեկյան Մ. 259, 341  
Աթանասյան Աշոտ (Սալ-Ման)  
391, 333  
Աթանասյան Ղևոնդ (քահանա,  
աշխարհական անունը Նահա-  
պետ) 330, 331, 333, 336  
Ալադարյաններ 227, 228  
Ալեքսանդր II 304, 316  
Ալեքսանդր Բաֆֆի (Բաֆֆու  
կելծաճունն է) 20, 316  
Ալի աղլե Շիկակ 12, 87, 91—95,  
97—103.  
Ալիշան Ղևոնդ 211, 327  
Ալմաստ (Բաֆֆու քույրն է) 304  
Ա. Ծ. տե՛ս Ծառուրյան Արուս-  
շես  
Ամմեդ աղա (Ալի աղա Շիկակի  
որդին) 100  
Աղայան Ղազարոս 39, 47—49,  
59, 158, 223, 306—308, 326  
Աճեմյան Հայկ 343, 344  
Ամիրիկյան Միհրդատ 192, 195,  
205, 206, 321, 324  
Ամիլախլարի 207  
Ամիրյան Սեյադ 226, 335  
Ամիրջանյանց Պետրոս 277, 278  
Ա. Մ-յան 13, 336  
Ամդովկ (Ամդով իշխ.) 281  
Ամդրեաս եպիսկոպ. Հովհաննիս-  
յան 135, 156, 255, 312, 313  
Աննա Բաֆֆի (Աննա Մելիք-Հա-  
կոբյան, Բաֆֆու կինը) 13, 19  
—22, 75, 247—251, 296, 308,  
309, 311, 325, 327, 328, 338,  
342  
Անուշիրվան 104  
Աչի (Բաֆֆու քույրը) 304  
Առաքել (աշուղ) 283, 285

\* Ցանկերը կազմեց Ա. Անաստասյանը

Առաքել (Արծվանիկի խոջաներից) 283

Առաքելյան Համբարձում 136, 211, 223, 301, 309, 310, 313, 318, 320, 321, 334

Ասատրյան Աս. 307

Ասրի (զելվացի) 283, 287, 291

Ավետիք (Րաֆֆու եղբայրը) 304

Ավետիս տե՛ս Ծատուրյան Ավետիս

Ավթանդիլյան Ավագ 11—13, 257, 308—314, 336, 341, 347

Արամ Րաֆֆի (Րաֆֆու ալագ որդին) 19, 22, 296, 327

Արապխանյան Ավետիք 342

Արապխանյան Հայրապետ 261, 342

Արզանյան Դավիթ 329

Արզուման (Արծվանիկի խոջա.) 283

Արզումանյան Խոսրով 211

Արզումանյան Կարապետ 211

Արթուր Լալա 334, 346, 347

Արծրունի Անդրեաս 202, 226, 335

Արծրունի Գրիգոր 13, 14, 19—21, 32, 33, 35, 36, 134, 135, 161, 182—184, 188, 190—193, 202, 205—208, 211, 223, 224, 229, 230, 241, 298, 304, 305, 312, 314—316, 319—321, 323—327, 334—337

Արծրունի Երեմիա (Գյ. Արծրունու հայրը) 190, 191, 321

Արծրունի Սեմեքերիմ 20, 170, 171, 312, 314, 315, 320, 324

Ապրեսյան Արել 345

Արշակ (Րաֆֆու եղբայրը) 304

Արշակ Րաֆֆի (Րաֆֆու կրտսեր որդին) 296, 327

Արշակ Մեծ 104

Արփիարյան Արփիար (Հաղկակ) 317

Բաղալ (տանուտեր) 278

Բալզակ, Օնորե դը 43

Բաշինջադյան Գևորգ 314, 326

Բարխուդարյան Մկրտիչ 268, 344, 345

Բելախյան Կարապետ 30, 80, 228, 304, 310, 315, 328, 336

Բելք Վոլդեմար 114, 311

Բեկզադով (իրավաբան) 286, 289

Բերբերյան Ռուբեն 15, 17, 18, 215, 328, 330

**Գաբո տե՛ս Միրզոյան Գաբրիել**  
Գամառ Քարթալա տե՛ս Պատուկանյան Ռ.

Գալանե (Րաֆֆու քույրը) 304

Գասպար (չափնեցի) 284

Գասպար (տերանց) 284

Գինե Է. 181

Գյուլզադյան Սամվել 265—267, 344

Գյուլինար (Րաֆֆու քույրը) 304

Գոնկուրներ 43

Գորոյան Արշակ 344

Գրիբուդեղով 42

Գրիգոր (Րաֆֆու ծառան) 201

Դուքի (Գրիգոր) 288

Դևորգ աղա 190

**Դանիելյան Լ. 324**

Դանիելյան Հարություն 253

Դավիթ Բեկ 272, 273, 275, 276, 279—282, 286, 288, 290

Դերջանյան Հ. 259, 342

Դիկկենս 2. 43, 305

Դյումա Ալեքսանդր 141  
Դուրյան Պետրոս 60

### Եզեկյան Ավետիք 301

Եզնակենց Խաչատուր 72  
Եզնիկ (Կողբացի) 124, 204  
Եղիազարյան Ալեքսան 268  
Եղիազարյան Վասիլ 297, 348  
Եղիշե 124, 204  
Ենգիբարյան Գաբեգին 17—19, 327  
Եսեր (Րաֆֆու դուստրը) 247, 257, 333, 341, 342  
Եվանգուլյան Գաբեգին 324  
Երիցյակ (Եպիսկոպոս) 291  
Երվանդյան Անտոն 265, 344  
Երվանդյան Թադևոս 265, 344  
Երվանդյան Մատիկ 344  
Եփրեմ կարողիկոս 346

### Զ. 132

Զախեր Մազոյս 39  
Զաքարյան Պետրոս 334  
Զեյնակի Ստեփանոս 47, 305  
Զոյա Էմիլ 58

Էժեն Մյու 43, 56, 141

Էմին Մկրտիչ 279  
Էնֆիսանյանցներ 307

### Թագուկ (Ծերենցի դուստրը) 305

Թադիսայան Մեսրոպ 61  
Թամաշե 225  
Թամրազյան Հր. 303  
Թորոս Իշխան 273, 275, 277, 282, 286, 287, 290  
Թումանյաններ 139, 268, 269, 337  
Թումանյան Հովհաննես 301, 318

Թումանյան Սիմոն 155, 267, 337, 344

Թումանյան Վարդան 13, 268, 344, 345

Թունի 283

Ժելյարով 304

ժյուլ Հոշ 177

ժորժ Սանդ 141

Իբադուլլահ (Հեյս) 347, 348

Իբրահիմ խան 287

Իզմիրլյան Պողոս (Պավել) 191, 192, 324

Ինճիկյան Արամ 303

Իսովիտ Տեն (Թեն) 43

Իսրայել Օրի 283

### Լազարյաններ 312

Լեման Հատուկ 114, 311

Լեո(Առաքել Բարսիսանյան) 9, 10, 223, 301, 303, 318, 324

Լեո Ռուբենի տե՛ս Հովհաննիսյան Աբգար

Լևոն Մեսրոպ 338

### Խալաթյան Գ. 334

Խանում (Րաֆֆու քույրը) 304

Խիզանյան Հովհ. 255, 340

Խոջա Միսակ 288

Խոսրով (թագ.) 286

Խոսրով (ուղեկցել է Րաֆֆուն) 292

Խրիմյան Մկրտիչ (Հայրիկ) 77, 84, 217, 218, 310, 331, 333

Մատուրյան Ավետիս 272, 289, 291, 345, 346

Ծառուրյան Արտաշես 278, 279,  
345, 346

Ծերենց 13, 60, 207, 209, 305,  
325, 326

Կատարիներ (Րաֆֆու բույրը)  
304, 338

Կատկով Մ. Ն. 317

Կարապետ (Րաֆֆու եղբայրը)  
304

Կիրալշիշ 304

Կիկերոն (Ցիցերոն) 86

Կղեմես վրդ. Սիպիլյան 105,  
106, 121

Կյուրոս 104

Կոստանդինյան Մ. Յ. 259, 342

Կուսեր Ժ. 305

Հախնազարյան Օրբել 318

Հախնազարյաններ տե՛ս Մեկիք-  
Հախնազարյաններ

Հակոբյան Իսկուհի 13, 337

Հակոբյան Պիոն 333

Հակոբյան (պրոֆ.) 202

Համբարձում 201, 202

Համբարձում (պանդոկատեր) 298

Հայկունի (Եղիշե քան. Գեղամ-  
յան) 27, 28, 52, 62, 226, 303,  
304, 313, 314, 335

Հայնե Հ. 325

Հայրապետ (ծերունի) 286

Հայրապետ քեկ (լոնակոթցի)  
283, 285, 287

Հաջի Միքայել 217, 331

Հաջինյան 337

Հաջի Ֆարսլի 111

Հավար Ասլան 268

Հարո 191

Հարութ (որսկան 273, 274

Հարություն (բեկցի) 282

Հարություն (Վ. Թումանյանի պա-  
պը) 267

Հյուզո Վ. 43, 56—58, 130, 141—  
143, 325

Հովակիմ (վրդ.) 291

Հովհաննես Կարբեցի (Կաթողի-  
կոս) 346

Հովհաննիսյան Արգար 208, 294,  
324, 334, 335

Հոխիսիմե (Րաֆֆու բույրը) 304

Հոխիսիմե (Վ. Թումանյանի մայ-  
րը) 268

Հունան (դոկտոր) 249, 250

Ղազարյան Ղազար (Րաֆֆու  
Կատարիներ քրոջ որդին) 338.

Ղաշա Հունան (Աննա. Րաֆֆու.  
նայրը) 248—250

Ղարաբեգյանց Ա. 155

Մակար տե՛ս 2մշկյան Մակար  
Մակունց Միրզա 280, 289, 290

Մանտեսի Բադալ 331—333

Մանտեսի Հայրապետ 281—282

Մանտեսի Սիմոն տե՛ս Թուման-  
յան Սիմոն

Մամբրե վրդ. 297

Մամյան Ա. 192, 319

Մանաս (Արծվանիկի խոջա.)  
283

Մանասթեանց (Մանաստիպցե)  
180, 317

Մանուշար (արծվանիկցի) 292

Մատթեյան, Երվանդակուն Ան-  
տոն տե՛ս Երվանդյան Անտոն

Մատթեյան Երվանդակուն Թա-  
դեոս տե՛ս Երվանդյան Թա-  
դեոս

Մարանկոզյան Խաչատուր 201

Մարիյան (Րաֆֆու բույրը) 304  
 Մաղ Շիմոն (ասորացիների  
 պատրիարք) 118  
 Մելիք-Աբրահամյան Աբրահամ  
 341, 343  
 Մելիք-Ագարյան Ալեքսանդր 45,  
 209, 211, 305  
 Մելիք-Զոհրաբյան Նազար 303,  
 313, 340, 342  
 Մելիք-Հախնազարյաններ 11,  
 187, 312, 316, 319  
 Մելիք-Հախնազարյան Ալեքսան-  
 դր 187--189, 319, 320  
 Մելիք-Հակոբյաններ 103, 110  
 Մելիք-Հակոբյան Սողոմոն (Րաֆ-  
 ֆու Տիգրան եղբոր որդին) 339  
 Մելիք-Հայկազյան Ալեքսանդր  
 208, 222, 326, 334  
 Մելիք-Միրզա (Րաֆֆու հայրը)  
 76—78, 80, 81, 88, 127, 304,  
 310  
 Մելիք-Մուշկամբար 292  
 Մելիք-Նուբար 286  
 Մելիք-Պարզիս (Րաֆֆու հորեղ-  
 բայրը) 77  
 Մելիք-Փարսադան 282, 286  
 Մելիքյան Ներսես 192  
 Մելիքսեթյան Սարգիս 324  
 Մեհտի-Կուլի խան 287  
 Մեխիս Սերգեյ 192, 321  
 Մեսրոպ Մաշտոց 298  
 Մեսրոպ քահանա տե՛ս Տեր-Հա-  
 ռությունյան Մեսրոպ  
 Մի Ագուլցի 341  
 Միխայլով 304  
 Միրան (Միհրան) աղա 115, 117,  
 118, 145  
 Միրզայան Գաբրիել 13, 35, 208,  
 211, 226, 305, 325, 326  
 Միրիմանյան 184  
 23—552

Միքայելյանց Ասրի 155  
 Միսիթար սպարապետ 282  
 Միսիթարյան (ներ) 81, 82; 105,  
 107, 108, 144  
 Մկրտում (Ալ. Արասխանյանի  
 հայրը) 342  
 Մնակյան Մարտիրոս 44  
 Մովսես տե՛ս Վարդանյան Մով-  
 սես  
 Մովսես Խորենացի 37, 204, 224,  
 298  
 Մովսիսյան 271, 279  
 Մուգաֆերեդդին Միրզա 256  
 Մուշե կաթողիկոս 291  
 Մուրադյան Հրայր 333  
 Նազարբեգյան Արգ. 155  
 Նազարյան Ստեփանոս 16, 72,  
 86, 123, 126, 132, 168, 215,  
 216, 228, 308, 312  
 Նազարյան Տիգրան 13, 14, 301,  
 318, 324—326, 337  
 Նալբանդյան Միքայել 16, 72, 73,  
 87, 113, 130, 131, 215, 228,  
 229, 336  
 Նուպոլեոն, Բոնապարտ 29  
 Նաջարյան Հովհաննես 266, 344  
 Նաջարյան Մկրտում 266, 344  
 Նասիբյաններ 227, 230  
 Նասիբյան Գրիգոր 227, 312  
 Նասրեդդին (շահ) 263  
 Նավասարդյան Բ. 301, 315, 318  
 Ներսես V կաթողիկոս (Աշտա-  
 րակցի) 135  
 Ներսես Մեծ (Ներսես Պարթև)  
 118  
 Շահազիզ Սմբատ 39, 215, 326,  
 330

Ծան-Մուրադյան Արմենակ 318

Ծանվերդյան Վ. 192, 324

Ծանջյան Պետրոս 329

Շապուհ 281

Շեկի (հաս Ղաչաջան, Աննա  
Բաֆու մայրը) 248

Շեքսպիր Վ. 315

Շիլլեր Ժ. 305

Շիրվանգադե Ալ. 8—11, 223,  
301, 303—307, 311, 318, 326,  
328

Շմիդտ Ժ. 305

Չամչյան Միքայել 291

Չերնիշևսկի Ն. Գ. 304

Չոչկյան Գևորգ 14, 192, 321,  
323, 324

Չոչկյան Մակար 15, 231, 233,  
301, 318, 335, 336

Պալասանյան Ստեփանոս 192,  
321, 324

Պատկանյան Ռ. 39, 60, 61, 75,  
305, 310

Պատմագրյան Արիստակես 265,  
344

Պատմագրյան Մկրտում 265, 344

Պեշիկթաշյան Մ. 60

Պետրոս Մեծ 283

Պոլոս 275, 277

Պոռչյան Պ. 39, 59, 223, 323,  
324

Պուշկին Ա. Ս. 221

Ջալալեդդին (շեյխ) 264

Ջալալյան (Հասան-Ջալալյան)  
Բաղդասար Մետրոպոլիտ 287,  
346

Ջալալյան Սարգիս (կախկույ.)  
215, 329

Ջալալ Էֆենդի Ունսի-Ջադե 311

Ջավանիր (Բաֆու քույրը) 304  
Ջեմշիդ 104

Ջեյրան խանում (Բաֆու մայրը)  
304, 310

Ջուրականց Վանես 276

Ջումշուդ 228

Ռ. Բ. տե՛ս Բերբերյան Ռուբեն  
Ռեհան (Մկիթ Փարսադանի կի-  
նը) 282

Ռեհան 65

Ռոզա 194—200

Ռոստոմյան Դավիթ 342

Ռոշիլա (Ռոշիլո) 179

Սալամբեկյաններ 183, 193

Սալմաստեցունց Մկրտիչ 72; 219

Սահար Դիվանի 256

Սահակ (գրավաճառ) 295—297,  
347

Սահակ եպիսկոպ. Սաթուրյան  
185, 312

Սադաթեյան Մ. 182, 319

Սամվելյան Խ. 22, 303, 336

Սանասարյան Մկրտիչ 322

Սանդրո (Ալեքսանդր Ստեփան-  
յան) 211, 326, 327

Սառա խանում 13, 338

Սարգիս (Ղ. Աղայանի եղբայրը)  
71

Սարգսյան Ավետիս 13, 343; 344

Սարդար 277

Սարդարանց Թուման 277; 284

Սերվանտես 42

Սիմոնյան Պետրոս 46, 65, 313

Սկոտ Վալտեր 43

Սյունյաց իշխաններ 276, 282

Սպանդարյան Սպ. 242, 243; 313,  
337

Ավեչնիկով 179, 188, 320, 323  
Ստեփան (Ղ. Աղայանի հայրը) 70

Սրվանձտյան Գարեգին 217, 218, 331—333

Սուրանջան Անանիա 16, 214, 215, 328, 329

Սունդուկյան Գ. 39, 59, 60, 197, 315, 324

Սուրենյան Գ. (վրդ.) 158

Սուքիաս (սարկավագ) 293

Սևիկյան Հրաչյա 331

Վաղարշակ (թագավոր) 104

Վանես (Արեւանց) 283, 284

Վանես (Մակունց Միրզայի սպայը) 290

Վառվառե 332

Վարդան Մամիկոնյան 291, 298

Վարդանյան Մովսես 69, 71, 72, 307, 308

Վարդանյան Փիլիպոս 14, 15, 37, 305, 319, 322, 323

Վերդի Զուգեպպե 45, 293

Վերծանի Մ. 343

**Տեր Ավետիս 232**

Տեր Բաղդասար 275

Տեր-Գրիգորյան Հովհաննես 15, 182, 195, 196, 301, 318—321

Տեր-Ջաքարյան Խաչատուր 155, 296, 348

Տեր-Հարությունյան Մեսրոպ (քահանա) 270, 279, 280, 282, 288, 290, 345

Տեր Հովսեփ 255—257

Տեր-Հովսեփյան Հովհաննես 17, 18, 243, 328

Տեր-Մարկոսյան Հովհաննես 182, 211, 301, 318, 319, 327

Տեր-Միքայելյան Բ. 258, 341

Տեր-Սարգսյան Հովհաննես 9, 48, 49

Տեր-Վարդանյան Աշոտ 155, 201, 219, 333

Տեր-Օհանյանց Սարգիս 155

Տիգրան (Րաֆֆու եղբայրը) 304, 339

Տիկին Արծրունի (Մարո) 183, 208, 326

Տիկին Րաֆֆի տե՛ս Աննա Րաֆֆի

Տիկին Ռեպեկա 248

Տիրացու Հակոբ 16

Տոլստոյ Լև 228

Տրդատ 266

Տուրգենև Ի. Ս. 41, 58, 141, 325

**Փալանջյան Աշոտ 341, 347**

Փանյան Մելքոն 345

Փալստոս (Բուզանդ) 204

Փարպեցի (Ղազար) 204

Փարսադան 283

Փեշտմալյան Գ. Մ. 313

**Քաթանյան Հովհաննես 16, 18, 214—215, 329**

Քաթանյան Պետրոս 72, 308

Քալանթար Ալեքսանդր 15, 193, 202, 268, 301, 318, 319, 323, 345

Քարամ (ավագակապետ) 254

Քիշմիշյան Ա. 324

Քսենրքսուս 104

**Օհան(սեքաբեցի) 283**

Օհանջան (արծվանիկցի) 292

Օհանջան (Բեղլու) 292

Օրբելյան Ստեփանոս 276, 279,  
291, 346  
Օրբոս 252

Յաթալի խան 273, 290  
Յրանգուլ 271, 289, 290  
Յրբեր 43

## Ա Ռ Ա Ր Կ Ա Յ Ա Կ Ա Ն

«Ազգագրական Հանդես» (Թիֆ-  
լիս, Շուշի, 1896—1916)—306  
«Աղբյուր» (Թիֆլիս, 1883—1918)  
—13, 162, 242, 324, 325  
«Անկախ մամուլ» (Թիֆլիս, 1907  
—1908)—334  
«Առողջապահական թերթ» (Երե-  
վան, 1881—1884)—305  
«Արարատ» (Վաղարշապատ,  
1868—1918)—316  
«Արծվի Վասպուրական» (Կ. Պո-  
լիս, Վարազ, Կ. Պոլիս, 1855—  
1874)—85, 311, 331  
«Արձագանք» (Թիֆլիս, 1882—  
1898)—17, 42, 162, 176, 208,  
212, 242, 305, 306, 311, 316,  
322—324, 327, 328, 336, 337  
«Արևելյան մամուլ» (Զմյուռնիա,  
1871—1909)—325  
«Բանբեր Հայաստանի արխիվե-  
րի» (Երևան, 1960 թ. մինչև  
այսօր) —346  
«Գարուն» (Երևան, 1967 թ.  
մինչև այսօր)—333, 347  
«Գեղունի» (Վենետիկ, 1901—  
1910)—253, 340  
«Գրողներ» (Թիֆլիս, 1866—  
1885)—192, 321  
«Հասպոեր Հայաստանի»—132,  
308  
«Հումա» (Թիֆլիս, 1896—1911)—  
322

«Հուսադբյուր» (Փարիզ, 1852—  
1971)—338  
«Ծաղիկ», հանդես տապնօրյա  
(Զմյուռնիա- Կ. Պոլիս, 1861—  
1867)—130  
«Ծաղիկ», ցիսամյա հանդես  
(Կ. Պոլիս, 1886—1911)—336  
«Կարմիր» աստղ (Երևան, 1920  
թ.)—334  
«Կոռնկ Հայոց աշխարհի» (Թիֆ-  
լիս, 1860—1863)—85, 316  
«Հանդես ամսօրյա» (Վիեննա,  
1887 թ. մինչև այսօր)—312  
«Հանդես գրականական և պատ-  
մական» (Մոսկվա, 1886—  
1896)—344  
«Հայրենիք» (Բուստոն, 1922—  
1970)—328, 329, 337, 343  
«Հյուսիսարփայլ» (Մոսկվա, 1858  
—1864)—14, 16, 17, 73, 85,  
122—125, 145, 169, 214—216,  
224, 228, 230, 308, 311, 315,  
329—331  
«Մասիս» (Կ. Պոլիս, 1852—  
1908)—85, 130, 317  
«Մասյաց աղավնի» (Փարիզ,  
1855—1858, Թեոդոսիա, 1859  
—1865)—85  
«Մեղու» («Մեղու Հայաստանի»)  
—52, 65, 223, 337  
«Մեղու Հայաստանի» (Թիֆլիս,  
1858—1886) —18, 303—306,  
313, 316, 328, 334, 335

- «Մշակ» (Թիֆլիս, 1872—1920) —  
 14, 19, 20, 32, 33, 35, 36, 41,  
 46, 59, 60, 62, 65, 74, 76, 134,  
 135, 137, 141, 149, 154, 160—  
 162, 170—172, 174, 175, 180,  
 182, 185, 187, 190—194, 201,  
 202, 205, 206, 208, 209, 223,  
 224, 229, 230, 241, 242, 255,  
 268, 279, 297, 303—307, 309,  
 310, 312—321, 323—327, 330,  
 331, 334—338, 340—343, 345  
 —347
- «Մուրճ» (Թիֆլիս, 1889—1907)  
 —303, 334
- «Նավասարդ» (Թեհրան, 1937—  
 1939) —339
- «Նոր-Դար» (Թիֆլիս, 1884—  
 1908) —242, 243, 305, 310,  
 336, 337
- «Նորք» (Երևան, 1922—1928) —  
 334
- «Պսակ» (Երևան, 1880—1884) —  
 305
- «Ռուսակիե Վեդոմոստի» (Մոս-  
 կվա, 1863—1918) —317
- «Սովետական գրականություն»  
 (Երևան, 1934 թ. մինչև այսօր)  
 —330
- «Տարազ» (Թիֆլիս, 1880—1919)  
 —13, 19, 195, 306, 321, 324,  
 325
- «Փորձ» (Թիֆլիս, 1876—1881) —  
 158, 162, 175, 242, 243, 305,  
 316
- «Քեչկուլ» (Թիֆլիս, 1883—  
 1891) —311

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

|                                                                      |         |
|----------------------------------------------------------------------|---------|
| Ժամանակակիցները Ռաֆֆու մասին —Խ. Սամվելյան                           | 3—302   |
| Ալեքսանդր Ծիրվանզադե—Ռաֆֆի կյանքից                                   | 25—303  |
| Ղազարոս Աղայան—Իմ կյանքի գլխավոր դեպքերը                             | 69—307  |
| Ավագ Ավթանդիլյան—Պատկերներ Ռաֆֆի կյանքից                             | 75—309  |
| Գրիգոր Արծրունի—Հակոբ Մելիք-Հակոբյան                                 | 169—314 |
| Արփիար Արփիարյան—Ռաֆֆի և հայ վիպասանությունը                         | 177—317 |
| Ալեքսանդր Քալանթար—Հիշողություններ Ռաֆֆի մասին                       | 182—318 |
| Ռաֆֆին Մելիք-Հախնազարյանների տանը                                    | 187—319 |
| Հովհաննես Տեր-Գրիգորյան—Կտորներ ողեղումս կուտակված պաշարից           | 190—320 |
| Փոլիպոս Վարդանյան—Ռաֆֆի ճամակները                                    | 203—322 |
| Գևորգ Չմշկյան—Թուուցիկ հիշողություն                                  | 205—323 |
| Տիգրան Նազարյան—Ռաֆֆի. Հիշողություններ                               | 207—324 |
| Սանդրո (Ալեքսանդր Ստեփանյան)—Իմ հիշողություններից                    | 210—326 |
| Գ[արեգին] Ե [նգիրարյան]—Մի հիշողություն Ռաֆֆի մասին                  | 212—327 |
| Ռուբեն Բերբերյան—[Անանիա Սուլթանջանի պատմածը]                        | 214—328 |
| Ղևոնդ Աթանասյան—Հիշողություններ                                      | 216—330 |
| Պետրոս Զաքարյան—Հիշողություններ և տպավորություններ—Ռաֆֆի             | 221—334 |
| Մակար Չմշկյան—Առաջին ծանոթությունս Ռաֆֆի հետ և վերջին տեսակցությունս | 227—335 |
| Ա. Մ-յան—Անցյալից մի հիշատակ                                         | 234—336 |
| Իսկունի Հակոբյան—Թալրիզի հայ գաղութի անցյալից                        | 245—337 |
| Սարա Խանում—Հիշողություններ Ռաֆֆու ընտանեկան կյանքից                 | 248—338 |
| Սողոմոն Մելիք-Հակոբյան—Ռաֆֆի                                         | 252—339 |
| Մելիք-Զոհրաբյան Նազար—Մանկական հիշողություններ                       | 255—340 |
| Մի ագուլեցի—Նամակ Վ. Ագուլիսից                                       | 258—341 |
| Աննա Ռաֆֆի—[Պատառիկ հուշերից]                                        | 262—342 |
| Աբրահամ Մելիք-Աբրահամյան—Ռաֆֆին Զուլֆայում                           | 263—343 |
| Ավետիս Սարգսյան—Վկայություն Ռաֆֆի մասին                              | 265—343 |
| Վարդան Թումանյան—Հուշեր Ռաֆֆի մասին                                  | 267—344 |
| Արտաշես Ծատուրյան—Ռաֆֆին Ղափանում և Զանգեզուրում                     | 270—345 |
| Արթուր Լայսա—Հիշողություններ ութսունական թվականներից                 | 293—346 |
| Աշոտ Փալանջյան—Վերհիշումներ                                          | 295—347 |
| Ծանոթագրություններ                                                   | 300     |
| Ցանկեր                                                               | 340     |



## ՐԱՃՖԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Հրատ. խմբագիր **Ս. Ա. Անաստասյան**  
Նկարչական ձևավորումը **Կ. Կ. Ղաֆադարյանի**  
Գեղ. խմբագիր **Հ. Ն. Գործակալյան**  
Տեխ. խմբագիր **Լ. Կ. Հարությունյան**  
Սրբագրիչ **Գ. Ս. Ստեփանյան**

НБ № 1064

Հանձնված է շարվածքի 27. 05. 1985 թ.: Ստորագրված է տպագրության  
28. 11. 1985 թ.: ՎՖ 05275: Չափը  $84 \times 108^{1/32}$ , թուղթ, № 1: Տառատեսակ  
«գրքի սովորական», բարձր տպագրություն: Պայմ. 20,15, տպագր. 22,5,  
մամուլ+12 թերթ ներդիր: Հրատ. հաշվարկ. 15,75 մամուլ: 20,15 ներկ.

մամուլ: Տպարանակ 20000: Պատվեր № 552: Հրատ. № 6467:

Գինը 1 ո. 95 կ.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան,

Մարշալ Բաղրամյանի պող. 24 գ:

Издательство АН АрмССР, 375019, Ереван,

пр. Маршала Баграмяна, 24 г.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան,

Մարշալ Բաղրամյանի պող. 24:

Типография Издательства АН АрмССР, 375019, Ереван,

пр. Маршала Баграмяна, 24.







A  $\frac{\pi}{73621}$